

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԴՈՐԱ ՍԱՔԱՅԱՆ

«Նրանց քշում են
անապատները...»

Կլարա և Ֆրից Զիգրիստ-Հիլթիները
Հայոց ցեղասպանության ականատեսներ
(1915-1918)

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
2017

ՀՏԴ 94(479.25)

ԳՄԴ 63.3(5Հ)

Ս 294

Խմբագիր՝ Բ.Գ.Թ. Մերի Հովհաննիսյան

**Գերմաներենից թարգմանությունները՝ մասնակցությամբ
Էվելինա Մակարյանի**

Սաքայան Դ.

Ս 294 «Նրանց քշում են անապատները...»

Կլարա և Ֆրից Զիգրիստ-Հիլթիները Հայոց ցեղասպանության ականատեսներ (1915-1918): -Եր.: ԵՊՀ հրատ., 2017, - 424 էջ:

Աշխատության հիմքում ընկած են Դորա Սաքայանի՝ շվեյցարական արխիվներից հավաքած և գոթերեն ձեռագրերից վերծանած՝ Հայոց ցեղասպանության ականատեսների՝ շվեյցարացի ամուսիններ Կլարա և Ֆրից Զիգրիստ-Հիլթիների օրագրությունները:

«Նրանց քշում են անապատները...» գիրքը բաղկացած է երեք գլխից. առաջին երկուսը նվիրված է շվեյցարացի գույզին, իսկ երրորդը՝ նրանց օգնությամբ սպանողից մազապուրծ եղած հայորդի Հայկ Արամյանին: Այս երեք հեղինակների գործերը միահյուսված են որպես Հայոց ցեղասպանության պատմությանը նվիրված մի նոր վավերագրություն:

Գիրքը հասցեագրված է ցեղասպանագետներին և ընթերցող լայն հանրությանը:

ՀՏԴ 94(479.25)

ԳՄԴ 63.3(5Հ)

ISBN 978-5-8084-2210-0



[YEREVAN STATE
UNIVERSITY
PUBLISHING HOUSE]

© ԵՊՀ հրատ., 2017

© Սաքայան Դ., 2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ

Վոլֆգանգ Գուստ	
Բեռլին-Բադդադ` հայերի համար օրհասական երկաթուղին.....	5

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արխիվային մի մեծ գանձի ձեռքբերումը.....	19
---	----

Մաս I

Կլարա Զիգրիստ-Հիլթի

Օրագիր և զեկույց

ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ.....	32
----------------------------	-----------

ՕՐԱԳՐԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Օրագրի կառուցվածքը, ձեռագիրը և լեզվական ոճը	43
---	----

Օրագրի բովանդակությունը.....	50
------------------------------	----

Նշանախոսություն, հարսանիք և հարսանեկան ճանապարհորդություն.....	50
---	----

Կյանքը Թուրքիայում.....	60
-------------------------	----

Պայքար միջատների ու համաճարակների դեմ	74
---	----

Երջանիկ ամուսնություն.....	77
----------------------------	----

Գրաքննություն և ինքնագրաքննություն.....	85
---	----

Կլարայի օրագրության պատմական նշանակությունը	94
--	----

ՕՐԱԳՐԸ.....	99
--------------------	-----------

Օրագրի հավելված (Memorandum)	233
------------------------------------	-----

ԶԵԿՈՒՅՑԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	237
-----------------------------------	------------

ԱՄԱՌ 1915.....	249
-----------------------	------------

Մաս II

Ֆրիդոլին (Ֆրից) Զիգրիստ-Հիլթի

ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ.....	268
ԵՐԵՔ ԳՐՎԱԾՔԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	278
1. Շվեյցարիա տունդարձի մասին.....	279
ՏՈՒՆԴԱՐՁ 1918 Թ.....	282
2. Տրապիստների վանքի պատմության մասին.....	294
ԵՂԱՅՐ ԲԵՐԳՄԱՆՍԸ՝ ՍՈՐԹՈՒ ՎԱՃԱՌԱԿԱՆ.....	297
3. Հայ բարեկամներին ուղղված նամակի մասին.....	304
ՆԱՄԱԿ ՀԱՅ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻՆ.....	307

Մաս III

Հայկ(ագուն) Ա. Արամյան

*Մեծ Եղեռնի Պատգամ: Հայոց Տանթեական: Քաւարան եւ
Հրաշալի Յարութիւն*

ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ.....	312
ՀԱՅԵՐԵՆ ՄԻ ԳՐՔԻ ՄԱՍԻՆ.....	319
Բաղդադի երկաթուղին և Հայոց ցեղասպանությունը....	326
Քաղվածքներ Հայկ Արամյանի գրքից.....	347
Կայուն բարեկամություն.....	379
ՎԵՐՋԱԲԱՆ. ՄԵԿ ԴԱՐ ԱՆՑ.....	387
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	410
Թուրքիայում ընթերցված գրքերի ցանկ	
Կլարայի օրագրից (1915-1918).....	418
ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ. ԴՈՐԱ ԱԱՔԱՅԱՆ.....	421

ԱՌԱՋԱԲԱՆ

Վոլֆգանգ Գուստ

Բեռլին-Բադդադա՝ հայերի համար օրհասական երկաթուղին

Գերմանիայի արտասահմանյան ամենամեծ ներդրումն էր այն՝ Բադդադայի երկաթուղին, որը խոստանում էր դառնալ Եվրոպան Պարսից ծոցի հետ կապող և դրանով իսկ դեպի բրիտանական հզոր կայսրության մարգարիտը՝ Հնդկաստան տանող ամենաարագ ուղին: Իսկ հայերի համար, հատկապես նրանց համար, որոնք ապրում էին Օսմանյան կայսրության արևմտյան տարածքներում, Բադդադայի երկաթուղին դարձավ դեպի մահ տանող ամենաարագ ուղին:

Չկար գերմանացիների կողմից իրագործված՝ Բադդադայի երկաթուղու նման նույնքան հեղինակավոր արդյունաբերական մի այլ նախաձեռնություն: Գերմանացիներից շատերի համար այդ երկաթուղին ճանապարհ էր հարթում դեպի «Արևելք» բառին հոմանիշ դարձած «վայրի Քուրդիստանը», ինչպես այդ տարածքը կոչվում էր այդ ժամանակներում ամենից շատ ընթերցվող գերմանացի հեղինակ Կառլ Մայի (Karl May) պատմվածքներում, որոնք երևակայական էին, քանի որ հեղինակն ինքը երբեք ոտք չէր դրել իր հեքիաթային աշխարհը պատկերող որևէ երկիր: Ավելի առարկայական էր այս հարցում Բադդադայի երկաթուղու շինարարության ծախսերը հոգացող Գերմանական բանկի (Deutsche Bank) գլխավոր մատակարարի տեսակետը: Երբ 1898 թ. գերմանացիներին տրվեց շինարարական աշխատանքներն սկսելու վերջնական արտոնությունը, բանկի գլխավոր պաշտոնակատարը այդ գործարքին տվեց հետևյալ հեզմական գնահատականը. «Ես թքած ունեմ այդ արտոնագրի և Բադդադայի երկաթուղու ամբողջ շինարարության վրա»: Մինչև պատերազմի ավարտը այդ երկաթուղին Գերմանական կայսրու-

թյանը պիտի արժենար 360 միլիոն մարկ, իսկ հայերին՝ իրենց կյանքը¹:

«Պետք է մարդկության պատմության շատ խորքերը գնալ՝ գտնելու համար նմանօրինակ հրեշավոր գազանություն, ինչպիսին է օրերս Թուրքիայում իրագործվող հայերի բնաջնջումը»,– գրել է 1915 թ. օգոստոսի 17-ին Անատոլիական երկաթուղային ընկերության փոխնախագահ Ֆրանց Գյունթերը (Franz Günther): Վերջինս ղեկավարում էր Բադդադի երկաթուղու շինարարական աշխատանքները: Կարճ ժամանակ անց նա Արթուր ֆոն Գվիններին (Arthur von Gwinner) ուղարկեց մի լուսանկար հետևյալ գրությամբ. «Ահա՛ թե ինչ մշակույթով է Թուրքիայում ներկայանում Անատոլիական երկաթուղին: Սրանք մեր, այսպես կոչված, ոչխարներ փոխադրող վագոններն են (Hammelwagen), որոնցից 10-ի մեջ տեղափոխվում է 880 մարդ»: Կենդանիների համար նախատեսված այդ վագոնների մեջ խցկված այդ մարդիկ բացառապես տարհանված հայեր էին²:

Ժամանակակից գրականության մեջ Բադդադի երկաթուղու պատմությունն օգտագործվում է որպես պատմական իրողություններից շեղելու միջոց: Այսպես, ցեղասպանությունը ժխտողների, այդ թվում՝ պաշտոնական Թուրքիայի համար այդ թեման չափազանց ձեռնտու է՝ բուն եղելություններից խույս տալու համար: Չէ՞ որ գերմանական այդ հեղինակավոր ծրագիրը ներկայացվում է որպես գերմանական իմպերիալիզմի խորհրդանիշ՝ իր բազմաթիվ տարբերակներով, որոնց առնչությունների մեջ գաղափարական տեսակետից լավագույն ձևով քողարկված են Նամիբիայի հերերո ու նամա ցեղերի և, անշուշտ, նաև հայերի դեմ ձեռնարկված բնաջնջման գործողությունները:


¹ Pohl, Manfred (1999), էջ 93:

² Նույն տեղում:


Հայոց ցեղասպանության շրջանում Բաղդադի երկաթուղու շինարարության վրա աշխատող հայերի ճակատագիրը, փաստորեն, ուսումնասիրված չէ, քանի որ Գերմանական բանկը իր արխիվը տրամադրում է միայն առանձին գիտնականների, որի պատճառով էլ ինձ մերժեցին փաստաթղթերի ձեռքբերումը: Այս գրքում հայերի ճակատագիրը ընթերցողին ներկայանում է Զիգրիստ-Հիլթի ականատես զույգի տեսանկյունից, և երկուսն էլ նկարագրում են իրենց տեսածն ու ապրածը, որն առավելապես վտարված հայերի և ավելի նվազ երկաթուղու վրա աշխատողների ճակատագիրն է: Իսկ վերջիններին աշխատանքի էին ընդունում, քանի որ նրանք ոչ միայն հիանալի արհեստավորներ էին, այլև մեծ մասամբ տիրապետում էին շատ լեզուների: Սա մի կարևոր առավելություն էր երկաթուղու համակարգում, որի վարչության պաշտոնական լեզուն ֆրանսերենն էր:

Առաջին աշխարհամարտում ցեղասպանության ենթարկվող տարիանվածներին ուղղակիորեն վերաբերող օտար քաղաքացիների օրագրերը շատ հազվադեպ են: Եվ շատ կարևոր է, որ դրանք հրատարակվեն, որպեսզի լրացնեն 20-րդ դարի առաջին մեծ ցեղասպանության մասին մեր ունեցած թերի պատկերացումը: Այդ է պատճառը, որ Դորա Սաքայանի կողմից շվեյցարական զույգի՝ Կլարա և Ֆրից Զիգրիստ-Հիլթիների թողած գրությունների հրատարակումն այնքան նշանակալից ու կարևոր է:

Հազվադեպ են նաև Բաղդադի շինարարության վրա աշխատած և ցեղասպանությունը վերապրած փոքրաթիվ հայերի հուշագրությունները: 1970 թ. Բեյրութ քաղաքում հայերեն լույս տեսավ Հայկ Ա. Արամյանի գիրքը, որի նյութին առնչվող առանձին հատվածները Սաքայանը հայերենից թարգմանել է գերմաներեն և առաջին անգամ ներկայացրել գերմանախոս ընթերցողին: Այդ հայերեն գրքի հեղինակը, որն իր կյանքով պարտական է Զիգրիստ-Հիլթի զույգին, նկարագրում է անձամբ ապրած Հայոց Դանթեականը, որի



Բաղդադի երկաթուղու շինարարությունն ընթացքի մեջ



Հայ վտարանդիների փոխադրումը Բաղդադի երկաթուղու՝
անասունների համար նախատեսված վագոնների մեջ (1915-1916)

ընթացքում Բաղդադի երկաթուղու շինարարության վրա աշխատող հայերի համար եվրոպացի ճարտարագետների քրիստոնեական մարդասիրությունը եղել է միակ լուսավոր կետը:

Կայսերական Գերմանիայի այդ ժամանակվա արտասահմանյան մեծագույն նախաձեռնության գերմանական վարչությունը որոշ չափով ապահովում էր իր ճարտարագետների անկախությունը, քանի որ Գերմանիան Առաջին աշխարհամարտի ժամանակ Օսմանյան կայսրության կարևորագույն դաշնակիցն էր: Դրանով իսկ դժվար էր արգելակել հայերի ցեղասպանության մասին հաղորդագրությունների արտահոսքը: Բաղդադի երկաթուղու վրա պաշտոնավարում էին նաև շատ շվեյցարացիներ, որոնք խիստ գաղտնիության պայմաններում իրագործվող Հայոց ցեղասպանության անմիջական ականատեսներ էին: Կարևոր է նաև այն հանգամանքը, որ Շվեյցարիան՝ որպես չեզոք պետություն, սերտ կապ էր պահպանում պատերազմին մասնակից երկրների երկու կողմի հետ էլ: Նույնպես էական էր, որ հայերը երկար ժամանակ և առանձին դեպքերում մինչև պատերազմի վերջը եղել են Թուրքիայի մեծագույն երկաթուղու նախընտրյալ աշխատակիցները. մի կարգավիճակ, որը, ցավոք, չկարողացան մինչև վերջ պահպանել, իսկ ամենավերջում հայտնվեցին ողբալի վիճակում: Շվեյցարացի տեղեկատուները ունեին նաև այն առավելությունը, որ նրանք արտասահմանին կարող էին տեղեկացնել այդ բոլորի մասին՝ առանց իրենց անձը առանձնապես մեծ վտանգի ենթարկելու:

Զիգրիստ-Հիլթի գույզը ցեղասպանության ընթացքում ապրում էր այսօրվա Ֆեզիֆաշայում՝ Հալեպից ոչ հեռու գտնվող սիրիական քաղաքում, դրանով իսկ՝ հայերի տեղահանման ուղիների կարևորագույն հատվածում: Ինչպես շատ ուրիշ շվեյցարացի ճարտարագետներ, Ֆրից Զիգրիստը դեռևս 1910-ից աշխատում էր որպես Բաղդադի երկաթուղու՝ դեպի Հալեպ տանող մի հատվածի ճարտարագետ: 1915 թ. նա

ստանձնել էր Իսլահիե-Ռաջու հատվածի ծրագրավորումն ու Ամանոսյան լեռնաշղթայի միջով անցկացվելիք 905 մետրանոց փապուղու (թունել) կառուցումը, որի հետևանքով նա հաճախ էր գործուղվում դեպի Հալեպ՝ երբեմն նաև տիկնոջ ուղեկցությամբ:

Հալեպը Բաղդադի երկաթուղու գերատեսչության կենտրոնն էր Օսմանյան կայսրության արևելքում և միաժամանակ հայերի տեղահանումների հանգուցակետը: Բազմազգ Հալեպը Օսմանյան կայսրության արաբական հարավի կարևորագույն քաղաքներից մեկն էր: Այստեղ էին կենտրոնանում և՛ Թուրքիայի ներսից, և՛ արևելյան նահանգներից եկող տեղեկությունները:

1917 թ. աշնանը Հալեպում տեղակայված օգնության հզոր կազմակերպությունների ներկայացուցիչների և հատկապես Միացյալ Նահանգների և Գերմանիայի դիվանագետների ջանքերով նույնիսկ պատերազմական պայմաններում հնարավոր դարձավ Թուրքիայից դուրս բերել որոշ տեղեկություններ: Հալեպի գերմանացի հյուպատոս Վալթեր Ռյոսլերը (Walter Rössler) աշխատում էր օգտագործել թուրքական իշխանությունների հետ իր լավ կապերը՝ հայերի դեմ իրականացվող բռնությունները մեղմելու համար: Միայն ինքը՝ որպես արտասահմանյան պետության ներկայացուցիչ, արտոնություն ուներ՝ իր դեսպանությանը, ինչպես նաև Արտաքին գործերի նախարարությանը գաղտնագրերի միջոցով ուղարկելու չգրաքննվող հաղորդումներ, ինչը թույլատրված էր միայն Գերմանական կայսրությանը: Ոչ մի այլ գերմանացի դիվանագետ այնպես չպաշտպանեց հայերին, ինչպես Ռյոսլերը:

Հալեպից դեպի Օսմանյան կայսրության հարավ-արևելք էին տանում երկաթուղու երկու հատվածները. մեկը՝ այսօրվա թուրք-սիրիական սահմանով դեպի Բաղդադ, մյուսը՝ Դամասկոսի և Երուսաղեմի վրայով դեպի Սինայ: Դրանով Հալեպը դեպի Պարսից ծովի և Սուեզի ջրանցքի պատերազ-

մի թատերաբեմերը տանող ուղիների հանգակետն էր դարձել: Ցամաքային այս կապերը չափազանց կարևոր էին, քանի որ Անտանտի գրահանավերը գրավել էին Միջերկրական ծովը և հսկում էին նավահանգիստները:

Հայերի տեղահանումները զանգվածային չափերով սկսվեցին իրենց պատմական հայրենիքում՝ Թուրքիայի հյուսիսարևելյան տարածքներում: Ամենամեծ և ամենադաժան ջարդերը տեղի ունեցան ցեղասպանության սկզբնական շրջանում Մուշ քաղաքի հարթավայրում և Բիթլիս քաղաքի շրջանում: Մուշի հարթավայրում հազարավոր հայեր մեծ մասամբ ողջ-ողջ հրկիզվեցին իրենց շտեմարաններում և տներում: Ում հաջողվեց փախչել այս հարթավայրի գրեթե 300 հայկական գյուղերից, նա չհասցրեց հասնել Բաղդադի երկաթուղու հեռավոր կայարաններից որևէ մեկը: Նույնը վերաբերում է Բիթլիս քաղաքի շրջակայքին՝ հյուսիսարևելյան Թուրքիայի՝ հայերով խիտ բնակեցված մի այլ տարածք: Ռուսական սահմանի և Երզնկայի միջև ապրող բազմաթիվ հայերից ոչ մեկին նույնպես չհաջողվեց երբևէ հասնել Բաղդադի երկաթուղու որևէ կայարան: Նրանցից շատերն անհետացան Եփրատի հորձանքում, որը շաբաթներով խցանված էր մասամբ նաև իրար հետ կապկպված հայերի դիակներով: Այս տարածաշրջաններից տեղահանված հայերի համար վերջին հանգրվան են եղել Խարբերդը շրջապատող ձորերը, որտեղ թուրքերի պահակախմբերը կանոնավորապես մորթում էին գերհյուծված հայերին, ինչպես վկայում է քաղաքի ամերիկացի հյուպատոս Լեսլի Դեյվիսը (Leslie Davies), որը մի բժշկի և մի քանի թուրք բարեկամների ուղեկցությամբ ձիավարելիս երկու տարբեր առիթներով նման գազանությունների ականատեսն է դարձել: Իսկ Վան քաղաքի հայերը, որոնք շաբաթներով պաշտպանվում էին թուրքական բանակի զինվորներից, նախընտրեցին ռուսական սահմանի վրայով փախչել կովկասյան հայերի տարածաշրջանը, մեծ մասամբ մահացան ձյունասառը լեռներում: Սև ծովի ափերին՝ Տրապի-

գոնի շուրջ ապրող հայերը քշվեցին դեպի բաց ծով և այնտեղ խեղդամահ եղան, իսկ Էրզրումից մինչև Երզնկա ընկած տարածքում մարդկանց ամբողջ քարավաններ ոչնչացվեցին Քեմախի կիրճում: Երբ Կոստանդնուպոլսում Ֆրանկֆուրտի օրաթերթի թղթակից Փաուլ Վայցը (Paul Weitz) պատերազմի վերջին տարում՝ ռուսների կամավոր նահանջից հետո, թուրքական բանակի հետ անցնում էր հյուսիսարևելյան տարածքով, նա տեսավ, թե սրճարաններում «ինչպիսի հազվադեպ սանձարձակությամբ էին պատմում հայերի ջարդերին վերաբերող ամենադաժան մանրամասները: Ընդ որում՝ շեշտվում էր հատկապես այն փաստը, որ տվյալ տարածքում ոչ մի հայ այլևս գոյություն չունի. մի բան, որ մեր ճանապարհորդությունը շարունակելիս քանիցս մեզ համար էլ նկատելի դարձավ»³: Գերմանիայի արտգործնախարարության արխիվային փաստաթղթերը լի են մանրամասնություններով այն մասին, թե ինչպես տեղի ունեցավ հայերի բնաջնջումը իրենց երբեմնի բնօրրանում:

Նշված շրջանների հայերի ամենամեծ կոտորածները տեղի ունեցան տեղահանման՝ դեպի հարավ տանող գյուղական ճանապարհներին: Այդ տարածքներում երկաթուղի գոյություն չունեք, քանի որ ռուսները 1900 թ. օսմանների հետ պայմանագիր էին կնքել, որի համաձայն՝ Սև ծովի շրջակայքում երկաթուղի կառուցելու դեպքում ծախսերը հոգալու էր նախաձեռնող կողմը: Իսկ դրա համար ոչ միայն դրամն էր պակասում, այլև օսմանների ցանկությունը՝ ռուսներին նման շինարարության արտոնությունը տալու: Իսկ ռուսները բնավ համամիտ չէին, որ օսմանները ամենաարդիական փոխադրամիջոցով մուտք ունենային դեպի Կովկաս և Ռուսաստան⁴:

Այս բոլորից պետք է եզրակացնել, որ Զիգրիստ-Հիլթի գույզի՝ Բաղդադի երկաթուղու հետ կապված հայերի մասին

³ www.armenocide.net, Dok.1918-06-20 -DE-001.

⁴ Նույն տեղում:

վկայությունները վերաբերում են ոչ թե Թուրքիայի հյուսիս-արևելքից, այլ նրանց պատմական հայրենիքից տեղահանված հայերին: Ի դեպ, Բաղդադի երկաթուղին հայերի տեղափոխումների համար սկսեց օգտագործվել ցեղասպան գործողությունների սկզբնավորումից ամիսներ անց, և այդ երկաթուղին առաջին հերթին օգտագործվեց Միջին և Արևմտյան Անատոլիայի, ինչպես նաև հայերով խիտ բնակեցված Կիլիկիայի հայերի տեղափոխումների համար:

Բաղդադի երկաթուղու շինարարության գերմանացի պատասխանատուները մեծ ջանքեր թափեցին, որպեսզի պահպանեն հայերին՝ որպես կարևոր պաշտոնյաների ու բանվորների: Սակայն եթե Կոստանդնուպոլսի դեսպանատունը, բացառությամբ մի քանի հոգու, անկարող եղավ պաշտպանել իր հայ պաշտոնյաներին ոչնչացումից, ապա այդ ուղղությամբ երկաթուղու վարչության հնարավորությունները էլ ավելի նվազ էին: Ի լրումն դրա՝ պետք է շեշտել, որ թուրքական երկաթուղիների գլխավոր շտաբի պատասխանատու պաշտոնյան գերմանացի էր՝ փոխգնդապետ Սիլվեստեր Բյոթրիխը (Oberstleutnant Silvester Böttrich): Մի կողմից՝ գերմանացիների անկարողության, մյուս կողմից Բյոթրիխի տխրահոջակ եռանդի մասին են վկայում գերմանական արտգործնախարարության արխիվային փաստաթղթերը:

1331 թ. հոկտեմբերի 3-ին, որը համապատասխանում է 1915 թ. հոկտեմբերի 28-ին, ռազմական նախարար Էնվերը Բաղդադի երկաթուղուն ուղարկեց հրաման, որի համաձայն՝ որոշ շրջանների հայերը պետք է հեռանային իրենց աշխատատեղերից և պահանջեց պատրաստել երկաթուղային «թվով մեծ» հայ աշխատակիցների անվանացուցակներ: Հայերին բաժանեցին երկու խմբի, որոնցից մեկին մինչև տեղահանումը տրվեց մեկից մինչև տասներկու ամսվա, իսկ մյուսին՝ մեկից մինչև չորս տարվա պայմանաժամանակը: Այդ հայերը պիտի փոխարինվեին, «բնականաբար, մուսուլմա-

նական կրոնին հետևող կամ ուրիշ ազգի վստահելի մարդկանցով»⁵:

Բյոթրիխը ստորագրել է տեղահանման մի քանի հրաման: «Պարոն Բյոթրիխը ոչ միայն չդիմեց ռազմական նախարարին՝ բողոքարկելով հանձնաժողովի որոշումները, այլև այնքան նվաստացավ, որ այդ հանձնաժողովի որոշումները փոխանցեց՝ դրանց տակ իր ստորագրությունը դնելով»: Այսպես մակագրեց Բաղդադի երկաթուղով զբաղվող Անատոլիական երկաթուղու փոխնախագահ Ֆրանց Գյունթերը (Franz Günther) նման հրամաններից մեկի վրա, որն այնուհետև նա ուղարկեց գերմանական դեսպանատուն:

Ապա Գյունթերն ավելացրեց. «Մեր հակառակորդները մի օր շատ դրամ են վճարելու այս գրությունն իրենց սեփականությունը դարձնելու համար: Պատերազմական առաքելության մի անդամի ստորագրությամբ նրանք ապացուցելու են, որ գերմանացիները ոչ միայն ոչինչ չարեցին կանխելու համար հայերի նկատմամբ ոտնձգությունները, այլև որոշ հրամաններ իրենցից էին գալիս, այսինքն՝ իրենց ստորագրությամբ էին կատարվում»: Ասում են, որ ռազմական թուրք գործակալը «Կծու ժպիտով մատը դրել է պարոն Բյոթրիխի ստորագրության վրա, քանի որ նույնիսկ թուրքերի համար մեծ արժեք է ներկայացնում այն փաստը, որ այդ փաստաթղթի տակ, որի մասին դեռ շատ պիտի խոսվի, դրված է գերմանացու և ոչ թուրքի ստորագրությունը»:

Համեմատաբար շատ փոքր է թիվն այն հայերի, որոնց Բաղդադի երկաթուղու վարչությունը կարողացել է մահից փրկել: Ընդհանուր առմամբ փոքր էր նաև թիվն այն գերմանացիների, որոնք անձնուրաց կերպով նվիրվել էին հայերի փրկության գործին, և այդ իմաստով առավել փոքրաթիվ էին գերմանացի բարձրաստիճան զինվորականները: Միայն մե-

⁵ www.armenocide.net, Dok.. 1915.11.18-DE-001.

կը՝ Օտտ Լիման ֆոն Ջանդերսը (Otto Liman von Sanders), գերմանական զինվորական առաքելության պետը, իր ազդու միջամտությամբ 1922 թ. ազատեց Ջմյունինայի հայերին և հույներին արտահանումից, մինչդեռ գերմանական զվհավոր շտաբի բարձրագույն զինվորականներ, ամենից առաջ՝ գեներալ-մայոր Բրոնսարտ Ֆոն Շելլենդորֆը (Bronsart von Schellendorff), հավանություն էին տալիս տեղահանումներին, և հնարավոր էր, որ նրանք ի պաշտոնե նույնիսկ հետևում էին գործողություններին:

Այդ ժամանակաշրջանի գերմանական զինվորականության իրական դերն այսօր Գերմանիայի պատմագիտության մեջ չի քննարկվում, քանի որ արտգործնախարարությունը նույնպես, հաշվի առնելով Թուրքիայի՝ որպես ՆԱՏՕ-ի անդամակից երկրի շահերը, լռում է դրա մասին: Ուստի էլ ավելի կարևոր են մասնավոր մարդկանց, ինչպես Ջիգրիստ-Հիլթի գույզի վկայությունները, որոնք օգնում են բացահայտել գերմանացիների մասնակցությունը Հայոց ցեղասպանությանը: Այդ իմաստով շատ կարևոր է Կլարա Ջիգրիստ-Հիլթիի օրագրում 1916 թ. փետրվարի 19-ի արձանագրությունն այն մասին, որ փոխգնդապետ Սիլվեստեր Բյոթրիխը անձամբ էր եկել Բաղդադի երկաթուղու շինարարության Իսլահիե կայանը՝ հանդիպելու ճարտարագետներ Յոհ. Վինքլերի և Ֆրից Ջիգրիստի հետ՝ պարտադրելու, որ հայ աշխատավորների հեռացման և տեղահանման մասին իր հրամաններն անբեկանելիորեն գործադրվեն: Կլարա Ջիգրիստ-Հիլթին իր օրագրում հաղորդում է, որ ամուսինը՝ Ֆրիցը, այդ գազաթնաժողովից հետո «ավելի հաճախ է պարտավոր գնալ գրասենյակ: Այժմ շտապեցնում են հայերի ցուցակների կազմումը: Դեռևս հայտնի չէ, թե ում հնարավոր կլինի պահել: Սակայն երևում է՝ հայերի վտարման հարցն այժմ շատ խիստ բնույթ ունի»:

Հայկական տեղահանվածներով լեփ-լեցուն Բաղդադի երկաթուղու «ռչխարի վագոնները» խորհրդանիշ դարձան

գերմանացիների մեղսակցության և կամ ավելի ճիշտ՝ գերմանացիների անկարողության՝ կանխելու հայերի ոչնչացումը: Մեկ դար պետք է տևեր, մինչև որ Բունդեսթագը՝ Գերմանիայի բարձրագույն ներկայացուցչությունը, քաջություն գտներ՝ Օսմանյան կայսրության մեջ հայերի ապրած ողբերգությունը միաձայն կերպով կոչելու իր անունով՝ Ցեղասպանություն:

Գերմանացի խորհրդարանականներն ընդունեցին նաև գերմանական մեղսակցությունը՝ առանց դրա ճշգրիտ մանրամասները տալու: Դրանով իսկ նրանք դաշնային երկրներին ու համալսարաններին ուժեղ ազդանշան տվեցին այլևս չհանդուրժելու լռության տաբու-ն: Հայոց ցեղասպանությունը և դրա մեջ գերմանացիների դերը պետք է մտնեն դպրոցական դասագրքերի և համալսարանների ծրագրերի մեջ: Եվ դա պետք է կատարվի՝ ի հեճուկս Թուրքիայի նկրտումներին՝ ամեն գնով ճշմարտությունից հեռու պահելու Գերմանիայում երեք միլիոն թուրքերի երեխաներին և թուրքական ծագումով գերմանացիներին:

Դորա Մաքայանի գիրքը կարևոր ներդրում է Հայոց ցեղասպանության և դրա գլխավոր մեղադրյալների ու մեղսակիցների ամբողջական պատկերը գիտականորեն մշակելու և հիմնավորելու շարունակվող աշխատանքում:

Summer 1945.

[illegible]

Արխիվային մի մեծ գանձի ձեռքբերումը

2002 թ. ամռանն էր: Շվեյցարացի իմ գործընկեր ու բարեկամ Հանս-Յակոբ Հեֆթին (Hans-Jakob Hefti), ծանոթ լինելով Հայոց ցեղասպանությանը վերաբերող որևէ հարցի նկատմամբ իմ զգայնությանը, ինձ՝ Մոնրեալ ուղարկեց մի հոդված⁶, որն այդ օրերին լույս էր տեսել Ցյուրիխի «Tages-Anzeiger» լրագրում: Խմբագիր Դանիել Ջութերը (Daniel Suter) թերթի մի ամբողջ էջ տրամադրել էր 1915 թ. հայերի ցեղասպանության ժամանակ Թուրքիայում գտնվող շվեյցարուհի Կլարա Ջիգրիստ-Հիլթիի (Clara Sigrist-Hilty) անտիպ մի գեկույցի, որի մեջ նա գրի էր առել տվյալ ժամանակի՝ Հայոց ցեղասպանության ականատեսի իր ահավոր փորձառությունը: Ջութերը ականարկներ է անում նաև Կլարայի թողած օրագրությունների մասին, սակայն կենտրոնանում է միայն «Ամառ 1915» վերնագրով 15 էջանոց ականատեսի վկայության վրա, որը շարադրված է իր օրագրային գրառումներից անջատ, և ի տարբերություն վերջիններիս, որոնք ընդգրկում են օրվա ամեն տեսակի անցուդարձ, նվիրված է բացառապես Հայոց ցեղասպանությանը:

Ջութերի հոդվածի մի օրինակն այսօր իմ առաջ է դրված: Վերջինիս ազդու խորագրին հաջորդում է վերնագիրը, որն առնված է ականատես Կլարայի վկայությունից՝ «Ողջ մնացածներին սպասում է ամենասարսափելին»: Ներածական խոսքում մեջբերված է մի ընդարձակ հատված 1915 թ. նույն

⁶ Suter, Daniel, «Հայոց ցեղասպանությունը: Թուրքերի իրագործած Հայկական հարցի վերջնական լուծումը հրեաների նկատմամբ նացիստների կատարած ողջակիզման նախադեպն էր: Կլարա Ջիգրիստ-Հիլթին 1915-ի արհավիրքների ականատեսը դարձավ», Tages-Anzeiger, 22 Juli, 2002, էջ 2:

գրառումից. «Համակվում ես ամոթով և մանավանդ այդ թշվառության մեղսակիցը լինելու զգացումով»:

Զուրթերի հոդվածում կենտրոնական տեղ զբաղեցնող Կլարա Զիգրիստ-Հիլթիի զեկույցի տեքստը շատ տեղերում ունի կրճատումներ և բացթողումներ, որոնք հատուկ կերպով նշված են: Այս հանգամանքը, սակայն, ամենևին արգելք չէ, որ մարդ գաղափար կազմի նկարագրվող՝ արդեն հարյուր տարուց ավելի մեծ վաղեմություն ունեցող իրադարձությունների մասին: Դրան նպաստում է նաև այն, որ Զուրթերը, ըստ բովանդակության, ստորաբաժանել է տեքստը, որի բաղադրիչ հատվածները ինքն էլ բարեխղճորեն վերնագրել է: Հոդվածի էջն ամբողջանում է նաև հաղորդագրության հեղինակի՝ Կլարա Զիգրիստ-Հիլթիի հակիրճ կենսագրությամբ, ինչպես նաև հայ ժողովրդի, նրա լեզվի, մշակույթի, կրոնի ու պատմության, ինչպես նաև նրա դեմ կատարված ցեղասպանության վերաբերյալ տեղեկություններով: Կա նաև տեղահանումների ժամանակներից եկած մի լուսանկար⁷, ինչպես նաև Հայաստանի պատմական մի քարտեզ: Խմբագիր Զուրթերի գրվածքում անկարելի է անտեսել երկու կարևոր գործոն՝ վկայության հեղինակ Կլարա Զիգրիստ-Հիլթիի նկատմամբ ակնածանք և պատմության իմացություն:

Խորապես տպավորված Կլարայի գրած զեկույցից՝ ես այն կարդացի մի քանի անգամ: Հիացա նրա ուրույն լեզվառճով՝ նրա կենդանի նկարագրություններով, մշակված արտահայտչաձևերով, որոնք իրենց պարզության մեջ գեղեցիկ են, սահուն ու շեշտակի, բոլորն էլ՝ ցուցանիշներ կրթական բարձր մակարդակի և ազնիվ հոգեկերտվածքի: Ո՞վ էր Կլարա Զիգրիստ-Հիլթին: Զուրթերի հոդվածում տեղ գտած

⁷ Գաղթական մոր և զավակի լուսանկարի տակ դրված է Կլարայի հետևյալ մեջբերումը. «Նրանց վերջին ուժը քամելու նպատակով օրերով քայլեցնում են նույն շրջագծում»:

Կլարայի կենսագրական հատվածը, բնականաբար, հակիրճ էր և տալիս էր նրա մասին միայն որոշ տեղեկություններ: Ծննդավայրը՝ Բուքս-Վերդենբերգ (Buchs-Werdenberg), որը գտնվում է գերմանական Շվեյցարիայի արևելքում, ծննդյան ու մահվան տարեթվերը՝ 1884-1988, մասնագիտությունը՝ բուժքույր: Տեղեկացա նաև, որ 1915 թ. ապրիլին՝ իր պսակադրությունից անմիջապես հետո, Կլարան, հետևելով ամուսնուն՝ շինարար-ճարտարագետ Ֆրից Զիգրիստ-Հիլթիին (Fritz Sigrist-Hilty), մեկնել է Թուրքիա: Վերջինս 1910-ից աշխատում էր Թուրքիայում՝ Ամանուսի լեռներում անցկացվող Բաղդադի երկաթուղու շինարարության վրա: Այս էր այն ամենը, ինչ Զուրթերի հոդվածից կարողացել էի տեղեկանալ այդ արտասովոր կնոջ կյանքի մասին:

Տարիների ընթացքում իմ հետաքրքրությունը Կլարայի անձի ու նրա գրավոր ժառանգության նկատմամբ չնվազեց: Որքա՞ն էի ուզում կարդալ նրա՝ ականատեսի ամբողջական վկայությունը և, անշուշտ, նրա օրագիրը: Երագում էի նրա այդ երկու կարևոր գրվածքների բնագրերը ձեռքերիս մեջ ունենալ, տեսնել նրա ձեռագիրը, նրա լուսանկարը, մանրամասներ ստանալ նրա կենսագրությունից, մանավանդ Թուրքիայում նրա անցկացրած տարիներից: Սակայն երկար ժամանակ այդ ամենի մասին չէի կարողանում որևէ բան գտնել ո՛չ համացանցում, ո՛չ էլ Շվեյցարիայի գրադարաններում:

Վերջապես բախտս բանեց, և տարիների ընթացքում համացանցում կատարած իմ համառ որոնումները 2012-ի գարնանը ի վերջո տվեցին իրենց արդյունքը: Ցյուրիխի ճարտարագիտական համադաշնային համալսարանի (ETHZ – Eidgenössische technische Hochschule in Zürich) ժամանակակից պատմության արխիվի (AFZ-Archiv für Zeitgeschichte) 2005-2006 թթ. տարեգրքի թվայնացած մի հոդվածից տեղեկացա, որ Զիգրիստ-Հիլթի ամուսինների որդիներից մեկը՝ Ռուդոլֆ Զիգրիստ-Կլայունան (Rudolf Sigrist-Cläuna) 2005 թ., իր ծնողների գրավոր ժառանգության զգալի մի մասը

հանձնել էր այդ արխիվին: AFZ-ի տարեգրքում հրապարակված այդ հոդվածում կար նաև նորապսակ Զիգրիստ-Հիլթի գույզի՝ 1915 թ. Թուրքիայում հանված ու լավ պահպանված մի լուսանկար: Կլարան ու Ֆրիցը նստած են հարավարևելյան Թուրքիայի՝ այն ժամանակ Քելեր (Keller) կոչվող գյուղի իրենց տարաշխարհիկ տնակի մի սենյակում, երկուսն էլ երիտասարդ են և կայտառ⁸:

Վերոհիշյալ հոդվածի սկզբում հետևյալ կերպով է գնահատվում Զիգրիստ-Հիլթի ամուսինների գրավոր ժառանգության կարևորությունը: «Օսմանյան կայսրությունում Առաջին աշխարհամարտի ընթացքում հայերի նկատմամբ իրականացված ցեղասպանությունը, որը շուրջ մեկ միլիոն զոհ պահանջեց, մինչև օրս, հակառակ ամեն տեսակի պատմական ապացույցների, կասկածի տակ է դրվում: Այդ է պատճառը, որ առավել արժեքավոր են Ֆրից և Կլարա Զիգրիստ-Հիլթիի նման ականատեսների վկայությունները»:

Այժմ գիտեի, թե որտեղից կարելի էր հայթայթել փնտրածս նյութերը: Էլեկտրոնային մի հարցումս բավական էր, որ իմ վրա հրավիրեի արխիվի պատրաստական աշխատակիցների ուշադրությունը և հաջորդ օրն իսկ թվայնացած տարբերակով ստանայի այն, ինչի մասին տարիներով երագում էի: Նախ՝ Կլարայի օրագիրը, ապա նրա՝ «Ամառ 1915» վերնագրով ականատեսի ամբողջական վկայությունը. երկուսն էլ գրված էին գոթական ձեռագրով: Ստացա նաև Զիգրիստ-Հիլթի ամուսինների՝ նույն շրջանում հանված երեք լուսանկար:

Սակայն ես անհագ էի: Արխիվի նույն սիրալիք աշխատակիցների հետ իմ էլեկտրոնային թղթակցության ընթացքում տեղեկացել էի, որ նրանք ունեին Ֆրից և Կլարա Զիգրիստ-Հիլթի ամուսինների ընտանեկան պատմությանը նվիր-

⁸ Տե՛ս լուսանկար, էջ 61:

ված հարուստ գրական ժառանգություն, և որ ես այդ ամենին կարող էի տիրանալ, եթե դրանց թվայնացման համար վճարեի մի որոշ գումար: Մեծ ոգևորությամբ 2013 թ. սկզբում պատվիրեցի նրանց տրամադրության տակ եղած բոլոր փաստաթղթերը, որոնք մի քանի ամսից հետո էլ ստացա:

Անշուշտ, ուրախությունս սահման չունեի, հատկապես, երբ պարզեցի, որ AFZ-ի անձնակազմի ջանքերով նրանց մոտ եղած Զիգրիստների գրավոր ժառանգության նյութերը խնամքով վավերագրվել, ըստ թեմաների ու ժամանակի դասակարգվել էին, և ստեղծվել էր 16 փաթեթներից բաղկացած, օգտագործման համար մի շատ դյուրավետ համակարգ: Հպարտ զգացի նաև, որ այդ կարևոր աշխատանքը կատարվել էր իմ պատվերի հիման վրա:

Գիտակցեցի, որ ինձ բաժին էր հասել մի մեծ գանձ, և որ պետք էր արագ գործի անցնեի, որպեսզի հարուստ նյութից ինձ համար առանձնացնեի ամենակարևորը: Իսկ ի՞նչն էր ինձ համար կարևոր: Հայոց ցեղասպանությանը վերաբերող փաստաթղթեր՝ վկայություններ ու ապացույցներ, որոնք կհաստատեին, ինչպես նաև կլրացնեին Հայոց ցեղասպանության, հատկապես դրա՝ Ամանոսի տարածաշրջանում ծավալված ընթացքի մասին տվյալները: Անհրաժեշտ էր նաև արխիվային ֆոնդերի մեջ սահմանազատել ինձ հետաքրքրող ժամանակահատվածը, որը, ինչպես պարզվեց, այս փաստագրությունների մեջ էլ սկսվում էր հիմնականում 1915-ից: Դա այն տարին էր (այսպես էին ինձ հուշում թեկուզ առաջին հայացքից փաստաթղթերը), երբ Շվեյցարիայից նորապսակ գույզը, երկուստեք դեմ գնալով ծնողների խորհրդին, գրեթե եկեղեցու խորանից մեկնում է Թուրքիա, որը որպես Գերմանիային դաշնակցած երկիր մի քանի ամիս առաջ միացել էր Առաջին աշխարհամարտին: Արխիվի նյութերը պատմում են, որ երկար և հոգնեցուցիչ ճանապարհորդությունից հետո երիտասարդ շվեյցարացիները 1915 թ. մայիսին բնակություն են հաստատում հարավարևելյան Թուր-

քիայում, նախ՝ Էնթիլի (Entilli)⁹, իսկ մի քանի ամիս հետո՝ Քելեր (Keller), ներկայումս՝ Ֆևզիփաշա (Fevzipaşa) կոչվող գյուղերում: Քելերը երկաթուղային հանգուցակետ էր Ամանոսի լեռների փեշերին՝ պատմական Կիլիկիայում¹⁰, և այնտեղ՝ լեռնալանջի ժայռերի վրա գտնվող և աշխարհից կտրված տնակում¹¹, զույգն ապրել է մոտ երեք տարի: Նրանց Թուրքիա հասնելուց անմիջապես հետո սկսվել են հայերի տեղահանումները, և երկրի հյուսիսից եկող տարահանված հայերի ամբոխների համար դեպի սիրիական անապատները տանող գլխավոր ուղիներից մեկն անցել է Քելերով՝ նորապսակների տան առաջով: Զիգրիստ-Հիլթի ամուսինները ամիսներով, օրնիբուն հայերի մահվան երթերի ակնատեսն են դարձել: Պատահական չէ, որ այդ ընտանիքի արխիվային նյութերի մեջ, 1915-ից սկսած, հազիվ թե լինեն փաստաթղթեր, որոնք ինչ-որ կերպ չկրեն Հայոց ցեղասպանության դրոշմը:

Արխիվային այդ նյութերում ինձ համար ամենամեծ անակնկալը եղավ հայերեն մի գիրք¹²: Հեղինակը պրոֆեսոր Հայկազուն Արամյանն է, իսկ գրքի առաջին էջերում նրա

⁹ Տե՛ս զույգի լուսանկարը գրքի կազմի վրա՝ արված Էնթիլիում:

¹⁰ Կիլիկիան հայտնի է որպես Տավրոսի և Ամանոսի լեռնաշղթաների միջև գտնվող տարածք, որի վրա միջնադարում իրար են հաջորդել տարբեր տերություններ՝ ասորական, պարսկական, հռոմեական և այլն. 1080 թ. Մեծ Հայքից այստեղ ապաստանած հայ ազնվականները հիմնեցին Կիլիկիայի հայոց թագավորությունը, որը՝ որպես անկախ և ծաղկուն պետություն, գոյատևել է մինչև 1375 թ.:

«Կիլիկիայի հայերի փրկված գանձերը» (Hermann Goltz, 2000), ինչպես նաև այսօր էլ այդ տարածքում առկա հնադարյան շինությունների ավերակները վկայում են Կիլիկիայի հայոց թագավորության փառապանծ անցյալի մասին: Ներկայումս Կիլիկիայի տարածքը գրեթե ամբողջությամբ պատկանում է Թուրքիայի Հանրապետությանը: Ավելի մանրամասն տե՛ս <https://hy.wikipedia.org/wiki>:

¹¹ Տե՛ս լուսանկար, էջ 38:

¹² Արամյան, Հայկ Ա., Մեծ Եղեռնի Պատգամ. Հայոց Տանթեական, Քաւա-րան եւ Հրաշալի Յարութիւն, Պէյրութ, 1970:

ձեռքով գերմաներեն գրված 11.5.1971 թվակիր ձոնը, որը նվիրված է Ֆրից Զիգրիստ-Հիլթին և սկսում է այսպես. «Հա-վե՛րժ հիշատակ 1916-ի իմ անմոռանալի փրկչին»:

Եվ այսպես, Զիգրիստ-Հիլթիների՝ իմ տրամադրության տակ եղած գրական ամբողջ ժառանգությունն ուսումնասի-րելուց հետո կենտրոնացել եմ հետևյալ վավերագրերի վրա.

1. Կլարայի օրագիրը (ձեռագիր-գոթերեն)
2. Կլարայի ականատեսի վկայությունը՝ «Ամառ 1915» (ձեռագիր-գոթերեն)
3. Ֆրիցի երկու ձեռագիր գրվածքները
4. Ֆրիցի կողմից մեքենագրված նամակը «Հայ բարեկամներին»
5. Կենսագրություններ, մահախոսականներ (ձեռագիր և տպագիր)
6. Ռուդոլֆ Զիգրիստ-Կլայունայի չորս հոդվածը Վերդենբերգի տարեգրքում (տպագիր)¹³
7. Ռուդոլֆ Զիգրիստ-Կլայունայի նշումներն ու դիտողությունները (ձեռագիր-լատինատառ)
8. Հայկազուն Արամյանի հայերեն գիրքը (տպագիր)
9. Նամակներ, բացիկներ (ձեռագիր, մեքենագիր)
10. Լուսանկարներ, քարտեզներ:

Անմիջապես ինձ համար պարզ դարձավ, որ մինչև օրս այս բնագրերից կամ նրանց մասին քիչ բան է հրապարակ-

¹³ Ռուդոլֆ (Ռուդի) Զիգրիստ-Կլայունան (Rudolf Sigrist-Clalüna) (1918 - 2009) – Զիգրիստ-Հիլթի զույգի չորս որդիներից մեկը, ծնողների նամակնե-րի, օրագրերի և հիշողությունների հիման վրա չորս տարիների (1991-1994) ընթացքում Վերդենբերգյան տարեգրքում (Werdenberger Jahrbuch) հրատա-րակել է չորս հոդված «Վերդենբերգյան մի ընտանիք Արևելքում» (Eine Werdenberger Familie im Orient) խորագրի տակ (Jahrbuch, 1991, էջ 150-159, Jahrbuch, 1992, էջ 125-137, Jahrbuch, 1993, էջ 191-200, Jahrbuch, 1994, էջ 149-161):

ված, եղածն էլ՝ միայն քաղվածաբար ու իրար հետ ոչ կապակցված: Այդ է պատճառը, որ Կլարա և Ֆրից Զիգրիստ-Հիլթիների անուններն անծանոթ են մնացել ցեղասպանագիտությանը, և նույնիսկ Շվեյցարիայում շատ քչերին է հայտնի Զիգրիստ-Հիլթի գույգի գրական ժառանգությունը: Ուստի անելիքս անմիջապես ըմբռնեցի: Նախ և առաջ պետք է վերծանվեին հին տառատեսակով՝ գոթերենով գրված 100-ամյա վաղեմություն ունեցող առանձին՝ տարբեր ծավալի ձեռագրերը, իսկ դրանց մեջ մեծ աշխատանքի կարոտ էր Կլարայի երեքուկես տարվա օրագիրը, ինչպես նաև նրա ականատեսի վկայությունը: Ապա միայն կարելի էր մտածել Հայոց ցեղասպանությանը վերաբերող այստեղ ներկայացված ինչպես ձեռագիր, այնպես էլ տպագիր բոլոր նյութերը մշակելու, ի մի բերելու և դրանք՝ որպես Հայոց ցեղասպանությանը վերաբերող մի ամբողջական վավերագրություն, մեկ գրքի շրջանակներում հրատարակության պատրաստելու մասին: Գրքի մի այլ նպատակն էլ լինելու էր ընթերցողին հանձնել Առաջին աշխարհամարտի երեք տարիների ընթացքում Թուրքիայի հարավարևելյան տարածքներում հայտնված շվեյցարացի մի երիտասարդ գույգի փոթորկալից կյանքի պատմությունը: Անհրաժեշտ էր նոր կյանք շնորհել Կլարա և Զիգրիստ-Հիլթի անձնավորություններին և նրանց անունները պատմությանը հանձնել:

Գրքի կառուցվածքն ինքն իրեն առաջադրվեց: Այն պիտի ունենար երեք հիմնական գլուխ, որոնցից առաջին երկուսը առանձին-առանձին նվիրված էր լինելու շվեյցարացի ամուսիններին, իսկ երրորդը՝ հայորդի Հայկազուն Ա. Արամյանին: Ամբողջապես հենվելով փաստագրական նյութերի վրա՝ այս գիրքը պիտի դառնար մեկ դարից ավելի վաղեմություն ունեցող իրական կյանքի մի հուզիչ պատմություն՝ մարդկային անասելի տառապանքի, բայց և քրիստոնեական գթասրտության, խիզախության ու անձնագոհության մասին:

Զիգրիստ-Հիլթիների մասին գիրքը լույս էր տեսնելու նախ երեք լեզուներով՝ նկատի ունենալով ընթերցողների տարբեր շրջանակներ: Առաջինը լինելու էր գերմաներեն բնագրի հրատարակությունը, որն ուղղվելու էր գերմանախոս ընթերցողներին, բնականաբար, ամենից առաջ՝ շվեյցարացիներին: Ապա դրան հետևելու էր գրքի անգլերեն տարբերակը, որը Կլարա և Ֆրից Զիգրիստ-Հիլթիների անունները տարածելու էր աշխարհով մեկ:

Հատուկ նշանակություն ունի հայերեն ներկա հրատարակությունը, որն աշխարհում սփռված բոլոր հայերի սրտերը մի անգամ ևս երախտագիտությամբ է լցնելու Շվեյցարիայի նկատմամբ, որը ճակատագրական պահերին միշտ մոտ է կանգնել հայերին և գորավիզ է եղել նրանց: Հայերը չեն մոռանա, թե ինչպես դեռևս 19-րդ դարի վերջին (1894-1896) սուլթան Աբդուլ Համիդ Երկրորդի կազմակերպած ջարդերի ժամանակ Շվեյցարիայի տարբեր կանտոններում սկիզբ առավ հայանպաստ շարժումը: Խնդրագրեր ստորագրվեցին՝ պահանջելով դաշնային կառավարության միջնորդությունը Բարձր դռան առաջ, որպեսզի վերջ դրվի հայերի կոտորածներին: Հսկայական գումարներ հավաքվեցին և ուղարկվեցին հալածված քրիստոնյա եղբայրներին, հայ որբուկներ որդեգրվեցին շվեյցարացի ընտանիքներում¹⁴, և ամեն տեսակի օգնություն հասցվեց հայ փախստականներին: 1996 թ. Շվեյցարիայում ձևավորվեց «Հայասիրական շարժման կենտրոնական կոմիտեն» (Zentralkomitee der philarmenischen Bewegung)¹⁵:

¹⁴ Այդպիսի մի որբ էր սույն գրքի հերոսներից հայորդի Հայկազուն Ա. Արամյանը, տե՛ս էջ 312-313:

¹⁵ Շվեյցարիայի 1894 թ.-ից մինչև 1923 թ. Օսմանյան կայսրության մեջ տառապող հայ ժողովրդին մատուցած բարոյական և նյութական աջակցության մասին տե՛ս Աբել Մանուկյանի մեծածավալ և խորաթափանց ուսումնասիրությունը՝ Manoukian, Abel (2015): Տե՛ս նաև Hans-Lukas (Hg.), Kieser (1999):

1915-1923 թթ.¹⁶ Հայոց ցեղասպանության ժամանակ, էլ ավելի շատացան հանգանակություններն ու օգնությունները: Այդ շրջանում ստեղծվեցին «Հայաստանին օգնության 1915 թ. շվեյցարական ընկերակցություն» (Schweizerisches Hilfswerk 1915 für Armenien), ինչպես նաև Շվեյցարիայի մյուս հայանպաստ կազմակերպությունները, որոնք նեցուկ էին կանգնում տառապյալ հայ ժողովրդին: Անատոլիայում տեղի ունեցող ողբերգական իրադարձությունները իրենց լայն արձագանքն էին գտնում շվեյցարական մամուլում, և երկրի նույնիսկ ամենահեռավոր ծայրամասերում բնակչությունը տեղյակ էր և ցավում էր Անատոլիայում տեղի ունեցող եղեռնի համար¹⁶:

Հայոց ցեղասպանության շվեյցարացի ականատեսները ոչ միայն անմիջական գործունեություն են ծավալել և օգնության հասել կարիքավորներին, այլ նաև գրավոր վկայություններ են թողել, որոնք իրենց կարևոր նպաստն են բերել Հայոց ցեղասպանության պատմությանը:

Հիշենք թեկուզ միայն Յակոբ Բյունցլերին¹⁷՝ Ապենցել կանտոնից, և Բեատրիս Ռոներին¹⁸՝ Բազելից: Այդ և նման այլ մար-

¹⁶ Տե՛ս Ահարոնյան, Ավետիս (1912/2014):

¹⁷ Künzler Jakob (1871-1949) – Շվեյցարացի արեղա և միսիոնար, «Շվեյցարական հիվանդանոցի» բուժակ և ապա ղեկավար: Հայոց ցեղասպանության տարիներին հայերին ցուցաբերած իր անձնուրաց վերաբերմունքի շնորհիվ կոչվել է «Եղբայր Յակոբ»: Պատերազմից հետո նա հազարավոր հայ որբուկներ է փրկել՝ փոխադրելով նրանց Հալեպ: Հայտնի են նրա երկու գործերը՝ «Երեսուն տարի ծառայություն Արևելքում» (Dreißig Jahre Dienst am Orient) և «Արյան ու արցունքի երկրում» (Im Lande des Blutes und der Tränen): Երկու գրքերն էլ հայերեն են թարգմանվել Դորա Սաքայանի ու Էվելինա Մակարյանի կողմից և լույս տեսել Երևանի պետական համալսարանի հրատարակչությունում (տե՛ս գրականության ցանկը):

¹⁸ Beatrice Rohner (1876-1947) – Շվեյցարացի բուժքույր և միսիոնարուհի, ավետարանական աստվածաբան, «Արևելքի քրիստոնյաների օգնության գերմանական ընկերակցության» (Deutscher Hilfsbund für christliches Liebeswerk im Orient) և «Հայերի օգնության ընկերակցության» (Armenierhilfswerk) անդամ: Նախ եղել է Մարաշի որբանոցի մայրիկը (1915-1917), ապա անձնա-

դասեր շվեյցարացիների անունների ցանկը այսուհետև կհամայնվեն Կլարա և Ֆրից Զիգրիստ-Հիլթինների անուններով:

Լիահույս եմ, որ այս գիրքը լույս կսփռի համաշխարհային պատմության որոշ մույթ, իսկ հայերիս համար՝ ցավոտ էջերի վրա: Գրքի ընթերցումն իր հերթին էլ ավելի կամրացնի հայ և շվեյցարացի ժողովուրդների բարեկամական կապը:

կան կյանքը վտանգի տակ դնելով՝ Հյուսիսային Սիրիայի համակենտրոնացման ճամբարներում գտնվող վերապրող հայերի օգնական և Հալեպի 1000 հայ երեխաներից բաղկացած որբանոցի տնօրենուհի: Գրականությանը հայտնի է այն հոգեկան ցնցումը, որ մարդասեր տիկինն ապրեց, երբ երիտթուրքական կառավարությունը, իսլելով նրա սիրելի հայ որբուկներին, տեղափոխեց նրանց թուրքական որբանոցներ ու իսլամացրեց նրանց: Ռոնների նամակներն ու հաղորդագրությունները պահվում են Գերմանիայի արտգործնախարարության և Յ. Լեփսիուսի արխիվներում: Rohner-ի մասին տե՛ս գրականության ցանկը՝ Kaiser, Hilmar et al. (2002) և Kieser, Hans-Lukas (2008):



Վերդենբերգ 1908. Երիտասարդ Կլարա Հիլթին

Խա 1

ԿԼԱՐԱ ՋԻԳՐԻՍՏ-ՀԻՄԺԻ (1884-1988)

ՕՐԱԳԻՐ և ՎԵԿՈՅԳ

ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կլարան¹⁹ ծնվել է 1884 թ. հուլիսի 5-ին Սանկտ Գալեն (St. Gallen) կանտոնի Բուքս (Buchs)²⁰ քաղաքում: Նա առաջնեկն էր վերդենբերգցի Յոհան Փարավիցին Հիլթիի (Johann Paravicin Hilty von Werdenberg) և վինթերթուրցի Հաննայի՝ ծնյալ Էռնստ (Hanna, geb. Ernst von Wintherthur): Նա մեծացել է եղբոր՝ Կառլի և քրոջ՝ Հաննայի հետ, ապահով ու երջանիկ ապրել է ծնողների՝ Վերդենբերգյան լճի ափին գտնվող առանձնատանը: 1901 թ. Հիլթիների ընտանիքը ծանր կորուստ ապրեց, երբ որսորդական արկածի հետևանքով մահացավ նրանց 16-ամյա որդին՝ Կառլ Հիլթին:

1906 թ. Հիլթիները տեղափոխվեցին իրենց նորակառույց տունը, որը Կլարայի գինեգործ և գարեջրագործ հայրը իր ընտանիքի համար նախագծել ու կառուցել էր տվել իրենց ժամանակի հայտնի ճարտարապետ Էգոն Ռայնբերգերին (Egon Rheinberger): Ավանդական և ժամանակակից իր լուծումներով այդ շինությունը այսօր էլ համարվում է ճարտարապետական մի գլուխգործոց: Այն գտնվում է Վերդենբերգի

¹⁹ Կլարա Զիգրիստ-Հիլթիի կենսագրության համար օգտագործվել են հետևյալ աղբյուրները.

- ա) Ռուդի Զիգրիստ-Կլայունայի (Rudi Sigrist-Clalüna)՝ իր ծնողների պատմածների ու գրածների, ինչպես նաև իր սեփական հիշողությունների հիման վրա գրած չորս հոդվածները Վերդենբերգյան տարեգրքերում (տե՛ս գրականության ցանկը, էջ 416-417).
- բ) Ռուդի Զիգրիստ-Կլայունայի (Rudi Sigrist-Clalüna) թողած՝ մոր մասին ձեռագիր կենսագրությունը.
- գ) Էլսբեթ Մաագի (Elsbeth Maag) հոդվածը (տե՛ս գրականության ցանկը, էջ 414).
- դ) Կլարա Զիգրիստ-Հիլթիի օրագիրը:

²⁰ Բուքսը (Buchs) Շվեյցարիայի Սանկտ Գալեն (St. Gallen) կանտոնի ինքնավար համայնք է, որը գտնվում է գերմանական Շվեյցարիայի արևելքում և սահմանակից է Լիխթենշտայնին (Liechtenstein):



Բուքս. Տունը, որտեղ Կլարան ծնվել է, իսկ հետագայում՝ 1979-1986 թթ., ապրել է իր սանուհու՝ Մարիաննեի խնամքի տակ:



Վերդենբերգի տարեցների խնամատունը, որտեղ Կլարան մահացել է 104 տարեկան հասակում:

լճի (Werdenbergersee) օփին և Վերդենբերգի²¹ միջնադարյան դոյակ-ամրոցի²² հարևանությամբ: Այդ երկու շենքերը հաճախ երևում են շրջանի համայնապատկերի լուսանկարներում²³:

Կլարան ծագումով Վերդենբերգի բուրժուական հնագույն մի տոհմից էր, որի անդամները դեռևս կուսակալի ժամանակներում զբաղեցնում էին բարձր պաշտոններ: Նրա մեծ հորեղբայրը՝ պրոֆ. Կառլ Հիլթին (Prof. Karl Hilty), Շվեյցարիայի առաջին ներկայացուցիչն էր «Դեն Հաագի» (Den Haag) միջազգային դատաստանական աստյանում: Իսկ Վերդենբերգի դոյակի վերջին տիրուհին՝ Ֆրիդա Հիլթին (Frieda Hilty), նույնպես Կլարայի ազգականուհին էր:

Ինչպես այն ժամանակ ընդունված էր բարեկեցիկ ընտանիքների աղջիկների համար, Կլարան իր ավելի բարձր ուսումնառության առաջին տարիներն անցկացրել է Յուրիխի «Վիլլա Յալտա» (Villa Yalta) անունով աղջիկների միջնակարգ գիշերօթիկ դպրոցում: Այնտեղ նա բարեկամացել էր Շվեյցարիայի առաջին բժշկուհի՝ Մարի Հայմ-Ֆյոգթլինի (Marie Heim-Vögtlin)²⁴ հետ, և նրանց համատեղ կատարած

²¹ Վերդենբերգը (Werdenberg) Շվեյցարիայի և գուցե աշխարհի ամենափոքր քաղաքն է, որը հայտնի է Վերդենբերգյան լճի օփին գտնվող 40 լավ պահպանված փայտաշեն գեղատեսիլ տներով և իր ընդամենը 55-60 բնակիչով: Վերդենբերգի «քաղաք» կոչվելու իրավունքը պատմականորեն գալիս է միջնադարից: 2001-ից ի վեր Վերդենբերգ անունով է կոչվում մի ամբողջ ընտրաշրջան:

²² Արևելյան Շվեյցարիայում գտնվող Վերդենբերգի բերդը (Schloss Werdenberg) ունի 800 տարվա պատմություն: Միջնադարյան ճարտարապետության այս գեղեցիկ կոթողն այսօր պատմության թանգարան է, իսկ 1985-ից ի վեր այնտեղ կանոնավոր կերպով անցկացվում են դասական երաժշտության փառատոներ:

²³ Տե՛ս նկարը, էջ 386:

²⁴ Մարի Հայմ-Ֆյոգթլին (Marie Heim-Vögtlin) ծնվել է 1845 թ. հոկտեմբերի 7-ին Բեռլենում (Bözen), մահացել է 1916 թ. նոյեմբերի 7-ին Յուրիխում (Zürich): Հայրը եղել է Բեռլենի ժողովրդապետ և խրախուսել ու պաշտպանել է իր դստեր առաջավոր ձգտումները: Մարի Հայմ-Ֆեոգթլինը եղել է առաջին

ամենօրյա շրջագայությունները և խելացի կնոջ հետ աշխույժ գրույցները մնայուն ազդեցություն են ունեցել երիտասարդ Կլարայի մտածելակերպի վրա:

Նոյշաթելի (Neuchâtel) միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո Կլարան ընդունվել է Շվեյցարիայի հիվանդապահուիկների ուսումնարանը, որտեղ նա իր ընկերուհի Լիզ Ջիգրիստի (Lis Sigrist) հետ միաժամանակ ավարտել է ուսումը՝ ստանալով բուժքրոջ վկայական:

1914 թ. հունիսի 8-ին Կլարան աշխատանքի է անցել Գրաբսի (Grabs)²⁵ հիվանդանոցում՝ գլխավոր բժիշկ դ-ր Վայսի (Dr. Weiß) ենթակայությամբ: Այդ նույն շրջանում Կլարան իր ընկերուհի Լիզի միջոցով ծանոթացել է նրա եղբոր՝ ճարտարագետ Ֆրից Ջիգրիստի²⁶ հետ: Վերջինս 1910-1914 թթ. աշխատել էր Թուրքիայում՝ Բաղդադի երկաթգծի շինարարության վրա, և նույն տեղում երեք տարի ևս (1915-1918 թթ.) աշխատելու նոր պայմանագիր էր ստորագրել: Չնայած Թուրքիա մեկնելու հեռանկարին՝ 1914 թ. սեպտեմբերին Կլա-

շվեյցարացի կինը, որ բժշկություն է սովորել: Չնայած համայնքի հակամիտ կարծիքին՝ նա ընդունվել ու 1874 թ. ավարտել է Յյուրիխի համալսարանի բժշկական ֆակուլտետը: Ապա նա Լայպցիգում մասնագիտացել է որպես կանանց բժիշկ, որից հետո որոշ ժամանակ աշխատել է Դրեզդենում: Վերադառնալով Յյուրիխ՝ նա 1899 թ. հիմնել է կանանց հիվանդանոց ու նրան կից բուժքույրերի վարժարան: Մարի Հայմ-Ֆեդգոլինը ակտիվորեն մասնակցել է կանանց ընտրական և այլ իրավունքների ձեռքբերման համար պայքարին:

²⁵ Գրաբսը (Grabs) Սանկտ Գալեն (St. Gallen) կանտոնի ինքնավար համայնք է, որի կազմի մեջ է մտնում Վերդենբերգ քաղաքը: Այս երեք՝ Բուքս-Գրաբս-Վերդենբերգ (Buchs-Grabs-Werdenberg) անունները, փաստորեն, վերաբերում են գրեթե նույն տարածաշրջանում գտնվող երեք վայրերին, որոնք որոշ հատվածներում հատում են իրար կամ գտնվում են իրարից հազիվ կես կմ հեռավորության վրա: Այսպես, Կլարան ծնվել է Բուքսում, աշխատել է Գրաբսի հիվանդանոցում և կյանքի մեծ մասն անցկացրել Վերդենբերգում:

²⁶ Տե՛ս Ֆրից Ջիգրիստի կենսագրությունը, էջ 268:

րան և Ֆրիցը նշանվել են, իսկ 1915 թ. ապրիլին՝ ամուսնացել:

Իրենց պսակադրությունից անմիջապես հետո Զիգրիստ-Հիլթի (Sigrist-Hilty)²⁷ զույգը Վերդենբերգից երկաթուղով մեկնել է Թուրքիա, որը ամիսներ առաջ որպես Գերմանիայի դաշնակից մտել էր Առաջին աշխարհամարտ: Պատերազմական գոտին՝ Բալկաններն անցնելուց և Կոստանդնուպոլսում մի քանի օր կանգ առնելուց հետո նորապսակները ուղևորվել են դեպի Թուրքիայի հարավ-արևելքում գտնվող Էնթիլի (Entilli) կոչվող գյուղը՝ Ֆրիցի նոր աշխատավայրը պատմական Կիլիկիայում²⁸: Նրանք այնտեղ բնակվել են հինգ ամիս, ապա տեղափոխվել մոտակա Քելեր (Keller), այսօր Ֆեզիփաշայի (Fevzipaşa) վերանվանված բնակավայրը: Այնտեղ՝ Ամանոս լեռների փեշերին ընկած միայնակ տնակում, նրանք բնակություն են հաստատել և մնացել մոտ երեք տարի՝ 1915 թ. հոկտեմբերից մինչև 1918 թ. ապրիլը:

Թուրքիա տեղափոխվելը հիմնովին վերափոխեց Կլարայի կյանքը և ոչ միայն օտարերկրյա միջավայրում ու պատերազմի պայմաններում իրեն ամեն օր ներկայացող դժվարությունների պատճառով: Շվեյցարացի զույգի՝ Թուրքիա հասնելուց կարճ ժամանակ անց սկսվեցին հայերի տեղահանումները իրենց պատմական հայրենիքից և ապա ամբողջ Անատոլիայից, իսկ դեպի սիրիական անապատ տանող գլխավոր ճանապարհներից մեկը անցնում էր Քելերով: Կլա-

²⁷ Շվեյցարիայում մինչև 2013 թ. պսակադրությունից հետո զույգերը միացնում էին իրենց ազգանունները գծիկով կամ առանց գծիկի, և որպես ընդհանուր ազգանուն՝ կրում էին երկու ազգանուն: Ընդհանուր ազգանվան առաջինը լինում էր տղամարդու, երկրորդը՝ կնոջ ազգանունը: Այսպես, Կլարա և Ֆրից նորապսակներն սկսեցին կոչվել Clara Sigrist-Hilty և Fritz Sigrist-Hilty: 2013 թ. կրկնակի ազգանունների նոր գրանցումներ չեն թույլատրվում: Այսօր մարդիկ ամուսնությունից հետո ազատ են ընտրելու ամուսիններից մեկի ազգանունը որպես ընդհանուր ազգանուն և կամ ամեն մեկը պահպանելու իր ազգանունը:


րա Զիգրիստ-Հիլթին, որը դեռևս Շվեյցարիայում 1914-ից սկսել էր օրագիր պահել, իր օրագրությունների մեջ երեք տարի շարունակ ականատեսի իր վկայություններն է տալիս Օսմանյան կայսրության իր ապրած հատվածում Հայոց ցեղասպանության ընթացքի մասին: Նա անպաճույճ լեզվով նկարագրում է.

1. Ամանոսյան լեռների խորշերով անցնող և դեպի անապատ քշվող հայ վտարանդիների մահվան երթերը.
2. Քելերի, Կատմայի և Հալեպի ճամբարների ողբերգական վիճակը.
3. Բաղդադի երկաթգծի շինարարության մեջ ընդգրկված հազարավոր հայ աշխատավորների շահագործումն ու հետևողական բնաջնջումը:

Օրագրից բացի՝ Կլարան մեզ թողել է հատկապես Հայոց ցեղասպանությանը նվիրված 16 էջից բաղկացած «Ամառ 1915» վերնագրով ականատեսի իր վկայությունը: Դրա մեջ Կլարա Զիգրիստ-Հիլթին նկարագրում է «ամիսներով իրենց տան առաջով անցնող վտարանդի հայերի» հուսահատական վիճակն ու Հայոց ցեղասպանության հետ կապված բոլոր արհավիրքները:

1917 թ. հունվարի 26-ին Կլարա Զիգրիստ-Հիլթին աշխարհից կտրված Քելերի ժայռանիստ տնակում, ծննդկանի համար ամենաանբարենպաստ պայմաններում ունեցավ իր առաջին որդուն՝ Կառլֆրիդելիին (Karlfrideli): Ծննդաբերությունը տեղի ունեցավ գերմանացի զինվորական բժիշկ Քլագեսի (Klages) և բուժքույր, ընտանիքի բարեկամուհի, Հայոց ցեղասպանության պատմության մեջ հայտնի միսիոնարուհի Փաուլա Շեֆերի (Paula Schäfer) հոգածությամբ²⁹:

²⁹ Փաուլա Շեֆերի մասին տե՛ս էջ 164:



Վերդենբերգ 1906. Կլարայի հայրական տունը, որտեղից նա 1915 թ. ապրիլի իր պսակադրությունից հետո մեկնեց Թուրքիա:



Քելեր 1915-1918. Կլարայի և Ֆրիցի տնակը Թուրքիայում, որտեղ նրանք ապրեցին երեք տարի:

Թուրքիայում ապրած տարիները Կլարայի կյանքում շատ հակասական էին և ուսանելի. նա ոչ միայն թուրքերենին տիրապետեց, այլև սովորեց հաղթահարել ամեն տեսակի կենցաղային դժվարություն: Սակայն այդ տարիները նաև շատ փոթորկալից էին: Մի կողմից նա իրեն գերեզանիկ էր զգում իր ամուսնու և նորածնի հետ, մյուս կողմից տառապում իր շրջապատում կատարված արհավիրքներից, անասելիորեն զգում էր հայրենիքի կարոտը և երագում օր առաջ հեռանալ «այս անիծյալ Թուրքիայից»:

Ամուսնու՝ երկաթուղու շինարարության աշխատանքների ավարտից հետո Զիգրիստ-Հիլթի գույզը 1918 թ. ապրիլի 3-ին տունդարձի ճանապարհը բռնեց, որը Ֆեզիփաշայից մինչև Ստամբուլ երկար տևեց: Էլ ավելի երկար տևեց երիտասարդ ընտանիքի՝ երկրից ելքի թույլտվության ստացումը Ստամբուլում: 1918 թ. ապրիլի 7-ից մինչև 1918 թ. օգոստոսը նրանց Շվեյցարիա մեկնելու հրաման չէր տրվում: Ենթադրվում է, որ դա արվում էր, որպեսզի նրանք չկարողանային թարմ հիշողություններով Եվրոպա հասնել և այնտեղ մանրամասներ պատմել հայերի մահվան երթերի և նրանց նկատմամբ կատարված ոճիրների մասին: Կլարան, սակայն, որ կրկին հղի էր, շտապում էր, որովհետև ցանկություն չուներ Թուրքիայում ծննդաբերել նույն ծանր պայմանների ներքո, ինչպես իր առաջնեկի ժամանակ: Ի վերջո ընտանիքը նույն տարում ստացավ հայրենիք վերադառնալու իրավունքը: Շվեյցարիայում նրանք հաստատվեցին Վերդենբերգում՝ Կլարայի հայրական տանը, որը նա՝ որպես Հիլթիների առաջնեկ, օրինավոր կերպով ժառանգել էր:

1918 թ. նոյեմբերի 17-ին Կլարա Զիգրիստը Վերդենբերգում ծննդաբերեց եռյակ. երեքն էլ տղա՝ Կասպար, Հանս և Ռուդոլֆ (Ռուդի) անուններով:

Ինը տարի հետո՝ 1927 թ. վերջերին, Կլարան իր չորս տղաների հետ վերադարձավ Թուրքիա, քանի որ ամուսինը ստանձնել էր Ֆեզիփաշա-Դիարբեքիր երկաթգծի շինարա-

րության ղեկավարությունը: Դեռևս Շվեյցարիայում Կլարան իր երեխաներին սովորեցրել էր թուրքերեն: Ընտանիքը հաստատվեց Ստամբուլում, որտեղ որդիները հաճախում էին գերմանական դպրոց: Հայրիկի աշխատատեղը 1000 կմ հեռավորության վրա էր, և նա միայն ժամանակ առ ժամանակ էր կարողանում գալ և միանալ ընտանիքին: Ուստի Ստամբուլում չորս տղաների խնամքն ու դաստիարակությունը ամբողջովին մնացել էին Կլարայի ուսերին: Նա իր հասունացող որդիներին բազմակողմանի գիտելիքներ էր հաղորդում, բայց ամենից շատ իր օրինակով էր աշխատում նրանց դարձնել արժանապատիվ անձնավորություններ: Իր ազատ ժամերին նա դաշնամուր էր նվագում կամ նկարում էր: Սակայն երբ երեխաները տանն էին, նա ժամեր էր անցկացնում նրանց հետ՝ հաճախ նրանց հետ զրուցելով Աստծու և աշխարհի մասին: Չկար խոսակցության որևէ նյութ, որն արգելված էր (tabu): Իսկ առողջապահության հարցերը նախկին բուժքրոջ համար առաջնային էին: Սարսափն աչքերում՝ նա հիշատակում էր պատերազմի տարիները Անատոլիայում, երբ մարդիկ հազարներով մահանում էին արնալուծից (dysentery), հնդկախտից (cholera) կամ բժավոր տիֆից: Նա բացատրում էր որդիներին, թե ինչպես կարելի է կանխել հիվանդությունները: Միայն սպիտակարյունության դեմ, որով 1930 թ. հիվանդացավ եռյակներից մեկը՝ Կասպարը, Կլարան և բժշկությունն անգոր գտնվեցին: Արյան փոխներարկումը (իր սեփական արյունից) և այլ բուժումները չօգնեցին, և 1931 թ. մարտի 11-ին պատանին մահացավ: Նա հուղարկավորված է Ստամբուլի Ֆերիքոյի (Feriköy) գերեզմանատան ավետարականներին հատկացված հատվածում: Կլարան թղթին է հանձնել հիվանդության պատմությունը՝ դրա սկզբնավորումից մինչև որդու մահը:

1934-ին, երբ գերմանական դպրոցում զգալի դարձավ նացիոնալ-սոցիալիստների ազդեցությունը, Կլարան իր որդիներին տեղափոխեց Շվեյցարիայի ուսումնական հաստա-

տություններից մեկը: Մեկ տարի հետո նա նույնպես հայրենիք վերադարձավ, իսկ 1936 թ. ամուսինը հետևեց նրան: 1937-ից մինչև 1939-ը՝ որդիների ուսումնառության ընթացքում, Կլարան բնակվում էր նրանց մոտ՝ Ցյուրիխում:

Հետագա տարիները Կլարան իր ամուսնու և երեք որդիների հետ անցկացրեց Վերդենբերգ ամրոցի մոտակայքում գտնվող իր հայրական շքեղ առանձնատանը: 1979 թ., երբ 95 տարեկան հասակում Կլարան այլևս ինքնաբավ չէր, նա վերադարձավ Բուքս՝ իր ծննդյան տունը, որն այդ ժամանակ արդեն պատկանում էր Մարիանե Ենդերլին-Հիլթիի (Marianne Enderlin-Hilty) ընտանիքին: Նա այնտեղ ապրեց մինչև 1986 թ. իր սանուիում՝ Մարիանեի խնամքի ու հոգածության ներքո: Ապա տեղափոխվեց Վերդենբերգի տարեցների խնամատունը (Werdenberger Pflegeheim), որտեղ անցկացրեց իր կյանքի վերջին երկու տարիները:

Հարուստ և լիարժեք կյանքից հետո Կլարա Ջիգրիստ-Հիլթին 1988 թ. մահացավ Վերդենբերգի տարեցների խնամատանը հարյուր չորս տարեկան հասակում:

Օրագրի կառուցվածքը, ձեռագիրը և լեզվական ոճը

Կլարա Զիգրիստ-Հիլթին իր օրագրի համար օգտագործում է տպագիր մի հրատարակություն Walker-ի «Jahr für Jahr» (Տարեցտարի) շարքից: Դա հինգ տարվա համար նախատեսված օրացուցային կառուցվածքով մի գիրք է, որի 365 էջերը սկսվում են հունվարի 1-ով և ավարտվում դեկտեմբերի 31-ով: Յուրաքանչյուր էջը բաժանված է իրար հաջորդող հինգ հատվածի, որոնցից ամեն մեկը տարվա մեկ օրվա համար է³⁰: Այսպիսով՝ ամեն օրվա գրառումների համար տրամադրվում է էջի միայն մեկ հինգերորդ մասը: Այնտեղ օրագրողը նախ նշում է տարեթիվը, որից հետո կատարում է օրվա իր գրառումը: Պարտադիր չէ, որ գրառումներն սկսվեն հունվարի 1-ին: Օրինակ, եթե մարդ գրառումներն սկսում է որևէ տարվա մայիսի 5-ին, ապա ընտրում է մայիսի 5-ի էջը և տարեթիվը նշելուց հետո իր օրագրի բացումն է կատարում: Ապա անցնում է հաջորդ էջին՝ մայիսի 6-ին, և կրկին նույն տարեթիվով կատարում է օրագրի իր երկրորդ գրառումը: Եվ այսպես բոլոր էջերով անցնելուց հետո հասնում է տարվա վերջին: Հաջորդ տարվա համար վերադառնում է օրագրի սկիզբը՝ հունվարի 1-ի էջը, և այս անգամ անցնում է էջերի երկրորդ շարքի հատվածներին, որոնք միշտ սկսվում են հաջորդ տարվա նշումով: Եվ այսպես՝ տարեցտարի, օր օրի լցվում է օրագիրը: Ի դեպ, բնավ պարտադիր չէ, որ բոլոր հատվածները լրացված լինեն: Չգրված հատվածները մնում են պարապ. հաճախ գրառման բացակայությունն էլ իր ասելիքն ունի:

³⁰ Հմմտ. ձեռագրի նմուշը, էջ 42:

Պարզ է, որ նման օրագրում տեղը չի բավարարի՝ օրվա հիշարժան բոլոր եղելություններն արձանագրելու համար: Սակայն հնգամյա օրագրի այս սեղմ կառուցվածքն էլ ունի իր առավելությունը: Օրագրողը սովորում է՝ քիչ ժամանակ վատնելով վավերագրել օրվա հիմնական անցուղարձը, իսկ հաճախ մի քանի շտապ նշումն էլ իր գործը կատարում է: Ժամանակի և լեզվի խնայողական օգտագործումը ապահովում է օրագրի ոչ միայն երկար գոյատևումը, այլև գրառումների միասնական բնույթը: Տեքստի սեղմությունը ենթադրում է ճշգրտություն և օբյեկտիվություն: Շահեկան է նաև այն, որ նմանատիպ օրագրությունը վերջում թույլ է տալիս նույն էջի վրա վերանայել մի քանի տարվա գրառումները և համեմատել դրանք՝ ըստ իրենց բովանդակության³¹:

Ի դեպ, Կլարան ամբողջովին չի լրացրել իր հնգամյա օրագիր-գրքույկը: Մոտիկից գնելիս պարզվում է, որ նա իր առաջին գրառումները կատարել է 1914 թ. Շվեյցարիայում, և եթե անտեսենք 1914 թ. հունվարի 1-ին տեղադրած քառյակն ու հունիսին կատարած երկու հպանցիկ նշումները, որոնք վկայում են Գրաբսի (Grabs) հիվանդանոցում աշխատանքի անցնելու մասին, նա իր բուն օրագրությունն սկսում է միայն 1914 թ. սեպտեմբերին: Ամբողջ օրագրում հունվարի 1-ը միակ էջն է, որտեղ բոլոր հինգ հատվածները լցված են³²: Մնացած էջերը կա՛մ վերևից (մինչև 1914 թվականի սեպտեմբերը) և կա՛մ ներքևից (1918 թ.՝ ապրիլից հետո) պարապ են: Եվ նույնիսկ 1914-ի սեպտեմբերից մինչև 1915-ի ապրիլը Կլարան Շվեյցարիայում նույն ժրաջան օրագրողը չէ, ինչպես մենք նրան կոտեսնենք հետագա երեք տարիների ընթացքում Թուրքիայում: 1914 թ. սեպտեմբերից մինչև 1915 թ.-ի ապրիլն ընկած յոթ ամիսների ընթացքում նա կատարել է մի քանի հակիրճ նշումներ, և հատվածների մեծ մասը մնացել է

³¹ Հմմտ. Կլարայի հուլիսի 5-ի չորս տարվա գրառումները, էջ 45:

³² Հմմտ. էջ 42:

JULI 5

1914 Eigentlich Volltagen. 30 Geburtstag
auf dem Margelboff feieren, mein grösster
Kump, mein Bummel ist in mir Gross. Haben
(ein Professor der Sonntag vom Oesterreich).

1915 Sonntag ist eine dieser Tage. Zu
früh das Mathegepäck mir geben also
Haupt in in allen Tagen zwei eine Karawane (Re-
male mit Glocken) darüber das wimmern und
furchtung mit 20 Glocken und alle Geim-
gefühle das. Das steht darauf und ist der Tag das
geworden. Trübe werden.

1916 Einmal Geburtstag. in der Zeit von der
einen Woche. In der Zeit das Festen werden
hervor sein. Das 1 Jahr Roschen haben auf
in die die wichtigsten sind an dem... von
Das die... Roschen... das Fest
Roschen in... ein... das
Haupt &... das... das...
Haupt... das... das...

1917 Das Sonntag ist der Sonntag. das Fest in
das Fest... das... das...
das... das... das...
das... das... das...
das... das... das...
das... das... das...
das... das... das...

19

չգրված: Այնուամենայնիվ, կարելի է համարել, որ նրա օրագրության տևողությունը կազմում է 1914 թ. սեպտեմբերի 6-ից մինչև 1918 թ. ապրիլի 3-ն ընկած ժամանակաշրջանը, այսինքն՝ երեքուկես տարի, որն ընդգրկում է Շվեյցարիայի յոթ ամսվա նոսր էջերը և Թուրքիայում գրված երեք տարիների տեղեկություններով լի էջերը:

Կլարան կարողանում է շատ ճիշտ օգտագործել իր օրագրային գրքի սահմանափակ տարածությունը: Ժամանակի ընթացքում նա ձեռք է բերում խնայողական մի գրելաոճ, որը նկարագրական է և շատ արտահայտիչ: Նրա հակիրճ խոսքին, որը ներկայանում է մերթ որպես անվանական ձև՝ գոյականի կամ անորոշ դերբայի ձևով, մերթ ավելի երկար, սակայն մեծ մասամբ զեղչված (elliptic) նախադասություններով, հաջողվում է ընթերցողին հասցնել Կլարայի խոհերն ու հույզերը:

Մասամբ տեղի պակասի, մասամբ էլ Կլարայի զուսպ խառնվածքի պատճառով, օրագրում բացակայում են անձնական ու մտերմիկ բնույթի նկարագրությունները՝ բացառությամբ այն էջերի, որտեղ խոսքն իր առաջնեկ Կառլֆրիդելի մասին է: Հազվադեպ է նաև կանխակալ կարծիքների դրսևորումը: Օրագրության ամբողջ ընթացքում միայն երկու դեպքում է, որ նա իր սիրտը թեթևացնելու համար խախտում է իրեն տրամադրված տարածքի նեղ սահմանները՝ դուրս գալով նրանցից: Նա գնում է ու ծավալվում օրագիր-գրքի հավելվածում, որտեղ գտնում է «Հուշագիր» (Memorandum) խորագրով մի քանի պարապ էջեր: Այստեղ նա բավարար տեղ է ստանում, նաև համարձակություն՝ եղելությունների մասին բացեիբաց և հանգամանակից խոսելու: Անդրադառնալով իր՝ 1916 թ. հունվարի 21-ի և հունիսի 17-ի արդեն կատարած գրառումներին՝ նա ընդարձակում է մեկը և ամբողջովին վերարտադրում մյուսը: Որպես ականատես՝ Կլարան այստեղ ազատություն է տալիս իր գրչին և ըստ արժանվույն

նշավակում թուրք իշխանավորների բարոյական անկումը: Խոսքն այստեղ միայն հայերի նկատմամբ գործադրված բռնարարքների մասին չէ: Առաջին դրվագում Կլարան նկարագրում է գանակոծման (Bastinado)՝ միջնադարյան պատժի մի տեսարան, որն իր պատուհանի տակ կիրառում է մի թուրք սպա իր իսկ ջոկատի նկատմամբ: Իսկ պատճառը: Զինվորները, որոնք կրում են մարմնական այդ պատիժը, համարձակվել էին հիվանդության արձակուրդ պահանջել: Եվ սա առաջին գանակոծումը չէր, որ տեղի էր ունենում Կլարայի պատուհանի տակ:

Երկրորդ դրվագը այն անմարդկային վերաբերմունքի մասին է, որին ենթարկվում է ծանր հիվանդ հայ կանանց և երեխաների մի փոքր խումբ թուրք ոստիկանապետի՝ Կլարայի խոսքով՝ «դահճի» կողմից: Կլարան և Ֆրիցը տառապյալ խմբին նախապես հաց ու ջուր ուղարկելուց հետո մոտենում են նրանց՝ օգնելու ցանկությամբ: Ակներև է, որ այդ թշվառ մարդկանց անհապաղ հիվանդանոց պետք էր հասցնել, և Ֆրիցը նրանց տեղափոխելու համար գրաստներ է բերել տալիս: Մակայն հագիվ են մի քանի ջորի բերում, վրա է հասնում պատահաբար այդ տեղերով անցնող թուրք ոստիկանապետը, որը հրամայում է ջորիները ետ ուղարկել: «Մարդկանց, որոնք ի վիճակի չեն տասը քայլ անելու՝ առանց վայր ընկնելու,– գրում է Կլարան 1916 թ. հունիսի 17-ին,– պարտավորեցնում են առաջ շարժվել» և քարշ գալ մինչև հիվանդանոց: Խիստ վրդովված՝ Կլարան չի խնայում պարսավանքի իր խիստ խոսքերը անխիղճ թուրք պաշտոնյայի հասցեին: Այստեղ է, որ ընթերցողին պարզ է դառնում, թե որքան զուսպ է իր նկարագրությունների մեջ հեղինակը մնացած դեպքերում³³:

³³ Հմմտ. էջ 232 և 233:

Կլարան օգտագործում է գերմաներենի՝ իր ժամանակներում կիրառվող տառատեսակը՝ հայտնի «Քուրենթ» (Kurrent) կամ «գոթական» ձեռագիրը, որը տարածված էր մինչև 20-րդ դարի սկիզբը բոլոր գերմանախոս երկրներում: Հայացք ձգելով Կլարայի նամակներին կամ ականատեսի նրա վկայությանը³⁴, մարդ հիանում է: Տառերի այդ գեղեցիկ և համաչափ ընթացքը խոսում է նրա բարեկիրթ, կազմակերպված և մշակված անհատականության մասին: Ինչպես սպասելի է, օրագրի ձեռագիրը մի քիչ այլ տեսք ունի. տողերը հաճախ շտապողականությամբ են գրված և երբեմն նույնիսկ անընթեռնելի են: Այնուամենայնիվ, Կլարայի դժվարին ձեռագիրը վերծանելուն տրված իմ ժամանակն ու ջանքերը իզուր չեն համարում: Չէ՞ որ նրա օրագիրը պատմական կարևոր փաստաթուղթ է, որը չպետք է մատնվեր ժամանակի մոռացությանը:

Կլարայի լեզուն շվեյցարական վերին գերմաներենն է՝ բարբառային ձևերի որոշ միախառնումով, որոնք նրա գրածին տալիս են հաճելի երանգ և ուրույնություն: Գործածվում են գերմաներեն բառերի որոշ հելվետական տարբերակներ, որոնք մեծ մասամբ գերմանախոսին հասկանալի են: Փոքրացուցիչ -li կամ -i վերջածանցի հաճախակի գործածումը բառերը բարեհնչյուն է դարձնում՝ Կլարայի լեզվին տալով ժողովրդական հնչեղություն: Այդ վերջածանցներով նրա օգտագործած փաղաքշական ձևերն ունեն կենարար և լավատեսական նշանակություն, և հասկանալի է, թե ինչու դրանք երբեք տեղ չեն գտնում այնտեղ, որտեղ նա նկարագրում է ցեղասպանության հետ կապված մոայլ, երբեմն էլ սրտաճմրկ պատկերներ:

Նույնիսկ հապճեպ գրառումների ժամանակ Կլարայի խոսքի ընթացքը շարունակական է և ուղղագրական առումով՝ անբասիր: Անուշադրության գրեթե ոչ մի սխալ չկա, և սրբագրություններն էլ շատ սակավ են: Նրա գրվածքում

³⁴ Հմմտ. էջ 262 և 263:

հատկապես տպավորիչ է տեղանուններից և անձնանուններից շատերի ուղղագրական անթերիությունը: Մարդկանց անուններից առաջ նա հաճախ նշում է նրանց աստիճանը, պաշտոնն ու մասնագիտությունը, իսկ անուններն այլ տեղում կրկնելիս այդ տվյալները մնում են անփոփոխ: Այսպես՝ գլխավոր ճարտարագետ Վինքլեր (Oberingenieur Winkler), փոխգնդապետ Բյոթրիխ (Oberstleutnant Böttlich), գեներալ Ֆալքենհայն (General Falkenhayn), բարոն ֆոն Օպենհայմ (Baron v. Oppenheim), Նուրի բեյ (Nuri Bey), պատգամավոր Աբդուլ Ռահման փաշա (Abgeordneter Abdul Rahman Pascha), գլխավոր շտաբի պետ Քրեչմար (Generalstabschef Kretschmar) և ուրիշներ: Այս հանգամանքը մեծապես դյուրացրեց իմ աշխատանքը, երբ այդ անձնավորությունների մասին գրականության մեջ կամ համացանցում կենսագրական տեղեկություններ էի փնտրում³⁵:

Գրառումների վերծանման ընթացքում ինձ զարմացրեց հետևյալը. անձնանունների դեպքում Կլարան օգտագործել է ոչ թե գոթական, այլ ավելի պարզ և ընթեռնելի՝ բոլորգիր և լատինատառ ձեռագիրը, և դա նա կատարել է հետևողականորեն: Այդ հանգամանքը նույնպես շատ դյուրացրեց անունների վերծանման իմ գործը, բայց և տեղիք տվեց շատ հարցերի. ինչո՞ւ է հեղինակը ցանկացել անպայման հստակ ձևով գրել հատուկ անունները: Արդյո՞ք նա գիտեր, որ գրում էր պատմության համար, և որ մի օր այս օրագիրը պիտի հրատարակվեր: Հետագայում միայն տեղեկացա, որ այդ ժամանակաշրջանում գոթական ձեռագրերի մեջ հեղինակները միախառնում էին լատիներեն տառերը՝ պարզապես ապահովելու համար հատուկ անունների ընթեռնելիությունը:

³⁵ Հմտ. օրագրում հանդիպող անունների հետ կապված ծանոթագրությունները:

Օրագրի բովանդակությունը

Նշանախոսություն, հարսանիք և հարսանեկան ճանապարհորդություն

Ինչքան էլ սեղմ են Կլարայի գրառումները, նա լավ պատմել գիտի, և նրա գրեթե քառամյա օրագրից կարելի է քաղել շվեյցարացի զույգի համատեղ կյանքի սկզբնական հատվածի և մանավանդ Թուրքիայում անցկացրած երեք տարիների ամփոփ պատմությունը:

1914 թ. սեպտեմբեր ամիսը Կլարայի կյանքում վճռորոշ էր, և ինչպես վերևում նշվեց, նա այդ ամսում էլ սկսեց իր կանոնավոր օրագրությունը: Կլարայի նախկին համակուրսեցի և ընկերուհի նեթսթալցի (Netstal) Լիզ Ջիգրիստի (Lis Sigrist) միջոցով նա ծանոթացավ վերջինիս շնորհալի և բարետես եղբոր՝ ճարտարագետ-շինարար Ֆրից Ջիգրիստի (Fritz Sigrist) հետ: Կլարայի օրագրում սեպտեմբերի 6-ին կարդում ենք միայն մեկ նախադասություն. «Լիզն ու պարոն Ջիգրիստը մեր տանն են»: Ինչպես օրագիր պահողներից շատերը (չէ՞ որ մարդիկ միայն իրենց համար են օրագիր պահում), Կլարան սոսկ ակնարկներ է անում, և մեզ մնում է միայն կռահել, թե ինչ է տեղի ունենում նրա անձնական կյանքում: Մեր այսօր ունեցած կենսագրական տվյալների հիման վրա է միայն, որ կարող ենք եզրակացնել, թե ինչ են բովանդակում նրա սեղմ նշումներից շատերը: Եվ այսպես՝ պարզ է դառնում, որ այդ օրերին Ֆրիցը սիրատածում էր Կլարային և հորիզոնում նույնիսկ ամուսնության առաջարկ կար, իսկ վերջինս դժվարանում էր որոշում կայացնել: Երկու օր անց՝ 1914 թ. սեպտեմբերի 8-ին, Կլարան հապճեպ արձանագրում է ժողովրդական մի քառյակի հետևյալ տողը. «Միտքս շվարել-մնացել է երկմտանքի մեջ»: Հետագա օրերին նա ակնարկում է «Պարոն Ջիգրիստի» երկու նամակի մասին, որոնց բովանդակությունից Կլարան կարծես այնքան էլ գոհ չէ:




Վերդենբերգ 1914. Ֆրից Զիգրիստը և Կլարա Հիլթին՝ նշանված

Ոչ մի բացատրություն, թե ինչի մասին էր խոսքը, կամ ինչու էր նա դժգոհում կամ երկմտում: Սակայն այստեղ ևս դժվար չէ ենթադրություններ անել այսօրվա մեր տեղեկությունների հիման վրա: Վստահաբար դա կապ ուներ ճարտարագետ-շինարար Ֆրից Ջիգրիստի պաշտոնի հետ: Վերջինս դեռևս 1910-ից մինչև 1914-ը աշխատել էր Թուրքիայում՝ Բաղդադի երկաթուղու շինարարության վրա, և նրա աշխատանքային պայմանագիրը նորոգվելու էր 1915 թ.: Ֆրիցը շուտով կրկին վերադառնալու էր Թուրքիա, իսկ ամուսնության դեպքում Կլարան հետևելու էր նրան: Արդյո՞ք Կլարան պատրաստ էր կյանքի նման շրջադարձի: Մի՞թե խելամիտ քայլ էր պատերազմական ժամանակաշրջանում ճանապարհ ընկնել դեպի անորոշություն: Արդյո՞ք նա մի օր չէր զոջալու, որ ընդմիջտ դուրս է եկել հայրենի Գրաբսի (Grabs) հիվանդանոցում ընդամենը մի քանի ամիս առաջ նշանակված բուժքրոջ աշխատանքից, որն ինքն այնքան սիրում էր: 1914 թ. սեպտեմբերի 8-ին Կլարան գրում է. «Հիվանդանոցի ամբողջ ուրախությունս միանգամից հօդս է ցնդելու...»: Ապա երկար լռությունից, այսինքն՝ օրագրում բազմաթիվ պարապ հատվածներից հետո՝ սեպտեմբերի 26-ին, նա գրում է. «Հուսահատական անվճռականություն: Այսօր կարծես հակված եմ հաստատորեն ՈՉ ասելու»: Սակայն «պարոն Ջիգրիստի» երրորդ նամակից հետո, որով վերջինս հայտնում է, որ «հաջորդ օրը գալու է», ամեն ինչ հիմնովին փոխվում է: Սեպտեմբերի 30-ի արձանագրության մեջ արդեն տողերի արանքում կարդում ենք Կլարայի «ԱՅՈ»-ն. «Հիասքանչ արևոտ օր է, Ֆրիցը բերում է առաջին վարդերը»: Հոկտեմբերի 11-ին նրան այցելում է Լիզը. «Լիզն ինձ մոտ է: Ամբողջ սենյակս լեցուն է մեխակներով ու վարդերով»: Ակներն է դառնում, որ հոկտեմբերի 14-ին Հիլթինների տանը պաշտոնապես ամրագրվում է երիտասարդ զույգի միությունը, քանի որ կարդում ենք. «Ֆրիցը մեր տուն է բերում հորը, մորը, Իդային (Ida), Ռուդիին (Ruedi) և Հերբերթին (Herbert): Երեկոյան ես էլ

նրանց հետ գնում եմ իրենց տուն՝ Նեթսթալ (Netstal)»: Հաջորդ օրը՝ հոկտեմբերի 15-ին, «Քաղաքացիական գրանցումների գրասենյակում» արձանագրվում է Կլարայի և Ֆրիցի նշանադրությունը, և այդ ժամանակահատվածից սկսած մինչև 1915 թ. գարունը օրագրում շատ բան չի գրվում: Սակայն փոքրաթիվ և հակիրճ այդ գրառումներում էլ Ֆրիցի անունը միշտ առկա է: Նշանվածները իրար հետ զբոսնում են Վերդենբերգի գեղատեսիլ վայրերում, ուղևորություններ ձեռնարկում դեպի իրենց հայրենի երկրի տեսարժան վայրերը, գնում են Ցյուրիխ՝ համերգների, ազգականների մոտ այցելությունների և այլն: Թվում է, որ Կլարան երջանիկ է և խաղաղված՝ առանց դրա մասին շատ բան գրելու:

Միայն 1915 թ. ապրիլից է, որ Կլարան սկսում է կանոնավոր օրագիր վարել: Հուզումնալից ժամանակներ են, և ամեն ինչ հազեցած է զգացականությամբ: Բոլորի մեջ գերիշխում է առաջիկա հարսանիքի և նորապսակների՝ դեպի Թուրքիա կատարելիք ճանապարհորդության նախապատրաստությունների տրամադրությունը: Կյանքի իր այս շրջանում Կլարան շատ է զգում օրագրի կարիքը: Գրելիք շատ բան կա, իսկ մեկ օրվան տրամադրված տարածությունն օրագրի գրքույկում կարծես այլևս բավարար չէ: Որտեղ որ նա հնարավորինս շատ բան է ուզում տեղավորել, այնտեղ ձեռագիրը մանրանում է: Չկան չգրված հատվածներ:

Քաղաքացիական ամուսնության (1915, ապրիլի 12) և եկեղեցական պսակադրության (1915, ապրիլի 26) միջև ընկած երկու շաբաթների ընթացքում Կլարան մերթ ուրախ է, մերթ՝ տխուր: «Վերջին օրերի՝ իրար վայելելու տենդ»,— գրում է նա 1915 թ. ապրիլի 19-ին: Քաղաքացիական ամուսնությունից հետո կատարվում են հրաժեշտի այցեր: Կլարան շատ ժամանակ է անցկացնում յուրայինների՝ քրոջ՝ Հանելիի և նրա փոքրիկների՝ Յորգլի (Jörgli) և Վրենելիի (Vreneli) հետ, իսկ այնուհետև. «Հ.-ի հետ այցելում ենք գերեզմանատուն»: Ապրիլի 23-ին Կլարան գրում է. «Վերջին անգամ եմ քնում իմ



Վերդենբերգ 1915. Ֆրից Զիգրիստի և Կլարա Հիլթիի հարսանեկան
խմբանկարը

սենյակում»: Իսկ մեկնելուց երկու օր առաջ նա գրում է. «Պատկում եմ մայրիկիս և հայրիկիս սենյակում և երկար ժամանակ արթուն եմ. մայրիկս ինձ մոտ է գալիս»: Իսկ դրանից մեկ օր անց՝ իրենց հարսանիքի նախօրեին, գրում է. «.... Իմ վերջին գիշերն է մեր տանը: Մթության մեջ տեսնում եմ Մարգելքոպֆ (Margelkopf)³⁶ լեռան լույսերը»:

Կլարան մայրիկի հետ ճաշեր է պատրաստում, խմորեղեն թխում: Հարսանյաց կարկանդակն ու մյուս թխվածքները հաջող են ստացվում, և նա ապրիլի 24-ին, փոքր-ինչ խաղաղված, գրում է. «Ամեն ինչ հաջող է ընթանում, և բոլորն ուրախ են», որովհետև «նախապատրաստությունները վանում են առաջիկա բաժանման մասին մտքերը»: Ծաղիկներ, շատ ծաղիկներ է նա ստանում: Կլարան սիրում է ծաղիկներ ու բույսեր. դրանք սփռվում են նրան՝ ցրելով մռայլ մտքերը: Նա ամբողջ տունը զարդարում է ծառ ու ծաղկով:

1915 թ. ապրիլ: Ճակատագրական ամիս ամբողջ աշխարհի համար: Մոլեզնում է Առաջին աշխարհամարտը, և տեղի են ունենում բազմաթիվ ոճրագործություններ մարդկության դեմ: Թուրքիան, որ ներքաշված էր պատերազմի մեջ որպես Գերմանիայի դաշնակից, անշուշտ, լավագույն երկիրը չէր հարսանեկան ճանապարհորդության համար: Այնուամենայնիվ, երիտասարդները որոշումը կայացրել են և, հակառակ իրենց ծնողների կամքին, եկեղեցու խորանից ճանապարհ են ընկնում դեպի Թուրքիա: Դեռևս մարդիկ չգիտեին, որ հենց այդ նույն ժամանակ Թուրքիան Առաջին համաշխարհային պատերազմի ստվերում իրականացնում էր 20-րդ դարի առաջին ցեղասպանությունը:

Ահա թե ինչ է Կլարայի 1915 թ. ապրիլի 24-ի գրառման առաջին նախադասությունը. «Երկինքը միշտ³⁷ իր ամենա-

³⁶ Հմմտ. ծնթ., էջ 101-102 և լուսանկարները, էջ 103:

³⁷ Կլարան «միշտ» բառի տակ, անշուշտ, նկատի ունի «ամբողջ օրը»:

տխուր դեմքով է հանդես գալիս»։ Այս նախադասությունը վերծանելիս ես ցնցվեցի։ Ինչո՞ւ։

Պարզ է, որ Կլարան այստեղ երկնքի տխրությունը կապում է իր տրամադրության հետ։ Անշուշտ, նա ոչինչ չգիտեր այն ողբերգության մասին, որը 1915 թ. ապրիլի 24-ին տեղի էր ունենում Կոստանդնուպոլիս քաղաքում, որտեղ նորապսակները ճանապարհորդության ընթացքում կարճ ժամանակով պիտի կանգ առնեին, որպեսզի այնտեղից ուղևորվեին Թուրքիա՝ նրանց վերջնական բնակատեղին։ Կլարան, անշուշտ, չգիտեր, որ ապրիլի 24-ի գիշերը նախ Կոստանդնուպոլսում, ապա բոլոր հայաբնակ կենտրոններում սկսվել էր հայ մտավորականների՝ հայտնի գրողների, գիտնականների, հոգևորականների՝ Անատոլիայի այն ժամանակվա հայ առաջատար ընտրանու զանգվածային ձերբակալությունների, ապա նրանց անխտիր ոչնչացման առաջին փուլը³⁸։ Դրանով իսկ երիտթուրքական կառավարությունը գլխատում էր Անատոլիայի հայությանը և ճանապարհի հարթում ցեղասպանության միջոցով Օսմանյան կայսրությունում հայ ամբողջ բնակչության տեղահանման և բնաջնջման համար։

Սակայն յուրաքանչյուր հայ, ով այսօր կկարդա Կլարայի 1915 թ. ապրիլի 24-ի գրառումը, չի կարող չնկատել դրա առաջին նախադասության մեջ հավելագրված է աստվածային մի խորհուրդ։ Այստեղ հատկապես ուշագրավ է «միշտ» բառը, չնայած Կլարան դրա տակ ամբողջովին այլ բան նկատի ունի։ Նա ինչպե՞ս իմանար, թե այդ օրը որքան մթնեց հայության երկինքը, և որ 1915 թ.-ից սկսած՝ աշխարհի համայն հայության համար ապրիլի 24-ը ազգային սգի օր պիտի դառնար և որպես այդպիսին՝ «միշտ» պիտի նշվեր։ Ինչպե՞ս Կլարան կանխատեսեր, որ այդ ցեղասպանությունը մեծ ազդեցություն պիտի ունենար նաև իր և ամուսնու անձնական

³⁸ Հմմտ. Սաքայան, Դորա (խմբ.), Յուշարձան Ապրիլի 11-ի, Իստանբուլ, 2010։

կյանքի վրա: Թուրքիա ժամանելուն պես նրանք պիտի առերեսվեին մարդկային այդ ողբերգության հետ՝ դառնալով «տեղահանված հայերի անվերջանելի երթերի» ականատեսները, նաև իրենց պարտավորված պիտի զգային՝ դրա մասին վկայություն տալու³⁹: Ցեղասպանության սարսափելի տեսարանները պիտի մթագնեին նորապսակների մեղրամիսը: Եվ երկուսն էլ իրենց ամբողջ կյանքի ընթացքում պիտի կրեին այդ ծանր ապրումների բեռը:

Համաձայն իմ գլխավոր նպատակի, որը Կլարայի օրագրում Հայոց ցեղասպանության հետ առնչվող բոլոր գրառումները գտնելն էր, վերծանումներս սկսեցի 1915 թ. ապրիլից: Այդ աշխատանքը ես սկսեցի առանց ակնկալումի, որ Կլարայի ապրիլյան գրառումների մեջ Հայոց ցեղասպանության վերաբերյալ որևէ բան կգտնեմ: Պարզապես ցանկություն ունեի Կլարային ուղեկցելու նրա Թուրքիա կատարած ճանապարհորդության ժամանակ, և ընթերցողներին էլ տեղյակ պահելու անձանոթ երկրում նրա ստացած առաջին տպավորությունների մասին:

Նյութը վերծանելիս ես գիտակցեցի, որ Կլարայի օրագրում՝ ցեղասպանությանը վերաբերող վկայությունները ներկայանում են ոչ թե մեկուսի, այլ նաև ուրիշ, առաջին հայացքից ոչ շատ նշանակալից «առօրեական» իրադարձությունների հետ, և որ հենց այդ համատեքստում է, որ այդ վկայություններն իմաստավորվում են: Ուստի ես սկսեցի վերծանել և գրի առնել 1915 թ. ապրիլից սկսած նրա գրեթե բոլոր գրառումները: Կենտրոնանալով հիմնականում 1915 և 1916 թվականների վրա՝ ուզեցի Կլարայի աչքերով տեսնել ցեղասպանության տարիներին տեղի ունեցած ահարկու իրադարձությունները: Իսկ 1917 և 1918 թվականներից ընտրել եմ միայն այն գրառումները, որոնք առնչվում էին հայերի ողբերգությանը:

³⁹ Հմմտ. նաև Կլարա Զիգրիստ-Հիլթիի ականատեսի վկայությունը, էջ 249:

Ահա թե ինչ ենք տեղեկանում Կլարայի օրագրից նրանց 1915 թ. «հարսանեկան ճանապարհորդության» մասին: Վեր-դներեզգից իրենց պսակադրության օրն իսկ⁴⁰ Կլարան և Ֆրիցը ուղևորվում են դեպի Թուրքիա: Նրանք նախ երկաթուղով անցնում են Կենտրոնական Եվրոպայի պատերազմական գոտով, կարճ ժամանակով կանգ են առնում Վիեննայում և Բուդապեշտում, այնուհետև շարունակում են ուղևորությունը Բալկաններով դեպի Կոստանդնուպոլիս:

1915 թ. մայիսի 2-ին նա գրում է. «Վիրավորներ և փախստականներ: Կայարաններում հուսահատական տեսարաններ: Բիհարի լեռնաշղթան (Bihargebirge): Այնուհետև հայացք ձյունածածկ լեռների վրա: Ահա և մաքսային առաջին մեծ քննությունը: Պրեդեալ (Predeal) քաղաքը: Ժամացույցի սլաքները մեկ ժամով առաջ ենք տանում: Գնալով ավելի նկատելի են դառնում Արևելքի տհաճ կողմերը»:

Ռազմական փոխադրումների պատճառով ճանապարհորդությունը Շվեյցարիայից մինչև Կոստանդնուպոլիս տևում է մոտավորապես երկու շաբաթ: «Մեր գնացքն ամենուրեք կանգ է առնում ռազմական փոխադրումների պատճառով: Մեր առջևով անվերջ անցնում են զինվորական երկար գնացքներ»,– գրում է նա 1915 թ. մայիսի 5-ին: Սակայն նա չի տրտնջում. նրա աչքն ամենուրեք նկատում է նորն ու գեղեցիկը, և նա հիանում է անսովոր տեսարաններով, մանավանդ կենդանիների և բույսերի աշխարհում: Նույն օրը գրում է. «Բուլղարաթրքական գյուղեր: Հերկող գյուղացիներ՝ գույնգույն տարազներով: Արագիլների ամբողջական երամ-

⁴⁰ Իրենց հարսանիքի օրը՝ 1915 թ. ապրիլի 26-ին, Կլարան օրագրում գրում է. «Ապա Հանելին Ֆրիցին և ինձ ուղեկցում է երկաթուղային կայարան: [Գնացքը շարժվում է], բոլորը ձեռքի թափահարումով մեզ բարի ճանապարհ են մաղթում»: Մի ուրիշ վկայության համաձայն, ըստ օրագրի՝ նորապսակները ապրիլի 27-ին արդեն Ավստրիայում են: Այս ամենը խոսում է այն մասին, որ նորապսակները հենց նույն օրն են գնացք նստել ու մեկնել հարսանեկան ճանապարհորդության և ոչ թե մեկ օր հետո, ինչպես նշված է տարբեր տեղերում:

ներ: Թրաշուշանների դաշտեր: (...) Հասնում ենք Ադրիանուպոլիս (Adrianopol): Մզկիթ՝ երեկոյան արևի տակ»:

Կոստանդնուպոլսում ամուսիններին ջերմորեն դիմավորում են Բաղդադի երկաթուղու ղեկավարությունը, Ֆրիցի ազգականներն ու ընկերները: Ապա հաջորդում են շրջագայությունները Կոստանդնուպոլսի և շրջակայքի տեսարժան վայրերում: Ցավոք, պատերազմի պատճառով փակ են բոլոր թանգարանները: Ուղևորության շարունակությունը այստեղից մինչև իրենց վերջնակետ Ամանոսի լեռները շատ հոգնեցուցիչ է: Երկար ու վտանգավոր ճանապարհները իրենց դարձնում են անապատային միջոցներով կտրելով՝ նորապսակները Կոնիայից հասնում են Բոզանթի, իսկ այնտեղից էլ՝ Ադանա՝ Ժամանակ առ Ժամանակ գիշերելով մեծ մասամբ անհրապույր պայմաններում: Սակայն վայրենի տեղանքի տարաշխարհիկ հմայքը երբեք Կլարայի աչքից չի վրիպում և օրագրում միշտ իր տեղն է գտնում: Հատուկ կերպով հիշատակվում են նաև Ֆրիցի շվեյցարացի և գերմանացի գործընկերները, որոնք նրանց սրտանց դիմավորում են երկաթուղու յուրաքանչյուր հատվածում: Այսպես՝ Լոյթենեգերը (Leutenegger) իր մեքենայով Տավրոսի լեռներում՝ Ղարափունարում, գլխավոր ճարտարագետ Վինքլերը (Winkler)՝ Ադանայում, պարոն Մորֆը (Morf)՝ Այրանում, իսկ Էնթիլիում (Entilli)՝ պարոն Զյոփելը (Köppel): Վերջապես նորապսակները հասնում են Էնթիլի, որտեղ նախ բնակվում են մի ճամբարում՝ վրանների մեջ, իսկ ավելի ուշ՝ բարձրադիր մի տնակում: Հինգ ամիս հետո նրանք տեղափոխվում են Քելեր, որտեղ նրանք տեղավորվում ու մնում են Թուրքիայում իրենց գտնված ամբողջ շրջանում մինչև 1918 թ. ապրիլի սկիզբը: Այնտեղ նրանք բնակվում են պատմական Կիլիկիայի Ամանոսի լեռնաշղթայի փեշերին՝ Ժայռոտ բարձունքի վրա կառուցված մեկուսի մի տնակում⁴¹:

⁴¹ Տե՛ս Քելերի տան լուսանկարը, էջ 38:

Կյանքը Թուրքիայում

Կլարայի՝ Թուրքիայում կատարած առաջին երկու տարիների (1915–1916) օրագրային նշումները վերծանելու և գրքիս մեջ գրեթե ամբողջությամբ ընդգրկելու որոշումս ուներ մեկ այլ նպատակ ևս: Ընթերցողը պետք է պատկերացում ստանար շվեյցարացի նորապսակ ամուսինների նոր կյանքի մասին աշխարհից կտրված և մեծապես քրդերով բնակեցված հետամնաց գյուղում, որտեղ ավելացել էին նաև պատերազմական իրավիճակի հետ կապված դժվարությունները: Այդ իմաստով կյանքի պայմանները նոր էին նույնիսկ Ֆրիցի համար, որը երկրին սովոր էր և լեզվական արգելքներ էլ չուներ, քանի որ գիտեր արաբերեն, որոշ չափով՝ թուրքերեն: Իսկ բարեկեցիկ ընտանիքից սերած բարեկիրթ և փափկասուն շվեյցարուհու համար ամեն ինչ նոր էր ու խորթ. երկիրն ու մարդիկ, նրանց վարքն ու բարքը, աշխարհամասի խիստ կլիման, այնտեղ խոսվող լեզուները և բազմաթիվ այլ երևույթներ: Այդ իմաստով արժեք հետևել, թե խիզախ կինը ինչպես էր հաղթահարում բոլոր անսովոր պայմանները, տեսնել, թե ինչն էր այնտեղ իրեն հրապուրում, և ինչը՝ ոչ, և թե ինչպես էր նա հարմարվում կենցաղային ու մշակութային այդքան տարբեր պայմաններին: Ուշագրավ է, որ այդ ամենի մասին մենք բավարար չափով տեղեկանում ենք նրա օրագրի սեղմ գրառումներից:

Թուրքիայում կատարած իր առաջին իսկ նշումները Կլարային բնութագրում են որպես ճկուն, հնարագետ և ձեռներեց մի կնոջ: Տեսնում ենք, թե ինչպես այդ եվրոպացի կինը իրենց՝ Թուրքիա ժամանման առաջին իսկ ամսում յուղ է հալեցնում և պտղանուշ եփում, բակում լվացքը փռում և դրսում էլ արդուկում, սեփական գինին պատրաստում, իսկ անհրաժեշտության դեպքում՝ քարյուղի տակառում լոգանք ընդունում: Հետագայում տեսնում ենք նաև, թե ինչպես է նա տեղական և տնից ուղարկված սերմերով իր այգում բանջա-



Աշուն 1915. Նորապսակներ Կլարան և Ֆրիցը իրենց քեղերի տանը

րանոց ստեղծում, ծաղիկներ աճեցնում և այլն: Անշուշտ, այդ բոլորը նա անում է ոչ առանց օգնության, քանի որ Ֆրիցը նրան ապահովել էր օգնականների մի ամբողջ անձնակազմով: Նա ուներ աղախին՝ Գոհարը⁴², երկու տղամարդ ծառա՝ Յոզեֆին⁴³ և Մուսան⁴⁴: Զիգրիստներն ունեին նաև հայ այգեպան, որն ապրում էր այգում իր ամբողջ ընտանիքով, և թուրք պահակ՝ Բեքիր անունով, որին նրանք Բեքչի⁴⁵ էին կոչում, և որը հավաստաբար պահպանում էր նրանց տունն ու այգին: Այսպիսով՝ ամեն վաղ առավոտ, երբ ամուսինն իր հրացանով ձի է նստում ու աշխատանքի գնում, Կլարան տանն է մնում՝ շրջապատված օտար սպասավորներով: Սկզբից նեթ՝ 1915 թ. հունիսից, Կլարան սկսում է իր ուզած ձևով «մարզել» այդ օգնականներին, թեև «մեծ դժվարությամբ, շարժունների օգնությամբ և բառարանը ձեռքում»: Այդպես Կլարան սովորում է թուրքերենը: Կլարայի այդ ձեռներեցության շնորհիվ նրան հաջողվում է այդ երկրում ամեն տեսակի սպառման առարկաների այդպիսի սակավության պայմաններում երկու անգամ տուն-տեղ դնել. նախ՝ Էնթիլիում, ապա՝ հինգ ամիս հետո՝ Քելերում: Հիացմունք է պատճառում նրա ստեղծարարությունը. տեղավորվելուն պես կարճ ժամանակում նա կարողանում է այդ տները բարեկարգել՝ դրանք վերածելով հանգստավետ բնակարանների: Կլարայի հեգության մասին վկայում են նրա օրագրի այսպիսի նախադասությունները. «Դրսում ամեն ինչ գորշ է, ներքնում ճանապարհը չի երևում, բայց սենյակը տաքուկ է և գողտրիկ, թեև պետք է

⁴² Չնայած հայկական անվանը՝ Կլարայի աղախին Գոհարը, քուրդ էր: Տե՛ս նկարը գրքի կազմի վրա:

⁴³ Յոզեֆի մասին տե՛ս ծնթ., էջ 124:

⁴⁴ Զիգրիստ-Հիլթիների քուրդ սպասավորը, որը տարբեր ծառայություններ էր մատուցում տանը և դրսում: Երբ Կլարան առանց Ֆրիցի դուրս էր գալիս ձիավարության, Մուսան, հրացանը ձեռքին, ուղեկցում էր նրան: Տե՛ս լուսանկարը, էջ 81:

⁴⁵ Բեքչի – թուրքերեն «պահակ»:

ամենուրեք ամաններ տեղադրել (վերևից կաթոցների պատ-
ճառով)» (1915, նոյեմբերի 27): Սակայն նա չի տրտնջում,
քանի որ դրանից առաջ ավելի վատթար վիճակներում է
եղել. «Առաստաղից կաթում է մահճակալիս վրա» (1915, նո-
յեմբերի 12):

Սկզբնական շրջանում Կլարան հիացած է Կիլիկիայի
լեռնային անմշակ տեղանքի գեղեցկությամբ, որտեղ շատ
բան նրան հիշեցնում է հայրենի բնությունը: Ամեն եղանակի
նա շրջագայում է այդ վայրերում, հաճախ՝ հազվագյուտ սեր-
մերի և ալպիական վայրի ծաղիկների որոնումով: Իսկ այն-
տեղ ծաղիկների բոլոր անունները նրան ծանոթ են՝ ալպյան
մանուշակ, շաֆրան, նարգիզ, հիրիկ և լեռնավարդ, առյուծա-
բերան, գինարբուկ և խոլորձ: Երբ Ֆրիցը ազատ է, նրանք եր-
կուսով են շրջագայում ձիով կամ ոտքով, ուսումնասիրում
տեղանքը, իրար հետ այցելում Ամանոսի տարածաշրջանի
ազգագրական ու պատմական տեսակետից հետաքրքրու-
թյուն ներկայացնող անկյունները: Զույգը հրավիրվում է
քրդական տներից ներս հյուրասիրության: Կլարան տպա-
վորված է քրդերի բարքերից, նրանց ծեսերից՝ հարսանիք-
ներից ու թաղումներից: Ժայռոտ բարձունքի վրա թառած իր
տան պատուհանից կամ պատշգամբից նա տեսնում է տա-
րաշխարհիկ պատկերներ՝ ուղտերի քարավաններ, գեղեցիկ
ձիերի վրա նստած արաբներ, խայտաբղետ տարազներով
բեղվիներ և գնչուներ, որոնք իր աչքի առաջ մերթ տեղա-
դրում, մերթ հանում են իրենց վրանները: Նա հետաքրքրու-
թյամբ դիտում է քոչվոր խմբերի անցուդարձը և ոգևորված
գրում է դրա մասին օրագրում և տուն ուղարկած իր նամակ-
ներում:

Սակայն Քելերը երթևեկության կարևոր հանգուցակետ
էր՝ թիկունք տանող իր ճանապարհով, և շատ չանցած՝ պա-
տերազմն այնտեղ ևս ցույց է տալիս իր տգեղ դեմքը: Կլարայի
տեսադաշտում նոր տեսարաններ են բացվում. ռազմական



Քելեր 1917. Կլարան իր պատշգամբից դիտում է մահվան երթերը:



Քելեր 1915-1917. Մահվան երթերը լուսանկարելու խստագույն արգելքի պատճառով Ֆրիցը նկարել է ռազմական երթուղին, երբ այն մահվան երթերից ազատ էր:

պահեստուծի ահարկու տեղաշարժեր՝ «նիզակավորներ, հեծելագոր, հետևակ», «խոշոր հրետանիներով գերմանացի զինվորականներ», անգլիացի ու հնդիկ զերիների, ինչպես նաև ավար վերցված անգլիական դրոշների ցուցադրումներ և այլն: Հուլիս էն պատերազմի դասալիքների հալածանքը, նրանց վրա կրակոցները, որից հետո դաշտում մնացած և երկար ժամանակ չթաղված դիակները, մինչև որ Ֆրից Զիգրիստը, կնոջը խնայելով, զբաղվում է նրանց թաղելու կարգադրություններով: Այս բոլորը շատ է վշտացնում Կլարային: Շուտով պատերազմը ներխուժում է նաև Կլարայի անձնական կյանքը. 1915 թ. օգոստոսի 1-ին, որ Շվեյցարիայի համադաշնության օրն է և իրենց երկրի համար ազգային տոն, նա գրում է. «Գնդակը ծակել է [դրսում դրված] իմ փոքրիկ սեղանը»⁴⁶:

Անշուշտ, Կլարան սկզբում խրտնում է բնակավայրին ու տեղական բարքերին բնորոշ մի շարք՝ իրեն անսովոր երևույթներից: Այսպես, օրինակ, տեղացիների չափազանց վայրագ ձայներն ու երաժշտությունը փակուղու ճեղքման առիթով տոնակատարության ժամանակ (1915, հունիսի 15), մեռյալների հողին հանձնելու «աղմկոտ և անբարեպաշտ ծեսերը», որոնցից «մարդ սարսռում է» (1915, նոյեմբերի 7), և կամ տեղացիների՝ կենդանիների նկատմամբ դաժան վերաբերմունքը⁴⁷: Ժամանակի ընթացքում Կլարան ի վերջո համակերպվում է տեղացիների սովորություններին և այլևս շատ չի դժգոհում: Ինչ-որ չափով ժամանակի ընթացքում վարժվում է նաև պատերազմական ժամանակների հետ կապված դժվարություններին, մանավանդ գրկանքներին:

Այն, ինչի հետ Կլարան այդպես էլ չկարողացավ հաշտվել, իրենց տան մոտով անցնող տեղահանված⁴⁸ հայերի

⁴⁶ Այդ սեղանը կարելի է տեսնել սույն գրքի կազմի վրա զետեղված լուսանկարում:

⁴⁷ Հմմտ. ձիու վարժեցման նկարագրությունը (1915 թ. դեկտեմբերի 14-ին):

⁴⁸ Հայոց ցեղասպանության գրականության մեջ «տեղահանում» բառը ար-

ամենօրյա երթաշարերն էին, ինչպես նաև երեկոյան ներքնում՝ ձորում կազմավորվող ճամբարները, որտեղ գիշերում էին հյուծված, քաղցած և ծարավ հայերը՝ կանայք, երեխաներ ու տարիքավոր մարդիկ, քիչ դեպքերում՝ նաև տղամարդիկ, քանի որ նրանք նախապես արդեն առանձնացվել ու ոչնչացվել էին: Երեք տարի շարունակ շվեյցարացի նորապսակ ամուսիններն ամեն օր վիրավոր սրտով դիտում էին, «թե ինչպես ներքնում՝ սեպ ժայռերի միջև՝ կիրճում, խամրում էին ումանց լույսերը»⁴⁹, մինչդեռ իրենք վերևում՝ մեկուսի տնակում, շարունակում էին իրենց առօրյա կյանքը. հյուրեր էին ընդունում, տարեդարձներ ու քրիստոնեական տոներ նշում, ծնող դառնում և իրենց հանգստավետ տնակում ընտանեկան երջանկություն վայելում:

Պետք է նկատել, որ հայերի երթերի 1915 թ. սկզբնական շրջանի նկարագրությունները Կլարայի օրագրում ընթերցողին կարող են ինչ-որ առումով շփոթության մեջ գցել: Ըստ որոշ գրառումների՝ երիտասարդ շվեյցարուհին կարող է թվալ անտարբեր և սառնասիրտ, նույնիսկ անկարեկից: Ինձ ևս, երբ նոր էի սկսել վերծանել նրա՝ երբեմն դժվարընթեռնելի գրառումները, մտահոգում, նույնիսկ վրդովեցնում էր այդ հանգամանքը: Սակայն ժամանակի ընթացքում տպավորությունս փոխվեց, երբ Կլարայի գրառումների բնույթն էլ աստիճանաբար սկսեց փոխվել: Եվ ես հանդարտվեցի՝ հասկանալով հետևյալը. երբ դեռ նոր էին սկսել իրենց տան մոտով անցնող հայերի երթերը, Կլարան հանկարծակիի էր

մատավորվել է որպես մեղմասացություն («Euphemism»), որով Հայոց ցեղասպանության թուրք ժխտողները փորձում են այն քողարկել: Իրականում դրանք իրենց պատմական հայրենիքից արտաքսված և սիրիական շոգ անապատները քշված հազարավոր հայերի մահվան երթեր էին, որոնց նպատակը հայերին աքսորի ճանապարհներին կամ Դեր Զորի համակենտրոնացման ճամբարներում քաղցից ու ծաւալառ անելն ու բնաջնջելն էր:

⁴⁹ Տե՛ս Զիգրիստ-Կլայունա, Ռուդոլֆ, մաս 3, էջ 192:

եկել, քանի որ նա շատ անփորձ էր և քիչ բան էր հասկանում: Գուցե նա չէր էլ ցանկանում խորանալ իրադրության մեջ: Չէ՞ որ այդ նորապսակ և երջանիկ կինը բոլորովին այլ տրամադրության մեջ էր և չէր ցանկանում մթագնել իր նորաստեղծ ամուսնական կյանքը, այն էլ՝ ուրիշների ողբերգությամբ: Այսօր օրագրի ուշադիր ընթերցողը հասկանում է, որ անտեղյակ Կլարան միայն աստիճանաբար է ընկալում, թե ինչ է կատարվում իր աչքի առաջ, և որ դա նախամտածված և ծրագրավորված Հայոց ցեղասպանությունն էր: Եվ նա ըմբոստանում է «մինչև երկինք աղաղակող անարդարության դեմ»: Անշուշտ, զարգացած և ընթերցասեր կինն ընթացքում ուսումնասիրում է պատմությունը և տեղեկանում, որ «Վաղուց ի վեր այս ցեղը հակակրեւի էր իսլամին»: Եվ այդպէս է, որ օրագրի երկրորդ կեսում մենք տեսնում ենք բոլորովին մի այլ Կլարայի, որը համակված է զայրույթով, նույնիսկ սուկումով և ունի միայն մեկ երազանք՝ օր առաջ հեռանալ այդ «գարշելի երկրից»: Այդ նույն Կլարան է, երբ 1916 թ. հունիսի 13-ին, հղի վիճակում պառկած իր անկողնում, հանգստանում է և խիզախորեն թույլ է տալիս, որ հայորդի Հայկ Արամյանը թաքնվի իր մահճակալի տակ՝ խուսափելով ժանդարմների հալածանքներից:

Հայերի հալածանքների հետ կապված՝ Զիգրիստ-Հիլթի գույգի համար կար նաև մի հավելյալ մեծ մտահոգություն: Դա Բաղդադի երկաթուղու շինարարության վրա աշխատող հայերի ճակատագիրն էր: Կլարան ամուսնուց արդեն տեղեկացել էր, թե մինչ օրս երկաթուղու շինարարությունը որքան էր օգտվել հայ մասնագետների ներդրումից, և թե որքան էր այդ շինարարությունն օրըստօրե խափանվում երիտթուրքական կառավարության՝ այդ մասնագետների նկատմամբ ձեռնարկած ոտնձգությունների պատճառով:

Ըստ Արամյանի տվյալների՝ սկզբում ճարտարագետ Ֆրից Զիգրիստ-Հիլթին իր ձեռքի տակ ունեւորակյալ և շատ գնահատված ավելի քան 15 հազար հայ աշխատող, իսկ որոշ



Քելեր 1915. Զիգրիստ-Հիլթի գույզը ծառա Մուսայի հետ իրենց
բանջարանոցում

Ժամանակ անց նրանց թիվը գնալով նվազում էր, քանի որ հայերին վտարում էին աշխատանքից՝ փոխարինելով թուրք զինվորներով ու գաղթականներով, հնդիկ գերիներով և անփորձ մահմեդականներով: Կլարան ամեն օր այդ ամենի մասին լսում էր աշխատանքից տուն եկած, հոգնած և մտահոգ ամուսնուց, ինչպես նաև իրենց հաճախ այցելող «պարոններից» (այսպես է նա անվանում եվրոպացիներին, մեծ մասամբ երկաթուղու շվեյցարացի, գերմանացի և ավստրիացի ճարտարագետներին): Այդ հարգարժան պարոնայք Ամանոսի տարածաշրջանի երկաթուղային շինարարության տարբեր բաժինների ղեկավարներն էին՝ գերմանացի Վինքլերը Ադանայից, շվեյցարացիներ Մորֆը Այրանից, Քյոփլերը Էնթիլիից, ավստրիացի Քլաուսը Բադենից և շատ ուրիշներ, որոնք Զիգրիստների մշտական հյուրերն էին և նույնիսկ երբեմն օթևանում էին նրանց տանը: Նրանք իրենց հերթին պատմում էին, թե իրենց աշխատամասերում ինչպիսի հալածանքների էին ենթարկվում հայերը, և թե որքան ապարդյուն էին նրանց գերմարդկային ջանքերը՝ փրկելու իրենց հայ աշխատավորներին աքսորից ու ոչնչացումից: Զիգրիստների մոտ գրեթե ամեն օր տեղի էին ունենում հուզախառն խոսակցություններ՝ մինչև անգամ հայ անփոխարինելի աշխատողների անունները տալով⁵⁰: Անփոխարինելի էին նրանց համար հայ աշխատողները՝ գրասենյակային և մասնագետ ուժերից մինչև բեռնակիրն ու քարտաշը, որոնք ամեն օր ուղարկվում էին դեպի մահ, շատերը՝ ամբողջ ընտանիքներով: Պատմում էին, որ արտաքսված շինարարները հաճախ չէին հասնում իրենց վերջնակետին՝ Կատմա (Katma) կամ Դեր Զոր: Նրանք հենց ճանապարհին սպանվում էին հատուկ

⁵⁰ Բադենի երկաթուղու շինարարության վրա աշխատող որոշ հայերի անունները վկայակոչվում են նաև Կլարայի օրագրում: Նրանց ձակատագրի մասին տե՛ս էջ 193:

հանձնարարություն ստացած թուրք, հաճախ նաև գերմանացի ջոկատների կողմից:

1916 թ. հունիսի 17-ին Կլարան իր պարտքն է համարում օրագրում վկայելու գերմանացի զինվորների հետ իր ունեցած խոսակցության մասին: Այդ զինվորները, որոնք հայերի նկատմամբ իրագործված բոլոր արհավիրքների ականատեսն էին եղել, և նույնիսկ նրանցից մի քանիսը՝ հենց իրենք՝ հրամանը կատարողները, չեն կարողացել զսպել իրենց վրդովմունքն ու ասել են. «Շան վրա անգամ չէր կարելի այդպես կրակել»: Եվ ապա զայրույթով ավելացրել. «Եթե գերմանացի զինվորները այս բոլորի մասին դեռ հայրենիքում եղած ժամանակ իմանային, ոչ մեկն իրենցից չէր գա այստեղ՝ այս ջարդերին մասնակցելու»:

Կլարան իր օրագրում երբեմն գրեթե ամուսնու անունից տալիս է այնպիսի տեղեկություններ, որոնք վերջինս, ելնելով իր պաշտոնից, երբեք չէր համարձակվի գրել կամ ասել: Կլարայի օրագրային գրառումներից բացահայտվում է, որ Ֆրիցը ազդու լծակներ ուներ և գիտեր՝ երբ և որտեղ դրանք օգտագործել: Նա ուներ թուրք բարձրաստիճան ծանոթներ, որոնց դիմում էր՝ պաշտպանելու համար իր հսկողության տակ եղած հայ աշխատողներին և նրանց ընտանիքներին: Կլարան հպարտությամբ է հաղորդում իր ամուսնու բարեգործությունների մասին. այսպես, թե ինչպիսի անձնուրացությամբ է Ֆրիցը փրկում վտանգի մեջ հայտնված հայերին, արտաքսվող ընտանիքներին ապահովում դրամով և սնունդով, հիվանդներին տեղավորում հիվանդանոցներում, ծնողագուրկ երեխաներին՝ որբանոցներում և այլն: Երբ ժանդարմները ներխուժում են Զիգրիստների բակը և նրանց փոքրիկ ախոռից ձերբակալում ու տանում են հայ պարտիզպանի ամուսնացած աղջկան, Ֆրիցն է, որ երեկոյան նրան կրկին տուն է բերում: «Այս աշխատանքը նյարդեր է քայքայում»,– գրում է Կլարան՝ տեսնելով, որ գիշերը ամուսնու քունը չի տանում: Սակայն Ֆրիցի կարողությունն իր սահման-

ներն ունի, և միշտ չէ, որ նա կարողանում է իր կամքը թելադրել: Չէ՞ որ թուրքերի գործողությունները հայերի նկատմամբ գնալով ավելի վճռական և անգույթ են դառնում: 1917 թ. մարտի 16-ին Կլարան գրում է. «Կրկին հավաքում են հայերին: Ֆրիցին չի հաջողվում փրկել կաթնավաճառի ընտանիքին»:

Հենց որ ներքևում՝ հովտում, գիշերելու համար ճամբար է կազմավորվում, Կլարան ու Ֆրիցը գնում են այնտեղ՝ տարագիրների վիճակը մոտիկից տեսնելու: Հոգ չէ, թե օգնություն հասցնելն այնտեղ արգելված է, միևնույն է, նրանք միշտ մոտենում են հայերին՝ գուցե իրենց ներկայությամբ նրանց մի քիչ հույս ներշնչելու: Եվ ամեն անգամ հուսահատ տուն են վերադառնում՝ «համակված երկյուղով, կարեկցանքով և զայրությամբ, որ անկարող եղան որևէ բանով օգնության հասնել»:

Եվ Կլարան իր օրագրում մտորում է. «Յուրօրինակ աշխարհում ենք ապրում: Այս վայրն ինքնին լռության ու խաղաղության մարմնացում է: Բայց դրա կողքին ահա՛ զինվորները, երկաթուղային բանվորները և տարհանվածները» (1915, նոյեմբերի 4):

1916 թ. Կլարայի առաջին հղիությունը համընկնում է չափազանց ծանր ժամանակաշրջանի հետ, երբ ամանոսյան տարածաշրջանում հայերի դեմ հալածանքներն ու վայրագությունները անասելի չափերի են հասնում: Մի կողմից՝ հյուսիսից շարունակվող հայերի մեծածավալ մահվան երթերը, մյուս կողմից՝ Բաղդադի երկաթգծի շինարարության վրա աշխատող հայերի և նրանց ընտանիքների դեմ գնալով ավելի ուժեղացող ահաբեկչությունները: Թուրքերը եվրոպացիների աչքի առաջ ի կատար են ածում իրենց կարգախոսը՝ «Մահ բոլոր հայերին»: 1916 թ. ողբերգական եղելությունների հետ միասին լցվում է Կլարայի օրագիրը «դժբախտ» հայերի մասին տեղեկություններով: Նրան ամենուրեք ուղեկցում են ցեղասպանության ցնցող տեսարանները՝ իր տան պատու-

հանից թե պատշգամբից, իր զբոսանքների ժամանակ թե ամուսնու աշխատավայրն այցելելիս...: Անթիվ են նաև այլ ակնատեսներից եկած սրտաճմլիկ պատմությունները: Ամուսինը՝ իր միակ սփոփանքը, ամեն օր աշխատանքի է գնում՝ դեռ լույսը չբացված, շատ ուշ վերադառնում՝ մեծ մասամբ սիրտը կոտրված հայ աշխատավորների շարքերից նոր կորուստների պատճառով: Կլարան այս բոլորը տանում է ստոիկյան հանդարտությամբ: Իր տխրությունը նա հաղթահարում է տան մեջ և դրսում նախասիրած զբաղմունքներով, բայց առավելապես՝ մարդկային շփումներով: Նա սփոփանք է գտնում իրենց շրջանով անցնող ամուսնու եվրոպացի աշխատակիցների այցելությունների մեջ. մարդիկ, որոնք իրենց հերթին հյուրասեր շվեյցարացիների մոտ որոշ ջերմություն են վայելում: Օգնում են Կլարային նաև ամուսնու եվրոպացի ընկերների տիկնանց հետ ստեղծված ընկերական հարաբերությունները, հատկապես նրանց հետ հետ թեյ կամ սուրճ խմելու հաճելի պահերը:

Սակայն Կլարայի հղիության շրջանի ամենասիրելի հյուրը ավետարանական բուժքույր, գերմանուհի Փաուլա Շեֆերն է⁵¹, որի ամեն մի այցելությունը Կլարայի համար կարճեն «օրհնություն» էր: Չէ՞ որ առանց նրա Կլարան մնալու էր առանց որևէ բժշկական օգնության կամ խորհրդատուի: Ի դեպ, մինչև ծննդաբերության վերջին օրերը Զիգրիստները անորոշության մեջ էին, թե որտեղ է նրանց երեխան ծնվելու, և թե ով էր լինելու Կլարայի ծննդաբերությանը ներկա բժիշկը: Ի վերջո Կլարան իր առաջնեկ որդուն՝ Կառլֆրիդեիին, ունեցավ 1917 թ. հունվարի 26-ին Քելերի բարձրադիր ու միայնակ տնակում հազարապետ վիրաբույժ դ-ր Կլագեսի (Klages) և բուժքույր Փաուլա Շեֆերի հսկողության ներքո և, անշուշտ, իր ամուսնու՝ Ֆրիցի մտավախ հայացքի

⁵¹ Փաուլա Շեֆերի մասին տե՛ս էջ 180:



Քելեր 1915-1916. Քույր Փաուլա Շեֆերի լուսանկարը մի խումբ բնիկ քրդերի հետ

ներքո: Ծննդաբերությունը դժվար էր, բայց, բարեբախտաբար, առանց բարդությունների:

Մայրությունը՝ Կլարայի կյանքի նշանակալից այդ շրջադարձը, որոշ չափով շեղեց նրա ուշադրությունը Թուրքիայում ամենօրյա ծանր իրադարձություններից: Սկսած 1917 թ. հունվարի 26-ից՝ նրա օրագրություններում մեծ տեղ են գրավում տեղեկություններ՝ իր փոքրիկի ամենօրյա առաջխաղացման, նրա առողջական վիճակի և մանավանդ նրա՝ Զիգրիստ զույգին պարզևած երջանիկ պահերի մասին:

Պայքար միջատների ու համաճարակների դեմ

Մշտապես առաջնորդվելով առողջաբանության և առողջապահության կանոններով՝ մասնագիտությամբ բուժքույր Կլարան մեծ եռանդով է իր շրջապատում մաքրություն և կարգ ու կանոն ստեղծում: Նրա օրագրից տեղեկանում ենք, թե ինչպես է նա հիվանդություններ կանխում և բուժում, միջատների դեմ պայքարում, անգամ կարիճներ և մորմեր ոչնչացնում: Իսկ միջատները վխտում են նրանց շրջապատում. «Կրկին մորեխների սովար պարսեր են թափվում երկրի վրա» (1915, սեպտեմբերի 20): Կամ՝ «Երեկոն լցվում է մորեխների, բզեզների և թիթեռների բզզոցով, բոլորը գալիս են դեպի լույսը»: Կամ՝ «Մոծակներով լեցուն սոսկալի գիշեր» (1915, սեպտեմբերի 24): Լինում են և ավելի տագնապալից դեպքեր. «Հայտնաբերում եմ ոջիլներ: Անմիջապես ամեն ինչ մաքրվում է և իսկույն հանձնվում լվացքի» (1917, սեպտեմբերի 19): Կամ՝ «Ավազաճանճերի որս» (1915, հոկտեմբերի 5): «Մարսափելի գիշեր չորս փայտոջիլի հետ» (1915, հոկտեմբերի 27), կամ՝ «Սպանվեց ութերորդ կարիճը, այս անգամ՝ ննջասենյակում» (1916, օգոստոսի 18): Նա շատ ավելի է տագնապում, երբ հայտնաբերում է, որ Կառլֆրիդելիի մահճակալն է բնակեցված միջատներով:

1917 թ. հունիսի 26-ին Կլարան գրում է. «Փայտոջիլ եմ գտնում փոքրիկի մահճակալի մեջ, որն անմիջապես եռացած ջրով է մշակվում լողարանի տաշտում»: Երբեմն մարդ հիանում է Կլարայի արիությամբ. «Նախասենյակում կար եմ անում, հանկարծ առաստաղից ինչ-որ բան է ընկնում աշխատանքիս վրա, և երբ գնում եմ, տեսնում եմ կարիճի և մորեխի մենամարտը: Հաղթահարելով սարսափը՝ գնում եմ կրակի ունելին բերելու» (1917, օգոստոսի 13):

Այսպիսի դժվարին պայմաններում Կլարան ժամանակի ընթացքում տոկունություն է ձեռք բերում: Եվ նա անտարբերությամբ է կարողանում դիտել, թե ինչպես է ամուսինը իժեր սպանում, օձերի վրա կրակում, շնագայլերի համար թակարդներ լարում և ոչնչացնում ամեն կարգի վնասակար միջատներ:

Այնուամենայնիվ, Կլարան սոսկում է մակաբույծներից: Նա լավ գիտի, թե որքան լուրջ է միջատներից եկող վտանգը: Նրան հայտնի է, որ փոքրիկ մի ոջիլ կարող էր բծավոր տիֆի հարուցիչը լինել, որ մոծակները փոխանցում են դողերոցքը, իսկ ճանճերը՝ տարածում ամեն տեսակի վարակիչ հիվանդություններ: Նա տեղյակ է նաև, որ այդ հիվանդությունների նկատմամբ ամենից ընկալունակները հալածված, քաղցած, ծարավ, կախաղան հանված և ի վերջո նահատակված հայերն են, որոնք փոված են ամենաանսպասելի տեղերում և այդ ախտերի տարածողն են: Կլարան սարսափով նկարագրում է հայերի միակ «կանտնավոր թաղումը», որը նա տեսել էր Հալեպ քաղաքում. «Մի փոքրիկ ութամյա տղա քիչ է մնում՝ դուրս ընկնի իր դագաղից: Վիտում է ճանճերի բազմությունը: (...) Սպասելի են մեծ համաճարակներ» (1915, սեպտեմբերի 28):

Ամբողջ տարածաշրջանում տիրող առողջապահական սարսափելի իրավիճակը, հիբրավի, տարափոխիկ հիվանդություններ և համաճարակ է հարուցում՝ բծավոր տիֆ, դողերոցք, տենդախտ (խոլերա), արնալուծ, աչքի եգիպտական

հիվանդություն (տրախոմա) և այլն: Զիգրիստների հավաքույթներում վարակիչ հիվանդությունները դառնում են խոսակցությունների կարևոր նյութ: 1916 թ. սկզբներին արդեն խոսում են իրենց շրջապատի եվրոպացիների մասին, որոնք վարակվել էին այս կամ այն հիվանդությամբ: Բնականաբար, ավելի հաճախ հիվանդանում են բժիշկները: 1916 թ. հունվարի 24-ին Կլարան գրում է. «Բժիշկ Ֆարահը (Farah) ճաշին այստեղ է: Նա եկել է Բադչեից, որտեղ բժիշկ Քոնոսը (Konos) հիվանդացել է բժավոր տիֆով»: Այնուհետև՝ 1916 թ. փետրվարի 9-ին գրում է. «Իսկ հիմա բժավոր տիֆով է հիվանդանում նաև բժիշկ Բադիեն (Badier), որը Էնթիլիում փոխարինում է մեր բժշկին: Այսպիսով՝ ուղեմասն այլևս բժիշկ չունի: Այստեղ ու այնտեղ կա արդեն ինը դեպք»: «Մեր շուրջը գրեթե բոլորը ջերմում են»,– գրառված է հուլիսի 3-ին, իսկ 1916 թ. սեպտեմբերի 7-ին Ֆրիցի ենթակայության տակ աշխատող գերմանացի ճարտարագետներից մեկի կինը՝ տիկին Վիթիգը (Wittig), իրեն վատ էր զգացել, և բժիշկն ախտորոշել էր բժավոր տիֆ:

Համաճարակներից հնդկախոն էր (խոլերան), որ ամենաշատը տարածվեց հարավարևելյան Թուրքիայում: Կլարան հնդկախոտի առաջին դեպքերի մասին հաղորդում է 1915 թ. հոկտեմբերի 5-ին, իսկ 1916 թ. մայիսի 22-ին նշում է, որ դրա պատճառով Հալեպում փակվել են դպրոցները: Մի այլ տեղում Ամանոսի տարածաշրջանում պաշտոնավարող գերմանացի սանիտարական բժիշկ Շիլինգը⁵² (Schilling) հաղորդում է հետևյալը. «Բժիշկ Շիֆն (Schiff) ու էս Ամանոսում տեսանք շատ գյուղեր, որոնք վարակված էին հնդկախոտով, հավանաբար փոխանցված հյուսիսից եկած հայ գաղթականների միջոցով: Վարակի աղբյուր կարող էր լինել Իսլահիեից երեք ժամվա հեռավորությամբ հյուսիսում գտնվող կեղտոտ

⁵² Շիլինգի մասին տե՛ս էջ 169:

փողոցներով մի գյուղ՝ Քելեր անունով, որի կենտրոնով անցնում էր հոսող աղբյուրից սկիզբ առած ջրատար մի առու: Դրա ջուրը, չնայած իր ծայրահեղ անմաքրությանը, առատորեն օգտագործվում էր խմելու, լվացք անելու, ողողելու համար» (Schilling: 1920, 19): Կլարան ճիշտ այդ աղբյուրն է ակնարկում, երբ ասում է. «Երեկ երեկոյան տենդախտի առաջին դեպքերը այստեղ հասան արտաքսված հայերի միջոցով: Նրանք գալարվում են և մահանում հենց գյուղի աղբյուրի մոտ: Երկուսիս մտքին միայն փախչելն է գալիս» (1916, հունիսի 25): Իսկ ո՞վ է Զիգրիստների փոխարեն Քելերից փախչում: Թուրք պարետը: 1916 թ. հունիսի 26-ին Կլարան սարսափով գրում է. «Պարետը հավաքեց փասա-փուսեն ու հեռացավ՝ հանկարծ հրամա՞ն ստանալով, թե՞ հնդկախտի ահից: Իսկ հավաքված հայերին, որոնց կասկածում են, որ հնդկախտով վարակված են, նա հրամայեց գնալ, ուր որ ուզում են: Բոլորը միանգամից ցրվեցին: Կանանցից մեկը գիշերը գնացել էր գյուղի ակումբը, որտեղ և մահացել էր: Ֆրիցն ամենայն հանդարտությամբ հայտնեց մի թուրքի, որ մեզ մոտ օրենքի նման «առաջնորդներին» կախում են»:

Բարեբախտաբար, այս բոլոր համաճարակներին հետևեցին պատվաստումներ ու արգելանոցներ, և Զիգրիստ-Հիլթի ամուսինները գերծ մնացին հիվանդություններից:

Երջանիկ ամուսնություն

Օրագրից տեղեկանում ենք, որ չնայած բոլոր անբարենպաստ պայմաններին՝ Կլարան և Ֆրիցը այդ երեք տարիների ընթացքում Թուրքիայում երջանիկ զույգ էին: Ճիշտ է, որ Կլարայի օրագրում քիչ է խոսվում դրա մասին, սակայն ամուսինների սերն իրար նկատմամբ, թեկուզ լռելյայն, միշտ առկա է: Մեծ մասամբ դա արտահայտվում է ծաղիկների միջոցով: Կլարան արձանագրում է, որ ամուսինը տուն է գալիս



Քելեր 1917. Կլարան իր առաջնեկ որդու՝ Կառլֆրիդեւիի հետ

ծաղիկներով և ոչ միայն իր կնոջ ծննդյան օրվա առթիվ: Մեկ էլ տեսար՝ Ֆրիցը տուն է գալիս ծաղկած ծառի մի ճյուղով կամ աշնանային վայրի ծաղիկների հսկա փնջով: Կլարան, իր հերթին, որպես ծաղիկների սիրահար, գրեթե տարվա ամեն եղանակին զբոսանքներից տուն է վերադառնում պեսպես վայրի ծաղիկներով՝ դրանցով զարդարելով տան ամեն մի անկյունը: Իսկ Ֆրիցը դա գնահատել գիտի: 1916 թ. ապրիլի 26-ին Կլարան արտահայտում է իր ներքին հրճվանքը. «Ֆրիցը առանց խոսքերի էլ գիտի արժանին մատուցել սեղանին դրված իմ բազմապիսի ծաղիկներին»:

Ջուլյգի երջանկության մասին բառացիորեն վկայում է Կլարայի 1915 թ. նոյեմբերի 25-ի գրառումը: «Առաջին անգամ ջեռուցվում է սենյակը: Հաճելի մթնոլորտ է: Իսկ երջանկության խոր զգացողությունը ավելի է ջերմացնում մարդուն: Ընթրիքից հետո գնում եմ Ֆրիցի մոտ՝ գրասենյակ»: Իրապես, Ֆրիցը շատ էր սիրում, երբ կինն ընկերանում էր նրան իր աշխատանքային ժամերին գրասենյակում, որը գտնվում էր նույն հարկի վրա:

Նորապսակների համար 1915 թ. եզրափակվում է եղևնու՝ իրենց ձեռքերով ձևավորված խաղալիքներով զարդարված ծառի մոտ մեկական բաժակ պունչով և օրագրի հետևյալ գրությամբ. «Հանգիստ ենք, երջանիկ և շնորհակալ»: Նրանց առաջնեկի՝ Կառլֆրիդելիի ծնվելու հաջորդ օրը, չնայած անասելի դժվար ծննդաբերությանը, Կլարան արձանագրում է. «Ի՞նչ գերերջանիկ մարդիկ ենք մենք: Ֆրիցը գրեթե միշտ վերևում՝ մեր տանն է, երբեմն նստում է կողքիս՝ մահճակալի եզրին, կամ ավելի հաճախ կանգնում է փոքրիկ մահճակալի առաջ և հմայված դիտում է մեր մանչուկին» (1917, հունվարի 27):

Կլարան մոտ է կանգնած ամուսնու մասնագիտական կյանքին, իսկ Ֆրիցը նրան սիրով ամեն ինչի մասին տեղյակ է պահում: Երիտասարդ կինը կարծես աշխատախմբի մաս է կազմում. բոլորի հետ մտերիմ է, իսկ երբ գրում է երկաթու-

ղուն վերաբերող եղելությունների մասին, գործածում է «մենք» և «մեր» դերանունները, օրինակ՝ «Մեզ մնացել է միայն հազար հայ աշխատող» (1916, փետրվարի 13), կամ՝ «Մեզ չի հաջողվում ազատել նույնիսկ որբ աղջիկներին» (1916, հունիսի 18): Եվ այսպես, «մեր զինվորները», «մեր թիմը» և այլն:

Ֆրիցը ավելի շատ ժամանակ է անցկացնում ուղեմասում, քան Կլարան կկամենար, և երբեմն նա դա շեշտում է. «Ֆրիցն ամեն օր ուղեմասում է և տուն է գալիս միայն ընթրիքին» (1915, հունիսի 25): Սակայն նա չի առարկում, որովհետև գիտի՝ կրկին հայրենիք՝ Շվեյցարիա վերադառնալու համար Ֆրիցը որոշակի ժամկետում պետք է ավարտի նրան հանձնված ուղեմասի աշխատանքը՝ «գարդատուփի պես կատարյալ տեսքով» (1916, նոյեմբերի 22): Եվ Կլարան բավարարվում է նաև դրանով, որ կարող է ամուսնուն «հեռադիտակով դիտել», երբ մոտակայքում է աշխատում (1915, հուլիսի 9): Երբեմն նա երեկոյան դեմ ծառաներից մեկի հետ Ֆրիցին ընդառաջ է գնում ձիով, և նրանք ուղեմասից միասին տուն են վերադառնում: Ազատ օրերին, երբեմն էլ աշխատանքային օրվա վերջում ամուսինները երկուսով ձիավարում են մինչև շինարարական տարածքի վերջը, և Ֆրիցը Կլարային ցուցադրում է կատարված աշխատանքները, նրան տանում նոր երկաթգծերի և ուղեկամուրջների վրայով՝ մինչև փապուղին: Երբ շոգ է լինում, «35 աստիճան սենյակում» (1915, հուլիսի 20), նրանք մտնում են փապուղի՝ զովանալու: Կլարան ոգևորված մասնակցում է փապուղու համար ժայռերի ձեղքման կամ երկաթուղային գծերի հաջողված փորվածքների առիթներով կազմակերպվող ձեռնարկության հանդիսություններին: Կլարայի համար ամենածանր օրերը Ֆրիցի գործուղումների ժամանակներն են, երբ ամուսինը երկար ժամանակով բացակայում է, և նա մենակ է մնում:



Քելեր 1916. Կլարան զբոսանքի ժամանակ զինված ծառայողի ուղեկցությամբ



Քելեր 1916. Կլարան Ամանոսի բնության մեջ իր սպիտակ նժույգով զբոսնելիս

Խիզախ կինը երբեմն թույլ է տալիս կռահել, թե որքան է նա դողում իր ամուսնու կյանքի համար: 1916 թ. նոյեմբերի 24-ին նա գրում է. «Ֆրիցի տուն գալուն սպասում եմ մինչև առավոտյան ժամը 2-ը, վերջում արդեն՝ իրական վախով»։ Ֆրիցի տունդարձի հարցը նրան միշտ անհամբեր է դարձնում: 1917 թ. օգոստոսի 1-ին նա արձանագրում է. «Ամբողջ օրն անցկացնում եմ Ֆրիցին սպասելով: Երեկոյան նույնիսկ գնում ենք նրան դիմավորելու, բայց նա չի գալիս: Արդեն ժամը ութն անց կես է, և սկսում եմ սարսափելի վախենալ: Բայց ահա փողոցից լսվում է նրա սուլոցը, փառք Աստծո, և երեկոն գեղեցիկ է»:

Զիգրիստ ամուսինները երկուսն էլ հյուրասեր են, և նրանց բարձրադիր ու առանձնացած տնակում հյուրերն անպակաս են. հաճախ նաև գիշերում են նրանց տանը: Քելեր կայարանը միջանկյալ դիրք է գրավում ամանոսյան մյուս կարևոր ուղեմասերի միջև⁵³, իսկ բացի ձիերից՝ մյուս երթևեկության միջոցները սակավ են: Ուստի այնտեղ գիշերող հյուրերը կարծես կրճատում են ձիավարելիք տարածությունները: Զիգրիստների տունն ունի մի այլ առավելություն ևս. Ֆրիցի գրասենյակը, որն այնտեղ է գտնվում, ունի կարելային կապ, և շատերն էին գալիս՝ այնտեղից հեռագրելու: Ուստի երթևեկը նրանց մոտ մեծ է, և դրա համեմատ՝ հյուրերի թիվը:

Կլարան ժամեր է անցկացնում խոհանոցում, եփում-թխում մեծ սիրով, միշտ անտրտուն, անշուշտ, ոչ առանց Գոհարի՝ իր քուրդ սպասուհու օգնության: Զիգրիստների սեղանը բաց է բոլորի համար: Կենսուրախ և մարդամոտ Ֆրիցը հաճախ գործընկերներին իր հետ տուն է բերում՝ ճաշի, իսկ հատուկ հյուրերի մասին Կլարային նախօրոք տեղեկացնում է հեռագրային կապով: Կլարան հազվադեպ է ցույց

⁵³ Տե՛ս քարտեզ 2, էջ 93:

տալիս դժգոհության և հոգնածության նշաններ, նույնիսկ երբ գալիս են ութ հոգով՝ երբեմն էլ առանց տեղեկացնելու, ինչպես դա պատահեց 1917 թ. հուլիսի 9-ին, որի վրա Կլարան պարզապես արձանագրում է. «Տնակս լեփ-լեցուն է»։ Միայն մեկ անգամ՝ 1916 թ. սեպտեմբերի 27-ին, նա փոքր-ինչ հոգնած է և գանգատվում է. «Խոհանոցում աշխատանքը շատ է։ Գոհարը լվացք է անում։ Ճաշից հետո հարմար տեղավորվում եմ տիկին Վիթիգի կողքին՝ մի քիչ հանգստանալու, և ահա Ֆրիցը հեռագրում է, իսկ դա նշանակում է՝ ընթրիք պետք է պատրաստել։ Գնդապետ Ֆուադ Ջիյա (Fouad Ziya) բեյը գիշերում է մեզ մոտ։ Shuli mued»։ Վերջին երկու բառերը շվեյցարական մտերմիկ բարբառով են արտահայտված և նշանակում են «չափազանց հոգնած», որ բոլորովին հատուկ չէր Կլարային։ Գուցե դա կապ ուներ թուրք հյուրի նկատմամբ նրա ունեցած վերաբերմունքի հետ։ Ո՞վ գիտի։

Անշուշտ, Կլարան երբեմն էլ տենչում է ամուսնու հետ առանձին մնալ՝ երկուսով, քանի որ «երեկոյան ժամերը՝ Ֆրիցի հետ մենակ, ամենագեղեցիկն են» (1917, հունվարի 14)։ Ավելի ուշ, երբ նրանք իրենց որդու՝ Կառլֆրիդեյի հետ երեքով են, նա գրում է. «Խաղաղ կիրակի՝ առանց այցելությունների։ Երեքս էլ գոհ ենք ու երջանիկ» (1917, օգոստոսի 26)։

Կլարան իր օրագրում հանդես է գալիս որպես իր ժամանակի համար առաջավոր գաղափարների տեր և ինքնագիտակից կին, որը հարգանք ու սեր է ներշնչում բոլորին, մանավանդ ամուսնուն։

Զիգրիստները երկուսն էլ հետաքրքրվում են գեղարվեստական գրականությամբ, և Թուրքիայում իրենց անցկացրած երեք տարիների կարդացած գրքերի ցանկը խոսում է նրանց գեղարվեստական բարձր ճաշակի մասին⁵⁴։ Սովորա-

⁵⁴ Տե՛ս Հավելված՝ ընթերցված գրքերի ցանկը, էջ 418-419։



Քելեր 1915. Կլարան այցելում է ամուսնու աշխատատեղը:

բար Կլարան է բարձրաձայն կարդում գրքերը, ապա երկուսով վերլուծում են դրանք: Կարդում են իրար նաև յուրաքանչյուրից ստացված նամակները, և երկուսն էլ առանձին-առանձին ունեն իրենց անհատական և կանոնավոր նամակագրությունը: Չեն պակասում նաև իրենց անձնական նախասիրությունները: Եթե Ֆրիցը մոլի որսորդ է, Կլարան սիրում է նկարել: Իսկ ամենակարևորը՝ Թուրքիայում գտնված երեք տարիների ընթացքում Կլարան ամեն երեկո, սեղանի մոտ նստած, ճրագի լույսի տակ թանաք-գրիչով գրի է առնում օրվա տեսածն ու լսածը և ամենի կապակցությամբ՝ իր ապրումները:

Գրաքննություն և ինքնագրաքննություն

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Թուրքիայում տիրում էր փոստային խիստ գրաքննություն: Դրա մասին Կլարան իր դժգոհությունն է արտահայտում տարբեր տեղերում: Ականատեսի իր հաղորդագրության մեջ նա, օրինակի համար, 1915 թ. աշնանը գրում է. «Իսկ այժմ սրանք նպաստավոր ժամանակներ են [Թուրքիայի համար - Դ. Ս.], քանի որ եվրոպական պետություններն զբաղված են իրենց սեփական խնդիրներով և կամ տվյալ պահին չեն ցանկանում Թուրքիայի հետ իրենց հարաբերությունները փչացնել: Այս օրերին գրավոր հաղորդումների գրաքննությունը իրագործվում է ամենայն խստությամբ՝ առանց նվազագույն վախի, որ արևմտյան ուժերը կմիջամտեն»⁵⁵: Նա նույնիսկ իր՝ Թուրքիայից տուն գրած նամակներից մեկում համարձակվում է գանգատվել, որ Թուրքիայում նրա խոսքի ազատությունը սահմանափակված է. «Ցավոք, հիմա էլ ասում են, որ շատ բաների մասին պարտավոր եմ ձայնս կտրել (...)

⁵⁵ Տե՛ս էջ 249:

Եթե ես մի օր խալիպով տուն վերադառնամ, իմացե՛ք, որ դրա, ինչպես շատ ուրիշ բաների պատճառը այստեղի տխուր պայմաններն են»:

Փոստային խստագույն հսկողությունը Կլարան տարբեր միջոցներով է հաղթահարում՝ մասամբ դրան հարմարվելով, մասամբ էլ այն շրջանցելով:

Շվեյցարիա՝ իրենց տուն ուղարկած նամակներում նա իրավունք չունի խոսելու տեղահանված հայերի երթերի կամ նրանց նկատմամբ իրագործվող ցեղասպանության մասին: Օրագրին՝ իր հավատարիմ բարեկամին, նա 1915 թ. օգոստոսի 10-ին վստահում է հետևյալ խոսքերը. «Շարունակ հայեր են անցնում մեր տան առաջով: Թուրքերը մոտակայքում մի ամբողջ գյուղ են կոտորել, որովհետև հայերը զենք ու զրահով պաշտպանվել են»: Իսկ 1915-ի սեպտեմբերը լի է նման գրառումներով. «Հայերի հոսքը չի դադարում: Հիմա էլ քաղաքի բնակիչներ են, որոնց վրայից երևում են նրանց գլխով անցածները»: (1915, սեպտեմբերի 2): Այնուհետև. «Աստվածամոր պատկերները հաջորդում են իրար. ոտաբորիկ կանայք՝ երեխաները մեջքներին կամ իրենց առջև՝ ձիու վրա» (1915, սեպտեմբերի 14): Ավելի ուշ գրում է. «Հայերն անցնում են հազարներով» (1915, սեպտեմբերի 16): Իսկ սեպտեմբերի 19-ին՝ 1915-ի, տեղեկացնում է. «Հայերի երթերը վերջ չունեն: Այս անգամ կղերականներ ու մայրապետներ էլ կան նրանց մեջ: Իսկ երեկոյան բանվորներից մեկը պատմում է մեզ այն բոլոր գազանությունների մասին, որոնց նրանք ենթարկվել են»:

Օրագրի օգնությամբ Կլարան կարողանում է հոգեպես թեթևանալ: Խույս տալով գրաքննությունից՝ 1915 թ. սեպտեմբերի 22-ին նա իր օրագրում հայտարարում է. «Իսկ հիմա ես գրանցում եմ իրադարձություններ, որոնց մասին ներկայումս չի կարելի պատմել նամակներում»: Սա տվյալ օրվա



Քելեր 1917. Կլարան Կառլֆրիդեյի հետ



Քելեր 1917. Կլարան, Կառլֆրիդեյին և երկու ծառաները

միակ նախադասությունն է, որով Կլարան իր մտերմիկ խոսքն է ասում իր օրագրին:

Կլարայի համար շատ կարևոր է, որ Շվեյցարիայի իր յուրայինները ճիշտ պատկերացում ունենան Թուրքիայում տիրող իրավիճակի մասին: Եվ նա ուրախանում է, երբ առիթը ներկայանում է՝ իր «կենդանի լուրերն» ուղարկելու իր հարազատներին: Դա հնարավոր է դառնում Հալեպում գերմանական դպրոցի գլխնազիայի ուսուցիչ, շվեյցարացի դ-ր Գրեթերի⁵⁶ (Graeter) միջոցով, որը Շվեյցարիա վերադարձին կարճ ժամանակով կանգ է առնում Քելերում՝ Զիգրիստ-Հիթինների մոտ: Դրա մասին տեղեկանում ենք 1915 թ. հունիսի 30-ի գրառումից. «Դ-ր Գրեթերը պատրաստակամություն հայտնեց Բուքսով (Buchs) անցնելիս զանգահարելու մեր տունն»: Նույն օրը Կլարան փոստային բացիկով տեղեկացնում է մորը. «Այսօր պարոն դ-ր Գրեթերը Բազելից ուղևորվում է Շվեյցարիա և Ձեզ կզանգահարի: Լավ է, չէ՞, կենդանի նամակ մեր կողմից: Ես ուրախ եմ Ձեզ համար: Հազար համբույրներ, Կլարա»: Շատ չանցած՝ գալիս են «Երկար նամակներ տնեցիներից, որոնցով նրանք իրենց ուրախությունն են արտահայտում դ-ր Գրեթերի միջոցով փոխանցված մեր բանավոր ողջույնների համար» (1915, օգոստոսի 3): Ավելի քան կես տարի անց՝ 1916 թ. մայիսի 24-ին, դ-ր Գրեթերը մեկ անգամ ևս է հայտնվում Զիգրիստների մոտ, այս անգամ, իր տիկնոջից բացի, նաև իր գերմանացի գործընկեր դ-ր Նիփագեի (Niepage)⁵⁷ թուրքերի հանդեպ նմանապես մի շատ խիստ քննադատի հետ: Գրեթերը և Նիփագեն Թուրքիայից խիստ վրդովված ընդմիջտ հեռանում էին: Կլարան գրում է. «Երկուսն էլ լցված են թուրքերի դեմ, սոսկալի դիպվածներ են պատմում հայերի արտաքսումների մասին և հուսով են հայրենիքում իրենց զեկույցներով ինչ-որ բանի հասնել»:

⁵⁶ Դ-ր Էդուարդ Գրեթերի (Dr. Eduard Graeter) մասին տե՛ս ծնթ., էջ 117:

⁵⁷ Դ-ր Մարտին Նիեպագեի (Dr. Martin Niepage) մասին տե՛ս ծնթ., էջ 178:

Շատ չանցած՝ 1916 թ. օգոստոսի 13-ին գալիս է «Նամակ մայրիկից՝ շատ մտահոգված Գրեթերենց այցելությունից հետո»: Ակներն է, որ դ-ր Գրեթերը իր երկրորդ այցելության ժամանակ Շվեյցարիայում Հիլթիներին պատմել էր ամեն ինչ: Այժմ Շվեյցարիայում ընտանիքն էլ գիտեր, թե ինչպիսին էր Կլարայի ու Ֆրիցի կյանքը Թուրքիայում:

Դեռևս ամենասկզբում, երբ Զիգրիստ ամուսինները Կոստանդնուպոլսից ուղևորվում էին դեպի Կիլիկիա և չէին հասել իրենց վերջնական բնակատեղին, նրանց բացիկները տուն էին հասնում գրաքննության կողմից վնասված վիճակում: Որդիներից Ռուդին հաղորդում է, որ իր մոր՝ գոթերեն ձեռագրով գրված առաջին բացիկները գրաքննությունը անընթեռնելի էր դարձրել՝ դրանց վրա կիրիլական և արաբական տառանշաններով կնիքներ դրոշմելով⁵⁸: Սա է հավանաբար պատճառը, որ Կլարայի՝ Շվեյցարիա ուղարկված նամակների և բացիկների մեծ մասի ձեռագիրը շատ տարբեր է: Իր սովորական գոթական ձեռագրի փոխարեն նա ավելի հաճախ է օգտագործում լատինատառ բոլորգիր գրերը, որոնք հստակ են և տարանջատված: Դա հավանաբար արդյունք է Կլարայի անձնական նախաձեռնության, որպեսզի նամակները գրաքննության կողմից դյուրությամբ կարդացվեն և վնասվածքի չենթարկվեն: Բացառված չէ նաև, որ նա հետևում էր գրաքննության կողմից իրեն պարտադրված ինչ-որ հրահանգի:

Կլարան հոգ է տանում, որ իր գրած նամակները չկորչեն, իսկ կորչելու դեպքում դա իրենց հայտնի դառնա: Ուստի նա համարակալում էր նամակները: Այստեղ ևս նրան օգնում էր իր օրագիրը: Նա ամեն նամակի սկզբում նշում է դրա քանիերորդ լինելը և ապա թաքուն ավելացնում է թիվը համապատասխան օրագրության տակ: 1915 թ. մայիսի 15-ին Ադանայից տուն ուղարկված փոստային բացիկը հայտնում

⁵⁸ Զիգրիստ-Կլայունա, Ռուդոլֆ, մաս 1, էջ 151:

է. «Վաղը շարունակելու ենք մեր ճանապարհորդությունը մինչև մեր նպատակակետը՝ Էնթիլի (...): Անհամբերությամբ սպասում եմ, թե երբ եմ գրելու այնտեղից իմ առաջին նամակը, որովհետև որոշել եմ այսուհետև իմ բոլոր նամակներն ու բացիկները համարակալել, որպեսզի տեսնենք, թե արդյոք ընթացքում պակաս նամակ կա»:

Կլարայի օրագրի, ինչպես նաև նրա հաղորդագրության դժվարընթեռնելի գոթական ձեռագրի անընդմեջ գործածությունը ամենաբնական նախագգուշական միջոցն էր գրաքննության կամ որևէ այլ օտար աչքի դեմ: Ոչ ոք անմիջական շրջապատում չէր կարող կարդալ նրա օրագիրը, իհարկե, բացի ամուսնուց: Ապահովության այդ զգացողությունը նրան երբեմն թույլ է տալիս՝ ուզածն անկաշկանդ կերպով գրելու, իսկ դա պատահում է հատկապես Թուրքիայում գտնվելու երկրորդ տարում, երբ ի դեմս թուրքերի՝ հայերի դեմ խժոժությունների, հաճախ սպառվում էր նրա համբերությունը. «Խառնակ օրեր են, դառնությամբ լի այս անիծյալ Թուրքիայի հանդեպ» (1916, մայիսի 13), կամ՝ «Վիշտը ճնշում է մարդուն, և միայն մեկ միտք է գերիշխում՝ հեռանալ այս գարշելի երկրից» (1916, հունիսի 16): Այսպես խիզախ էր նա իր գրություններում՝ իր վրա ստանձնելով ամբողջ պատասխանատվությունը: Այլ դեպքերում, երբ հաղորդում էր ուրիշների խոսքը, Կլարան զգուշանում է: Շատ հազվադեպ է նա նշում իր տեղեկությունների աղբյուրը՝ անուններ տալով, հատկապես, երբ այն վերաբերում է հայերի դեմ գործադրված վայրագություններին: Նա նախընտրում է անդեմ ձևերը: «Պատմում են ողջ-ողջ թաղվածների մասին» (1915, սեպտեմբերի 28): Կամ՝ «Լսում ենք բռնաբարված կանանց մասին» (1916, հունիսի 18): Եվ կամ՝ «Ասում են, որ Իսլահիեի⁵⁹ ճամբարում օրական երեքից չորս հարյուր մարդ է


⁵⁹ Փաուլա Շեֆերի՝ 1915 թ. դեկտեմբերի 1-ին արտաքին գործերի նախարարություն ներկայացրած զեկույցը՝ Իսլահիեի ճամբարում արքայազն հա-

մահանում, իսկ ճանապարհին ամենուրեք դիակներ կան» (1915, դեկտեմբերի 3):


Սակայն կան դեպքեր, երբ Կլարան անգամ օրագրում պարտավորված է գգում գաղտնապահ լինել: Նա լավ գիտի, թե երբ է ինքնագրաքննության պահը, որպեսզի վտանգի չենթարկի որևէ մեկին, մանավանդ ամուսնուն: Այդպես է նա վստահաբար վարվում 1916 թ. հունիսի 13-ին: Դա այն օրն է, երբ պահեստապետ Ժորժը՝ նույն ինքը Հայկ Արամյանը, ճողոպրելով թուրք իշխանավորներից, որ եկել էին նրան ձերբակալելու և տանելու, Զիգրիստների օգնությամբ փախուստի է դիմում և փրկվում: Այդ օրվա գրառման մեջ ոչինչ չի արձարծվում այն վճռական դերի մասին, որ ունեցան Զիգրիստ-Հիլթի ամուսինները Հայկ Արամյանի փրկության հարցում: Այնտեղ պարզապես նշվում է. «Ժորժը փախչում է՝ սննդամթերք գնելու պատրվակով»: «Մննդամթերք գնելը» պաշտոնական վարկածն է, որը տրվել էր նաև Արամյանին որոնող Ժանդարմներին:

Եվ նույնիսկ Արամյանի փախուստին հաջորդող գրառումներում, երբ շարունակվում էր «Ժորժի» հետ նամակագրական կապը, օրագրում տեղեկությունները տրվում են այնպիսի գաղտնապահությամբ, որ Կլարայի ծածուկ ակնարկների բովանդակությունը և նրանց նախնական պայմանավորվածությունները ինձ համար հասկանալի դարձան միայն Արամյանի հայերեն գիրքը ընթերցելուց հետո: Այն ժամանակ է, որ ես հասկացա, որ առանց Կլարայի և մանավանդ Ֆրիցի անձնուրաց նվիրման Հայկ Արամյանի փրկությունն անկարելի պիտի լիներ:

յերի ողբերգական վիճակի մասին, իր ժամանակին հսկայական աղմուկ բարձրացրեց, Gust, Wolfgang (2005), էջ 426-427: Կլարայի տեղեկությունների աղբյուրը անձամբ եղել է քույր Փաուլան, որի անունը նա խուսափում է նշել:



Բաղդադի երկաթուղու (1915/1916) գծանկարն ըստ Goerke/Kaiser-ի (Kaiser, Hilmar, 1998, էջ 73): Աջ էջի կենտրոնում՝ Քելեր (Keller) երկաթուղային հանգուցակայանը՝ նրա կից Bahçe, Airan, Entilli և Islahiye կայաններով:



Կլարայի օրագրության պատմական նշանակությունը

Կլարայի օրագիրը անգնահատելի ավանդ է Հայոց ցեղասպանության պատմության համար: Պատմագիտության համար այս օրագիրը՝ նրա ականատեսի հատուկ զեկույցի հետ մեկտեղ, մի կարևոր փաստաթուղթ է, որի առանձնահատկությունը հետևյալն է:

1. Օրագրության հեղինակը 30-ամյա լրջախոհ, բազմակողմանիորեն զարգացած և խստաբարո շվեյցարուհի է, որը նախապես անձանոթ է եղել թրքական բազմազգ պետությանը և որևէ կանխակալ կարծիք չի ունեցել երկրում ազգային ու ցեղային այս կամ այն խմբերի կամ նրանց փոխհարաբերությունների և մանավանդ հայ-թուրքական հարաբերությունների մեջ տեղի ունեցող խմորումների մասին: Հետևապես նա հանդես է գալիս որպես արդար դատավոր. նրա խոսքում հնչում է առողջ բանականության և ճշմարտության ձայնը:

2. Կլարան Հայոց ցեղասպանության վերաբերյալ վկայություններ թողած այլ օտարերկրացիներից տարբերվում է նրանով, որ նրա՝ Թուրքիայում գտնվելը ի պաշտոնն չէր, այլ բոլորովին պատահական բնույթ ուներ: Նա լրագրող, միսիոներուհի կամ դիվանագետ չէ, այլ ուսանած բուժքույր, որի ամուսնությունը Բաղդադի երկաթուղու ճարտարագետ Ֆրից Զիգրիստի հետ առիթ է հանդիսացել՝ թողնելու իր բուժքրոջ պաշտոնը Շվեյցարիայում և հետևելու ամուսնուն Թուրքիա՝ Ամանոսի տարածաշրջան: Աշխարհաքաղաքացու և մարդասերի պարտքի գիտակցումն էր, որը նրան մղել է տեսածն ու ապրածը գրի առնելու:

3. Կլարայի անկողնակալության ապացույցը նրա հատուկ կարգավիճակն է: Առաջին տարին Թուրքիայում նա, այսպես ասած, հարսանեկան ուղևորության մեջ է. երկրորդ տարում երեխայի է սպասում, երրորդում մայրանում է:

Թուրքիայում իր անցկացրած երեք տարիների ընթացքում Կլարան մշտական երկպառակության մեջ էր՝ անձնական երջանկությունը որոնելու և դրսից եկող ցեղասպանության ճնշող տեսարանների միջև: Նա միայն աստիճանաբար է հասկանում այդ տեսարանների ահափորությունը, և երբ իր համար պարզ է, թե իր աչքի առաջ ինչ է կատարվում, նա խիստ վրդովվում է. «Այստեղ մարդ ժամանակի ընթացքում սրտային հիվանդ կդառնա, և կամ ինքն էլ՝ շատ դաժան» (1915, հոկտեմբերի 1), և նա բողոք է հայտնում. «Երանի՜ թե այլևս չտեսնեինք այս բոլորը» (1915, հոկտեմբերի 9): Նա աշխատում է դիրքավորվել՝ որոշ ժամանակ հակվելով դեպի անտարբերությունը: Սակայն դրսում շարունակվող «Աստվածամոր պատկերները» տանջում են նրա խիղճը: 1917 թ. մարտի 27-ին՝ իր առաջնեկին ունենալուց հետո, նա զուգահեռներ է անցկացնում մարդկային վիճակների միջև. «Փոքրիկ Կառլֆրիդելին ծիծաղում և ճռվողում է բազմոցից դեպի մեր նախաճաշի սեղանը, մինչդեռ դրսում հովտով անցնում են այդ թշվառները՝ իրենց հետ քարշ տալով նրա նման փոքրիկ էակներ»: Հոգեկան լարվածության այդ իրավիճակում ստեղծված վկայությունները շատ ծանրակշիռ են և համոզիչ:

4. Կլարայի օրագրում Հայոց ցեղասպանության վերաբերյալ վկայությունները հանդես են գալիս ոչ առանձին, այլ նյութի մեծ բազմազանության մեջ: Նրանք ամրագրված են բազմաթիվ այլ՝ առօրյա կյանքի մանրամասնությունների մեջ, ինչպես՝ նոր միջավայրի առաջին տպավորությունները, օրվա անցուդարձը, որոնք կարող են դրական լինել, բայց և բացասական, պատերազմական շրջանի գրկանքները, կենցաղային դժվարությունները, համաճարակները, կլիմայական դժվարին պայմանները, խիստ գրաքննությունը և այլն: Օրացուցային կառուցվածք ունեցող օրագիրը ժամանակագրական ճշգրտությամբ փաստագրում է իրադարձություններ, որոնց ճշմարտացիությունը հաստատվում է զգայական ընկալումներ արտահայտող «տեսնել», «լսել» և «նկատել» բայերի մշտական օգտագործմամբ: Իսկ այն, ինչ ինքը սեփա-

կան աչքերով չի տեսել, հայտնի է, որ լսել է հավաստի աղբյուրներից: Նրա վկայությունները ոչ միայն համընկնում, այլև լրացնում են ցեղասպանական գրականության տվյալները:

5. Պատմաբանների համար կարևոր է նաև Կլարայի օրագրության ամբողջ տևողությունը: Այն ընդգրկում է 1915 թ. մայիսից մինչև 1918 թ. ապրիլը, որը նաև Առաջին աշխարհամարտում տեղի ունեցած Հայոց ցեղասպանության ամբողջ ընթացքն է՝ սկզբից մինչև աստիճանական ավարտը: Ինչպես ոչ մի այլ ականատեսի, Կլարային հաջողվել է ժամանակագրական ճշգրտությամբ փաստագրել Թուրքիայի հարավարևելյան հեռավոր շրջաններում Հայոց ցեղասպանության ամբողջ ընթացքի վճռորոշ պահերը: Թեև գրականության մեջ շատ են եղել փորձեր՝ վերակառուցելու պատմությունը՝ հիշողության միջոցով ընդգրկելով որոշ տևողություն ունեցող ժամանակահատվածներ, նրանց մեջ բացակայում է օրացույցով կարգավորված օրագրության ճշգրտությունը:

6. Կլարայի օրագիրը հարուստ է պատմության մեջ հայտնի անձնավորությունների անուններով: Նրանք նախ և առաջ ամանոսյան տարածաշրջանի Բաղդադի երկաթուղու շինարարության վրա պաշտոնավարող եվրոպացի ճարտարագետներն են՝ Վինքլերը, Մորֆը, Քյոփլերը, Լոյթենեգերը և ուրիշներ, որոնք բոլորն էլ հոգով ու սրտով պաշտպան են կանգնել իրենց հսկողության տակ գտնվող հայ աշխատավորներին, բայց, ցավոք, մեծ հաջողություն չեն ունեցել: Սրանք բոլորը Զիգրիստ ամուսինների տան մշտական հյուրերն էին: Հյուրերի թվում էին նաև մարդու իրավունքների հայտնի պաշտպաններ գերմանացի դ-ր Նիփագեն և շվեյցարացի դ-ր Գրեթերը, Մարաշի հայ որբանոցի տնօրեն, ավետարանական Պլանկը (Plank), գերմանացի միսիոներուհի, հայտնի քույր Փաուլա Շեֆերը, շվեյցարացի Բեաթրիս Բոները և շատ ուրիշ միսիոներ քույրեր: Կան նաև հայտնի բժիշկներ՝ դ-ր

Մյուլենս, դ-ր Շիլինգ, դ-ր Ֆարահ, դ-ր Հովնանյան և ուրիշներ:

7. Պատմական հատուկ նշանակություն ունի նաև այդ ժամանակվա պետական և քաղաքական բարձրաստիճան դեմքերի անունների նշումը օրագրում՝ հաճախ լրացուցիչ տվյալների հետ մեկտեղ: Օրագրում պահպանվել է էնվեր փաշայի՝ Ամանոսի տարածաշրջանով երեք անգամ անցնելու փաստը՝ 1916-ի փետրվարի 16, 1916-ի սեպտեմբերի 28, մարտի 7: Իսկ 1915-ի նոյեմբերի 6-ին Կլարան հաղորդում է Ջեմալ փաշայի այդ տարածքով անցնելու մասին: Նշանակալից են նաև կարևոր այլ անձնավորությունների այցերի մասին տեղեկությունները: 1915-ի հոկտեմբերի 26. «Բարոն ֆոն Օփենհայմը Գերմանիա վերադառնալու ճանապարհին»: 1915-ի նոյեմբերի 19. «Ֆոն դեր Գուլցը այստեղով մեկնում է Հալեպ»: 1917-ի մայիսի 16. «Գեներալ Ֆալքենհայնը ավտոմեքենայով անցնում է այստեղով» և այլն:

8. Օրագիրը, մասնավորաբար, լույս է սփռում Առաջին աշխարհամարտի ժամանակ Բաղդադի երկաթգծի ամանոսյան հատվածի շինարարության վրա աշխատող հայերի շահագործման և ոչնչացման պատմության վրա. մի բան, որ մինչև օրս բավարար չափով մշակված ու պարզաբանված չէ: Հետաքրքրասեր ընթերցողը օրագրի միջոցով ծանոթանում է ոչ միայն Թուրքիայի հյուսիսից ամեն օր բռնի տեղահանված, գաղթական հայերի թշվառ վիճակին, այլև թեկուզ համառոտ կերպով, Կլարայի գրառումները ընթերցողին ավելի հասանելի են դարձնում հազարավոր հայ մասնագետների և շինարարների ողբերգական կյանքը. մարդիկ, որոնք հաճախ ամբողջ ընտանիքներով Ամանոսի տարածաշրջանում ստրուկի վիճակում են աշխատել տոսկ հաց ու ջրի դիմաց, որից հետո անմիջապես ուղարկվել են այն աշխարհ՝ գնդակահարվելով, մորթոտվելով կամ կախաղան հանվելով:

Որպես Հայոց ցեղասպանության առաջնային աղբյուր՝ Կլարայի օրագրությունը անվիճարկելի փաստաթուղթ է

1923 թ. Թուրքիայի հանրապետության հիմնադրման հաջորդող բոլոր կառավարությունների պաշտոնական քաղաքականության դեմ, որի նպատակն է վերանայել և կեղծել պատմությունը՝ ժխտելով Հայոց ցեղասպանության փաստը: Նրա վկայությունները՝ Ամանոսի տարածաշրջանի Բադդադի երկաթուղում զբաղված հայ աշխատասեր և խաղաղ շինարարների նկատմամբ բռնությունների մասին, ի չիք են դարձնում թուրքերի բոլոր «հիմնավորումները», ըստ որոնց՝ այդ բռնություններն իբր երկրի անվտանգության բնականոն միջոցառումներ էին պատերազմի ժամանակ և, մասնավորապես, պատասխանն էին երկրի արևելքում ռուսների հետ համագործակցող հայ հեղափոխականների նախահարձակ գործողությունների:

Կլարա Զիգրիստ-Հիլթիի գրառումները ապացուցում են, որ Թուրքիան իրականում օգտագործում էր Առաջին աշխարհամարտը, որպեսզի նրա ստվերում երկրում իրականացնեի իր վերջնական՝ պանթուրքիզմի նպատակը, այն է՝ բնաջնջել Փոքր Ասիայի բոլոր բնիկ քրիստոնյաներին՝ հայերին, հույներին, արամեացիներին ու ասորիներին և դրանով իսկ կառուցել Թուրքիա՝ թուրքերի համար: Այդ բոլորն այսօր այլևս անհնարին է վիճարկել, քանի որ Գերմանիայի արտգործնախարարության արխիվային փաստաթղթերը վկայում են ամեն ինչի մասին: Չէ՞ որ 1915 թ. հունիսին Թուրքիայի ներքին գործերի նախարար Թալեաթը գրել է, որ թուրքական կառավարությունը մտադիր է «Համաշխարհային պատերազմն օգտագործել, որպեսզի կարողանա հիմնովին մաքրագործել իր ներքին թշնամիներին՝ ամեն դավանանքի քրիստոնյաներին՝ առանց արտասահմանից եկող դիվանագիտական միջամտությունների⁶⁰»:

⁶⁰ Gust, Wolfgang (2005), էջ 166:

ՕՐԱԳԻՐԸ

(1915, ապրիլի 12 – 1918, ապրիլի 3)

1915, ապրիլի 12

10 անց 15-ին քաղաքացիական ամուսնություն Յ. Գ. Ռո-
բերի (J. G. Rohrer) մոտ՝ հայրիկի և Էմելիի (Emmeli)⁶¹ ներկա-
յությամբ: Անտառի միջով տունդարձ:

1915, ապրիլի 13

Մեկնում ենք Նեցթալ (Netstal)՝ Գլարուսից (Glarus)⁶² մեր
անձնագրերը բերելու:

Հրաշալի արևոտ օր է:

1915, ապրիլի 14

Գնումներ Յյուրիխում: Ընթրիք մորաքույր Գոթայի (Gotta)
մոտ: Էռնստն (Ernst) ու Յակոբն (Jakob) էլ են այստեղ:

1915, ապրիլի 15

Երեկոյան Հանելիի (Hanneli)⁶³ հետ հանդիպում ենք կա-
յարանում, միասին գնացքով գնում Քարթհաուզե (Karthause)⁶⁴,
շրջագայության: Յորգլին (Jörgli) մորաքրոջը ճանաչում է
նույնիսկ նրա մի շնչոցից:

1915, ապրիլի 16

Մի ամբողջ արևոտ օր Հանելիի ու երեխաների հետ եմ:
Փնտրում ենք ծափկոտրուկներ: Յորգլիի թաթիկները լեցուն
են խատուտիկով:

⁶¹ Էմելի Էռնստ (Emmeli Ernst) – Կլարայի մորեղբոր աղջիկը:

⁶² Նեցթալ (Netstal) – համայնք Շվեյցարիայի Գլարուս (Glarus) կանտոնում:
Կլարայի փեսացուն՝ Ֆրից Ջիգրիստը (Fritz Sigrüst) և նրա ընտանիքը նեց-
թալցի էին:

⁶³ Հանելի (Hanneli) – Կլարայի ամուսնացած քույրը, որ ունի երկու փոքրիկ
երեխա՝ տղա Յորգլին (Jörgli) և աղջիկ Վրենելին (Vreneli):

⁶⁴ Քարթհաուզե (Karthause) – միջնադարյան վանք, ներկայումս թանգարան:

1915, ապրիլի 17

Կեսօրից հետո Թալվիլում (Thalwil) Գելերների (Gaehler) մոտ ենք: Երեկոյան Նեցթալում (Netstal): Իրիկնադեմի շքեղ լույսի ներքո վերադառնում ենք տուն:

1915, ապրիլի 18

Եկեղեցում ենք: Ապա առաջին հրաժեշտը՝ երկար բաժանումից առաջ: Նոտար Դենցլերը Պրավիի հետ այստեղ են: Պառավ Էլիզբ խոհանոցում է:

1915, ապրիլի 19

Ճամպրուկներ հավաքել ու մի քանի այցելություններ կատարել: Բոլորի մտքում առաջիկա բաժանումն է: Վերջին օրերին իրար վայելելու տենդ, թեև տիրում է լավատեսություն և բարձր տրամադրություն:

1915, ապրիլի 20

Մայրիկն այս օրերին միշտ տանն է, այնքան առույգ ու ժրաջան, պատրաստ՝ ամեն ինչում և ամենուրեք օգնելու:

1915, ապրիլի 21

Հարսանիքի մեծ կարկանդակն ու բոլոր թխվածքները հաջող են ստացվում: Մայրիկի հրճվանքի ճիչերը: Հարսանիքի նախապատրաստությունները վանում են մտքերը առաջիկա բաժանման մասին:

1915, ապրիլի 22

Վարար անձրև: Հանելին գալիս է երեխաների հետ: Մի անգամ ևս, վերջին անգամ ես գնում եմ նրանց դիմավորելու:

1915, ապրիլի 23

Սեղան գցել: Սենյակս ամբողջապես տոնական տեսք է ստացել: Բաղեղի (Erbau) պսակներ եմ կապում չորս պատուհանների շուրջը: Երեխաներ են գալիս, ծաղիկներ բերում: Վերջին անգամ քնում եմ իմ սենյակում: Այս օրերին

ամեն ինչ կատարվում է հապճեպ ու եռանդով: Մակայն խաղաղ, հաճելի պահեր են ապրում փոքրիկ Վրենելի (Vreneli) մահճակալի մոտ:

1915, ապրիլի 24

Երկինքը միշտ իր ամենատխուր դեմքով է հանդես գալիս:

Ծաղիկները պետք է կարգավորվեն: Այգեստանի ողկույզիկներ, ձղկիներ (marsh marigold), ապակե փոքրիկ անոթների մեջ դրված զարնանածաղիկներով (primula) լեցուն երեք զամբյուղ: Ավելին՝ ծաղկեփնջեր սկահակների մեջ, իսկ Ֆրիցի կողմից՝ փաթամորեն ծաղկած խնձորի փոքրիկ ծառեր: Միայնակ զարդարում են սրակամար պատուհանը (oriel):

Ամեն ինչ հաջող է ընթանում, բոլորն ուրախ են: Հ.-ի հետ գնում ենք գերեզմանոց: Երեկոյան ուրախ-զվարթ արշավից տուն է գալիս Էդին (Edi)⁶⁵:

Քնում են հայրիկի ու մայրիկի սենյակում ու երկար ժամանակ արթուն են մնում: Մայրիկս ինձ մոտ է գալիս:

1915, ապրիլի 25

Նոր ծաղիկներ են բերում, շարունակում ենք տունը զարդարել: Յորգլին երջանիկ խաղում է ավազանով, որ նվեր է ստացել: Գնում են Ֆրիցին դիմավորելու՝ անցնելով մարգագետինները: Արևն էլ է շողշողում: Երջանիկ պահեր միասին: Երեկոյան գալիս է տիկին Շպորին (Spoerry), ընթրիքից հետո՝ Մարի (Marie) և Ջինա (Sina) քույրերը:

Իսկ այնուհետև իմ վերջին գիշերն է մեր տանը: Մթության մեջ տեսնում են Մարգելքոպֆ (Margelkopf)⁶⁶ լեռան լույս-

⁶⁵ Էդի (Edi) – Կլարայի քրոջ՝ Հանելիի ամուսինը:

⁶⁶ Մարգելքոպֆ (Margelkopf) – լեռ, որը Կլարայի ծննդավայր Վերդենբերգի (Werdenberg) գեղատեսիլ բնության մաս է կազմում (տե՛ս լուսանկար, էջ 103): Այն վեր է խոյանում Հռենոսի (Rhein) հովտում և նրա հատուկ գնդաձև գագաթը ամեն տեղից տեսանելի է: Չնայած որ լեռան բարձրությունը ըն-

երը: Մայրս կրկին ինձ մոտ է գալիս, երբ ես մի խնձոր եմ վերցնում մրգի զամբյուղից:

1915, ապրիլի 26

Հարսանյաց պայծառ առավոտ է: Ներկաների մեջ փոքրիկները չափազանց անուշիկ են: Ամեն ինչ պատրաստ է, և բոլորն սպասում են: Հնչում է Մոցարտի «Andante» սոնատը: Մայրս նստած է իմ հետևում, նա վայելում է իրեն մնացած միակ լուռ պահն ինձ մոտ: Պսակադրության ընթացքում նվագում է Ռիթան: Օրիորդ Ա-ն երգում է. «Ուր որ դու գնաս...» երգը: Փոքրիկ Վրենելին ճովողում է ծաղկող կղբենու տակ: Այնուհետև լուսանկարվում ենք: «Sennebüebli»-ի⁶⁷ տարազ հագած Յորգլին ինձ Մարգելքոպֆից բերված ալպյան վարդի ճյուղեր է մատուցում: Պարտեզում սուրճի հյուրասիրություն:

Հանելին Ֆրիցին ու ինձ ուղեկցում է երկաթուղային կայարան: [Գնացքը շարժվում է], բոլորը մեզ ձեռքով են անում, բարի ճանապարհ մաղթում:

1915, ապրիլի 27

Գիշերում ենք Բլուդենցում (Bludenz)⁶⁸: Առավոտյան նստած ենք գյուղից վեր գտնվող մարգագետնի վրա: Երեկոյան գտնվում ենք Ցել-ամ-Ջեում (Zell am See)⁶⁹:

դամենը 2162,9 մ է, նրա բարձունքից դեպի հռենոսյան հովիտը և դեպի Ալպերը բացվող գեղեցիկ տեսարանի շնորհիվ Մարգելքոպֆը մինչև օրս էլ ամբողջ տարին սիրելի զբոսավայր է շրջակայքի բնակիչների ու զբոսաշրջիկների համար: Իր օրագրում Կլարան միշտ սիրով է նշում Մարգելքոպֆի անունը, իսկ Թուրքիայում գտնված տարիներին այդ լեռան անունը խորհրդանշում է նրա հայրենի կարոտը:

⁶⁷ «Sennebüebli» – ալպյան հովիվ-տղա:

⁶⁸ Բլուդենց (Bludenz) – քաղաք Ավստրիայում:

⁶⁹ Ցել ամ Ջե (Zell am See) – ավստրիական գեղատեսիլ առողջավայր, որն ունի լիճ՝ շրջապատված ձյունածածկ լեռներով:



Կլարայի սիրելի, հայրենի Մարգելքոպֆ լեռը



Մարգելքոպֆի գագաթը և Վերդենբերգի դղյակը.
տեսարան Կլարայի հայրական տան պատուհանից

1915, ապրիլի 28

Թիավարում ենք լճի վրայով, հիանում լեռնային տեսարաններով և գեղեցիկ մի դոյակով: Զալցբուրգի վրայով ուղևորվում ենք Վիեննա՝ անցնելով ռուս գերիների ճամբարի մոտով: Զալցբուրգում ուշադրությունս է գրավում, թե ինչպես մի երիտասարդ սպա հրաժեշտ է տալիս իր սիրելի կնոջը:

1915, ապրիլի 29

Վիեննա: Անձնագրերի ձեռքբերում: Այցելում ենք Հոֆբուրգ (Hofburg) պալատը, քաղաքապետարանի նկուղային ճաշարանը (Rathauskeller) և Սուրբ Ստեփանոսի մայր տաճարը (Stephansdom), որտեղ շատ տպավորվում եմ՝ տեսնելով մի զինվոր՝ մութ անկյունում մեն-մենակ ծնկի եկած, աղոթք անելիս:

Մեր չորս բոլորը ամեն ինչ փառահեղ ծաղկունքի մեջ է: Վիեննայից դուրս ամենուր արգելափակող փշալարեր են, խրամատներ և ամրություններ: Երեկոյան հասնում ենք Բուդապեշտ (Budapest):

1915, ապրիլի 30

Նախաճաշի ժամին քեռի Հ-ը ավտոմեքենայով եկավ մեր հետևից: Այցելում ենք Եղիսաբեթի կամուրջը (Elisabethenbrücke), Օֆեն (Buda) բերդը, Մարգիթի կղզին (Margitsinsel), այնուհետև վիրավոր զինվորներով լի մի հիվանդանոց: Ճաշում ենք մորաքույր Գիզելայի (Gisela) մոտ: Այցելում ենք խորհրդարանում կազմակերպված սանիտարական ցուցահանդեսը, այնուհետև քեռի Հ.-ի և մորաքույր Էմմայի մոտ ենք: Երեկոյան այցելում ենք «Հունգարիա»՝ գնչուական համերգը:

1915, մայիսի 1

Ուղևորություն դեպի քաղաքային պուրակը, ծածկած շուկա: Ճաշում ենք քեռի Հայնրիխի (Heinrich) մոտ, թեյը խմում ենք Պրավիի (Pravi) և Բերթայի (Bertha) հետ քեռի

Կառլի (Carl) տանը: Ապա երեկոյան նստում գնացք և ամբողջ գիշեր շարունակում ենք ուղևորությունը: Վատ տեղեր են: Վաղ արևածագ: Քլաուզենբուրգը (Klausenburg)⁷⁰՝ տոնական զգեստներով: Անցնում են զինվորական գնացքներ:

1915, մայիսի 2

Վիրավորներ և փախստականներ: Կայարաններում հուսահատական տեսարաններ են, ահա և Բիհարի լեռնաշղթան (Bihargebirge): Այնուհետև հայացք ձյունածածկ լեռների վրա: Մաքսային առաջին մեծ քննությունը: Պրեդեալ (Predeal)⁷¹: Ժամացույցի սլաքները մեկ ժամով առաջ ենք տանում: Գնալով ավելի նկատելի է դառնում Արևելքի տհաճ կողմերը:

1915, մայիսի 3

Անցնելով նավթային տարածքներով՝ կրկին դուրս ենք գալիս մեծ հարթավայր: Բուխարեստը (Bukarest): Հատկապես աչքի է ընկնում ինքնակառքերի մեծ երթևեկությունը: Ռուս կառապաններ՝ թավշե բաճկոններով: Գունավոր տարածքներով գյուղացիներն իրենց միրգը քաղաք են բերում տափակ զամբյուղներով, որ հազցրել են ուսերին դրած երկար ձողերին:

1915, մայիսի 4

Շարունակում ենք ճանապարհորդությունը դեպի Ռաման (Ramandan), այնուհետև՝ Դանուբն (Donau) ի վեր: Ճաշում ենք Ռուսչուկում (Rustschuk)⁷²: Երեկոյան վերջապես փառավորապես տեղավորվում ենք Կոստանդնուպոլիս (Konstan-

⁷⁰ Քլաուզենբուրգ (Klausenburg) – քաղաք Հունգարիայի ու Ռումինիայի միջև սահմանին:

⁷¹ Պրեդեալ (Predeal) – փոքրիկ քաղաք Ռումինիայում:

⁷² Ռուսչուկ (Rustschuk) – Ռումինիան անցնելուց հետո սահմանամերձ քաղաք Բուլղարիայում, որը գտնվում է Դանուբի աջ գետեզերքին:

tinopel) մեկնող ննջավագոնում: Բուլղարական հարթավայր: Քարանձավային բնակարաններ: Տուն դարձող ոչխարի և խոշոր անասունի մեծաքանակ հոտեր:

1915, մայիսի 5

Բուլղարաթուրքական գյուղեր: Հերկող գյուղացիներ՝ գոյնզգոյն տարազներով: Արագիլների ամբողջական երամներ: Թրաշուշանների դաշտեր: Մեր գնացքն ամենուրեք կանգ է առնում ռազմական փոխադրումների պատճառով: Մեր առջևով անվերջ անցնում են զինվորական գնացքներ: Ադրիանուպոլիս (Adrianopel): Մզկիթ՝ իրիկնային արևի տակ:

1915, մայիսի 6

Բուրգասից (Burgas)⁷³ մինչև Չաթալջա (Tschataldscha)⁷⁴ ամենուրեք ամրություններ և զինամթերքի կույտեր: Ծաղկող քաջվարդի ամբողջական դաշտեր, հաճախ նաև լերկ սարեր: Ընթանում ենք Մարմարա (Marmara) ծովի երկայնքով:

1915, մայիսի 7

Երեկ ընթրիքի էինք Հենինների (Hänny)⁷⁵ մոտ: Սելամլիք (Selamlık)⁷⁶: Ուղևորություն դեպի Թերափիա (Therapia)⁷⁷,

⁷³ Բուրգաս (Burgas) – սևծովյան ափին գտնվող երկրորդ մեծ քաղաքը Բուլղարիայում:

⁷⁴ Չաթալջա (Tschataldscha) – շրջան արևելյան Թրաքիայում՝ Կոստանդնուպոլսից 43 կմ առաջ:

⁷⁵ Էդի Հենի (Edi Hänny) – Հենինները՝ Ֆրից Զիգրիստի հարուստ ազգականները, Կոստանդնուպոլսում ճանաչված շվեյցարացիներ են, որոնց մոտ երկրից հեռանալիս ի պահ է դրվում Կլարայի օրագիրը:

⁷⁶ Սելամլիք (Selamlık) – 1915 թ. մայիսին Կոստանդնուպոլսից իր տունն ուղարկած նամակում Կլարան հետևյալ կերպ է նկարագրում սելամլիքը. «Դա այն ծիսակատարությունն է, երբ սուլթանը առավոտվա աղոթքի է ուղևորվում զինվորների ու երաժշտության ուղեկցությամբ»:

⁷⁷ Թերափիա (Therapia) – Կոստանդնուպոլսի քաղաքամաս, որը գտնվում է Բոսֆորի ելքոպական ափին:

դրանից այն կողմ՝ դեպի Դարդանել (Dardanellen), ոչ ոք չի համարձակվի գնալ: Ամբողջ ծովափը գրավված է զինվորականներով:

1915, մայիսի 8

Այա Սոֆիա (Agia Sophia): Սուլթանների գերեզմանները: Շուկա: Կեսօրից հետո Հայդարփաշայում (Haidarpascha)⁷⁸ պրն. Բրիդելի (Bridel) մոտ, իսկ թեյը խմում ենք Սոդայում (Moda)⁷⁹՝ Լանգրենների (Langrev) մոտ:

1915, մայիսի 9

Ոսկեղջյուրով (Goldenes Horn) դեպի Քաղցր ջրեր (Süßen Wasser): Գնչուների քարավաններ, զորավարժությամբ զբաղված զինվորներ: Այնուհետև լեռան վրայով ետ՝ դեպի Կոստանդնուպոլիս (Konstantinopel):

1915, մայիսի 10

Ցավոք, բոլոր թանգարանները փակ են: Կեսօրին ճաշում ենք թուրքական մի ռեստորանում, իսկ երեկոյան՝ Հենինների (Hänny) մոտ: Հրաշալի արևամուտ, որ դիտում ենք կամրջից:

1915, մայիսի 11

Զենքերի համատարած հանձնում Կոստանդնուպոլսում (Konstantinopel): Ժամը մեկ շտապում ենք ոստիկանատուն, որպեսզի մեր անձնագրերը բերվեն հյուրանոց՝ մեր սենյակը: Մարդու հավատալը չի գալիս: Վերջապես երկրորդ օրը ստանում ենք մեր անձնագրերը:

⁷⁸ Հայդարփաշա (Haidarpasha) – ա) Ստամբուլի ասիական հատվածի թաղամաս, բ) երկաթուղային կայարան (տե՛ս ծթգ., էջ 108):

⁷⁹ Սոդա (Moda) – Կոստանդնուպոլսի թաղամաս:

1915, մայիսի 12

Նալ ենք նստել. ուղևորվում դեպի ասիական հատվածում գտնվող Հայդարփաշան (Haidarpascha)⁸⁰:

Դիտում ենք ռազմական մի նավի ճանապարհի ընկնելը: Թուրք զինվորներ: Նրանք երգելով ու ձեռքով անելով հրաժեշտ են տալիս քաղաքին: Պրն. Բրիդելը (Bridel) դեռ կանգնած է կայարանում: Անցնում են անթիվ զինվորական գնացքներ: Իզմիթի (Ismi) ծովածոցը: Կակաչի դաշտեր: Երեկոյան Էսքիշեհիրում (Eskischehir) կանգ ենք առնում ավստրիացի զորով ճաշարանատիրուհու մոտ, որը ճանաչում է Բաղդադի (Bagdad) երկաթուղու գրեթե բոլոր ճարտարագետներին:

1915, մայիսի 13

Ուղևորվում ենք ինչ-որ մի լճի երկայնքով և հիանում դրա բազմապիսի թռչուններով: Երեկոյան Կոնիայում (Konya) ենք, որտեղ քաղաքից այլևս որևէ բան տեսնել չենք կարողանում: Զինվորական հիվանդանոցային վրաններ և հակա-նեխիչ նյութերի հոտ՝ նաև իմ սենյակում: Առաջին փայտոջիլը:

1915, մայիսի 14

Ուղևորվում ենք դեպի Բոզանթի (Bozanti) կառավարության մի բարձրաստիճան պաշտոնյայի և թուրք սպայի ընկերակցությամբ, որոնք լավ գիտեն փառաբանել իրենց երկիրն ու ժողովրդին: Հիանալի ուղևորություն Տավրոսի (Taurus) լեռներով: Քարաբունարում (Karapunar) պրն. Լոյթենեգերը (Leutenegger)⁸¹ մեզ դիմավորում է մեքենայով: Հիանալի ըն-

⁸⁰ Հայդարփաշա կայարանը հայտնի է դարձել նրանով, որ 1915 թ. ապրիլի 24-ին այնտեղից է տանջանքի ու մահվան ուղարկվել քաղաքի հայ սերունդը՝ 240 հայ մտավորականներ:

⁸¹ Կառլ Լոյթենեգեր (Karl Leutenegger) – շվեյցարացի տեղագիր-ճարտարագետ Բազելից (Basel) (1875-1923): 1911 թ. հրավիրվել է Թուրքիա՝ ղեկավարելու Բաղդադի երկաթուղու չափագրման և ուղենշման աշխատանքները

դունելություն գեղեցիկ դիրք ունեցող երկաթուղայինների շինությունում: Լսում եմ անձրևի տակ կատարված մի ճանապարհորդության նկարագրությունը, որը սարսափ է ազդում:

1915, մայիսի 15

Կրկին պայծառ առավոտ է: Ճամպրուկները վերադասավորվում են: Ատամնաբուժի այց, այնուհետև մեքենայով անցնում ենք Չափիթի (Tschakit) ձորը: Խաղողի շատ վազեր կան այստեղ: Ճանապարհի վերջին ժամը ոտքով քայլում ենք դեպի Կուշուլար (Kuscular): Վերադառնում ենք Ալպյան (Alpen) տարածքներով: Սակայն գիշերեցինք սարսափելի օթևանում:

1915, մայիսի 16

Ամառային հրաշալի առավոտ է լեռնային այս շրջանում: Մեքենայով շարունակում ենք ճանապարհը՝ անցնելով չափազանց ուշագրավ ծաղիկների ու թփերի մոտով: Ճանապարհները, սակայն, սոսկալի են. Դորակից (Dorak) դեպի Ենիչե (Jenitsche) հաճախ դաշտերը կտրում ենք դրեզինով

(Karl Leutenegger, Մահալոսուսական, Schweizerische Bauzeitung, Bd. 81/82, 1923, Heft 14, էջ 181): Լոյթենեգերը Բաղդադի երկաթուղու շինարարության եվրոպացի մարդասեր այն ճարտարագետներից էր, որոնք հայտնի էին որպես հայազգի շինարար աշխատողների և ընդհանրապես հայ արքայալուծների պաշտպաններ: Այն մասին, որ Լոյթենեգերը ինչպիսի համառությամբ էր պաշտպանում հայերին թուրքական վայրագություններից, կարելի է կարդալ էպիսկոպոս Գրիգորիս Բալակյանի գրքում: Չնայած բոլոր խստություններին՝ Լոյթենեգերը, ըստ Բալակյանի, որպես բարի քրիստոնյա օգնում էր Կոնյայից և Էրեղլիից Բոզանտիով անցնող հայ արքայալուծներին՝ նրանց կանոնավոր կերպով հաց և դրամ բաժանելով: Երբ մի անգամ հայերին ուղեկցող ժանդարմները նրան թույլ չեն տվել հայերին մոտենալ, Լոյթենեգերը իր ձեռքի մտրակով հարձակվել է նրանց վրա և գոռացել. «Տեսե՛ք, տեսե՛ք, հաց եմ բաժանում: Ապա տեսնե՛մ՝ ո՞վ ձեզանից կփորձի խլել հացը այդ թշվառների ձեռքից», Balakian, Grigoris (2009), էջ 317: Լոյթենեգերի մարդասիրության մյուս օրինակները տե՛ս նույն տեղում, էջ 318, 322, 334: Տե՛ս նաև Gust, Wolfgang (2005), էջ 173, 1916-06-20- DEV-001:

(Draisine), որը հրում են՝ գլուխները որոճի ճյուղերով պսակազարդ տղամարդիկ⁸²: Կրկին կառք ենք նստում և ուղևորվում դեպի Ադանա (Adana): Այցելում ենք գլխավոր ճարտարագետ Վինքլերին⁸³ և իջևանում մի գարշելի պանդոկում:

1915, մայիսի 17

Գնում ենք ատամնաբույժի մոտ, այնուհետև՝ մի քանի գնումների: Ճաշից հետո մեկնում ենք Ադանայից: Ճամփորդում ենք բեդվինի տարազ հագած՝ Մեքքայի (Mekka) էմիրի որդու և պատգամավոր Աբդուլ Ռահման (Rahman) փաշայի հետ, իրենց ընտանիքներով: Վաղն այստեղ նշվելու է Էմդեն (Emden) գրահանավի գրավումը:

⁸² Դրեզդին – երկաթուղային քառանիվ սայլակ, որը շարժման մեջ է դրվում ձեռքով:

⁸³ Յոհան Լորենց Վինքլեր (Johann Lorenz Winkler) – գերմանացի ճարտարագետ, ծնվել է 1861 թ. հուլիսի 2-ին Լանգենցենում (Langenzenn), մահացել 1922 թ. ապրիլի 22-ին Սյունխենում: Եղել է Հռենոսի նավահանգստային ընկերության շինարարության խորհրդական և տնօրեն, իսկ Ադանայի Բադդադի երկաթուղու գլխավոր ճարտարագետ և շինարարության տնօրեն (տեղեկություն Մանհայմի (Mannheim) տապանազրից, <http://www.pano-ramio.com-/photo/49499138>): Հազիվ թե լինի մի գիրք Տավրոսի և Ամառնոսի լեռների տարածաշրջանում կառուցվող Բադդադի երկաթուղու կառուցման մասին, որտեղ հիշատակված չլինի Վինքլերի անունը ոչ միայն նրա մասնագիտական իրավահասության, այլև նախնառաջ նրա մարդասիրության և գերակա արդարամտության կապակցությամբ: Վինքլերն իր պաշտպանության տակ էր առել արտաքսվելու ենթակա հայերին և նրանց ընտանիքներին, և երբ լրջանում էր հայ անփոխարինելի աշխատողներին անապատ քշելու հարցը, նա ընդդիմացավ թուրքական իշխանություններին և օրերով դադարեցրեց շինարարական աշխատանքները: Սակայն նրա ջանքերն արդյունքի չհասան: Եվ երբ թուրքերը հաստատ մնացին իրենց որոշման մեջ, և հայերը, հակառակ Վինքլերի բոլոր ջանքերին, աքսորի ճամփան բռնեցին, նրա աչքերում երևացին արցունքներ: Հմմտ. նաև 1909-ի փաստագրված նախադեպը Ադանայի կոտորածների տարուց, որի ժամանակ Վինքլերը վեճի է բռնվել թուրքական կառավարության ներկայացուցիչների հետ: Վինքլերի մասին տե՛ս Gust, Wolfgang (2005), (1909-05-12-DE-003), Kaiser, Hilmar (1998), Kevorkian, Raymond (2011), Արամյան, Հայկ (1970) և ուրիշներ:

1915, մայիսի 18

Չորս տղամարդ հրում են մեր կառքը, մինչև հասնում ենք սպասարկող/օժանդակ գնացքը (Dienstbahn)⁸⁴, որը տանում է մեզ ավելի բարձրադիր վայրեր, անցնում ծաղկող ավելախոտերի կողքով, փոքրիկ հովիտների ու հարթավայրերի միջով: Քրդական առաջին տները: Այրանում (Airan) մեզ դիմավորում է պարոն Մորֆը⁸⁵ և հիանալի տեղավորում եվրոպական ձևով:

1915, մայիսի 19

Երեք ժամում ձիով անցնում ենք Այրանից (Airan) դեպի Էնթիլի (Entilli) ճանապարհը: Բարձունքից երևում է երկաթուղային շինարարության շենքը մայր մտնող արևի տակ: Այդտեղից բացվում է մի հիանալի տեսարան սարերի ու ձորերի վրա:

1915, մայիսի 20

Աչքի ենք անցկացնում մեր նոր բնակարանը, որը պետք է դեռ կարգավորվի: Երեկոյան այցելում ենք մեծ բանջարանոցը և հիվանդանոցը:

⁸⁴ Dienstbahn – երկաթգծի վրա գործող ժամանակավոր օժանդակ գնացք, որը ծառայում էր շինանյութերի, իսկ պատերազմի ժամանակ՝ ռազմական նյութերի փոխադրումների համար: Հարկ եղած դեպքում այն օգտագործվում էր նաև որպես մարդատար գնացք:

⁸⁵ Վալտեր Մորֆ (Walter Morf) – շվեյցարացի ճարտարագետ-շինարար (1875-1929): 1913-ից մինչև 1918-ը ղեկավարում էր Բաղդադի երկաթուղու Այրան տեղամասի շինարարությունը: Մորֆը Բաղդադի երկաթուղի էր եկել Շվեյցարիայում երկաթուղաշինության և թունելաշինության հարուստ փորձով և այնտեղ ստեղծել «միասնական, ամուր և լայնամասշտաբ տեխնիկական և վարչական կազմակերպություն» (Walter Morf մահախոսական, Schweizerische Bauzeitung, 1929, էջ 189): Իր ուղղամիտ և սիրալիր վարվելակերպով նա Բաղդադի երկաթուղու շինարարության մեծ ընտանիքում հոգատար ղեկավարի համբավ էր ձեռք բերել: Չնայած իր վերապահ խառնվածքին՝ նա միանում էր իր աշխատակիցներին, որոնք սատարում էին իր հալածական հայ աշխատողներին:

1915, մայիսի 23

Հոգեգալուստ: Ֆրիցին ուղեկցում եմ մինչև փապուղի (թունել):

1915, մայիսի 24

Զրույց թուրք սպաների հետ, որոնք մեզ մի ցայգերգ խոստացան իրենց երգչախմբով: Ընթրիք պարոն Քյոփելի⁸⁶ (Köppel) մոտ: Լուրեր՝ Իտալիայի ներգրավման մասին⁸⁷:

1915, մայիսի 25

Հազիվ ոտքի ենք, և Ֆրիցը բերում է տնից ստացված առաջին նամակները:

1915, մայիսի 26

Համբուրգից (Hamburg) եկած դոկտոր, պրոֆեսոր Մյուլենս (Mühlens)⁸⁸ այստեղ է գիշերում:

⁸⁶ Ֆրանց Քյոփել (Franz Köppel) – շվեյցարացի ճարտարագետ-շինարար (1883-1937), հանրակառքերի և երկաթուղային գծերի նորարար Սենտ Գալենից (St. Gallen). Ամանոսի Էնթիլի ուղեմատում (Entilli) նա եղել է տեղամասի պատասխանատուն՝ գլխավոր ճարտարագետ Մորֆի ենթակայության ներքո (աղբ. Մահախոսական, Schweizerische Bauzeitung, 109/110, 1937, էջ 165-167): Քյոփելը մեծ մարդասեր էր, ճանաչված էր որպես Բադ-դադի երկաթուղու հայ ծառայակիցների և նրանց ընտանիքների հովանավոր և Էնթիլիի հայկական որբանոցի համահիմնադիր: Գրականության մեջ հայտնի են Քյոփելի՝ հայերին փրկելու խիզախ փորձերը, օրինակ, նրանց մեծ խմբերով թաքցնելով: Այսպես՝ շատ աղքատներ փաստագրում են, որ Քյոփելը թաքցրել ու փրկել է 200 հայ աղջիկների: Հմմտ., Արամյան, Հայկ, (1970), էջ 126, էջ 270, 289. Balakian, Grigoris, (2009), էջ 270 և 289:

⁸⁷ 1915 թ. մայիսի 23-ին Իտալիան Ավստրո-Հունգարիային պատերազմ հայտարարեց:

⁸⁸ Պրոֆ. Դ-ր Պետեր Մյուլենս (Prof. Dr. Peter Mühlens) – (1874-1943), տրոպիկական հիվանդությունների, վարակազերծման և ախտահանման գերմանացի մասնագետ Համբուրգից, որը 1912-1914 թթ. հրավիրված է եղել Թուրքիա՝ պայքարելու մալարիայի դեմ, իսկ 1915 թ. գտնվել է ամանոսյան տարածքում՝ զինվորական առաքելության մեջ:

1915, մայիսի 27

Ձիավարում ենք դեպի հովիտ՝ աղբյուրի մոտ, որտեղ գնչուները վրաններ են խփել:

1915, մայիսի 28

Ամեն օր ռազմամթերքի հսկայական փոխադրումներ, որոնք իրար են խաչաձևում: Ուխտերով քարավաններ, գեղեցիկ ձիերի վրա արաբներ, որոնք հավանաբար զինակոչված են, բայց դեռ պետք է համագգեստ ստանան:

1915, մայիսի 29

Մեքենայով այստեղով են անցնում Գերմանիա վերադարձող Դամասկոսի (Damaskus) գերմանացի հյուպատոսը, գերմանացի սպաները՝ գնդապետ ֆոն Շմիդտ (von Schmidt) ու մայոր ֆոն Բրաբանթը (Brabant) և Նեղոսի (Nil) ակունքները հետազոտող դ-ր Կանտը (Kant): Նրանք այստեղ են գիշերում:

1915, մայիսի 31

Վերջապես տեղափոխվում ենք մեր տնակը:

1915, Հունիսի 2

Ամբողջ օրը զբաղված ենք կարագ հալեցնելով:

1915, Հունիսի 3

Ընթրիքին Քյոփեկների (Köppel) մոտ ենք:

1915, Հունիսի 4

Մեր բնակելի սենյակը փոքրիկ առաջխաղացումներ է ունենում:

1915, Հունիսի 5

Արդուկի առաջին օրը: Ֆրիցն ամբողջ օրը ուղեմասում է:

1915, Հունիսի 6

Առաջին կիրակնօրյա նամակս, որ տուն եմ ուղարկում անձնական սենյակիցս: Կեսօրից հետո ուղևորություն դեպի փապուղի (թունել):

1915, Հունիսի 8

Գոհարն⁸⁹ է այստեղ, մի փոքրամարմին տարիքով կին: Նրան վարժեցնելն ուղեկցվում է դժվարություններով՝ շարժուններով և բառարանը ձեռքիս:

1915, Հունիսի 10

Վերջապես Հալեպից (Aleppo) գալիս են Ֆրիցի ամուրիության շրջանի իրերը և մեր տնտեսության համար պատվիրվածները:

Անցնում է տասը ուղտից բաղկացած մի շատ փոքրիկ քարավան:

1915, Հունիսի 11

Տունը կարգի ենք բերում: Ֆրիցը կեսօրից հետո մնում է տանը: Մեր հյուրերն են գերմանացի հնէաբան, պրոֆ. Քիրխներ (Kirchner) և գլխավոր շտաբի բժիշկ, դ-ր Շախտը (Schacht): Հիանալի զրուցակիցներ, իսկական գերմանացիներ:

1915, Հունիսի 12

Տիկին Քյոփելի (Köppel) տանը դրոշակներ ենք կարում՝ ժայռերի ճեղքումը տոնականորեն նշելու նպատակով:

1915, Հունիսի 13

Հանգիստ կիրակի է մեր փոքրիկ տնակում: Մեզ լավ ենք զգում մեր ամենօրյա հարմարավետ սենյակում:

⁸⁹ Գոհար - Կլարայի քույր սպասուհին:

1915, Հունիսի 14

Կրկին դրոշակներ ենք կարում: Անցնում են եղնիններով ու սաղարթախիտ ծառերով բեռնված ջորիներ: Աչքերդ փակես և խորը շնչես, կարծես թե հայրենիքում լինես: Սենյակիս մեջ՝ եղննու ձյուղեր:

1915, Հունիսի 15

Հուսահատ օր անկողնում. փորհարությունս կարծես թե վերածվում է արնալուծի: Լեռների ճեղքման տոն: Դրսից լսում եմ միայն տեղացիների նվագի ձայնը, որը չափազանց վայրագ, բայց և երեխայական է հնչում:

1915, Հունիսի 16

Բուն տոնակատարությունը: Ֆրիցն առավոտյան ուրիշների հետ մեկնում է Այրան (Airan) և Երեկոյան է վերադառնում:

1915, Հունիսի 17

Նրանք դեռ տոնում են: Ես ինձ ավելի լավ եմ զգում և հաճույքով ընթերցում եմ՝ անկողնու մեջ պառկած: Երեկոյան շամպայնով զիջերանվագ մեր պատուհանի տակ:

1915, Հունիսի 18

Կեսօրից կրկին ոտքի վրա եմ:

1915, Հունիսի 19

Հաջորդ օրն անցկացնում եմ բազմոցի վրա կարելով: Ֆրիցն ամբողջ օրը ուղեմասում է: Երեկոյան այստեղ են պարոն Հունցիքերն (Hunziker) ու Վեթշթայնը (Wettstein):

1915, Հունիսի 20

Ընթերցանության օր՝ Christaller: Ruths Ehe
Rasmussen: Sultana
Seidel: Der Garten des Schuchan

1915, Հունիսի 21

Բոլորն օգնում են նախապատրաստվելու տոնակատարություններին:

1915, Հունիսի 22

Տոն՝ ժայռերի ձեղքման առթիվ: Առավոտյան ծաղկեպսակներ ենք պատրաստում՝ սեղանները զարդարելու համար, հյուրերն էլ են օգնում: Կեսօրին ճաշում ենք այստեղ, ապա մեկնում ենք Այրան (Airan)՝ բուն տոնակատարությանը մասնակցելու համար, իսկ առավոտյան ժամը ութին կրկին տանն ենք: Աստղագարդ հրաշալի երկինք էր:

1915, Հունիսի 23

Ծուլերի օր է. ոչինչ չենք անում: Երեկոյան կրկին համատեղ ընթրիք բոլոր հյուրերի հետ:

1915, Հունիսի 25

Ֆրիցն արդեն ամեն օր է մնում ուղեմասում և տուն է գալիս միայն ընթրիքին:

1915, Հունիսի 26

Քյոփեղներն ու օրհորդ Հունցիքերը (Hunziker) այստեղ են՝ ընթրիքի: Նստում ենք միասին մինչև գիշերվա ժամը 11³⁰, դասական երգեր երգում և շվեյցարական ժողովրդական երգեր կլկլացնում (to yodel). կարծես գտնվեինք Շվեյցարիայի լեռնային ինչ-որ մի հյուղակ-ճաշարանում (Swiss mountain chalet):

1915, Հունիսի 26

Ամբողջ օրը նվիրված է նամակագրության:

1915, Հունիսի 30

Դ-ր Գրեթերը⁹⁰ (Graeter) և ճարտարագետ Նեֆը (Neff) ընթրիքին այստեղ են: Ճարտարագետ Նեֆը պատմում է պատերազմի մասին, որին ինքն անձամբ մասնակցել է՝ մինչև վիրավորվելը:

Դ-ր Գրեթերը պատրաստակամություն հայտնեց զանգահարել մեր տուն Բուքսով (Buchs) անցնելու ընթացքում:

⁹⁰ Դ-ր Էդուարդ Գրեթեր (Eduard Graeter) (1881-1957)– շվեյցարացի գիտնական Բազելից: Հայերի ցեղասպանության տարիներին Հալեպում ռեալական դպրոցի ուսուցիչ էր: Ավելի ուշ Բազելի «National-Zeitung»-ի արտերկրյա թղթակիցն էր: Որպես թուրքական ոճրագործությունների ակնատես՝ դ-ր Էդուարդ Գրեթերը 1915-1916 թթ. մարդկության անունից իր ձայնը բարձրացրեց թուրքական բռնությունների դեմ (տե՛ս Կլարայի օրագիրը, էջ 178):

Ուշագրավ է Ջեբերգից (Seeberg, Շվեյցարիա) դ-ր Էդուարդ Գրեթերի որդու՝ դ-ր Փաուլ Գրեթերի՝ 2001 թ. սեպտեմբերին գրած ակնարկը, որը պատահաբար կարդացել եմ համացանցում: Դ-ր Փաուլ Գրեթերը չի հասկանում, թե ինչու այսօրվա գերմանական դեկավար շրջանները վախենում են Հայոց ցեղասպանությունն իր անունով կոչելուց: Նա գրում է. «Ինձ վրդովեցրեց և անհանգստացրեց «Երեց Լեփսիուսն ու հայերը» հոդվածը: Մի թե Գերմանիան այլևս իր սեփական երկրի տերը չէ»: (...)

«Հայրս՝ Էդուարդ Գրեթերը, Առաջին աշխարհամարտի սկզբին Հալեպի գերմանական գիմնազիայի ուսուցիչ էր: Այն ժամանակ Հալեպը դեռ պատկանում էր Թուրքիային, և նա իր սեփական աչքերով տեսել էր ցեղասպանությունը. նա տեսել էր դիակներ՝ Եփրատով հոսընթաց բշվելիս և այլևս ի վիճակի չի եղել դասերը շարունակել քայքայված դիակների գարշահոտության պատճառով, որոնք դպրոցի կողքի բակում դարսված են եղել սայլերի վրա: Ջոհերից մեկն էլ նրա հայ աշակերտներից մեկն է եղել: Հայկական գյուղերը, որոնք նա ճանաչել է անցյալում ձիով կատարած իր շրջագայությունների ժամանակ, գտել է ամայացած վիճակում: Ի տես այդ կոտորածների՝ նա արևելքում այլևս ի վիճակի չի եղել գործել որպես եվրոպական մշակույթի արժեքների ներկայացուցիչ: Նա և իր բարեկամ գերմանացի դ-ր Մարտին Նիպագեն վերադարձել են իրենց հայրենի երկրները, որպեսզի աշխարհին տեղեկացնեն այդ բոլորի մասին: Սակայն կայսրը Նիպագենի գրկեց խոսելու իրավունքից (Գերմանիան այդ ժամանակ ռազմական դաշինքի մեջ էր Թուրքիայի հետ): (...)» Dr. Paul Graeter, Seeberg/Schweiz. Հմմտ. Junge Freiheit, Wochenzeitung für Debatte, Sept. 2001.

1915, Հուլիսի 3

Պարոն Մորֆը սուրճի է մեզ մոտ: Երեկոյան գալիս են պարոն Բյոփելն (Köppel) ու Հունցիկերը (Hunziker):

Ամառային հրաշալի գիշեր է. պատուհանի մոտ կանգնած՝ զմայլվում ենք հովտի անդորրով, որն ամեննին իր հմայքը չի կորցնում՝ չնայած գյուղից հնչող շաբաթ իրիկվա բարձրաձիչ երաժշտության:

Նեցթալում (Netstal) մահացել է (Ֆրիցի) հայրիկը:

1915, Հուլիսի 4

Ֆրիցի համար բարձրաձայն կարդում են Felicitas Rose: Heideschulmeister Uwe Karsten⁹¹:

1915, Հուլիսի 5

Էնթիլի (Entilli), Թուրքիա (Türkei): Իմ ծննդյան այս տարեդարձն էլ լավ է անցնում, թեև Մարգելքոպֆ (Margelköpf)⁹² լեռան պակասը շատ են զգում: Սակայն վաղ առավոտյան այստեղով անցավ ուխտերի մի քարավան՝ զանգակներով, որն ինձ հիշեցրեց մեր մանր անասունների հոտը՝ զանգուլակներով, և հոգուս խորքում հայրենի կարոտ արթնացրեց:

Ֆրիցն այսօր տանն է մնում, և օրն իսկապես հաճելի անցնում:

Նամակներ ենք գրում:

⁹¹ Թուրքիայում անցկացրած երեք տարիների ընթացքում Զիգրիստ-Հիլթի ամուսինները փորձում էին ժամանցի տարբեր միջոցներով իրենց ուշադրությունը շեղել շրջապատող միջավայրի տխուր իրադարձություններից: Այդ միջոցներից մեկը գեղարվեստական գրականության գերմանալեզու գլուխգործոցների ընթերցանությունն էր: Մեծ մասամբ Կլարան էր բարձրաձայն կարդում: Որդիներից Ռուդին կազմել է Կլարայի օրագրում հիշատակված աշխատությունների ցանկը, որը ես լրացրել եմ նոր անուններով: Ցանկում ավելացրել եմ նաև տվյալ ստեղծագործությունների ընթերցման թվականը: Հմտ. ընթերցված գրքերի ցանկը տե՛ս էջ 418-419:

⁹² Մարգելքոպֆ (Margelköpf) լեռան մասին տե՛ս էջ 101:

1915, Հուլիսի 6

Տնից նամակներ ենք ստանում:

1915, Հուլիսի 7

Ընթրիքից հետո զբոսանքի ենք դուրս գալիս Էնթիլիից (Entilli) շատ հեռու և ռազմական ճանապարհով տուն վերադառնում:

Այստեղ տեղի է ունենում շքանշանների հանձնում:

1915, Հուլիսի 9

Պտղանուշներ ենք պատրաստում: Հիմա օրվա ընթացքում քամին ուժեղ չէ, և ես կարող եմ մեր տնակի առաջ նստած աշխատել: Ֆրիցը մոտակայքում է աշխատում, և ես կարող եմ նրան հեռադիտակով դիտել:

1915, Հուլիսի 10

Առավոտյան զբաղվում եմ տնային գործերով: Կեսօրին դրսում նստած գրում եմ:

1915, Հուլիսի 11

Պարոնները⁹³ Այրանում (Airan) են: Ճաշում եմ տիկին Քյոփելի (Köppel) տանը:

1915, Հուլիսի 12

Ճամփորդության պատրաստություններ:

1915, Հուլիսի 13

☼⁹⁴ Ժամը 3-ին մեզ արթնացնում են, և մեկ ժամ հետո ճանապարհ ենք ընկնում դեպի Միսաքա (Missaka): Հրաշալի

⁹³ «Պարոնները» ասելով՝ Կլարան նկատի ունի Բադդադի երկաթգծի վրա պաշտոնավարող իր ամուսնու եվրոպացի աշխատակիցներին:

⁹⁴ Իր օրագրում 1915-ի հուլիսի 13-ին Կլարան կատարում է հայերի տարագրությունների մասին իր առաջին արձանագրությունը: Այսուհետև ☼-ով կսկսվեն բոլոր այն գրառումները, որոնք պարունակում են տեղեկություններ Հայոց ցեղասպանության մասին:

արևածագ է, լողանում ենք Քարասուում (Karasu): Ֆրիցն ինձ ցույց է տալիս ձմեռային ճամբարների բոլոր վայրերը, որտեղ անցյալում ինքը բնակվել է: Ճանապարհին գտնում ենք օձի մի մորթ, տեսնում զինվորական քարավաններ և տեղահանված հայերի խմբեր: Ահա և Միսսաքան (Missaka): Այցելում ենք բուժքրոջը, իսկ երեկոյան ոտքով ճանապարհ ենք ընկնում դեպի ուղեկամուրջ: Կեսօրին ճաշում ենք մի ծառի տակ:

1915, Հուլիսի 14

Ֆրիցի և պարոն Նեֆի (Neff) հետ մի մեծ կամուրջի վրա յով իջնում ենք դեպի կիրճը: Երեկոյան բոլորս հավաքված ենք Միսսաքայում (Missaka): Ընթրում ենք բժշկի տանը: Ֆրիցի հետ բարձրանում եմ մի բլրակի վրա, որտեղից մեր առջև բացվում է մի հրաշալի տեսարան: Հիասքանչ Միսսաքա, շատ հաճելի և հարազատ վայր է սա:

1915, Հուլիսի 15

Առավոտյան ժամը 5-ին բլրի վրա ենք, որտեղ, մեկ ժամ պառկած, վայելում ենք տեղանքի գեղեցկությունը: Ուղեկամրջի վրա վազվզում են տղամարդիկ: Կեսօրից հետո ձիերի վրա հասնում ենք մի բլրի, որի վրա քրդական գյուղ կա: Սիրալիբ ընդունելություն:

Միայն այսօր ենք պաշտոնապես տեղեկանում, որ Նեցթալում (Netstal) [Ֆրիցի] հայրիկը վախճանվել է:

1915, Հուլիսի 16

...Իսկ այժմ տուն ենք վերադառնում: Սակայն մեր սրտերում Միսսաքան (Missaka) մեզ հետ է գալիս:

1915, Հուլիսի 18

Պարոն Նեֆը (Neff) ընթրիքին մեզ մոտ է, պարոն Վուստը (Wust) Հալեպից (Aleppo) կարճ այցելության է եկել:

1915, Հուլիսի 19

Ֆրիցը մնում է տանը, որովհետև իրեն շատ վատ է զգում։ Պարոն Քելլերմանը (Kellermann) մեզ մոտ ճաշի է։ Երկար նամակ մամայից և Յուլիից (Juli)։

1915, Հուլիսի 20

Ֆրիցն իրեն ավելի լավ է զգում, սակայն օդի ջերմությունն այս օրերին գրեթե անտանելի է. սենյակում՝ 35 աստիճան։

1915, Հուլիսի 23

Թեյս խմում եմ տիկին Քյոփելի (Köppel) մոտ։ Ընթրիքից հետո վազում ենք ցած՝ դեպի գյուղ։

1915, Հուլիսի 25

Ֆրիցը զբաղված է փապուղում (թունելում), ես, գիրքը ձեռքիս, պառկած եմ մեր տնակի ստվերում։ Կեսօրից հետո զովանում ենք թունելում։ Երեկոյան զբաղված ենք ընթերցանությամբ, իսկ ընթրիքից հետո պարոնների հետ երկար նստում ենք Քյոփելենց (Köppel) տանը։

1915, Հուլիսի 26

Կրկին խոսում են աշխատանքի դադարեցման մասին⁹⁵, և կրկին ապագան մեծ հարցականի տակ է։

⁹⁵ Խոսքն այստեղ աշխատանքի հնարավոր դադարեցման մասին է՝ կապված թուրք իշխանությունների կողմից երկաթուղու հայ շինարարների նկատմամբ խժոժությունների։ Հայերի համատարած արտաքսումների հետ մեկտեղ, որոնք վերջում ավարտվում էին սպանողով, ուժեղանում էր եվրոպացի ճարտարագետների ընդդիմությունը երիտթուրքական կառավարության հայաջինջ քաղաքականության դեմ։ Հայտնի է, որ գերմանացի գլխավոր ճարտարագետ Յ. Լ. Վինքլերը 1916 թ. հունիսին երկու շաբաթով, ի նշան բողոքի, ընդհատել էր Բադդադի երկաթգծի ամանոսյան շրջանի բոլոր աշխատանքները։

1915, Հունիսի 29

Անտանեյի շոգ է. 31 աստիճան տանը: Թվում է՝ ձվերն արևի տակ ճուտ են հանելու: Ընթրում ենք տնակի առաջ:

1915, Հունիսի 30

Ամբողջ օրը, դրսում նստած, կարկատում եմ Միսսաքայից (Missaka) բերած սպիտակեղենը:

1915, օգոստոսի 1

Շվեյցարիայի (Schweiz) դրոշը ծածանվում է երկաթուղային բաժանմունքի վրա: Երեկոյան շվեյցարացիներս հավաքվում ենք: Գնդակը ծակել է մեր տնակի առաջ դրված իմ փոքրիկ սեղանը⁹⁶:

1915, օգոստոսի 3

Երկար նամակներ տնեցիներից, որոնցով իրենց ուրախությունն են հայտնում դ-ր Գրեթերի (Graeter) միջոցով փոխանցած մեր բանավոր ողջույնների համար:

1915, օգոստոսի 5

Մի փոքրիկ, վախվորած շնիկ սովորում է մեր տանը շնորհիվ համեղ պատառիկների ու բարեկամական խոսքի:

1915, օգոստոսի 6

Երեկոյան զբոսնում ենք Էնթիլի (Entilli) գյուղից վեր, բլրի վրա գտնվող քրիստոնեական փոքրիկ մի գերեզմանոցում: Փոքրիկ կաղնիները ստվերում են հերձաքարերով ծածկած գերեզմանաթմբերը:

Հովտում հրդեհ է:

⁹⁶ Օգոստոսի 1-ի տոնակատարությունը՝ որպես Շվեյցարիայի համադաշնության օր, Կլարայի համար մեծ նշանակություն ուներ: Նշելով գնդակի՝ սեղանին հասցրած վնասվածքը՝ Կլարան դառնություն է արտահայտում այն կապակցությամբ, որ համաշխարհային պատերազմը ներխուժել է նաև իր անձնական կյանքի խաղաղության մեջ:

1915, օգոստոսի 9

Կիրակի առավոտյան նստած ենք տնակի առաջ: Ֆրիցն ընդօրինակում է լուսանկարները, իսկ ես ընթերցում եմ նրա համար:

1915, օգոստոսի 10

🌸 Շարունակ հայեր են անցնում մեր տան առջևով: Թուրքերը մոտակայքում մի ամբողջ գյուղ են կոտորել, որովհետև հայերը զենք ու զրահով պաշտպանվել են:

1915, օգոստոսի 11

Պարոն Նեֆն (Neff) ու դ-ր Ֆարահը (Farah)⁹⁷ այստեղ են: Ֆրիցը կրկին ամբողջ օրն անցկացնում է ուղեգծում:

1915, օգոստոսի 12

Պատճենահանում ենք մեր ճանապարհորդության լուսանկարները:

Այստեղով են անցնում զինվորական ջոկատներ, վայրենի, գունազեղ մի հրոսակ. հավանաբար նրանք ավելի ուշ են համազգեստ հագնելու:

1915, օգոստոսի 13

Պարոն Ֆանկհենելը (Fankhänel) ընթրիքի է մեզ մոտ: Երկու ավստրիացի, մեկը՝ բժիշկ, այստեղ են հասել Պարսկաստանի վրայով՝ փախչելով ռուսական գերությունից:

⁹⁷ Դ-ր Ֆարահը (Farrah) Զիգրիստների մոտ հաճախ էր հյուրենակվում: Գրականության մեջ նրա անունը հայտնի է որպես հալածական հայերի համակիր, ինչպես նաև ուրպես վստահելի և կարեկից վկա: Հայտնի է նրա մասին հետևյալ միջադեպը. «Մոտ 10.000 վտարանդիներ Ուրֆայից նոյեմբերին և դեկտեմբերի սկզբներին անցնում էին Թել Աբիադով (Tell Abiad): Տեղամասի հրամանատար Զեմիլ բեյի (Djemil Bey) և տեսուչ (inspector) Մահմուդ բեյի (Mahmud Bey) հետ մի զրույցի ժամանակ մեր բժիշկը՝ դ-ր Ֆարահը, հարցրեց, թե ուր են տեղափոխում այս բոլոր հայերին: Զեմիլ բեյը պատասխանեց Ռաքա: Իսկ Մահմուդ բեյը, որն ինքն էլ հավանություն չէր տալիս հայերի նկատմամբ դաժանություններին, պատասխանեց. «Ռաքա տանող ճանապարհին», տե՛ս Gust, Wolfgang (2005), էջ 421:

1915, օգոստոսի 14

Ընթերցանություն՝ Teichmann-ի «Կյանքի ու մահվան մասին» գիրքը: Յոգելին (Joggeli)⁹⁸ և ես գնում ենք ուղեմաս՝ Ֆրիցին դիմավորելու:

1915, օգոստոսի 15

Ձանձրալի կիրակի օր, քանի որ երկուսս էլ շատ լավ չենք զգում մեզ:

1915, օգոստոսի 16

Ֆրիցը տանն է: Ես նամակ եմ գրում:

1915, օգոստոսի 19

Այս շաբաթ երկու անգամ նամակ ենք ստանում. երկար նամակ, որը գրում է Ֆրիցի մայրիկը Նեցթալից (Netstal):

1915, օգոստոսի 20

Ֆրիցին Քելլերի (Keller) վրայով ուղեկցում եմ ուղեմաս՝ Իսլահիե չհասած: Ֆրիցն ավարտում է իր դրսի աշխատանքը, ապա [գնում ենք] դեպի Քուրդ-Բաղչե⁹⁹ և [կրկին] Քելլերով (Keller) անցնելով, որտեղ մեր [ապագա] տնակն ենք նայում, ապա տուն ենք վերադառնում:

1915, օգոստոսի 24

Պարոն Քյոփելն (Köppel) ու Հունցիքերը (Hunziker) ճաշում են մեզ մոտ: Մեզ համար մժեղարգել¹⁰⁰ եմ կարում, իսկ Ֆրիցն իր թամբն է ստանում Բեյրութից (Beirut):

⁹⁸ Յոգել(ի) (Joggel(i)), այսպես էր փաղաքշորեն կոչում Կլարան իր երիտասարդ և սիրելի ծառային, որի անունն իրականում Մեհմեդ Հյուսեյին (Mehmet Hüseyin) էր: Նա ծագումով պակիստանցի մուսուլման էր, որը, ծառայելով հնդկական բանակում, գերի էր ընկել թուրքերին և իբրև այդպիսին հանձնվել էր Զիզրիստ-Հիլթի ընտանիքին ծառայելու որպես սպասավոր: Հմմտ. Sigris-Clalüna, Ruedi, մաս 3, էջ 199:

⁹⁹ Կլարան Բաղչե (Bahçe) անվան փոխարեն գրեթե ամենուրեք օգտագործում է կայանի վաղեմի անունը՝ Քուրդ Բաղչե (Kurd Bahçe):

¹⁰⁰ Շատ տարիներ անց որդիներից Ռուդին հեգնում է մոր նման նախագգուշական միջոցառումները՝ վկայելով, որ մայրը, հակառակ իր բոլոր

1915, օգոստոսի 25

Երեկոյան սենյակներում կրկին 33 աստիճան է: Ֆրիցը ընթրիքից հետո նորից գնում է փապուղի, սակայն գործը շուտ է վերջացնում և հազիվ անցել էի գրելուն, նա կրկին վերադառնում է:

1915, օգոստոսի 26

Պարոն Մորֆը կեսօրվա ճաշին մեզ մոտ է լինելու: Ժամը 11-ին վերջապես երկու վառեկ փետրեցիներ, որովհետև միս չի ճարվում:

Ոչինչ հնարավոր չէ անել շոգի պատճառով: Հունցիկերը (Hunziker) տոնում է իր մեկնումը:

1915, օգոստոսի 27

Ամբողջ գիշեր ռազմամթերքի անվերջանելի փոխադրումներ լեռնիվար: Մենք մոտիկից դիտեցինք ուրվականային այդ տեղաշարժը: Ապա կարճ դադար առնելով՝ նրանք տեղավորվեցին հիվանդանոցի հրապարակում:

1915, օգոստոսի 28

Յոգելին (Joggeli) և ես երեկոյան գնում ենք փապուղի՝ Ֆրիցին դիմավորելու:

1915, օգոստոսի 29

Զիավարություն լեռն ի վեր՝ Քյոպֆելների (Köppel) մոտ, որոնք բնակվում են հրաշալի մի վայրում գտնվող վրանային ճամբարում՝ շրջապատված անտառով: Ապա ձիավարում ենք մինչև լեռան գագաթը: Հուժկու քամին անհնարին է դարձնում վերնում մնալը: Ալպիական տրամադրություն:

ջանքերին, չի կարողացել կանխել, որ ինչպես նրա ամուսինը՝ Ֆրից Զիգրիստը, այնպես էլ ամուսինների առաջնեկ Կառլֆրիդեյին, դողերոցքով (Malaria) հիվանդանային, հմմտ. Sigrist-Clalüna, Ruedi, մաս 3, էջ 51:

Կարմիր վայրի մեխակներ: Հովտում ձիավարում ենք ռազմամթերքի փոխադրումների միջով:

1915, օգոստոսի 30

Առավոտյան մաքրում եմ պահարանները՝ պայքարելով հնարավոր ամեն տեսակի միջատների դեմ: Կեսօրից հետո մտնում եմ անկողին՝ երեկվա մրսածությունս հաղթահարելու համար:

1915, օգոստոսի 31

Այսօր մնում եմ անկողնում: Ընթերցում եմ Rosegger-ի «Անտառապահ տղաները»: Ընթրիքին վեր եմ կենում: Ենթադրությունները իրականություն են դառնում... Ա՛խ, երանի, թե երկուսս էլ միայն այնտեղ հասած լինեինք...¹⁰¹:

1915, սեպտեմբերի 1

Արևի տակ պառկած՝ բազմոցին կարդում եմ: Կեսօրից հետո նամակներ եմ գրում:

1915, սեպտեմբերի 2

🌸 Նամակներ եմ գրում: Մեծ թվով նամակներ ենք ստանում: Հայերի հոսքը չի դադարում: Հիմա էլ քաղաքի բնակիչներ են, որոնց վրայից երևում են նրանց գլխով անցածները:

1915, սեպտեմբերի 3

Լվացքի օր է: Արևածագին լվացքը փոփում, է և մինչև կեսօրվա ճաշը մեծ մասն արդեն արդուկված է:

Երեկոյան քայլում ենք Ֆրիցի ներկայիս աշխատանքային ուղեմասի ամբողջ երկայնքով:

¹⁰¹ Կլարայի հղիությունը հաստատվում է:

1915, սեպտեմբերի 4

Քամի չկա, շոգ օրեր են: Երկար նստած եմ դրսում և փայտաշեն տանիքի տակ կարկատան եմ անում: Վեթշտայն (Wettstein) ընթրիքին մեզ մոտ է:

1915, սեպտեմբերի 5

Ձիավարում ենք դեպի Գյոջե-Դաղ (Gödjé-Dagh) լեռը, փապուղուց շարունակ դեպի վեր՝ անցնելով մեկուսի քրդական մի գյուղով: Դադար աղբյուրի, ապա քարե պարիսպի մոտ՝ լեռան ամենաբարձր կետում: Կիրակնօրյա պայծառ, խաղաղ առավոտ է: Հեռավոր տեսարան դեպի Տավրոս (Taurus) լեռները: Կեսօրին ճաշում ենք անտառում, ապա Քյոփեղների (Köppel) վրայով վերադառնում ենք տուն:

1915, սեպտեմբերի 6

Երկուշաբթի օրվա աշխատանք. խրճիթի ներսում ամեն տեսակի գործեր: Կեսօրից հետո՝ կարկատան դրսում: Ֆրիցն ամեն օր զբաղված է իր երկու փապուղիներում:

1915, սեպտեմբերի 7

Արդուկում-վերջացնում եմ մնացած լվացքը: Աշխատունակությունս ինձ ուրախացնում է: Մորֆն ու Քյոփեղը (Köppel) մեզ մոտ թեյի են: Երեկոյան ջերմությունս բարձրանում է:

1915, սեպտեմբերի 8

Ջերմությունս 39 աստիճան է՝ ուժեղ գլխացավով: Ֆրիցը, սակայն, շատ հոգատար հիվանդապահ է. սառը ծրարումներ, գլխի թրջոցներ:

1915, սեպտեմբերի 9

Ախտորոշումը կարող է լինել կամ արևահարություն կամ դողերոց: Սարսափելի շոգ էր, իսկ դողերոցով հիվանդների թիվը մեծ էր:

1915, սեպտեմբերի 10

Ջերմություն չունեմ:

1915, սեպտեմբերի 11

Արթնանում եմ կեսօրին, սակայն ինձ շատ հոգնած եմ զգում: Տիկին դոկտորը¹⁰² մի կարճ այցելություն է կատարում:

1915, սեպտեմբերի 12

Եվս մի ծանր օր, բայց երեկոյան կողմ ավելի լավ եմ զգում:

Ամբողջ բաժանմունքը հրավիրված է Քյոփելների (Köppel) մոտ: Սակայն Ֆրիցն ուզում է մոտս մնալ, և ինքն էլ է մի քիչ հանգստանում:

1915, սեպտեմբերի 13

Ջորջի հսկայական տեղաշարժեր դեպի Կոստանդնուպոլիս: Պարոն Նեֆը (Neff) կեսօրվա ճաշին մեզ մոտ է: Ես դեռ շատ թույլ եմ:

1915, սեպտեմբերի 14

 Դրսում կարկատան եմ անում, հեռադիտակը կողքիս է: Աստվածամոր պատկերները հաջորդում են իրար. ոտաբոբիկ կանայք՝ երեխաները մեջքներին կամ իրենց առջև՝ ձիու վրա:

¹⁰² «Տիկին դոկտոր» ասելով՝ Կլարան նկատի ունի հայտնի բժշկի՝ դ-ր Պ. Հովնանյանի տիկնոջը: Դ-ր Հովնանյանը պաշտոնավարում էր Էնթիլիի հիվանդանոցում և իր տառապյալ ու անապաստան հայրենակիցների պահապանն էր: Դ-ր Օհանյանը Զիգրիստների ընտանեկան բժիշկն էր նրանց Թուրքիայում գտնված երեք տարիների ընթացքում, և երկու ընտանիքների միջև սերտ բարեկամություն էր հաստատվել: Թեև Կլարան շատ սեղմ տեղեկություններ է տալիս տիկին Հովնանյանի հետ իր ցավոտ գրույցների մասին, նրա գրվածքներում նրա խոր կարեկցանքը Հովնանյան ընտանիքի հանդեպ շատ զգալի է: Տե՛ս Կլարայի ականատեսի վկայության վերջին նախադասությունը, էջ 264:

1915, սեպտեմբերի 15

Առավոտյան տեղատարափ անձրև: Սակայն այնուհետև սպիտակ ամպերը երկինքն ավելի են պայծառեցնում: Նստած դրսում իմ գրություններն եմ անում և ապա կարում եմ փոքրիկ կրծկալներ:

1915, սեպտեմբերի 15

✿ Հայերն անցնում են հազարներով¹⁰³:

1915, սեպտեմբերի 17

✿ Ընթրիքից առաջ արագ իջնում ենք գյուղ՝ տեսնելու այստեղ գիշերող հայերի ճամբարը. ժողովուրդների գաղթի բնորոշ տեսարան: Երկու հսկա անիվների վրա բարձր քառակուսի արկղեր՝ ծածկված մահուղով, ներսում՝ մասամբ գեղեցիկ գորգեր: Մայլից դուրս կախված կավե շշեր և գեղեցիկ սափորներ: Երկու գոմեշ է քաշում այդ ամբողջ տնային տնտեսությունը:

Ասում են, որ Ադանայից (Adana) արդեն բոլոր հայերին քշել են:

1915, սեպտեմբերի 18

Մեծ գորաշարժեր Հալեպից (Aleppo) դեպի Ադանա (Adana): Այս անգամ մարզված և լավ համազգեստով զինվորականություն է: Երեկոյան դիտում ենք անհագուստ արաբների մի դասակ, և մի առույգ թուրք սպա, որը նրանց տանում է, ցույց է տալիս մեզ անգլիացի գերիների և ավար վերցրած անգլիական դրոշմ: Երգելով նրանք բարձրանում են լեռն ի վեր:

¹⁰³ Գլարայի օրագրային գրանցումները երբեմն բաղկացած են միայն մեկ նախադասությունից՝ այն էլ նվիրված միայն հայերի տարահանմանը: Դրանից երևում է, թե որքան է հայերի տեղահանման իրողությունը նրան մտահոգում:

1915, սեպտեմբերի 19

✿ Յուրտ, քամոտ օր է: Առավոտյան աշխատում եմ դրսում: Կեսօրից հետո նստած ենք մի բլրի վրա, որտեղից տեսարան է բացվում դեպի Իսլահիե: Տեսնում ենք արտաքսված արաբներ, որոնք անցնում են հովիտը: Հայերի երթերը չեն վերջանում: Այս անգամ կղերականներ են, ու մայրապետներ էլ կան նրանց մեջ: Իսկ երեկոյան բանվորներից մեկը պատմում է մեզ այն բոլոր գազանությունների մասին, որոնց նրանք ենթարկվել են:

1915, սեպտեմբերի 20

Մոտիկից դիտում ենք բեդվինների, գտարյուն կերպարներ՝ բարեկազմ, մկանուտ, թուխ, երկարավուն դեմքերով և սև գանգուր մազերով: Երեխաները քայլում են կիսամերկ, առանց կոշիկի: Նրանց ուղեկցում են քիչ թվով ժանդարմներ, որոնք ետ մնացողներին ճիպոտի հարվածներով ստիպում են առաջ շարժվել: Իբրև թե նրանք անգլիացիների դրդամար ապստամբել են: Մի ծեր արաբ ետ է մնում:

Մորեխների հսկա պարսեր կրկին հարձակվում են երկրի վրա:

1915, սեպտեմբերի 22

Իսկ հիմա ես գրանցում եմ իրադարձություններ, որոնց մասին ներկայումս չի կարելի պատմել նամակներում:

1915, սեպտեմբերի 23

Ֆրիցը գնում է տիկին Շիմելիի (Schimmeli) հուղարկավորությանը: Նամակ մայրիկից՝ լի երջանկությամբ դ-ր Գրեթերի (Graeter) այցի կապակցությամբ: Երեկոյան նստած ենք պատշգամբում գլխավոր ճարտարագետներ Վինքլերի և

Մորֆի ներկայությամբ: Եղբայր Բերգմանսի՝ (Bergmanns)¹⁰⁴ կենդանիների մասին դիտողությունները երեկոյի ամենահետաքրքրական մասն են կազմում:

1915, սեպտեմբերի 24

🌸 Վերջապես որոշված է. գնում ենք: Շտապ-շտապ հավաքվում ենք: Նախապես նախաճաշի է գալիս տիկին Քյոփելը (Köppel): Ապա՝ ժամը 1-ին, ձիերով ճանապարհ ենք ընկնում Քելերով դեպի Իսլահիե՝ տեղ-տեղ կտրելով տեղահանվածների երթերը: Իսլահիեում տեսնում ենք դ-ր Ֆարահին (Farah), որտեղից նա հատուկ գնացքով և տիկին Էրլերի (Erler) հաճելի ընկերակցությամբ շարունակում է ճանապարհորդությունը: Լուսնի լույսի տակ անցնում ենք կամուրջը, որտեղից հոյակապ տեսարան է բացվում: Ընդունելությունն պարոն Ուլֆի (Ulf) մոտ, և երեկոն վայելում ենք պարզ, աստղազարդ երկնքի տակ: Մոծակներով լի սոսկալի գիշեր:

1915, սեպտեմբերի 25

🌸 Պարոն Նեֆի (Neff) հետ ոտքով գնում ենք Միսաքա (Missaka): Ճաշում ենք դ-ր Ֆարահի (Farrah) մոտ, այնուհետև շտապում ենք Ռաջու (Radjou) երկաթուղային կայարան, որ-

¹⁰⁴ Ֆրից Զիգրիստը եղբայր Բերգմանսին ճանաչում էր 1910-ից: Վերջինս սիրիական սահմանի մոտ գտնվող Չեքլեի (Chekle) տրապիստների վանքի 12 վանականներից մեկն էր: Տրապիստները հռոմա-կաթոլիկական վանական միաբանություն են: Իր հուշերում Ֆրիցը պատմում է, թե ինչպես նա պատերազմից առաջ հաճախ էր այցելում Չեքլեի (Chekle) վանքը՝ հիանալով վանականների բազմապիսի և օրինակելի գործունեությամբ: Ինչպես քրիստոնեական բոլոր հաստատությունները, այդպես էլ այդ Չեքլեի վանքը Առաջին աշխարհամարտի ժամանակ փակվեց երիտթուրքական կառավարության կողմից, իսկ շենքը բռնագրավվեց: Բոլոր վանականներն ստաքսվեցին, և միայն եղբայր Բերգմանսն իրավունք ստացավ՝ որպես գերմանացի մնալու Թուրքիայում և իր ապրուստը վաստակելու Բադդադի երկաթուղու շինարարության աշխատանքներում:

տեղ տեղեկանում ենք, որ մեր գնացքը մեկնելու է միայն ժամը 16-ին: Պարոնները սկզբում սկատ (Skat) են խաղում: Այնուհետև վերջապես մեկնում ենք քրդական լեռների միջով: Քաթմայում (Katma) գնացքից իջնում ենք: 20 000 հայեր ճամբար են խփել: Ամեն տեսակի վրաններ, մի մասը՝ բարեկարգ, մյուսը՝ այնքան պարզունակ, որ մարդկանց հազիվ է ծածկում: Խճողված բազմություն: Մարդիկ պազած են ընթրիքը ուտում: Մայր մտնող արևը լուսավորում է այդ ամբողջ թշվառությունը, ապա մթնում ու ցրտում է՝ մեր հոգում թողնելով անսահման հուսահատություն:

1915, սեպտեմբերի 26

🌸 Պարոն Հազենֆրացը (Hasenfratz)¹⁰⁵ երեկոյան նախապես եկել էր մեր ետևից: Շատ սիրալիր ընդունելություն: Որքան հաճելի է եվրոպական իջևանումը: Կիրակի է: Քաղաքի միջով ուղևորվում ենք ամրոց: Կեսօրից հետո գնում ենք այգիները: Այցելություն Շյուփենց (Schüepp)¹⁰⁶:

1915, սեպտեմբերի 7

🌸 Գնում ենք հյուպատոսարաններ: Անցնում ենք շուկայի միջով: Կեսօրից հետո օրիորդ Փոլդիի (Poldi) հետ բարձրանում ենք ամրոց: Հրաշալի տեսարան է բացվում

¹⁰⁵ Հազենֆրանցը (Hasenfranz) - Հալեպի երկաթուղային կայարանների տնօրենը, Զիգրիստների բարեկամը: Նա մեծ բարեխոսն էր Բաղդադի երկաթուղու հայ շինարարների և որպես այդպիսին՝ հիշատակվում է Ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգին հղած Հալեպի հյուպատոս պարոն Ռյուսլերի (Walter Rößler) նամակում (Gust, Wolfgang (2005), էջ 217, 1909-06-19-DE-001): Տե՛ս նաև Կլարայի օրագրի 1915 թ. հոկտեմբերի 4-ի գրառումը Հազենֆրանցի անձամբ ապրած պատմության՝ երեքամյա հայ աղջկա փրկության մասին (տե՛ս էջ 137):

¹⁰⁶ Կոնրադ Շյուպ (Conrad Schüepp) – Հալեպում հաստատված հայտնի շվեյցարացի վաճառական և բարեգործ, Ֆրից Զիգրիստի լավ բարեկամը: Գրականության մեջ Շյուպը վաստակել է մի մարդու անուն, որը ցեղասպանության ժամանակ նյութապես շատ է օգնել մահվան երթերը վերապրած ու Հալեպ հասած հայերին:

քաղաքի և արաբական գյուղերով շրջակայքի վրա: Այստեղ վերնից ամբողջովին նոր պատկեր է բացվում, այլևս չես նայում միայն լեռ, պատուհան չունեցող պատերին, երևում են նաև կանաչապատ ներքին բակերը՝ հաճախ ընդարձակ կամարակապ մուտքերով: Օձերի պատճառով այժմ հնարավոր չէ մտնել ամրոցի գետնափոր մասերը: Մուտքերն այնքան նեղ են, որ ներս մտնելու համար պետք է սողալ:

Քաղաքում հանդիպում ենք հայերի դագաղների՝ թույլ նստած կափարիչներով, քանի որ ամեն անգամ ավելի քան մեկ դիակ է գերեզման տարվում:

1915, սեպտեմբերի 28

✿ Մի փոքրիկ ութամյա տղա քիչ է մնում՝ դուրս ընկնի իր դագաղից: Անթիվ ճանճեր ներս ու դուրս են անում: Պատմում են ողջ-ողջ թաղվածների մասին: Սպասվում են մեծ համաճարակներ:

1915, սեպտեմբերի 29

Ֆրիցը մեկնում է շատերի ուղեկցությամբ: Ես մի փոքր ժամանակ նստում եմ Շյուփենց (Schüpp) մոտ: Ամենուրեք նույն զով տները՝ իրենց մեծ սրահներով և սենյակներով, հատակները պատած մարմարե սալիկներով:

1915, սեպտեմբերի 30

Միայն մեկ օր է, որ Ֆրիցը գնացել է, և ես դեռ մի ամբողջ շաբաթ ունեմ իմ առաջ, որ թվում է անվերջանելի: Շուկայի աշխույժ կյանքը և փողոցների արաբական բնույթը հետաքրքրական են ու նոր ինձ համար:

1915, Հոկտեմբերի 1

✿ Տիկին Հիլֆիքերի (Hilfiker) հետ գնումներ ենք անում: Երեկոյան մեքենայով դուրս ենք գալիս: Մայրամուտները գեղեցիկ են, գիշերները՝ սառը: Պատուհանիս տակ լսում եմ նոր շինությունների պարիսպների տակ գիշերող հայ երե-

խաների լացուկոծը: Այստեղ մարդ ժամանակի ընթացքում սրտային հիվանդ կդառնա, և կամ ինքն էլ՝ շատ դաժան:

1915, Հոկտեմբերի 2

🌸 Գիշերը Բաղդադի (Bagdad) երկաթուղու գրասենյակից ստացված հեռագիրը հաղորդում է, որ բեդվիները հարձակվել են հայերի մի ճամբարի վրա, և որ գնդակները հասել են մինչև կայարանի շենքը:

1915, Հոկտեմբերի 3

🌸 Ընթերցում ենք Selma Lagerlöf-ի «Երուսաղեմը»: Ժամը 11-ին հանկարծ հայտնվում է դ-ր Գրեթերը (Graeter) և պատմում մեր տնեցիներից: Ապա ճաշում ենք Շյուփենց (Schüpp) մոտ: Երեկոյան մեկնում ենք: Մի գինվոր կանգնեցնում է մեքենան: Սիբիլով (Sibill) երթնեկելն արգելվում է հավանաբար եկվոր հայերի պատճառով: Փոշու ամպը պատել է քաղաքը: Ընթրիքից հետո կինոթատրոնում են:

1915, Հոկտեմբերի 4

🌸 Տիկին Հիլֆիքերի (Hilfiker) մոտ սուրճի ենք: Տնօրեն Հազենֆրացը (Hasenfratz) պատմում է իր իսկ տեսած պատկերի սրտահույզ պատմությունը, որը կոչում է «Երկնքից ընկածը»: Թե ինչպես է անցնող գնացքը կանգ առնում և ներս ընդունում երեք տարեկան, ամբողջովին մերկ մի աղջնակի, որը թափառում էր անծայրածիր անապատում: Այս պատկերի հիմքում ընկած է նահատակված մի ժողովրդի ահավոր ճակատագիրը: Այստեղ օրական մահանում է մոտ 130 մարդ:

1915, Հոկտեմբերի 5

Վերջին գնումները բանջարեղենի շուկայում, իսկ երեկոյան հրաժեշտի այցելություն Շյուփներին: Լսում ենք խոլե-

րայի առաջին դեպքերի մասին¹⁰⁷: Վերջին անգամ հարձակվում ենք ավագաճանձերի վրա:

1915, Հոկտեմբերի 6

Երկաթուղային կայարանում ուրախ հրաժեշտ Հալեպի կեսի հետ: Հիանալի ուղևորություն դեպի պայծառ առավոտ: Բլուրների միջով դեռ երկար տեսանելի է Հալեպի (Aleppo)՝ ամրոցը: Տեղանքին պատշաճում են արաբական գյուղերը՝ իրենց շաքարագլուխ լեռներով: Շքեղ պատկերներ. լվացք անող քուրդ կանայք և ջուր կրող հայեր: Իսլահիեի ծանրոցների վագոնում ենք՝ դ-ր Քյոնիգի (König) և հարյուրապետ Լուցի (Lutz) հետ: Ժամանում ենք ժամը 10-ին, Ֆրիցը սպասում է մեզ ժամը 8-ից: Հրաշալի ճանապարհորդություն զինվորական պահակախմբի ուղեկցությամբ: Ժամը 1-ին կրկին տանն ենք:

1915, Հոկտեմբերի 7

Անսահման հաճելի ու հարազատ զգացողություն է պարզում վերադարձս հովվական իմ տնակը: Հանում ենք ճամպրուկներից մեր պաշարները, տեղավորում նկուղում և իրար պատմելու շատ բան ունենք: Յոգելին (Joggeli) անհետացել է:

1915, Հոկտեմբերի 8

❁ Քանի Հալեպից վերադարձել ենք և լավ հասկացել, թե նրանց [հայերին] ինչ սոսկալի բախտ է վիճակված, չենք կարողանում այլևս նայել այստեղից անցնող արտաքսվածների կողմը:

¹⁰⁷ 1915 թ. հոկտեմբերի 5-ի գրառումը Կլարան կատարել է Զիգրիստ-Հիլթի գույգի Հալեպում գտնվելու ժամանակ: Ուսումնավարտ բուժքույրն այստեղ արտահայտում է իր երկյուղը, որ խոլերայի համաճարակ կսկսվի, և բուժքրոջ մտավախությունը շուտով իրականացավ: Հմմտ. Կլարայի 1916 թ. մայիսի 22-ի և հունիսի 26-ի օրագրային գրառումները:

1915, Հոկտեմբերի 9

✿ Արդուկ անել, բլիթներ (Guezli¹⁰⁸) թխել և դրսում կար անել: Անցնող հայերը հաց են մուրում: Երանի~ թե այլևս չտեսնեինք այս բոլորը: Գնալով ավելի հաճախ են նրանք գալիս, և մարդուս այլևս ուրիշ ելք չի մնում, քան նրանց վռնդելը:

1915, Հոկտեմբերի 10

Պարոն Ֆրիզն (Fries) ու պարոն Շմիդն (Schmied) են այստեղ: Մենք հազիվ էինք ավարտել նախաճաշը, երբ նրանք եկան: Կեսօրից հետո զբոսանք մինչև փապուղին:

1915, Հոկտեմբերի 11

Գալիս է առաջին անձրևը: Ես ավարտում եմ սավաններիս կարը: Պարոն Շմիդը (Schmied) մեկնում է նախաճաշից հետո: Անհայտացած Յոգելին (Joggeli) հայտնվում է: Շատ հաճոյական է նա դիմավորել Ֆրիցին: Հետո նա կրկին կորավ, այնպես որ մենք նրան մեռած համարեցինք: Բայց ահա Ֆրիցը նրան պատահաբար հանդիպեց մի քանի հասակակիցների հետ: Երևում է՝ նա իրական փողոցային լսկոտի կյանք է վարում:

1915, Հոկտեմբերի 12

Պարոն Ֆրիզը (Fries) երեկոյան կողմ մեկնում է: Երեկոյան միասին կարդում ենք մի ոմն Բազելցու «Ճանապարհորդություն դեպի Կոմագեն» գիրքը:

1915, Հոկտեմբերի 14

Պայծառ առավոտ: Սառը քամին Յոգելիին (Joggeli) հավանաբար իր հին հայրենիքն է հիշեցնում: Արդեն երրորդ անգամ է, որ փոստը Եվրոպայից նամակ չի բերում:

¹⁰⁸ Guezli - շվեյցարական բլիթներ:

1915, Հոկտեմբերի 16

Ֆրիցն ամբողջ օրը Քելերում (Keller) է, որտեղ նա քննում ու չափչփում է մեր ապագա տնակը: Երեկոյան մի փոքրիկ նախագծի վրա փորձում ենք տեղադրել մեր կահույքը:

4000 զինվոր շրջափակել են մեր տնակը, որի շուրջ կատարվում են ճանապարհային աշխատանքներ: Շրջապատը շատ կեղտոտ տեսք ունի, ասում է Ֆրիցը, որ տուն է գալիս բավական ընկճված: Այնտեղ շատ հիվանդներ կան:

Կեսօրին այցելեցի հիվանդանոց:

1915, Հոկտեմբերի 17

Խրճիթի առջև նստած՝ արևի տակ նամակ եմ գրում տուն: Կեսօրից հետո միասին ընթերցում ենք, մինչև Հոֆմանը (Hoffmann) կատարում է իր առաջին այցելությունը, և այնուհետև պարոնայք գալիս են՝ զարեջուր խմելու:

1915, Հոկտեմբերի 18

✿ Այժմ հայերն անցնում են առանց կառքերի և իրենց վերջին ունեցածն ուսերի վրա քարշ տալով: Իրենց տարազներով այժմ նրանք ավելի շուտ նմանվում են քրդերին, ավելի գունագեղ են, և կանայք էլ գլուխներին փաթաթել են տարբուշներ (Tarbusch)¹⁰⁹:

1915, հոկտեմբեր 19

✿ Առաջին լոգանքը քարյուղի տակառում... Հայերը գալիս են մուրալու և սարսափելի թշվառ տեսք ունեն:

1915, Հոկտեմբերի 20

✿ Մեր գինու խաղողն է ժամանում Մարաշից (Maraş): Ֆրիցը վերջնական լուր է բերում մեր՝ Քելեր (Keller) տեղափոխվելու մասին: Մեր բժշկի կինը պատմում է արտաքսված

¹⁰⁹ Տարբուշ (Tarbusch) - արևելյան չալմայատիպ (Turban) գլխափաթեթ:

իր ընտանիքի մասին, որը անապատում ինչ-որ տեղ է, նաև այս տեղերում նախկինում տեղի ունեցած ջարդերի մասին:

1915, Հոկտեմբերի 22

Հավաքվել և կապկպվել: Եղանակը մոայլվում է, և երկուսիս մեջ էլ ամեն ինչ մոայլ է ոչ թե մեր տեղափոխման պատճառով, այլ որովհետև այստեղ ևս կան մարդիկ, որոնք ուրիշների երջանկությունը չեն հանդուրժում:

1915, Հոկտեմբերի 24

Ֆրիցը Քելերում է: Պայծառ կիրակի է: Առավոտյան մշուշապատ էր: Կեսօրից հետո մեզ այցելում է մեր բժշկի ընտանիքը: Երեկոյան պարոններն են գալիս:

1915, Հոկտեմբերի 25

Ամբողջ օրը հավաքում ենք մեր իրերը: Երեկոյան արդեն 18 փաթեթավորված արկղ կա պատրաստ:

1915, Հոկտեմբերի 26

Վերջին մնացորդն էլ է փաթեթավորվում: Բարեբախտաբար, պայծառ արև կա: Ֆրիցն առաջին սայլով մեկնում է Քելեր (Keller): Մեր տնակը խառը վիճակում է: Հրաժեշտի այցելություններ: Բարձր մակարդակի հանդիպում պատշգամբում: Բարոն ֆոն Օպենհայմը (von Oppenheim)¹¹⁰ անցնում է այս տեղերով դեպի Գերմանիա իր վերադարձի ժամանակ: Յոգելին (Joggeli) քնում է տնակում:

1915, Հոկտեմբերի 27

Յոգելին (Joggeli) թաքնվում է, և մենք ստիպված թողնում ենք նրան հին տանը: Հրաշալի ձիավարություն դեպի Քելեր, և անմիջապես եռանդով գործի ենք անցնում: Երեկոյան դեմ

¹¹⁰ Բարոն ֆոն Օպենհայմը (Baron von Oppenheim) (1860-1946) –գերմանացի դիվանագետ, իրավաբան, արևելագետ և հնէաբան:

արդեն բավական լավ տեղավորված ենք: Սարսափելի գիշեր չորս փայտոցիլի հետ:

1915, Հոկտեմբերի 28

Տունը գնալով ավելի բնակելի է դառնում, միայն թե ճաշ եփելը բաղնիքի տաք վառարանի վրա աղետալի է: Երեկոյան վնասվում է նաև յուղի տապակը: Նարնջածաղկի մեղրը մխիթարություն է բերում:

1915, Հոկտեմբերի 29

Խոհանոցում սալօջախ են կառուցում: Ուրեմն կրակ ենք վառում բաց երկնքի տակ՝ արածող նծույզի կողքին: Առավոտյան ես ինձ համար մոտակա բլրում մի փունջ աշնանային ծաղիկներ եմ քաղում:

1915, Հոկտեմբերի 30

Ֆոն Բրեմը (von Brehm)¹¹¹ մեզ հետ է ճաշում: Հիմա արդեն կարելի է օգտագործել խոհանոցը, թեև թուրքական սալօջախը շատ խոստումնալից չէ:

1915, Հոկտեմբերի 31

Սենյակում երեք ծաղկաման կա՝ լցված դեղին ծաղիկներով: Ֆրիցն առավոտյան ձիով մեկնեց Էնթիլի, մինչդեռ ես զբաղված էի հազվագյուտ այս ծաղիկները կարգավորելով: Դրանք նախաճաշին կավասն (Kawasse)¹¹² էր բերել:

¹¹¹ Բադդադի երկաթուղու տեղամասային շինարարության բրիգադավար ֆոն Բրեմը Զիգրիստ-Հիթիների սիրելի հյուրն էր: Իր նրբանկատ ներաշխարհով նա հանդես է եկել որպես ճնշված հայերի պաշտպան: Դեռևս 1909 թ. ապրիլին Բադլենում հայերի կոտորածների մասին զեկույցում ֆոն Բրեմի անունը նշված է որպես մեկը, ով փորձում է տեղի թուրք կառավարիչի հետ պարզաբանումների միջոցով կանխել հայերի դեմ ծրագրվող խժոժությունները: Հմմտ. Gust, Wolfgang (2005), 1909-06-19-DE-001:

¹¹² Kawasse – պատվո պահակ Թուրքիայում, որ տրամադրվում էր մեծ մասամբ դիվանագետներին ու բարձրաստիճան անձնավորություններին:

1915, նոյեմբերի 3

Առաջին լվացքն այստեղ: Աշնանային այս արևոտ օրերը հրաշալի են: Շատ խաղաղ և գեղեցիկ է այստեղ, և տանն էլ արդեն ամեն ինչ կարգավորված է: Ֆրիցն ուղեմասից շուտ է տուն գալիս:

1915, նոյեմբերի 4

✿ Արդուկ և կարկատան: Ֆրիցը լուսանկարում է: Ամեն երեկո լսվում է զինվորների հավաքի ազդանշանը և նրանց «Padişahı cok yaşasın!»¹¹³: Յուրօրինակ աշխարհում ենք ապրում: Այս վայրն ինքնին լռության ու խաղաղության մարմնացում է: Բայց դրա կողքին՝ զինվորները, երկաթուղային բանվորները և տարհանվածները:

1915, նոյեմբերի 5

Աշնանային ծաղկեփունջս տուն բերելիս անցնում ենք երկու քուրդ կանանց և մի տղամարդու կողքով, որոնք բլուր տանող ճանապարհի մոտ մեռած երեխայի համար գերեզման են փորում: Փոքրիկի երիտասարդ մայրը, կողքին պալգած, դիտում է:

Գոհարը մի քանի օրով տուն է գնում: Երեկոյան ուրախությամբ ստանում ենք շատ նամակներ. ահագին կարդալու բան ունենք: Մայրիկը կարծես իր վերջին նամակն է գրում:

1915, նոյեմբերի 6

✿ Տան շրջակայքում և գառիվայրերում հսկում են զինվորները, որովհետև Ջեմալ (Cemal) փաշայի այցն է սպասվում:

Հովտում ձևավորվում է հայերի մի ճամբար: Հարյուր փոքրիկ օջախների կրակի լույսը սփռվում է դեպի մեր բար-

¹¹³ «Padişahı cok yaşasın!» – Երկաշ ապրի փառիշահը:

ձուներ: Տեսնում ենք, թե ինչպես դժվարությամբ ճամբար են հասնում խմբի վերջինները՝ ծեր կանայք և երեք-չորս տարեկան փոքրիկ երեխաներ:

1915, նոյեմբերի 7

Ֆրիցը ձիով մեկնում է Այրան (Airan), իսկ ես գրոսնում եմ ֆոն Բրեմի (von Brehm) հետ: Դիտում ենք, թե ինչպես է տեղի ունենում մի քանի զինվորի թաղումը, իսկ ես միաժամանակ գրում եմ: Նրանք նախ, բոլորին ի տես, դիակները ճանապարհին լվանում են և գերեզման իջեցնելուց առաջ մահուդով փաթաթում: Այդ ընթացքում մեկը աղոթք է անում միաժամանակ ընթացող լվացումների հետ: Երեկոյան մեր տան մյուս կողմը գտնվող գյուղից մի կին բավական բարձրաձայն և անբարեպաշտ ձևով հողին է հանձնվում: Մարդ սարսռում է դրանից:

Ֆրիցը լուր է բերում մեր՝ Էնթիլի (Entilli) հավանական վերադարձի մասին:

1915, նոյեմբերի 8

Սրանով երեկոն, իրոք, ցավագնորեն մթագնվեց:

Պատշգամբում լսում ենք շնագայլերի ոռնոցը:

Կեսօրից հետո ժամանում է մեր պահարանը, ուրախանում ենք և գրեթե մոռանում երեկվա տխրությունը: Երեկոյան լուսանկարներն ենք դասավորում ալբոմում:

1915, նոյեմբերի 11

✿ Անկարեղի է նայել հովիտի կողմը՝ անասելի թշվառության առանց ականատեսը դառնալու: Նրանք գալիս են հարյուրներով անդադար կաթկթող սառը անձրևի տակ և իրենց կապոցներով հաճախ պառկում են ցեխոտ փողոցում, որպեսզի մի քիչ հանգստանան:

Խոսք կա, որ ուզում են վտարել նաև մեր բժշկին [Հովնանյան] ու նրա ընտանիքին:

1915, նոյեմբերի 12

Ուժեղ մեջքի հողացավի պատճառով պառկած եմ անկողնում: Ֆրիցը կեսօրից հետո ձիով մեկնում է Էնթիլի և տուն բերում աշնանային աստղածաղիկի հրաշալի մի փունջ և իրական գրաֆենշտայն տեսակի խնձորներ: Գողտրիկ ընթրիք ննջասենյակում: Հետո նամակների ընթերցում, և օրն այսպես հաճելիորեն ավարտվում է: Առաստաղից կարում է մահճակալիս վրա: Ուժեղ ամպրոպագոռ գիշեր է:

1915, նոյեմբերի 13

Կարկատանի օր: Երեկոյան ժամանում է Մուսան (Mussa)՝ հետը բերելով սագեր, բադեր և հավեր: Ընթրիքից հետո լուսանկարների երևակում նկուղում:

Հրաշալի տանձերի մի ամբողջ զամբյուղ պահեստավորեցինք:

1915, նոյեմբերի 14

Պայծառ առավոտ է, ուրախացել ենք մեր թոչնանոցով: Ճաշից հետո ոտքով բարձրանում ենք մեր դիմացի լավայոտ բլուրները, որոնց վրա կարելի է շատ լավ մազլցել: Ֆրիցն իր հետ է վերցրել որսորդական հրացանը: Տունդարձին կաքավներ: Տեղանքը վերևից նայելիս հրաշալի տեսարան ունի: Գալիս ենք տուն և հիացած ենք մեր գողտրիկ սենյակով:

1915, նոյեմբերի 15

Ֆրիցը ձիավարելու է Բալահիե, որտեղ վճռական որոշում է կայանալու մեր մոտալուտ ապագայի մասին: Նա իր հետ տուն՝ թեյի է բերում Վինքլերին (Winkler), Քյոփելին (Köppel) և Աղա Բեյին (Agha Bey): Ապա՝ նրանց ճանապարհ դնելուց հետո, ժամանակ գտնում՝ իր ուրախությանը ընթացք տալու՝ հայտնելով հետևյալը. մենք մնում ենք այստեղ՝ Քելերում՝ Էնթիլիից (Entilli) անջատ, Ֆրիցն իր սեփական աշխատանքով, ես՝ իմ սիրելի տնակում: Մեր կյանքը շատ ավելի լավ է դասավորվում, քան երբևէ սպասել ենք:

1915, նոյեմբերի 17

Գոհարը (Kohar) տուն գնալու թույլտվություն է վերցնում: Ֆրիցի հետ ձիավարում ենք արևի պայծառ ճառագայթների տակ դեպի ուղեմաս՝ այնտեղ մի ձի փորձարկելու համար: Անշուշտ, սակարկում ենք, բայց ամեն ինչ բարեհաջող է անցնում, իսկ ես փորձում եմ իմ առաջին քառատրոփ արշավը:

1915, նոյեմբերի 18

Լուց (Lutz) տիկինները մեզ մոտ թեյի են: Ընթրիքից հետո լուսնի լույսի տակ տեսնում ենք շնագայլեր՝ մեր տնակին շատ մոտ:

1915, նոյեմբերի 19

Արևոտ պատշգամբում առաջիկա Ծննդյան տոների համար նախապատրաստական գործեր եմ կատարում: Օրերը դեռ այնքան տաքուկ են, որ մարդ ձմռան գալու մասին չի էլ կարող մտածել: Ֆրիցը տուն է գալիս աշնանային ծաղիկների մի հոյակապ փնջով:

Վաղ առավոտյան մեր ձիերը տարվում են Էնթիլի: Ֆոն դեր Գոլցը (von der Goltz) այստեղով անցնում է դեպի Հալեպ գնալիս¹¹⁴:

¹¹⁴ Բարոն Կոլմար ֆոն դեր Գոլց (Colmar von der Goltz) (1843-1916)– հայտնի որպես Գոլց փաշա, պրուսացի գեներալ-ֆելդմարշալ, ռազմագետ-պատմաբան և գրող: Պատմաբաններից ոմանք ֆոն դեր Գոլցին ևս, Սիլվեստեր Բյոթրիխի (Sylvester Böttrich, տե՛ս ծնթ. 26) և գերմանացի այլ սպաների շարքում Ամանոսի տարածաշրջանում աշխատող հայերի բնաջնջման մեղսակիցն են համարում: Հ. Քայզերը (H. Kaiser) փորձում է Գոլցին ազատել առաջադրված մեղադրանքից՝ վկայակոչելով, որ վերջինս 1915 թ. նոյեմբերին՝ 1916 թ. Ամանոսի տեղահանումներն սկսվելուց դեռ ութ ամիս առաջ, երկրամասից ուղևորվել է դեպի Հալեպ, իսկ այդ տարվա արսուրներից երկու ամիս առաջ էլ մահացել (H. Kaiser, 1998, 93): Կլարա Զիգրիստ-Հիլթիի 1915 թ. նոյեմբերի 19-ի գրառման այս վերջին նախադասությունը՝ «Ֆոն դեր Գոլցը այստեղով անցնում է Հալեպ գնալիս», հաստատում է Հ. Քայզերի շրջանառության մեջ դրած պնդումը:

1915, նոյեմբերի 20

Մուսայի (Mussa) հետ ձիերով մեկնում ենք Զենջիրլի (Zencirli): Երեկոյան երկու նամակ եմ գրում: Կեսօրին մեր ներքևի փողոցով են անցնում Վինքլերն ու Ռիզեն (Riese), և Ֆրիցը արագ ներքև է սլանում՝ նրանց տեսնելու:

1915, նոյեմբերի 21

Ֆրիցը աշխատանքային խիստ օր ունի: Ես էլ, պատըշ-գամբում նստած, աշխատում եմ՝ զարդարելով ձմեռային գլխարկս փոքրիկ, շագանակագույն տատասկներով:

1915, նոյեմբերի 22

Քյոփեյլը ճաշին մեզ մոտ է: Ապա Ֆրիցը նրա հետ գնում է Իսլահիե: Ես գնում եմ տիկին Լուցի մոտ: Նրանք բնակվում են քրդական մի յուրահատուկ տան մեջ՝ առանց պատուհանների: Այնտեղ գնալու համար պետք է անցնել զինվորների վրանային ճամբարի միջով:

1915, նոյեմբերի 23

Մեր տնակի հետևում գտնվող բլրի վրա, առավոտյան պայծառ արևով ողողված տեսադաշտում երեք հոգի ծեծում են մի զինվորի: Մայրը ծեծին չափ է տալիս:

Երեկոյան Ֆրիցի հետ գնում եմ ուղեմաս: Ֆոն Բրեմը (von Brehm) ընթրիքին մեզ մոտ է:

1915, նոյեմբերի 24

Ֆրիցը ճաշին Իսլահիեում է: Նամակներ եմ գրում:

1915, նոյեմբերի 25

Անձրևային օր է: Առաջին անգամ սենյակը ջեռուցվում է: Շատ հաճելի մթնոլորտ է: Իսկ երջանկության խոր զգացողությունը ավելի է ջերմացնում է մարդուն: Ընթրիքից հետո գնում եմ Ֆրիցի մոտ՝ գրասենյակ:

1915, նոյեմբերի 26

Կրկին ստվերոտ օրերից մեկը: Գոհարի երեխաները եկել են առանց թույլտվության: Մեզ այլ բան չի մնում, քան նրանց ետ ուղարկելը¹¹⁵: Դրան հաջորդում է տխրություն ու բոլորիս տրամադրության անկում:

Մայրիկիս սիրելի նամակը գեղեցկացնում է երեկոն:

1915, նոյեմբերի 27

Էբերինները (Eberin) ճաշին մեզ մոտ են: Դրսում ամեն ինչ գորշ է, ներքևում ճանապարհը չի երևում, սակայն սենյակը տաքուկ է և հանգստավետ: Թեև պետք է ամենուրեք ամաններ տեղադրել (վերնից կաթոցների պատճառով):

1915, նոյեմբերի 28

Անձրևոտ կիրակի:

1915, նոյեմբերի 29

Ամբողջ օրը զբաղված եմ Ծննդյան տոների համար նախապատրաստական աշխատանքներով: Քննարկվում է Գոհարի երեխաների հարցը: Ֆրիցն անձամբ է նրանց տեղավորում:

1915, նոյեմբերի 30

Ֆրիցը կեսօրին Էնթիլիում է: Դրսում սարսափելի փոթորիկ է, և ես անդադար վառարանն եմ լցնում, որպեսզի սենյակը տաք մնա: Իսկ մթնոլորտը պետք է տաք և հաճելի է պահել՝ հակառակ մանր-մունր անախորժությունների ու դառնությունների, որ քամին բերում է հյուսիսից:

¹¹⁵ Գյուլը, որտեղից երեխաները գալիս են, համաճարակ կա, և երեխաների գալը վտանգավոր է:

1915, դեկտեմբերի 1

Արևոտ օր է: Լվացքս չորացնում եմ դրսում: Ֆրիցը ամբողջ օրը մինչև ինն անց կես Իսլահիեում և Էնթիլիում է: Հակառակ ամեն ինչին՝ նա գոհ է վերադառնում: Ծառայողական գնացքի նախագիծը մնում է առկալս:

1915, դեկտեմբերի 2

Այցելում եմ տիկին Լուցին: Ֆրիցն էլ էր ուզում ինձ հետ գալ, սակայն կրկին նրան կանչում են Էնթիլի: Երեկոյան ընթերցում ենք Լոցկիի (Lhotzky) «Ալպիական հովվուհիների թագավորությունում» գիրքը, որից շուտով հագնում ենք:

1915, դեկտեմբերի 3

❀ Ընթերցում ենք Գոթֆրիդ Քելերի (Gottfried Keller) «Առասպելներ» գիրքը: Առատ նամակներ, այդ թվում՝ նաև տեղեկություն նոր կազմակերպության մասին:

Ասում են, որ Իսլահիեի հայերի ճամբարում օրական երեքից չորս հարյուր մարդ է մահանում, իսկ ճանապարհին ամենուրեք դիակներ կան¹¹⁶:

1915, դեկտեմբերի 4

Նախաճաշից հետո Ֆրիցին ուղեկցում եմ ուղեմաս: Ընթրիքից հետո կարդում ենք Հերման Լյոնսի (Hermann Löns) «Մարդազալլը» (Der Wehrwolf):

1915, դեկտեմբերի 5

Ֆրիցին կանչում են Էնթիլի (Entilli), ըստ որում՝ պետք է վաղ առավոտյան ճանապարհ ընկնի: Կեսօրից հետո ժամա-

¹¹⁶ «Ասում են, որ Իսլահիեի ճամբարում օրական երեքից չորս հարյուր մարդ է մահանում, իսկ ճանապարհին ամենուրեք դիակներ կան»: Կլարա Զիգրիստ-Հիլթիի օրագրի 1915 թ. դեկտեմբերի 3-ի գրառման այս վերջին նախադասության մեջ իր արձագանքն է գտել բույր Փաուլայի հայտնի զեկույցը՝ 1915 թ. դեկտեմբերի 1-ին Իսլահիեի վրանային ճամբար կատարած իր այցելության մասին: Այդ ճամբարի սոսկալի վիճակն իր ժամանակին ամենուր մեծ աղմուկ է բարձրացրել և այսօր էլ դժվարությամբ է ընթերցվում: Հմմտ. Gust, Wolfgang (2005), էջ 426-427:

նում է Հորնհայմը (Hornheim)¹¹⁷ իր հրաշալի Ռեքս (Rex) շան հետ, և բոլորս պայծառ արևի տակ գնում ենք ուղեմաս: Աշնանային ծաղկեփունջ: Այնուհետև մեզ մոտ՝ թեյի: Շատ հաճելի զգացողություն է շան ներկայությունը մեր սենյակում: Երեկոյան ընթերցանություն:

1915, դեկտեմբերի 6

Պարոն Մորֆը ճաշին մեզ մոտ է: Հետո նրանք ձիավարում են դեպի Իսլահիե: Դրսում արևի ճառագայթների ներքո ջերմանալուց հետո նամակներ եմ գրում:

1915, դեկտեմբերի 8

Տիկին Լուցը և օրիորդ Լուցը (Lutz) մեզ մոտ թեյի են: Մինչև արևի մայր մտնելը առանց բաճկոնի նստած էի դրսում: Ֆրիցը լուսանկարում է մի քուրդ ընտանիքի իրենց տան առաջ: Մի ծեր կին ցորեն է մշակում: Կողքին նստած երիտասարդ կինը «Singer» կարի մեքենայով կար է անում:

1915, դեկտեմբերի 9

Ֆոն Բրեմը (von Brehm) պառկելու է հիվանդանոցում: Դոդերոցք (Malaria) ունի: Կեսօրից հետո Ֆրիցը նույնպես իրեն լավ չի զգում, սակայն երեկոյան ավելի լավ է:

¹¹⁷ Փաուլ Հորնհայմը (Paul Hornheim) Ֆրից Զիգրիստի օգնական ճարտարագետն էր Լայպցիգից: Արամյանի գրքում Հորնհայմը և նրա գերմանացի գործընկեր Վիթիգը՝ Ֆրանկֆուրտից, նկարագրված են որպես բարեհոգի մարդիկ, որոնք ոչ միայն անձամբ Արամյանին, այլև բոլոր հայ շինարարների նկատմամբ բարյացակամ են եղել: Հայերի տառապանքը նրանց ցավ էր պատճառում, և նրանք պաշտպանում էին հայերին, որտեղ որ կարողանում էին: Արամյանը հիշատակում է նաև Հորնհայմի փառահեղ շանը, սակայն նշում է Ահմեդ, ոչ թե Ռեքս անունով, ինչպես Կլարայի մոտ է: Հորնհայմը և իր ընկեր Վիթիգը միշտ իրենց ձեռքին կաշվե մտրակ ունեին, որով հարվածում էին կարծեցյալ ծուլերին և անհնազանդներին, տե՛ս սույն գրքում, էջ 359:

1915, գեկտեմբերի 10

Ֆրիցը կեսօրին մեկնում է ուղեմաս և ապա Իսլահիե (Islahiye), որտեղ հանդիպում է Վուստի (Wust) հետ: Նամակների հետ գալիս է Ռոյթերի (Reuter) գիրքը:

1915, գեկտեմբերի 11

Կաթ չկա, ձու չկա, միս չկա: Մուսան (Mussa) մեկնում է հովիտ՝ կաթ ճարելու: Ձվերը զինվորների համար են, իսկ պիմպաշին¹¹⁸ արգելում է կենդանիներ մորթել:

1915, գեկտեմբերի 12

Զիավարում ենք նոր կառուցվող ծառայողական գնացքի երկայնքով մինչև Իսլահիե և նույն ճանապարհով վերադառնում: Իսլահիեից դեպի Մարաշ (Marasch) երևում են ձյունածածկ լեռները: Երեկոյան ընթերցում ենք Ֆրից Ռոյթերի «Ut mine Stromtid»-ը:

1915, գեկտեմբերի 13

Կեսօրից առաջ և հետո պատշգամբում եմ անցկացնում: Գոհարը փշրում է համեմունքները Ծննդյան տոների թխվածքների համար:

1915, գեկտեմբերի 14

Վինքլերն ու Մորֆը մեզ մոտ կեսօրվա ճաշի են: Կեսօրից հետո ձեռքիս աշխատանքով Լուցենց (Lutz) մոտ եմ: Տունդարձին տեսնում եմ, թե ինչպես են մի ձի մարզում՝ սովորեցնելով ընդոստ քայլել: Երկու ձախ ոտքերը կապված էին պարանով:

Երեկոյան քաղցրավենիքներ եմ պատրաստում:

¹¹⁸ Բիմբաշի (Bimbashi) – կապիտան, թուրքական բանակում 1000 մարդուց բաղկացած զորամասի հրամանատար (թրք. բին՝ «հազար», բաշի՝ «գլուխ»):

1915, գեղատեմբերի 15

Ամբողջ օրը քաղցրավենիք եմ թխել: Գալիս է տիկին Լուցը (Lutz):

1915, գեղատեմբերի 16

Փոստն այսօր արդեն եկել է, սակայն ոչ մի նամակ Եվրոպայից (Europa):

1915, գեղատեմբերի 17

Զինվորների մի ամբողջ ջոկատ է ժամանում երկաթուղու շինարարության համար: Որոշ հայեր ևս վերադառնում են խմբերով:

Ամեն ինչ սարսափելիորեն թանկանում է: Կաթի օքան¹¹⁹, 12 ֆունտ, Ադանայում այլևս շաքար չկա, բրնձի օքան՝ 10 ֆունտ, 3 ձուն՝ 1 ֆունտ, միսը մնաց 50-ի վրա:

Մուսայի հետ հովտի մյուս կողմում եմ:

1915, գեղատեմբերի 18

Ֆրիցը Իսլահիե է գնում Վինքլերի հետևից, հանդիպում է տնօրեն Հազենֆրացին (Hasenfratz): Նամակներ տնից: Գիշերը երկուսս էլ արթնանում ենք երկրաշարժի ցնցումից:

1915, գեղատեմբերի 19

Վերջապես ախոռում մեր սեփական նժույգն է կանգնած:

Կեսօրից հետո մի փոքրիկ պտույտ ենք անում լեռան շուրջը և կրկին ձիավարում ենք դեպի հին ամրոցը՝ անցնելով ծառայողական գնացքի մի հատված: Հունցիքերը (Hunziker) դարձյալ չերևաց:

1915, գեղատեմբերի 20

Երեք գեղեցիկ տոնածառ են բերում մեր տուն: Ընկույզները ոսկեգօծում եմ մայրիկիս ուղարկած բրոնզով:

¹¹⁹ Օքա (կշռաչափ) – 1280 գրամ:

Լվացքը դեռ կախվում է տաք արևի տակ: Նման պայմաններում Ծննդյան տոների տրամադրություն բնավ չի ստեղծվում: Սակայն հիմա մի քիչ եղևնու բուրմունք կա: Հունցիքերը (Hunziker) ամեն ինչ ուղարկում է: Հրաշալի զգացողություն է՝ բացել մայրիկի ուղարկած մի քանի իրերը:

1915, գեկտեմբերի 21

Տիկին Լուցը (Lutz) թխում է, ես՝ արդուկ անում: Հյուսնը տեղադրում է տոնաձառերը: Դրանցից մեկը ուղարկում եմ Լուցենց: Թեյին Սորֆն է այստեղ: Մեր թոչնանոցը համալրվում է չորս սագով և յոթ հավով: Ֆրիցը երեկոյան Իսլահիեում է: Ես փաթաթում եմ Ծննդյան տոների նվերները: Հատուկ փոստ տնից: Գ. Քելլերի «Վերտառականը» (Das Sinngedicht, von G. Keller):

1915, գեկտեմբերի 22

Խմորեղենի օր: Կեսօրից հետո, երբ ես այլևս չգիտեմ՝ ինչից սկսել, տիկին Լուցը և օրիորդ Լուցը (Lutz) գալիս են՝ թեյի: Ծննդյան տոներն այսպիսի մի փոքրիկ տնակում այն էլ միայն երկու մարդու համար նախապատրաստելը շատ մեծ գործ չէ: Սորթվում է Ծննդյան տոների սագը: Ճաշից հետո զարդարում ենք մեր տոնաձառը՝ համաչափ ճյուղերով արծաթագոծ եղևնին (silver fir): Այն հայրենիք է հիշեցնում և գեղեցիկ է մեր ինքնաշեն զարդարանքների ներքո:

Մի ամբողջ գումարտակ անցավ աղմուկով, կարգուկանոնով, լավ սպառազինված, համազգեստի գորշ գույնը հրաշալի հարմարեցված միջավայրին:

1915, գեկտեմբերի 23

Երկինքը մռայլվում է, և գալիս են առաջին տեղատարափ անձրևները:

Այժմ բոլորն աշխուժորեն աշխատում են ներքևում՝ տնակի վրա: Եվ ժամանակն արագորեն անցնում է վաղվա

համար բոլոր մնացած անհրաժեշտ փոքրիկ նախապատրաստություններով:

1915, դեկտեմբերի 24

Կեսօրից առաջ խոհանոցում ու տանը անելու շատ բան կա: Վարար անձրևը հավանաբար այստեղի համար Ծննդյան տոներին ուղեկցող միակ ճիշտ եղանակն է: Ներսում, սակայն, շատ հաճելի է: Զարդարում եմ սենյակը, ժամը 6-ին ընթրիք՝ եղննու լուսավորված ճյուղը սեղանին, դեռևս տնից եկած յոթ կարմիր մոմով: Այնուհետև հրճվում ենք մեր փոքրիկ անակնկալներով և մայրիկիս՝ Ծննդյան տոների առթիվ շնորհավորական նամակով: Ապա դիտում ենք լուսավառ ծառը: Հանելին (Hanneli) կարծես իրականում եկել է իր անուշիկ նկարով:

1915, դեկտեմբերի 25

Խոհանոցում ես շատ գործ ունեմ: Ֆրիցին հյուր է գալիս Սև հազարապետը¹²⁰, և նրանց աշխույժ զրույցի գրեթե սարսափազդու աղմուկը հասնում է մինչև խոհանոց: Երեկոյան երեք գլխավոր պարտնները ընթրիքին մեզ մոտ են: Խոսում են գրեթե միայն պատերազմից: Վիթիգը (Wittig)¹²¹ պատմում է ճակատում վերապրած սարսափների մասին:

¹²⁰ «Սև հազարապետ» – թուրքերեն՝ «Kara binbaşı», գերմաներեն՝ «der Schwarze Major», թուրք բարձրաստիճան դաժան զինվորական է, որը բոլորին ատելի լինելով, ստացել է այդ անունը:

¹²¹ Պարոն Վիթիգը (Wittig) Ֆրից Զիգրիստին ենթակա երկու գերմանացի ճարտարագետներից մեկն էր: Նա Ֆրանկֆուրտից էր և նույնպես Զիգրիստի ընտանիքի լավ բարեկամը: Հայկ Արամյանը (1970, 140-141)՝ Ֆրիցի հայ պահեստապետը, նկարագրում է Վիթիգին՝ որպես մի մարդու, որը շատ էր խմում, սակայն բարեեղի էր՝ միշտ պատրաստ տեղից ցատկելու՝ մերձավորին օգնելու համար: Տե՛ս քաղվածքները Արամյանի գրքից, որտեղ նկարագրվում է Վիթիգի դերը Արամյանի փրկության գործում:

1915, դեկտեմբերի 26

Առավոտյան նամակ եմ գրում տուն: Ճաշից հետո գնում ենք Լուցենց (Lutz) մոտ, սակայն կանգնում ենք փակ դռների առաջ: Տուն ենք վերադառնում գյուղի միջով, այնուհետև Ֆրիցը գործ ունի անելու:

Ա՛խ, Տե՛ր իմ, Ծննդյան տոներն էլ անցան, դրա վրա թափած ամբողջ աշխատանքն էլ: Անկեղծորեն ասեմ, որ այսօր զգում եմ դաշնամուրի պակասը:

Շնագայլի թակարդ ենք անում, սակայն ոչինչ չենք բռնում:

1915, դեկտեմբերի 27

 Ֆրիցը նստում է ձի ու մեկնում Իսլահիե: Լսեցինք, որ գիշերվա ընթացքում ավազակներ են հարձակվել երկաթուղու վրա աշխատող հայերի վրա ու կողոպտել նրանց: Վերադարձին Ֆրիցը հանդիպել է մի հիվանդ հայի, որը գիշերը կիսամերկ ու ցավերի մեջ անցկացրել է մեր տնից ոչ հեռու: Սա այստեղ անսովոր երևույթ չէ: Մարդիկ նմանների մոտով անցնում են անվրդով: Ֆրիցը նրան հիվանդանոց է տեղափոխել տալիս:

1915, դեկտեմբերի 28

Կեսօրին արևի պայծառ ճառագայթներ, այնպես որ լվացքս մեկ անգամ ևս փռված է դրսում՝ արևի տակ:

Ֆրիցի մոտ ամեն օր բերում են նորանոր զինվորներ, չգիտի՝ ինչպես բոլորին տեղավորի, և գործը շատ է: Մի մասը, սակայն, քիչ-քիչ նորից անհետանում է:

1915, դեկտեմբերի 29

Կեսօրից հետո տիկին և օրիորդ Լուցերը գալիս են սուրճ խմելու: Մեկ անգամ ևս վառվում են եղնու մոմերը:

1915. Դեկտեմբերի 30

Արևոտ, պայծառ օր է: Առավոտյան դրսում արդուկ եմ անում: Երեկոյան Քյոփեղից ստանում ենք մի զամբյուղ բանջարեղեն և վայրի խոզի ապուխտ: Հեղեղվում ենք ուտելիքներով:

1915. Դեկտեմբերի 31

Ճաշին Էբերինները (Eberin) մեզ մոտ են: Հետո մինչև մուրթն ընկնելը կար եմ անում, իսկ դրանից հետո մի պահ մտքերի մեջ եմ՝ հայրենիքում:

Նստած ենք սեղանի շուրջ՝ եղևնու վառվող ճյուղի և ծառի մոտ, և կարդում ենք մեր երկու մայրիկների նամակները: Հանկարծ Ֆրիցը հանում է նստարանի տակից մնացած անակնկալները՝ մայրիկիս ձեռագործը և Շվեյցարիայից լուսանկարներ: Եվ այսպես մի բաժակ պոնսնով եզրափակվում է տարին՝ այսպես լուռ, երջանիկ և շնորհակալ:

1916. Հունվարի 1

Ֆրիցն ազատ է, և մենք դա վայելում ենք: Մորեդրայր Բրեզիգը (Bräsig) գալիս է, և, դժբախտաբար, դրանով վայելքը վերջանում է: Այնուհետև կեսօրվա ճաշից հետո թեյ խմելու են գալիս Հունցիքերը (Hunziker), Վեթշտայնը (Wettstein): Մենք նրանց ճանապարհ ենք դնում և քայլում նրանց հետ մի փոքր տարածություն: Հետո գալիս են Քելերները (Keller), և տիկին Քելերն ու տիկին Լույցը մնում են այստեղ մինչև ընթրիք:

1916. Հունվարի 3

Անձրևային օր է: Մեր բակում հիմա փքված քայլում է նաև մի հնդկաքաղաղ, որին մի քանի շիշ գինու և լավաշի հետ երեկ նվեր ենք ստացել: Այդ բոլորը մեզ է ուղարկել աշխատողներից մեկի հացթուխը «Bonne année»¹²² գրությամբ:

¹²² «Bonne année» – Շնորհավո՛ր՝ Նոր տարի

1916, Հունվարի 4

Այսօր դիմացի բլրի վրա իջավ 12 ուրուր:

1916 (D), Հունվարի 5

Նամակներ եմ գրում: Հովտում լիճ է գոյանում: Այս անգամ լվացքս չորացնում եմ հյուրասենյակում: Բարեբախտաբար, անձրևն այլևս ներս չի լցվում:

1916, Հունվարի 6

Լուցենք (Lutz) ճաշին այստեղ են: Ֆրիցն էլ է գալիս ու միանում մեզ բարեհարմար մթնշաղին:

1916, Հունվարի 7

Միակ նամակը, որ ստանում եմ, Հանելիից (Hanneli) է: Ընթերցում ենք Տոլստոյի (Tolstoi) «Հարություն» վեպը:

1916, Հունվարի 9

Այս օրերին անցնում են մեծ քանակությամբ զինվորներ՝ մարզված, լավ սպառազինված, որոնք հավանաբար գալիս են Դարդանելի (Dardanellen) կոիվներից և գնում են ջրանցքի ուղղությամբ: Նիզակավորներ, հեծելազոր, հետևակ: Նույնիսկ տեսնում եմ, թե ինչպես են ուզում նրանք դիմացի բլրին մի նապաստակ որսալ: Ա՛խ, Տե՛ր իմ, կիրակիները միայնակ են, բայց երեկոյան դեմ մի փոքրիկ պտույտ կանենք:

1916, Հունվարի 10

Առավոտյան հեռագիր ենք ստանում, որ Վինքլերն ու Մորֆը գալիս են: Կերակուրը պատրաստում եմ, սակայն Ֆրիցի երկտողից տեղեկանում եմ, որ ճաշին ոչ ոք չի գալու: Ներքևում նրանք անցնելու են ծառայողական երկաթուղով: Լեռնիվար գնում եմ Լուցենց մոտ: Ֆրիցը գալիս է մթնշաղին, երեկոն գեղեցիկ է:

1916, Հունվարի 11

Ֆրիցը կրկին վաղ առավոտյան մեկնում է Իսլահիե: Գոհարը ստանում է իր վարձատրությունը: Միայնակ ճաշում են, հետո անցնում են կարկատանի: Ֆրիցը շուտ է տուն գալիս: Երեկոյան գրում են:

1916, Հունվարի 12

Կրկին անձրևում է: Աշխատում են հանգստավետ սենյակում: Լուցենք հայտնվում են թելի: Ֆրիցն ամբողջ օրը գրասենյակում է, նաև ընթերիքից հետո:

1916, Հունվարի 13

Ասում են, որ հսկայական բանակ է այստեղից անցնում: Մենք, սակայն, զինվորներին չենք տեսնում, քանի որ նրանք այժմ մեծ մասամբ մեծ փողոցով են անցնում: Այսօր մի հոգնած սպա մեզանից ձի էր ուզում: Ֆրիցը նրան ուղարկեց բիմբաշիի [հազարապետ] մոտ՝ նրանից խնդրելու....:

1916, Հունվարի 14

Մայրիկից նամակ է եկել՝ գրված Ծննդյան տոնի նախօրեին՝ այնքան լի Ծննդյան տոնի տրամադրությամբ, որ ես մեկ անգամ ևս մեր տանը գտնվեցի:

1916, Հունվարի 15

Շաբաթօրյա գեղեցիկ արևածագ: Նորից անձրև ամբողջ օրը: Ընթերիքից հետո էլ աշխատում ենք գրասենյակում:

1916, Հունվարի 16

Փակցնում ենք լուսանկարները: Ֆրիցն ամբողջ օրն զբաղված է: Հիվանդները մեծ հոգս են պատճառում: Նրանք տուն են գալիս, և մարդ չգիտի, թե ինչ անի նրանց հետ: Աշխատող զինվորականները վոնդել էին մի հիվանդ, թշվառ ընտանիք, որը եկել է մի քանի չստացած օրավարձի ետևից:

Եթե Ֆրիցը միայն այս ամենով զբաղվեր, այլևս ուրիշ բան անելու ժամանակ չէր ունենա:

1916, Հունվարի 21

Մեր հրապարակում դատ են տեսնում հիվանդ ներկայացած զինվորականների հետ: Երեկոյան Ֆրիցը բերում է Վինքլերին պարոն Հիլֆիքերի (Hilfiker)¹²³ և թիկունքի մայոր ֆոն Միկուշի (von Mikusch)¹²⁴ հետ: Արթուն ենք մնում մինչև ժամը 11-ը:

1916, Հունվարի 23

Պայծառ առավոտ է, գնում ենք Լուցենց (Lutz) հետևից, դեպի Քուշու (Kuşu): Մի տան կտուրից դիտում ենք քրդերի մի հավաք: Մի նորածին, փոքրիկ հորթուկի ջուր են խմեցնում: Հրաշալի գեղեցիկ տեսարան է բացվում բլուրից ցած: Ծաղկող ալպյան մանուշակներ (cyclamen) և զաֆրաներ (crocus):

1916, Հունվարի 24

Բժիշկ Ֆարահը (Farah) ճաշին այստեղ է: Նա եկել է Բադչեից (Bahçe), որտեղ բժիշկ Կոնոսը (Konos) հիվանդացել է բժավոր տիֆով: Երեկոյան ձյուն է գալիս, բայց չի նստում:

1916, Հունվարի 26

Տիկինները կեսօրից հետո ինձ մոտ են: Ֆրիցը գալիս է տուն և պատմում խաղաղության հասնելու շարժման մասին. մարդուս հավատը չի գալիս:

¹²³ Էռնստ Ֆ. Հիլֆիքեր (Ernst F. Hilfiker) (1877-1947) – շվեյցարացի Բազելից, Անատոլիայի երկաթուղիների շահագործման տեսուչ, Բադդադի երկաթուղու երթուղիների կառավարիչ (Trafic-Manager):

¹²⁴ Դագոբերտ ֆոն Միկուշ (Dagobert von Mikusch) – գերմանացի մայոր, որը 1915 թ. ականատեսն է եղել Դիարբեքիի նահանգի Մարդինի գավառի Թել-Էրմենի գյուղի 800 կաթուղիկ հայերի՝ թուրքերի կողմից հրահրված, բայց քրդերի իրագործած կոտորածների: Միկուշը տեսածը նկարահանել է, ապա ակնատեսի իր ցուցմունքն է տվել Հալեայի գերմանական հյուպատոս Ռյոսլերին (Rössler), Gust, Wolfgang (2005), էջ 31, 104, 215:

1916, Հունվարի 28

Կեսօրից հետո Մուսայի (Mussa) հետ դուրս եմ գալիս ծաղիկներ փնտրելու Ֆրիցի ծննդյան օրվա առթիվ: Մի քանի հիրիկ (iris) եմ տուն բերում:

1916, Հունվարի 29

Մեր նախաճաշի սեղանի վրա դրված են ալպյան մանուշակներ, զաֆրաններ, հիրիկներ և լեռնավարդեր: Գեղեցիկ, արևոտ ծննդյան օր է: Երեկոյան ես մի կարճ զրոսանք եմ կատարում ծառայողական ճանապարհին:

1916, Հունվարի 30

Պարոն Մորֆն ու տիկին Ռիցին (Rizzie) մեզ մոտ ճաշի են հրավիրված: Հաճելի մթնոլորտ է: Այնուհետև, երբ նրանք իրենց ձիերի վրա մեկնում են, մենք ամեն տեսակի մացառուտների միջով զրոսանքի ենք գնում դիմացի բլրի վրա: Վեթշտայն (Wettstein) ու ֆոն Բրեմը (von Brehm) գալիս են կարճ այցելությամբ, իսկ հետո վայելում ենք տաքուկ, գոլտրիկ սենյակը:

1916, փետրվարի 4

Բժիշկը վերջապես մեկ անգամ ևս այցելում է ուղեմասը և հաստատում է բժավոր տիֆ գրասենյակի աշխատողներից մեկի մոտ: Այժմ ամեն ինչ լվացվում է Lysol-ով: Գոհարի (Kohar) համար այստեղ ննջասենյակ ենք հարմարեցնում՝ հնարավորինս լավ պայմաններով:

1916, փետրվարի 5

Ներքևում՝ ծառայողական երկաթուղու մոտ, քանդում են վրանները, և ես դիտում եմ մի քանի քոչվոր քրդական ընտանիքների, որ իրար հետ կռվում են, փոխադրողների հետ սակարկություններ անում և վերջապես երեկոյան կողմ հեռանում: Երկինքը ծածկվում է ամպերով:

1916. փետրվարի 6

Արթնանում ենք՝ դրսում տեսնելով ձյան փաթիլների մրրիկը ձմեռային հրաշալի, սպիտակ բնապատկերում:

1916. փետրվարի 7

Եվս մեկ օր անկողնում եմ մնում, որպեսզի հաղթահարեմ ծանր հարբուխս: Երեկոյան Ֆրիցն ինձ օգնում է դուրս գալ շոգեբաղնիքից:

1916. փետրվարի 8

Կեսօրից հետո նամակներ եմ գրում, հետո տիկին Հոֆմանն (Hoffmann) է ինձ հանկարծ այցելում, և մենք երկար միասին զրուցում ենք: Մեր ներքնի ձորում շարունակվում են մարզված զինվորների անվերջանալի երթերը:

1916. փետրվարի 9

Իսկ հիմա բժավոր տիֆով հիվանդանում է նաև բժիշկ Բադիերը (Badier), որը Էնթիլիում (Entilli) փոխարինում է մեր բժշկին: Այսպիսով՝ ուղեմասն այլևս բժիշկ չունի: Շրջապատում կա արդեն ինը դեպք: Ընթրիքին սպասվում է մայոր ֆոն Միկուշը (von Mikusch):

1916. փետրվարի 10

Նախաճաշից հետո մայոր ֆոն Միկուշը (von Mikusch) մեկնում է: Ես զբաղվում եմ Հալեպից (Aleppo) բերված բանջարեղենի հրաշալի զամբյուղով, որից ստացվում է բոլորովին մի նոր ամառային գլխարկ: Ճաշին Այրանից (Airan) անսպասելիորեն գալիս են Մայերն (Meyer) ու Ռիցին (Rizzi): Ընթրիքին հրավիրված են Լուցենը (Lutz):

1916. փետրվարի 11

Պարտեզը կարգի է բերվում: Ծաղկի սերմեր եմ ցանում պատշգամբի երկու արկղերում: Կեսօրից հետո գնում եմ Լուցենց (Lutz) և ապա նրանց հետ՝ ծաղիկներ որոնելու՝ ալ-

պյան մանուշակ (cyclamen), հիրիկ (iris), գինազոխ (hemlock),
հակինթ (hyacinth):

1916, փետրվարի 12

Անկողինները արևին են դրվում: Երեկոյան երկինքը ամ-
պում է, և ես արագ ալպյան մանուշակների մեծ փնջեր եմ
ներս բերում:

1916, փետրվարի 13

☀ Մեր դիմաց զինվորների մի գումարտակ իր վրանա-
յին ճամբարն է խփել: Ասում են, որ մեզ մնացել է միայն
հազար հայ աշխատող: Ֆրիցը պատմում է նրանցից շատերի
ողորմելի կերպարանքի մասին՝ սարսափելի հյուծված, ակ-
նափոսերի միջից իրենց անարտահայտիչ հայացքն ուղղված
դեպի հեռուները: Եվ արդեն խոսակցություն կա լրացուցիչ
վտարումների մասին:

1916, փետրվարի 14

Առաջին անգամ լվացքը արվում է դրսում՝ կրակը վառե-
լով հին ախոռում: Երեկոյան լվացքատունը քիչ էր մնում
այրվեր, սակայն բոլորի օգնությամբ ամեն ինչ լավ վերջա-
ցավ, բարեբախտաբար, որովհետև լվացքատանը այլուրի
մեծ պաշարներ կային հավաքված:

1916, փետրվարի 15

Դրսում լվացք ենք փռում: Կեսօրվա մոտ գալիս է Լուցը
(Lutz) և տեղեկացնում, որ Էնվեր (Enver) և Ջեմալ (Dschemal)
փաշաները անցնելու են այստեղով: Բարձրանում ենք գյուղ,
որտեղ ամեն ինչ զարդարված է կանաչ և կարմիր դրոշակնե-
րով: Զինվորները՝ ցնցոտիների մեջ, տերևների փնջերը փայ-
տացած ձեռքներին, ողջույնի վարժանքն են անում: Կառուց-
վում է նաև պատվո մի կամար: Կարա Բինբաշին (Kara Bin-
baschi) (Սև հազարապետ) տոնական հուզականությամբ իր
պատշգամբից ցած է շտապում՝ մեզ իր մոտ սուրճի հրավի-

րելու: Սակայն այսօր ոչ ոք չի գալիս: Միայն մի քանի սայլ գերմանացի զինվոր:

1916, փետրվարի 16

✿ Ի վերջո անցնում է Էնվեր (Enver) փաշան: Մեքենաները տեսնում ենք միայն հեռվից: Ֆրիցի օրը լի է զգվելի մանրունքներով: Դե արի ու գլուխ ջարդի, թե որտեղ ես տեղավորելու Գոհարին (Kohar): Այս ամենի հետ այժմ նոր հրաման կա, որ բոլոր հայերը արտաքսվեն:

1916, փետրվարի 19

✿ Ամբողջ օրը տեղատարափ անձրև է, ամեն ինչ այնքան գորշ է, ասես կտրված լինես աշխարհից:

Ֆրիցը ավագ լեյտենանտ Բյոթրիխի (Bötttrich)¹²⁵ և Վինքլերի հետ Իսլահիեում է: Այդ գազաթնաժողովից հետո Ֆրիցը ավելի հաճախ է գնում գրասենյակ: Իսկ այժմ շտապեցնում են հայերի ցուցակների կազմումը: Դեռևս հայտնի չէ, թե ում հնարավոր կլինի պահել: Սակայն երևում է՝ հայերի վտարման հարցը շատ խիստ բնույթ ունի¹²⁶:

¹²⁵ Միլվեստեր Բյոթրիխ (Sylvester Bötttrich) (1869-1940) – գերմանացի փոխգնդապետ: Նա Առաջին աշխարհամարտի տարիներին Թուրքիայում գերմանական ռազմական առաքելության անդամ էր և թուրքական ռազմական երկաթուղու տնօրեն: 1915 թ. հոկտեմբերի 16-ին ստորագրեց մի հրաման, որով աշխատանքից ազատվեցին ու աքսորվեցին Բաղդադի երկաթուղու շինարարության վրա զբաղված հազարավոր հայեր: Այս հրամանը ի կատար ածվեց՝ չնայած գերմանական երկաթուղային ընկերության ուժեղ դիմադրության, Dadrian (1996), էջ 131-133: Կլարա Զիգրիստ-Հիլթիի 1916 թ. փետրվարի 19-ի վկայությունն այն մասին, որ Բյոթրիխը անձամբ է գնացել Իսլահիե կայարան, որպեսզի ղեկավարության վրա ճնշում գործադրելով արագացնի հայերի վտարումն ու արտաքսումը, վկայում է այն մասին, թե որքան կարևոր էր նրա համար այդ հրամանի շուտափույթ իրագործումը: Kaiser (1998), էջ 92:

¹²⁶ Բյոթրիխի մասին Կլարայի այս վկայությունը շատ կարևոր է Հայոց ցեղասպանության պատմության համար, տե՛ս էջ 16:

1916. փետրվարի 23

Ֆրիցը Իսլահիեից ճաշի է գալիս սարսափելի ուշ՝ հետը բերելով առաջին հայուհուն: Կեսօրից հետո իրենց ձեռքի աշխատանքներով այստեղ են տիկին Լուցն ու օրիորդ Թիցը (Tietz):

1916. փետրվարի 24

Հորդառատ անձրևի տակ արթնանում եմ, սակայն շուտով օրը լուսանում է: Առավոտն անցնում է առօրյա փոքր հոգսերով: Ֆրիցը շատ գործ ունի և շատ զայրացած է, որ անձրևային երկար օրերից հետո ժամանակը չի բավականացնում գործն ավարտելու որոշված ժամանակահատվածում:

1916. փետրվարի 26

Կրկին ձյուն և ձմեռվա փոթորիկ երեկվա արևոտ օրից հետո: Սա տխրեցնում է, քանի որ վերջին երեք օրերը կարելի էր ամբողջությամբ օգտագործել՝ զինվորական երկաթգիծը ավարտին հասցնելու համար:

Գոհարը (Kohar) երեխաների հետ տեղավորվել է տան ներքևում:

1916. փետրվարի 27

Վաղ առավոտյան ժամը 7-ին Ֆրիցին ծառայողական երկաթգծով ուղեկցում եմ Քուրդ-Բադչե: Հրաշալի արևավառ առավոտ է, ամենուրեք զանազան ծաղիկներ կան: Դեղին ձնծաղիկներ, ալպյան մանուշակներ, հիրիկներ, հողմածաղիկներ (anemones): Դիտում ենք թրաշուշաններով լի հին գերեզմանոցները: Ֆրիցը կեսօրից հետո կրկին իջնում է ցած, քանի որ երկաթուղային ճանապարհը փակված է, իսկ պարոնները պետք է գնան Էնթիլի (Entilli): Ես նկարում եմ, իսկ երեկոյան գծագրում ենք միասին:

1916. փետրվարի 28

Կրկին ձյունահոդմ է: Չնայած դրան տեր և տիկին Հոֆմաններն (Hoffmann) ու պարոն Վեթշտայնը (Wettstein) գալիս են ճաշի, իսկ հետո՝ ետճաշա հաճելի ժամանակ, տիկին Հոֆմանի հետ, որին երեկոյան ուղեկցում են դեպի ձորը:

1916. փետրվարի 29

Պարոն Մորֆի փորձնական ուղևորությունը: Օրիորդ Թիցի (Tiez) հետ գնում են մկնասխտոր (squill) որոնելու: Հետո զբաղվում են նկարչությամբ:

1916. մարտի 1

Ֆրիցի հետ գնում ենք Էնթիլի (Entilli) ուղղությամբ մինչև 500 մետրանոց փապուղին (tunnel): Պայծառ առավոտ է: Կեսօրից հետո նկարում են: Մեզ են հասնում լուրերը Գերմանիայի՝ անթիվ կորուստներով ձեռք բերված մեծ հաղթանակների մասին:

1916. մարտի 2

Սենյակս բուրում է ծաղիկների առատությունից: Թուրքական լվացարանը լի է նարգիզներով: Իսկ այսօր Ֆրիցն իր հետ նույնիսկ բերել է ծաղկած մի ճյուղ: Նկարելու ընթացքում գրեթե մոռանում են իմ պարտականությունները:

1916. մարտի 3

Բժիշկ Մյուլլերը (Müller) ճաշին մեզ մոտ է: Թանկագին նամակ մայրիկից՝ առաջին մանուշակներով:

1916. մարտի 4

Լուցենք (Lutz) մեզ մոտ են ճաշում: Ֆրիցը ճաշից հետո դեռ երկար աշխատում է գրասենյակում:

1916. մարտի 5

Ուզում եմ օրիորդ Լուցի (Lutz) հետ դիմացի լավայի բլուրը գնալ, երբ Ֆրիցն ինձ հաղորդում է, որ գլխավոր շտաբի բժիշկ Շրեքերը (Schrecker) և բժիշկ Սյուլերը (Müller) մեզ մոտ ընթրիքի են գալու: Դրանից հետո էլ այստեղ նրանց համար գիշերելու անկողին պետք է մոզոնել:

1916. մարտի 6

Պարոնները նախաճաշին և ճաշին մեզ մոտ են: Կեսօրից հետո ես անկողին եմ մտնում:

1916. մարտի 8

Իսկական գարնանային օր է: Առավոտյան կանգնած պատշգամբում դիտում ենք այծերի ու արջառների հոտը, որը շարժվում է լանջի երկայնքով, ինչպես նաև տուն վերադարձող քուրդ աղջիկներին, որոնք անտառում էին, իսկ հիմա հանգստանում են մեր տան ներքևում և ընկերաբար միմյանց գլուխներն են զննում (ոջիլի քննություն): Նրանց մեջ գեղեցիկ կերպարանքներ կան: Հովտում գտնվող լճից ուժեղ լավում է գորտերի համերգը:

1916. մարտի 10

Պարոն Բրուպախերը (Bruppacher) Յյուրիխից (Zürich) մեզ մոտ ճաշի է: Ֆրիցն իրեն լավ չի զգում և ընթրիքից անմիջապես հետո անկողին է մտնում:

1916. մարտի 11

Ֆրիցը մնում է անկողնում, և դա իրեն զգալիորեն լավ է գալիս: Նրա մոտ նստած կարում և նկարում եմ, ապա Մուսայի (Mussa) հետ արագ մի փոքրիկ պտույտ եմ անում՝ ծաղիկներ բերելու: Երեկոյան մեր մոտով արագ անցնում են պարոն Հիլֆիքերն (Hilfiker) ու մայոր ֆոն Միկուշը (von Mikusch):

1916. մարտի 12

Ամբողջ կիրակի օրը նկարում եմ: Ֆրիցը գրասենյակում է: Միայն ճաշից հետո մենք արագ քայլում ենք բլուրի երկարությամբ, որտեղ ծաղկել են կարմիր և կապույտ հողմածաղիկներ (anemones): Տունդարձին կանգ ենք առնում քրդական մի ընտանիքի մոտ, որը բնակվում է բլրի վրա մի քարանձավում: Այնտեղ մի կին ամեն օր դրսում արևի տակ նստած է:

1916. մարտի 13

Ամեն օր արևը փայլում է, իսկ ամեն երեկո երկինքը արձճագույն է դառնում: Փառահեղ է երեկոյան լուսավորությունը: Դիմացի լեռները պատած են դեղնավուն փայլով, լեռան գագաթին գտնվող փոքրիկ մզկիթը շողում է, իսկ այնտեղ վերևում հեռադիտակով նայելիս երևում են մինչ այժմ չնկատված չափազանց մեկուսի գյուղեր:

1916. մարտի 15

🌸 Կեսօրվա ժամը 12-ին քույր Փաուլան¹²⁷ է հանկարծ հայտնվում: Ապա նա ձիավարում է դեպի Քուրդ-Բաղչե՝

¹²⁷ Քույր Փաուլա Շեֆեր (Paula Schäfer): Կլարայի օրագրում քույր Փաուլան առաջին անգամ հայտնվում է 1916 թ. մարտի 5-ին: Այնուհետև նրա անունը օրագրում երևան է գալիս ավելի քան քառասուն անգամ: Ֆրից Զիգրիստի հուշերում տեղեկանում ենք, որ վերջինս քույր Փաուլայի հետ ծանոթ է եղել 1910-ից: Նա Փաուլային հիշատակում է դեռևս Թուրքիայից իր առաջին տպավորություններում, հատկապես վրաններում իրենց դժվարին կյանքի պայմաններում 1910-1914 թթ., երբ Բաղդադի երկաթուղու աշխատակիցների համար կազմակերպվում է առողջապահական սեփական ծառայություն, և Փաուլան մոտակա հիվանդանոցում բուժքույր էր: Ըստ Ֆրից Զիգրիստի՝ նախապատերազմյան այդ տարիների ընթացքում քույր Փաուլայի օգնությունը փրկություն էր նաև նրանց համար, որոնք իր պաշտոնավարած փոքրիկ հիվանդանոցից դուրս էին գտնվում: Նա բոլորին հասնում էր իր ձիու վրա վրա հեծած: Հմտ. Sigris, Rudolf, Teil 2, (1992), էջ 133:

Հայոց ցեղասպանության մասին գրականության մեջ քույր Փաուլա Շեֆերի գործունեությունը շատ բարձր է գնահատվել: Նա եղել է «պահպան հրեշտակ», որը, մի վերարկու ուսերին գցած, Օսմանիե-Իսլամիե տեղամասը վեր ու վար ձիավարելով, հաց, ջուր, պարեն, նույնիսկ դրամ էր

տեսնելու հայերին: Նա անսպասելիորեն տեսել է հայերի մի բազմություն, որը նրան առաջվանից էր ճանաչում: Երևում է, որ հանդիպումը շատ հուզիչ է եղել: Երեկոյան քույր Փաուլան վերադառնում է, և նա որոշ հետաքրքրական բաներ է պատմում իր աշխատանքից: Ռոկֆելերը (Rockefeller)¹²⁸ նրա խմբակցությանը 10 000 դոլար է տրամադրել հայ վտարանդիների համար:

1916, մարտի 16

Քույր Փաուլան առավոտյան Ֆրիցի հետ ծառայողական երկաթուղով մեկնում է Էնթիլի (Entilli): Ապա Ֆրիցը տուն է բերում գերմանացի մի ավագ լեյտենանտի, որը երկրաբան է, որը մի պահ մեզ հետ խոսքի է բռնվում:

Նկարում եմ իմ ձնծաղիկները, նշածաղիկները, իսկ լի բաժակներով նարգիզները զարդարում են սենյակս: Գարունը հայրենիքի կարոտ է բերում:

1916, մարտի 17

Ճանապարհորդության վերջին նախապատրաստությունները: Ճաշին ներկա են գերմանացի երկու սպաներ: Երեկոյան՝ ժամը 10-ին, վերջապես գալիս է Հոֆմանի (Hoffmann)

հասցնում մոտակայքով անցնող տարագիր հայերին: Այսպես՝ պատվելի Հարթունյանն (Hartunian) իր հուշերում վկայում է, թե ինչպես իր քույր Փաուլան արքայի շրջանում երկու անգամ դրամով իրեն հանել է նեղությունից, հմմտ. Hartunian, Abraham (1968), էջ 98: Ինչպես հաղորդում է Ֆայգելը, գերմանուհի քույր Փաուլա Շեֆերը և շվեյցարուհի քույր Բեատրիս Ռոները (Beatrice Rohner) անհայտ ուղիներով դրամներ էին ստանում Շվեյցարիայից և ԱՄՆ-ից, որը նրանք բաժանում էին հայերին, հմմտ. Feigel, էջ 195, տե՛ս նաև ծնթ. 30:

¹²⁸ Ռոկֆելեր հաստատության 1916 թ. տարեկան հաշվետվության մեջ Ամերիկյան իրավասու կոմիտեն գեկուցում է, որ ընթացիկ տարում հայերին և ասորիներին նվիրաբերել է 490 000 դոլար: Կարիքավոր և տառապյալ մարդկանց դրամ հասցնելու համար կոմիտեն գումարը վստահել է Ամերիկայի դեսպանությանը, ինչպես և հյուպատոսներին և միսիոներներին: Այստեղից էլ դրամը պետք է որ հասած լինի Փաուլա Շեֆերին, աղբ.՝ The Rockefeller Foundation 2003, Annual report 1916, էջ 325:

վերջնական հաղորդումը, որ մենք ճամփորդության ենք գնում [Հալեյ]: Ժամը 3 անց կեսին մեզ արթնացնելու է մեր տան պահակը՝ Բեգչին (Begçi)¹²⁹:

1916. մարտի 18

Ֆրիցն ինձ ուղեկցում է մինչև Քելերի (Keller) և Էնթիլի (Entilli) ճանապարհների խաչմերուկը, որտեղ մենք սպասում ենք մոլեգին անձրևի տակ: Վերջապես գալիս է մեքենան Հոֆմանների (Hoffmann) հետ: Չնայած ամեն ինչին՝ մենք հասնում ենք գնացքին և տեղ ենք գրավում կաթոլիկ բուժքույրերի կողքին: Ափսոս, որ ուղևորությունը ընթանում է մառախլապատ և անձրևային պայմաններում: Ժամանումից հետո ես արագ տեղափոխվում եմ Շուփենց (Schüepf) մոտ, այցելում եմ նաև ատամնաբույժին: Երեկոյան Վուստը (Wust) տեղեկացնում է մեզ դրամական տհաճ հարաբերակցության մասին: Վերջապես տեղավորվում ենք ոչ շատ մաքուր սենյակների մեջ:

1916. մարտի 19

Քաղաքում եմ և ատամնաբույժի մոտ, այնուհետև այցելում ենք տնօրեն Հազենֆրացին (Hasenfratz): Կեսօրվա ճաշից հետո Շուփենց գալիս են իմ ետևից: Ընթրիքը տնօրեն Հազենֆրացի (Hasenfratz) մոտ է:

1916. մարտի 20

Ատամնաբույժը ավարտում է գործը: Ապա կատարվում են կարևոր գնումներ: Տիկին Հիլֆիքերի (Hilfiker) մոտ թեյի ենք: Դ-ր Գրեթերը (Dr. Graeter), որին ես պատահաբար եմ հանդիպում, ուղեկցում է ինձ շուկա:

¹²⁹ Begçi – Բեկչի – թուրքերեն՝ «պահակ»:

1916. մարտի 21

Կեսօրվա ճաշ Շուփենց մոտ, ապա ժամը 4-ին գալիս է դ-ր Գրեթերը (Graeter), տանում է մեզ իր դպրոցը, որը տեղավորված է արաբական մի շենքում: Ներսում գեղեցիկ մի բակ կա, իսկ սրահների պատերն ու առաստաղը զարդարված են շքեղ զարդանկարներով:

1916. մարտի 22

Դեպի տուն: Օրը պայծառ է: Ճանապարհորդություն գլխավոր շտաբի բժիշկ Շրեքերի (Schrecker) ուղեկցությամբ: Հալեպից մինչև Ռաուջան (Raujan) դաշտերը հերկված են: Իսլահիեում Ֆրիցը երկաթուղային կայարանում չէ: Զիար (Ziar) բեյն իր կառքը դնում է մեր տրամադրության տակ: Մինչ Ֆրիցը տուն կվերադառնա, զբաղվում եմ խոհանոցում: Բժիշկ Շրեքերը գիշերում է մեզ մոտ: Այստեղ իմ բացակայության ընթացքում սոսկալի անձրևներ են եղել: Լիճը շատ է քարձրացել: Ֆրիցը հոգնած է և գերլարված:

1916. մարտի 23

Պաշարները ժամանում են:

Եղբայր Բերգմանսը (Bergmanns) մեզ հապճեպ այցելում է: Նա պատմեց, որ այն ժամանակ, երբ աշակերտները Իսլահիե էին գնացել՝ Էնվեր (Enver) փաշային ողջունելու, վանքում բռնկվել է բռնկոթ տիֆի համաճարակը:

1916. մարտի 24

Կիտրոնի թանձրօշարակ եմ պատրաստում:

Դ-ր Վագները (Wagner) մեզ մոտ կարճ այցելություն է կատարում:

Կեսօրից հետո Ֆրիցի հետ առաջին անգամ ուղեմաս եմ գնում երկաթուղային վագոնով, այնուհետև հողմածաղկի դաշտերով վերադառնում ենք մեծ երթուղի:

Ֆրիցն ինձ կանչում է՝ քրդերի մի հարսնացու տեսնելու: Ինձ ստիպում են հարսի հետ տուն մտնել ու նստել: Նայում

ենք իրար: Նա պարուրված է դեղին և կարմիր զարդարուն շալով, հագած է մանուշակագույն, թավշյա բաճկոն և ոսկե ֆես: Շուտով նրա վրա քող են դնում ու գյուղի ամենագեղեցիկ ձիով նրան ուղևորում են փեսացուի տուն: Մայրը նույնպես տեղափոխվում է ձիով: Մի պատանի տանում է դրոշմ: Երկու աղջիկներ երկու կողմից պահում են ասպանդակը, ուղեկցող երեխաները ձայնային բարձր երանգներով երգում են «enlil lîlîl»: Մի ծառի տակ, որտեղ գտնվում է մի սուրբ գերեզման, հարսը մենակ կանգ է առնում:

1916. մարտի 26

Արթինը (Artin) երկրորդ անգամ է փոխում գինու տակառը:

Կեսօրից հետո գնում ենք դիմացի բլուրը, որտեղ գտնում ենք խոլորձներ (orchid), որոնք բուրում են ճիշտ ալպիական մանուշակների (cyclamen) նման, և մի կանաչ, անծանոթ զանգակածաղիկ: Ապա հրահեղուկի (Lavablock) վրայով իջնում ենք լիճը, որի ափին երկար նստում ենք և վայելում տեղանքի փառահեղությունն ու խաղաղությունը:

1916. մարտի 28

Արդուկ: Փաթեթավորում եմ ձմեռային իրերը: Գոհարը (Kohar) դրսում լվացք է անում: Երկար մնում ենք պարտեզում:

1916. մարտի 29

Երբ առավոտյան դուրս ես գալիս, ուզում ես աշխարհը գրկել: Փոքրիկ այծերի հոտը դեպի բլուր են քշում նույնքան փոքրիկ երեխաներ: Տարիքովները՝ գույնզգույն տարազներով, այնտեղ կանգնած դիտորդներ են, և այդ ամենը՝ առավոտյան թարմ երկնքի և արևի ճառագայթների ներքո:

1916, ապրիլի 2

Անձրևոտ կիրակի է: Կեսօրից առաջ նկարում եմ: Ապա մեզ այցելում է Միսսապայի (Missaka) նախկին բժիշկներից մեկն իր տիկնոջ հետ: Երեկոյան մի ոջիլ եմ գտնում¹³⁰:

1916, ապրիլի 4

Լուցենք (Lutz) մեզ մոտ թեյի են: Ռուսները մոտենում են:

1916, ապրիլի 5

Դ-ր Շիլինգը (Schilling)¹³¹ ճաշին մեզ մոտ է:

1916, ապրիլի 6

Պայծառ առավոտ: Տնօրեն Հազենֆրացը հեռագրում է, որ նա իր տիկնոջն է դիմավորելու Քուրդ-Բադչեում: Ուրեմն սպասում ենք ծառայողական գնացքի՝ ծաղիկներն ու կրիաները մեր ոտքերի տակ, և ուղևորվում ենք դեպի Քուրդ-Բադչե: Վինքլերը, Մորֆը, Քյոփելը և մի գերմանացի սպա հանկարծ որոշում են մեզ մոտ ճաշի գալ: Ես տուն եմ շտապում, ամեն ինչ պատրաստում և 3 անց կեսին բոլորը ճաշի են գալիս: Երեկոյան սոսկալի հոգնած եմ:

¹³⁰ «Երեկոյան մի ոջիլ եմ գտնում»: Կլարան սա արձանագրում է սարսափով, քանի որ մասնագիտացած բուժքույրը գիտի, որ մեկ ոջիլն էլ կարող է լինել բժավոր տիֆի հարուցիչ: Հավանաբար այդ օրերին արագորեն տարածվող համաճարակները խոսակցության բուն նյութն էին Կլարայի և գերմանացի առողջաբան դ-ր Շիլինգի հետ, որը ճիշտ այդ շրջանում Քելերի տարածաշրջանում էր գտնվում (տե՛ս հաջորդ ծնթ.):

¹³¹ Դ-ր Վիկտոր Շիլինգ (Viktor Schilling) (1883-1960) – գերմանացի ներախտաբան և արյունաբան, որն Առաջին աշխարհամարտի տարիներին որպես զինվորական արյունաբան աշխատել էր Գալիցիայում, Սիրիայում և Ռուսաստանում: Նա նաև արյունաբան-խորհրդատու էր Կիլիկիայում և Սիրիայի հյուսիսում տեղակայված թուրքական բանակի գլխավոր շտաբում:

1916, ապրիլի 7

Առավոտյան մաքրում եմ պահարանները և թխվածք թխում: Էտապի կոմիսարը գալու է թեյի, ուրեմն պարզապես դեպի լավային բլուրը վաղուց ծրագրված զբոսանքից ոչինչ չի ստացվելու:

Երեկոյան մեծ անախորժություններ Գոհարի հետ: Նրան ցած եմ ուղարկում և միայնակ եմ թխում:

1916, ապրիլի 8

Պատշգամբում արևի տակ նստած կարկատան եմ ա-նում: Մի ծիծեռնակ շարունակ ճախրում է դեպի պատշգամ-բի կտուրը, կարծես ուզում է այստեղ բույն հյուսել:

Լճի ափերը վիստում են արագիլներով:

Մենք շատ ժամանակ ենք անցկացնում պարտեզում:

1916, ապրիլի 9

Երեկոյան կողմ թափառում ենք մեր բլրի վրա և թփե-րում ու ժայռերի ծերպերում նոր ծաղիկներ որոնում:

1916, ապրիլի 10

Պայծառ օր է: Ֆրիցը Քուրդ-Բաղչեում մի նոր աղախին է փնտրում:

1916, ապրիլի 11

Անձրևում է: Մեր պարտեզի համար դա հիանալի է: Ֆրիցն ամեն երեկո շնագայլի թակարդ է լարում:

1916, ապրիլի 12

Կեսօրից հետո Ֆրիցի հետ բլրից ծաղիկներ ենք բերում, և ես նկարում եմ: Երեկոյան պահեստապետը՝ Ժորժը (Georges), Գոհարին թարգմանում է հեռացման մասին իմ որոշումը, սակայն նա աղաչում է, որ մնա: Ուստի ամեն ինչ մնում է ա-ռաջվա պես:

1916. ապրիլի 13

Վաղ առավոտյան ենք արթնանում և միասին գնում շնագայլի թակարդի մոտ. այնուհետև՝ նկարչություն: Սոսկալի մի փոթորիկ անձրև է բերում: Չնայած դրան՝ տիկին Հոֆմանը (Hoffmann) գալիս է և մի հաճելի ժամանցից հետո ծառայողական երկաթուղով տուն վերադառնում:

Զրոսնում ենք բլրի մոտ. մի քրդուհի՝ երկու երեխա թևերի վրա, շատ ջերմ ձայնով բացականչում է. «Sene kütischük bunu gibi»¹³²:

1916. ապրիլի 14

Անձրև: Ճաշից հետո գալիս է բժիշկ Ֆարահը (Farah): Նա եռանդով նախաձեռնում է ախտահանման սարքավորումների տեղադրումը:

Ասում են, որ Քուրդ-Բաղչեում բժավոր տիֆի դեպքեր կան, իսկ գրիպը ամենուրեք շատ տարածված է:

1916. ապրիլի 18

Խոհանոցն է սպիտակեցվում: Դրսում գնչուական խորոված է պատրաստվում, և կեսօրվա ճաշից հետո պետք է մաքրել խոհանոցը: Ամենուրեք կիր է, և շատ դժվար է մաքրվում: Ընթրիքը եփվում է սպիրտայրոցի վրա:

1916. ապրիլի 20

✿ Առավոտյան խմորեղեն եմ թխում: Այսօր ֆոն Բրենը մեզ մոտ կեսօրվա ճաշի է: Ֆրիցը պետք է Իսլահիե գնա՝ գլխավոր հաշվապահին դիմավորելու: Բոլորն այստեղ թեյ են խմում, երբ ես ծաղկաքաղից տուն եմ վերադառնում: Շթանգերը (Stanger) պատմում է, թե ինչպես են թուրք զինվորները փախուստի դիմում ընթացող գնացքից: Հիմա էլ արաբ քրիստոնյաներին են վտարում Սիրիայից:

¹³² «Sene kütischük bunu gibi» – թուրք. «Քեզ (ցանկանում եմ) փոքրիկներ սրանց նման»:

1916. ապրիլի 21

Ավագ ուրբաթ: Մազլցում եմ մեր բլուրն ու դարձյալ գտնում ամեն տեսակի նոր բաներ: Ֆրիցը, ճաշը կիսատ թողած, իջնում է երկաթուղի՝ Սոբֆի մոտ: Հետո ֆոն Բրեմի (von Brehm) հետ նստում ենք պատշգամբում: Այնուհետև պարոնները աշխատանքի են անցնում, իսկ ես կարդում եմ «Պատմություններ Շեքսպիրի մասին»: Երեկոյան միասին կապկպում ենք ներկվելիք [Զատկվա] ձվերը¹³³:

1916. ապրիլի 22

Վաղ առավոտյան դուրս ենք գալիս տանից: Առավոտը լեցուն է տնտեսության հազար ու մի փոքրիկ գործերով: Կեսօրից հետո գնում եմ երկաթուղային ընկերության խոհանոց՝ թխվածք պատրաստելու նրանց վառարանում: Ֆրիցը ֆոն Բրեմի (von Brehm) հետ Քուրդ-Բադենում է:

1916. ապրիլի 23

Զատիկ է: Հրաշալի անբանություն, վերջապես մեկ անգամ էլ Ֆրիցի համար: Բարձրանում ենք դիմացի բլուրը, այնուհետև պատշգամբում նստած կարդում ենք «Gösta Berling»: Ահա ձիավարելով ճաշի են գալիս հայր և որդի ֆոն Բրեմները (von Brehm): Կեսօրից հետո ամբողջ ժամանակը անցկացնում ենք պատշգամբում: Երեկոյան ուղեկցում ենք նրանց ցած՝ մինչև գնացքը, որտեղ սպասում ենք մեկ ամբողջ ժամ:

1916. ապրիլի 24

Չորում սասկում է բանակի ձիերից մեկը: Երկու տղամարդ կանգնած դիտում է նրա մահվան կռիվը: Երեկոյան տուն վերադարձող ամեն մի տղամարդ մի կտոր կաշի է տա-

¹³³ Զատկվա տոնի առթիվ ձվերը գույնգույն նկարազարդելու համար դրանց վրա տարբեր նախշեր կամ տերևներ էին ամրացնում և սոխի կեղևներով ներկում:

նում իր հետ, և շուտով մնացած ամեն ինչ մաքրում են շներն ու շնագայլերը:

1916. ապրիլի 25

Կեսօրից հետո ծառայողական երկաթուղով ուղևորվում եմ Էնթիլի (Entilli): Գետինը տեղ-տեղ կապույտ է առյուծաբերան կոչվող ծաղիկներից: (Այցելություն Քյոփեկներին): Բոլորը հիացած են նորածին Քյոփեկով: Տուն ենք վերադառնում ոտքով: Ոսկեդեղին ակացիայի թփերը և կապտամանուշակագույն վիկերը (vetch=վայրի սիսեռ) զարդարում են լեռը: Դեպի Մարաշ ուղևորությունը սրտովս է, սակայն Քյոփեկը ճանապարհը նկարագրում է որպես շատ վատ ու երկար: Այսպիսով՝ ես հրաժարվում եմ:

1916. ապրիլի 26

Ինչպես միշտ մենք մենակ չենք. բացի ֆոն Բրեմի հայրիկից՝ ճաշի է գալիս դ-ր Շիլինգը: Եվ Ֆրիցը իսկապես գիտի առանց խոսքերի էլ արժանին մատուցել սեղանին դրած իմ բազմապիսի ծաղիկներին:

1916. ապրիլի 29

Պարոն Վիթիգն ինձ ուղարկում է մի մեծ փունջ թրաշուշաններ, որոնք արագ բացվում են և հրաշալիորեն բուրում: Ես դրանք բաժանել եմ երկու ծաղկամանի և մի թուրքական լվացվելու ականի մեջ:

Ֆոն Բրեմն այսօր չի եկել:

1916. մայիսի 2

Հեռագիրը հաղորդում է, որ ժամանելու են շինարարության պետ Քրագեսը (Krages), Վինքլերն ու Մորֆը: Ժամը 9-ի համար նախաճաշ եմ պատրաստում: Ճաշին մեզ մոտ են ին-

Ժեներ Բլաուսն (Klaus)¹³⁴ ու ֆոն Բրենը: Ֆրիցը երեկոյան դարձյալ գալիս է Վինքլերի հետ, և վերջինս գիշերում է մեզ մոտ: Նա Ադանայի (Adana) ամբողջ ուղեմասի գլխավոր ինժեներն է:

1916, մայիսի 3

Առաջին շոգերը ինձ համար շատ ճնշող են: Պարոնները (ֆոն Բրենն ու Վինքլերը) մնում են նաև ընթրիքի:

1916, մայիսի 4

Գլխավոր ճարտարագետ Վինքլերը մեկնում է կեսօրից հետո: Վերջապես մի երեկո կարող ենք մենակ լինել:

Օրիորդ Թիցը (Tietz) և ես ուզում ենք Քուրդ-Բաղչե ուղևորվել, բայց քանի որ առիթը հարմար չէր, ես ենք դադարում:

1916, մայիսի 5

Պարոն ֆոն Բրենը արագ գալիս է՝ հրաժեշտ տալու. նա շատ հուզված է: Երեկոյան մեկ անգամ ևս Ֆրիցի հետ ընթերցում ենք:

1916, մայիսի 6

Մեկնում եմ Էնթիլի՝ զինվորական աստամնաբույժի մոտ, որը, սակայն, միայն փոքրիկ ստուգման հնարավորություն ունի: Այնուհետև բժշկի և տիկին Քելերի ու Լուցի (Lutz) հետ

¹³⁴ Գարտարագետ Բլաուսը (Klaus), որի անձնանունը, ինչպես նաև ազգությունը անկարելի եղավ ճշտել, քանի որ նրան մերթ որպես ավստրիացի, մերթ որպես գերմանացի են ներկայացնում, Բաղչեի երկաթուղային տեղամասի իրավասուն էր: Ցեղասպանության մասին գրականության մեջ նրան բնութագրում են որպես խղճամիտ և օգնության պատրաստ մի մարդու, որ շատ հայերի, հաճախ ամբողջական ընտանիքների ապաստան է տվել և ապա օգնել է փախչել: Հմմտ. Balakian, Grigoris (2009), էջ 285-288, ըստ որի՝ 1915 թ. մայիսին Բլաուսը այցելել է Մարաշ՝ հավաքագրելու հայ մասնագետներին: Դրանց թվում էր պատվելի Հարթունյանը, հմմտ. Hartunian, էջ 74 և 83:

գնում ենք Քուրդ-Բաղշե (Kurd-Bagtsche): Այնտեղ սկսվում է բուժումը մի բարաքում, որտեղ մարդ իրեն մերթ զոհի, մերթ դիտողի և կամ ենթերակայի դերում է գտնում: Անձրևի տակ վերջին գնացքով տուն ենք վերադառնում: Բժշկին բերում ենք մեզ հետ:

1916, մայիսի 7

Բժիշկն առավոտյան վերադառնում է: Մենք նրան չենք կարողանում փոխհատուցել, միայն մեր սագերից մեկն է նրան ուղեկցում: Ֆրիցը կրկին լավացել է երեկվա աստամնացավից հետո: Ետճաշյա մի հրաշալի քնից հետո գնում ենք սերմեր հավաքելու: Հանդիպում ենք երկու երկար օձերի, որոնց վրա լցված են մագոտ թրթուրներ:

Բժիշկ Ֆարահը (Farrah) ընթրիքին մեզ հետ է:

1916, մայիսի 8

Կարագ եմ հալեցնում մի հսկա կաթսայում և կատարում որոշ այլ փոքր աշխատանքներ: Արդյո՞ք կիրականան այն լուռ սպասումները, որ զբաղեցնում են մեր միտքը¹³⁵:

1916, մայիսի 9

Դրսում նստած՝ աշխատում եմ: Ֆրիցը անդադար ներկայանում է կարճ ժամանակով: Նորի մասին մտքերը մեզ հանգիստ չեն տալիս:

1916, մայիսի 11

Լցված ատամն սկսում է ցավել: Արդուկ էլ կար: Հոֆմաններն ու Վեթշտայները հայտնում են, որ վաղը ճաշին մեզ մոտ են լինելու:

1916, մայիսի 12

Միայն տիկին Հոֆմանն է գալիս, այն էլ՝ ճաշից հետո: Լուցենք (Lutz) նույնպես այստեղ են:

¹³⁵ Ակնարկ հնարավոր հղիության մասին:

1916. մայիսի 13

✿ Խայտառակ ատամնացավ: Մեծ դժկամությամբ սկսում եմ պատրաստվել՝ ուղևորվելու դեպի ատամնաբույժը: Հեռագրում եմ նրան: Ահավոր օրեր են, և դառնությամբ ենք լցված այս անիծյալ Թուրքիայի հանդեպ:

1916. մայիսի 14

Ֆրիցն ինձ տանում է Քուրդ-Բաղչե: Հոֆմաններն (Hoffmann) արդեն գնացքում են և մեկնում են ինձ հետ: Այնտեղ տեղեկանում ենք, որ բժիշկ Ֆալցը (Faltz) արդեն Ա.-ից (A.) դուրս է եկել, և ես որոշում եմ ետ դառնալ: Հոֆմանները (Hoffmann) գալիս են ինձ հետ, վիճակս փոքր-ինչ լավանում է: Հաճելի ընկերակցություն: Հանկարծ հայտնվում են Քյոփելները (Köppel)՝ նույնիսկ փոքրիկին հետները վերցրած:

1916. մայիսի 15

Առավոտյան մնում եմ անկողնում, սակայն ոչինչ չի օգնում: Վալթերլիից (Walterli) մի երկար նամակ եմ ստանում: Կեսօրից հետո գրում եմ նամակներ:

1916. մայիսի 16

Վերջապես ատամնացավը տեղի է տալիս, մենք երկար մնում ենք պարտեզում:

1916. մայիսի 17

Արդեն անտանելի շոգ է, 32 աստիճան՝ ստվերում: Նստած եմ պատշգամբում և աշխատում եմ: Մուսսան (Mussan) արձակուրդ է վերցրել խոշոր հողատեր որդու հարսանիքի կապակցությամբ: Տոնակատարությունը մեծ ճոխությամբ տևում է ութ օր: Ամեն օր մորթվում է երկու ոչխար: Իսկ մասնակիցները դեռ հրավերի ժամանակ առատ նվերներ են ստանում:

1916. մայիսի 18

✿ Երեկոյան մեզ այցելում են Լուցենք (Lutz), և մենք նրանց պահում ենք ընթրիքի: Հատուկ մի հանձնաժողով օրերով այստեղ է, որպեսզի ճշգրտորեն կազմի աշխատող հայերի ցուցակները, և նրանց ինքնության վկայականներ տրվեն: Ով որ նման փաստաթուղթ չունի, անհուսորեն կորած է: Պահեստապետ Ժորժը (Georges) դրա տակ լավ բան չի կանխատեսում: Նախ նման վկայական չի ուզում, սակայն ի վերջո համաձայնում է:

1916. մայիսի 19

Կեսօրից հետո Ֆրիցին ուղեկցում եմ մինչև Քուրդ-Բաղչեի ուղեմաս և տուն եմ վերադառնում երկաթուղով:

1916. մայիսի 20

Օդը կրկին գովացել է: Ֆրիցն ինձ տանում է քրդերի մի այգի, որտեղ թուփ ենք ուտում ուղղակի ծառից: Մեղանիս վարդեր կան: Քաղում ենք մայրիկի առաջին լոբիները: Ընդհանրապես ամեն օր մեր այգուց մի բան ենք ճաշակում:

1916 մայիսի 21

Առավոտյան վայելում ենք մեր տնական ու մեր տեսարանը, ապա մի քիչ դեպի գյուղն ենք գնում և տուն ենք վերադառնում՝ անցնելով քրդերի տների կողքով, որտեղ մի քրդուհի մեզ ներս է հրավիրում:

Կեսօրից հետո ուղևորվում ենք Էնթիլի և ուղեմասով տուն ենք վերադառնում ոտքով:

1916. մայիսի 22

Թթի պտղանուշ եմ եփում: Մայրիկից մայիսի 6-ի բացիկ ենք ստանում: Խոսակցություն կա խոլերայի մասին: Հալեպում (Aleppo) արդեն փակվել են դպրոցները:

1916. մայիսի 23

Առավոտյան փոթորիկ է: Երեկոյան դեմ կրկին անձրև է գալիս: Կեսօրին նստած ենք պարտեզում: Երեկոյան հեռագրով հանկարծ տեղեկանում ենք որ դ-ր Գրեթերն (Graeter)¹³⁶ ու դ-ր Նիպագեն (Niepage)¹³⁷ գալիս են:

1916. մայիսի 24

✿ Կեսօրից առաջ փոքրիկ զբոսանք բլրի շուրջ, այնուհետև տեր և տիկին Գրեթերները (Graeter) ձիավարում են դեպի լիճը, որտեղ նրանք գտնում են հսկա, 14 սմ երկարության շերտփուկներ: Կեսօրից հետո մենք նրանց ուղեկցում ենք մինչև 300 մետրանոց փապուղին: Երկուսն էլ լցված են թուրքերի դեմ, սոսկալի դրվագներ են պատմում հայերի արտաքսումների մասին և հուսով են հայրենիքում իրենց գեկույցներով ինչ-որ բանի հասնել:

1916. մայիսի 25

Կեսօրից հետո թեյի եմ տիկին Լուցի (Lutz) մոտ: Գրամոֆոնից հնչում է հիմնականում գեղեցիկ երաժշտություն: Ահա մի գումարտակ զինվոր է իջնում սարից, տեղավորվում են տան առաջ և երազկոտ ականջ են դնում երաժշտությանը: Ավելի ուշ հայտնվում են նիզակավոր զինվորները, հենց

¹³⁶ Դ-ր Է. Գրեթերի մասին տե՛ս ծնթ., էջ 117:

¹³⁷ Մարտին Նիպագեն (Martin Niepage), 1915-ից մինչև 1917 թ. Հալեպի գերմանական ռեալական դպրոցի ավագ ուսուցիչ: Որպես ցեղասպանության ականատես՝ նա իր ձայնը լսելի է դարձրել՝ Գերմանիայի կառավարությանն ուղարկելով բազմաթիվ գեկույցներ: Նա Բեռլինում Ռայխսթագի պատգամավորներին հղած իր գեկույցն ավարտում է հետևյալ բառերով. «Եթե մեր վախն ու թուլությունը մեր դաշնակցի հանդեպ մեզ խանգարի կես միլիոն կանանց ու երեխաների ջարդից և սովամահությունից փրկելուց, ապա Գերմանիայի պատերազմական դեմքը բոլոր ժամանակներում համաշխարհային պատմության հայելու մեջ կայլանդակվի: Եվ եթե կարծենք, որ թուրքական կառավարությունը ջարդերից խուսափած կանանց ու երեխաներին հանգիստ կթողնի, ապա չարաչար կսխալվենք», Gust, Wolfgang (2005), (1917-07-11-DE-001):

այն ժամանակ, երբ ես տուն եմ ուզում վերադառնալ, և Ֆրիցն էլ ինձ ընդառաջ է գալիս: Մենք հասցնում ենք դիտել նրանց ձի նստելը:

1916. մայիսի 26

Տոթ օր է: Զուր սպասում եմ տիկին Հոֆմանին (Hoffmann): Կեսօրից հետո գնացքները չեն գործում: Երեկոյան հաճախ զբոսանքի ենք դուրս գալիս գյուղի միջով: Բոլորը դրսում քնած են փայտամածի վրա՝ ուղղակի ծառի ճյուղերի տակ: Այսօր վեց փառահեղ սագ ենք տուն բերում:

1916. մայիսի 27

Տիկին Լուցն ու օրիորդ Թիցը մեզ մոտ թեյի են: Խմում ենք պատշգամբում:

1916. մայիսի 28

Հեռագրով տեղեկանում ենք Վինքլերի ժամանման մասին: Ֆրիցը ճաշից հետո նրան ընդառաջ է գնում մինչև Քուրդ-Բադլե: Միայնակ կիրակի: Երեկոյան ընթրիքին նրանք գալիս են:

1916. մայիսի 29

Օգնում եմ լվացք անել, իսկ տան մեջ անելիք շատ բան կա: Երեկոյան գալիս է գլխավոր ինժեներ Վինքլերը՝ մի անգամ ևս գիշերելու համար: Նա մեզ պատմում է, որ Բադլեում տիկին Մյուլլերն (Müller) ու նրա ամուսինը՝ դ-ր Մյուլլերը, ետ են ուղարկվել Գերմանիա շարքային զինվորի կարգավիճակով՝ որպես պատիժ այն բանի համար, որ դ-ր Մյուլլերը, հակառակ հրամանի, կնոջը իր հետ Թուրքիա էր բերել:

1916. մայիսի 30

Փորձում եմ պարտեզում քրտնելով հարբուխս անցկացնել: Լոբի ենք չորացնում: Սակայն ճաշից հետո պառկում եմ, իսկ երեկոյան՝ քրտնում:

1916, մայիսի 31

Անձրև: Հուսահատ օր անկողնում: Նորից եմ քրտնում:

1916, Հունիսի 1

Կեսօրից հետո Հասանբեյլիից (Hasanbeyli) գալիս է քույր Փաուլան¹³⁸, առանց իմանալու, որ ես նրան կարոտով սպասում էի: Նա ինձ հիանալի զվարճացնում է, իսկ երեկոյան քննում է, և, փառք Աստծու, ամեն ինչ նորմալ է համարում. նույնիսկ կարծում է, որ փոքրիկն արդեն երրորդ ամսվա մեջ է:

1916, Հունիսի 2

Քույր Փաուլան մեկնում է Հալեպ (Aleppo), սակայն իրերն այստեղ է թողնում: Կեսօրից հետո ոտքի եմ, գալիս է տիկին Հոֆմանը, և ստացվում է հաճելի մի օր:

1916, Հունիսի 3

Մեզ համար դեռ անհավատալի է...:

Թանկագին նամակներ ենք ստանում մայրիկից և Հանելիից:

1916, Հունիսի 4

Երեկոյան կողմ հավաքում ենք մեր ուժերը և զբոսանքի դուրս գալիս ուղեմասի երկարությամբ:

¹³⁸ Փաուլա Շեֆերը Ամանոսի տարածաշրջանում իր ուղևորությունների ընթացքում շատ հաճախ կանգ էր առնում Զիզրիստների մոտ և գիշերում այնտեղ, մի բան, որ Կլարայի հղիության ընթացքում վերջինիս համար, ինչպես ինքն է վկայում իր օրագրում, «օրհնություն» էր: Ինչպես երևում է օրագրի գրառումներից, Կլարայի հղիությունը ընդհանրապես բժշկական հսկողությամբ չի անցել, և քույր Փաուլան այս հարցում հանդես է եկել որպես նրա միակ խորհրդատուն: Իր՝ որպես բուժքույր ստացած կրթության շնորհիվ քույր Փաուլան մեծ օգնություն ցուցաբերեց Կլարային նաև 1917 թ. հունվարի 27-ին նրա առաջնեկի՝ Ֆրանց Ֆրիդելիի ծնվելու ժամանակ: Ծննդաբերությունից հետո էլ քույր Փաուլան կանգնած էր անփորձ մոր կողքին իր քննություններով, խորհուրդներով, պատվաստումներով նև:

1916, Հունիսի 5

Ամեն տեսակ մրգերից անուշներ ենք պատրաստում: Մուսան գնում է քույր Փաուլային դիմավորելու, սակայն նրան չի գտնում. նա մեքենայով շարունակել է ճանապարհը դեպի Հասանբեյլի (Hassanbeyli):

1916, Հունիսի 6

Լուրեր անգլո-գերմանական ծովային մեծ ճակատամարտից:

1916, Հունիսի 7

Քույր Փաուլան գալիս է երեկոյան: Կարևոր նամակ եմ գրում տնեցիներին:

1916, Հունիսի 8

Քույր Փաուլան ձիով մեկնում է Էնթիլի (Entilli): Երեկոյան գնում եմ Լուցենց (Lutz) մոտ: Հրաշալի ամպրոպ:

Հարևան տներից մեկում մարդ է մահացել: Կանանց լացուկոծը սարսափելի է:

1916, Հունիսի 9

Պատշգամբում նստած՝ փոքրիկ խանձարուրներ եմ կարում:

1916, Հունիսի 10

Տապը մարդուն գամում է գետինին: Երեկոյան, սակայն, երկար նստում ենք այգում՝ հրաշալի քամու ներքո:

1916, Հունիսի 11

Ֆրիցն ազատվում է օրվա աշխատանքից: Մեր նախատեսած այցելությունը Հոֆմաններին չի կայանում: Նրանք Մարաշում են: Իսկ ուրիշ բան անելու համար շատ շոգ է: Սարսափելի թուլանում է մարդ դրանից, իսկ երեկոյան հագիվ թե կարողանա արդուկ անել:

1916, Հունիսի 12

Շոգեբը շարունակվում են, և դրա հետ՝ նաև իմ ընկճվածությունը: Մարաշից մրգեր չեն բերում, ամեն ինչ բանակի համար է: Սակայն ի՞նչ օգուտ այս անհույս երկրի վրա բարկանալուց:

1916, Հունիսի 13

✿ Առավոտյան շտապ գնում եմ Լուցենց (Lutz)՝ հրաժեշտի: Ճանապարհին հանդիպում եմ խոշոր հրետանիներով գերմանացի զինվորականների:

Կեսօրվա մեր ճաշի ժամանակ հայտնվում են կայմակամը¹³⁹ և ժանդարմերիայի մի հրամանատար, որպեսզի հիմա էլ խլեն-տանեն բոլոր հայերին: Մի սոսկալի աղետ է տեղի ունենում: Այդ մարդիկ մինչև գիշեր պաշարված են պահում գրասենյակը...: Ժորժը (Georges) փախուստի է դիմում մթերք գնելու պատրվակով¹⁴⁰:

1916, Հունիսի 14

✿ Անկարեղի է կանխել դեպքերի ընթացքը: Ֆրիցը Քուրդ-Բաղչեից տուն է գալիս, և նրա հետ է արդեն վտարվածների մի ամբողջ ամբոխ: Ողբալի մարդիկ: Մեզ թույլ տվեցին պահել միայն մի քանի հերթափոխի գրագիր (Schichtenschreiber)¹⁴¹. մյուսներին չկարողացանք օգնել:

¹³⁹ Kaymakam – կառավարիչ:

¹⁴⁰ Այն օրը, երբ պահեստապետ Հայկ Արամյանը՝ Ժորժ (Georges) ծածկանուտով, փախուստի դիմեց և փրկվեց, Կլարան ինքն իր վրա գրաքննություն է սահմանում: Նա զգուշաբար չի բացահայտում իր և իր ամուսնու՝ Ֆրից Զիգրիստ-Հիլթիի վճռական դերը Արամյանի փրկության գործում, այլ կցկտուր ձևով նշում է. «Ժորժը փախուստի է դիմում մթերք գնելու պատրվակով»:

¹⁴¹ Հերթափոխի գրագիրները (Germ. Schichtenschreiber) մեծ մասամբ եվրոպական երկրներում ուսանած հայ մտավորականներ էին, որոնք Բաղդադի շինարարական գրասենյակում զբաղված էին լուրջ գրագրությամբ, նաև

Թուրք կատարածունների վարքագիծը ստախոսությունն է, խարդավանք ու դաժանություն¹⁴²: Վտարանդիները գիշերն անց են կացնում մեզ մոտ գտնվող խոշոր ճամբարում: Ֆրիցը նրանց վճարում է ու հաց բաժանում: [Հայ] պարտիզպանն իր ընտանիքով անցնում է մեր բակի պաշտպանության տակ: Տիկին Լուցն այստեղ է գիշերում:

1916, Հունիսի 15

❀ (Հայերից) ոմանք ուզում են դրամ և սնդուկներ ի պահ դնել մեզ մոտ, և բոլորը կարծում են, որ նրանց պետք է ընդառաջել: Դժվար է այդ ողբերգության ականատեսը լինել: Վերջապես գնացքն սկսում է անկանոն աշխատել, և աշխատանքի դադարեցման հարցը կարծես թե լուրջ բնույթ է ստանում¹⁴³:

Մուսան (Mussa) պատմում է Ֆրիցին, որ հայերից մի քանիսին թաքուն պահում է իր տանը, այն բանից հետո, որ Ֆրիցը նրան ասել է, որ չի հասկանում, թե ինչպես քրդերը իրենց տարիների հայ հարևաններին օգնության չեն հասնում:

1916, Հունիսի 16

❀ Այսօր ճամբարը ցրվում է, և ես ստիպված եմ այս շոգին ճամփա ընկնել դեպի Բաղչե. այն երկու գրագիրներին, որոնց ուզում էինք անպայման պահել (երկուսն էլ արտասահմանում ուսանած մարդիկ են), տանում են առանձին-առանձին, նախապես պատրաստված կառքերով և մեկական ժանդարմի ուղեկցությամբ: Երրորդ կառքը, հավանա-

ցերեկային և գիշերային հերթափոխությունների ծրագրավորումներով (Sigrist-Clalüna, Ruedi, WB, էջ 191):

¹⁴² Այստեղ Կլարա Զիգրիստ-Հիլթի ականատեսը ընդվզում է թուրքական իշխանությունների խարդախություններով լի աշխատառճի դեմ:

¹⁴³ Բաղդադի երկաթուղու շինարարության աշխատանքների դադարեցման մասին տե՛ս էջ 110, 121:

բար, պատրաստել էին Ժորժի (Georges)¹⁴⁴ համար: Խոստանում են, որ երկուսին էլ հաջորդ օրը նեթ ետ կուղարկեն: Վիշտը ճնշում է մարդուն, և միայն մեկ միտք է գերիշխում՝ հեռանալ այս գարշելի երկրից:

1916, Հունիսի 17

☼ Գերմանացի զինվորներ, որոնք իրագործված արհավիրքների ականատեսը կամ մասնակիցն են եղել, չեն կարողանում զսպել իրենց զայրույթը: «Շան վրա անգամ չէր կարելի այդպես կրակել»,– ասում են նույնիսկ հրամանը կատարող զինվորները և ավելացնում. «Եթե գերմանացի զինվորները այս բոլորի մասին դեռ հայրենիքում եղած ժամանակ իմանային, ոչ մեկն իրենցից չէր գա այստեղ՝ այս ջարդերի մասնակիցը դառնալու»¹⁴⁵:

Երկու գրագիրները այնպես էլ չեն վերադառնում: Դրա փոխարեն այսօր նրանց ընտանիքներն էլ են տարհանվում: Նրանք մեզ մոտ ի պահ են դնում դրամ և զարդեղեն: Գիշերը լսում ենք կրակոցներ: Երանի նրանց, ովքեր կարող են այսպես մահանալ»:

1916, Հունիսի 18

☼ Ժանդարմներին ամեն օր ուղարկում են՝ նորանոր որոնումներ կատարելու: Նախապես կազմված ցուցակների հիման վրա հրամանատարը քաջատեղյակ է, թե ով է բացակայում: Ասում են, որ հրամանատարը ժանդարմ է ուղարկել

¹⁴⁴ Խոսքն այստեղ հայ պահեստապետ Հայկ Արամյանի մասին է, որն աշխատանքի էր անցել Ժորժ (Georges) կեղծանունով: Իսկ նա երեք օր առաջ Զիգրիստների օգնությամբ արդեն փախուստի էր դիմել (տե՛ս էջ 182):

¹⁴⁵ Կլարայի այս կարևոր վկայությունը վերաբերում այն ահավոր ջարդերին, որոնց ի վերջո ենթարկվում էին Բաղդադի երկաթուղուց բռնի տեղահանված հայ աշխատավորները: Տեղամասից մի փոքր հեռացած՝ նրանք ոչնչացվում էին թուրք կամ գերմանացի զինվորական հատուկ պահակախմբերի կողմից:

Ժորժի հետևից: Լսում ենք բռնաբարված կանանց մասին: Մեզ չի հաջողվում ազատել նույնիսկ որբ աղջիկներին: Աքսոր են գնում մեզ մոտ մնացած գրագիրներից մեկի ծեր ծնողները, որոնք, միևնույն է, երկար կյանք չունեն¹⁴⁶:

1916, Հունիսի 19

✿ Ֆրիցը Էնթիլիում է, որտեղից ժամանել են քույր Փաուլան ու տիկին Հռֆմանը: Մարաշի ճանապարհին նրանք հանդիպել են հարյուրավոր տղամարդկանց: Կանայք չեն եղել, հավանաբար նրանց իրարից բաժանել են նախօրոք:

Ճանապարհի վրա շատ դիակներ կան: Կեսօրվա ճաշի ժամանակ ժանդարմները ներխուժում են մեր փոքրիկ ախոռը, որտեղ տեղավորված էր մեր պարտիզայանի ընտանիքը:

¹⁴⁶ Կլարայի օրագրի 1916 թ. ամբողջ հունիս ամսվա գրառումների բովանդակությունը վկայում է, թե ինչ սոսկալի է եղել այդ ամիսը Ամանոսի տարածաշրջանում Բաղդադի երկաթուղու շինարարության հայ աշխատակիցների համար: Սանձագերծ արտաքսումներն օրեցօր նոր չափեր էին ստանում, մի բան, որն ավելի էր ուժեղացնում շինարարության ղեկավարության և եվրոպացի ճարտարագետների վրդովմունքը: 1916 թ. հունիսի 18-ին գլխավոր ճարտարագետներ Վինքլերն ու Մորֆը Անատոլյան շինարարական ընկերությանը հեռագիր են հղել հետևյալ բովանդակությամբ.

«(...) Հայ աշխատակիցների տևական վտարումների և դրա հետևանքով թուրք զինվորների փախուստի պատճառով 5300 մարդուց մնացել է ընդամենը 2900 աշխատող: Շարունակվող հեռացումներն իրենց հերթին վստահաբար կբերեն աշխատողների թվի հետագա նվազումներ: Գիտակ և վարժ աշխատողների պակասի պատճառով հնարավոր չէ տեղում մնացյալների հետ իրագործել շինարարությունն ու կայարանի գործարկումը: Մի քանի օր առաջ տեղի ռազմական նախարարության հակահրամանի դեմ մեր առարկությունները, ըստ երևույթին, անհետևանք մնացին: Ամանոսի մեծ թունելում վտանգ կա, որ փորփրված անապահով հաստվածները կփվլեն և աշխատանքների երկարատև ընդհատում տեղի կունենա: (...) Քանի որ վտարվել են նաև երկու հայ բժիշկ և 43 ղեղագործ և հիվանդապահ, Յարբաշիի (Yarbaschi), Էնթիլիի և Բաղչեի հիվանդները հիվանդանոցներում մնացել են առանց խնամքի. մի բան, որ համաճարակի պայմաններում շատ վտանգավոր է (...): Lepsius, Johannes (1919), էջ 274, Gust, Wolfgang (2005), էջ 477-478:

Նրանք եկել են տանելու պարտիզայանի երկու ամուսնացած դուստրերից մեկին, որի ամուսինը փախուստի էր դիմել: Երեկոյան Ֆրիցը ազատում է նրան: Այս աշխատանքը նյարդներ է գրգռում. մենք քնում ենք դրսում:

1916, Հունիսի 20

✿ Գնում ենք Լուցենց (Lutz) մոտ: Արագ մի քանի ծանրոց եմ ճարում տիկին Լուցի համար՝ Էնթիլի տանելու: Մեզ հետ բերում ենք շուրջ 60 ոսկեդրամ:

Այնտեղ կան թաքնված հայ կանայք: Տղամարդիկ փախել են լեռները, գիշերը գալիս են՝ իրենց ուտելիքը տանելու: Մուսան (Mussa) իր կանանց դուրս է թողել, դրա փոխարեն նրա տանը նստած աշխատում են հայ կանայք՝ քրդերի հագուստով:

Մի քուրդ աղա լեռներից գրաստներ է ուղարկել՝ մի մեծ, նախկինում հարուստ հայ ընտանիքի իր մոտ տեղափոխելու և թաքցնելու համար: Սա, սակայն, փրկվածների շատ փոքր թիվ է:

1916, Հունիսի 21

✿ Եվ այսպես միայն շարունակվում է նրանց հալածական կյանքը: Դժվար է հասկանալ նրանց այս անձնատուրությունը. ոչ ոք չի դիմադրում, ոչ ոք չի փորձում գոնե վնասագերծել իրեն խոշտանգողներից մեկին: Հրամանատարը կարող է ամեն երեկո իր ձիու վրա անվրդով անցնել ամայի ձորերով, և այդ դահձի հետ ոչինչ չի պատահում¹⁴⁷:

¹⁴⁷ Այն փաստը, որ հայերն առանձնապես մեծ դիմադրություն չեն ցուցաբերել, ուներ իր հարգելի պատճառները: Թուրքական իշխանությունները յուրաքանչյուր ինքնապաշտպանության պատասխանում էին ծայրահեղ դաժանությամբ: Հմմտ. 1915 թ. Ուրֆայում հայերի հերոսական դիմադրության ջախջախումը Յակոբ Քյունցլերի «Արյան և արցունքի երկրում» գրքում: Յուրաքանչյուր սեփական կորուստի դիմաց հարյուրավոր հայեր են սպանվել: Օրագիրը գրելու ընթացքում Կլարան չէր կարող կարդացած

Երեկոյան Ժորժից հեռագիր է գալիս, որը մենք հասկանում ենք. նա հարցնում է, թե արդյոք դեռ մթերք գնելու կարիք կա: Ֆրիցը նրան պատասխանում է՝ նրան կապի մեջ դնելով պարոն Շյուփի հետ:

1916, Հունիսի 22

Գիշերաշապիկով պառկած եմ բազմոցին: Սարսափելի շոգ է, և ես ինձ չափազանց թույլ և վատ եմ զգում:

1916, Հունիսի 23

🌸 Կրկին ոտքի վրա եմ: Կեսօրից հետո գալիս է տիկին Հոֆմանը, իսկ ամուսինը երեկոյան գալիս է նրա ետևից: Տիկին Հոֆմանը երկար պատմում է արդեն գրեթե կիսամեռ վիճակում գտնվող հայերի թշվառությունից, որոնց նա հանդիպել էր Մարաշից ձիով այստեղ գալիս:

Տանջանքները, որոնց այս օրերին ենթարկվում են [հայ] մարդիկ, չափ ու սահման չունեն:

1916, Հունիսի 24

🌸 Ժանդարմները շարունակում են այստեղով անցկացնել բռնագաղթվածների փոքր խմբեր:

Ժորժից հուսահատական նամակ է գալիս Անտիոքից (Antiochien):

1916, Հունիսի 25

🌸 Ֆրիցը ձի է նստում ու գնում Քյոփեղենց տունը: Մինչ այդ ես գրում եմ Ժորժին: Այնտեղ նրան պարզ հասկացրել են, որ մեզ չեն ցանկանում տեսնել իրենց մոտակայքում, չնայած որ բավարար տեղ ունեն: Փառահեղ մարդիկ:

լինել ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» վեպը և տեղյակ էլ չէր Մուսա լեռան՝ Ամանոսի լեռնաճյուղերից մեկի շրջակա բնակչության հերոսական ինքնապաշտպանության մասին:

Խոլերայի առաջին դեպքերը երեկ երեկոյան այստեղ հասած արտաքսված հայերի շրջանում: Նրանք գալարվում են և մահանում ուղղակի գյուղի աղբյուրի մոտ: Երկուսիս մտքին միայն փախչելն է:

1916, Հունիսի 26

❀ Պարետը հավաքեց փասա-փուսեն ու հեռացավ՝ հանկարծ հրամա՞ն ստանալով, թե՞ հնդկախտի (խոլերայի) ահից: Իսկ հավաքված հայերին, որոնց կասկածում են որ հնդկախտով վարակված են, նա հրամայեց գնալ, ուր որ ուզում են: Բոլորը միանգամից ցրվեցին: Կանանցից մեկը գիշերը գնացել էր գյուղի ակումբը, որտեղ և մահացել էր: Ֆրիցն ամենայն հանդարտությամբ ասաց մի թուրքի, որ մեզ մոտ օրենքի նման «պարագլուխներին» կախում են:

Պատվաստում հնդկախտի դեմ: Կեսօրից հետո՝ առանց նախնական տեղեկացման, որպես բանվոր այստեղ են ժամանում 280 հնդիկ գերիներ: Ֆրիցը ձիով անմիջապես ճանապարհ է ընկնում: Հնդիկները զբաղեցնում են մեր տան հրապարակը, այնուհետև ուղարկվում հովիտ և տեղավորվում արգելանոցում (quarantine):

1916, Հունիսի 27

Գոհարը դրսում լվացք է անում: Ես պատրաստում եմ ծիրանը շոգեխաշելուց առաջ: Անհավատալի է այս կնոջ [Գոհարի] հիմարությունը: Երկու օր առաջ երեք անգամ նրան ասվել է, որ գյուղի հետ պետք է դադարեցնել ամեն կարգի հաղորդակցություն: Եվ ահա նա իր երեխաներին այսօր կրկին այստեղ է բերում, մի բան որ պատահաբար տեսա: Ֆրիցն այնպես էր իրենից դուրս եկել, որ նրան սպառնաց մի ամբողջ ամիս չվճարել: Առանց դրամական տույժի այստեղ ոչնչի չես հասնի: Իսկ երեխաներին այստեղ հնազանդության չեն վարժեցնում:

1916. Հունիսի 28

Ֆրիցին ուղեկցում եմ արգելանոց՝ հնդիկների մոտ: Նրանց մեջ կան գեղեցիկ կերպարանքներ՝ նաև խելացի դեմքերով: Բոլորը բարձրահասակ են և նրբակազմ: Ֆրիցը անգլերենով բացատրում է իր պայմանները նրանցից մեկին, որն իր հերթին դրանք բարձր, հստակ ձայնով փոխանցում է համակ և ուշադիր խմբին:

1916. Հունիսի 30

Տիկին Վիթիգը (Wittig) այստեղ է՝ թեյի: Երեկոյան կարճ այցով գալիս է պարոն Հոֆմանը:

1916. Հուլիսի 1

✿ Տիկին Լուցը (Lutz) գալիս է վաղ առավոտյան: Նա քույր Փաուլային տեսել է մեր կողմերում: Տիկին Լուցը պատմում է, թե մեզ մոտ գալու ճանապարհին հայերի հետ կապված ինչ զարհուրելի բաներ է տեսել:

Նոր հրաման՝ խստորեն արգելված է աշխատանքի ընդունել նոր հայերի:

1916. Հուլիսի 2

Պարոն Հոֆմանը (Hoffmann) գալիս է ճաշի: Ցավոք, նրա կինը ջերմություն ունի: Այսօր Ֆրիցի համար էլ կիրակի է, և մենք երկար նստում ենք պատշգամբում: Երեկոյան տիկին Լուցի հետ այցելում ենք Վիթիգներին:

Կարիճի և մորմի (թունավոր սարդ=tarantula) որս:

1916. Հուլիսի 3

Տիկին Լուցը վաղ առավոտյան վերադառնում է Էնթիլի: Երեկոյան դարձյալ գնում ենք նրա ետևից: Մեր շուրջը գրեթե բոլորը ջերմում են: Ասում են, որ անսովոր շոգ ամառ է: Բլրի վրա բնակվող փոքրիկ, հաճելի ընտանիքը տառապում է աչքի եզիպտական հիվանդությամբ [Trachoma]:

1916. Հուլիսի 4

Տիկին Լուցը (Lutz) մեկնում է Հալեպ (Aleppo): Առավոտյան շշերի մեջ լցնում ենք մեր գինին. մի բան, որն ինձ սարսափելի հոգնեցրեց: Երեկոյան գնացքի մոտ՝ ձորում՝ կարճ հանդիպում Հոֆմանների (Hoffmann) հետ: Ֆրիցը գնում է հնդիկների մոտ և նրանց մեջ հանդիպում է ծայրաստիճան սովահար, հիվանդ անգլիացի զինվորների, մնացածն այն 40 հոգուց, որոնք հեռացել էին Իսլահիեից, որովհետև այնտեղ նրանց խնամող չկար:

1916. Հուլիսի 5

Հաճելի ծննդյան օր: Արթնանում եմ խաբուսիկ երազից, որի մեջ իբրև թե տուն եմ վերադարձել: Սեղանիս դեռ կան մի քանի գարդենիներ (Kosmeen): Ֆրիցից նվեր՝ քրդական շքեղ ապարաջաններ, որոնք օգտագործելու եմ որպես անձեռոցիկի օղակներ: Ճաշից հետո անսպասելիորեն երկու մայրիկներից ստանում եմ անուշիկ նամակներ:

Հովտով անցնում են մեծ թվով գերի անգլիացիներ ու հնդիկներ:

1916. Հուլիսի 6

Ֆրիցը պատշգամբում մի իծ (viper) է սպանում: Ընթրիքից հետո գնում ենք բլրի վրա գտնվող խրճիթները: Այնտեղ կան շատ ջերմող և աչքացավ ունեցող հիվանդներ:

1916. Հուլիսի 7

☼ Ժանդարմները նորից եկել են, և կրկին տրվում են ինքնության վկայականներ: Մարդկանց հանգիստ չեն տալիս: Երեկոյան հայտնվում են Հոֆմաններն (Hoffmann) ու քույր Ռութը (Ruth): Շտապ-շտապ ընթրիք է պատրաստվում: Այնուհետև տեղավորվում ենք պատշգամբում և երկար չարախոսում այս անմխիթար իրավիճակի վերաբերյալ:

1916, Հուլիսի 8

Կրկին փոստ տնից. երեկ ստացանք ազդրերիս համար վիրակապեր (calf bandage) և սերմեր: Գրեգը (Greg) և Յուլին (Julie) աղջնակ են ունեցել: Երեկոյան նստում ենք պատշգամբում մի գավաթ գարեջրի շուրջ և արբենում ապագայի մտորումների մեջ:

1916, Հուլիսի 9

Կրկին ուժասպառ վիճակ շոգից: Մնում ենք տանը: Այգեպանը սպանում է մի մեծ օձ, որը գիշերել էր գարդենու թփերի մեջ:

1916, Հուլիսի 11

Ես իմ մուգ կապույտ զգեստը ձևափոխում եմ հղիության հագուստի: Ֆրիցը Քուրդ-Բադենից դեռ շատ հեռու է: Երեկոյան նստած ենք դրսում և նայում ենք լուսնին:

1916, Հուլիսի 12

Քյոփեռն արագ գալիս է՝ ցտեսություն ասելու: Կեսօրից հետո զբաղվում եմ խոհանոցում: Վիթիգները (Wittig) և Ջեալդը (Seewald) ընթրիքին այստեղ են:

Արդյո՞ք, Աստված իմ, սխալ էր երեխա ունենալը հայրենիք վերադառնալուց առաջ: Չէ՞ որ վեց ամսական երեխան դեռ շատ փոքրիկ է որևէ ճանապարհորդության համար: Երանի՜ թե խաղաղություն հաստատվեր:

1916, Հուլիսի 13

Բացիկ մայրիկիցս, որի մեջ պարզորոշ կարդացվում է նրա տազնապը մեր մասին:

1916, Հուլիսի 14

Աշխատանքային հրաշալի օր: Ավարտվում է պորտակապերի կարը: Երեկոյան պարտեզում ենք: Մնացել են

միայն լուիկները, և մի քանի սեխ: Փորում-հանում ենք կեռասի մեծության կարտոֆիլները:

1916, Հուլիսի 15

❁ Թերթերը հաղորդում են Ավստրիայի կորուստների մասին: Բժիշկ Հովնանյանը (Hovnanian) մեր տան մոտով անցնելիս ներս է մտնում: Նա հույս ունի, որ կտեղավորվի որպես զինվորական բժիշկ՝ այդպիսով խուսափելով արտաքսումից: Երևում է, թե նա ինչպիսի մտահոգության մեջ է:

1916, Հուլիսի 16

Նախաճաշից անմիջապես հետո ես Մուսայի (Mussa) հետ գնում եմ Էնթիլի (Entilli): Ֆրիցը ձիով գալիս է ավելի ուշ: Այցելում ենք բժիշկներին: Հաճելի օր Հոֆմանների (Hoffmann) մոտ: Երեկոյան տուն ենք վերադառնում ուտքով:

1916, Հուլիսի 17

Երեկվա պաղպաղակով սուրճը երկուսիս ստամոքսի խանգարման պատճառ դարձավ:

Վերջապես ծովից եկող ամպերը զովություն են բերում: Ջերմաստիճանը հրաշալի է:

1916, Հուլիսի 22

Գրեթե ամբողջ առավոտ խոհանոցում եմ: Ֆրիցը ընկերակցում է Մորֆին, որը փողոցի խաչմերուկում սպասում է Վինքլերին: Երեկոյան ունեցած-չունեցածով զիշերելու է գալիս օրիորդ Թիցը (Tietz):

Ամեն օր անգլիացի նոր գերիներ են գալիս:

1916, Հուլիսի 23

Հոֆմանները գալիս են ճաշկերույթի՝ խոստացված սագով: Իրենց հետ բերում են պաղպաղակի մեքենան, և ճաշից հետո ըմբռնում ենք հրաշալի պաղպաղակ:

1916, Հուլիսի 24

Ֆրիցը Վինքլերին հանդիպում է Քուրդ-Բադչեում և պա-
րոնների հետ մեկնում Էնթիլի (Entilli):

1916, Հուլիսի 25

Երեկոյան զբոսնում ենք բլրի վրա: Մի մեծ՝ մետր կամ
մեկուկես մետր երկարության օձ գիշերը մի վառեկ է փախց-
նելիս լինում, սակայն պահակը նրան հայտնաբերում է և
սպանում:

1916, Հուլիսի 26

🌸 Ինչքա՞ն ցանկալի կլիներ մեզ համար այս տարի
վերոհիշյալ իրավիճակը¹⁴⁸:

Վելին (Veli)՝ Բադչեի (Bagtsche) հացթուխը, ձերբակալվել
է, որովհետև նա իր տանը հայերի է ապաստան տվել:

1916, Հուլիսի 27

🌸 Գալուստն ու Շանթը¹⁴⁹ լուր են ուղարկել իրենց մա-
սին. դժվար է հավատալ, որ նրանք դեռ կենդանի են: Ամեն

¹⁴⁸ Այստեղ Կլարան վկայակոչում է իր օրագրի մեկ տարի առաջվա, այ-
սինքն՝ 1915 թ. հուլիսի 26-ի գրառումը, որտեղ նա գրում է. «Կրկին խոսում
են աշխատանքի դադարեցման մասին, կրկին ապագան մեծ հարցականի
տակ է»: Մեկ տարի առաջ նա այս երկրում դեռևս նոր էր և լավ օրերի հույ-
սեր փայփայելով՝ մտավախություն ուներ, որ աշխատանքի դադարեցման
դեպքում ամուսինը կկորցներ իր աշխատանքը: Սակայն ընթացիկ տարվա
բոլոր հիասթափություններից և հատկապես 1916 թ. հունիսյան այդ ծանր
օրերից հետո նա պատրաստ էր ողջունելու աշխատանքի դադարեցումը և
իր ամուսնու հետ հեռանալու այս «անմխիթար երկրից»:

¹⁴⁹ Գալուստն ու Շանթը Ֆրիցի մոտ աշխատող այն երկու հերթափոխային
գրագիրներն էին, որոնց աքսորից փրկելու ուղղությամբ Ֆրիցն այնքան
շատ էր պայքարել, բայց ի վերջո ջանքերն ի զուր էին անցել (տե՛ս Կլարայի
1916 թ. հունիսի 14-ի, 15-ի և 16-ի գրառումները): Ուշագրավ է, որ Կլարան,
տեղյակ լինելով որոշ հայ աշխատողների տեղահանման պատմության
մանրամասներին, իրեն այնքան մոտ է զգում նրանց և գիտի նույնիսկ
նրանց անունները:

դեպքում ծանր փորձությունների միջով են անցել և շատ թշվառ վիճակում են:

Կրկին խոսում են խոլերայի դեպքերի մասին, հուսանք, որ մեր հայերը արգելանոցի մեջ են:

1916, Հուլիսի 28

Ռազմագերիների թիվն ավելանում է. մարդկանց մի նոր տեսակ: Հնդիկներ են գալիս՝ կարճահասակ ու գեր, սակայն նաև խելացի դեմքեր: Նրանց մեջ կան իրական անգլիացի սպաներ: Երեկոյան Ֆրիցին ուղեկցում եմ դեպի Քուրդ-Բաղչե: Ուղեմասը հետաքրքրական է դառնում մարդկային կերպարների բազմազանության շնորհիվ: Փչում է չտեսնված մի քամի, մոծակ գրեթե չկա, սակայն դրա փոխարեն բոլոր սենյակներում հաստ շերտով փռչի է նստած:

1916, Հուլիսի 29

Օրիորդ Թիցը (Tietz) եկել է՝ հրաժեշտ տալու:

1916, Հուլիսի 30

Ռազմագերի անգլիացի դ-ր Արթուրը (Dr. Arthur) ճաշին մեզ մոտ է: Զվարթ, հաճելի մի մարդ, որը մեծ կարոտով է ճաշակում ընտանեկան սեղանը: Նա բնակվում է ինչ-որ վրանում և այստեղ էլ կմնա:

Երեկոյան կեռասեղով ծակում եմ մատս, և գումարտակի բժիշկը գալիս է՝ ինձ վիրահատելու:

1916, Հուլիսի 31

Քույր Փաուլան անցնում է այս տեղերով, և ես միանում եմ նրան մինչև Քուրդ-Բաղչե: Նա ինձ քննում է, վիճակիցս գոհ է և հավաստիացնում է, որ սրտի զարկեր է լսում: Այնուհետև տուն ենք վերադառնում բժիշկ Հովնանյանի կնոջ և նրանց երկու որդիների հետ: Նրանք մեզ մոտ են մնում մինչև երեկո:

1916. օգոստոսի 1

Ֆրիցը անկողնում է: Ես շրջագգեստ եմ կարում, մանկական առաջին շապիկը մեջտեղ է գալիս:

Կեսօրից հետո հայտնվում է ավագ լեյտենանտ, գլխավոր շտաբի պետ Քրեչմարը (Kretschmar)՝ համհարզներով, ես նրանց համար արագ ուտելու բան եմ պատրաստում: Նրանց մեքենան այստեղ վթարի է ենթարկվել: Այնուհետև նրանք շարունակում են ճանապարհը դեպի Բադդադ:

1916. օգոստոսի 2

Ֆրիցը մնում է անկողնում: Երեկոյան քայլում եմ մինչև փոքրիկ կիրճի մյուս կողմը:

1916. օգոստոսի 4

Երեկոյան Էնթիլից (Entilli) եկած բժիշկը երկար նստում է մեզ մոտ: Հետո Ֆրիցի հետ մի փոքր քայլում ենք: Տուն ենք վերադառնում դ-ր Արթուրի վրանի մոտով, որտեղ տեսանք՝ նոր ժամանած ինդուսներ՝ ճապոնացիների նման բարակ հյուսքով՝ կախված խուզված գլխի կատարից:

1916. օգոստոսի 7

Դ-ր Արթուրը ճաշի է մեզ մոտ:

1916. օգոստոսի 8

Ժամը 10-ին Ֆրիցը լուր է բերում, որ հյուր են գալիս Վինքլերը և Ռիթհամերը (Ritthammer), իսկ այնուհետև՝ Ժամը 4-ին, հեռագիր է ստացվում ևս երկու հյուրերի մասին: Բոլորը գիշերելու են այստեղ՝ իրենց զինվորական մահճակալներում (նաև մի թուրք գնդապետ՝ իր համհարզով):

1916. օգոստոսի 9

Պարոնները հեռանում են նախաճաշից հետո: Ես ինձ շատ ջարդված եմ զգում և ամբողջ օրն անցկացնում եմ աթոռին պառկած:

1916, օգոստոսի 10

Մենք իզուր սպասում ենք քույր Փաուլային (Paula):

1916, օգոստոսի 12

Իմ սենյակում երեք ծաղկեփունջ կա: Ափսոս, որ պակասում է կիրականօրյա զանգակների դողանջը: Ֆրիցը ընթրիքից հետո էլ գործ ունի ներքևում: Մեր պատշգամբից դիտում եմ լիալուսնի ներքո շողացող լուռ շրջակայքը:

1916, օգոստոսի 13

Առավոտյան Մուսայի (Mussa) հետ բլրի գագաթին եմ, որտեղ կես ժամ նստած եմ մնում փոքրիկ թփի ստվերում: Ֆրիցը գնացել է. գրասենյակում գործ ունի: Ճաշից հետո պատշգամբում ենք, որտեղ Ֆրիցը սմբուկներ է կախում չորացնելու համար և փորձի համար կարմիր պղպեղ է աղում:

Նամակ մայրիկից. շատ մտահոգված Գրեթեր (Graeter)՝ զույգի այցելությունից հետո¹⁵⁰:

1916, օգոստոսի 14

Առաջին գնացքով դեպի Քուրդ-Բադեն, այնուհետև ութով դեպի Խանեսի (Channesi) շքեղ այգիները: Երկար նստում ենք մի գյուղապետի տան պատշգամբում, որն ունի «հաջի» տիտղոսը: Զրուցում ենք նրա ընտանիքի հետ, դիտում տղամարդկանց՝ պպզած ճաշելիս:

Այնուհետև գնում ենք ավելի բարձր, դեպի Ք. Բ. (K.B.) գյուղը, որտեղ մենք կրկին հրաշալի աղբյուրի մոտ նստած թուզ ենք ուտում: Տուն ենք գալիս գերհոգնած, բայց ամեն ինչ շատ հաճելի էր:

¹⁵⁰ Խոսքն այստեղ դ-ր Էդուարդ Գրեթերի (Eduard Graeter)՝ Հիլթի ընտանիքին Շվեյցարիայում մատուցած երկրորդ այցի մասին է, երբ վերջինս այլևս գաղտնիք չի ունեցել և բացեիքաց նկարագրել է Թուրքիայում տիրող ողբերգական իրավիճակը: Թուրքիայից ստացվող տհաճ լուրերը, բնակավայրի մոլոր մտահոգության հիմք են տվել:

1916. օգոստոսի 17

Մարաշի մրգերից պտղանուշներ եմ պատրաստում: Երեկոյան ճաշից հետո արդեն շատ մութ է: Պառկած ենք դրսում և դիտում ենք, թե ինչպես են աստղերը վայր ընկնում:

1916. օգոստոսի 18

Սպանվեց ութերորդ կարիճը, այս անգամ՝ ննջասենյակում: Ցանում ենք թարմ սածիլներ արկղներում:

1916. օգոստոսի 21

Հրաշալի երեկո՝ առանց քամու. դրսում ենք ընթրում:

1916. օգոստոսի 23

Ֆրիցը ճաշի է գալիս Մարաշից՝ անսպասելիորեն իր հետ բերելով երկու քույրերին¹⁵¹, որոնք այնուհետև մեզ մղում են ամեն տեսակի գնումներ կատարելու (հայերի ձեռքի աշխատանքներ): Հայտնվում են նաև քույր Ռութը (Ruth) և եղբայր Բերգմանսը (Bergmans): Երեկոյան նրանց մի փոքր տարածության վրա ուղեկցում ենք դեպի իրենց տունը:

1916. օգոստոսի 28

Ֆրիցը երեկոյան ձիով դարձյալ մեկնում է Քուրդ-Բաղչե: Ես Մուսայի (Mussa) հետ գնում եմ դիմացի բլուրը: Ճանճերը, սակայն, խենթացնում են մարդուն նաև երեկոյան և քամու ժամանակ:

1916. սեպտեմբերի 1

Ճաշին դ-ր Արթուրը (Arthur) մեզ մոտ է: Եվ ճիշտ այն պահին, երբ ես ուրախ եմ, որ վերջապես տիկին Հոֆմանի (Hoffmann) կողքին հանգիստ նստելու եմ պատշգամբում,

¹⁵¹ Խոսքն այստեղ միսիոնար քույրեր Փաուլա Շեֆերի և Բեատրիս Ռոնների մասին է:

հեռագիրը հայտնում է, որ պատվելի Ցելլերսը (Zellers) Մարաշից գալիս է: Նրանք պարոն Հոֆմանի հետ վերջին գնացքով վերադառնում են Էնթիլի:

1916. սեպտեմբերի 2

Փոքրիկ մարդուկն այնքան աշխույժ է: Սակայն հաճելի է զգալ, որ նա ապրում է:

1916. սեպտեմբերի 3

Ճաշից անմիջապես հետո դարձյալ անցնում եմ ճաշ եփելուն, քանի որ լսում ենք, որ Վուստը (Wust) և Հունցիքերն (Hunziker) են գալիս: Երկար նստում ենք պատշգամբում, որտեղ արդեն ցրտում է:

Պարոն Հոֆմանը (Hoffmann) այստեղ է գիշերում:

1916. սեպտեմբերի 5

Վինքլերն ու թիկունքի թուրք գնդապետն իր համհարզով գիշերում են այստեղ: Տիկին Հոֆմանն ու ես Վինքլերի հետ նստած ենք լուսնի լույսով ողողված պատշգամբում, մյուսները աշխատում են մինչև ուշ գիշեր: Տիկին Հոֆմանը քնում է մեր ննջասենյակում: Բժիշկ Հովնանյանն է գալիս տիկին Հոֆմանին քննելու համար:

1916. սեպտեմբերի 6

Պարոնները գնում են:

Շոգեքարշն արդեն տեսանելի է (երկաթգծի վրա նստած): Վինքլերը գոհ է, Ֆրիցը՝ երջանիկ: Երեկոյան գնում ենք տեղամաս՝ Ֆրիցին դիմավորելու:

1916. սեպտեմբերի 7

Երեկոյան կարճ այցելություն տիկին Վիթիգին (Wittig), որը շատ վատ վիճակում է: Ըստ բժշկի՝ հավանաբար նա բժատենդ (typhus) ունի:

1916, սեպտեմբերի 8

Քույր Ռութն (Ruth) է եկել՝ շտրուդել (Strudel) թխելու. լո-
լիկ ճզմելու ու եփելու օր է:

1916, սեպտեմբերի 9

Երեկոյան Ֆրիցի հետ գնում եմ՝ Կոնդանելլի (Kondanelli)
փորվածքում տեղադրվելիք երկաթգիծը տեսնելու:

1916, սեպտեմբերի 10

(...) Խոսում են ծառայողական երկաթուղում տեղի ունե-
ցած մահափորձերի մասին:

1916, սեպտեմբերի 11

Ֆրիցը անկողնում է: Կարծես թե միայն սովորական մրսա-
ծություն է: Բարեբախտաբար, քանի որ դ-ր Արթուրը հիվանդ
պառկած է բժավոր տիֆով, իսկ տիկին Վիթիգը (Wittig)՝ տի-
ֆով:

Հնդիկ Յոգելը (Joggel) արդուկ և կար է անում. հիանալի է:

1916, սեպտեմբերի 19

Ոջիլներ եմ հայտնաբերում: Անմիջապես ամեն ինչ մաքրը-
վում է, ու լվացքի նախապատրաստություն են տեսնում:

Ճաշից հետո հայտնվում է քույր Ռութը (Ruth) և արագ
մեզ հետ թեյի նստում: Այնուհետև պետք է հրավիրյալների
համար քառատրոփ ընթրիք պատրաստել: Վիթիգները
(Wittig) և գերմանացի երեք զինվոր մասնակցում են երկաթ-
գծի ճանապարհի բացման փոքրիկ տոնախմբությանը: Ֆրի-
ցը շատ գոհ է աշխատանքի կարգավիճակից:

1916, սեպտեմբերի 20

Ոջլոտ սպիտակեղենի մեծ լվացք: Օգնող էլ եմ կանչել:
Երեկոյան փռում եմ լվացքը և դեռ զարմանալիորեն աշխա-
տունակ եմ: Յոգելը (Joggel) շատ ուրախ է, որ ես նրան թույլ
եմ տալիս օգնել:

1916. սեպտեմբերի 21

Ֆրիցը վաղ առավոտյան շինարարության գնացքով մեկնում է Քուրդ-Բաղչե, իսկ այնտեղից էլ՝ Իսլահիե (Islahiye)՝ թիկունքի թուրք գնդապետին դիմավորելու: Մեղանը գցած՝ սպասում են նրանց մինչև ժամը երկուսը: Մեկ էլ հեռագրով տեղեկանում ենք, որ նա իր հետ բերում է տնօրեն Հազենֆրացին (Hasenfratz), և բոլորը գալիս են՝ թեյի:

1916. սեպտեմբերի 22

Առավոտյան թխում ենք բլիթներ և հնդկահավ պատրաստում: Ժամը 10 անց կեսի հեռագրով տեղեկանում ենք, որ գալիս են տնօրեն Հազենֆրացը (Hasenfratz), Բելարը (Bellar), դ-ր Շվենդեները (Dr. Schwendener)¹⁵² և Շմիթը (Schmitt): Ժամանակին ամեն ինչ պատրաստ է, և նրանք ճաշում են այստեղ: Երբ վերջացնում են, սալոնային գնացքը հասնում է մինչև մեր տան հետնամասը պարոններին տեղափոխելու համար: Ֆրիցն ուղեկցում է նրանց, իսկ ես վայելում եմ ետճաշա անդորրը:

1916. սեպտեմբերի 27

Խոհանոցի աշխատանքը շատ է: Գոհարը լվացք է անում: Ճաշից հետո հարմար տեղ եմ գրավում տիկին Վիթիգի կողքին՝ մի քիչ հանգստանալու: Այդ ժամանակ Ֆրիցը հեռագրում է՝ հայտնելով, որ պետք է ընթրիք պատրաստել: Գնդապետ Ֆուադ Զիյա (Fouad Ziya) բեյը գիշերում է մեզ մոտ: Սարսափելի հոգնած եմ (Shuli mued)¹⁵³:

¹⁵² Դ-ր Հանս Շվենդեներ – շվեյցարացի իրավաբան-գիտնական, որը Առաջին աշխարհամարտի ընթացքում ստանձնել էր Բաղդադի երկաթգծի ամբողջ տնօրինությունը:

¹⁵³ Տանտիկնոջ իր բոլոր պարտականությունները օրնիբուն և անտրտունջ կատարելուց հետո Կլարան առաջին անգամ դժգոհում է՝ եզրափակելով իր գրառումը «Սարսափելի հոգնած եմ» բառերով: Ըստ որում՝ իր դժգոհությունը նա հայտնում է ոչ թե գրական գերմաներենով, այլ իրենց տարածաշրջանի բարբառով. «Shuli mued»: Որպես այդ բառերի թարգմանիչ և մեկնաբանող՝ ես

1916, սեպտեմբերի 28

Ֆրիցը պետք է վաղ՝ ժամը 2-ին արթնանա: Ծառայողական երկաթուղին պարոններին տանում է Իսլահիե՝ Էնվեր (Enver) փաշային դիմավորելու, որը, սակայն, երկաթուղով չի եկել, ինչպես նախատեսված էր, այլ ավտոմեքենայով ուղիղ դեպի Մարմարա է ուղևորվել: Ուղևորական պսակագարդ գնացքը պարոններին ետ է բերում: Բոլորը հոգնությունից ջախջախված են: Խաղաղ, գեղեցիկ երեկո է:

1916, սեպտեմբերի 29

Գոհարն առավոտյան չի երևում: Սակայն բժիշկը, բարեբախտաբար, հաստատում է, որ երիզորդ ունի և դրա հետևանքով միայն թուլություն: Լավ է մեկ անգամ էլ մենակ զբաղվել տան գործերով, իսկ Յոզելը հիանալի օգնական է: Երեկոյան Ֆրիցի հետ Կոնդանելլի (Kondanelli) փորվածքի մոտ ենք, որտեղ դեռևս շատ գործ կա անելու:

1916, սեպտեմբերի 30

Կրկին առանց ամուսին եմ մնացել, բայց այս անգամ սեփական, հարագատ չորս պատի մեջ և մեջս կրելով մի փոքրիկ գանձ: Ֆրիցը Մուսայի և ձիերի հետ մեկնել է Միսսաքա (Missaka): Օրվա երկրորդ կեսը սարսափելի լուռ է:

1916, Հոկտեմբերի 2

Արդեն ժամը 5-ին արևածագի հետ ոտքի վրա եմ, քանի որ շատ գործ կա անելու, և այսպես Ֆրիցի բացակայության երկրորդ օրն էլ շուտով կանցնի: Երեկոյան նստած եմ Վիթիգենց մոտ, իսկ ընթրիքից հետո նամակներ եմ գրում: Ժամացույցս տկտկում է, պահակը երգում է, իսկ բալիկը ոտնահարում է:

մի քիչ տատամսեցի՝ արդյո՞ք դա դժկամության արտահայտություն չէր թուրք հյուրի հանդեպ:

1916. Հոկտեմբերի 3

Շատ գործ ունեմ անելու: Մակայն ժամը մեկին մեկնվում եմ պատշգամբի աթոռին, որպեսզի չմոռանամ գալիք Ֆրիդլի քալիկի մասին: Արդեն մթնում է, հեռադիտակով նայում եմ ժամանող բանվորներին (կարծես գերի ռուսներ են), և հանկարծ իմ տեսողաշտում երևում են Ֆրիցն ու իր նժույզը, փափք Աստծու: Նա շատ ուրախ տրամադրության մեջ է և կարծես իմ պակասն այնպես չի զգացել, ինչպես ես՝ իրենը:

1916. Հոկտեմբերի 5

Շինարարության պետ Քրագեսը (Krages), ֆոն Բրեմը (von Brehm), Ֆրանկֆուրտից մեկ այլ բարձրաստիճան պաշտոնյա և գնդապետ Զիյա (Ziya) բեյը ճաշում են մեզ մոտ:

1916. Հոկտեմբերի 15

Շատ պայծառ կիրակի օր է: Միայն երեկոյան դեմ որոշում ենք մի փոքրիկ զբոսանքի դուրս գալ: Մեկ էլ քույր Ռութն (Ruth) հանկարծ Հալեպից (Aleppo) մի պահ այստեղ է երևում, սակայն անմիջապես ձին նստում և շարունակում է ճանապարհը:

1916. Հոկտեմբերի 16\17

Գյուղում մեծ հարսանիք է երեկ և այսօր: Այցելուների համար հատուկ վրան է խփվել: Խրախճանքի գոյուններն ու երաժշտությունը չեն վերջանում: Հյուրերը գալիս են ձիերով, ողջունում են ասորճանակից օդում արձակած կրակոցներով և դիմավորվում են երաժշտությամբ: Հարսնացուի գլխագինը 50 ֆունտ է, նա տոնակատարության ամբողջ ընթացքում քողածածկ նստած է աթոռին: 15 ոչխար է մորթվում: Երկրորդ օրը հարսնացուին ձիով տանում են Իսլահիե, որտեղ նրան սպասում է փեսացուն:

1916, Հոկտեմբերի 18

Ես պառկած եմ վնասված ծնկով: Պարտեզում՝ հազարի (lettuce) տերևների մեջ հայտնաբերում ենք օձ և հալածում ենք նրան: Ֆրիցը նրա վրա երեք կրակոց է արձակում:

1916, Հոկտեմբերի 19

Երբ արդեն մութն ընկնում է, հայտնվում են քույր Փաուլան և տիկին Հոֆմանը (Hoffmann) և մնում են ընթրիքին: Ինձ մոտ, փառք Աստծու, ամեն ինչ կարգին է:

1916, Հոկտեմբերի 21

Առավոտյան գնում ենք Էնթիլիի ուղղությամբ՝ մինչև փապուղու մուտքը: Երկաթուղին արդեն հիանալի մաքուր տեսք և մեծ առաջընթաց ունի:

1916, Հոկտեմբերի 22

Ճաշից հետո նստում ենք պատշգամբում: Հետո գալիս է բժիշկ Հովնանյանը (Hovnanian)՝ ուղեկիցներով: Թեյից հետո նրանց ուղեկցում ենք երկաթուղու կայանը:

1916, Հոկտեմբերի 23

Հիմա գտնում կանգնած է մի կով իր չորս օրական հորթուկով:

1916, Հոկտեմբերի 21

Մեռելոցի (Allerseelen) տրամադրություն¹⁵⁴: Մեղանին եմ դնում հոտավետ հափրուկներ:

¹⁵⁴ Ինչպես Հայ Առաքելական եկեղեցին ունի Մեռելոց՝ հանգուցյալների հիշատակին նվիրված օրեր, արևմտյան շատ երկրներում քրիստոնյա եկեղեցին ունի իրար հաջորդող երեք օրեր, որոնց ընթացքում աղոթում են իրենց ննջեցյալների հոգու համար, գերեզմանները գնում են: Այդ օրերն են՝ հոկտեմբերի 31-ը՝ Բարենորոգչության օր (Reformationstag), հոկտեմբեր 1-ը՝ Սրբերի օր (Allerheiligen), հոկտեմբեր 2-ը՝ Հոգիների օր (Allerseelen): Բուն Մեռելոցը դեկտեմբերի 2-ն է:

1916, նոյեմբերի 11

Ֆրիցը լսել է, որ Լիբանանում շատ մարդիկ սովամահ են լինում: Խոսվում է քաղցից մահացած 90 000 արարների մասին:

1916, նոյեմբերի 12

☼ Գնում ենք Էնթիլի՝ Քյոփեկների մոտ ճաշի: Երեկոյան Հոֆմանների մոտ ենք: Այնտեղ նավապետ Մյուկեի (Mücke)¹⁵⁵ միջոցով ստացվել են նորություններ անապատում հայերի նկատմամբ իրագործված ոճիրների մասին: Ըստ նավապետ Մյուքեի՝ հարավում խփված ճամբարներն աստիճանաբար վերացվում են, մարդկանց այրում կամ գնդակահարում են:

1916, նոյեմբերի 15

Մենք կարգավորում ենք մեր ձմեռային ննջասենյակը, և այս անգամ փոքրիկ մահճակալը նրա մեջ իր տեղն է գրավում: Սենյակի տեսքը շատ գողտրիկ է, և Ֆրիցը դրա մեջ իր մեծ ներդրումն ունի: Այստեղ են գտնվում երկու չափազանց երջանիկ և գոհ մարդուկներ:

Առավոտյան շատ գործ կա անելու: Կեսօրից հետո Ֆրիցի հետ քայլում ենք մինչև փապուղու մուտքը, որտեղ երկար խոսակցության ենք բռնվում Հոֆմանի (Hoffmann) և Վեթշտայնի (Wettstein) հետ:

¹⁵⁵ Փոխիբրամանատար Հելմուտ ֆոն Մյուկե (captain-lieutenant Hellmuth von Mücke) (1881-1957) - կայսերական ռազմածովային նավատորմի սպա, Առաջին աշխարհամարտի հայտնի ծովային սպաներից մեկը: Խաբուր գետը Եփրատին միախառնվելու վայրից ցած գետանցման մի փորձի ժամանակ Հելմուտ ֆոն Մյուկեն հայտնաբերել է մեծ թվով հայերի դիակներ: Հյուպատոս Վալտեր Ռյոսլերը (Walter Rösler) Բեռլին է փոխանցել ճարտարագետ Բյունտեի (Bünthe) հաղորդագրությունը՝ Խաբուր գետի շրջանում նման դիտարկումների մասին: Հմմտ. Gust, Wolfgang (2005), էջ 43:

1916, նոյեմբերի 20

Գալիս է տիկին Հոֆմանը, մենք նրան դիմավորում ենք ձորում: Սուրճին ներկա է նաև բժիշկ Հովնանյանը: Տիկին Վիթիգը տենդախառն հարբուխ (influenza) ունի: Երեկոյան ուղեկցում ենք նրան մինչև ժայռի մեծ փորվածքը:

1916, նոյեմբերի 22

Ֆրիցը ձիավարում է իր ուղեմասի ամբողջ երկարությամբ, որը մինչև շաբաթ պետք է կազմ ու պատրաստ լինի: Երեկոյան մենք միասին մի փոքր շրջագայություն ենք կատարում: Ձորում մեծ հրդեհներ են տեղի ունենում, ինչի հետևանքով ամբողջ օդը լցված է կապտավուն բուրմունքով, իսկ երեկոյան մայրամուտն ավելի հագեցած գույներ ունի, աշնանային հիասքանչ տրամադրություն:

1916, նոյեմբերի 23

Այսօր վերջին անգամ գործել է ծառայողական երկաթուղին:

Երեկոյան Վիթիգը (Wittig) մյուս պարոնների հետ մեզ մոտ է: Երկաթգիծը փակված է:

1916, նոյեմբերի 24

Հանդիսավոր օր: Կանոնավոր երկաթուղին կատարում է իր փորձնական երթը: Սպասում եմ Քյոփելին և Հունցիքերին. նրանք գալու էին սուրճի: Բայց քանի որ ուշանում էին, չեկան: Երեկոյան նրանք ինձանից տանում են Ֆրիցին: Հիասքանչ երեկոյան լուսավորություն է: Ֆրիցի տուն գալուն սպասում եմ մինչև առավոտյան ժամը 2-ը, վերջում արդեն՝ իրական վախով:

1916, նոյեմբերի 25

Քույր Ռութը (Ruth) գալիս է կարճ այցով: Հետո մենք մի փոքրիկ շրջագայություն ենք կատարում: Ընթրիքից հետո

առաջին անգամ կարգի են բերում փոքրիկ մահճակալը: Ֆրիցն ինձ դիտում է լուռ երջանկությամբ:

1916, նոյեմբերի 26

Օրիորդ Աննայից լսում եմ, որ նրա մայրիկն¹⁵⁶ այլևս չի ապրում: Երեկոն անչափ ծանրանում է իր տխուր մտքերով:

1916, նոյեմբերի 30

Նուրի (Nuri) բեյի¹⁵⁷ կանանց այցելությունը: Մի զինվոր նախ ազդարարում է նրանց գալուստը և ապա ներս ուղեկցում ամբողջովին սև մետաքսի մեջ քողարկված երեք կերպար: Ֆրիցն անհետանում է: Ես նրանց ողջունում եմ՝ առանց դեմքերը տեսնելու: Ապա տեղի է ունենում փոխակերպումը: Իմ դիմացն է նստում կանացի մի հրապուրիչ էակ՝ գեղեցիկ դիմագծերով, հրաշալի զարդեղենով: Բավականին հաճելի զրույցը շարունակվում է երկու ժամ: Ապա նա հրաժեշտ է տալիս [և գնում] իր խորթ դուստրերի հետ:

1916, դեկտեմբերի 1

Ես դեռ չգիտեմ, թե որտեղ է մեր բալիկը իր աչուկներն առաջին անգամ բացելու:

1916, դեկտեմբերի 4

Կոստանդնուպոլսեցի պարոնայք անցնում են այստեղից գիշերով: Հիլֆիքերն ու դ-ր Շվենդեները ճաշին մեզ մոտ են: Մենք նրանց ուղեկցում ենք իրենց սալոն վագոնով մինչև Իսլահիե, որտեղ երկար սպասում ենք վերադարձող գնացքին: Հանդիպում ենք գերմանացի և ավստրիացի բազմաթիվ զինվորականների:

¹⁵⁶ Այստեղ խոսքը Շվեյցարիայի առաջին բժշկուհի Մարի Հայմ-Ֆեոգտլինի (Marie Heim-Vögtlin) մասին է, որի առաջավոր մտքերը մեծ ազդեցություն են ունեցել Կլարայի մտածելակերպի վրա նրա երիտասարդ տարիներին:

¹⁵⁷ Բավարար տեղեկությունների բացակայության պատճառով անկարելի եղավ ճշտել Ֆրից Զիգրիստի բարեկամ, բարձրաստիճան թուրք զինվորական Նուրի բեյի ինքնությունը:

1916. գեկտեմբերի 5

Կեսօրին այցելում եմ Նուրի բեյի տունը: Ֆրիցը գալիս է ինձ հետ, և տանտիրուհին հայտնվում է՝ հագին թուրքական սև մետաքսե վերնագգեստ՝ գլխաշորով, իսկ քողը բարձրացրած: Ֆրիցի գնալուն պես նա հանում է վերնագգեստն ու գլխաշորը, նստում է առավոտվա թեթև հագուստով, դուստրերին ներս է կանչում և դառնում զվարթ ու զրուցասեր: Նախ մատուցվում է լիմոնադ, այնուհետև՝ սև սուրճ, հետո՝ թեյ, իսկ վերջում՝ թուզ, նարինջ, ընկույզ, պիստակ և խաղող:

Երեկոյան՝ ժամը 9-ին, հայտնվում են քույր Փաուլան և պարոն Բլանքը (Blank)¹⁵⁸՝ մեզ մոտ գիշերելու: Անհանգիստ գիշեր խցկված նեղ անկողնում:

1916. գեկտեմբերի 6

Ըստ քույր Փաուլայի (Paula)՝ ինձ մոտ ամեն ինչ կարգին է, և նա գրեթե հաստատական է, որ ես ծննդաբերության համար այստեղ մնամ: Մեր բալիկն ուրեմն կարող է լույս աշխարհ գալ Քելերի (Keller) տնակում: Այդ գաղափարը լավ է հնչում: Երկուսով մեկնում են Հալեպ:

1916. գեկտեմբերի 9

Մեզ մոտ ճաշի է գլխավոր ինժեներ Մորֆը: Ֆրիցը ընթրիքից հետո էլ դեռ աշխատում է այստեղ վերևում: Այս գիշեր կրկին ոջիլ եմ գտնում:

1916. գեկտեմբերի 15

Խճով լցված բաց վագոնով Ֆրիցի հետ ուղևորվում եմ հիանալի տեսարաններով դեպի Քուրդ-Բաղչե: Այնտեղից ոտքով դեպի տուն՝ մեր նոր պատվո պահակի (Kawassa)՝ զինվոր Իբրահիմի հետ:

¹⁵⁸ Գերմանացի միսիոներ Կառլ Բլանկը (Karl Blank) Մարաշի գերմանական հիվանդանոցի և հայկական որբանոցի տնօրենն էր: Նա հայտնի է որպես տարագիր և հալածական հայերի պաշտպան: Հմմտ. Gust, Wolfgang (2005), էջ 36, 75, 126, 129, 132, 150, 250:

1916. գեկտեմբերի 16

Թղթախաղի երեկո: Հոֆմանները գալիս են ընթրիքի, Վիթիգները (Wittig) դրանից հետո՝ ժամը 11 անց կեսին, բուրդը ցրվում են:

1916. գեկտեմբերի 18

Ֆրիցը Մորֆին դիմավորում է Իսլահիեում: Ես տեսնում եմ նրանց հովտով քառատրոփ սուրալիս: Մորֆը հայրաքար մտահոգ է գալիք եղելության մասին և կարծում է, որ հաստատ կգային գերմանացի հայտնի կնախտաբան պրոֆեսորը կամ բժիշկ Ալթունյանը¹⁵⁹ Հալեպից: Մենք հանգիստ ենք ու երջանիկ:

1916. գեկտեմբերի 20

Ճաշից հետո Ֆրիցը բերում է Հիլֆիքերին (Hilfiker): Մորֆն էլ է այստեղ: Վերջինիս մտքերը հիմնվում են ենթադրությունների վրա, իսկ այն գաղափարը, որ ես կարող եմ նաև Հալեպ (Aleppo) գնալ՝ ծննդաբերելու, ինձ տխրեցնում է: Երեք շաբաթ է մնում, և մենք դեռ չգիտենք, թե որտեղ է ծնվելու իմ երեխան: Մեզ է միանում նաև բժիշկ Հովնանյանը և մասնակցում է խնդրի քննարկմանը:

1916. գեկտեմբերի 21

Սահմանվել է 500 գրամ հացաբաժին: Սննդամթերք ձեռք բերելը դժվարացել է, պետք է պաշարներ անել, և մենք դա կարող ենք: Սակայն տխուր կլինի, եթե պակասը հասնի բանվորներին:

¹⁵⁹ Պրոֆ. Արամ-Ասատուր Ալթունյան (ծնվել է 1957 թ. Սեբաստիա, մահացել է 1950 թ. Հալեպում) – անվանի հայ բժիշկ: Սովորել ու աշխատել է արևմտյան երկրներում, ապա՝ հաստատվել Սիրիայում, որտեղ զարգացրել է Սիրիայի առողջապահության գործը. հիմնել է իր հիվանդանոցը, բուժքույրերի դպրոց և կարևոր այլ հաստատություններ:

Իմ սենյակում ծաղկում են շահպարակներ և հափրուկներ, իսկ մեխակները բողբոջում են:

1916, գեկտեմբերի 23

Երեկոյան զարդարում ենք ծառը: Իսլահիեում մալարիայից մահացել է կայարանապետի գերմանուհի կինը: Սա և խաղաղության դաշինքի ձախողումը տխրեցնում են մարդուն: Ճիշտն այն կլինեք, որ Ծննդյան տոները աշխարհին խաղաղություն բերեին:

1916, գեկտեմբերի 24

Ուժգին անձրևային օրը բերում է Ծննդյան տոներին հարմար տրամադրություն: Ֆրիցը ոսկեգոծում է նաև նարինջներն ու խոզակաղիները, և մեր ծառը շատ սիրունիկ տեսք է ստանում: Մի փոքրիկ զբոսանքից հետո սեղան եմ գցում, և սեղանին կրկին վառվում են մոմերը, իսկ ննջարանում փոքրիկ մահճակալի կողքին վառվում է երեք մոմ:

1916, գեկտեմբերի 25

Առավոտյան միասին պատրաստում ենք ամեն ինչ երեկոյի համար: Մեզ մոր կարճ այցով գալիս է Նուրի բեյը, որից հետո մեկնում ենք Էնթիլի: Ես փորագավեր ունեմ, «մարդ չգիտի, թե ինչ է կատարվում», և ես ուրախանում եմ, երբ Վիթիգները (Wittig) տուն են գնում:

1916, գեկտեմբերի 26

Շարժվելը չի բարելավում վիճակս, այնպես որ ձգտում եմ հանգիստ անելով և անկողնային ջերմությամբ ինչ-որ բանի հասնել: Շուտով, սակայն, ցավերը դառնում են պարբերական: Երեկոյան՝ ժամը 9-ին, գալիս է բժիշկ Հովնանյանը և հայտարարում, որ խնդիրը առաջ է գնում: Սակայն ես նրան ետ եմ ուղարկում, իսկ Ֆրիցը սկսում է ամեն ինչ նախապատրաստել: Ժամը 1-ին նա վերջացնում է, պառկում բազմոցին, և մենք քնում ենք:

1916. գեկտեմբերի 27

Առավոտյան դեռ լավ չեմ զգում, սակայն վեր եմ կենում: Սպասում եմ տիկին Հոֆմանին (Hoffmann), որը գալիս է ճաշին, և հետո մենք նրան մի փոքր ուղեկցում ենք: Այնուհետև՝ կարգին տեղատարափ անձրև:

1916. գեկտեմբերի 29

Քույր Փաուլային լրաբեր ենք ուղարկում: Ինձ տանջում են ողնաշարի խայտառակ ցավեր: Այնպես որ ես միայն կարճ ժամանակով եմ դուրս գալիս:

1916. գեկտեմբերի 30

Անձրևային գիշեր և անձրևային առավոտ: Զինված վերարկուներով ու կրկնակոշիկներով՝ պարտեզից բանջարեղեն ենք բերում Այրանի և երկու կիրակիների համար: Մի ամբողջ բնակար՝ ծաղկակաղամբ, լոլիկներ, ճակնդեղ, լոբի, հազար:

Ձյուն սարերի վրա: Միանգամից ամպերն անհետանում են, արևի պայծառ ճաճանչներ և թարմ ջինջություն: Քույր Ռութն է գալիս ամեն կարգի քննարկումների: Երեկոյան լաբում ենք շնագայլի թակարդը և պատշգամբից տեսնում ենք երկու աղվես հովտով անցնելիս:

1916. գեկտեմբերի 30

Տնից ոչ մի լուր չկա, նույնիսկ Ծննդյան տոներին ոչինչ: Սակայն, միևնույն է, մենք բոլորին մեր սրտերին մոտ ենք զգում:

Ֆրիցն արդեն վաղ առավոտյան ժամը 6-ից որսի էր գնացել, և ամբողջ օրը նրա մեջ եռում է որսորդական արյունը. փորձարկվում են հրացանները, նորոգվում շնագայլի թակարդները: Այնուհետև մենք գնում ենք մեր երթին արևի ճառագայթների տակ, սակայն հատող քամու միջով: Երկար արթուն ենք մնում: Սեղանի վրա մեր առջև վառվում է երեք մում, իսկ մեր սրտում՝ ջերմ իդձեր առ Աստված:

1916, Հունվարի 1

Մեկ՝ առատ ձյուն է գալիս, մեկ՝ վարար անձրև: Մեր տնակը ավելի հարմարավետ ենք դարձնում՝ փռելով գեղեցիկ գորգը և թուրքական կարմիր սփռոցը: Ֆրիցը ներս է բերում ծաղիկները, և մի կարմիր մեխակ արդեն ծաղկել է: Մենք զուր սպասում ենք Նուրի բեյի տիկնոջ այցելությանը: Բայց դրա փոխարեն փոստը բերում է մայրիկիս նամակը ու թղթե ձևածքներ: Ստացվում է նաև մի փոքրիկ սերինոս: Վերարկուներով և գլխարկներով մենք մեր պտույտն ենք անում անձրևի տակ:

1917, Հունվարի 2

Դեռ մնում են ամեն տեսակի նախապատրաստական աշխատանքներ: Բուժքույրերի սենյակն է կարգի դրվում:

1917, Հունվարի 3

Ֆրիցը մեծ անախորժություններ ունի իր աշխատողների հետ: Հնդիկները չեն ուզում աշխատել միայն հացի դիմաց: Ճաշից անմիջապես հետո նա կրկին վազում-գնում է, որ պեսզի ամենուրեք անձամբ ներկա գտնվի: Կարում եմ փոքրիկ կոշիկներ {երեխայի համար}: Բժիշկը գալիս է ոտքերիս համար և պատվիրում է ավելի հաճախ պառկած մնալ:

1917, Հունվարի 5

Հունվարյան հրաշալի օրեր են: Լեռները փայլում են ձյան ծածկոցի տակ: Ֆրիցի հետ գնում եմ Էնթիլի՝ Հոֆմաններին դիմավորելու, սակայն նրանք չեն գալիս:

1917, Հունվարի 27

☼ Հեռագրով տեղեկանում ենք, որ քույր Փաուլան անցնելու է Էնթիլիով: Ֆրիցը մեկնում է՝ նրան դիմավորելու, սակայն քույրը մնում է Այրանում: Այժմ մենք հանգիստ ենք: Այնտեղից Ֆրիցը լուր է ստանում, որ Հոֆմաններին Իսլահիե չեն թողնում, հավանաբար իրենց հայ աղախնի պատճառով:

Ուրեմն Ֆրիցը ճանապարհվում է այնտեղ՝ նրանց մեզ մոտ բերելու: Սակայն նրանք գնացած են լինում: Սա հավանաբար մեր վերջին կիրակի երեկոն է, որ անցկացնում ենք երկուսով:

1917, Հունվարի 8

Մեկ անգամ ես լվացք կախել պայծառ արևի տակ: Սպասում ենք քույր Մայրիկին (Mairik), իսկ երեկոյան գնում ենք մինչև գնացքը: Սակայն նա չի գալիս: Ես շարունակում եմ հաճույք ստանալ Ֆրիցի հետ մեր առանձնությունից և ամեն օր սրտանց շնորհակալ եմ, որ կարող եմ տանը լինել:

1917, Հունվարի 9

Գրեթե ամբողջ օրը նամակներ եմ գրում: Երեկոյան հանկարծ ինձ կրկին համակում է հեծկլտոցը:

Ֆրիցի հետ քայլում ենք արևոտ օդի, սակայն սառը քամու միջով: Երեկոյան երկինքը ծածկվում է:

1917, Հունվարի 11

Առավոտյան կրկին պայծառ արև է: Ես զբաղվում եմ տան զործերով, այնուհետև քույր Փաուլայի հետ դուրս ենք գալիս՝ բժիշկ Լանգեի (Lange) ավտոմեքենան դիմավորելու: Բայց նա չի գալիս, այնպես որ քույր Փաուլան ձիով մեկնում է Իսլահիե: Ժամը 4-ին Ֆինքն (Finkh) ու բժիշկ Լանգեն մեզ մոտ թեյի են: Հետո նրանք մեկնում են Իսլահիե և վերադառնում են ընթրիքին: Դրանից առաջ արդեն ժամանել էին քույր Փաուլան և բժիշկ Շիլինգը (Schilling): Հաճելի երեկո է: Սակայն երկար նստում են, և իմ վիճակում այս օրերին շատ եմ հոգնում:

1917, Հունվարի 12

Քույր Փաուլան մեկնում է Այրան: Ճաշից առաջ հայտնվում է քույր Մայրիկը (Mairik): Ջուրը մանրեագերծվում է: Ավելի ուշ գնում եմ ձորը և գտնում առաջին ալպիական մանուշակները, սակայն տուն եմ դառնում շատ հոգնած: Գոհա-

րը գարի է բովում՝ սուրճին ավելացնելու համար: Էրզրումցի հողագործները այստեղով են անցնում իրենց ուղտերով:

Բժիշկ Շթայնբոքը (Steinbock)՝ գերմանացի երիտասարդ բժիշկը, մահացել է թարախային վարակի պատճառով, որը նրան փոխանցվել էր դիակի գննումից:

1917, Հունվարի 13

Քույր Փաուլան առավոտյան կրկին մեզ մոտ է: Մառախուղը պատել է ամեն ինչ: Ֆրիցի հետ գնում եմ մինչև կիրճը, իսկ սպասվող ավտոմեքենան չի գալիս երկուսիս տանելու: Ոչինչ այլևս կարգին չի արվում, և մարդ ոչինչ չի ուզում ձեռնարկել:

1917, Հունվարի 14

Սպասում ենք ու սպասում: Եվ ինձ համակում է մի տհաճ տրամադրություն բոլոր այն մարդկանց հանդեպ, որոնք այստեղ անելիք չունեն: Խեղճ մայրիկս երևի նա նույնպես սպասողական վիճակի մեջ է: Երեկոյան ժամերը Ֆրիցի հետ ամենագեղեցիկն են: Կեսօրին գալիս է հեռագիր՝ տիկին Վինքլերի մահվան լուրով:

1917, Հունվարի 16

Թեյին հայտնվում են բժիշկ Լանգեն լեյտենանտ Ֆինքի (Finkh) և մեկ այլ գնդապետի հետ: Ընթրիքին նրանք այստեղ են և մինչև ուշ մնում են: Անհանգիստ օրեր են:

1917, Հունվարի 18

Բոլորը ավտոմեքենայով մեկնում են Հասանբեյլի (Hassanbeyli): Անչափ մեծ հաճույք եմ ստանում տան լուրջությունից:

1917, Հունվարի 20

Սպասողական վիճակը հիմա ավելի դժվար է դարձել, իսկ տան մեջ երթևեկը հաճախ չափից շատ է: Բալիկի գալուստը կարծես երկրորդական բան է դարձել, չկա այլևս սպասողականություն հանգիստ պայմաններում, իսկ ինձ շատ ուրիշ բաներ չեն հետաքրքրում:

1917, Հունվարի 22

Քույր Փաուլան ինձ կրկին քննում է և կրկին ասում՝ պետք է համբերել: Ֆրիցի հետ փոթորիկի և անձրևի տակ մեկ ժամով զբոսնում ենք: Գնալով կյանքը ավելի հաճելի է դառնում. ընտելանում ենք իրար, իսկ ես՝ խոհանոցի հավելյալ աշխատանքին:

1917, Հունվարի 23

Այժմ արդեն որոշակի նշաններ կան: Մենք կրկին գնում ենք զբոսնելու: Քույր Փաուլան և բժիշկը Հնթիլիում են: Կայարանում հանդիպում ենք գլխավոր շտաբի բժիշկ Քլագեսին (Klages):

1917, Հունվարի 24

Բժիշկ Լանգեն (Lange) որոշում է զիջերել Իսլահիեում, Ֆրիցը ձիով ուղեկցում է նրան: Քլագեսը (Klages) խոստանում է զիջերը գալ, սակայն չի գալիս: Երեկոյան ժամը 10-ին սկսվում են ցավերը, ժամը 1-ին գալիս է պտղաջրերի մի մասը: Բժշկին լուր է ուղարկվում:

1917, Հունվարի 25

Բժիշկ Լանգեն հայտնվում է առավոտյան ժամը 7-ին, հանդիպում է ունենում բժիշկ Քլագեսի հետ, և երկու կնախտաբանները միասին նախաճաշում են կողքի սենյակում: Կեսօրին անկողնից վեր եմ կենում: Երեկոյան կողմ պտղի պարկը պայթում է, և այդ պահից իրադրությունը գնալով ավելի լուրջ բնույթ է ստանում:

1917, Հունվարի 26

Ժամը 9-ից հետո Կառլֆրիդելին այստեղ է: Ֆրիցը վաղ առավոտյան արևածագի հետ ինձ բարձրացրեց լվացարանի վրա, դեմքիս դրվեց ինձ այնքան ցանկալի խորոֆորմի դիմակը, և այժմ Ֆրիցը միայնակ է հաղթահարում կիսամեռ վի-

ճակից վերակենդանացած մանչուկի վախը: Հենց որ զարթոնում եմ, լսում եմ առաջին ճիչը:

1917, Հունվարի 27

Ինչ գերերջանիկ մարդիկ ենք մենք: Ֆրիցը գրեթե միշտ վերնում՝ տանն է, երբեմն նստում է կողքիս, մահճակալի եզրին կամ ավելի հաճախ կանգնում է փոքրիկ մահճակալի առաջ և այնքան հմայված է մեր մանչուկով: Այսօր նա ստանում է իր առաջին կաթիկը և իրեն շատ լավ է պահում:

1917, Հունվարի 29

Քույր Փաուլան ծաղիկներ է բերում Ֆրիցի ծննդյան օրվա կապակցությամբ: Երեկոյան բժիշկը մեկնում է, սակայն խոստանում է կրկին գալ: Նրա հրաժեշտը բավականին հուզիչ է:

1917, Հունվարի 30

Ֆրիցն ինքն է կշռաքարեր պատրաստում, և հիմա կարելի է մանչուկին երբեմն-երբեմն էլ կշռել:

1917, փետրվարի 1

Քույր Փաուլան գիշերը մանչուկին տանում է իր սենյակը, և մենք էլ մի անգամ հիանալի քնում ենք: Սակայն ես անհամբերությամբ սպասում եմ մինչև առավոտյան մանչուկի կրկին երևալը:

1917, փետրվարի 3

Քույր Փաուլան մեկնում է շատ վաղ առավոտյան, և տանը կրկին լռություն է տիրում: Որքան եմ երագում, որ ունենամ իմ բալիկին անձամբ խնամելու ու հոգ տանելու իրավունքը:



Քելեր 1917. Կլարան, Կառլֆրիդեյին և սիրելի ծառա Յոզեֆին

1917, փետրվարի 6

Տանից ջերմ նամակներ եմ ստանում: Մայրիկը գրում է Ֆրիցի ծննդյան օրվա առթիվ և լի է մտահոգությամբ մեր երկուսի համար: Երանի թե նա կարողանար մի հայացք նետել ծննդկանի մեր հրաշալի սենյակից ներս և վայելեր այդ խաղաղությունը:

1917, փետրվարի 8

Ավելի լավ եմ զգում, և միզապարկս էլ կարծես հանդարտվել է, սակայն ինձ դեռ երկար ժամանակ չի կարելի անկողնից վեր կենալ: Լավագույն պահերը մեր զրույցներն են. Ֆրիցը մահճակալիս ծայրին նստած, իսկ մանչուկը՝ թներիս մեջ:

1917 փետրվարի 12

Ֆրիցը Վեթշտայնին (Wettstein) վերև՝ ճաշի է հրավիրում: Ներքևում կազմալուծում են ծառայողական երկաթուղին: Ճաշին գալիս են ավագ լեյտենանտ Շուբերթը (Schubert)¹⁶⁰ և դ-ր Շոլեն (Dr. Scholle): Հազիվ ենք ճաշն ավարտել, և ահա գալիս են քույր Փաուլան ու մեր բժիշկը: Եվ երեկոն հաճելի է անցնում: Ափսո՜ս, սենյակը շատ փոքր է և ծխով լցված: Մենք հեռանում ենք, իսկ Ֆրիցն ու բժիշկը ըմբռնվում են նոյենբուրգյան գինին գրեթե չափից ավելի:

1917, փետրվարի 13

Կեսօրից հետո բժիշկը մեկնում է: Տնտեսության մասին հոգսերը ինձ դեռ շատ են հոգնեցնում, և ինձ մոտ սկսվում է լացի նոպան, որը չեմ կարողանում զսպել:

¹⁶⁰ Ավագ լեյտենանտ Ռուդոլֆ Շուբերտ (1890-1962) (աղբ. Lexikon der Wehrmacht):

1917, փետրվարի 14

Քույր Փաուլան առավոտյան ձի է նստում և մեկնում Մարաշ:

1917, փետրվարի 16

Քույր Մայրիկը մեկնում է: Աստիճանաբար մեր տունը կրկին կարգի է բերվում: Սակայն երեկոները հաճույքով եմ անկողին մտնում: Կառլֆրիդեյի գլխիկը ուժեղ դուրս է տվել:

1917, փետրվարի 21

Բժիշկ Լանգեն գալիս է ճաշի ժամին: Նա ճանապարհվել է Մայսներ (Meissner)՝ փաշայի¹⁶¹ հետ: Ֆրիցը շտապ մեկնում է Իսլահիե, որպեսզի հասցնի նրան տեսնել:

1917, փետրվարի 24

Գոհարը (Kohar) հեռանում է մեզանից, և մեզ բերում են Եսթեր անունով մեկ ուրիշ կին:

1917, փետրվարի 26

Յոգելը (Joggel) կատակներ է անում մեր փոքրիկի հետ՝ դիմելով նրան թուրքերեն և անգլերեն. «What do you like? Turkish or English? O, he likes his milk and does not care for anything else. Joggel: so then he is a Turkish man. This one likes also only his bread»:

¹⁶¹ Հայնրիխ Աուգուստ Մայսներ (Heinrich August Meißner) – ծնվել է 1862 թ. հունվարի 3-ին Լայպցիգում, մահացել է 1940 թ. հունվարի 14-ին Ստամբուլում, գերմանացի ճարտարագետ և երկաթուղաշինարար, 1904-ից՝ օսմանյան փաշա: Թուրքական երկաթուղու պատմության մեջ Մայսների անունը գրված է ոսկե տառերով, իսկ կենսագրությունը՝ իսլամի հանրագիտարանում: Ֆրից Զիգրիստը հպարտ էր Մայսներ փաշայի հետ ունեցած բարեկամությամբ և մանրամասն նկարագրում է նրա կյանքի փառապանծ ուղին: Հմմտ. Sigrist-Clalüna, Ruedi, Teil 2, էջ 126-127:

1917, մարտի 3

Հիանալի օր է: Փոքրիկն անսահման կենսուրախ ու խելոք է: Ֆրիցը մեզ մոտ թեյի է բերում գլխավոր ճարտարագետ Մորֆին:

1917, մարտի 4

Ֆրիցը մի քանի օրով մեկնում է Ադանա՝ Կառլֆրիդեյի ծնունդը հյուպատոսարանում անձամբ հայտարարելու համար:

1917, մարտի 7

Ֆրիցն ինձ անակնկալի է բերում՝ կեսօրից առաջ տուն վերադառնալով, թեև հիասթափված Ադանա կատարած իր ճանապարհորդությունից:

Էնվեր փաշան է անցնում այս վայրերով:

1917, մարտի 12

Եսթերը գող է երևում և սուտ խոսել էլ զիտի: Եվ քանի որ չափն անցկացնում է, նա թռչում է: Տիկին Սարգիսն է գալիս օրը մի քանի ժամով:

1917, մարտի 16

☀ Կրկին հավաքում են հայերին: Ֆրիցին չի հաջողվում փրկել կաթնավաճառի (Sütçü)? ընտանիքին: Նրանց խոստանում են նույն ընկերության մեջ, սակայն այլ վայրում աշխատանք տալ: Ֆրիցը նրանց ապահովում է հացով, սակայն մեր սիրտը ցավում է նրանց համար: Երևի նրանք երբեք այլևս չտեսնեն իրենց սիրելի Քելեր գյուղը:

1917, մարտի 18

Տիկին Քյոփեղը և տիկին Քելերը գալիս են փոքրիկ Էրիկայի (Erika) հետ: Էնթիլիում նրանք չեն կարողացել եկեղեցու սարկավազին ետ պահել {աքսորից}:

1917, մարտի 19

Իսկ հիմա լսում ենք, որ մեր մոտից տեղահանված հայերը Ռաս Էլ Ային (Ras el Aïn) չեն հասել, այլ հանձնվել են առաջին հանդիպակաց կայմակամին ու ոչնչացվել։ Այսպիսով՝ մենք էլ, հույս ունենալով, որ նրանք նույն հիմնարկության [Բաղդադի երկաթգծի շինարարություն] մեջ աշխատանք են ստանալու, [նրանց համոզելով] մեղսակից եղանք թուրքերի ստախոսություններին¹⁶²։

1917, մարտի 21

Լսում ենք, որ Բաղդադը գրավվել է։ Ամեն օր դարձյալ զինվորներ են անցնում դեպի հարավ։

1917, մարտի 26

✿ Հիմնարկության պարտեզից երեկոյան կրկին տեսնում ենք հայերի մի ճամբար, որոնք եկել էին Յարիբաշիից (Yaribası)։ Նրանց մեջ է նաև սարկավագ Գիրգորը Էնթիլիից, մի ազնվագույն և տկարակազմ մարդ, որին (և նրա ընտանիքին) հիմնարկի պարոնայք չեն կարողացել ետ պահել տարեգրությունից։ Կրկին համակվում ենք թշվառների համար անսահման կարեկցանքով և այս գարշելի երկրի հանդեպ զայրույթով։

1917, մարտի 27

✿ Փոքրիկ Կառլֆրիդելին ծիծաղում և ճովողում է բազմոցի վրա դեպի մեր նախաճաշի սեղանը, մինչդեռ դրսում հովիտով անցնում են հայերը՝ իրենց հետ քարշ տալով նրա նման փոքրիկ էակներ։

Քույր Ռութը գալիս է կեսօրից հետո։ Դ-ր Արթուրը ճաշին մեզ մոտ է։

¹⁶² Այս վկայությունը ցույց է տալիս, թե ինչպես է ձևավորվել Կլարայի՝ թուրքերի բարոյականության մասին վերջնական և խիստ բացասական կարծիքը։

1917, մարտի 29

Բլուրից իջնում են դեռ անզգեստ արաբ նորակոչիկներ: Նրանցից մի քանիսը դասալքում են շարքերը՝ փախչելով դեպի դիմացի բլուրը: Հնչում են կրակոցներ, իսկ հետապնդող ժանդարմները հարձակվում են նրանց վրա: Ցավոք, կա մեկ մահացած, իսկ խեղճ վիրավորը, որին ետ են բերում, վաղը կախաղան է բարձրացվելու:

1917, ապրիլի 1

Դ-ը Շվենդենները հայտնվում է առավոտյան և մեզ հետ նախաճաշում: Այնուհետև Ֆրիցը Վինքլերի ու Մորֆի հետ մեկնում են Իսլահիե: Հիմա այլևս քողագերծվում է մեր ապագան: Ֆրիցը Բաղչեում պետք է փոխարինի ճարտարագետ Քլաուզին: Ուրեմն դեռ այստեղ ենք մնում մինչև այս տարվա աշունը: Կեսօրից հետո գալիս է Մեյերը (Meyer):

1917, ապրիլի 4

Կեսօրից առաջ կրկին հնչում են կրակոցները: Մերկ զինվորներ ժանդարմների ուղեկցությամբ կանգ են առնում հովտում: Մի քանի դասալիքների հետապնդում են ոտքով և ձիերով: Բարեբախտաբար, մի քանիսը ճողոպրում են: Կարելի է տեսնել, թե ինչպես են նրանք թփերի միջով փախչում: Երեքին սպանում են և դիակները քարշ են տալիս գորամաս, որտեղ դրանք ժամերով ընկած մնում են ճանապարհին, մինչև երեկոյան մեր զինվորները նրանց թաղում են: Վիրավոր մի զինվորի հարվածներով են ստիպում միանալ հեռացող գորամասին:

1917, ապրիլի 7

Նուրի (Nuri) բեյի տեղափոխման հրամանը:

1917, ապրիլի 8

Ներքևում՝ հովտում, շները քչվորում են մահացած դասալիքների հողաթմբերը: Ֆրիցը զինվորներին է ցած ուղարկում:

1917, ապրիլի 17

Նուրի բեյի կինը մեզ մոտ է հրաժեշտի այցով:

1917, ապրիլի 21

Լսում ենք դրսում տեղի ունեցող զարհուրելի ճակատամարտերի մասին:

1917, ապրիլի 27

Երևում է, այնուամենայնիվ, որ ուզում են մեզ աշնանը արձակել:

1917, մայիսի 8

Մորֆը գալիս է ճաշին՝ առանց տեղեկացնելու, շատ է զվարճանում մեր մանչուկով:

1917, մայիսի 11

Քույր Փաուլան և լեյտենանտ Ֆինքը գալիս են ճաշի:

1917, մայիսի 13

Քույր Փաուլան պատվաստում է Կառլֆրիդելիին լողանալուց հետո, և փոքրիկը սրտանց լաց է լինում:

1917, մայիսի 14

Քույրը մեկնում է Հալեպ:

1917, մայիսի 16

Գեներալ Ֆալքենհայնը (Falkenhain)¹⁶³ ավտոմեքենայով անցնում է այստեղով: Ֆինքը մեր մոտից հեռագիր է ուղար-

¹⁶³ Էրիխ ֆոն Ֆալկենհայն (Erich von Falkenhayn) – հետևակի պրուսական գեներալ, օսմանյան մարշալ և Առաջին աշխարհամարտում Պրուսիայի ռազմական նախարար, ինչպես և գլխավոր մեծ շտաբի պետ (աղբ. Wiki.): Հիշարժան է, որ 1915 թ. նոյեմբերի 3-ին Ֆալկենհայնը հեռագիր է ուղարկում ռազմական նախարար Էնվեր փաշային, որով նրան ստիպողաբար հասկացնում է՝ չդժվարացնել Բաղդադի երկաթուղու հետագա շինարարության համար հայազգի որակյալ մասնագետներին պահելու գործը:

կում և ապա ճաշում է ինձ հետ: Ֆալքենհայնի հատուկ գնացքի պատճառով Հալեպի փոստային գնացքը այնքան է ուշացել, և քույր Փաուլան ու Բեատրիսը¹⁶⁴ միայն երեկոյան են տուն հասնում: Շինարարության պետ Քրագեսն (Krages) ու կինը մեզ մոտ են:

1917, մայիսի 18

Քույր Փաուլան քննում է ինձ և գտնում, որ ամեն ինչ կարգին է:

1917, մայիսի 22

Ֆրիցը կրկին անկողնում է:

Յոգելի հետ խոսում ենք կրոնի մասին: Նրա ուսուցիչը, որը նրան դուրանը կարդալ է սովորեցրել, սուրբ մարդ է եղել: Նա իր ամբողջ ունեցվածքը նվիրաբերել էր, ապրում է կուսական անտառում և ուտում է միայն այն, ինչ նվիրում են իրեն: Նա կարող է նաև թույն ուտել, բայց չմահանալ: Յոգելը հավատացած է, որ իր ուսուցիչն իրեն միշտ տեսնում է: Նա չի ուզում ամուսնանալ, քանի որ դրամ չունի, և քանի որ, իր կարծիքով, կնոջը պետք է լավ պահել:

1917, մայիսի 27

Առավոտյան գյուղում լուսանկարում ենք: Կանայք կատաղած են: Իսկ նկարելու նյութերը շատ են: Մի երիտասարդ կին դիմում է փախուստի այն բանից հետո, երբ մեծերը

Ցավոք, նրա «հրամանը» ուշ տեղ հասավ: Հմմտ, McMeekin, Sen (2010), էջ 256, Kaiser, Hilmar (1998), էջ 89:

¹⁶⁴ Խոսքն այստեղ ավետարանական անխոնջ քույրեր Փաուլա Շեֆերի և Բեաթրիս Ռոնեթի մասին է: Նրանք հետևում էին բռնագաղթվածների քարավաններին և փորձում էին օգնել, որտեղ որ հնարավոր էր: Եթե քույր Փաուլան կարողանում էր օգնել Օսմանիե-Իսլահիե երկաթուղու տեղամասով անցնող խմբերին, ապա Բեաթրիսը դժվարություններ էր ունենում: Հալեպի տարածաշրջանում, որը, ըստ առաքելության, իրեն էր հանձնված, թուրք ժանդարմներն արգելում էին նրան օգնել հայերին: Հմմտ. Feigel, Uwe (1989), էջ 195, Gust, Wolfgang (2005), (1916-04-28-DE-002):

նրան զգուշացնում են: Կեսօրից հետո տեսնում ենք գնչուներ իրենց վրանները խփելիս: Նաև ծեծի մի տեսարան, երբ տղամարդը ծեծում է իր կանանցից մեկին և ստիպում նրան աշխատել, մինչդեռ ինքը պազում և դիտում է նրան: Մի պատանի բռնում է այնտեղից անցնող ձիերին և նրանց հետ վայրի քառատրոփով վերադառնում:

Հովտում հանկարծ տեսնում ենք երկու միայնակ երեխաների թափառելիս, ապա միասին լուռ կանգնած, մեկը՝ մի քիչ ավելի մեծ պատանի, մյուսը՝ նրա քառամյա եղբայրը: Մենք նրանց վերև ենք կանչում, հաց ենք տալիս: Նրանք քրդեր էին, որոնք ճանապարհին կորցրել էին իրենց ծնողներին և այժմ փնտրում են նրանց: Ֆրիցն ուզում է, որ Իբրահիմը նրանց ուղեկցի, մեծը սկսում է լաց լինել, իսկ փոքրը, նրան տեսնելով, ավելի բարձրաձայն է հեկեկում: Նրանք ուզում են մենակ շարունակել ճանապարհը, ոչ մի դեպքում՝ զինվորի հետ: Այսպիսով՝ մենք նրանց Աստծու հույսին թողնում ենք, որ գնան: Շուտով տեղատարափ անձրև է սկսվում:

1917, Հունիսի 14

Զգգեստավորված դասալիքներ՝ ուղիղ Վիթիգների տան ներքևում թաքնվում են թփերի տակ: Կրակոցներ են հնչում: Յոզեֆի հետ փոքրիկի մահճակալը մի կողմ ենք տանում... Երբ բոլորը հեռանում են, մեկը դուրս է գալիս... Եվ ահա կրկին հայտնվում են ժանդարմները, նրա վրա կրակում են և հրացանի կոթով դաժանորեն հարվածում: Երկուսը աննկատ են մնում և ավելի ուշ սողում են մի ժայռի տակ՝ փախչելով Իսլահիեի ուղղությամբ:

1917, Հունիսի 22

Կապոց է գալիս տնից, սակայն ես չեմ բացում: [Փոստից եկած] տեղեկությունը, որ մի տուփ վարսակի այլուրը դուրս է ընկել կապոցից, ինձ շատ բան է ասում: Երեկոյան գալիս է Ֆրիցը քույր Մարիի (Marie) հետ: Տիկին Ֆոն Դոբելերը (von

Dobbeler) երեք երեխաների հետ գիշերում է մեզ մոտ: Մենք զբաղվում ենք կապոցի հարցով նրա՝ երեխաներին քնեցնելու ընթացքում:

1917, Հունիսի 26

Փայտոջիլ եմ գտնում փոքրիկի մահճակալի մեջ, որը և եռացած ջրով մշակվում է լողարանի տաշտում:

1917, Հուլիսի 5

Լողարանից դուրս գալով՝ մոտենում եմ Կառլֆրիդելիի մահճակալին, որտեղ Ֆրիցն է կանգնած: Ահա այստեղ ինձ են պարզվում երկու ձեռքեր՝ լի կարմիր մեխակներով, իսկ երբ միասին ճաշասենյակ ենք մտնում, սեղանին տեսնում եմ վարդերի մի հսկա, հիասքանչ փունջ: Արևաշող օր է: Ճաշին Ֆրիցին հաջողվում է մի անուշիկ երգ երգել: Ցավոք, փոքրիկի աղիքները, առաջին անգամ խանգարված լինելով, ինձ հոգս են պատճառում:

1917, Հուլիսի 9

Երեկոյան, առանց տեղեկացնելու, հայտնվում է պարոն ֆոն Դոբելերը (von Dobbeler)¹⁶⁵ մի բուժքրոջ, 3 սպասուհու և 3 զինվորի հետ: Տնակս լեփ-լեցուն է:

1917, օգոստոսի 1

Ամբողջ օրը անց եմ կացնում Ֆրիցին սպասելով: Երեկոյան նույնիսկ գնում ենք նրան դիմավորելու, բայց նա չի գա-

¹⁶⁵ Բենո ֆոն Դոբելեր (Benno von Dobbeler) – Ադանայի վիլայեթում Հարունիյեի (Haruniye) գերմանական գիշերօթիկ դպրոցի և որբանոցի ղեկավարը: Նրա դպրոցի աշակերտները մեծ մասամբ հայեր են, շատերը 1909 թ. հայկական ջարդերի որբուկներ: Նա բողոքում է Գերմանիայի դեսպանին, որ թուրքերն ուզում են բռնագրավել իր դպրոցը: Դոբելերը նկարագրում է տեղահանվածների թշվառ վիճակը՝ Կայսերական Գերմանիայի անտարբերությունը համարելով անընդունելի, քանի որ այն վնաս էր հասցնում Գերմանիայի անվանն ու հեղինակությանը: Նա խնդրում է Գերմանիայի դեսպանին միջոցներ ձեռք առնել, որ գոնե դաժանությունը մեղմվի: Հմմտ. Gust (2005), էջ 44, 75, 199, 253, 278:

լիս: Արդեն ժամը ութն անց կես է և սկսում եմ սարսափելի վախենալ: Բայց ահա փողոցից լսվում է նրա սուլոցը, փառք Աստծու, և երեկոն գեղեցկանում է:

1917, օգոստոսի 6

Այս շաբաթ մեր տունը մի անգամ հրդեհավտանգ վիճակում էր: Տնակը բռնկվել էր շոգեքարշի կայծերից, բլրի ամբողջ խոտը այրվում էր:

1917, օգոստոսի 13

Երեկոն լցվում է մորելիների, բզեզների և թիթեռների բզզոցով. բոլորը գալիս են դեպի լույսը: Նախասենյակում կար եմ անում, հանկարծ առաստաղից ինչ-որ բան է ընկնում աշխատանքիս վրա, և երբ ես գնում եմ, տեսնում եմ մի կարիճի և մորելիի մենամարտը: Հաղթահարելով սարսափը՝ գնում եմ կրակի ունեւիճի բերելու:

1917, օգոստոսի 17

Առաջին շոգ օրն այստեղ վերնում: Ֆրիցը տուն է գալիս ուրախալի լուրով, որ ինժեներ Քլաուսը վերադարձել է արձակուրդից:

1917, օգոստոսի 23

Գալիս են Մորֆն (Morf) ու տիկին Ռիցին (Rizzi)՝ վայելելու այստեղ՝ վերնում տիրող անդորրը:

1917, օգոստոսի 26

Խաղաղ կիրակի՝ առանց այցելությունների: Երեքս էլ գոհ ու երջանիկ ենք:

1917, օգոստոսի 30

🌸 Ձիավարում ենք դեպի Հասանբեյլի: Մի բլրի շուրջ տարածվում է գյուղը, ցավոք, հանրուղու փոշուց լրիվ սպիտակած, սակայն դրա մեջ կան թաքնված հրաշալի պարտեզներ ու տնակներ: Մի այլ բլրակի վրա ամեն կողմից տեսանե-

լի է հայկական եկեղեցին՝ այժմ ավերակների մի կույտի վերածված: Հայկական բոլոր տները լքված փլատակներ են: Թզենիներ, եգիպտացորենի արտեր, քչքչան առվակներ¹⁶⁶:

1917, սեպտեմբերի 7

Գալիս է քույր Փաուլան և մեզ հետ ընթրում է: Նրա սիրալիր ողջույնին փոքրիկը պատասխանում է լայն ժպիտով:

1917, սեպտեմբերի 8

Գալիս են քույր Շեֆերը, Փաուլ ֆոն Դոբելերը, դ-ր Էշը (Dr. Esch), մի այց մյուսի հետևից:

1917, սեպտեմբերի 10

Ձիավարում ենք ավտոմեքենաների ճամբարին կից բլրի վրա: Հիանալի տեսարան է բացվում դեպի Տավրոսի (Taurus) լեռների վրա: Մեզանից ցած՝ հովտում՝ հայկական մի բերդի ավերակներն են, քառանկյուն, և ամեն անկյունում՝ մի աշտարակ:

1917, սեպտեմբերի 14

Առավոտյան Յոգելը հայտնաբերում է մի օձ, որը պահված էր մնացել էր շշերի պատյաններում՝ Կառլֆրիդեյլի մահճակալին շատ մոտ: Ափսո՛ս, որ մինչ նա փայտ կբերեր, օձը փախավ:

1917, սեպտեմբերի 16

🌸 Ձիավարում ենք դեպի Հասանբեյլի (Hasanbeyli), այնտեղից էլ՝ սարերի թիկունքում գտնվող մի վայրի հովիտ՝ հայկական բերդով, որը վեր է խոյանում Մամուրի հարթավայրում, և որից տեսարան է բացվում լեռների վրա: Նախ-

¹⁶⁶ Այստեղ Կլարա-ականատեսը գեղարվեստական ոճով տալիս է մշակութային ցեղասպանության մի պատկեր՝ հայ գյուղի կործանման եղերերգությունը 1917 թ.:

կինում այս շրջակայքում պետք է որ հացահատիկի դաշտեր լինեին, մի աղբյուր է պղպշում չինարու տակ, որի հսկա բնի խոռոչը ժամանակի ընթացքում մի ընդարձակ դարպասի տեսք է ստացել:

1917, սեպտեմբերի 18

Երեկոյան արագ ձիավարում եմ դեպի բարձունքը Ֆրիցին ընդատաջ: Այստեղից երևում է Միսաքայի ուղեկամուրջը: Հիանալի պարզ տեսարան է:

1917, սեպտեմբերի 23

Այցելում ենք գնդապետ Ֆինքին: Խոսվում է երկաթուղային դժբախտ պատահարի մասին Ռաջուի ու Հալեպի միջև, ինչպես նաև Հայդարփաշայի աղետի մասին: Այնտեղ ռազմամթերքի մի ամբողջ փոխադրում հողս է ցնդել:

1917, նոյեմբերի 15

Բժիշկ Հովնանյանը մեզ մոտ ճաշի է: Կրկին ունեմ աշնանային աստղածաղիկների իմ փունջը:

1917, նոյեմբերի 22

Ֆրիցն ու քույր Փաուլան ձիերով մեկնում են Հասանբեյլի: Հանգիստ օրը փոքրիկի հետ շատ գեղեցիկ է:

Երեկոյան երկար զրուցում ենք քույր Փաուլայի հետ, որը պատմում է Դամասկոս (Damaskus) կատարած իր ճանապարհորդության մասին: Տխուր տպավորություն են թողնում նրա նկարագրություններն այն մասին, թե ներկայումս ինչպիսի ցոփ կյանք են վարում գերմանացի սպաները շրջակա քաղաքներում:

1917, նոյեմբերի 24

Քույր Փաուլան մեկնում է: Երկինքը պայծառ է, սակայն մշուշի մի հրաշալի ծով է տարածվում հարթավայրի վրա: Այդ տեսարանում Ֆրիցն ու փոքրիկը քույր Փաուլային ու-

ղեկցում են մինչև ավտոմեքենան, իսկ վերադառնում են բարձրացող մշուշի տակ:

1917, նոյեմբերի 29

Վերջապես խնդիրն իր վերջնագծին է հասնում: Այստեղ ենք մնալու մինչև 1918 թ. ապրիլի մեկը՝ երկաթուղու բացման ու հանձնման օրը, և Ֆրիցը պարտավոր է ավարտել նաև Էնթիլիի աշխատանքները: Դրանից հետո միայն կարող ենք դեպի տուն ճամփորդել: Չափազանց գոհ ենք այս որոշումից:

1917, դեկտեմբերի 3

Արդեն անկողնում ենք, երբ հեռագիր ենք ստանում Ռուսաստանի հետ զինադադարի մասին: Նվազագույն գաղափարը խաղաղության մասին, և մեր սրտերը բացվում են:

1917, դեկտեմբերի 13

Բժիշկ Լանգեի մի ենթասպա և մի զինվոր ներկայանում են մեզ մոտ դեպի Մարաշ կատարելիք ճանապարհորդությունից առաջ և ճաշին մեզ հետ են:

1917, դեկտեմբերի 14

Երեկոյան պատրաստում ենք նարինջի ըմպելիք: Երբ մենք խոհանոցում ենք, գյուղում կրակոցներ են հնչում: Ավազակները¹⁶⁷ գալիս են՝ ցրտից և քաղցից հալածված, հաճախ մեզ շատ մոտենալով:

1917, դեկտեմբերի 23

Ձնաբուրք շառաչում է տնակի շուրջը, և ստեղծվում է Ծննդյան տոների տրամադրություն: Մայրիկից նամակ եմ

¹⁶⁷ Իր օրագրի վերջում Կլարան հաճախ և վախով է խոսում «ավազակների» մասին՝ առանց նշելու, թե ովքեր են այդ ավազակները: Պետք է ենթադրել, որ դրանք սարերը փախած հայ վրիժառու տղամարդիկ են:

ստանում, օգոստոսից ի վեր առաջին նամակը: Ընթրիքից հետո զարդարում ենք ծառը:

1917, գեկտեմբերի 24

Օրը լցվում է փոքրիկ նախապատրաստություններով: Փոքրիկն իր մահճակալում տոնածառից բաժանված է վարագույրով: Վերջապես ժամը 4-ին մարդիկ բակում ստանում են իրենց խմորեղեն ու դդումի պտղանուշը: Այնուհետև ես և փոքրիկը անհետանում ենք ննջարանում, մինչև որ հայրիկը հնչեցնում է զանգը: Փոքրիկի դեմքը փայլում է երջանկությամբ...

1917, գեկտեմբերի 31

Առավոտյան Այրանից գալիս են Հոֆմանները: Կեսօրին բոլորը քնում են: Ես պատրաստվում եմ կիրակի օրվա համար. նորից վառում եմ մոմերն ու մինչև բոլոր լույսերը վառելը Կառլֆրիդելիի հետ նստում տիկին Հոֆմանի կողքին, որն իրեն լավ չի զգում: Փոքրիկի աչքերը կրկին փայլում են երջանկությունից: Այս անգամ Նոր տարվան սպասում ենք չորսով¹⁶⁸: Սակայն ամբողջ խորությամբ չենք զգում պետք եղած ջերմությունը:

1918, Հունվարի 3

Ամեն տեղից ավելորդ վաճառվելիք իրեր եմ փնտրում, և անհավատալի է, թե ինչ գներ են վճարում: Հիմա արդեն սկսում ես հավատալ, որ այս անգամ մեր տունդարձը իրողություն է:

1918, Հունվարի 5

Մեզ մոտ իսկական անձրևային շրջան է: Յոգելը փոքրիկի հետ նայում է օրացույցը, ջերմորեն շաղակրատում նրա հետ. «This is your house, where is the bathroom, you are a great

¹⁶⁸ Կլարան այստեղ ակնարկում է իր երկրորդ հղիությունը՝ անտեղյակ այն բանից, որ ոչ թե երկրորդ երեխայի է սպասում, այլ եռյակի:

Sir then and everybody is telling «salom» to you. Where is your wife?»: Սակայն նրանք երկուսն էլ գրքին նայում են հակառակ կողմից:

1918, փետրվարի 2

Քանի հաստատվել է աշխատանքային պայմանագրի ավարտման լուրը, խոսում և մտածում ենք միայն մեկնելու մասին, և աստիճանաբար ամեն ինչ պատրաստվում է:

1918, ապրիլի 2

Ապրիլյան առաջին օրերին բնակելի դարձված ապրանքատար վագոնով և մեկ թուրք զինվորի ուղեկցությամբ ճանապարհ ենք ընկնում դեպի Ստամբուլ: Բոզանթիում (Boszanti) Յոզեֆին հանձնում ենք բժիշկ Լանգեին:

1918, ապրիլի 3

Օրագիրը մնում է Ստամբուլում Էդ. Հենիի (Ed. Hännny) մոտ, մինչև...:

Օրագրի հավելված (Memorandum)¹⁶⁹

1916, Հունվարի 21 (Հավելյալ տեքստ)

Հազիվ է Ֆրիցը ձի նստել ու մեկնել Իսլահիե, տեսնում եմ սպայի մի օգնականի՝ երկու գեղեցիկ ձիերով կանգնած մեր դարպասի առաջ, մի բան, որ արթնացնում է իմ հետաքրքրությունը: Քիչ հետո մեր բարձունքի փոքրիկ հրապարակում տեղի է ունենում մոտ 40 զինվորից բաղկացած մի հավաք, և Էնթիլիից ձիով ժամանած սպան՝ իր տաքուկ մուշտակե վերարկուով, վերամբարձ կեցվածքով, սկսում է վերուվար անել խմբի մեջ՝ մտրակը թափահարելով հյուսիսային սառը քամու տակ սարսռացող ցնցոտիավոր մարդկանց վրա: Պատուհանից լսում եմ, թե ինչպես է նա նրանց վրա գոռգոռում, բայց քանի որ ոչինչ չեմ հասկանում, հետևում եմ նրա շարժումներին՝ հասկանալու համար, թե ինչ է տեղի ունենում դրսում: Շուտով նրանց բաժանում են երկու խմբի. մի կողմում՝ մոտ տասը, մյուսում՝ երեսուն մարդ: Սպայի հրամանով օգնականը սպասող ձիերի սանձերը նետում է մեր տան պահակի կողմը, մեր բակում ինչ-որ բան փնտրելով՝ մի քանի անգամ դեսուդեն է վազում, մինչև փնտրածը գտնում է: Նա դուրս է քաշում ցանկապատի փայտե ցցերից մեկը, մեկ ուրիշն էլ մեր ծերուկ Բեքիրն է բերում, և երկուսն էլ մատուցվում են սպային:

Եվ ահա հետևում է հաջորդ հրամանը. մեծ խմբի զինվորներից մեկը դուրս է գալիս, իջնում ծնկների ու թաթերի վրա, և նրա վրա աջից ու ձախից իջնում են հարվածները: Այժմ նա դժվարությամբ ոտքի է կանգնում, և ահա նրանից անմիջապես հետո երկրորդ զինվորն է առաջ գալիս, և այսպես մեկը մյուսի հետևից՝ ոմանք փոքր-ինչ տատանվելով, ուրիշներն ավելի մեծ աճապարանքով՝ տանջանքից հնարա-

¹⁶⁹ Հաջորդող երկու տեքստերը վերծանված են Կլարայի օրագրի հավելվածից (*Memorandum*):

վորինս ավելի շուտ պրծնելու համար: Սա մի խայտառակ, գարշելի տեսարան է: Ամբողջ գործողությունը մի պահ ընդհատվում է, մինչև սպան ազատվի մորթե վերարկուից: Սակայն առանց վերարկուի էլ նա ծանր աշխատանքից բավական շոգում է, և լավ է, որ գոնե օգնականն է այստեղ. նա կարող է օգնել, և նրանք կարող են իրար փոխարինել: Հենց որ այդ գործընթացը վերջանում է, սպան զինվորներին մեղմ արտահայտությամբ ճառախոսություն է անում: Ապա այդ բռնակալը կրկին սահում է իր մորթե վերարկուի մեջ, վառում է ծխախոտը, ցատկում ձիու վրա ու քառատրոփ անհետանում: Մինչ այդ փոքր խմբին խինին (Chinin) են բաժանում:

Սա կոչվում է հիվանդներին խորհրդատվություն: Սպաներից մեկը, արտաքինին նայելով, որոշում է մարդուս հիվանդ լինելն ու չլինելը:

Այդ օրվա նման միջադեպեր հաճախ են տեղի ունենում: Վերջին անգամ էլ իրենց հետ մի բժիշկ էր եկել, որը դուրս գցված ճողվածքով (հերնիայով) մի զինվորի անաշխատունակ հայտարարեց: Երբ վերջինս այդ վկայականով ներկայացավ սպային, սպան նրան պատասխանի փոխարեն մի լավ ծեծի ենթարկեց:

1916, Հունիսի 17 (Հավելյալ տեքստ)

Վաղ առավոտվանից փոքր երեխաների աղաղակը մեր ուշադրությունն է հրավիրում բռնագաղթվածների մի խմբի վրա ներքևում՝ փողոցին կից հովտում: Ահա նստած են նրանք կիզիչ արևի տակ, սոված ու ծարավ: Երեխաներն անդադար լաց են լինում: Նրանց հաց և ջուր ենք ուղարկում, որից հետո տիրում է լռություն: Նրանք երևի քնել են: [Մենք մոտենում ենք նրանց և] մի կողմի վրա, թփի տակ հայտնաբերում ենք ժանդարմին, որը հսկում է նրանց: Այնտեղ բացառապես կանայք ու երեխաներ են, հիվանդներ, որոնք պետք է հնթիլիի հիվանդանոցը գնան, և այստեղ սպասում

են գնացքի: Սակայն ոչ մի գնացք չի գալիս: Ամեն ինչ դադարեցված է: Ուրեմն Ֆրիցը որոշում է մինչև երեկո նրանց համար գրաստներ բերել տալ: Այդ մասին տեղեկացնում ենք ժանդարմին Ճիշտ այն պահին, երբ նա պատրաստվում էր ստիպել նրանց, մարդկանց, որոնք 10 քայլ չեն կարող գնալ և ճանապարհ ընկնել առանց խորտակվելու: Ահա և գալիս են կենդանիները, սկզբում, ցավոք, միայն երկուսը:

Առջևից պետք է քայլեն կանանցից երկուսը, որոնք ավելի ուժեղ են, երեխաներն էլ մանր քայլերով առջևից են գնալու: Միայն մի պատանու նստեցնում են կենդանիներից մեկի վրա՝ բռն էլ հետը: Մյուսի վրա ցատկում է ինքը՝ ուստիկանության երիտասարդ, ուժեղ ծառայողը: Բայց ահա այդ երկու կանայք ետ են գալիս. նրանք չեն կարողացել շարունակել ճանապարհը: Ետ մնացած մյուս կանայք արդեն պառկած են գետնին: Կարծես թե նրանք բոլորը մահամերձ են: Մի մանկիկ անդադար հեծեծում է: Կանանցից ամենաերիտասարդը մեզ հետ վերև է գալիս, և մենք նրան ապուր ենք տալիս: Այդ ընթացքում Ֆրիցն իր տրամադրության տակ յոթ կենդանի ևս ունի: Ճիշտ այն պահին, երբ պատրաստվում էին դրանց վրա տեղավորելու հիվանդներին, անսպասելիորեն իր ձիու վրա հայտնվում է ուստիկանապետը: Նա առանց հապաղելու հրամայում է դադարեցնել գործողությունները և բոլոր կենդանիներին քշում է վեր: Այժմ Ֆրիցը հակառակվում է նրան: Ֆրիցի հարցին, թե ինչու նա թույլ չտվեց օգնել մարդկանց, հնչում է պատասխանը՝ նրանք շատ ծանր հիվանդ են: Հետո նա դիմում է տեղափոխող զինվորներին. «Եթե հիմա անմիջապես չգնաք, վաղն այս ճիպոտը ձեր մարմնի վրա էք զգալու», - ասաց պարետը բարձրաձայն: «Ձեզանից յուրաքանչյուրը կխարազանվի, եթե նրանց անմիջապես հիվանդանոց չհասցնեք»: Ապա Ֆրիցը ուստիկանապետին հարցրեց, թե արդյոք նա կարծում է, որ ինքը ցանկանում է իր տան առաջ այս խեղճերի մահը տեսնել կամ ամբողջ գիշեր նրանց աղիողորմ ճիչերը լսել: Դահճի

օգնականը պատասխանում է. «Չկարծես, որ իմ սիրտն էլ կտոր-կտոր չի լինում, բայց չէ՞ որ դա ինձ տրված հրաման է»:

Մութն ընկնելուն պես տեսնում ենք, թե ինչպես են խեղճերը ճանապարհ ընկնում: Ինչպիսի՞ մարտիրոսություն: Եվ միտքս են գալիս Հերովդես թագավորն ու Ներոն կայսրը, և թե ինչպես մեզ՝ երիտասարդ աղջիկներին, թույլ չէին տալիս կարդալ նրանց մասին՝ նման սարսափների մասին երբեք չտեղեկանալու նպատակով: Իսկ հիմա սեփական սիրտս է ապրում այդ ամենը այս դաժան իրականության մեջ:

ՁԵԿՈՒՅՑԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կլարայի ձեռագիր երկու գրությունները՝ օրագիրն ու ականատեսի վկայությունը կամ զեկույցը, գրված են նույն գոթական ձեռագրով (*Kurrentschrift, gotische Schrift*), սակայն իրարից տարբերվում են ձևով, բովանդակությամբ և ոճով: Մինչդեռ օրագիրը բաղկացած է առանձին, թուցիկորեն գրի առնված, հաճախ դժվարընթեռնելի բազմաթիվ հակիրճ արձանագրություններից, ականատեսի վկայությունը մի կուռ, բովանդակությամբ ավելի հարուստ, 15 էջանոց մի տեքստ է, որը նաև գրավիչ է իր գեղագրությամբ: Ակներև է, որ այս տեքստը ստեղծվել է ժամանակի և աշխատանքի ներդրումով: Ի տարբերություն օրագրի, որի գրառումները մեծ մասամբ առարկայական են և չեզոք, ականատեսի վկայությունը զգացմունքային և հուզիչ մի շարադրանք է: Նյութի բազմազանության փոխարեն օրագրում վկայությունը նվիրված է միայն մեկ թեմայի՝ Հայոց ցեղասպանությանը, որի ընթացքն իր տարբեր դրսևորումներով Կլարա Զիգրիստ-Հիլթին մոտիկից է ապրել, որտեղ սակայն, ինչպես ինքն է ասում, նա անգոր է եղել որևէ բան փոխելու և կամ ինչ-որ չափով օգտակար լինելու: Եվ ահա Կատմայի համակենտրոնացման ճամբարն այցելելուց և այնտեղ հայերի թշվառությունը տեսնելուց հետո Կլարայի խիղճը տանջում է, և նա գրում է. «Համակվում ես ամոթով և այդ թշվառության մեղսակիցը լինելու զգացումով. թշվառություն, որը նվազեցնելու համար մատը մատին չես կարող խփել»: Հուսալով, որ ցեղասպանության մասին խոսուն մի վկայություն գրելը կարող է թեթևացնել իր խղճի վրա ծառացող բեռը, նա իր գրչին ազատություն է տալիս:

Վկայության բնագրի հենց առաջին էջին հայացք նետելիս ընթերցողի աչքից չի կարող վրիպել, որ «Ամառ 1915» վերնագիրը Կլարա Զիգրիստ-Հիլթիի ձեռքով գրված չէ: Տարբերվում է ձեռագիրը նաև զեկույցի վերջում (եզրափակիչ

նախադասությունը և անմիջապես հետո բերված տեղեկությունները՝ հեղինակի անունը, տեքստի ստեղծման վայրը և ժամանակը): Աչքի է ընկնում նաև թանաքի գույնի տարբերությունը: Ակնհայտ է, որ տեքստային որոշ մասեր հետագայում են ավելացված: Այս ամենը հիմք է տալիս ենթադրելու, որ սկզբում Կլարան զեկույցի առկա մասը խնամքով մաքրագրել է, սակայն այն անավարտ էր մնացել: Այդ իսկ պատճառով բացակայել է նրա ձեռքով գրած վերնագիրը, որի պակասը լրացվել է հետագայում որդիներից մեկի՝ Ռուդիի կողմից¹⁷⁰: Ինչ վերաբերում է տեքստին ավելացրած եզրափակիչ նախադասությանը, ինչպես նաև տեքստը ամփոփող տվյալներին, ի վերջո ես համոզվեցի, որ ձեռագիրը Կլարայինն է, բայց գրված է բուն նյութը մաքրագրելուց շատ տասնամյակներ անց, երբ Կլարայի ձեռագիրն իր ապրած երկար կյանքի ընթացքում աստիճանաբար փոխվել էր¹⁷¹: Ահա այդ տողերի թարգմանությունը. «Գրված է 1915-ին Քելերում, այժմ՝ Ֆնզիփաշա, Ամանոսի տարածաշրջանում, Բաղդադի երկաթուղու մոտ, մայրիկի՝ Կ. Զիգրիստ-Հիլթիի կողմից»:

Կլարայի զեկույցը նրա օրագրի շատ արժեքավոր լրացումն է: Այս երկու տեքստերը՝ օրագիրն ու զեկույցը, միասին կազմում են Հայոց ցեղասպանության մասին հավաստի և անաչառ վկայություն, որը մեզ հասել է վստահելի նույն ականատեսի կողմից: Այդ երկու գրվածքների համար հայերը

¹⁷⁰ Դրա մասին ես տեղեկացա իր հոր՝ Ռուդիի ձեռագիրը լավ իմացող Կլարայի թոռնուհիներից մեկից: Վերջինս, սակայն, խնդրեց իր անունը չնշել:

¹⁷¹ Վկայության վերջում տասնամյակներ հետո ավելացված նախադասությունների ձեռագրի հեղինակի ինքնությունը պարզելու հարցում ինձ օգնեցին Կլարայի երկու թոռնուհիները: Նրանք հաստատեցին, որ տարիներ անց ավելացրած տեքստը գրված է իրենց մեծ մոր՝ Կլարայի կողմից: Այդ հարցում ես համոզվեցի, երբ ինքս էլ հետազոտեցի տարիների ընթացքում Կլարայի ձեռագրի աստիճանական փոփոխությունը:

հավերժ երախտապարտ պիտի լինեն շվեյցարուհի Կլարա Զիգրիստ-Հիլթին:

Որդիներից Ռուդին իր մոր վկայության վերաբերյալ թողել է ձեռագիր տեղեկագրություն, որը հաստատում և լրացնում է նախորդ գրությունը. «Գրված է իրադարձությունների վայրում՝ Քելերում ողբերգական եղելությունների ժամանակ՝ Թուրքիայում: Սա (Օսմանյան կայսրության փլուզումից հետո) ռազմական նախարար Էնվեր փաշայի օրոք թուրքական կառավարության նախաձեռնած հայ ժողովրդի տեղահանությունների նկարագրությունն է»¹⁷²:

Եթե այս տեղեկությունը չգար այնպիսի հավաստի աղբյուրներից, ինչպիսին են ինքը՝ զեկույցի հեղինակ Կլարան (թեև շատ հառաջացած տարիքում), և նրա որդին՝ Ռուդին, ավելի շուտ հակված կլինեինք այդ վկայությունը ժամանակի և տեղի առումով այլ կերպ տեղավորելու, ոչ թե այդպես, ինչպես հասել է մեզ, այսինքն՝ կապված 1915 թ. դեպքերի և Քելերի հետ: Ավելի դյուրին կլիներ Կլարայի ականատեսի այդ վկայության ստեղծումը վերագրել ոչ թե 1915 թ. իր՝ Թուրքիայում եղած ժամանակ, այլ 1918-ից հետո ընկած ժամանակաշրջանին՝ արդեն Շվեյցարիա վերադառնալուց հետո, երբ Կլարան կարող էր ավելի ազատորեն պատմել Ամանոսի տարածաշրջանում տեսած ու ապրած արհավիրքների մասին, ինչպես և անում է: Այդ շարադրանքի համար նա կարող էր հենվել իր օրագրի վրա, որի մեջ ամեն օրվան հատկացված տեղը միշտ չէ, որ բավարարել է նրան: Հենվելով այդ ժամանակագրականորեն հավաստի և ճշգրիտ տվյալների վրա՝ միայն իր հայրենի Շվեյցարիայում նա պիտի կարողանար գրել ցեղասպանությանը նվիրված այն զգայացունց զեկույցը, որը մենք հիմա ունենք մեր առաջ: Զեկույցի և օրագրի մեջ հանդիպող զուգահեռները, այսինքն՝

¹⁷² Քաղված Ռուդի Զիգրիստ-Կլայունայի (Ruedi Sigrist-Clalüna) ձեռագիր նշումներից:

տվյալների կրկնությունը, հաստատում են իմ այս ենթադրությունը: Քաջատեղյակ լինելով Առաջին աշխարհամարտի ժամանակ Թուրքիայում տիրող քաղաքական իրավիճակի մասին՝ ինձ համար դժվար է պատկերացնել, որ այս զեկույցը գրվել է Թուրքիայում, քանի որ այնտեղ ամեն գրվածք գտնվում էր պետական խիստ գրաքննության տակ: Կլարայի պես շրջահայաց մի կին կտեսներ թուրք կառավարության դեմ նման քննադատական զեկույց գրելու վտանգը և կզգուշանար դրանից: Մանավանդ երկիր ժամանելու առաջին իսկ ամիսների ընթացքում՝ 1915-ի ամռանը, երբ նրա համար ամեն ինչ նոր էր, և, ինչպես գիտենք, նա միայն աստիճանաբար կարողացավ հասկանալ, թե ինչ էր կատարվում իր շուրջը: Ի դեպ, նա այն ժամանակ արդեն ծանրաբեռնված էր շատ գործերով, այդ թվում՝ իր ամենօրյա օրագրություններով: Հարց է ծագում նաև, թե ինչպես է նա մինչև ամուսնու հետ Շվեյցարիա վերադառնալը երեք տարի շարունակ թուրք իշխանությունների դեմ խիստ մեղադրական այդ գրությունը պահել իրենց տան մեջ, որտեղ գտնվում էր Բաղդադի երկաթուղու վրա ծառայող իր ամուսնու գրասենյակը, և որտեղ ամեն օր երթևեկում էին օտար, մեծ մասամբ թուրք այցելուներ:

Ինչևէ, այժմ մեր առաջ է դրված այդ տեղեկությունը, և մենք պարտավոր ենք այն որպես իրողություն ընդունել: Այդ դեպքում մենք միայն կարող ենք հիանալ Կլարա Ջիգրիստ-Հիլթիի խիզախությամբ և գաղտնապահությամբ: Մակայն տարակուսանքներս շատ են: Ահա դրանցից գլխավորը. իր օրագրում Կլարան արձանագրել է մեծ մասամբ ամեն ինչ, մանավանդ այն ամենը, ինչ տվյալ օրը կարդացել կամ գրել է: Մակայն ոչ մի տեղ նա իրեն թույլ չի տվել Թուրքիայում իր օրագիր վարելու երեք տարիների ընթացքում անգամ մեկ բառով ակնարկել այս հատուկ վավերագրության մասին, նույնիսկ այն ժամանակ, երբ երիտասարդ ընտանիքը 1918 թ. ապրիլին Շվեյցարիա վերադառնալիս հատում էր թուրքա-

կան սահմանը: Ինչպես գիտենք, այդ ժամանակ նրա օրագիրը պատրաստ էր և պահ տրվեց վստահելի մարդկանց, հենց Ստամբուլում գտնվող բարեկամների մոտ՝ «մինչև ...» ավելի բարվոք ժամանակներ: Նա իր օրագրի վերջին՝ 1918 թ. ապրիլի 3-ի գրության մեջ նշում է. «Օրագիրը մնում է էդ. Հենիի մոտ Ստամբուլում մինչև...»: Իսկ որտե՞ղ էր մյուս կարևոր փաստաթուղթը՝ Հայոց ցեղասպանությանը նվիրված այս հատուկ զեկույցը, սահմանն անցնելիս: Դա մի շատ մեծ հարցական է, որը չբացահայտված էլ մնալու է:

Մյուս հարցն այն է, թե արդյոք «Ամառ 1915» վերնագիրը համապատասխանում է Կլարայի այս վկայության բովանդակությանը: Այստեղ նկարագրված իրադարձությունները խոսում են իրենց մասին, քանի որ դրանք տեղի են ունենում 1915 թ. ամառային ամիսներից շատ ավելի այն կողմ, փաստորեն, նույն տարվա աշնանը: Ահա՛ մի փոքրիկ տարեգրական ակնարկ երեք տարում (1915-1918) նորապսակ զույգի՝ երկրում տեղաշարժվելու մասին, ինչպես որ տեղեկանում ենք Կլարայի զեկույցից, օրագրից և նամակներից:

1915 թ. մայիսի կեսերին նրանք Կոստանդնուպոլսից ժամանում են Ամանոսի տարածաշրջան և ժամանակավոր բնակություն հաստատում Էնթիլիում: 1915 թ. հոկտեմբերի վերջերին տեղափոխվում են Քելերի իրենց տնակը, որտեղ բնակվում են Թուրքիայում իրենց կեցության մինչև վերջը՝ 1918 թ. ապրիլը: Էնթիլիի և Քելերի միջև 1915 թ. սեպտեմբերի վերջերից մինչև հոկտեմբերի սկիզբը՝ մեկ շաբաթից ավելի, մնում են Հալեպում:

Իր զեկույցի հենց առաջին նախադասությամբ հեղինակը ամրագրում է վկայությունն սկսելու ժամանակը. «Հինգ ամիս ի վեր ամեն օր նույն տեսարանն է, նախնադարյան շրջանի ժողովուրդների գաղթ, ինչպես նկարագրվում է հնագույն պատմության գրքերում»: Այստեղ որոշակի է վկայության մեջ մուտք գործելու ժամանակը՝ հոկտեմբեր ամիսը, քանի որ նրանք այդ վայրերը ժամանել են հինգ ամիս առաջ՝

մայիս ամսին: Այնուհետև նույն հաղորդման մեջ գրված է. «Վերջերս Հալեպ կատարած մի ուղևորության ընթացքում մենք կես ճանապարհին իջանք, որպեսզի մոտիկից տեսնենք այդպիսի մի [համակենտրոնացման Դ.Ս.] ճամբար: Այստեղ կողք կողքի լցված է 20.000 մարդ, Կատմայի (Katma) կայարանից տասը բուսի հեռավորության վրա»: Հալեպ կատարած իր ուղևորության և Կատմա կայարանում իջնելու ստույգ թվականի մասին տեղեկանում ենք Կլարայի օրագրի սեպտեմբերի 25-ի գրառումից, որտեղ մենք գտնում ենք նույն տեղեկությունը. «Կատմայում գնացքից իջնում ենք: 20.000 հայեր ճամբար են խփել: (...) Խճողված բազմություն»: Զեկույցում հետագայում նկարագրված իրադարձությունների զգալի մասը վերաբերում է Հալեպում իրենց եղած ժամանակին՝ սեպտեմբերի վերջից մինչև հոկտեմբերի սկիզբները: 1915 թ. հոկտեմբերի 6-ին իրենց «ստունդարձն» է դեպի Էնթիլի, և Կլարան արձանագրում է օրագրում. «Երկաթուղային կայարանում ուրախ հրաժեշտ Հալեպի կեսի հետ»: 1915 թ. հոկտեմբերի 7-ին կրկին Էնթիլիում են, և այդ օրը Կլարան նշում է. «Անսահման հաճելի ու հարազատ զգացողություն է ինձ պարգևում վերադարձս հովվական իմ տնակը»: Միայն հոկտեմբերի 27-ին է տեղի ունենում վերջնական տեղափոխությունը Էնթիլիից Քելեր, և օրագիրը դա հաստատում է. «Հիանալի ձիավարություն դեպի Քելեր և անմիջապես եռանդով գործի ենք անցնում: Երեկոյան դեմ արդեն բավական լավ տեղավորված ենք»: Միայն այստեղից, այսինքն՝ հոկտեմբերի 27-ից է սկսվում Քելերի հետ կապված պատմությունը, քանի որ դա այն վայրն էր, որտեղով օրնիբուն անցնում էին բռնագաղթվածների շարասյուները: Քելերի կայարանին կից ստեղծվում էին նաև համակենտրոնացման ճամբարներ, ուր երեկոները հավաքվում էին տարհանվածները:

Ակներև է, որ ժամանակի առումով զեկույցի մեջ իրադարձություններն սկիզբ են առնում սեպտեմբերի վերջին,

գույզի Հալեպ մեկնելուց առաջ: Համեմատենք հետագա ամիսներին վերաբերող նշումները. «Այնտեղ [Հալեպում] մեր գտնվելուց ի վեր անցել է երեք ամիս, սակայն տեղահանվածները շարունակում են գալ, (...)»: Ուրեմն Հալեպից հետո պատմությունը շարունակվում է հետագա երեք ամիսների ընթացքում՝ հոկտեմբերից առնվազն մինչև դեկտեմբերի վերջը:

Այսպիսով՝ պարզ է դառնում, որ Կլարայի զեկույցը հիմնականում վերաբերում է աշնանային և ոչ ամառային ամիսների իրադարձություններին: Ինչպես տեսնում ենք, 1915 թ. ամառը անհամատեղելի է Քելեր բնակատեղիի հետ, և տարիներ հետո այդ տեքստին հավելած «Ամառ 1915» վերնագիրը այնքան էլ հաջողված չէ: Սակայն այստեղ էլ, նկատի ունենալով, որ տեղեկությունը գալիս է Զիգրիստ-Հիլթի գույզի որդիներից մեկից՝ Ռուդիից, որի շնորհիվ էլ նշված բոլոր նյութերը պահպանվել են և արխիվին հանձնվել, պարտավոր ենք այս վերնագիրը ևս ընդունել:

Կլարա Զիգրիստ-Հիլթին տալիս է Հայոց ցեղասպանության հուզիչ վավերագրությունն այնպես, ինչպես ինքն է այն տեսել է իր ամբողջ հրեշավորությամբ հարավարևելյան Թուրքիայում: Նա այստեղ հիշատակում է թուրքերի՝ խաղաղ հայ բնակչության նկատմամբ իրագործած բոլոր բռնությունները: Նախ նկարագրում է բռնի արտաքսումները, որոնք ամեն օր տեսնում է շատ մոտիկից. «Մրանք բոլորը վտարանդիներ են, մարդիկ, որոնց զրկում են հայրենիքից և անխտիր կարգով և առանց հաշվի առնելու՝ հիվանդ թե՛ ծեր, արտաքսում են, մարդիկ, որոնք մեկ օրից մյուսը հրաման են ստանում՝ մի քանի ժամվա ընթացքում հեռանալ իրենց ցանած դաշտերից, իրենց արհեստանոցներից ու բնակարաններից»:

Իսկ այնուհետև նրանք «ճանապարհ են ընկնում դեպի անորոշություն՝ օրերով քայլելով անտանելի շոգին, քամուց ու մրրիկից զգզված, փոշաթաթախ, սոված ու ծարավ և ամեն օր կրկին ու կրկին անցնելով նույն փորձություններով

ու տանջանքներով»: Հալեպ կատարած ճանապարհորդության ընթացքում նրան հայտնի է դառնում այդ տարաբախտ մարդկանց վերջնական ճակատագիրը: Դեպի Հալեպ ուղևորվելիս նա ամուսնու հետ Կատմայում գնացքից իջնում է՝ մոտակայքում գտնվող համակենտրոնացման ճամբարում սեփական աչքերով տեսնելու, թե ի վերջո ինչ է սպասվում այդ հազարավոր տեղահանվածներին, որոնք ամեն օր անցնում էին իրենց տան մոտով: Ահա նրա եզրակացությունը. «Երանի՛ բոլոր նրանց, ովքեր չեն դիմանում, քանզի ողջ մնացածներին սպասում է ամենասարսափելին»: Հալեպում Կլարան ցեղասպանության երկրորդ փուլի վկան է դառնում, որի ընթացքում հեռանկարում միայն մահն է: 1915 թ. հոկտեմբերի 8-ի օրագրային գրառումն ուժգին է. «Քանի Հալեպից վերադարձել ենք և լավ հասկացել, թե նրանց [հայերին] ինչ սոսկալի բախտ է վիճակված, չենք կարողանում այլևս նայել այստեղից անցնող արտաքսվածների կողմը»: Նույն միտքը վավերացվում է նաև զեկույցում. «Ամեն ինչ խորապես ուսումնասիրելուց հետո և հասկանալով, թե ամեն մի քայլը նրանց դեպի ուր է առաջնորդում, և մանավանդ, որ մենք ոչնչով չենք կարող նրանց օգնել, մեր միակ ելքը այդ ամբողջ թշվառությունն անտեսելն էր»:

Կլարան իր զեկույցում հաղորդում է գնդակահարությունների, խեղդամահությունների, առևանգումների ու հայերին ոչնչացնելու ամեն տեսակի մեթոդների մասին, որոնք իրականացվում են «վաղուց կանխամտածված եղանակներով»: Այդ զեկույցն ընթերցելիս մարդ զգում է, թե ինչպես է ցավում Կլարայի սիրտը, երբ գրում է. «Մնացել է դեռ կանանց մի բուռ. տղամարդկանց կոտորել են, աշխատունակ պատանիներին ու մատաղ աղջիկներին գողացել, իսկ փոքրիկներին մահը խլել է առաջին իսկ շաբաթներին»:

Եվ Կլարան տալիս է բնաջնջման այս անեզր մոլուցքի բացատրությունը. «Վաղուց ի վեր այս ցեղը հակակրելի էր

իսլամին: Իսկ այժմ սրանք նպաստավոր ժամանակներ են...»:

Որդիներից Ռուդին տալիս է մոր այս գրվածքի բնորոշումը. «Սա Կլարա Զիգրիստ-Հիլթիի ընդլզման ճիշն է, որ փոխանցվում է հետագա սերունդներին, որպեսզի սա երբեք չմոռացվի»¹⁷³: Նրա համար կարևոր էր, որ ծնողների ցնցող ապրումները մնան պատմության հիշողության մեջ: Մեկ այլ տեղում Ռուդին գրում է. «Այն, ինչ մայրս գրել է վիրավոր սրտով, չպետք է մոռացվի»¹⁷⁴:

Կլարայի՝ որպես ականատեսի այս վկայությունը, ինչպես և օրագիրը, ցավոք, ցեղասպանության գրականության մեջ ոչ մի տեղում չեն հիշատակվում: Շվեյցարիայում այն առաջին անգամ հրատարակվել է 2002 թ. մայիսին ցյուրիխյան օրաթերթում՝ խմբագիր Դանիել Ջուրերի (Daniel Suter) կողմից¹⁷⁵, որտեղից ես ևս տեղեկացա Զիգրիստ-Հիլթի փաստաթղթերի գոյության մասին: Վերջերս Յյուրիխում լույս տեսավ մի երկրորդ հոդված՝ մի քանի քաղվածքներով այդ վկայությունից¹⁷⁶: Երկու հոդվածներն էլ հենվում են «Ամառ 1915» վկայության մի հին արտատիպի վրա, որի պատճենը ETH արխիվից ստացել եմ նաև ես: Ցավոք, այդ արտատիպը հարազատ չի մնացել Կլարայի զեկույցի գոթերենով գրված բնագրին: Հետևապես, ինչպես օրագրի ձեռագիրը, այնպես էլ զեկույցի տեքստի բնագրի վերծանումը կատարել եմ ամբողջովին նորովի՝ գոթերեն ձեռագրի բնագրից և տեղադրել «Նրանց քշում են անապատները...» գրքիս գերմաներեն բնագիր հրատարակության մեջ: Բնական է, որ սույն գրքում իմ բերած հայերեն թարգմանությունը կատարել եմ գերմա-

¹⁷³ Sigrist-Clalüna, Ruedi, մաս 3, էջ 191:

¹⁷⁴ Նույն տեղում, մաս 1, էջ 191:

¹⁷⁵ Դ. Ջուրերի (D. Suter) հոդվածի մասին տե՛ս ներածություն, էջ 19-20:

¹⁷⁶ St' u Martina Läubli, "Man treibt sie in die Wüste, um ihre Kraft zu brechen", NZZ, 11. April 2015:

ներենի այդ նոր արտատիպից, որը գոթական ձեռագրով բնագրի բառացի վերարտադրությունն է:

Ձեռքիս տակ եղած երկու՝ հին և նոր արտատիպերի գուգադրումը ցույց է տալիս, որ գեկույցի՝ մինչև օրս շրջանառության մեջ եղած օրինակը բնագրի բառացի վերարտադրությունը չէ: Կան բնագրից բազմաթիվ շեղումներ, որի հետևանքով այն ավելի շուտ կարող է դիտվել որպես բնագրի վերամշակված կամ խմբագրված տարբերակ: Բնագրում աչքի են ընկնում մի քանի միջամտություններ և աղավաղումներ, ինչպես օրինակ՝ կամայական ընդարձակումներ և կրճատումներ, որոնց դեպքում հաճախ տուժում են հեղինակի նպատակադրած իմաստներն ու անձնական ոճը: Կան շատ բառերի կամ ամբողջական նախադասությունների բացթողումներ և փոխարինումներ: Որոշ հնաբանություններ՝ արդիականացված են, հելվեթական բարբառայնություններ՝ գրականացված և այլն: Թե ում կողմից են ժամանակին կատարվել այդ խմբագրումները, գրքի վրա աշխատանքիս սկզբնական շրջանում դժվար էր պարզաբանել: Իսկ 2016 թ. աշնանը՝ Կլարայի ծննդավայրում գտնվելուս ընթացքում, փորձեցի շատ փափկանկատորեն այդ հարցը պարզել, և ինչ-որ պահին երկու թոռնուհիներից մեկի հետ խոսելիս վերջինս ինձ գրեթե հուշեց, որ ժամանակին այդ խմբագրումները կատարել է գույզի որդիներից մեկը, բայց ոչ երբեք Ռուդին: Նա, անշուշտ, բոլորի կողմից շնորհակալություն հայտնեց ինձ, որ գոթերենից վերծանել ու իրենց եմ հանձնել ոչ միայն իրենց մեծ մոր օրագիրը, այլ նաև գեկույցը:

«Նրանց քշում են անապատները...» գրքի գերմաներեն բնագրում ես գուգադրել եմ գեկույցի հին ու նոր արտատիպերից վերցրած նախադասությունների մի ամբողջ շարք, որպեսզի գերմանախոս ընթերցողը տեսնի, թե բնագրի խմբագրումից որքան է տուժել գեկույցի բովանդակությունը: Զուգադրումների այդ ամբողջ շարքից այստեղ հայ ընթերցողի համար բերում եմ միայն երեք օրինակ:

1. *Հին արտատիպ*. Երբ գալիս են, մուրալով տան դռները բախում, ստիպված ենք թաքնվել, քանի որ հաց չունենք նրանց համար:

Նոր արտատիպ. Իսկ երբ գալիս են, մուրալով տան դռները բախում, ստիպված ենք թաքնվել, քանի որ հաց չունենք բոլորի համար:

2. *Հին արտատիպ*. Հին գորգեր՝ իրենց փառահեղ գույներով, փռված են այստեղ ամենահասարակ տնային պարագաների կողքին:

Նոր արտատիպ. Հին գորգեր՝ իրենց փառահեղ գույներով, փռված են այստեղ ամենահասարակ տնային պարագաների կողքին. այդ նույն գորգերը, որ Եվրոպայի ճոխ կահավորումների մեջ հատուկ պերճանք են համարվում:

3. *Հին արտատիպ*. Ումանք երեք և չորս ամիս եղել են ճամփին, միայն դիմացկուններն են դիմացել ճամփորդությանը:

Նոր արտատիպ. Ումանք արդեն երեք և չորս ամիս եղել են ճամփին, միայն տոկուններն են դիմացել երկար ճամփորդությանը, և նրանց խումբը կծկվել, մի բուռ է դարձել:

Այստեղ մեկնաբանություններն ավելորդ են, քանի որ խմբագրումների հետևանքով ստեղծված իմաստի փոփոխությունը կամ կորուստն ակնհայտ է: Այս երեք զուգադրումներն էլ բավական են՝ ցույց տալու համար, թե որքան կարևոր էր ձեռնարկվածս՝ Կլարայի գործերեն ձեռագրի նորովի և ճշգրիտ վերծանումը: «Նրանց քշում են անապատները...» գրքի բնագրի՝ գերմաներեն տարբերակի հրապարակ գալուց ի վեր մի քանի ամսում լույս տեսած գրախոսականներից հատկապես 8-րդը բարձր է գնահատում նոր արտատիպի կարևորությունը¹⁷⁷:

¹⁷⁷ St' u Էվա Պֆիստերի (Eva Pfister) գրախոսականը, «Völkermord vor der Tür» թարգմ. «Ցեղասպանություն դռան առաջ», NZZ, 6. März 2017:

Կլարայի զեկույցին նվիրված վերը նշված երկու հոդվածագիրներն էլ, բնականաբար, օգտվել են հին արտատիպից, և նրանց «քաղվածքներն» ու «մեջբերումները» դժվար թե կարելի լինի այլևս որպես Կլարա Զիգրիստ-Հիլթիի գործը համարել: Այդ աստիճանի վերախմբավորված նյութը հատկապես պիտանի չէ հոդվածների վերնագրերի համար: Սակայն պատահում են և ավելի վատթար դեպքեր, երբ հոդվածի հեղինակներն իրենք ևս կամայականություններ են թույլ տալիս՝ վերնագրերի իմաստը ամբողջովին աղավաղելով¹⁷⁸:

Ստորև տրված է Կլարա Զիգրիստ-Հիլթիի 1915 թ. հայերի ցեղասպանության ականատեսի վկայության գերմաներեն բնագրի թարգմանությունը՝ հայերեն: Այն հիմնվում է իմ կողմից նորովի և մանրակրկիտ ձևով վերծանված գերմաներեն արտատիպի վրա, որի մեջ պահպանվել է հարյուրամյա ձեռագրի անձեռնմխելիությունը:

¹⁷⁸ Քննադատությունս այստեղ վերաբերում է Կլարա Զիգրիստ-Հիլթիի զեկույցին նվիրված նշված երկու հոդվածներից երկրորդին, տե՛ս Մարտինա Լոյբլի (Martina Läubli), NZZ, 11. April 2015, որի վերնագրի տեքստը բնագրից շեղվում է հենց Լոյբլիի մեղքով. «Man treibt sie in die Wüste, um ihre Kraft zu brechen», թարգմ.՝ «Նրանց քշում են անապատները, որպեսզի նրանց ուժասպառ անեն»: Իսկ բնագիրն ասում է. «Նրանց քշում են անապատները, և որպեսզի նրանց ուժասպառ անեն, օրերով քայլեցնում են, տեղում մի պտույտ անել տալիս և ապա նրանց բերում են նույն կայանատեղիի մոտ»: Ակնհայտ է, որ այդ վերնագրի մեջ «և» շաղկապի բացթողումը բնագրի իմաստի աղավաղում է առաջ բերել, որի հետևանքով մեղմացվում է թուրքերի հանցագործությունը: Չէ՛ որ թուրքերը հայերին քշում էին անապատ նրանց ոչնչացնելու և ոչ թե պարզապես վերջնական ուժասպառ անելու նպատակով: Եվ այս հոդվածը լույս էր տեսել Հայոց ցեղասպանության հարյուրամյակի առթիվ:

Հինգ ամիս ի վեր ամեն օր նույն տեսարանն է. նախնադարյան շրջանի ժողովուրդների գաղթ, ինչպես նկարագրվում է հնագույն պատմության գրքերում: Դեռ վաղ առավոտվա ժամերին՝ գաղթափ, խիստ փոշեպատ ռազմական երթուղով սկսում են իջնել առանձին խմբեր. կեսօրվա դեմ մարդկային հոսանքն ուռճանում է, դառնում այնպիսի մի խճողում, որը կարող է վտանգավոր է դառնալ հատկապես այն հատվածներում, որտեղ իրար հետևից արագորեն սայլեր են հաջորդում՝ ստեղծելով զգայացունց տեսարաններ՝ կանանց ահուկոչի կամ տղամարդկանց հայհոյանքների ու կշտամբանքների ուղեկցությամբ:

Մինչև երեկո այստեղից անցած են լինում հազարներով, այսօր՝ թվով պակաս, վաղը՝ ավելի, մեկ օրը մյուսի նման: Ամիսներ ի վեր մեր աչքի առաջ ծավալվում են նույն պատկերները՝ իրենց անթիվ տարբերակներով: Նույն թշվառությունը, նույն գայրոյթը, մինչև իսկ անտարբերության հասնող անձնատուրություն են արտացոլում մարդկանց դեմքերը: Ժողովուրդների այդ գաղթը հայրենիքի կամավոր փոխարինում չէ, ոչ էլ կլիմայական պայմանների կամ տարերային աղետների պատճառով մշտական բնակատեղիի փոփոխում: Սրանք բոլորը վտարանդիներ են, մարդիկ, որոնց զրկում են հայրենիքից և որոնց անխտիր կարգով արտաքսում են առանց հաշվի առնելու՝ հիվանդ են, թե ծեր. մարդիկ, որոնք մեկ օրից մյուսը հրաման են ստանում՝ մի քանի ժամվա ընթացքում հեռանալու իրենց ցանած դաշտերից, իրենց արհեստանոցներից ու բնակարաններից: Այսպես են հայերը ներկայումս իրենց գլուխը ծռում թուրքերի բռնապետության առաջ: Վաղուց ի վեր այս ցեղը հակակրելի էր իսլամին: Իսկ այժմ սրանք նպաստավոր ժամանակներ են, քանի որ եվրոպական պետություններն զբաղված են իրենց սեփական խնդիրներով և կամ տվյալ պահիս չեն ցանկանում Թուր-

քիայի հետ իրենց հարաբերությունները փչացնել: Այս օրերին գրավոր հաղորդումների գրաքննությունը իրագործվում է ամենայն խստությամբ՝ առանց նվազագույն վախի, որ արևմտյան ուժերը կմիջամտեն:

Ի դեպ, հայերն իրենց հերթին մտածեցին օգտվել աշխարհամարտից և մեկընդմիջո թոթափել թուրքական լուծը: Ասում են, օրինակ, որ իբր թե հայերն օժանդակել են ռուսներին՝ անդրկովկասյան սահմանի կողմից ներխուժելու թուրքական կայսրություն: Դա խթան հանդիսացավ, որ թուրքերը հայերից ձերբազատվեն: Գյուղ առ գյուղ, քաղաք առ քաղաք տեղահանվեց դեռևս վաղուց կանխամտածված եղանակներով:

Պատմում են գյուղերի մասին, որոնք դիմադրել են հրամանին, փորձել զենքով պաշտպանվել և կենաց ու մահու կռիվ մղել իրենց ունեցվածքը պահպանելու համար: Սակայն դա նրանց ոչ միայն ոչինչ չտվեց, այլ ընդհակառակը՝ նրանց դիմադրությունը կարծես թուրքերի հենց ուզածն էր: Չէ՞ որ անխտիր բոլոր հայերին տեղնուտեղը կոտորելը թուրքերի համար հարցի պարզագույն ու էժանագույն լուծումն էր:

Մյուսները՝ նվազ ռազմատենչները, հանձնվում են իրենց ճակատագրին և ճանապարհ են ընկնում դեպի անորոշություն՝ օրերով քայլելով անտանելի շոգին, քամուց և մրրիկից զզգված, փոշաթաթախ, սոված ու ծարավ, ամեն օր նորից ու նորից անցնելով նույն փորձություններով ու տանջանքներով: Մի քանի ժամվա ընթացքում են նրանք արագորեն ի մի բերել իրենց ունեցվածքի մի չնչին մասը, միայն ամենաանհրաժեշտը, այն էլ, եթե մինչ այդ օրինավոր ձևով չի խլվել համայնքի գլխավորից, որը փորձում է օգտվել հանկարծ իրավագուրկ դարձած մարդկանց վիճակից: Ով մի փոքր կարողություն ուներ, վարձել էր մի գրաստ կամ գումեշներով լծված մի սայլ, անշուշտ, ոչ սովորական օրավարձով՝ ճանապարհորդությունը իրեն և իր ընտանիքի համար դյուրացնելու նպատակով: Մի քիչ դրամ էլ մարդիկ իրենց վրա

են թաքցրել՝ ճանապարհի փոքր կարիքները հոգալու համար, իսկ մնացած խնայողությունները հապճեպորեն թաղել են գաղտնի տեղերում՝ ավելի ապահով ժամանակներում դրանք կրկին լույս աշխարհ բերելու հույսով: Արդյոք ո՞վ կլինի այն բախտավոր գանձափորը: Չնայած հուսալքիչ բոլոր լուրերին, որոնք մերթընդմերթ լսվում են, կարծես ոչ մի հայի մտքով անգամ չի անցնում, որ նրա համար մեկընդմիջտ և վերջնականապես փակված է վերադարձի ճանապարհը: Իսկ այժմ մենք նրանց տեսնում ենք նկարագեղ խմբերով սարնիվայր իջնելիս՝ հետևելով փողոցի բազմաթիվ ոլորապտույտ անցումներին:

Մի քանի պատանիներ՝ լայն շավարներով, իրենց ֆեսերին գույնզգույն թաշկինակներ կապկպած: Նրանցից ոմանք մի քանի հորթ են քշում իրենց առջևից կամ թների վրա կրում են ցինկապատ մի կաթսա կամ կավե մի կուժ, հաճախ նաև մի ներքնակ: Մեկ ուրիշը պարանով քարշ է տալիս գորգերով և անկողնային պարագաներով մինչև վերը բեռնավորված մի գրաստ: Նրա կողքից քայլում է ոտաբոբիկ մի պատանի, առջևից քշելով մի էշ, որի երկու կողերին տեղադրված են փայտե արկղեր, որոնք պատսպարում են՝ մերթ ճոճելով, մերթ ցնցելով, նաև երկու փոքրիկ երեխա, երկուսն էլ՝ քնած: Ահա գալիս է մի երկրորդ գրաստ, որի գունագեղ կտավներով ծածկված բեռի վրա նստած է հինգից վեց տարեկան երկու երեխա: Քույր ու եղբայր պինդ գրկել են իրար օրորվող բեռի վրա ու վախվորած նայում են դեպի ցած: Երրորդ անասունին հեծնել է մի երիտասարդ կին՝ նորածինը կրծքին սեղմած: Կավե կուժեր ու բարեձև ցինկե ամաններ են երերվում նրա՝ գծավոր շավարներով ծածկված ազդրերի երկու կողմից: Կողքից քայլում է ամուսինը, իրական փախուստ դեպի Եգիպտոս, Մարիամ Աստվածածնի կենդանի պատկերով: Նրանց հաջորդող մարդիկ քայլում են ավելի մեծ դժվարությամբ, կռացած, իրենց փոքրիկներին շորերի



Armenian widows with their children, c.1915



Պատկերներ Հայոց ցեղասպանությունից



Պատկերներ Հայոց ցեղասպանությունից

մեջ պարտւրած՝ մեջքներին կապած, իսկ ավելի մեծերին՝ շալակներին առած, որպէսզի նրանց երբեմն սեփական տոտիկների վրա էլ մի քիչ քայլեցնեն: Շատերը ձեռքներին տանում են ճանապարհի եզրերից հավաքած փայտի և ցախի կտորներ՝ հաջորդ կայանատեղիում վառելու համար: Ահա այնտեղ՝ ամբոխի մեջ, մի փոքրիկ տղա հենարան է դարձել իր հոգնած, գուցե հիվանդ մոր համար, որը հագիվ է կարողանում քարշ տալ իրեն: Իսկ այժմ մայրը փլվում է ճանապարհի եզրին, փոքրիկ տղան սրտառուչ մտահոգությամբ մի քիչ ջուր է թափում մոր այրվող գլխին, իսկ հաջորդ պահին կինը ուժ է գործադրում, որպէսզի երթը շարունակի: Չէ՞ որ ուրիշները անընդհատ նրանից առաջ են անցնում խմբերով՝ հագիվ նկատելով կնոջ անօգնականությունը: Ամեն մեկը նայում է, որ ինքն առաջ անցնի, քանի որ մինչև երեկո կտրելու երկար ճանապարհ կա: Ի դեպ, հիմա գնալով ավելի սովորական բան է դարձել մեկին գետնին ուժասպառ պառկած, մահվան սպասումով տեսնելը: Մի քանի արագաշարժ, կարճագոյն աղջիկներ շրջանցում են բոլորին, բայց հետո գալիս են ուրիշներ, որոնք հեկեկում են հոգնածությունից և ծարավից: Դանդաղորեն և փոքրիկ քայլերով առաջ է շարժվում տարեց մի գույգ՝ իրար ձեռքից ամուր բռնած. այս ճանապարհին էլ նրանք ուզում են միասին կտրել:

Իսկ հիմա գալիս է ավանակների մի ամբողջ հոտ՝ մասամբ բեռնավորված տնային պիտույքներով, բայց և ծերունիներով ու երեխաներով, իսկ քուրջերի մի կապոցից տեսնում եմ՝ դուրս են գցված երկու մերկ տոտիկներ: Երթի շարքերում կան հղի կանայք, որոնց ամուսինները նրանց գրկից վերցրել են փոքրիկ երեխաներին և իրենց ուսերի վրա են տանում: Փոքրիկների քնաթաթախ գլխիկներն ու տոտիկները ցնցվում են իրենց հոր ամեն քայլի հետ: Այդպիսով քունը գթասրտորեն կրճատում է նրանց երկար օրը: Նկատելի են մի վանական և մի քանի կույս քույրեր՝ բոլորն էլ արտաքսված իրենց վանքի խաղաղությունից: Հետո անցնում են սայ-

լեր, նախ անճոռնի քառակուսի փայտե արկղեր՝ նախնա-
դարյան շինվածքի երկու բարձր փայտե անիվների վրա
նստած ¹⁷⁹, հետո՝ ավելի թեթև սայլակներ՝ բոլորն էլ ծածկ-
ված վրայից ձիգ քաշված կտավներով, բոլորն էլ լեփ-լեցուն
ճամպրուկներով, գորգերի փաթույթներով և մռայլ հայացք-
ները իրենց առջևը հառած մարդկանցով: Կողովներ, ջրի
շշեր ու սափորներ՝ կախված ամեն տեղից: Սայլերի հե-
տևում ամրացված ատաղձների վրա փոխադրվում են փոք-
րիկ տղաներ: Հանկարծ սուրալով՝ հասնում է գույգ գոմեշ-
ներով լծված մի հսկա սայլ: Քարուքանդ փողոցի փոսերի
վրա խեղճ անասունների հոգնած ոտքերը սայթաքում են,
նրանք ընկնում են, և ամբողջ բեռը թափվում է փողոցով մեկ:
Կոշտամարմին անասունները փոփում են ու չեն ուզում
այլևս տեղից շարժվել: Խեղճ մարդիկ էլ պիտի ուզեին դրանց
ընդօրինակել, սակայն պետք էր շարժվել, առաջ գնալ, ոչ մի
դեպքում վերջում մենակ չմնալ: Տղամարդիկ շտապողակա-
նությամբ մի կերպ գամում ու կապկպում են սայլը, իսկ
կանայք լացուկոծով հավաքում են իրենց ցրված իրերը: Վեր-
ջապես անասուններին հարվածների տակ ոտքի են կանգ-
նեցնում ու ճամփա ընկնում՝ վառ պահելով հույսը, որ խեղճ
անասունների ուժը չի սպառվի: Երկրով մեկ ձիավարելիս
հաճախ հեռվից գալիս է լեշ դարձած գոմեշի կամ ուղտի հո-
տը, որը գերհոգնությունից սասկել ու տեղն է մնացել, մինչև
անգղներն ու շնագայլերը նրան մաքրագործեն:

Ահա կրկին ընկնում է մթնշաղը, արևն արդեն անհետա-
ցել է լեռների հետևում, և մերկ լեռների կատարները ոսկե-
գոծվում են երեկոյան երկնքի վարդագույն շղարշի ներքո: Եվ
ամբողջ հարթավայրը հեղեղվում է մեղմ վերջալույսով՝
քնքուշ գույներով բոցավառելով, վեր հանելով այն բոլորը,
ինչ օրվա ընթացքում լերկ ընկած է կիզիչ արևի տակ: Թշվառ

¹⁷⁹ Գերմ. Scheibenräder - հնագույն ձևի հսկա անիվներ, որոնք դարեր առաջ
տաշվում էին ծառաբնից կտրած շերտերից:

մարդիկ հասել են նշանակված նպատակատեղը: Կիրճի ծայրին գտնվող գյուղն անցնելուց հետո ճանապարհից թեքվում են և փոքրիկ խմբերով տեղավորվում են գիշերվա համար, և ճամբարի հսկա հրապարակը նման է գունագեղ ու աշխույժ գյուղական շուկայի: Մի քանի քարից վայրկենական օջախներ են շարվում, և եղած բրինձից ու բլրուրից ու մի քանի կտոր չորացած հացից արդեն պատրաստ է նրանց ընթրիքը: Իսկ ծարավը հագեցնում են մոտակա առվի պարզ ջրով: Հին գորգեր՝ իրենց փառահեղ գույներով, փռված են այստեղ ամենահասարակ տնային պարագաների կողքին. նույն գորգերը, որոնք Եվրոպայի ճոխ կահավորումների մեջ հատուկ պերճանք են համարվում:

Գյուղի բնակիչների համար գիշերելու նման պայմաններն իրենց անհարմարություններով նորություն չեն: Սակայն երբ քաղաքի բնակիչներ են անցնում, որոնք սովոր չեն նեղությունների, կարելի է պարզորոշ տեսնել, թե որքան են նրանք տառապում:

Եվ երբը շարունակվում է հաջորդ օրը, այս անգամ՝ հարթավայրի խորքում, ժամերով, տափաստանի միօրինակ տարածքներով, Հալեպին ավելի մոտ, որտեղ նրանք պիտի տեղեկանան, թե որն է լինելու իրենց վերջնական հանգրվանը: Նրանց մասին շատ բան չես լսում, բայց այն, ինչ պատմում են այս տեղերով անցած մարդիկ, մինչև երկինք աղաղակող անարդարություն է: Այն ամբողջ դրամը, որ ժանդարմները աքսորյալներից դեռ չեն գողացել, խլում են ճանապարհին նրանց վրա հարձակվող ավագակները: Իսկ փոխադրող կառապանների մասին պատմում են, որ վերջիններս նպատակակետից շատ հեռու տեղում իրենց փոխադրավարձը ստանալուց հետո հանկարծ ստիպում են բեռնաթափվել, և խեղճ մարդկանց ունեցվածքի մի մասն էլ յուրացնելով՝ անհետանում են: Դրանից հետո մարդիկ պետք է ոտքով ճանապարհ ընկնեն: (Սվազի շրջանի հայերն այսպես ամփսներով են թափառել:) Երեխաները խոտի պես չո-

րանում են: Տղամարդիկ մեծ մասամբ նախապես առանձնացվել են շարքերից, և, ինչպես ականատեսներն են մեզ պատմում, որևէ ժայռուտում նրանց սպանել են կամ, զույգ-զույգ կապկպած, Եփրատում խեղդամահ արել: Մարդ տեսնում է, թե ինչպես է գետի հոսանքը քշում-տանում դիակների ամբողջ շարքեր: Մարդ տեսնում է նաև, թե ինչպես են բացառապես կանանցից բաղկացած խմբեր քայլում իրենց գողգոթան, մինչև դեռատի աղջիկները առևանգվում և անհետանում են քրդերի կամ բեդվինների հյուղերում: Հետո նման խմբերին անապատի մեջտեղում կամ որևէ գյուղի մոտ դադար են տալիս:

Բուն Հալեպում կառուցվում են հսկա ճամբարներ, որոնք օրեցօր ավելի են ուռճանում՝ ընդունելու համար հարյուրավոր տառապյալների: Վերջերս Հալեպ կատարած մի ուղևորության ընթացքում մենք կես ճանապարհին իջանք, որպեսզի մոտիկից տեսնենք այդպիսի մի ճամբար: Այստեղ՝ Կատմայի կայարանից տասը րոպե հեռավորությամբ գտնվող վայրում, կողք կողքի լցված է 20.000 մարդ: Վրանը վրանին է կպած. հանգամանք, որ վկայում է ունևոր մարդկանց ներկայության մասին: Այնուհետև երևում են միայն գորգեր՝ ձգված փայտե մահակների վրա, իսկ դրանց տակի բնակիչները սողալով են մտնում իրենց պատսպարանը՝ հաճախ նույնիսկ չկարողանալով ծածկել իրենց ամբողջ մարմինը: Գիշերը մոտենում էր: Մեր վերարկուների մեջ պինդ փաթաթված՝ փորձեցինք մեզ համար ճանապարհի հարթել՝ անցնելու համար վրանների ու մարդկանց առանձին խմբերի միջով, որոնք մույժն ընկնելուց առաջ արագորեն սպառում են իրենց խղճուկ ուտելիքը՝ մեծ ու փոքր մի ամանի շուրջը բուլրած: Մի տեղում հաց էին թխում. երկու երիտասարդ ամրակազմ աղջիկ բարակ լավաշիկներ էին բացում, որոնք թիթեղի մի կտորի վրա փոված կրակի վրա էին դրվում: Մեզ հայտնեցին, որ այստեղ մարդկանց մի փոքրիկ բաժին այլուր է հասնում՝ որպես օրվա միակ սննդամթերք: Իսկ իրենց ջու-

րը բերում են կայարանի աղբյուրից, որը մշտապես պաշարված է: Այստեղ մենք տեսնում ենք զանազան անոթներ, որոնք հեռավոր նմանություն անգամ չունեն ջուր լցնելու կամ խմելու ամանների հետ: Ապա անցնում ենք մարդկանց մի փոքրիկ խմբի կողքով, որոնք, մի հոգևորականի շուրջ հավաքված, ջերմեռանդորեն ականջ են դրել նրա ասածներին: Այս սնունդը նրանցից չի կարելի խլել, և որքան ավելի է հյուծվում այդ թշվառների մարմինը նյութական սովից, կարծես այնքան ավելի է հագուրդի ձգտում նրանց հոգին:

[Երբ դեռ մենք մեր տանն էինք], մի երեկո գյուղի բնակիչներից մեկը մեզանից մի բաժակ բնական գինի խնդրեց, որպեսզի շրջիկ քահանան կարողանար իր հայրենակիցների համար պատարագ անել նախքան նրանց՝ վաղ առավոտյան երթը շարունակելը:

Նայում ես վրաններից ներս. հաճախ տեսարանը սարսափ է ազդում: Խեղճություն և կեղտ, որի մեջ թաքտում են փոքր երեխաներ, գունատ մի կին փոված է գետնին մահամերձ: Գուցե մի քիչ հետո նրան ուրիշների հետ կտանեն թաղելու ճամբարից քիչ հեռու՝ նրա իրական մահը դեռ կանոնավոր բժշկի կողմից չհաստատված: Մյուս կողմից, կան վրաններ՝ օրինակելի կարգ ու կանոնով, ամեն բան իր տեղում է, կարծես կրկին իսկական մշտական բնակատեղիներ լինեն: Գլխավոր ճամբարից 10 բուպե հեռավորության վրա մի այլ վրան կա: Լսեցինք այնուհետև, որ այնտեղ ծաղկախտով ու արնալուծով հիվանդներ են պառկած:

Որքան կարելի էր դեռ տեսնել ու պատմել, բայց բավական է, պետք է վերադառնանք: Որոնում ենք մեր ետդարձի ճանապարհը խառնաշփոթի և նոր ժամանած մարդկանց ամբոխի միջով. մարդիկ, որոնք փորձում են շտապ կարգով գիշերվա համար տեղավորվելու տեղ գտնել: Արևը մայր է մտնում, և ամեն ինչ թաթախվում է հոսուն ոսկու մեջ:

Մինչև մեր՝ ջուր կրող մարդկանց կողքով անցնելով կայարան հասնելը մութն ընկնում է, ինչն ավելի բարերար է

ազդում, քան մայր մտնող արևի շքեղությունը: Գնացքը սլանում է, բայց դու հետը չես գնում: Մթության մեջ լուռ մտմտանքով խրվում ես բարձերի մեջ և իզուր պայքարում այն ցավի հետ, որը կծկում է սիրտդ՝ ի տես գերագույն մարտիրոսության: Համակվում ես ամոթով և այդ անասելի թշվառության մեղսակիցը լինելու զգացումով. թշվառություն, որը նվազեցնելու համար մատը մատիդ չես խփում:

Իսկ հետո Հալեպում՝ տեսնելով փողոցներում անցած-դարձածը, այլևս անհնարին է ազատվել վախի և անհանգստության զգացումից: Մարտուր է քեզ պատում, ուզում ես հեռանալ դեպի առանձնություն կամ դեպի այնպիսի տեղեր, ուր իշխում են մարդկային օրենքներ: Բոլոր ավերակներն ու դեռ չբնակեցված նորակառույցները դարձել են այդ թշվառների համար ապաստարաններ: Այդ վայրերի շրջակա օդը հաճախ սոսկալի ապականված է, հնարավոր չէ խուսափել ո՛չ դրանից և ո՛չ էլ թանձր փոշուց, որը ամպի պես տարածվում է ամբողջ քաղաքի վրա:

Սարսափով է մարդ մտածում, թե ինչ հիվանդություններ և համաճարակներ են սպասվում: Արդեն օրական մոտ 130 դիակ է դուրս բերվում: Նման հուղարկավորություններ հանդիպում ես քաղաքի ամենաաշխույժ մասերում: Բեռնակիրները վազում են իրար հետևից՝ մեջքներին մի դագաղ, որի վրա կափարիչը խախուտ է նստած, քանի որ նրա մեջ կա մի քանի դիակ և հաճախ բերնեբերան լեցուն է: Այսպես՝ տեսել եմ, թե ինչպես մոտ տասը տարեկան մի տղայի դիակ մինչև ուները դուրս էր կախվել դագաղից, թե ինչպես հետևից եկող բեռնակիրը փոքրիկի շորորվող գլխին մի քանի անսիրտ հարվածներ հասցրեց, իսկ առջևից գնացող բեռնակիրը շարունակեց վազքը՝ բազում ճանճերի ուղեկցությամբ: Պետք է շտապել, որպեսզի մինչև արևի մայր մտնելը մեկ անգամ ևս լցվեն դատարկված դագաղները: Մեծ մասամբ արնալուծն է, որը հնձում է թշվառներին, սակայն արդեն գրանցվել են խոլերայի և բժավոր տիֆի դեպքեր: Ոմանք,

շոգից ու գերհոգնածությունից ուժասպառ, պառկած են խորը ուշագնացության մեջ: Քիչ չեն դեպքերը, երբ նրանք մեռյալների հետ դուրս են հանվում ու տարվում, և հաճախ պատահում է, որ ողջ թաղվածները շարժվում են, երբ ընդհանուր գերեզմանի մեջ նոր դիակներ են նետվում:

Երբ նայում ես հանկարծ ժամանած նոր տարիանվածներին, տեսնում ես այլանդակված, կենդանանման դեմքեր: Ոմանք արդեն երեք և չորս ամիս եղել են ճանապարհին, միայն տոկուններն են դիմացել երկար ճամփորդությանը, և նրանց խումբը կծկվել, մի բուռ է դարձել: Մի ծեր կին պատմում է, թե ինչպես է ինքը երեք ամիս թափառել իր ընտանիքի հետ: Նախ ունեցվածքը սայլերի ու ավանակների վրա բարձած, այնուհետև ամբողջովին ավարի մատնված՝ քայլել են ամենաանհրաժեշտը շալակներին, մինչև որ Եփրատն անցնելու ժամանակ նրանց ստիպել են այդ քիչն էլ հետևում թողնել: Դեռ մնացել է կանանց մի բուռ. տղամարդկանց կոտորել են, աշխատունակ պատանիներին ու մատաղ աղջիկներին գողացել, իսկ փոքրիկներին մահը խլել է առաջին իսկ շաբաթներին:

Երանի՜ բոլոր նրանց, ովքեր չդիմացան, քանզի ողջ մնացածներին սպասվում է ամենասարսափելին: Նոր օրենքով թշվառներին որևէ սննդամթերք տալն արգելված է: Նրանց քշում են անապատները, և որպեսզի նրանց ուժասպառ անեն, օրերով քայլեցնում են, տեղում մի պտույտ անել տալիս, և ապա նրանց բերում են նույն կայանատեղիի մոտ: Մինչ այդ այս միջոցն էլ կարծես արդեն ավելորդ է դարձել: Անձրևը, որ գիշեր-ցերեկ ողողում է անօթևան մարդկանց, ինչպես նաև սպառնացող ցուրտը ավելի արագ են վերջ տալիս նրանց տառապանքներին:

Նման պայմաններում նրանք ավելի հեշտ են ընկնում բեղվիների ձեռքը: Ես ներկա էի, երբ մի երեկո Բաղդադի կայարանի մի վարիչի հեռագրով օգնություն էին խնդրում,

քանի որ հայերի վրա կրակոող բեղվինների գնդակը դիպել էր կայարանի շենքին:


Մի շատ հուզիչ դիպված պատմեց մեզ հալեպցի մի բժիշկ: Ռաս էլ Էյնից (Ras el Ain) գալիս այդ բժիշկը գնացքի միջից տեսել է ամբողջովին մերկ մի փոքրիկ երեխայի երկաթուղու երկայնքով վազվզելիս: Անապատի ամբողջ տարածքում մարդկային շունչ չի եղել: Գնացքը կանգ է առել, և բժիշկը իր հետ՝ Հալեպ է տարել փոքրիկ, մոտ քառամյա աղջկան:

Այնտեղ [Հալեպում] մեր գտնվելուց ի վեր անցել է երեք ամիս, սակայն տեղահանվածները շարունակում են գալ, մասամբ բուլղարական սահմանի կողմից: Հնարավոր չէ այլևս նրանց կողմը նայել: Մենք կորցրել ենք մեր հետաքրքրությունը նրանց կերպարանքի, նրանց տարագների, նրանց իրերի նկատմամբ: Ամեն ինչ խորապես ուսումնասիրելուց և հասկանալուց հետո, թե ամեն մի քայլը նրանց դեպի ուր է առաջնորդում, մանավանդ, որ մենք ոչնչով չենք կարող նրանց օգնել, մեր միակ ելքը այդ ամբողջ թշվառությունն անտեսելն է: Փոթորկի ու անձրևի տակ նրանք մնում են փողոցի ցեխում ընկած: Երբ գալիս են մուրալով տան դռները բխում, ստիպված ենք թաքնվել, քանի որ հաց չունենք բոլորի համար:

Փողոցի եզրերին և բոլոր այն մասերում, որտեղ նրանք գիշերել են, մթության մեջ հարյուրավոր օջախների լույսն է թափանցում մեր պատուհաններից ներս, իսկ առավոտյան գտնում ենք վայրի կենդանիներից հոշոտված մարդկային դիակներ: Վերապրողները ո՛չ ժամանակ ունեն, ո՛չ էլ գործիք՝ իրենց մեռյալների համար մի փոս փորելու: Իսկ ճամբարներում դրությունը շատ ավելի վատթար է: Այնտեղ նրանք մահանում են օրական երեքից չորս հարյուրներով, Հալեպում կատաղում է բժավոր տիֆը, և թուրքերը, տեսնելով, որ անխոհեմ վարքագծով իրենց են վնաս տվել, նոր հրաման են արձակել, ըստ որի՝ երկաթուղու երկայնքով տեղավորված բոլոր ճամբարները պետք է վերանան, որպեսզի



an Grinster steht. Diese Geispe denn
 sich gewonnen werden, & ich mag
 sehr verzagt am letzten Linsgar,
 aber steht ihr Dank für ihre Tatk-
 en. Wir würden nicht Abende
 von einem Dorfbesucher um ein Glas Hertur-
 wine geben, damit die weibliche Grinster-
 pinen Linsen geföhren eine Klapp Linsen
 konnte, was sie in jeder Morgenspinn wieder
 ihr Linsenwisp antreten. — Gibt man einen
 in das Linsen der Galt, so steht man oft
 zurück: fland & fland in dem Linsen Linsen
 Linsen Linsen, eine Linsen Linsen Linsen
 steht auf ihrem Linsen. Linsen wird sie in
 den Linsen Linsen Linsen Linsen Linsen



Յուրիկ 2016. Դորա Սաքայանը առաջին անգամ թերթում է Կլարայի
 օրագիր-գիրքը:

այդ տեղերով անցնող ռազմական ուժերը հիվանդություններով չվարակվեն: Շինարարական ընկերության դրամամբ տարհանվածներից մի քանիսին թույլ տվեցին երկաթուղու շինարարական աշխատանքներին մասնակցել: Դա նշանակում էր նրանց ճակատագրի իրականացման միայն մի փոքր հետաձգում: Իսկ ավելի բարձրաստիճան պաշտոնյաներ, որոնք ինժեներների աներևակայելի ջանքերի շնորհիվ պահվեցին իրենց տեղերում, ապրում են մաշեցնող անորոշության մեջ՝ կռահելով, որ, միևնույն է, նրանց նույնպես սպասում է իրենց դժբախտ հայրենակիցների ճակատագիրը: Այսպես՝ մեր հայ բժշկի երեսին կարողում ենք նրա անթիվ անքուն գիշերները, նրա մտավախությունը՝ կնոջ ու երեխայի համար: Շաբաթներ ի վեր նա սպասում է, որ հերթն իրեն է հասնելու: Մինչև օրս նա կարողացավ փրկագին վճարել և որոշ ժամանակով ազատվել: Սակայն հենց որ դրամը սպառվի, նրա բանը վերջացած է: Նրա և նրա կնոջ ազգականները անապատները քշվեցին, իսկ հայրն ու եղբայրը ավելի շուտ էին կոտորվել նույն տարածաշրջանում ավելի վաղ տեղի ունեցած հայկական կոտորածների ժամանակ: «Երբ պատերազմը վերջանա», մխիթարեցի նրա երիտասարդ կնոջը, «Եվրոպան կմիջամտի, այն ժամանակ վեր կտրվի այս արհավիրքներին»: «Մինչև որ դա կատարվի», – ասաց նա տխուր, բայց հաստատուն ձայնով, – «մեզ համար շատ ուշ կլինի»: Որոշ ժամանակ անց նա մահացավ սրտի հիվանդությունից:

**Գրված մայրիկի՝ Կլարա Զիգրիստ-Հիլթիի կողմից
1915-ին Քեղերում՝(ներկայումս՝ Ֆեզիփաշա)**



Վերդենբերգ 1975. Կլարան նշում է իր 90-ամյակը:



Յուրիկ 1926. Ֆրից Զիգրիստ-Հիլթին

Ծառ II

Ֆրիդոլին (Ֆրից)
Զիգրիստ-Հիլթի
(1881-1963)

Երեք գրվածք

ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ֆրիդոլին (Ֆրից) Ջիգրիստը ծնվել է 1881 թ. հունվարի 29-ին Բեյրութում¹⁸⁰: Նա չորրորդ զավակն էր Կասպար Ռուդոլֆ Ջիգրիստի (Kaspar Rudolf Sigrüst) և Քաթարինայի, ծնյալ Վեբեր՝ Նեցթալից (Katharina geb. Weber von Netstal): Հայրը, որ վաճառական էր և ծագումով նույնպես Նեցթալից (Netstal), Լիբանանում զբաղվում էր Գլարուս կանտոնի հայտնի թաշկինակների առևտրով¹⁸¹: Ջիգրիստների ընտանիքում երեխաները դաստիարակվում էին որպես շվեյցարացիներ, իսկ ուսումնառության համար ուղարկվում էին Շվեյցարիա:

Պատանեկան տարիները Ֆրիցն անցկացրել է Բեյրութում և Լիբանանում: Հարավային արևի ջերմությունն ու Միջերկրական ծովի գունագեղությունը, ինչպես նաև սիրառատ ծնողները նրա աշխույժ և կենսուրախ բնավորության հիմքը դրեցին: Նա հորից ժառանգել էր աշխատանքի նկատմամբ ունեցած իր լուրջ վերաբերմունքը:

¹⁸⁰ Ֆրից Ջիգրիստ-Հիլթիի կենսագրության համար օգտագործվել են հետևյալ աղբյուրները.

ա) Վալթեր Հուգենտոբլեր (Walter Hugentobler), «Մահախոսական», Ֆրից Ջիգրիստ, օգոստոսի 8, 1963, Բազել (Basel) in: Bauzeitung, 81-րդ տարի, հատոր 32.

բ) Ռուդի Ջիգրիստ-Կլայունայի (Rudi Sigrüst-Clalüna) գրած չորս հոդվածները Վերդենբերգյան տարեգրքերում (Werdenberger Jahrbücher, 1991-1994).

գ) Ռուդի Ջիգրիստ-Կլայունայի թողած՝ հոր ձեռագիր կենսագրությունը.

դ) Կլարա Ջիգրիստ-Հիլթիի օրագիրը.

ե) Sigerüst, Stefan, Schweizer im Orient, 2004.

զ) Հայկ Արամյան, Մեն Եդենի պատգամ. Հայոց Տանթեական, Պեյրուք, 1970:

¹⁸¹ Շվեյցարական Գլարուս (Glarus) կանտոնում արտադրված թաշկինակները (Glarli Tuechli) այսօր էլ սիրված են ամենուր, մանավանդ Արևելքում: Բամբակե վառ կարմիր կտորին տպված գեղեցիկ նախշերով այդ թաշկինակներն օգտագործվում են որպես գլխաշոր, վզկապ կամ շալ:

Տասներեք տարեկան հասակում Ֆրիցը հեռացավ ծնողական տնից և առագաստանավով Բեյրութից միայնակ մեկնեց Եվրոպա՝ Շվեյցարիայում դպրոցական և մասնագիտական կրթություն ստանալու: Առաջին տարիները նա Յյուրիխում անցկացրեց իր ավագ եղբոր Ռուդոլֆի հետ, որի հովանու ներքո, իրեն ապահով զգալով, կարողացավ դիմանալ հայրական տան կարոտին: Հետևելով եղբոր օրինակին, որն այն ժամանակ ճարտարագիտություն էր ուսանում, Ֆրիցը կատարեց իր մասնագիտության ընտրությունը: Երբ Ռուդոլֆը ուսումն ավարտեց ու անցավ աշխատանքի, Ֆրիցը տեղափոխվեց Ֆրաուենֆելդ (Frauenfeld) և հաճախեց շրջանի միջնակարգ դպրոցը, որի ավարտական քննությունները հանձնելուց հետո՝ 1899 թ. աշնանը, կրկին վերադարձավ Յյուրիխ և սկսեց հաճախել Յյուրիխի ճարտարագիտական համալսարանը:

Ավարտելով ուսումը՝ 1903 թ. գարնանը Ֆրիցն սկսեց իր մասնագիտական գործունեությունը: Նախ անմիջապես աշխատանքի անցավ իր հայրենիքի Շվանդեն-Էլմ (Schwandene Elm), ապա 1904-ից մինչև 1906-ը՝ Բելլինզոնա-Մեսոկո (Bellinzona-Mesocco) էլեկտրական երկաթուղիների շինարարության վրա, որից հետո նրան այլումինի արտադրության ակցիոներական ընկերությունը աշխատանքի ընդունեց Խիպիսի (Chippis) մոտ Ռոն (Rhône) գետի վրա կառուցվելիք հիդրոէլեկտրական գործարանի շինարարության աշխատանքների համար: Տեղանքի ընտրությունից և նախագծային աշխատանքներից հետո նա՝ որպես տեղամասային ինժեներ, ղեկավարեց Պֆին-Խիպիսի (Pfyn-Chippis) փապուղու (թունել) կառուցումը:

Սակայն երիտասարդ Ֆրիցը, որ դեռ չէր հաղթահարել արևելյան ծննդավայրի կարոտը և ամբողջ կյանքում էլ հոգեպես կապված մնաց արևաշատ Արևելքին, այդ բոլոր աշխատանքները հաջողությամբ ավարտելուց հետո հայացքն ուղղեց դեպի հարավ: Նա աշխատանքի դիմում ուղարկեց

Թուրքիա՝ Բաղդադի երկաթուղու շինարարությանը մասնակցելու համար: Նկատի ունենալով Ֆրիցի կենսագրական տվյալները՝ մասնագիտական և լեզվական գիտելիքները, աշխատանքային հաջողություններն ու արևելյան կենսափորձը՝ Թուրքիայում նրան անմիջապես աշխատանքի ընդունեցին: 1910-1918 թթ. նա ընդհատումներով աշխատեց Բաղդադի երկաթուղու շինարարության վրա՝ որպես Հալեպից մինչև Ամանոս լեռներն ընկած տարածքի տեղամասային պատասխանատու ճարտարագետ: Նրան հանձնարարված էր Ամանոսի լեռների միջով անցնող Իսլահիե-Ռաջու (Islahye-Radjou) հատվածի ուղեգծի նախագծման և 4905 մ երկարություն ունեցող Ամանոսի փապուղու (թունել) փորման աշխատանքների ղեկավարությունը: Նա սիրում էր այդ աշխատանքը, քանի որ նա անկախ էր իր որոշումների մեջ, իսկ տեղի շոգ եղանակը նրան բնավ չէր խանգարում:

1914 թ.՝ դեռևս Առաջին աշխարհամարտի բռնկումից առաջ, Ֆրից Զիգրիստը իր հերթական հանգիստն անցկացնելու համար մեկնեց Շվեյցարիա: Այնտեղ նա նույն տարում իր քրոջ՝ Լիզի միջոցով ծանոթացավ վերդենբերգցի (Werdenberg) օրիորդ Կլարա Հիլթի (Clara Hilty) հետ և մի քանի ամիս հետո նշանվեց նրա հետ: 1915 թ. ապրիլին նրանք ամուսնացան: Հակառակ երկու կողմից էլ ծնողների դիմադրությանը՝ նա իր խիզախ կնոջ հետ եկեղեցու խորանից գրեթե անմիջապես ճանապարհ ընկավ դեպի Թուրքիա, որն արդեն ներքաշվել էր Առաջին աշխարհամարտի մեջ: Նորապսակ զույգը երկաթուղով ուղևորվեց դեպի պատերազմական գոտի: Նախ Բալկանների և ապա Կոստանդնուպոլսի վրայով անցնելով՝ ուղղվեց դեպի Թուրքիայի հարավ-արևելք, որտեղ նա կանգ առավ Քելեր կոչվող երկաթուղային հսկիչ կետում:

Դժվար էր կյանքը պատերազմի թեժ շրջանում և մանավանդ աշխարհից ամբողջովին կտրված մի այդպիսի վայրում, մանավանդ Եվրոպայի կենտրոնից եկած երիտասարդ

մի գույգի համար: Երբ վաղ առավոտյան Ֆրիցը, հրացանը գոտուն ամրացրած ու ձիու վրա նստած, աշխատանքի էր մեկնում, Կլարան միայնակ տանն էր մնում տեղացի սպասավորների հետ և նրա օգնականը միայն ձեռքի բառարանն էր: Կային շատ ավելի մեծ դժվարություններ ևս: Ապրելով տարանցիկ ճանապարհի վրա բարձրադիր մի տնակում՝ նրանք ամեն օր ականատես էին լինում տեղահանված և դեպի անապատ՝ անխուսափելի մահ քշվող հազարավոր հայերի երթերին: Զանգվածային տեղահանումներն ու հայերի կոտորածները 1915 թ. կեսերից տարածվեցին նաև Բաղդադի երկաթգծի շինարարության մեջ աշխատող բազմաթիվ հայերի շրջանում, հոգեկան շատ ծանր վիճակի մեջ դրեցին ոչ միայն Զիգրիստ-Հիլթի գույգին, այլև այդտեղ աշխատող եվրոպացի, մեծ մասամբ գերմանացի և շվեյցարիացի ճարտարագետներին ու ընդհանրապես երկաթգծի շինարարության օտարազգի ղեկավարությանը: Այս առումով մեծ է Ֆրից Զիգրիստի դերը. նա այդ շրջանում հանդես էր գալիս որպես ծեր, հիվանդ և վտարանդի հայերի օգնական, մանավանդ Բաղդադի երկաթգծի հայ աշխատողների պաշտպան¹⁸²:

Չնայած պատերազմական այդ շրջանի ահավոր իրադարձություններին՝ Զիգրիստ-Հիլթի գույգին հաջողվեց, եթե ոչ հոգեպես, բայց գոնե ֆիզիկապես անվնաս մնալ: 1917 թ. հունվարի 26-ին Քելերի առանձնացած տնակում ծնվեց նրանց ավագ որդին՝ Կառլֆրիդելին (Karlfrideli):

Բաղդադի երկաթգծի վրա իր աշխատանքը հաջողությամբ ավարտելուց հետո՝ 1918 թ. ապրիլին, Ֆրից Զիգրիստ-Հիլթին իր տիկնոջ ու մանուկ որդու հետ ճանապարհ ընկավ դեպի հայրենիք: Երկրի ներսում դժվարին ճանապարհորդությունից հետո նրանց երեք ամիս պահեցին Կոստանդնուպոլսում, և մեծ դժվարություններից հետո միայն նրանք վերադարձան Շվեյցարիա: Նույն տարվա նոյեմբերի 7-ին Կլա-

¹⁸² Տե՛ս Արամյանի հուշերը, էջ 347 և Կլարա Զիգրիստ-Հիլթիի օրագիրը:

րան եռյակ ունեցավ. ծնվեցին նրա երեք տղաները՝ Հանսը (Hans), Կասպարը (Kaspar) և Ռուդոլֆը կամ Ռուդին (Rudolf/Ruedi):

Հայրենիքում Ֆրից Զիգրիստ շինարար-ճարտարագետը 1918 թ. մասնակցեց Գոթհարդի (Gotthard) երկաթուղու էլեկտրաֆիկացման աշխատանքներին: 1922-ից նա գլխավոր ճարտարագետի պաշտոնն ստանձնեց Վեգիթալի (Wäggital) շինարարական ձեռնարկությունում Շրեյի (Schräh) մեծ պատվարի կառուցման համար: Հաջորդաբար նա աշխատեց նաև Յյուրիխի Յյուբլին (Züblin) հաստատության մեջ:

1928 թ. Զիգրիստն իր ընտանիքի հետ կրկին մեկնեց Թուրքիա՝ երկաթուղային աշխատանքների մասնակցելու, ընդունելով շվեդա-դանիական “Nykquist & Holm” ընկերության առաջարկը: Այս անգամ նա գլխավոր ճարտարագետի պաշտոնով ղեկավարեց հարավանատուիական երկաթուղու 500 կմ երկարության Ֆևզիփաշա-Դիարբեքիր (Fevzipaşa-Diarbekir) երկաթգծի կառուցումը, 1933 թ. նաև նույնքան երկարություն ունեցող Իրմակ-Էրեղլի (Irmak-Ereğli) գիծը: Դրանք մեծագույն արտադրողականության տարիներ էին, և աշխատանքային մեծ խանդավառության և կարողության շնորհիվ նրան հաջողվեց պատվիրված ժամկետում ավարտել հսկայական աշխատանքը: Ցավոք, այդ տարիների ընթացքում իր ընտանիքը մնաց Կոստանդնուպոլսում, քանի որ չորս տղաներն էլ դպրոցական տարիք ունեին և պետք է հաճախեին տեղի գերմանական դպրոցը: 1931 թ. մարտին Զիգրիստները ապրեցին մի մեծ ողբերգություն՝ նրանց որդի Կասպարը հիվանդացավ սպիտակարյունությամբ ու մահացավ:

1936 թ. վերջերին Ֆրից Զիգրիստը հայրենիք վերադարձավ հանգստի կարոտ, դիֆտերիա հիվանդությունից թուլացած և տղաներից մեկին՝ Կասպարին Կոստանդնուպոլսի ավետարանչական գերեզմանոցում թողած:



Քելեր 1916. Ֆրից Զիգրիստ-Հիլթին նախաճաշելիս

Հետագա տարիներին Ֆրից Զիգրիստը, հայրենիքում հանգստի անցնելով, վերականգնեց իր թուլացած սրտի աշխատանքը և ապրեց համեմատաբար լավ կյանքով՝ չնայած տեսողության հետ կապված որոշ դժվարություններին: Հետաքրքրությամբ հետևեց իր ավագ որդու՝ Կառլֆրիդեիլի ուսմանը Ցյուրիխի համալսարանում, իսկ գյուղատնտեսության բնագավառի համար պատրաստված իր որդիներից երկուսի՝ Հանսի ու Ռուդիի համար նա դարձավ նրանց ծավալած խաղողաբուծական և գինեգործական աշխատանքների օգնականն ու խորհրդատուն:


Մեծ ուրախություն էին պատճառում Ֆրիցին Ցյուրիխի ճարտարագիտական համալսարանի 99/03 կուրսի ընկերների հետ հանդիպումները, որոնք տիկնանց հետ համատեղ էին տեղի ունենում ամեն տարի: Իր թոռների հետ, որոնք Վերդենբերգում հաճախ այցելում էին նրան, նա կապված էր ամեն պայիկին բնորոշ սիրով: Նա նրանց ոչ միայն պատմում էր Արևմուտքի ու Արևելքի հեքիաթներ, այլև գրում ու նկարագրողում էր նրանց համար իր պատմածները:

Չնայած բազմազբաղ կյանքին՝ Ֆրիցը գրասեր էր և միշտ գրելու ժամանակ էր գտնում: Թուրքիայում իր ապրած տարիների մասին Ֆրից Զիգրիստը թողել է պատմական ու ազգագրական արժեք ունեցող բազմաթիվ նամակներ ու հուշագրություններ: Ունի խնամված ու կենդանի գրելառճ: Կարևոր է նրա նամակը՝ ուղղված նահատակված «Հայ բարեկամներին», որը նա գրել է իր մահից 10 տարի առաջ՝ 1953 թ. փետրվարին: Այդ նամակը վկայում է այն մասին, որ նա իր ամբողջ կյանքում չի հաշտվել այն մտքի հետ, որ անգոր է եղել՝ շատ ավելին անելու, դժբախտ հայերին օգնելու համար: Նամակը կարծես մի փորձ է՝ իր վրայից թոթափելու անգորության գաղափարի ճնշող բեռը:

Իր ջերմ ու ընկերական բնավորության պատճառով Ֆրից Զիգրիստն ուներ բարեկամների լայն շրջանակ և սիրված էր շատերի կողմից: Դեռևս Թուրքիայում նա մտերիմ

հարաբերության մեջ էր իր հայրենակից շվեյցարացի ու գերմանացի գործընկերների հետ, և նրա տունը միշտ բաց էր բոլորի համար: Սակայն նույնիսկ տեղացի թուրքերի մեջ նա ուներ շատ ընկերներ: Հատուկ սերտ կապեր ուներ որոշ շեյխերի, բեյերի ու պետական կարևոր պաշտոնյաների հետ, որոնցից նա օգտվում էր՝ երկաթուղու վրա իր աշխատանքներն առաջ տանելու համար: Սակավ չէին նաև դեպքերը, երբ նա նրանց օգտագործում էր որոշ հայ աշխատողներին, նաև որևէ հալածված հայի, իհարկե, հնարավորության դեպքում իր պաշտպանության տակ առնելու համար:

Ֆրից Զիգրիստը մահացավ 1963 թ. հունիսի 3-ին Վերդենբերգում ութսուներկու տարեկան հասակում: Նա ապրեց և՛ անձնական, և՛ աշխատանքային հաջողություններով լեցուն մի կյանք, որի մեջ տխուր պահերով հանդերձ գերիշխում էին երջանիկ օրերը:



Թուրքիա 1915-1918. Ֆրիցի նախագծած, կառուցապատման մեջ
գտնվող ուղեկանուրջն իր փապուղով (թունել)

Չնայած իր աշխատանքային ծանրաբեռնվածությանը՝ Ֆրից Զիգրիստ-Հիլթին իր պաշտոնից էլ դուրս միշտ գտել է գրելու ժամանակ, լինի դա նամակների, հոդվածների, թե հուշապատումների ձևով: Նա Թուրքիայում անցկացրած իր աշխատանքային կյանքի յուրաքանչյուր շրջանի վերաբերյալ թողել է բազմաբովանդակ շարադրանքներ: Եվ այսօր Ցյուրիխի Ճարտարագիտական համալսարանի ժամանակակից պատմության արխիվում առկա է նրա ձեռագիր աշխատությունների մի ամբողջ շարք՝ «1910-1918 թթ. իմ հիշողությունները» խորագրի տակ, որն ունի երկու ենթավերնագիր՝ «1910-1914 թթ. – խաղաղ ժամանակաշրջան» և «1915-1918 թթ. – պատերազմական շրջան»: Այդ շարքում, որը գլխավորապես նվիրված է Բաղդադի երկաթուղու շինարարության պատմությանը, նա, ըստ Ռուդի Զիգրիստի, գրեթե ամբողջապես անտեսում է ժամանակի քաղաքական բնույթի խնդրումները: Նրա ուշադրությունն առավելապես սևեռված է Արևելքում՝ դժվար ժամանակներում, բայց մանավանդ աշխարհագրական տեսակետից չափազանց ծանր պայմաններում ճարտարագետների ու մնացած աշխատակազմի հսկայական հաջողությունների ու ձեռքբերումների վրա¹⁸³:

Ֆրից Զիգրիստի գրելառճը մշակված է, պատկերավոր և գունեղ: Նրա գրվածքները երբեմն կարդացվում են որպես գեղարվեստական գրականության նմուշներ: Դրանց թվում հազվադեպ են այնպիսիք, որոնք խոսում են նրա քաղաքական հայացքների մասին, հետևապես հայերի տեղահանումների կամ խոշտանգումների մասին. նպատակին այնքան մոտ լինելով հանդերձ՝ նա շատ չի գրում, թեև այս ու այնտեղ դրանք հիշատակում է: Հիմնականում նա մնում է

¹⁸³ Sigríst-Clalüna, Ruedi, մաս 2, էջ 125:

գուսպ և շրջահայաց: Ինչպես հետագայում գրում է նրա որդին՝ Ռուդին, հնարավոր է, որ իր այդ զսպվածության հարցում «դեր են խաղացել նաև այդ ժամանակներում իշխող գրաքննությունն և քաղաքական հետապնդումները»: Միայն 35 տարի հետո է, որ նա բացեիքաց արտահայտում է իր դիրքորոշումը, երբ նա գրում է «Հայ բարեկամներին» ուղղված նամակը, որը կարևոր վկայություն է Հայոց ցեղասպանության մասին¹⁸⁴: Սակայն մեզ՝ հայերիս համար, ավելի կարևոր է Ֆրից Զիգրիստ-Հիլթի մարդասերը, նրա բազմաթիվ բարեգործությունները Բաղդադի երկաթգծի տանջահար հայ աշխատավորների ու նրանց ընտանիքի անդամների, և որտեղ կարելիությունը կար, ընդհանրապես բոլոր հալածված հայերի հանդեպ: Ֆրիցի մարդասիրական արարքները ականատես Կլարայի օրագրում վավերագրված են տեղնուտեղը և հաստատված ավելի ուշ՝ կես դար հետո Արամյանի հուշագրքում:

Ստորև բերում ենք Ֆրից Զիգրիստի՝ մեզ համար կարևոր երեքի շարադրանքների հայերեն թարգմանությունը:

- 1) Տունդարձ դեպի Շվեյցարիա, 1918 թ. ապրիլի 7-ից մինչև օգոստոս 1-ը (գրված 1920 թ.)
- 2) Տրապիստների վանքի պատմությունը. «Եղբայր Բերգմանսը՝ մորթիների վաճառական (գրված 1938 թ.)
- 3) Նամակ հայ բարեկամներին (գրված 1953 թ.)

1. Շվեյցարիա տունդարձի մասին

Կլարա Զիգրիստ-Հիլթին իր օրագրում բավական մանրամասնորեն նկարագրել է 1915 թ. գարնանը նորապսակ Զիգրիստ-Հիլթի ամուսինների դեպի Թուրքիա կատարած

¹⁸⁴ Տե՛ս այս գլխի վերջում, էջ 307-309:

ամբողջ ճանապարհորդությունը և այնուհետև միայն նրանց եռամյա կյանքը (1915-1918) հարավարևելյան Թուրքիայում: Նա դադարեցնում է օրագրի իր գրառումները 1918 թ. ապրիլի 3-ին՝ նրանց ապրիլի 7-ին տունդարձի համար ճանապարհ ընկնելուց առաջ: Իր վերջին՝ ապրիլի 3-ի գրառման մեջ Կլարան նշում է իրենց մտադրությունը՝ սահմանն անցնելուց առաջ օրագիրը Ստամբուլում Ֆրիցի զարմիկ՝ Էդ. Հենիի (Ed. Hänni) մոտ պահ տալու մասին: Պարզ է, որ այդ որոշումը նա ընդունում է այդ օրագրի նշանակության ամբողջ գիտակցությամբ, և, անշուշտ, նկատի ունենալով սահմանի վրա գոյություն ունեցող խիստ գրաքննությունը:

Այսպիսով՝ Կլարայի օրագրում բացակայում է 1918 թ. տունդարձի հետ կապված որևէ տեղեկություն: Այդ բացը հետագայում լրացնում է Ֆրից Զիգրիստը, այն էլ՝ իրենց վերադարձի մանրամասն նկարագրությամբ՝ ուշադրության կենտրոնում ունենալով Թուրքիայի ներսում իրենց ուղևորության ընթացքը, այն է՝ իրենց բնակավայր Քելերից մինչև Հայդարփաշա¹⁸⁵ հատվածը:

Նկատի ունենալով երեք տարի առաջ երկրի ներսում՝ Հայդարփաշայից մինչև Ամանուսի տարածք կատարած իրենց ուղևորության դառը փորձը՝ բնական է, որ հիմա ամուսինների համար մեծ մտահոգություն էր, թե ինչպես էին նրանք վերադառնալու նույն ճանապարհով, մասնավորապես որ այս անգամ ուղևորությանը մասնակցում էր իրենց մեկ տարին նոր բուրբաձ փոքրիկը՝ Կառլֆրիդեյին: Այդ տեսանկյունից շատ հուզիչ է հետևել, թե ինչպես Ֆրիցն այդ ճանապարհորդության ընթացքում իր ամբողջ ուշադրությունը նվիրում է իրենց առաջնեկին, կարողացածի չափ թեթևացնելով կնոջ՝ Կլարայի փոքրիկի մասին հոգալու գործը: Չէ՞ որ Կլարան հիմա կրկին երեխայի էր սպասում:

¹⁸⁵ Հայդարփաշա - Ստամբուլի երկաթուղային հայտնի կայարանը:

Ֆրից Զիգրիստը իրենց տունդարձին նվիրված ակնարկը գրել է 1920 թ.՝ երիտասարդ ընտանիքի Շվեյցարիա վերադառնալուց երկու տարի անց: Հայրենիքում նա այլևս գրաքննությունից որևէ վախ չուներ և կարող էր անկաշկանդ նկարագրել Թուրքիայում իրենց գլխով անցած բոլոր արկածները: Եվ նա թղթին է հանձնել այդ չափազանց դժվարին և երկար ուղևորության մանրամասները՝ Քելերից մինչև Հայդարփաշա. մի հատված, որն այսօր մի քանի ժամում կարելի է անցնել: Տեսնում ենք, թե ինչպես փոքրիկ ընտանիքը 1918 թ. ապրիլի 7-ին Քելերից մեկնում է ապրանքատար վագոնով, և թե ինչպես է Ֆրիցը նախապես կիրառել բոլոր նախազգուշական միջոցները, որպեսզի փոքրիկ ընտանիքի ճանապարհորդությունը հնարավորինս հարմարավետ ու ապահով լինի: Այսպես՝ նա հոգացել է այն մասին, որ ապրանքատար վագոնը երկար ճանապարհորդությունից առաջ նախ հականեխված և ապա կարելիության աստիճանի բնակելի լինի: Այստեղ մենք տեղեկանում ենք, որ չնայած իրենց բոլոր նախապատրաստություններին՝ ամուսիններն ուղևորության ընթացքում ունենում են բազում դժվարություններ և տհաճություններ, որոնք «Կլարային անհամար արցունքների», իսկ Ֆրիցին՝ «հուսահատ մտավախությունների» առիթ են տվել:

Ֆրիցն իր տունդարձի մասին շարադրանքի մեջ մի շարք հետաքրքրական դրվագներով նկարագրում է հետպատերազմյան Թուրքիայի վարչական համակարգի տխուր իրավիճակը: Նա քննադատության և երբեմն նույնիսկ երգիծանքի է ենթարկում հասարակության մեջ ամենուր և հատկապես Թուրքիայի երկաթուղու վարչությունում տիրող քառասային դրությունը, գործող բութ բյուրոկրատիան և ամենից առաջ օրինականացված կաշառակերությունը: Մակայն Ֆրից-լավատեսին երբեմն հաջողվում է նաև չարիքի մեջ տեսնել բարիք և արձանագրել տունդարձի որոշ գեղեցիկ պահեր:

«Բելգիական ապրանքատար մի վագոն նախ ամբողջապես տաք ջրով և ախտահանման փոշիներով հիմնովին լվացվում է, ապա անցքերը բամբակով են պատվում, և տարածությունը բնակելի տեսք է ստանում: Մի կողմի վրա է Կլարայի, Կառլֆրիդելիի ու իմ ննջարանը: Մյուս կողմի վրա սնդուկներն են, գորգը ու երկու թիկնաթոռ, ինչպես նաև ճամպրուկներ, մանդալ (կրակարան) և սպասավոր Յոզեֆը, դերձակը և Իբրահիմ չավուշը¹⁸⁶: Մեկնելուց առաջ ջերմ հրաժեշտի պահեր ենք ապրում գնացքի մոտ, որից հետո շինարարական գնացքը մեզ տանում է մինչև Էնթիլի, որտեղ մեր վագոնը կցվում է տարածքով անցնող կանոնավոր գնացքին: Էնթիլիում հրաժեշտի համար կայարան են գալիս Քյոփեկները, Այրանում արդեն ավելի ուշ՝ Ռիցիններն (Rizzi) ու Մայերները (Meier), նաև բժիշկ Հովնանյանը, որին տալիս ենք զամբյուղը՝ սպասքով: Այնուհետև գնացքը շարժվում է դեպի Մամուրիե (Mamurieh), ուր հասնում ենք մթնշաղին: Այդտեղ անձնագրի հարցով առաջանում են առաջին դժվարությունները, որոնք, սակայն, շուտով վերացվում են իմ եռանդի և առաջին անգամ կրծքիս շարած շքանշանների ժապավենների շնորհիվ: Դերձակը ստիպված է թաքնվել սնդուկի հետևում՝ հսկիչների ձեռքը չընկնելու համար: Միայն երբ գնացքը շարժվում է, նա կարողանում է կրկին օդ շնչել:

Մահճակալի մեջ հրաշալի է. կեսգիշերին անցնում ենք Ադանայով, որտեղ մեծ աղմուկ կա, այնուհետև վաղ առավոտյան Ենիջեում (Jenice) ենք՝ Դորակ (Dorak) չհասած մեկ կայարան: Այնտեղ մեր վագոնը անջատվում է, և ժամանակ ենք ստանում մի քիչ վաղորդյան օդ շնչելու: Մեր գնացքի վագոնները մեջընդմեջ լցված են ռազմանյութերով, ար-

¹⁸⁶ Çavuş - սերժանտ, ապահովության զինվորական:

տաքսված քրդերով, արաբներով և գյուղատնտեսական մեքենաներով: Արաբ կանայք հետաքրքրությամբ դիտում են, թե ինչպես ենք լվացվում: Նրանք մեզանից ավելի վատ են տեղավորված:

Նախաճաշը՝ մանդալի վրա եփված, շատ համեղ է, և ճանապարհորդության երկրորդ օրն սկսում ենք լավ տրամադրությամբ: Կառլֆրիդեյին, որ լավ է քունն առել, ինձ և Յոգեյի հետ զրոսնում է վաղորդյան արևի տակ, տանտիրուհին կարգի է բերում ընդհանուր սենյակն ու ննջարանը: Մի քանի ժամ հետո շոգեքարշը շարժվում է՝ հետը տանելով գնացքի առաջին մասը, որին նաև մենք ենք կցվում մի քանի լավ վիճաբանություններից հետո: Լավ հանգստացած, լվացված և ճոխ նախաճաշից հետո նստում ենք վագոնի բաց դռան առաջ թիկնաթոռներին՝ Կառլֆրիդեյի գրկած: Իսկ գնացքն անցնում է լավ մշակված, չափազանց բերրի երկրամասով, և շուտով հասնում ենք Քեյլեբեք (Kelebek), որը կանոնավոր երկաթուղու վերջնակետն է: Այնտեղ՝ տեղափոխության խառնաշփոթի մեջ, պարոն Դիցը (Dietz) օգնում է մեզ ծանրոցները փոխաբեռնել, և միայն երբ վերջացնում ենք, և Իբրահիմ չավուշն ու դերձակը՝ որպես պահակներ, երկաթուղային փոքրիկ վագոնում հսկում են մեր բոլոր արկղները, սնդուկները և այլն, գնում ենք Դիցի՝ ամուրի երիտասարդի բնակարանը՝ կեսօրվա ճաշի:

Կառլֆրիդեյին միշտ աշխույժ է և իրեն խելոք է պահում: Ապա գնացքը ճանապարհ է ընկնում մինչև [...] ¹⁸⁷, որտեղ մեզ սպասում է դ-ր Ռիթերը (Ritter), դ-ր Ռիթերի որդին Յուրիից, որն այնտեղի Պոլիտեխնիկումում աշխատում է որպես գծագրային վիճակագիր (graphical Statistics specialist): Անասնաբույժ Ֆրայը (Fry) պատմում է, թե ինչպես է իր տունն այրվել իր ամբողջ ունեցվածքով հանդերձ:

¹⁸⁷ Ձեռագրում նույնպես այդ վայրի անունը բացակայում է:

Մեծ շինություններ: Անցնում ենք երկաթգծի կառույցների կողքով: Ռիթերի մոտ ուղեկամրջի մեծ շինարարություն է գնում, մեծ քարե կամուրջներ, ինչպես AGM-ը, 12 նոյեմբերի, 1914 թ.: Այնտեղ գիշերում են տիկին Ֆաուլբորնը (Faulborn) և ֆոն Բրեմի (von Brehm) որդին: Վաղ առավոտյան շարունակում ենք ճանապարհորդությունը դեպի Բելեմեդիք (Belemedik): Այնտեղ մեծ հուզումներ են, մինչև մեզ մի նոր վագոն տրամադրվի, որը նույն ձևով է ախտահանվում, ինչպես Քելերինը: Այնտեղ մենք մնում ենք երկու օր: Այցելություն Քելերմաններին (Kellermannn): Ավտոմեքենայով Յոգելի հետ Բոգանտի այցելության ենք գնում դ-ր Լանգեին (Lange) և Լոյֆերին (Läufer): Մալոն-վագոնը (Salonwagen), որով դ-ր Մայերն (Meyer) էր եկել Կոսպոլիից (Cospoli), բարեբախտաբար, գրավվել էր ինչ-որ բարձրաստիճան անձնավորության կողմից: Ինչպես պարզվեց, դ-ր Մայերը այնտեղ ոջիլների միջոցով բժավոր տիֆով էր վարակվել և ութ օրվա ընթացքում մահացել: Մեկնելուց առաջ մենք նորից տնավարի տեղավորվեցինք: Երեկոյան ժամը չորսին մեկնում ենք Բոգանտիից, որտեղ հրաժեշտ ենք տալիս Լանգեին և Լոյֆերին: Ահա այստեղ պետք է թողնենք Յոգելին ու դերձակին: Յոգելը դժվար տարավ բաժանումը Կառլֆրիդեյիից, և նա դառնորեն արտասվեց Կառլֆրիդեյիի մահճակալի մոտ: Այդ ընթացքում դ-ր Լանգեն, Լոյֆերը, Կլարան ու ես դատարկում ենք հին գինու մի շիշ սուրճի գավաթներով: Սակայն մեզ համար նույնպես ծանր է Յոգելին հրաժեշտ տալը: Արդեն մութ է, երբ գնացքը շարժվում է: Այստեղից մեզ ուղեկցում է միայն Իբրահիմ չավուշը: Շոգեքարշը, որն աշխատում է փայտով, դանդաղ քաշում է գնացքը դեպի վեր, մինչև լեռնանցքի բարձունքը: Կայարաններում, որոշ հանգամանքներով պայմանավորված, երկար կանգ ենք առնում: Սակայն, պետք է ասել՝ կարգին քնում ենք: Կայարաններից մեկում դժոխային աղմուկ է: Սարսափած արթնանում ենք, Իբրահիմ չավուշը հանգստացնում է մեզ՝ ասելով, որ աղմկողները միայն կա-

նայք են: Կանանց ձայների ժխտի միջից լսելի բառերից հասկանում ենք, որ խոսքը գողացված հագուստի մասին է: Կանայք, որոնց խցկել էին ապրանքատար վագոնների մեջ զինվորների ու գաղթականների հետ, նկատել էին, որ քնած ժամանակ գողացել էին իրենց հագուստն ու ծածկոցները: Ապահով զգալով, դեռ ավելին, կարծես թե ճամփորդում էինք սպաների ուղեկցությամբ առաջին կարգի կուպեում և մեր ծանրոցներից բաժանված՝ շուտով նորից քուն ենք մտնում: Վաղ առավոտյան Կոնյայում ենք: Հիանալի թարմ օդ է: Երկաթուղային ճարտարագետից, որ գերմանացի է, ստանում եմ թարմ կաթ, գնում եմ նաև թուրքական ծխամորճի մի ծայր: Այստեղ կարելի է գնել սալիտակ, լավ հաց: Կոնյա չհասած՝ կայարաններից մեկում կարողացա ամբողջ մի զամբյուղ ձու գնել: Ի դեպ, մենք ապահովված ենք պահածոների առատ պաշարով: Կեսօրին՝ հանգիստ ճաշից հետո (որն ընդամիջվեց միայն գնացքների կարգավորման ժամանակ), նորից ճանապարհ ենք ընկնում դեպի Էսքիշեհիր (Eskişehir), ուր հասնում ենք հաջորդ օրը լուսաբացին: Ահա և Աֆիոնկարահիսարը (Afyonkarahisar)՝ առավոտյան արևով հրաշալի լուսավորված:

Անցնում ենք բարձր ժայռերի վրա կառուցված քաղաքի մոտով: Շրջակայքում առկա պուրների մնացորդներ վկայում են հին շինությունների մասին: Էսքիշեհիրում մարդատար գնացքը պետք է մնա: Պահանջեցի, որ մեզ կցեն ապրանքատար մի գնացքի, և այսպես կեսօրին, մոտավորապես ժամը երկուսն անց կեսին ճամփա ենք ընկնում՝ հույսերով լի: Սակայն դեռ Բիլեջիկ չհասած, մի քանի կայարան առաջ ժամերով կանգնած ենք մնում՝ հաշվելով ամեն ժամը, որով կորցնում ենք մեր առավելությունը: Յուրտը զգալի է, և Իրքահիմը ստիպված եռանդով վառում է հետներս վերցրած փայտածուխը: Օգտվում ենք մեր ունեցած լավ ծածկոցներից: Վաղ առավոտյան մեր գնացքը սլանում է Բիլեջիկի միջով: Կայարանի դիրքը գեղեցիկ է: Ապա գնացքն անցնում է ինչ-

որ կիրճով: Մուտքից առաջ՝ պարտեզներում, ծառերը ծաղկած են, և մենք հիանալի տրամադրության մեջ ենք, քանի որ կարծես թե նախապես մեր՝ այնքան վախեցած ճանապարհորդությունը բարեհաջող է ընթանում, և որ Կառլֆրիդելիի վրա որևէ կերպ չի անդրադարձել: Նա ուրախ է և աշխույժ, քնում է և ուտում, կարծես տանը լինել: Ճանապարհը անցնում է նախ կիրճի խորքով, ապա կամուրջների վրայով և թունելներով, ամուր երկաթուղու վրայով, երբեմն էլ փրփրուն ջրերի վրայով, ուղղաձիգ, լերկ ապառաժների հարևանությամբ: Հենց որ կիրճը բացվի դեպի հովիտ, տեղափոխվում ես մի հիասքանչ, բարեբեր վայր: Փարթամ այգիներ, սպիտակ և վարդագույն գույներով ծաղկած ծառեր, իսկ վերևում՝ մուգ կապույտ, ջինջ երկինք: Հողի ամեն մի կտոր մշակված է, կարծես գտնվես մեկ այլ երկրում: Բնակիչները նույնպես, որ երկրի ներսում խմբերով զբոսանքի են գալիս դեպի երկաթուղային կայարանները՝ ժամանցի համար բազմագույն գնացքները դիտելու, տարբերվում են մյուս դիտորդներից: Այստեղ արդեն մուտք են գործել աշխատանքը, բարեկեցությունն ու աշխուժությունը: Հովիտը գնալով ավելի է բացվում, և նրա սկզբնական նեղլիկ բուսական գոտին հանկարծ վերածվում է անծայրածիր հարթավայրերի: Ինչքան աչքդ կտրում է, ամեն ինչ լավ մշակված է և չափազանց բերրի: Ապա հաջորդում են անտառապատ ափերով մեծ լճեր, որտեղ նավակներ են ճոճվում ալիքների վրա, և ափերի երկայնքով բացվում է մի գեղատեսիլ դաշտանկար, որտեղ լիճն ու երկինքը իրար են միախառնվում (Կարաբախչե/Մարաշ), ափերը ձուլվում են արծաթագույն երանգների մեջ: Վերջին մեծ լճի և Իզմիրի ծովածոցի միջև ձգվող բլրաշարքի վրա մենք երկար կանգնած ենք մնում: Կառլֆրիդելիի հետ զբոսնում ենք արևի տակ և ծաղիկներ փնտրում: Նախկին կայարանի կանգառի ժամանակ արդեն գտել էինք գեղեցիկ, մուգ կապույտ վայրի խաղողի ողկույզիկներ, իսկ այստեղ՝ ճահճի եզերքից, հավաքում ենք ձնծա-

ղիկների հիանալի տեսակներ, մեկ ցողունի վրա միանգամից յոթը հրաշալի գանգակներով:

Հանդիպակաց գնացքի շարժվելուն պես մենք էլ ենք շարժվում, և մեր առջև բացվում է ձիթենու անտառներով և կապտագորշագույն ժայռերով եզերված մուգ կապույտ ծովը, որն աշխուժացած է առագաստանավերով և ձկնորսական մակույկներով: Պարզ խրճիթների միջև գեղեցիկ ամառանոցները վկայում են այն մասին, որ ինչ-որ քաղաքի ենք մոտենում: Շուտով Իզմիթն է փոխվում մեր առաջ: Կառլֆրիդեյին նույնպես ուրախանում է բոլոր այս գեղեցիկ պատկերներով, որոնք ասես շարժանկարի պես սահում են մեր աչքերի առաջ: Արանքում նա իր սովորական ժամին քուն է մտնում և զարթնելով թարմացած ու առույգ՝ շարունակում է դիտել այս գեղեցկությունը: Նրան հատկապես զվարճացնում են իշուկները, ոչխարներն ու կովերը, սակայն նաև գյուղացիները, որոնք գնում են մոտով անցնող գնացքը և հիանում փոքրիկ էֆենդիով: Վերջինս, ռազմական գնացքի մեջ նստած, այսպիսի ցուցադրականությամբ աշխարհն է շրջում: Երանի թե ճանապարհորդության մնացած մասն էլ այսպես, սպասումներից վեր լավ ընթանար: Իսկ մեր նպատակը դեռ շատ հեռավոր է, ճամփան՝ երկար: Սակայն մենք շատ բան ենք սովորել արևելքիներից, հետևապես ուրախ ենք ու լիահոյս, որ Ալլահը մեզ միշտ կօգնի: Իզմիթում կարճ դադարից հետո շարժվում ենք և սլանում Իզմիթի ծոցի ափերի երկայնքով, հրաշալի հատված:

Գյուղերը գնալով ավելի են խտանում, և մեր տեսածը շուտով գյուղացիական պարզ բնակավայրեր չեն: Երևում են փայտաշեն պճնված տներ՝ պալատի և պալիլիոնի ոճով: Բնակավայրը արվարձանի կնիքն է կրում. մի բան, որ երևում է նաև բնակչությունից: Կարծես թե մոտենում ենք

Կոսպոլիին (Cospoli)¹⁸⁸: Նույն երեկոյան պետք է Հայդարփաշա հասնենք: Հանկարծ նկատում եմ, որ մեր գնացքը մի փոքրիկ կայարանում բաժանվում է, և մի կեսը ետ է մնում: Մեզ համար միևնույն է, մենք, բարեբախտաբար, գնացքի առաջին կեսում ենք, որը շարունակում է ճանապարհը: Սակայն շատ չանցած՝ արդեն հաջորդ կայարանում մեզ նույնպես անջատում են: Անմիջապես բողոքում եմ և հույս ունեմ, որ երկաթգծի տեսուչի աջակցությամբ, որին ցույց եմ տվել տնօրենի՝ Հազենֆրանցի հանձնարարական գրությունը, կարող ենք գնացքին միանալ: Սակայն մեքենավարը դեմ է՝ բացատրելով, որ փորձում է անսարք շոգեքարշը հասցնել Հայդարփաշա, իսկ քարշ տալու ավելորդ ծանրության որևէ պատասխանատվություն չի կարող իր վրա վերցնել: Ուրեմն, նպատակին այնքան մոտ լինելով հանդերձ, ետ ենք մնում: Մարդատար գնացքը, որից էսքիշեհիրում առաջ էինք անցել, հիմա ինքն է գալիս ու մեզ անցնում: Մենք համաձայն ենք. ես նախընտրում եմ Հայդարփաշա ապրանքատար գնացքով հասնել, քանի որ այսպես մենք մեր սննդամթերքը կստանանք խիստ վերահսկողության տակ: Մթնշաղն իջնում է, արևը սուզվում է հորիզոնում՝ շրջակայքը հրաշալիորեն ողողելով իր կարմիր լույսով: Ձկնորսական մի մեծ նավ՝ առագաստով, մեր առջև խարխսի է գցում, և մենք դիտում ենք աշխույժ ձկնորսներին, որոնք արագորեն ամեն ինչ կարգի բերելուց հետո նստում են փոքրիկ քարշանավի մեջ և ափ դուրս գալիս: Այդ ընթացքում Իբրահիմը մեր վագոնի առաջ կրակ է վառել, և կաթսայում արդեն եռում է մեր ընթրիքը: Սակայն շուտով այդ հրաշալի տեսարանը մարում է, շրջակայքի վրա իջնում է մոխրագույն գիշերը, և օդը ցրտում է: Մենք ներս ենք գնում և մեկ անգամ ևս բաց ենք անում մեր

¹⁸⁸ Կոստանդնուպոլիս քաղաքը կենդանի խոսքում ունեցել է տարբեր անուններ, որոնցից մեկը «Կոսպոլին» (Cospoli) է:

անկողինները, որ արդեն փաթաթված էին: Կառլֆրիդեյին գալիս է մեզ մոտ՝ մեծ մահճակալը:

Մեզ հայտնում են, որ գիշերվա ժամը երկուսին մի գնացք մեզ տանելու է: Քնում ենք մինչև մոտավորապես ժամը երեքը, երբ լսում ենք գնացքի անիվների պտույտները: Սակայն ոչ ոք չի ցանկանում մեզ վերցնել: Միայն իմ եռանդուն սպառնալիքները մեքենավարին և կայարանի վարչությանը օգնեցին, որ քնաթաթախ անձնակազմը ի վերջո բարեհաճեց մեզ գնացքին կցել: Այժմ վերջապես շարժվում ենք դեպի Հայդարփաշա: Վաղ առավոտյան տեղ ենք հասնում և կանգ առնում ապրանքային կայարանում: Ես դուրս եմ պրծնում փակ վագոնից և զինվորական պահակախումբը (cordon) ձեռքելով՝ ուղղվում եմ դեպի վարչական շենքը, որտեղ փնտրում եմ պարոն Թոմանին (Toman)՝ նավահանգստի պետին, և նրան խնդրում օգնել մեզ, որ պահակախմբի միջով անցնենք, գնանք Բերա, եղած-չեղածով, 11 ճամպուրկներով ու սնդուկներով, որոնք մասամբ լեցուն են Կառլֆրիդեյի համար սննդամթերքով: Ինձ անհրաժեշտ է ստանալ մի վկայական առ այն, որ ես՝ որպես երկաթուղու ծառայող, ի պաշտոնե Բերա եմ տեղափոխվում: Եվ այսպես՝ մի քանի գործողությունից հետո ստանում եմ այդ կարևոր փաստաթուղթը՝ «Mühür»-ով՝ սպայի կնիքով: Ամեն ինչ բարեհաջող է անցնում, քանի որ ինձանից՝ անատոլիական երկաթուղու խեղճ ծառայողից շատ բան չէին կարող կորզել, հատկապես այս թանկ ու կրակ ժամանակները... Չէ՞ որ այնքան շատ ուրիշ անձեր կան, որոնց արժե փետրահան անել: Անմիջապես տեղափոխվում ենք նավահանգստի քարշանավի վրա և շարժվում դեպի Բերա կամ Գալաթա: Թե ինչպես կհաղթահարեմ դժվարությունները, դա իմ գործն է, ասացին ինձ: Ուղևորությունը մինչև Գալաթայի նավահանգստի կամուրջը՝ մաքսատան մոտ, անցնում է հաջող: Անմիջապես գալիս են ոստիկաններն ու զինվորները: Այդտեղ տպավորություն է թողնում իմ զինվորական վերարկուն՝ կրծքին շարված շքանշաններով, ինչպես նաև Իբրահիմ չավուշը,

որը միշտ զինվորականի ձգվածությամբ է իրեն պահում և ուղղակի մեծ ազդեցություն է ունենում: Պաշտոնյաները մինչև անգամ կարգավորում են, որ ինձ բեռնատար վագոն տրամադրվի, որպեսզի գնամ մի ում Ալման Սաբիթի ու իր ընտանիքի մոտ: Նրանք մեզ օգնում են նաև՝ փոքր-ինչ կրճատելու բեռնատար քարշակի բարձր վարձը, և ձեռքներին մի բախշիչ¹⁸⁹ դնելուց հետո նրանք բարի ճանապարհ են մաղթում մեզ՝ մեկնող ընտանիքին: Քարշակի կապիտանը նույնպես հատուկ կերպով ողջունում է մեզ լավ բախշիչից հետո: Այսպես մենք հաջողությամբ հաղթահարում ենք նաև վերջին դժվարությունը: Բեռնատար մեքենան ծանրոցներով, որոնց հսկում է Իբրահիմ չավուշը, արդեն կանգնած են խանի¹⁹⁰ առաջ: Պատրաստակամ բեռնակիրները նույնպես ներկա են՝ բեռները բնակարան տեղափոխելու համար: Զրկանքներից հյուծված բեռնակիրները քիչ է մնում՝ տապալվեն ծանր բեռների տակ: Վերջին կտորը դողդողալով հասցվում է վերնահարկ: Վագոնից մինչև այնտեղ մոտավորապես 25 մ է, կամ 120 սանդուխ: Հետևապես, բացի բեռնակիրների օրավարձից, պարտավոր եմ նրանց հատուկ բախշիչ էլ տալ: Ֆունդանոցները հենց այնպես թռչում են, զարմանալի չէ սոսկալի թանկության պայմաններում: Վերջապես ամեն ինչ ապահով տեղ է հասնում, և մենք առայժմ վտանգից հեռու ենք: Թղթապանակիս գումարը 15 կգ թեթևացել է (շուրջ 345 ֆրանկ): Ինձ համար անսովոր ծախսեր, այն դեպքում, երբ մենք տեղամասում հաճախ նման դեպքերի համար աշխատողներ և ծառայողներ ունեինք: Սակայն զարմիկս մխիթարում է ինձ՝ ասելով՝ ճիշտ է, ծախսածս շատ է, բայց չափազանցված չէ. կյանքն այժմ այնքան է թանկացել, որ ամսական մոտ 150 ֆունտ է պահանջվում տան ծախսերի համար, տարեկան՝ 41 400 ֆրանկ՝ առանց հագուստի և այլ ծախսերի:

¹⁸⁹ Բախշիչ – թուրք.՝ «թեյանվեր»:

¹⁹⁰ Խան – թուրք.՝ «իջևանատուն», «մեծ տուն»:

Վա՛յ նրան, ով այժմ նոր է դրանք ձեռք բերելու: Մի գույզ կոշիկը՝ վատ կաշվից, արժե 500 ֆրանկ, մի ձեռք հագուստը՝ 1300 ֆրանկ: Դեհ, կտեսնենք: Կապոցների խրձից հանվում են արկղերն ու մանչուկի մահճակալը, և մեզ իրավունք է տրվում տեղավորվելու խանի՝ հրաշալի տեսարան ունեցող սենյակում: Բարեհոգի Իբրահիմը ստանում է իր թեյանվերը և շարժական մահճակալը, ապա նաև մի վկայական այն մասին, թե երբ է իմ կողմից ազատ արձակվել, և դրանով սկսվում է նրա արձակուրդը: Նա արժանի է դրան, արդեն երկուսուկես տարի նա հեռու է իր հայրենիքից: Նրա համար մեծ բարեբախտություն էր, որ ես նրան գործուղել եմ այս ճանապարհորդությանը: Այլապես նա ո՛չ արձակուրդ կստանար, ո՛չ էլ կշահեր 1300 ֆրանկը, որով իր մայրին պիտի կաշառեր՝ արձակուրդ ստանալու համար: Սակայն նա այդպես դյուրությամբ օձիքը չէր ազատել: Չէ՞ որ նա իր վերադասին 500 ֆրանկ կաշառք էր տվել, այլապես նա չէր կարող իր ուղևորությունից անմիջապես հետո 14 օրով տուն վերադառնալ: Նա ինձ շնորհակալություն հայտնեց և ասաց, որ ես նրան ոչինչ պարտք չեմ, ավելի շուտ նա է ինձ պարտք:

Եվ այսպես, իր ճանապարհորդությունից գերերջանիկ՝ նա հաջորդ օրը մի փոքր պակաս հարմարավետ պայմաններում, անշուշտ, քան մինչև այստեղ գալը, նավարկում է դեպի Բանդիրմա (Bandirma): Ավելի ուշ ես տեսա ճանապարհ ընկնող ծովեզերյա մի շոգենավ: Հնարավոր կլիներ մի գիրք լցնել այն իրադարձություններով, որոնցով այդ նավի վրա ուղևորն ապրում է մի կես ժամվա ընթացքում: Դրամարկդի մոտ սկսվում է հրմշտոցը, և դա մեկնելու օրն է: Իսկ նավի ճանապարհ ընկնելը տևում է երկար, և այն միշտ տեղի է ունենում ուշացումով: Եթե գիտես, թե ինչքան ոջիլ կա ամեն զինվորի կամ աշխատողի վրա, իսկ այնուհետև տեսնես իրար սեղմված զինվորների, աշխատողների, գյուղացիների, քաղաքացիների և այլնի բազմությունը, ապա կզարմանաս, որ բժավոր տիֆն ավելի մեծ ավերածություններ չի գործում: Չէ՞ որ մեռնում են հարյուրավոր մարդիկ, ըստ պաշտոնա-

կան տվյալների՝ օրական 25-ից 30 մարդ: Սակայն պետք է լինեն շատ ոջիլներ, որոնք բժավոր տիֆի ցուպիկներ չեն կրում: Կոսպոլիում Կառլֆրիդելիի փորակապի վրա մեր գտած ոջիլը ևս պետք է որ անվնաս եղած լիներ: Բայց մինչև չանցնի 14 օր, որոշակի ոչինչ չես իմանա և մտահոգվելու շատ առիթ կունենաս: Իսկ այժմ՝ նախքան մեր հանգստանալը, պետք է գնամ ամենամոտ գտնվող ժանդարմի մոտ՝ Կոստանդնուպոլիսում մնալու թույլտվություն ստանալու:

Վագուս եմ երկու պաշտոնյայի մոտ, իսկ եթե մարդ դրան սովոր չէ, այն ընկալում է որպես մեծ հոգնություն: Սակայն որքան աննշան էին այս երկու երթերը՝ համեմատած այն անվերջանալի վազվզոցին, որ ինձ համար այժմ սկսվում է և տևելու է մինչև մեր մեկնելու վերջին ժամը: Այնպիսի համբերություն ու տոկունություն պետք է ունենալ, որ երբեք սովորական մարդուն [մեր կողմերում] չի վիճակվի, թեկուզ և նա տասը կյանք ապրած լինի: Այսօր ժամանակը (շուտով կլրանա երկու տարին) մի փոքր մեղմացրել է այդ բոլորի հիշողությունը, սակայն բավական է, որ մարդ մտքով մի քիչ ավելի շատ այդ տարիների մեջ խորանա, և արդեն ետ է գալիս այն ժամանակվա հատուկ տրամադրությունը: Կլարայի անհամար արցունքներն ու իմ հուսահատ մտավախությունները մշտապես մնալու են մեր հիշողության մեջ, թեկուզ և ժամանակի ընթացքում կարծես այդ օրերի միայն ավելի գեղեցիկ կողմն է աչքի առաջ գալիս: Եվ այս բոլոր տխուր հուշերը, չնայած որ մենք ամենանպաստավոր պայմաններում էինք գտնվում: Հանգրվանել էինք մեր ազգականների մոտ, հրաշալի մի բնակարանում, Ստամբուլ քաղաքի, Մարմարա գետի, Հեյդարփաշայի, Սկյութարի ու Բոսֆորի վրա բացվող տեսարանով: Մենք նաև չենք առնչվել հյուրանոցային փնթի սպասավորների կամ մատուցողների հետ, այլ եղել ենք, այսպես ասած, մեր սեփական տան մեջ»:



Շվեյցարիա 1923. Կլարան և Ֆրիցն իրենց չորս որդիներով

2. Տրապիստների վանքի պատմության մասին¹⁹¹

Ֆրից Զիգրիստի այս հուշագրությունը վերաբերում է մշակութային ցեղասպանության բնորոշ մի դեպքի, որի հետ առնչվել է Ֆրից Զիգրիստը Թուրքիայում իր մնալու առաջին երկու կեսերի՝ խաղաղության և պատերազմի ընթացքում: 1910 թ. Չեքլեի (Chekle) մոտակայքում Բաղդադի երկաթուղու չափագրական աշխատանքների ընթացքում երիտասարդ և ուսումնաստենչ ճարտարագետը ծանոթացել է մի քանի տրապիստ վանականների հետ և բարեկամացել նրանց հետ: Ֆրիցը և նրա գործընկերները քանիցս գտնվել են այդ վանքում, որտեղ նրանք՝ որպես հյուրեր, ամեն անգամ արժանացել են վանականների սրտագին ընդունելությանը: Այս գրվածքի մեջ Ֆրից Զիգրիստը մանրամասնորեն նկարագրում է տրապիստների այս վանքի ներքին աշխարհը՝ որպես հոգևոր և մշակութային արժեքների իրական գանձարան: Սակայն դա եղել է նախապատերազմյան, խաղաղ տարիների ընթացքում, երբ տրապիստների վանքի օրինակելի հիմնարկությունը ծաղկում էր ապրում:

Ինչպես հայտնի է, Առաջին աշխարհամարտի ժամանակ Թուրքիայում քրիստոնեական բոլոր շինությունները, եկեղեցիներն ու վանքերը թուրքական կառավարության կողմից բռնագրավվել, մզկիթների և այլ հիմնարկությունների են վերածվել կամ ավերվել, իսկ հոգևորականները սպանվել են

¹⁹¹ Տրապիստները հռոմակաթուղիկյան եկեղեցու խիստ ծիսականություն ունեցող կարգերից մեկն են՝ հիմնադրված 17-րդ դարում: Նրանք հայտնի են ոչ միայն իրենց մենակյացությամբ և ճգնավորությամբ, այլև իրենց հատուկ աշխատակիությամբ: Լայն հանրությանը ծանոթ են տրապիստների արտադրած տարբեր խմիչքները, յուղերը, ձեռքի աշխատանքները և խունկը, որոնք վաճառվում են իրենց վանքի մոտակայքում: Ֆրից Զիգրիստի գրվածքում խոսքը տրապիստների Notre-dame-du-sacre-coeur վանքի մասին է, որ 1881 թ. Չեքլեում հիմնվել է ֆրանսիացի տրապիստների կողմից:

կամ արտաքսվել¹⁹²: Նման տխուր բախտի արժանացել է նաև Չեքլեի տրապիստների վանքը:

Երբ Ֆրիցը 1915 թ. երկրորդ անգամ տարածաշրջան է եկել, տեղահանված հայերից, գլխավորապես եղբայր Բերգմանսից տեղեկացել է, որ շրջակայքում գտնվող իրեն ծանոթ երկու վանքերը՝ տրապիստներինը ու լազարականներինը, փակվել են, իսկ վանականները՝ արտաքսվել: Եղբայր Բերգմանսը միակ տրապիստ վանականն էր, որը՝ որպես գերմանացի, իրավունք է ստացել մնալ երկրում: Դեռևս պատերազմից առաջ Ֆրիցը բարեկամացել է նրա հետ, և Քելերում բնակվելու ողջ ընթացքում եղբայր Բերգմանսը եղել է Զիգրիստ-Հիլթի ամուսինների ցանկալի հյուրը: Պատահական չէ, որ Կլարա Զիգրիստ-Հիլթիի օրագրում հաճախ է հանդիպում եղբայր Բերգմանսի անունը:

Հայկ Արամյանի հուշագրության մեջ կա մի հատված, որտեղ նա անցյալ ժամանակով է խոսում Չեքլեի տրապիստների վանքի մասին: Ուշագրավ է, որ հեղինակը կես դար անցնելուց հետո էլ տվյալների այդպիսի ճշգրտությամբ տալիս է ականատեսի իր վկայությունը: Նա պատմում է, թե ինչպես 1916 թ. գարնանը, երբ նա Քելերում ճարտարագետ Ֆրից Զիգրիստի մոտ որպես պահեստապետ էր աշխատում, իր օգնական Լևոնի հետ ապրանք հայթայթելու նպատակով Իսլահիեից անցնելով հասնում է Դյորտ-Յոլ (Dört-Yol): Այնտեղ՝ Իսլահիե-Դյորտ-Յոլ-Քաթմա եռանկյունի սահմաններում, տեսնում է աննկարագրելի կործանում՝ թուրք ազգայնամոլների ձեռքի գործը՝ մարդկային կյանքի ոչնչացում, մշակութային գանձերի՝ նախ և առաջ եկեղեցիների, վանքե-

¹⁹² Հազարավոր տարիներ ի վեր Անատոլիայում բնակվող քրիստոնյա բնակչության՝ հայկական, ասորական, հունական, նեստորական եկեղեցիների ու վանքերի և հոգևոր այլ հաստատությունների կործանման մասին տե՛ս Վիլիելմ Բաում, Թուրքիան և նրա քրիստոնյա փոքրամասնությունները, Երևան, 2010:

րի ու դպրոցների ավերում: Արամյանը նաև հետևյալն է հաղորդում է իր գրքում.

«Երկու ջորիներով հասանք Տօրթ Եօլի (Dört-Yol) հիւսիսային կողմը գտնուող լեռնաշղթային կողին կառուցուած Շէյխլի (Chekle) կոչուած գեղանիստ գիւղակին, ուր Հայրեր Թրափիիսթ (Trappist) մի քարակերտ խոշոր վանք և եկեղեցի ունէին: Մօտն էր Էքպէզ քաղաքը, 400 տուն հայեր՝ արդէն տեղահանուած, Յիսուսեաններու դպրոցը և ժամը խուժանին կողմէ կողոպտուած և աւրուած: Մի հրաշքով հանդիպեցանք Պէրիխմանոս (Bergmanns) անունով գերմանացիի մը, որը իբրն միակ անդամ միաբանութեան հոդ մնալու արտօնութիւն ունէր թուրք կառավարութեան կողմէն: Շատ ուրախացաւ երկու հայեր տեսնելով: Պէտք եղած զգուշութեամբ իրեն հետ խօսեցանք: Ոչ մի լուր ուներ արտաքին աշխարհէն, նոյնպէս մենք»:

«ԵՂԲԱՅՐ ԲԵՐԳՄԱՆՍԸ՝ ՄՈՐԹՈՒ ՎԱՃԱՌԱԿԱՆ»

Ով այսօր տեսնի եղբայր Բերգմանսին իր մորթիները գովաբանելիս, մտքով անգամ չի անցնի, որ իր առջև կանգնած է անցյալի տրապիստ մի եղբայր: Գիտե՞ք, թե ինչ է տրապիստը: Նա վանական է, ըստ որում՝ վանականների խստագույն կարգից: Ես պատեհություն եմ ունեցել տրապիստների մի վանքից ներս նայելու: Այն Չեքլեի (Chekle) վանքն էր Փոքր Ասիայում՝ Միրիայի սահմանի մոտ: Դա այն ժամանակ էր, երբ ես՝ երիտասարդ ճարտարագետս, աշխատում էի Բադդադի երկաթուղու վրա: Մեր երկաթուղային գիծը անցնում էր տրապիստների վանքի մոտով: Տեղանքն ուսումնասիրելիս և բուն կառուցապատման ժամանակ մենք նույնպես նրանց շատ մոտ էինք գտնվում: Այսպես է, որ ես բազմիցս եմ այցելել այդ վանքը և տարբեր առիթներով էլ մեր տեղամասում ընդունել վանականների այցելությունները: Վանքի աբբան՝ Père Etienne-ը (հայերեն՝ Հայր Ստեփանոս), փայլուն անձնավորություն էր: Նա այս վանքի հիմնադիրն էր: Նա Թուրքիա էր եկել քառասուն տարի առաջ որպես երիտասարդ վանական և ոչնչից ստեղծել էր այս մեծ ու գեղեցիկ վանքը. աշխատանք, որը վկայում է արտակարգ եռանդի, ուժի և ճարտարության մասին:

Հայր Ստեփանոսի անձը նույնքան հզոր է, որքան և նրա գործը: Երբեք չեմ մոռանա իմ առաջին հանդիպումը նրա հետ: Մի երեկո, երբ ես ուշ ժամին մենակ ձիավարում էի դեպի վրանային ճամբար, երկու հեծյալ գալիս էին իմ ուղղությամբ: Առջևում ծանրամարմին ջորու վրա նստած էր հսկայի կերպարանքով մի ծեր կրոնավոր՝ տրապիստների սպիտակ սքեմով, երեսը պատված փարթամ, սպիտակ մորուքով: Խուրջինից դուրս էին ցցված երկու մեծ ասորճանակի կոթեր, ձեռքում բռնած ուներ մտրակ, իսկ հարգարժան գլուխը թաղիքե լայնեզր գլխարկի տակ էր: Ավելի ուշ ես այդ մարդուն ճանաչեցի որպես Հայր Ստեփանոս (Père Etienne):

Կողքի վրա՝ նրանից մի քանի քայլ ետևում՝ նրբագեղ կազմվածքով ձիու վրա, գլխի հպարտ պահվածքով նստած էր երիտասարդ, ամբողջովին սև հագած նրբակազմ մի հոգևորական՝ ազնիվ դեմքը բոլորած սև մորուքով: Նա նույնպես լավ զինված էր, իսկ նրա ձին ուստոստելով հետևում էր ծեր կրոնավորի ամուր, մեծ քայլերով ընթացող գրաստին: Այդ երկու՝ կարծես միջնադարից հայտնված կերպարների տեսքից էս այնպես հանկարծակիի եկա, որ թույլ տվեցի երկուսին լուռ ողջույնով իմ կողքով անցնել: Վրանային ճամբարում չափագիրների երկրին ծանոթ օգնականները ինձ ասացին, որ նրանք Չեքլե (Chekle) վանքից պետք է լինեին: Այդ օրվանից իմ մեջ ցանկություն առաջացավ, ինչքան հնարավոր էր շուտ, այցելել այդ վանքը: Հաջորդ ազատ օրը մենք չորս ճարտարագետներով ձիավարեցինք Կարասուի լայն հովտով դեպի հանդիպակաց լեռնալանջը՝ Ամանուսի արևմտյան լանջը: Այնտեղ կից մի հովտում, որի բուսականությունը խոտում էր վանականների նպատակամետ աշխատանքի մասին, կանգնած էր վանքը՝ երկու մեծ, Մարսելից բերված աղյուսներով պատած վանական կառույցներով, իսկ շուրջը մի քանի փոքրիկ տնտեսական շինություններ՝ ամբողջը շրջափակված պարիսպներով և բուսական ցանկապատով: Մուտքի մոտ մենք սպասեցինք եղբայր դոնապանին և նրան ներկայացրինք վանահորը տեսնելու մեր խնդրանքը: Նա մեզ առաջնորդեց մի փոքրիկ ընդունարան և այնտեղ մեզ թողեց մենակ: Երկար տևեց, մինչև դուռը բացվեց և երևաց վանահոր թիկնեղ կերպարանքը: Հսկայի ողջույնը սիրալիր էր, իսկ դեմքն արտահայտում էր ինքնագիտակից, եռանդուն եկեղեցականի պատվարժանությունը: Քաղաքավարական մեր այցը նրան հաճելի էր: Նա ճամբարի մոտակայքում տեղի ունեցած մեր կարճ հանդիպումից առաջ լսել էր մեր գալու մասին և ուրախացել, որ շուտով երկաթուղին աշխարհի առաջ կբացեր այդ երկրամասը: Նա պատմեց մեզ վանքի ստեղծման պատմությունը՝ հպարտությամբ նշելով

այն մեծ դժվարությունները, որոնք նա հաղթահարել էր, մինչև վանքն ի վերջո կանգնել էր իր ամբողջ շքեղությամբ: Այնուհետև մեզ ցույց տվեց ամբողջ վանքը: Ճիշտ է՝ այդ այցելության ժամանակ տեսանք նաև մի քանի այլ վանականների, սակայն նրանք քայլում էին գլուխները խոնարհած և լուռ: Վանահայրը մեզ բացատրեց, որ վանականներին սահմանված է խստագույն լռություն: Իրար հանդիպելիս վանականների ողջույնն է. «Memento mori»¹⁹³: Մենք եկանք հենց այն ժամանակ, երբ կրոնավորները վանքի մատուռում հավաքվել էին համատեղ աղոթքի: Նրանք տասներկուսն էին, յուրաքանչյուրը կանգ առավ իր փորագրված նստարանի առաջ՝ գլուխը խոնարհած, իսկ շրթունքները աղոթք էին մրմնջում: Վանահայրը մի պահ գնաց՝ կանգնեց խորանի առաջ՝ աղոթելու, այնուհետև կրկին եկավ մեզ մոտ: Նրա փոխարեն աղոթքի արարողությունը վարում էր նրա տեղակալը: Գոթական ոճով կամարակապ փոքրիկ պատուհաններից արևի ճառագայթները շեղակի ընկնում էին խորանի և նստարանների գեղեցիկ փորագրությունների և աղոթքի մեջ խորասուզված վանականների վրա, որոնց սպիտակ սքեմները պսպղում էին արևի պայծառ լույսի տակ: Ակնառու գեղեցկություն ունեին տղամարդու լավագույն տարիքում գտնվող այս վանականների մեծ մասի դեմքերը: Հատկապես տպավորիչ էր արարողությունը վարող վանահոր տեղակալի մարմինն ու դեմքը: Նա նույնպես հսկայի հասակ ուներ, և ձիգ կեցվածքի վրա նրան սագում էր նրբակերտ դեմքը՝ երիզված կարմրադարչնագույն մորուքով: Այս մարդու մեջ թաքնված էր անսովոր մի անձնավորություն: Միայն ավելի ուշ իմացանք, որ այդ հոգևորականը, որը կոչվում էր եղբայր (...)¹⁹⁴, ծագում էր բելգիական կոմսական մի տոհմից: Այդ մեծ ընտանիքի առաջնեկը ապրում էր կալվածքներում, ու-

¹⁹³ Լատիներեն. «Հիշի՛ր, որ մեռնելու ես»:

¹⁹⁴ Հոգևորականի անունը բացակայում է նաև Զիգրիստի ձեռագրում:

րիշները բարձրաստիճան սպաներ էին, նա և քույրերից մի քանիսը մտել էին հոգևոր դասի մեջ, և բոլորն այնտեղ բարձր դիրք ունեին: Նրա քույրերից մեկը դոմինիկուհիների գլխավոր մայրապետն էր: Ավելի ուշ ես առիթ եմ ունեցել վանահոր բացակայությամբ խոսելու նրա տեղակալի հետ, որի աշխարհիկ անունը դե Հեմպտինն (de Hemptinne) էր: Նրա վարվելաձևն ու էությունը վկայում էին նրա ազնվական ծագման մասին: Այդ վանականին կարելի է շատ լավ պատկերացնել սպայի կամ դիվանագետի պաշտոնում: Սակայն մնացած վանականների մեծ մասը նույնպես ուներ գեղեցիկ արտաքին. բոլորի վրա իջել էին աշխարհից մեկուսացած Աստծու ծառաների հանգստությունն ու արժանապատվությունը:

Դեռ լսում էինք վանականների երգեցողությունն ու երգեհոնի հնչյունները, երբ արդեն եկեղեցու ծպեղակալի տակ էինք, որտեղ վանահայրը մեզ իրեն հատուկ հպարտությամբ ցույց տվեց երկաթե ծպեղակալը, որը բերել էր տվել Ֆրանսիայից, և որը նա անձամբ տեղադրել էր վանականների օգնությամբ: Նա մեզնից ստացավ իր տեխնիկական կարողությունների վերաբերյալ ճիշտ գնահատականը, և դա նրան երջանկացրեց: Նա ասաց, որ երբ տեսնում է մեզ՝ երիտասարդ ճարտարագետներին, որոնք այժմ, ինչպես և այն ժամանակ ինքը, գալիս էի այստեղ՝ անհյուրընկալ երկիր՝ մեծ բան ստեղծելու, հիշում է իր երիտասարդ տարիները, երբ աշխատում էր այստեղ, և նա հաճույքով կուզեր նորից երիտասարդ լինել՝ պայքարը վերսկսելու համար: Մեծ տպավորություն թողեց ինձ վրա այս ծեր հոգևորականը, որը, անհողդողդ մնացած ամբողջ կյանքի մեծ աշխատանքից, հպարտությամբ էր նայում իր ստեղծածին: Բուն վանքի ցուցադրումից հետո հայր Ստեփանոսը մեզ առաջնորդեց դեպի տնտեսական շինությունները և այն շենքը, որտեղ եղբայր Բերգմանսի հավաքածուներն էին: Եղբայր Բերգմանսը՝ ամենաերիտասարդ վանականներից մեկը, նկատել էի

արդեն մատուռում, նիհար կազմվածքով, գունատ դեմքի շուրջ դարչնագույն մորուքով: Վանահայրը երիտասարդ վանականին թույլ տվեց խոսել, որպեսզի նա կարողանար տեղեկություն տալ իր աշխատանքի և հավաքածուի մասին: Ամենից շատ նրա դեմքը փայլեց, երբ մեզ ցույց տվեց շրջակայքի ծառերի վրա բուծվող տարաշխարհիկ թիթեռնիկները: Նա ուներ անհաշիվ գրողներ՝ լցված այդ մեծ և գունավոր փառահեղությամբ: Այնուհետև հետևեցին տեղանքի բզեզներն ու սողունները՝ բոլորը գեղեցիկ և պատշաճ ձևով պահպանված: Առաստաղից կախված էին չորանալու համար բազմաթիվ մորթիներ և կենդանիների գեղեցիկ խրտվիլակներ, և մեծ քանակով խոշոր թռչուններ էին կանգնած արկղերի ու դարակների վրա: Բնագիտական այս լաբորատորիային կից կառուցված էր մի ատաղձագործարան, որտեղ եղբայր Բերգմանսը եղնիների, սոճիների, մայրիների և բարդիների անմշակ բներից մշակում էր ամեն ինչ, ինչ որ իրեն անհրաժեշտ էր այս հավաքածուի և դրա՝ դեպի Եվրոպա առաքման համար: Եղբայր Բերգմանսը հպարտությամբ պատմեց, որ ինքն իր հավաքածուներով վանքին բերում էր տարեկան մաքուր 6000 ֆրանկ շահույթ:

Ճիշտ այնպես, ինչպես եղբայր Բերգմանսն էր նվիրված իրեն ընձեռված աշխատանքին, այդպես էլ յուրաքանչյուր վանական ուներ աշխատանքային որոշակի ասպարեզ: Շատերը զբաղվում էին հողագործությամբ և դրան կից գինեգործությամբ:

Մինչ այդ արդեն կեսօր էր, և Հայր Ստեփանոսը մեզ կեսօրվա ճաշի հրավիրեց, որը մատուցվում էր դոնապանի տնակում: Հայր Ստեփանոսը մեզ հետ սեղան նստեց, իսկ եղբայր դոնապանը, որը հյուրերի հետ խոսելու արգելք չուներ, մատուցում էր մի հայ երիտասարդի օգնությամբ: Ճոխ ճաշկերույթ էր, որի ընթացքում մատուցվեցին իրենց քամած բարձրորակ գինիների տարբեր տեսակներ: Շատ հաճելի համ ունեին նաև վանականների պատրաստած ընկույզի

օշարակն ու կոնյակը: Հայր Ստեփանոսը, ելնելով իր հարուստ փորձից, շատ պատմեց երկրի ու մարդկանց մասին, որը մեզ՝ նորեկներիս համար, հետագայում օգտակար եղավ: Տեղեկացանք նաև, որ փոքր-ինչ հարավում՝ կես ժամվա հեռավորության վրա, ֆրանսիացի լազարականները նույնպես մի մեծ վանք ունեին: Լազարականների առաքելությունը հոգու խնամքն էր, որի համար նրանք ապրում էին դրսի կյանքից ամբողջովին կտրված: Ճաշից հետո մենք շրջապայեցինք դաշտերի և խաղողի այգիների միջով: Ամեն ինչ մշակված էր ամենագեղեցիկ ձևով, որն արդյունք էր արտակարգ ջանասիրության և բանիմացության և խիստ առանձնանում էր շրջակա դաշտերից: Սա ապացույց էր, թե ինչ բերրի է երկիրը, եթե այն լավ մշակվի: Սակայն հենց այդ բերրիությունն է, որ թուրքին ծույլ է դարձնում: Նա, լինելով քչով բավարարվող, քիչ աշխատանքով ապահովում է ամենաանհրաժեշտ ապրուստի միջոցները: Թփերի ու ծառերի վրա՝ մինչև հեռավոր լեռները, երևում էր սպիտակ շղարշե ցանցը, որի մեջ եղբայր Բերգմանսը պաշտպանում էր իր թիթեռների թրթուրներն ու հարսնյակները:

Ուշ հետկեսօր էր, երբ մեր ձիերը հեծնեցինք ու արագ վարգով գիշերով հասանք մեր վրանային ճամբարը: Բոլորս խիստ տպավորված էինք քաղաքակրթության այդ փոքրիկ հատվածով և այն հանգստությամբ ու խաղաղությամբ, որը տիրում էր աշխատանքային այդ վայրում, որն այնքան գանազանվում էր այդ երկրում սովորական դարձած թափթփվածությունից: Այդ ուրբաթ օրը արևի շիկացած ճաճանչների տակ ութ ժամ ձիավարելուց հետո տեղ հասանք և հոգնած պառկեցինք քնելու, որպեսզի գալիք աշխատանքային երկու շաբաթների համար կրկին ուժ հավաքեինք:

Դա իմ առաջին հանդիպումն էր եղբայր Բերգմանսի հետ: Դա 1910 թ. էր, երբ մենք չափագրություններ էինք կատարում Բաղդադի երկաթուղու Իսլահիե-Ռաջու հատվածի ուղեգծի վրա: Մինչև 1914 թ. ես մշտապես մնացի այդ նույն

վայրում՝ Միսակայում, որտեղ ես՝ որպես շինարարական հատվածի պետ, ղեկավարում էի հինգերորդ հատվածի շինարարությունը և միննույն ժամանակ տեղամասային ճարտարագետի տեղակալն էի: Այդ չորս տարիների ընթացքում հաճախ եմ այցելել Չեքլե, նաև փոխադարձ այցելությամբ ընդունել վանականներին:

Երբ 1915 թ. գարնանը, երբ Թուրքիան արդեն մտել էր պատերազմի մեջ, ես վերադարձա երկիր, շինարարության համար ստացա մի հողամաս, որն ամբողջապես գտնվում էր Չեքլեի մոտակայքում: Դա առաջին հողամասն էր Իսլահիեից դեպի Ամանոսի թունելը: Պետք է աշխատեինք տենդային արագությամբ, որպեսզի երկաթուղին կարողանար հնարավորինս շուտ ծառայել գորքերի տեղափոխմանը Իրաքի և Պաղեստինի ճակատները: Շատ քիչ ժամանակ էր մնում այլ բաների համար, քան ամենօրյա աշխատանքը: Սակայն շուտով սկսվեցին հայերի արտաքսումները, և ահա մենք լսում էինք անցնող հայերից, թե Թուրքիայի պատերազմի մեջ մտնելուց ի վեր ինչ էր տեղի ունեցել Չեքլեի մոտ գտնվող երկու վանքերի հետ: Տրապիստների և լազարականների վանքերը փակվել էին, իսկ հոգևորականները՝ վտարվել: Եղբայր Բերգմանսին՝ որպես գերմանացու, թույլ էին տվել մնալ երկրում: Նրան տեղ էին առաջարկել գյուղատնտեսական դպրոցում, որը բացվել էր տրապիստների նախկին վանքում: Նա ընդունել էր աշխատանքն այն մտադրությամբ, որ այդ ձևով կկարողանա վանքի կալվածքին օգտակար լինել: Գործը երկար չտևեց, քանի որ նրան մեծ դժվարություններ էին տալիս: Այսպիսով՝ վանքը մնաց թուրքերի ձեռքում և մինչ օրս ծառայում է որպես դպրոց:

Ոչ ոք չի կարող ասել, թե ինչ տեսք ունի այժմ այն փոքրիկ դրախտը, սակայն կարելի է ենթադրել, որ առաջվա այն տիպար ձեռնարկությունը վաղուց անհետացել է: Եղբայր Բերգմանսը, որ արդեն ամիսներ է, ինչ հեռացվել էր վանքից, դեռ հավատում էր, որ եթե մոտակայքում մնար, վանքին ինչ-

որ ծառայություն էր մատուցելու: Ամբողջությամբ հույսն իր վրա դրած, առանց որևէ օժանդակ միջոցի՝ նա աշխատում էր՝ իր ապրուստը վաստակելու համար: Այսպես՝ նա սկսեց փայտի վաճառքով զբաղվել Ակբես Մեյդան կայարանում: Նա Բաղդադի երկաթուղու տնօրինության հետ շոգեքարշներին վառելափայտ մատակարարելու պայմանագիր էր կնքել: (Այն ժամանակ Հալեպում Բաղդադի երկաթուղին ղեկավարում էր դ-ր Շվենդենները՝ Բուքսից:) Առևտուրը ընթանում էր բարեհաջող, և շուտով նախկին տրապիստը շրջում էր նրբագեղ կերպարանքով՝ նորաձև հագուստով, մինչև իսկ փողկապի քորոցով և ձեռքի պայուսակով:

3. Հայ բարեկամներին ուղղված նամակի մասին

Քելերում ունեցած իր ցավագին ապրումներից 35 տարի անց և մահվանից 10 տարի առաջ՝ Ֆրից Զիգրիստ-Հիլթին 1953-ին իր մշտական բնակավայր Վերդենբերգում գրում է մի նամակ նահատակված իր հայ բարեկամներին: Այդ ակնհայտորեն ուշացած նամակի շարադրման համար կարելի է մի շարք պատճառներ բերել, որոնցից ամենահիմնավորը հետևյալն է. բոլոր այդ տարիներին հայերի ցեղասպանության հիշողությունները պետք է ծանրացած լինեին Ֆրից Զիգրիստի հոգու վրա: Մարդկային տառապանքների սրտաշարժ տեսարանները տարիների ընթացքում հավանաբար զբաղեցրել են նրան: Այդ տեսարաններից մի քանիսը պահպանվել է Կլարայի օրագրում, ինչպես 1916 թ. փետրվարի 13-ի արձանագրության մեջ. «Ասում են, որ մեզ մնացել է միայն հազար հայ աշխատող: Ֆրիցը պատմում է նրանցից շատերի ողորմելի կերպարանքի մասին՝ սարսափելի հյուծված, ակնափոսերի միջից իրենց անարտահայտիչ հայացքն ուղղած դեպի հեռուները: Եվ արդեն խոսակցություն կա լրացուցիչ վտարումների մասին»: Իսկ Ֆրիցը բավական բան

արե՞լ էր տեղամասի հայ աշխատողներին փրկելու համար: Կարո՞ղ էր նա ավելին անել նրանց համար: Այս և նման հարցերը վստահաբար տանջում էին նրան: Հուսալով թոթափել իրենից այս դժվարին հարցերը՝ ի վերջո վճռում է գրել այս նամակը:

Հայկ Արամյանն իր՝ «Մեծ Եղեռնի Պատգամ-Հայոց Տանթեական Քավարան Եւ Հրաշալի Յարութիւն» գրքի լույս տեսնելուց չորս տարի առաջ Ֆրից Զիգրիստ-Հիլթիի նամակը հայ բարեկամներին գերմաներենից արևմտահայերեն է թարգմանել և հրատարակել Նյու Յորքի հայկական «Կոչնակ» ամսագրում: Նամակի թարգմանությունը տպագրվել է Արամյանի հետևյալ կարճ նախաբանով, որը բնութագրում է Ֆրից Զիգրիստ-Հիլթիին որպես անձնավորություն.

«Զուիցերիայի մեծանուն այս մարդասէր Ֆրից Զիգրիստ-Հիլթի պետ-երկրաչափը 1916-ին Ամանոս լեռան երկայթուղիի շինութեան միջոցաւ՝ իր ամբողջ հեղինակութեամբ պաշտպան հանդիսացաւ մօտ 15 հազար հայ աշխատաւորներու: Իր կարգադրութեամբ կրցայ թուրք իշխանութեանց լարած թակարդէն պրծիլ և փախչիլ՝ լեռներու վրայով Բերիա (Սիրիա): Պետ-երկրաչափ Ֆրից Զիգրիստ-Հիլթի անձին մեծութիւնը կը յայտնուի, երբ ըսեմ թէ, հակառակ որ ան բարձր պաշտօնին բերումով Զօր. Իզգէթի և Մուխթար Փաշայի հետ մտերմաբար և երկար տեսակցեր էր, սակայն հայոց համար ունեցած է համակրանք, դատապարտած է անգլիական ու ֆրանսական թրքամոլութիւնը և յոյս ունի հայոց ապագայի մասին»¹⁹⁵:

¹⁹⁵ «Կոչնակ», ապրիլ, 1966, հատ. 4, էջ 111:



Վերդենբերգ 1950. Ֆրիցը, Հանսը, Քաթին և Կլարան

ՆԱՄՍԿ ՀԱՅ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻՆ

Ֆրից Զիգրիստ-Հիլթի

Վերդենբերգ, Բուքս, Փետրվար, 1953

Հա՛յ բարեկամներ,

Ես ձեզ տեսել եմ հանգիստ ու խաղաղ օրերին, ձեր երջանկության օրերին: Հիացել եմ ձեր աշխատունակությամբ և ձեզ արժանի համարել այն դիրքին, որին դուք հասել էիք ջանասիրությամբ ու ձեռնհասությամբ: Ձեր մաքրափայլ տնակներն ու պարտեզները, խնամված արտերն ու խաղողի այգիները վկան էին ձեր անխոնջ գործունեության, իսկ ձեր խանութներից ու բնակատեղիներից լսվող հնչյունները ձեր բարեկեցության կրկնակի հաստատումն էին:

Սակայն ես տեսել եմ նաև ձեր տառապանքի ու նվաստացման օրերը:

Այն ժամանակ, երբ ամեն ինչ խորտակվեց, երբ ձեզ տնից-տեղից քշեցին և ստիպեցին բռնել բռնազաղթի տառապալից ուղին: Ձեր տառապանքները դուք կրեցիք որպես տիպար-օրինակ: Այդ օրերի երթերը ձեզ տանում էին ոչ թե դեպի մի նոր հայրենիք, այլ դեպի չարչարանք և մահ: Եվ ձեզանից միայն մի քանիսն էին, որոնք փրկվեցին և ուժասպառ ու կոտրված վիճակում կարողացան որպես հայրենագրկվածներ փրկություն գտնել ձեր հայրենիքի սահմաններից այն կողմ:

Այդ օրերին ինձ հաջողվեց մեր մոտակայքով անցնող արքայալիկներից մի փոքրիկ մաս իմ տնօրինության ներքո գտնվող երկաթուղու կառուցման աշխատանքներում զբաղեցնել, դրանով իսկ գոնե որոշ ժամանակով նրանց տալ օթևան, աշխատանք ու հաց, սակայն ամենից առաջ՝ հոգու ապահովություն: Դա տեղի ունեցավ շնորհիվ գլխության և եղբայրասիրության, և այս հզոր զգացումներն էին, որոնք կարողացան նաև ինչ-որ չափով մեղմել տեղական բնակ-


չության ու ստորադաս պաշտոնյաների քարսրտությունը: Մակայն դա ձեզանից մի քանիսի համար սոսկ մի փոքր հետաձգում էր, քանզի շատ չանցած՝ կառավարության անողորմ վճիռը ձեզ քեց-տարավ թշվառության գիրկը: Ինձ և տիկնոջս համար դրանք սուգի օրեր էին. ամեն անգամ երբ տեսնում էինք, թե ինչպես էին մեզ արդեն սիրելի դարձած պաշտպանյալները բռնագաղթի վշտալի ճամփի վրա մեզանից հեռանում ու հորիզոնի ետևում անհետանում:

Այն օրերից, երբ իրականացվեց ձեր ազգի մեծամասնության բնաջնջումը, անցել է երկար ժամանակ: Ձեր ազգի մնացորդները՝ հյուծված ու թշվառ վիճակում, դժվարությամբ հասան իրենց հայրենիքի սահմաններից հեռու գտնվող երկրները: Հայ ժողովրդի բարեկամները, սատարված Եվրոպայի և Միացյալ Նահանգների բարեգործական կազմակերպություններից, հատուկ հավաքատեղիներում բարի սամարացու դեր կատարեցին: Ձեր հիվանդները խնամվեցին, վհատյալները մխիթարվեցին, հոգեպես ջախջախվածները ոտքի հանվեցին ու սատարվեցին, երիտասարդներն ստացան աջակցություն ու ուսում և իրենց մասնագիտություններով նոր կյանքի սկիզբ դրեցին:

Պապենական հողի վրա համախմբումը, որը ձեզ խոստանում էին քաղաքագետները, տեղի չունեցավ: Աշխարհի մեծավորները զոհաբերեցին ձեր երագները՝ հօգուտ իրենց քաղաքական հատուկ շահերի: Երեք տասնամյակ է անցել այդ օրերից: Հյուրընկալ երկրներում մինչև այսօր էլ խնամվում են ձեր ծերերն և հաշմանդամները, իսկ կենսունակ տարրերը մեծ մասամբ ընդգրկվել են աշխատանքային գործընթացում և իրենց աշխատասիրության շնորհիվ հաջողության հասել: Հյուրընկալ երկրներում հայերի մեծագույն մասը ուժացել է, և կարծես թե վերացել է պատմական հողի վրա փոխադրվելու և որպես ազատ ժողովուրդ ապրելու հեռանկարը: Եվ արդյո՞ք դա ձեզ համար բարիք պիտի լիներ: Այդպիսի մի փոքրիկ երկիր՝ շրջապատված հզոր և ազգամոլ

պետություններով, դյուրությամբ պիտի ենթարկվեր նորանոր վտանգների: Իսկ եթե դուք ձեր նոր հայրենիքի մեջ պահպանեք ձեր ուրույնությունը, ջանասիրությունն ու դիմացկունությունը, այդ բոլորը երաշխիք պիտի լինեն հաջորդ սերունդների ապահով ապագայի համար:

Ձեր հիշողության մեջ վառ պահեք ձեր ազգը, որը տեսել է հզոր թագավորությունների ու ծաղկուն գավառների ժամանակներ և բարձր է կանգնած եղել արվեստի ու գրականության ասպարեզում: Եվ որպես անգնահատելի գանձ՝ պահպանեք ձեր մեջ հպարտությունը, ձեր սուգը և կարոտը: Եվ ո՞վ գիտի, թերևս մի օր անսպասելիորեն աշխարհն իր ընթացքը փոխի, և մոխիրի միջից ժայթքող բոցի պես արև ծագի և ձեզ, այնուամենայնիվ, առաջնորդի դեպի ձեր Հայաստան-հայրենիքը:



ՀԵՂԻՆԱԿԸ

Հայկ Արամյանի դիմանկարը իր գրքի առաջին էջում

Ծառ III

Հայկ(ազուն) Ա. Արամյան (1885-1974)


Մեծ Եղեռնի Պատգամ: Հայոց Տանժեական: Քաղաքան և
Հրաշալի Յարութիւն

Հայկ(ագուն) Արման Արամյանը ծնվել է 1885 թ. Զեյթուն (Թուրքիա) քաղաքում¹⁹⁶: Սուլթան Աբդուլ Համիդ Բ-ի օրով տեղի ունեցած 1894-1896 թթ. հայերի համատարած ջարդերի ժամանակ Արամյանը կորցրել է ծնողներին և իր կրտսեր եղբոր հետ մնացել է որբ: Տասը տարեկան հասակում նրան որդեգրել է Շվեյցարիայի Բեռն քաղաքի բնակչուհի Մեսիլ Բերնարը (Cécille Bernard)¹⁹⁷: Երբ Հայկը 12 տարեկան էր, նրան և եղբորը ուղարկել են Երուսաղեմի գերմանական Շնելլեր որբանոցը կամ դպրոցը¹⁹⁸, որտեղ ընդունակ երեխաներին տրվում էր հատուկ կրթություն: Այնտեղ Արամյանը բազմակողմանի կրթություն է ստացել, ընդարձակել է լեզուների իր գիտելիքները և դպրոցն ավարտելիս, բացի հայերենից ու

¹⁹⁶ Ցավոք, չհաջողվեց գտնել Հայկ Արամյանի պաշտոնական կենսագրությունը: Այդ է պատճառը, որ այստեղ բերվում է նրա կյանքի պատմությունը, ինչպես որ այն հնարավոր եղավ վերաքաղել նրա գրքում և համացանցում եղած մի քանի կցկտուր տեղեկություններից: Բնական է, որ այստեղ անխուսափելի են որոշակի բացեր և անճշտություններ:

¹⁹⁷ Հայտնի է, որ 1894-1896 թթ. հայոց ջարդերից հետո բազմաթիվ հայ որբուկներ որդեգրվել են Շվեյցարիայի տարբեր քաղաքացիների կողմից: Իր գրքի տարբեր տեղերում Արամյանը նշում է իրեն որդեգրող շվեյցարացի տիկնոջ ճիշտ անունը, սակայն միայն մեկ տեղում նշված հասցեն թերի է: Մեզ հաջողվեց Բեռն քաղաքի 1900 թ. հասցեագրքում էջ 145-ի վրա գտնել այդ տիկնոջ հասցեն և այն ճշտել: Այնտեղ մենք կարդում ենք՝ Cécille Bernard, Lorraine, Grüner Weg 9 (տե՛ս այդ հասցեագրքի 145 էջի արտատպումը, էջ 313):

¹⁹⁸ Շնելլեր որբանոցը կամ դպրոցը, որը հայտնի է նաև որպես Սիրիական որբանոց, միսիոնարական-բողոքական հաստատություն էր Երուսաղեմում: Այն հիմնադրվել է 1860 թ. գերմանացի Յոհան Լուդվիգ Շնելլերի (Johann Ludwig Schneller) կողմից: 1884-1886 թթ.՝ Թուրքիայում հայերի ջարդերի ժամանակ, Շնելլերի որբանոցը ընդունել է մեծ թվով հայ որբուկներ: Այդ տարիներին որբանոցի վարչության անդամներից է եղել Յոհաննես Լեփսիուսը: Յոհան Լուդվիգ Շնելլերի մահից հետո որբանոցը երկար տարիներ ղեկավարել են նրա որդիները: 1940 թ. անգլիական մանդատի ուժերը փակել են այդ դպրոցը: Ահա՛ Շնելլերի բնաբաններից մեկը. «Կա՞րարդոք երեխայից ավելի խմորվող, ավելի խոստումնալից բան»:



Bernard, Ä., Pfr. an der franz. Kirche,
Lorraine, Grüner Weg 9
— Céc., Frl., Lorraine, Grüner Weg 9
— Ella, Frl., Lorraine, Grüner Weg 9
— Th., Oberstlieut., Kommandant des
Central-Remontendepots, Lorraine,
Grüner Weg 9

Հայկ Արամյանին որդեգիր մայր Սեսիլ Բեռնարի բնակավայրի տվյալները Շվեյցարիայի Բեռն քաղաքի 1900 թ. հասցեագրքից:

թուրքերենից, տիրապետել է գերմաներենին, ֆրանսերենին ու մասամբ անգլերենին: Երուսաղեմում նա խորացրել է նաև իր արդեն ունեցած երաժշտագիտական գիտելիքները:

20 տարեկան էր Արամյանը, երբ որպես երիտասարդ մանկավարժ մուտք է գործել օսմանյան դպրոցական համակարգի մեջ: 1906-1914 թթ. նա պաշտոնավարել է Խարբերդ քաղաքի հայ, թուրք և գերմանական դպրոցների ու լիցեյներում որպես լեզուների և երաժշտության ուսուցիչ: Այսպես՝ նա դասավանդել է Վերի Թադի Ս. Հակոբ եկեղեցու կից գործող հայկական Կեդրոնական վարժարանում, որը հայտնի է «Թլկատինցիի վարժարան» կամ «Կարմիր կոլեջ» անունով¹⁹⁹: Միաժամանակ Արամյանը պաշտոնավարել է Մեզբերի գերմանական վարժարանում, որտեղ եղել է լեզուների ուսուցիչ, հսկիչ ու գրադարանավար²⁰⁰: Նա ունեցել է նաև այցելու ուսուցչական պաշտոններ Խարբերդի պետական կայսերական լիցեյում և թուրքական այլ վարժարաններում:

Արամյանը պարբերաբար թղթակցել է տարբեր լրագրերի, այդ թվում՝ Կոստանդնուպոլսի «Վերջին լուրին» և Կահիրեի «Արեւին»: Արամյանը կատարել է մի շարք կարևոր թարգմանություններ:

1914 թ. մարտին Արամյանը Խարբերդից հրավիրվել է Ադանայի Սուլթանիեի լիցեյը և այնտեղ աշխատանքի անցել որպես գերմաներենի և երգեցողության ուսուցիչ: Սակայն Ադանա քաղաքը նրան չի հրապուրել և ամառային արձակուրդների առիթն օգտագործելով՝ մեկնել է Կոստանդնուպոլիս՝ այնտեղ հայտարարված գերմանագետ ուսուցիչների մրցույթին մասնակցելու, որում հաղթելու դեպքում իրականանալու էր նրա վաղեմի երազանքը՝ սովորել Գերմանիայի բուհերից մեկում: Սակայն Առաջին աշխարհամարտն

¹⁹⁹ Դպրոցը ճանաչում է գտել իր տնօրենի՝ Հովհաննես Թլկատինցու ազանվամբ, և կամ անունը նույնացել է շենքի պատերի կարմիր գույնով:

²⁰⁰ Տե՛ս Յուշամատեան, <http://www.houshamadyan.org/arm/>:

սկսվել է, և Արամյանն ապրել է դժվարին փորձությունների շրջան: Կոստանդնուպոլսում հայորդի Արամյանը հալածվել է, նյութական մեծ դժվարությունների ու բազմաթիվ խոշտանգումների է ենթարկվել, մի շրջան էլ բանտարկվել է: Սակայն նրան բախտը ժպտացել է, և նա կարողացել է բանտից ազատվել:

1914 թ. սեպտեմբերին Արամյանն ուրախությամբ ընդունել է Ադանայի սուլթանի լիցեյում որպես գերմաներենի ու երաժշտության ուսուցիչ վերահաստատվելու առաջարկը և այդ լիցեյում հաջողությամբ պաշտոնավարել է ամբողջ 1914-1915 ուսումնական տարում: Սակայն Ադանայում նույնպես ծայր են առել հայերի դեմ հալածանքները, և Արամյանը 1915 թ. ամռանը երկընտրանքի առաջ է կանգնել՝ կա՛մ կրոնափոխ լինել ու դառնալ մուսուլման, կա՛մ միանալ հայ աքսորականների քարավանին: Արամյանն ընտրել է երկրորդը՝ միանալով դեպի Սիրիայի անապատը քշվող վտարանդի հայերի քարավանին:

Սակայն իր մտքի արթնությամբ և շրջապատի մարդկանց օգնությամբ Արամյանին ի վերջո միշտ հաջողվել է խուսափել կործանումից: Անշուշտ, օտար լեզուների իմացումը և թարգմանչի նրա կարողությունը նույնպես խաղացել են իրենց դերը: Այսպես՝ 1915 թ. մի հույն վաճառականի միջնորդությամբ նա կարողացել է խույս տալ դեպի Հալեպ քշվող աքսորականների գնացքից և աշխատանքի անցնել Բաղդադի երկաթուղու շինարարության մեջ պաշտոնավարող եվրոպացի մարդասեր ճարտարագետների հովանու ներքո: Մինչև 1915 թ. վերջը Արամյանը աշխատել է գերմանացի ճարտարագետ Էրլերի (Erler)²⁰¹ մոտ Իսլահիեում, ապա աշխատանքի անցել Քեյերի կայանում շվեյցարացի Ֆրից Զիգրիստ-Հիլթիի մոտ: 1916 թ. հունիսին Արամյանը

²⁰¹ Էրլերի (Erler) անունը Արամյանի գրքում բացակայում է, իսկ այլ տեղում հնարավոր չեղավ գտնել:

ճարտարագետ Ֆրից Զիգրիստ-Հիլթիի և նրա կնոջ Կլարայի օգնությամբ, ինչպես նաև սեփական մեծ հնարքներով կարողացել է, մեծ տագնապաներից անցնելով, ազատվել թուրք կառավարիչի և թուրք ժանդարմների՝ իր դեմ լարված ծուղակից և որպես ազատ անձ՝ ապաստան գտնել Հալեպում: Հետագայում էլ նույն Ֆրից Զիգրիստ-Հիլթին կրկին նեցուկ է դարձել Արամյանին՝ իր ծանոթ աշխատակիցների միջոցով Հալեպում իր պաշտպանյալին ևս ապահովելով աշխատանքով և անվտանգ կյանքով:

1918 թ.՝ պատերազմի ավարտին, այս անգամ էլ գերմանացի իր վերակացու Ֆյոլների (Foellner) օգնությամբ Արամյանը տեղափոխվել է Գերմանիա, որտեղ ընդունվել է համալսարան և 1922 թ. ստացել բարձրագույն կրթության վկայական²⁰²: Նույն տարում նա Գերմանիայում հիմնել է օտար լեզուների իր անձնական դպրոցը²⁰³: Տարիներ անց Արամյանն իր դպրոցի հետ տեղափոխվել է Ավստրիայի Զալցբուրգ նահանգի Մյուլբախ ամ Հոխկոնիգ (Mühlbach am Hochkönig) քաղաքը, որտեղ նա մշտական բնակություն է հաստատել: Ահա թե ինչ ենք տեղեկանում Արամյանի ուղարկած նամակների ու բացիկների վրա տպագրված առաջին տողերից: Պրոֆ. Հայկ Ա. Արամյանը եղել է Ավստրիայի մամուլի աշխատողների միության անդամ, Գերմանիայի և Ավստրիայի գերմանագետ դասախոսների միությունների անդամ, ինչպես նաև Զալցբուրգ քաղաքի Ժողովրդական համալսարանի լեզվագիտության դասախոս:

²⁰² Արամյանի գրքում կամ այլուր տեղեկություն չի գտնվել, թե Արամյանը Գերմանիայի որ բարձրագույն ուսումնական հաստատությունն է ավարտել և երբ է ստացել ուսման ավարտի մասին վկայականը:

²⁰³ Այստեղ նույնպես մանրամասները բացակայում են: Հայտնի չէ, թե Արամյանը Գերմանիայում որտեղ է սովորել և այնտեղ քանի տարի է մնացել նախքան Ավստրիա տեղափոխվելը և այնտեղ վերջնականապես հաստատվելը:

1954-ին՝ Թուրքիայի Քելեր բնակավայրում կազմակերպված նրա փախուստից 38 տարի անց, Արամյանը եկել է Շվեյցարիայի Վերդենբերգ քաղաքը՝ այցելելու իր փրկարարներին՝ Զիգրիստ-Հիլթի գույզին²⁰⁴:

Պրոֆեսոր Հայկ Ա. Արամյանը վախճանվել է 1974 թ. Ավստրիայի Զալցբուրգ քաղաքում: Մինչև կյանքի վերջը հայազգի մանկավարժը եղել է իր լեզուների դպրոցի տնօրենը: Ուսումնական այդ հաստատությունում դասավանդվում էր ութ օտար լեզու:

²⁰⁴ Տե՛ս նկար, էջ 380:

Zum ewigen Andenken
an meinen unvergeßlichen
Retter im Jahre 1916

Herrn Chef-Ingenieur

Fritz Oigrist Hilz

selbig entschlafen am 3. Juni 1963
Ihm verblanke ich mein ganzes
Leben u. Wohlergehen in Europa.

Gesegnet sei sein Andenken!

In tiefster Dankbarkeit:

Prof. Hans Arman-
Aramian,

Mühlbach am Hochkönig
Land Salzburg, Österreich
11 (April) 1971.
Mai

Հայկ Արամյանի գրքում գերմաներեն գրված ձուր՝ նվիրված Ֆրից
Ջիգրիստ-Հիլզի հիշատակին

ՀԱՅԵՐԵՆ ՄԻ ԳՐՔԻ ՄԱՍԻՆ

Երբ մեկը որևէ գերմանախոս երկրի արխիվից թվայնացած նյութեր է պատվիրում, բնականաբար, կգարմանա, երբ այդ նյութերն ստանալիս դրանց մեջ հայերեն մի գիրք տեսնի: «Արդյո՞ք դա սխալմամբ էր այնտեղ հայտնվել»,– եղավ առաջին մտածումս: Սակայն զարմանքս միայն մի պահ տևեց: Թռուցիկ մի հայացք գրքի վերնագրին, ապա առաջին էջերին՝ բավական էր՝ պարզելու համար, որ հայերենով այդ գիրքը Ջիգրիստ-Հիլթի ընտանիքի արխիվային նյութերի օրինավոր և շատ կարևոր բաղկացուցիչ մասն էր կազմում: Դեռ ավելին: Դա հաստատում են բոլոր այն տեղեկությունները, որոնք սույն գրքում տրվում են Ջիգրիստ-Հիլթի ամուսինների մասին: Ինչպես շուտով կտեսնենք, հայերեն գրքի հեղինակը՝ Հայկ Ա. Արամյանը, իմ վկաների վկան է: Նրա գրքի վերնագրի առաջին երեք բառերը՝ «Մեծ եղեռնի պատգամ»²⁰⁵, ինչպես նաև գրքի շապիկի ներսի էջին նրա՝ գերմաներենով գրած ձոնը ամեն ինչ բացատրում են: Ահա այդ ձոնի թարգմանությունը.

Հավե՛րժ հիշատակ
1916 թ. իմ անմոռանալի փրկյին՝
Երջանկահիշատակ († 3.6.1963)
Գլխավոր ճարտարագետ՝
Ֆրից Ջիգրիստ-Հիլթիին:
Նրան եմ ես պարտական
Եվրոպայում ունեցած իմ ամբողջ
կյանքն ու բարօրությունը:
Թող օրհնվա՛ծ լինի նրա հիշատակը:
Խորին երախտագիտությամբ՝

²⁰⁵ Արամյան, Հայկ Ա., Մեծ Եղեռնի Պատգամ. Հայոց Տանթական. Քաւարան եւ Հրաշալի Յարութիւն, Պէյրուք, 1970:

Պրոֆ. Հայկ Արման Արամյան,
Մյուլբախ ամ Հոխքյունիգ²⁰⁶
Զալցբուրգ, Ավստրիա,
11 մայիս, 1971 թ.²⁰⁷

Թեև Զիգրիստ-Հիլթիի ընտանիքում չկար մեկը, որ կարողանար հայերենով կարդալ Արամյանի գրքի թեկուզ մեկ տողը, անցյալ դարի 70-ական թվականներին այս հրատարակությունը Կլարայի, ինչպես նաև Զիգրիստ-Հիլթի գերդաստանի մնացած բոլոր անդամների մոտ մեծ արձագանք գտավ: Ինչպես վերջերս կարողացա պարզել, այսօր ևս Զիգրիստ-Հիլթիի ընտանիքի հետնորդները այս գրքի վրա մեծ համարում ունեն²⁰⁸: Ցավոք, Ֆրից Զիգրիստը չտեսավ այդ հրատարակությունը:

Զիգրիստների որդիներից մեկը՝ Ռուդոլֆ (Ռուդի) Զիգրիստ-Կլայունան (Ruedi Sigrist-Clalüna), իր կյանքի վերջին տասնամյակներում ընտանեկան պատմության նկատմամբ մեծ ակնաձանքով ի մի է բերել իր նախնիների և մանավանդ ծնողների ամբողջ գրական ժառանգությունը: 90-ական թվականներին նա արդեն հառաջացած տարիքում Վերդենբերգյան տարեգրքում ծնողների պատմածների ու գրածների, ինչպես նաև իր մանկական հուշերի հիման վրա լույս է ընծայել «Վերդենբերգյան մի ընտանիք Արևելքում» խորագրով

²⁰⁶ Mühlbach am Hochkönig

²⁰⁷ Հմմտ. «Զոնի» պատճենը, էջ 318:

²⁰⁸ Երբ վերջերս Վերդենբերգի մշակույթի արխիվին դիմեցի, որպեսզի ձեռք բերեմ Զիգրիստ-Հիլթիի ընտանիքի պատմության վերաբերյալ որոշ պակասող նյութեր, մանավանդ ընտանեկան լուսանկարներ, արխիվի ղեկավարությունը Զիգրիստների թոռնուհու՝ Լինդա Զիգրիստի միջոցով այլ կարևոր նյութերի թվում իմ ուշադրությունը բևեռեց հատկապես Արամյանի գրքի վրա:

չորս արժեքավոր հոդված²⁰⁹։ Նա հատուկ խնամքով պահպանել է նաև Արամյանի՝ Զիգրիստներին գերմաներենով ուղարկած նամակներն ու փոստային բացիկները, ինչպես նաև հայոց լեզվով մի քանի հոդված և, անշուշտ, նաև նրա հայերեն գիրքը։ 2005 թ. իր անտիպ նոթերում Ռուդին գրում է. «Հայրս 1915 թ. փրկել է հայ գրողի կյանքը, որը 1970-ին Բեյրութում հրատարակել է հայոց լեզվով մի գիրք։ Դրա շապիկի ներսում հեղինակն իր հատուկ երախտագիտությունն է հայտնում իր փրկչին»։ Իսկ տարիներ հետո Ռուդին, որ Հայոց ցեղասպանության մասին ծնողների պատմած սրտաճմլիկ պատմությունները լսելուց հետո որոշակի հետաքրքրություն, ինչպես նաև գիտելիք էր ձեռք բերել այդ նյութի շուրջ, տալիս է Արամյանի գրքի մասին իր բարձր գնահատականը։ Թեսսա Հոֆմանի՝ ցեղասպանության թեմայով հրատարակած գրքերից²¹⁰ մեկի էջերի վրա Ռուդի Զիգրիստը իր ձեռագրով բազմաթիվ դիտողություններ ու լրացումներ է թողնում։ Նա այնտեղ, օրինակ, ցավ է հայտնում, որ իր մոր օրագիրը բացակայում է Հայոց ցեղասպանության ականատեսների վկայությունների թվում։ Իսկ գրքի 6-րդ էջի վրա նա կատարում է հետևյալ նշագրումը. «Այս գիրքը պետք է ուսումնասիրվի Հայկ Արամյանի հայերեն գրքի հետ մեկտեղ, որ լույս է տեսել 1970-ին», և նա տակը ստորագրում է. «11 հուլիս, 2005, Ռ. Զիգրիստ»։ 1992 թ. Ռուդին Արամյանի գիրքը նվիրում է իր հայ բարեկամներին։ Նրա գրած այլ նշումներից ելնելով՝ կարելի է ենթադրել, որ տարիների ընթացքում նա հայ բարեկամների օգնությամբ որոշ չափով ծանոթացել էր Արամյանի հուշագրքի բովանդակությանը։

²⁰⁹ Sigrist-Clalüna, Rudolf, “Eine Werdeberger Familie im Orient” Jahrbuch 1991, էջ 150-159, Jahrbuch 1992, էջ 125-137, Jahrbuch 1993, էջ 191-200, Jahrbuch 1994, էջ 149-161:

²¹⁰ Hofmann, Tessa (Hg.): *Das Verbrechen des Schweigens. Die Verhandlungen des türkischen Völkermords an den Armeniern vor dem ständigen Tribunal der Völker*, 1985 (=Progrom-Taschenbücher 1012).

Ես անմիջապես ձեռնամուխ եղա Արամյանի գրքի ընթերցանությանը: Հետաքրքրությունս կրկնակի պատճառ ուներ. նախ գրքի հեղինակը ցեղասպանությունը վերապրած հայ մտավորական էր, իսկ հայտնի է, որ Առաջին աշխարհամարտի ժամանակ Թուրքիայում ապրող Արամյանի սերնդակից հայ մտավորական այրերից հազիվ թե մի քանի տասնյակ է փրկվել, փրկվածներից էլ շատ քչերին է հաջողվել պատմել իրենց տեսածն ու ապրածը: Այս գրքից ես ստույգ տեղեկություններ պիտի ստանայի այն հանգամանքների մասին, որոնք Արամյանին Անատոլիայի հյուսիսից բերել-հասցրել էին պատմական Կիլիկիայի տարածաշրջան՝ Ամանոսյան երկաթգծի շինարարության և հատկապես Զիգրիստների մոտ: Բացի այդ մանրամասներից՝ ես նաև պիտի տեղեկանայի, թե ինչպիսի մասնակցություն են ունեցել իմ հերոսները՝ Ֆրից և Կլարա Զիգրիստ-Հիլթիները, Արամյանի ճակատագրի կերտման հարցում: Հետաքրքրում էին ինձ նաև այն մարդկային փոխհարաբերությունները, որոնք գոյություն են ունեցել վերակացու «երկրաչափ»²¹¹ Զիգրիստի ու հայ պահեստապետ Արամյանի, ինչպես նաև Բաղդադի երկաթգծի շինարարության վրա աշխատող մյուս հայերի միջև:

Արամյանի հուշագիրքը կարդացի մեկ շնչով: Այնտեղ հնչում է Բաղդադի երկաթուղու՝ Ամանոսյան լեռների Իսլահիե-Ռաջու հատվածի շինարարության վրա աշխատանք գտած և շվեյցարացի ճարտարագետ Ֆրից Զիգրիստի ու նրա տիկնոջ՝ Կլարա Զիգրիստ-Հիլթիի կողմից փրկված հայ մարդու ձայնը²¹²: Այդ ձայնը ասում է ընթերցողին. Cui honorem,

²¹¹ «Երկրաչափ» - այն բառը, որն Արամյանն իր գրքում կիրառում է «ճարտարագետի» կամ «ինժեների» փոխարեն:

²¹² Շատ հայտնի են երկու հայ մտավորականների հուշերը, որոնք Ամանոսի տարածքի այլ տեղամասերում՝ Բաղդադի երկաթուղու շինարարության մեջ, ապաստան էին գտել և հրաշքով ազատվել է ջարդից:

ա) Պալաքյան, Գրիգորիս: Հայ Գողգոթան, հայերեն բնագիրը 1922, ֆրանսերեն թարգ. 2002, անգլերեն թարգ. 2009 (տե՛ս գրականության ցանկը, էջ 410):

honorem: Պատի՛վս արժանավորաց: Իր գրքում Արամյանը խոսում է Բաղդադի երկաթուղու շինարարության Ամանոսի տեղամասում աշխատող բոլոր այն հայերի անունից, որոնք հնարավորություն չեն ունեցել ապրելու և տարիներ անց իրենց երախտագիտությունը հայտնելու շվեյցարացի ճարտարագետ Ֆրից Ջիգրիստին իր հոգացավ վերաբերմունքի համար: Միայն Արամյանին է, որ դա հաջողվել է:

Պետք է նշել, որ Արամյանի գիրքը Ջիգրիստներին նվիրված երախտագիտական բանագրություն լինելուց առաջ այն է, ինչ վերնագիրն է ազդարարում. «Հայոց Տանթեականի» նկարագրությունն է իր ամբողջ դժոխայնությամբ, որը ցեղասպանության ամբողջ ընթացքում հեղինակը ոչ միայն իր անձի վրա է զգացել, այլև բախտի բերմամբ երբեմն դրա «միայն» սարսափահար ականատեսն է եղել:

Արամյանի հուշերի փոքր տպաքանակի պատճառով է հավանաբար, որ Հայոց ցեղասպանության պատմության համար այսքան կարևոր գիրքը Մերձավոր Արևելքի երկրների սահմաններից դուրս շատ քիչ տարածում է ստացել: Ցավալի է նաև, որ այդ գիրքը եվրոպական կամ որևէ այլ լեզվով չի թարգմանվել: Այլապես այսօր շվեյցարացի ճարտարագետ Ֆրից Ջիգրիստի անունը ցեղասպանության գրականության մեջ նույնպես հայտնի դարձած կլիներ, ինչպես բոլոր այն եվրոպացի ճարտարագետների անունները, որոնք Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Բաղդադի երկաթուղու վրա աշխատանքի լծված հայերին սատարել են, բայց, ցավոք, միշտ դեմ են առել երիտթուրքերի վճռականությանը՝ չխնայելու հայերից որևէ մեկի կյանքը: Ափսո՛ս, որ անհայտ է մնացել նաև Կլարա Ջիգրիստի օրագիրը, որը մերթընդմերթ նշում է ամուսնու՝ Ֆրից Ջիգրիստի բարեգոր-

p) Hartunian, Abraham H.: Neither To Laugh nor To Weep. Հայերեն ձեռագրից անգլերեն է թարգմանել որդին՝ Վարդան Հարթունյանը, 1968 թ. (տե՛ս գրականության ցանկը, էջ 412):

ծությունները հալածված հայերի և մանավանդ իր մոտ՝ Բաղդադի երկաթգծի ամանոսյան տարածքում դժվար պայմաններում աշխատող հայ աշխատավորների ու նրանց ընտանիքների նկատմամբ: Պատմությունը մինչև օրս կգրանցեր նաև Կլարա Զիգրիստի անունը, որը 1916 թ., չնայած իր հղի վիճակին, մի րոպե անգամ չի վարանել իր պաշտպանության տակ առնելու և թուրք ժանդարմներից թաքցնելու հալածված հային:

Արամյանի գրքի ընթերցումից ես ստացա ինձ հետաքրքրող բոլոր հարցերի պատասխանները և հնարավորություն՝ դրանք հաղորդելու և՛ հայ, և՛ օտար ընթերցողներին: Գերմանախոս և անգլիախոս ընթերցողների համար Արամյանի գրքից ընտրված որոշ մասեր այնտեղ տրվում են համապատասխան լեզվով՝ գերմաներենով կամ անգլերենով, ըստ որում՝ մասամբ թարգմանաբար, մասամբ ամփոփումների միջոցով: Իսկ արևելահայ ընթերցողի համար սույն գրքում Արամյանին վերաբերող հատվածները կտրվեն մերթ Արամյանի արևմտահայերեն բնագրով, մերթ արևելահայերեն ամփոփումներով և վերլուծություններով:

Որքան էլ որ Արամյանն իր գրքում ժամանակ առ ժամանակ դիմում է օրագրային ոճին՝ նշելով ամսաթվեր, երբեմն նույնիսկ տարեթվեր, պարզորոշ է, որ նրա գիրքը օրագրություն չէ, այլ հուշագրություն, այն էլ՝ մի մարդու կողմից, որը կես դար հետո հիշատակագրում է իր գլխով անցած փորձությունները: Հավանական է, որ Արամյանը տասնամյակների ընթացքում աղետալի անցյալը չմոռանալու նպատակով հիշածները երբեմն գրի է առել: Դրանց հիման վրա է երևի, որ նրան հաջողվել է իր գրքում անցյալն այդքան հավաստիորեն վավերագրել: Միայն երբեմն է, որ Արամյանի տեղեկությունները շեղվում են իրականությունից, իսկ դա վերագրելի է դեպքերի վաղեմության, ինչպես նաև Արամյանի հառաջա-

ցած տարիքի²¹³: Պետք է նկատի ունենանք, որ հեղինակը գիրքն ավարտելիս արդեն 85 տարեկան է եղել: Այնուամենայնիվ, երբ այսօր համեմատում ենք Արամյանի հուշագրությունը նույն ժամանակաշրջանին վերաբերող Կլարա Զիգրիստ-Հիլթիի՝ մեզ թողած չափազանց ճշգրիտ, օր օրի վրա փաստագրված օրագրի հետ, զարմանք են պատճառում երկու հեղինակների գրվածքներում առկա զուգահեռները. նախ՝ եղելությունների մանրամասները, դրանց ամսաթվերն ու տարեթվերը, տեղանունները (Քելեր, Էնթիլի, Իսլահիե, Ամանոս և այլն) և գործող անձանց անունները (Վինքլեր, Մորֆ, Վիթիգ և ուրիշներ): Դեռ ավելին՝ Արամյանի տված մանրամասները երբեմն լույս են սփռում Կլարայի օրագրությունների բովանդակության վրա, քանի որ վերջինիս նոթերը տեղի սղության պատճառով չափազանց հակիրճ են: Բավական է միայն համեմատել Արամյանի փախուստի հանգամանքների նկարագրությունը երկու հեղինակների մոտ, որպեսզի համոզվենք, թե որքան հավաստի են Արամյանի վկայությունները, իսկ մյուս կողմից էլ՝ թե որքան են նրանք ամբողջացնում Կլարայի տված տեղեկությունները: Կես դարից էլ ավելի մեծ տարբերությամբ ստեղծված այս երկու գործերի մեջ նկատելի համընկնումները պետք է ոչ միայն զարմանք պատճառեն: Նրանք ընթերցողին պետք է համոզեն, որ Արամյանի հուշագրությունը ևս Կլարայի օրագրից ոչ պակաս վավերագրական բնույթ ունի:

²¹³ Այսպես, Արամյանը երկու դեպքում շփոթում է շվեյցարական զույգի որդիների անունները: Օրինակ՝ Զիգրիստների առաջնեկի անվան՝ Կառլֆրիդելիի անվան փոխարեն օգտագործում է եղակներից մեկի՝ Ռուդիի անունը:

Բաղդադի երկաթուղին և Հայոց ցեղասպանությունը

Արամյանի գրքի կարևորությունը, ինչպես նաև նրա առկայության օրինավորությունը Զիգրիստ-Հիլթի ընտանիքի արխիվային նյութերում հասկանալու համար անհրաժեշտ է մի պատմական ակնարկ կատարել Բաղդադի երկաթուղու²¹⁴ և այդ գործում հայ աշխատավորների ներդրման վերաբերյալ, առանց որի, պատմաբանների համոզմամբ, անհնարին պիտի լիներ այդ երկաթուղու կառուցումը: Այդպիսի ակնարկը ավելի հասկանալի կդարձնի նաև ներկա գրքում ներկայացված Կլարա Զիգրիստ-Հիլթիի օրագրի և այլ նյութերի բովանդակության մանրամասները:

Բաղդադի երկաթգծի կառուցումը, որը պատմության մեջ մտավ որպես իր ժամանակի՝ շինարարական ամենախիզախ ձեռնարկումներից և Եվրոպայի մեծապետական փառամոլության ցայտուն օրինակներից մեկը, ծրագրվեց 19-րդ դարի վերջում և սկսվեց 20-րդ դարի սկզբում: Կառուցման հիմնական նպատակը Բոսֆորը Պարսից ծոցի հետ կապելն էր: Սկզբից նեթ Գերմանիան այդ ծրագրի մեջ տեսավ իր համար մի շարք առավելություններ: Միացնելով Բեռլինը Օսմանյան կայսրության կարևոր կենտրոնների հետ և այնտեղից կապ ստեղծելով մինչև Բաղդադ՝ Գերմանիան տեսավ արևելքում իր ազդեցության տարածումը, ինչպես նաև Թուրքիային տնտեսապես լայնորեն օգտագործելու հեռանկարը: Բաղդադի երկաթգիծը պիտի լիներ Անատոլիայի երկաթուղու շարունակությունը և սկսվելով Կոնյայից՝ ձգվեր դեպի հարավ, Ադանայի վրայով անցնելով՝ ձեռքբեր Տավրոսի

²¹⁴ Տե՛ս նյութի վերաբերյալ մի շատ կարևոր հոդված՝ Hilmar Kaiser: The Bagdad Railway and the Armenian Genocide 1915-1916. A case Study in German Resistance and Complicity. In: Hovannisian, R. (Ed.), Remembrance and Denial: The Case of the Armenian Genocide, 1999, էջ 67-112:

և Ամանոսի լեռնաշղթաները, ուղղվեր դեպի Հալեպ և Մոսուլն անցնելով՝ հասներ Բաղդադ:

1903 թ. մարտի 5-ին Գերմանիան Օսմանյան կայսրությունից ստացավ Բաղդադի երկաթգծի կառուցման արտոնությունը (կոնցեսիան) և ստանձնեց դրա կառուցման իրավունքը՝ դրանով իսկ ավելի սրելով մրցակցությունը մյուս մեծ տերությունների, հատկապես Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի հետ: Վիլհելմ 2-րդ կայսրի հովանավորությամբ գերմանական արևելյան քաղաքականության այս վիթխարի նախաձեռնությունը ֆինանսավորվեց գլխավորապես Գերմանական բանկի (Deutsche Bank) կողմից և իրագործվեց Ֆիլիպ Հոլցման (Philipp Holzmann) գերմանական ֆիրմայի ղեկավարությամբ: 1600-կիլոմետրանոց երկաթուղու շինարարական աշխատանքները տևեցին 38 տարի (1903-1940), և Օսմանյան կայսրության փառամոլ ծրագիրը հաջողությամբ ավարտվեց մեծ մասամբ գերմանական դրամով և շինանյութով, ինչպես նաև մեծ թվով գերմանացի ճարտարագետների մասնակցությամբ:

1914 թ. հոկտեմբերին, երբ Օսմանյան կայսրությունը, դաշնակցելով Գերմանիայի ու Ավստրո-Հունգարիայի հետ, մտավ Առաջին համաշխարհային պատերազմ, ավարտվել էր միայն Կոստանդնուպոլսի Հայդարփաշա կայարանից մինչև Բոզանտի (Bozanti) հատվածը: Բաղդադի երկաթուղու շինարարության աշխատանքները կանգ էին առել Տավրոսի ժայռոտ լեռնաշղթան ճեղքելու դժվարությունների առաջ, քանի որ անհրաժեշտ էր մեծ թվով փապուղիներ (թունելներ) փորել: Այնուհետև Ադանայի և Հալեպի միջև կար առավել մեծ մի արգելք՝ Ամանոսի երկարավուն լեռնաշղթան, որի միջով նույնպես մեծ թվով անցքեր պիտի փորվեին, որից հետո հյուսիսում երկաթուղին պիտի միանար Տավրոսի լեռնաշղթայի հետ: Պատերազմն սկսվելուն պես շինարարությունը լեռնային այդ տարածաշրջաններում մեծ թափ ստացավ, քանի որ պատերազմական վիճակը դրա ավարտումը հրա-

տալ էր դարձրել: Անհրաժեշտ էր իրագործել երկաթգծերի անցկացումը ապառաժներ պայթեցնելու միջոցով նվազագույն ժամանակամիջոցում, քանի որ երկու հատվածներն էլ թուրքական զինվորական իշխանության հրամանով պիտի օգտագործվեին դեպի Պաղեստինի ու Միջագետքի ռազմաճակատները՝ ռազմական փոխադրումներ կատարելու համար²¹⁵:

Տավրոսի և Ամանոսի տարածաշրջանում Բաղդադի երկաթուղու դժվարագույն աշխատանքների համար Շվեյցարիայից հրավիրվել են ալպյան ժայռոտ լեռներում աշխատանքային փորձ ունեցող ճարտարագետներ: Պատահական չէ ուրեմն, որ այս գրքում ճարտարագետ Ֆրից Զիգրիստ-Հիլթիի կողքին աչքի են ընկնում մեծ թվով այլ շվեյցարացի ճարտարագետների անուններ²¹⁶:

Մեծ մարտահրավեր էին լեռնային տեղանքի աշխատանքները հատկապես մեզ հետաքրքրող Ամանոսյան լեռնաշղթայի միջով անցնող հատվածում՝ ծայրահեղ ժայռոտ և գրեթե անանցանելի տեղանքով: Այստեղ՝ աշխարհագրական 1478 մ բարձրության վրա, անհրաժեշտ էր 14 փապուղի կառուցել, որի ընդհանուր երկարությունը պիտի կազմեր 9,5 կմ, և որի որոշ հատվածները ձեռքով պիտի փորվեին²¹⁷: Շինարարական աշխատանքները նման դժվարին տեղանքում, մեծ վարպետությունից բացի, պահանջում էին նաև ճարտարագիտական հսկայական որակյալ մարդկային ներուժ, որը, սակայն, պատերազմի պատճառով բացակայում էր: Հարցի լուծումը շատ շուտով ներկայացավ: 1915 թ. գարնանը սկիզբ առավ հայերի ցեղասպանությունը, և Օսմանյան կայսրության մեջ ապրող հայ քաղաքացիների կյանքի արժեքը հավասարվել էր զրոյի: Ուստի հայերը, որոնք իրենց անխու-

²¹⁵ Yosul/Sahar (2015), էջ 17:

²¹⁶ Տե՛ս հատկապես Կլարա Զիգրիստ-Հիլթիի օրագիրը:

²¹⁷ Yosul/Sahar (2015), էջ 18:

սափելի ոչնչացումից առաջ Բաղդադի երկաթուղու շինարարության համար վճռական գործոն դարձան, նրանք ներկայացան որպես և՛ լավագույն, և՛ էժանագույն աշխատուժ։ Իսկ վարձատրությունը։ Մեծ մասամբ՝ հաց ու ջուր և ժամանակավոր կյանքի շնորհում։

Բաղդադի երկաթուղու շինարարական աշխատանքներում ճնշող մեծամասնությունը կազմող հայ աշխատավորների պատմությունը շատ քիչ է ուսումնասիրված, և նրանք գրականության մեջ սովորաբար, անկախ կարգավիճակից, վերագրվում են միևնույն՝ «բռնի կամ հարկադիր աշխատանքի լծվածներ»²¹⁸ դասին։ Հարցի ուսումնասիրությունը ինձ հանգեցրեց այն եզրակացությանը, որ ըստ կարգավիճակի անհրաժեշտ է տարբերակել Բաղդադի երկաթուղու շինարարական աշխատանքներում զբաղված հայազգիների երեք դաս.

1. օրինավոր կերպով աշխատանքի ընդունված մարդիկ,
2. բռնի կամ հարկադիր աշխատանքի լծված մարդիկ,
3. ոչ օրինավոր կերպով վարձակալված փախստականներ։

1. Դեռևս Առաջին համաշխարհային պատերազմից առաջ գերմանական շինարարական ընկերությունը Տավրոսի, Ամանոսի և հյուսիսային Սիրիայի հատվածների շինարարական աշխատանքների համար օրինավոր կերպով աշխատանքի էր ընդունել 880 հայ մասնագետների և էլ ավելի մեծ թվով արհեստավորների և շինարար բանվորների²¹⁹։ Երբ պատերազմն սկսվեց, հաշվի առնելով նրանց կատարած աշխատանքի կարևորությունը՝ այդ աշխատավորները չզինակոչվեցին։ Իրենց հարուստ գիտելիքներով, օտար լեզուների իմացությամբ, բազմապիսի կարողություններով և

²¹⁸ Գերմ. Zwangsarbeiter, անգլ. Forced laborer:

²¹⁹ Kaiser, Hilmar (1998), նույն տեղում, էջ 72:

մանավանդ ջանասիրությամբ այդ մարդիկ շատ շուտով ձեռք բերեցին առաջնակարգ աշխատողների համբավ, և հայերի պահանջարկը Բաղդադի երկաթուղու շինարարության վրա մեծացավ: Ահա նրանց մասին է վկայարացի միսիոներ Յակոբ Քյունցլերն իր «Արյան և արցունքի երկրում» գրքում գրում. «Երկաթուղու շինարարության բոլոր պատասխանատու պաշտոնները զբաղեցնում էին հայերը: Բաղդադի երկաթուղու գլխավոր գանձապահը, գլխավոր հաշվետարը հայեր էին: Աներևակայելի ու անհնարին էր, որ Բաղդադի երկաթուղու շինարարության [*գերմանական* Դ. Ս.] ընկերությունը մեծ ու կարևոր պաշտոնում նշանակեր որևէ թուրքի կամ այլ մահմեդականի»²²⁰:

2. Պատերազմի սկզբին երիտթուրքական իշխանությունները 16-60 տարեկան հայ, հույն և այլազգի, ոչ մահմեդական տղամարդկանց՝ որպես ճակատի համար անվստահելի տարրերի, նախ ուղարկեցին փողոցաշինության ու բեռնակրության: Սրանք շինարար զինվորներ էին, որոնց զենք չէին վստահում, սակայն լծում էին ամենածանր գործերի: Աշխատանքային և կլիմայական ծանր պայմաններում նրանցից շատերը մահանում էին, իսկ մնացածներին ոչնչացնում էին որպես ենթադրյալ դավաճանների²²¹: Շուտով Բաղդադի երկաթգծի կարևորության պատճառով զինվորագրյալ հայ երիտասարդներին սկսեցին զանգվածաբար ամրակցել «ամելե տաբուրու» (“amele taburu”)²²² կամ «ինշաաթ տաբուրու» (“Inşaat taburu”)²²³ կոչվող հատուկ ջոկատներին և ուղարկել Բաղդադի երկաթգծի կառուցման վայրերը²²⁴: Այստեղ նրանց օրնիբուն բանեցնում էին շինարարական աշխատանքների

²²⁰ Քյունցլեր, Յակոբ (2011), էջ 161:

²²¹ Gottschlich, Jürgen (2015), էջ 27.

²²² Բանվորների ջոկատ:

²²³ Շինարարների ջոկատ:

²²⁴ Lepsius, Johannes (1927), էջ 33:

ամենադժվար կետերում՝ փապուղիները ձեռքով փորելու, ժայռերը պայթեցնելու կամ կոտրելու, քար կրելու և այլ տա-
 ժանակիր աշխատանքների համար: Հենց որ այդ տարա-
 բախտների աշխատանքը ավարտվում էր, նրանց կա՛մ կո-
 տորում էին²²⁵ տեղնուտեղը թուրք պահակների ձեռքով,
 կա՛մ իրենց վերջնական «նպատակակետի»՝ Դեր Ջորի ճա-
 նապարհին, որտեղ այդ սև գործը ստանձնում էին թուրք
 կամ գերմանացի զինվորական հատուկ ջոկատներ²²⁶: Թեև
 պատերազմի ամբողջ ընթացքում ցեղասպանվող հայերին
 իրենց ողբացյալ վիճակներում լուսանկարելը խիստ արգել-
 ված էր²²⁷, ցեղասպանության գրականության մեջ շրջում են
 սրտաճմլիկ լուսանկարներ, որոնք պատկերում են շարան-
 ներով գետնին փռված հայ տղամարդկանց դիակները: Նույ-
 նիսկ Զիգրիստների ընտանեկան նկարների ամանոսյան
 շրջանի լուսանկարներում գտնվեց այդպիսի մի լուսանկար:
 Ահա թե այդ հայ աշխատավորների մասին ինչ է ասվում Հա-
 յոց ցեղասպանության 100-րդ տարեդարձի առթիվ գերմա-
 նական՝ «*Frankfurter Allgemeine Zeitung*» առաջավոր թերթում
 լույս տեսած հոդվածում. «Բաղդադի երկաթուղին վկան է
 բռնի աշխատանքի լծված հայերի ողբերգության»²²⁸:

3. 1915 թ. ամռանը Բաղդադի երկաթուղու լեռնային
 տեղամասերի շինարարական աշխատանքները մեծ թափով
 սկսվել էին, սակայն աշխատող ձեռքերի պակասն զգալի էր:
 Ճիշտ այդ ժամանակ է, որ ամանոսյան տարածքով ամեն օր
 անցնում էին հյուսիսային գավառներից տեղահանված հա-
 զարավոր հայերի քարավանները, իսկ երեկոներն այդ աք-
 սորյալները գիշերում էին երկաթուղային կայարաններին

²²⁵ Eichholtz, Dietrich (2007), էջ 62:

²²⁶ Տե՛ս այդ կապակցությամբ Կլարա Զիգրիստ-Հիլթիի վկայությունը, էջ 184:

²²⁷ Hofmann, Tessa (2015), էջ 2:

²²⁸ Ֆրայտագ, Բերնդ (Freytag, Bernd): *Frankfurter Allgemeine Zeitung* թերթում, հունվարի 6, 2015, էջ 19:

կից գտնվող հավաքատեղիներում կամ համակենտրոնացման ճամբարներում: Բաղդադի երկաթուղու ընկերության շրջանակներում հայազգի աշխատավորների վաստակած բարի անունը թույլ էր տալիս ուղեմասի կառուցման համար պատասխանատու ճարտարագետներին (գրեթե բոլորն էլ հայ անձնակազմին համակրող եվրոպացիներ՝ գերմանացի, շվեյցարացի, ավստրիացի և այլն) աշխատունակ հայ տարագիրներին երթերի միջից կամ ճամբարներից դուրս բերել²²⁹ և հաճախ ամբողջ ընտանիքով գործի ընդունել: Պատահում էր նաև, որ այդ նույն ճարտարագետները կամ նրանց միջնորդները գնում էին հայաբնակ մոտակա վայրերը և մարդկանց աշխատանքի ընդունում դեռ տեղահանումներից առաջ²³⁰:

Քիչ չէին նաև դեպքերը, երբ որոշ հայ մտավորականներ, որոնց հաջողվել էր խույս տալ թուրքի յաթաղանից, այս եվրոպացի սրտացավ ճարտարագետների մոտ ապաստան էին գտնում²³¹: Նրանք ժամանում էին փոխված անուններով և պատրաստ՝ կատարելու որևէ աշխատանք: Եվրոպացի պատասխանատուները, իրենց արարքի ապօրինությանը քաջատեղյակ լինելով հանդերձ, այդպիսի փախստականներ-

²²⁹ Ահա մի խոստուն հատված ճարտարագետ Ֆրից Զիգրիստի՝ հայ վաղամեռ բարեկամներին ուղղված նամակից [տե՛ս էջ 307]. «Այդ օրերին ինձ հաջողվեց մեր մոտակայքով անցնող արքայալների մի փոքր հատվածին երկաթուղու կառուցման աշխատանքներում զբաղեցնել և դրանով նրանց գոնե մի որոշ ժամանակով պարգևել մի կտոր հաց, բնակատեղի և մի քիչ էլ հոգեկան ապահովություն»:

²³⁰ Տե՛ս Ս. Հարթունյան (Abraham H. Hartunian, 1968), որտեղ պատմվում է, թե ինչպես Բախչեի ճարտարագետ Կլաուսը (Klaus) գնում է Մարաշ՝ այնտեղի տեղահանումներից առաջ մասնագետ հայերի հավաքագրելու նպատակով, այդ կապակցությամբ աշխատանքի է ընդունում պատվելի Աբրահամ Հարթունյանին՝ փրկելով նրան:

²³¹ Այսպես, օրինակ, հայ հոգևորական Գրիգորիս եպիսկոպոս Պալաքյանի կյանքը փրկվել է հենց այդ սրտացավ ճարտարագետներից մեկի՝ Կլաուսի ջնորհիվ: Տե՛ս Գ. Բալաքյանի «Հայկական գողգոթա» գիրքը:

րին անմիջապես օգնության ձեռք էին մեկնում՝ նրանց որևէ աշխատանքի տեղավորելով: Երբեմն նրանց միջև բարեկամություն էր հաստատվում:

Այսպես է, որ հազարավոր հայեր փախուստ էին տալիս մահվան երթերից և ապաստան գտնում Ամանոսի տարածաշրջանում, այսինքն՝ Յարբաշի-Բաղչե-Այրան-Էնթիլի-Քելեր (Yarbaşı-Bahçe-Ayran-Entilli-Keller)²³² կայարանների շինարարական աշխատանքներում: Ամանոսում հայ տարագիրների «ապօրինի» վարձակալումը պետք է որ մեծ չափերի հասած լիներ: Անշուշտ, այդ անկարելի պիտի լիներ առանց գերմանական շինարարական ընկերության գիտության, որի փոխտնօրեն Ֆրանց Գյունթերը (Franz Günther) հարցը համաձայնեցրել էր գերմանացի իր վերակացուների հետ: Ու այսպես, նույնիսկ թուրք իշխանություններն էին ձևացնում, որ ոչինչ չգիտեին այդ ապօրինությունների մասին և լռում, քանի որ ռազմավարական նպատակների համար ժամանակավորապես բոլորին անհրաժեշտ էր, որ արագորեն լեռներ ու ժայռեր հաղթահարվեին, փապուղիներ կառուցվեին և դրանց միջով երկաթգծեր անցկացվեին:

Արամյանը դիպուկ օրինակ է Բաղդադի երկաթուղու հայազգի աշխատողների 3-րդ դասի համար: Համաձայն Արամյանի հուշագրության՝ հեղինակն ինքը, 1915 թ. աշնանը փախուստ տալով տարհանվածներին դեպի Հալեպ տանող ապրանքատար գնացքից, Իսլահիեում հույն առևտրականի միջնորդությամբ աշխատանք էր գտել գերմանացի ճարտարագետ Էրլերի (Erler) մոտ: Լավ տիրապետելով ֆրանսերենին՝ Բաղդադի երկաթգծի պաշտոնական լեզվին, Արամյանն այնտեղ շատ շուտով հիմնավորվում է հեռագրողի և քարտուղարի պաշտոնում: Եվ նա նույնպես սկսում է օգնել մոտակայքից անցնող տարագրյալ հայերից շատերին՝ նրանց

²³² Տե՛ս ամանոսյան տարածքի քարտեզը, էջ 92-93:

աշխատանքի տեղավորելով իր վերակացու Էռլերի մոտ: Հետագայում, երբ Էռլերի տեղամասի աշխատանքն ավարտվում է, Արամյանը երկրորդ անգամ աշխատանքի է անցնում այս անգամ իր ընկերոջ՝ Լևոն Մազմանյանի հետ, Իսլահիեից ոչ հեռու գտնվող մի այլ տեղամասում՝ Քելերում, շվեյցարացի ճարտարագետ Ֆրից Զիգրիստի մոտ, որը երկու հայերին էլ ինքնագլուխ որոշմամբ աշխատանքի է ընդունում, ընդ որում՝ Արամյանին պահեստապետի, իսկ Մազմանյանին՝ վերջինիս օգնականի պաշտոնում²³³:

Հազարների հասնող հայ աշխատողների բանակում²³⁴ կային ոչ միայն դրսում՝ ուղեմասում զբաղված շինարար և օժանդակ բանվորներ՝ հյուսներ, քարտաշներ, փորողներ, քարհատներ, քարկիրներ և այլն, այլ նախ և առաջ առաջատար մասնագետներ ու գրասենյակային որակյալ ծառայողներ՝ թուրքերենի և մի քանի օտար լեզուների լավ իմացությամբ: Դրանց մեջ աչքի էին ընկնում բացառապես հայորդի «հերթափոխային գրագիրները»²³⁵, որոնց վրա ընկած էին շինարարական աշխատանքների ժամանակացույցի համակարգումն ու համադասումը՝ օրվա և գիշերվա հերթափոխությունների նշանակումը և շինարարական աշխատանքների կազմակերպումը: Նրանք, փաստորեն, ժամանակակից համակարգիչների դերն էին կատարում: Այդ է պատճառը, որ թուրքերի՝ այդ հայերին վտարելու դավադիր ծրագրերը մեծ մտահոգություն էին պատճառում եվրոպացի ճարտարագետներին: Հաշվետարների ու հաշվապահների, բժիշկների

²³³ Տե՛ս Ֆրից Զիգրիստ-Հիլթիի նամակը «Հայ բարեկամներին». «Այդ օրերին ինձ հաջողվեց մեր մոտակայքով անցնող աքսորյալների մի փոքրիկ մասի ներգրավել իմ տնօրինության ներքո գտնվող երկայնուղու կառուցման աշխատանքներում (...),» էջ 307:

²³⁴ Դժվար է ապօրինի հայ աշխատողների ճշգրիտ թիվը որոշելը, քանի որ նրանցից շատերը չէին գրանցվում և կամ աշխատանքի էին նշանակվում կեղծ՝ ոչ հայկական անուններով:

²³⁵ Գերմ. Schichtenschreiber; անգլ. Timekeeper:

րի ու դեղագործների մեծ մասը նույնպես հայ էր: Հայ աշխատողների մեջ կային նաև եվրոպական կրթությամբ ճարտարապետներ և ճարտարագետներ: Լավագույն արհեստավորները նույնպես հայեր էին՝ դարբիններ ու որմնադիրներ, գողող բանվորներ, էլեկտրիկներ ու թիթեղագործներ, դերձակներ ու կոշկակարներ և այլն²³⁶:

Այդ օրերը վերապրող հայերը պատմել են հուզիչ պատմություններ երկաթուղու հայ աշխատողների կյանքից, թե ինչպես են նրանք իրենց խնայողություններով կաշառել անցնող քարավանները հսկող ժանդարմներին ու երիտասարդ շատ տղաների ու աղջիկների դուրս բերել այդ քարավաններից, թե ինչպես են երթերից ազատել հայ երիտասարդ կանանց ու ամուսնացել նրանց հետ՝ փրկելով նաև վերջինների ընտանիքներին, թե ինչպես են թափառող որբուկներին հավաքել ու օգնել, որ տեղավորվեն Էնթիլիի որբանոցում, որը համահիմնադրվել ու պահպանվում էր շվեյցարացի ճարտարագետ Քյոփելի կողմից (Köppel): Տպավորիչ են պատմությունները հայ բախտակից աշխատողների միջև եղած բարեկամական կապերի ու այն մասին, թե ինչպես են նրանք իրար օգնել ու պաշտպանել թուրք պահակների ոտնձգություններից: Արամյանը պատմում է, որ ընդհանրապես Բաղդադի երկաթգծի Ամանոսի տարածքում հայ տարագիրների համար համեմատաբար տանելի մի կյանք էր ստեղծվել: Զիշտ է, վարձատրությունը նվազագույն էր, աշխատանքային պայմանները՝ շատ ծանր, սակայն հայերն այստեղ դժգոհելու հիմք չունեին, քանի որ գտնվում էին բարյացակամ եվրոպացիների հովանու տակ և ոչ թե մահվան երթերում: Մնում էր Բաղդադի շինարարության վրա աշխատող հայերին միայն երազել, որ պատերազմը շուտով ավարտվեր, և թուրքերը չհասցնեին իրենց ոչնչացնել...:

²³⁶ McMeekin, Sean (2010), էջ 255; Balakian, Grigoris (2009), Armenian Golgotha, էջ 270:

Սակայն, ավա՛ղ: Դեռևս 1915 թ. օգոստոսին հայ շինարարների շարքերում ծայր առավ անապահովությունը: Շրջակա հայաբնակ վայրերում սկսվել էին տեղահանումները, որոնք անդրադառնում էին հայ աշխատողների կյանքի վրա: Այդ ամենը սկսվեց մոտակա Քիլիսի հայերի տեղահանությամբ, որի հետևանքով երկաթգծի քիլիսցի հայ աշխատողներին նույնպես պարտադրեցին թողնել իրենց աշխատատեղերը և միանալով իրենց ընտանիքներին՝ բռնել արքայի ճամփան: Շուտով տեղահանումների հոսանքը տարածվեց շրջապատի հայաբնակ այլ վայրերի վրա, և երկաթգծի հայ աշխատողների տեղերը գնալով ավելի նոսրացան: Երբ գերմանացի գլխավոր ճարտարագետ և հայերի մեծ պաշտպան Յոհան Վինկլերը (Johann Winkler) այդ կապակցությամբ իր դժգոհությունը հայտնեց Ադանայի վալիին, վերջինս նրան փորձեց «մխիթարել»՝ ասելով, որ շուտով ժամանելու են հայերին փոխարինող թուրք անփորձ մահմեդականներ²³⁷:

Օրեցօր պարզ էր դառնում, որ երիտթուրքերի իշխանությունների թիրախն այժմ ուղղված էր Բաղդադի երկաթուղու անխտիր բոլոր հայ աշխատավորների վրա: Իրենց նպատակին հասնելու համար թուրքերն ընդունեցին երկու որոշում. ա) երկաթուղու պաշտոնական լեզուն այսուհետ լինելու էր թուրքերենը և ոչ ֆրանսերենը, բ) հայ մասնագետները փոխարինվելու էին մահմեդականներով: Նման որոշումները առաջ բերեցին Անատոլիայի երկաթուղային ընկերության ընդդիմությունը, և ընկերության փոխնախագահ Ֆրանց Գյունթերը (Franz Günther) բողոքով ներկայացավ պատերազմի նախարար Էնվերին և ներքին գործերի նախարար Թալեաթին: Գյունթերը զգուշացրեց, որ հայ անձնակազմի տեղահանումները խափանելու էին շինարարական աշխա-

²³⁷ St' u Kaiser, Hilmar (1998), էջ 78-79:

տանքները աշխարհագրական այդքան դժվարին տեղանքում և նույնիսկ նպաստելու էին Օսմանյան կայսրության կործանմանը²³⁸:

Իրավիճակը մեղմացնելու նպատակով Թալեաթը 1915 թ. օգոստոսին Բաղդադի երկաթուղու հայ աշխատավորների տեղահանումը հետաձգելու մասին հրաման արձակեց, մինչև որ ապահովվեր հայերի փոխարինումը մահմեդական մասնագետներով: Սակայն մի քանի շաբաթ անց հրամանը մոռացվեց և գաղտնի կերպով վերացվեց: Նախ սկսեցին օժանդակ աշխատանքներ կատարող հայերին և նրանց ընտանիքներին տարհանել՝ նրանց փոխարինելով թուրքերով: Շուտով հրամանը դժնդակորեն տարածվեց երկաթուղու շինարարության, մասնավորապես Ամանոսում բոլոր հայերի վրա²³⁹:

Հայտնի են ճարտարագետ Վինքլերի բողոքարկումներն ու շինարարական աշխատանքները դադարեցնելու սպառնալիքները, որոնք և որոշ ժամանակով իրագործվեցին: Սակայն թուրք կառավարության աննկուն կամքը կատարվեց, և հայ խաղաղ բնակչության տեղահանումներին զուգընթաց շարունակվեցին նաև հայ շինարարների աստիճանական տեղահանումները:

1915 թ. հոկտեմբերի 16-ին Թուրքիայում գերմանական ռազմական առաքելության անդամ և Օսմանյան գերագույն դաշտային երկաթուղու տնօրեն, փոխգնդապետ Սիլվեստեր Բյոթրիխը (Sylvester Böttrich, Lieutenant Colonel, In charge of the Ottoman railroads in the Turkish supreme General staff) ստորագրեց մի հրաման, որով Բաղդադի երկաթուղու շինարարության վրա զբաղված բոլոր հայերը, անկախ նրանց վարձակալման եղանակից, պետք է աշխատանքից ազատվեին և արքայի ճանապարհը բռնեին: Տեղամասերի ճարտարագետ-

²³⁸ St' u Kaiser, Hilmar (1998), նույն տեղում:

²³⁹ Նույն տեղում:

ների բողոքարկումները և նույնիսկ Ֆրանց Գյունթերի և նրանից էլ բարձր կանգնած Արթուր Գվինների ընդվզումները ի վիճակի չեղան վիճարկելու կամ մեղմացնելու Բյոթրիխի հրամանը:

Այդ օրերից պատմում են հետևյալ միջադեպը: Մի ամբողջ տարվա կանոնավոր տեղահանումներից հետո, երբ երիտթուրք կառավարությանը թվում էր, որ իրենց հայաջինջ քաղաքականությունը հասել է իր նպատակին, 1916-ի փետրվարյան մի օր ռազմական նախարար Էնվեր փաշան անցնում էր Ամանոսի տարածաշրջանով: Տեսնելով ուղեմասում հայերի մի մեծ խումբ, որ աշխատում էր երկաթագծերի տեղադրման վրա, նա զայրացած բացականչում է. «Այդ սրիկաներից մենք դեռ չենք ազատվել: Մի՞թե նրանք դեռ կան»²⁴⁰: Ի դեպ, Արամյանն իր գրքում նույնպես հաղորդում է այն մասին, որ 1916 թ. փետրվարին, երբ ինքն ամանոսյան տարածքում իր ձիու վրա գնումների էր դուրս եկել, անձամբ տեսել և ճանաչել է Էնվեր փաշային իր մոտով անցնող մեքենաներից մեկի մեջ²⁴¹: Իսկ Կլարան 1916 թ. փետրվարի 16-ի իր գրառման մեջ հաստատում է այդ փաստը: Ուշագրավ է, որ այդ տարեթվից անմիջապես հետո երիտթուրքական կառավարությունը ավելի մոտիկից է զբաղվում Ամանոսում աշխատող հայերի տեղահանության հարցով՝ անկախ նրանց՝ երկաթուղու շինարարության համար անփոխարինելիությունից: Կլարան հայտնում է իր օրագրում, որ Բյոթրիխն (Bötttrich) իր տխրահռչակ հրամանն արձակելուց ամիսներ հետո անձամբ է ներկայանում Իսլահիե, որպեսզի հետևի, թե ինչպես է կատարվում իր հրամանը և համապատասխան

²⁴⁰ Balakian, Grigoris (2009), էջ 273:

²⁴¹ Տե՛ս այս գլխում, էջ 363:

Ճնշում գործադրի հայերին պաշտպան կանգնած եվրոպացի վերակացուների վրա²⁴²:

Բյոթրիխի այցին անմիջապես հաջորդեցին խիստ ստուգումներ՝ նախ որոշելու օրինավոր և ապօրինի կերպով աշխատող մարդկանց թիվը և դրանց փոխհարաբերությունը, ապա բոլորի համար ցուցակներ կազմվեցին՝ յուրաքանչյուր աշխատողի անձին վերաբերող ճշգրիտ տվյալներով, որոնք նշվում էին գաղտնագրերով: Բոլոր հայերը պարտավոր էին ունենալ «վեսիկատ» (Vesikat) կոչվող ինքնության թղթեր և թևերին կապել կարմիր երիզով ժապավեններ: Այդ բոլոր միջոցառումների համար տրվեցին կեղծ բացատրություններ: Ահա թե այդ կապակցությամբ ինչ է գրում Կլարան հունիսի 14-ին իր օրագրում. «Թուրք կատարածունների ամբողջ վարքագիծը լի է ստով, խարդավանքով ու դաժանությամբ»²⁴³:

1916 թ. ամբողջ ընթացքում Բաղդադի շինարարության վրա մնացած սակավաթիվ հայերի համար, նրանց վարձակալման եղանակից անկախ, դժոխային պայմաններ էին ստեղծվել: Կլարա Զիգրիստի օրագրի 1916 թվականի՝ իր հղիության տարվա ընթացքի գրառումները լի են այդ տարվա տագնապալից պահերի նկարագրություններով: Հալածանքի օղակը գնալով ավելի էր խեղդում Բաղդադի երկաթուղու հայ աշխատավորներին, և Կլարան ապրումների մեջ է: 1916 թ. հունիսի 16-ին նա գրում է. «Վիշտը ճնշում է մարդուն, և միայն մեկ միտք է գերիշխում՝ հեռանալ այս գարշելի երկրից»: 1916 թ. հունիսը նաև այն ամիսն է, երբ ամանոսյան աշխատանքային բոլոր տեղամասերը շրջափակվել էին ժանդարմների կողմից, և ոչ ոք չէր կարող փախուստի

²⁴² «Ֆրիցը ավագ լեյտենանտ Բյոթրիխի (Bötttrich) և Վինքլերի հետ Իսլահիեում է: Ներկայումս շտապեցնում են հայերի ցուցակների կազմումը: Դեռևս հայտնի չէ, թե ում կարելի կլինի մեզ մոտ պահել: Սակայն երևում է՝ հայերի վտարումը շատ խիստ բնույթ է ստանում»: Կլարայի օրագրից, 1916, փետրվարի 19:

²⁴³ Տե՛ս էջ 183:

դիմել: Այնուամենայնիվ, այդ օրերին է, որ շվեյցարական գույգին հաջողվել է օգնել ապօրինի կերպով վարձակալված Արամյանին, որ նա իր օգնականների հետ փախուստ տա շրջափակումից և փրկվի²⁴⁴:

Ինչպես կարդում ենք Հ. Քայգերի՝ Բադդադի երկաթուղուն նվիրված իր հոդվածում, 1916 թ. հունիսի 13-ին՝ հենց Արամյանի փրկված օրը, ժանդարմները եկել ու հայ աշխատավորների մի զգալի մասի հանկարծակյի բերելով՝ դուրս են հանել իրենց աշխատատեղերից և ընտանիքներից բաժանելով՝ տարել են անհայտ ուղղություններով: Ահա թե այդ առիթով ինչ է հաղորդում հայերի շվեյցարացի բարեկամ Յակոբ Քյունցլերը. «Երբ արդեն 1915 թ. այս գործունյա աշխատավորներին նույնպես աքսորն էր սպառնում, երկաթուղու ճարտարագետները՝ գերմանացիներ ու շվեյցարացիներ, ամբողջ ուժով դիմադրեցին դրան: Այդ պարոններից մեկն ինձ պատմեց, որ գրեթե մի ամբողջ տարի ստիպված են եղել պայքարել թուրքերի՝ այդ աշխատողներին մաքրագործելու ծրագրի դեմ: Սակայն նրանք, այսուհանդերձ, 1916 թ. հունիսին աշխատանքից հանեցին մի քանի հազար մարդու: Ահա նրանք էին այն տղամարդիկ, որոնք՝ որպես վերջին քարավան, անցան Ուրֆայով: Այլևս պետք չեղավ, որ նրանք շատ հեռու գնան: Վերանշեհիրում նրանց վիճակվեց նույն ճակատագիրը, ինչ իրենցից առաջ վիճակվել էր հարյուր հազարավոր իրենց եղբայրներին: Նրանց բոլորին դաշունահարելով սպանեցին»²⁴⁵:

Ո՛չ շինարարական ընկերության մեծամեծների՝ Գվիների ու Գյունթերի վիճաբանությունները Գերմանիայի արտաքին գործերի նախարարության հետ, ո՛չ էլ ամանոսյան տարածքում բոլոր տեղական շինությունների եվրոպացի ղեկա-

²⁴⁴ Արամյանի փախուստի մանրամասների մասին տե՛ս սույն գրքում բերված քաղվածներում:

²⁴⁵ Քյունցլեր, Յակոբ, Արյան և արցունքի երկրում, էջ 101-102:

վարների բողոքները կարողացան որևէ արդյունք տալ: Երիտթուրքական կառավարությունն այդ հարցում անսասան էր. անկախ նրանից, թե որքան օգտակար և անփոխարինելի էին հայերը երկաթուղու կառուցման համար, նրանք, ի հեճուկս ամեն տեսակի բողոքարկումների, պետք է գնային: Թուրք զինվորները, պատերազմի հնդիկ և անգլիացի զերիները և ուրիշներ պետք է մարզվեին ու փոխարինեին հայերին: Այս հանգամանքը չափազանց դժվարացրեց տեղական շինությունների եվրոպացի ղեկավարների գործը:

Այսպիսով՝ Առաջին աշխարհամարտի ամբողջ ընթացքում Բաղդադի երկաթուղին զանազան թելերով առնչվեց Հայոց ցեղասպանությանը: Հազարավոր հայեր մասնակցեցին դրա շինարարությանը, այնտեղ նրանք նախ շահագործվեցին, ապա հիմնականում կոտորվեցին: Բացի դրանից՝ բոլոր այն հատվածներում, որտեղ Բաղդադի երկաթուղին գործում էր, այն օգտագործվեց հայաբնակ վայրերից տարահանված հայ բնակչության համար որպես արագ փոխադրամիջոց դեպի ոչնչացումը: Կանանց, երեխաներին ու ծերերին խցկում էին անասունների համար նախատեսված գնացքները և անմարդավայել պայմաններում քշում սիրիական անապատների ուղղությամբ: Նրանցից շատերը մահանում էին սովից, ծարավից, թթվածնի պակասությունից և մանավանդ համաճարակներից: Ծնվում էին երեխաներ, որոնք հսկող ոստիկանների հրամանով դուրս էին նետվում գնացքներից: Այս բոլորից բացի՝ Բաղդադի երկաթուղու ամբողջ երկայնքով՝ կայարաններին կից, կազմվում էին համակենտրոնացման ճամբարներ, որտեղ հազարավոր հայեր մահանում էին սովահար, գերհոգնած ու հիվանդ²⁴⁶: Ինչպես իմ վկաները՝ Կլարան և Ֆրիցը, այնպես էլ իմ վկաների վկան՝

²⁴⁶ Gust, Wolfgang (2005), էջ 237; Wegner, Armin (1920), էջ 28:

Արամյանը, քանիցս այցելել են այդ ճամբարները և սեփական աչքերով տեսել մարդկանց ողբերգական վիճակը²⁴⁷:

Ճիշտ է, որ Ամանոսի տարածաշրջանը Հայոց ցեղասպանության գլխավոր և ամենաահապուր թատերաբեմերից չի եղել և միայն երկրորդաբար է ազդվել դրա հետևանքներից: Այնուամենայնիվ, հազիվ թե մի այլ տեղ, ինչպես այստեղ՝ Ամանոսում, այդքան պարզորոշ կերպով դրսևորվեց այդ օրերի թուրք իշխանությունների՝ մինչև վերջին հային ոչնչացնելու վճռականությունը: Այստեղ հազարավոր անմեղ մարդիկ՝ հմուտ և աշխատասեր, իրենց աշխատանքային գրասեղաններից ու դարբնոցներից հանվեցին և քշվեցին դեպի ոչնչություն: Ամանոսի շրջանում ցեղասպանությունը նաև ավելի երկար տևեց: Ոչ թե միայն 1915 թ. ու մասամբ 1916 թ., ինչպես ընդունված է կարծել, կոտորածը ձգվեց մինչև 1917 թ. և դրանից այն կողմ: Դրա մասին վկայում են Կլարա Զիգրիստի օրագրությունները:

Ականատեսների վկայությամբ ամանոսյան տարածաշրջանում հայ աշխատավորների նկատմամբ կիրառվող չարագործությունները հրեշավոր բնույթ ունեին: Ահա այստեղ մի քանի տող՝ գերմանացի ռազմաճակատային բժիշկ Թեո Մալադեի (Theo Malade) պատերազմական օրագրից (Իսլահիե, 1916 թ.):

«Ապագա Թուրքիան այս պատերազմից դուրս է գալու հսկայական առավելությամբ, այնպիսի մի ձեռքբերումով, որը նրանից ոչ ոք այլևս չի կարող խլել: Ամբողջ երկիրը՝ հյուսիսից մինչև հարավ, կառուցապատվել է երկաթգծերով և հանրուղիներով: Անշուշտ, դա տեղի է ունեցել գերմանացիների կողմից ինչպիսի՝ աշխատանքով և հայ բնիկների կողմից ինչպիսի՝ զոհերով: Հազարներով են նրանք այստեղ փոված եղել ճամփաներին,՝ ասում է ինձ վյուրթենբերգցի մի

²⁴⁷ Տե՛ս մեջբերում Արամյանից, էջ 361:

ճարտարագետ,– հալածված, սովահար, համաճարակներից ու տանջանքներից մահացած հայերի դիակները, տասնյակ հազարավոր հայեր էլ այլ տեղերում են այսպես կործանվել»²⁴⁸:

Իսկ Կայսերական Գերմանիա՞ն: Նրա համար Թուրքիայի հետ դաշնակցությունը գերակա էր, և այդ բոլորը նրան չէր հուզում: Իսկ ո՞րն էր այդ ժամանակաշրջանի Գերմանիայի արտաքին գործերի նախարարության պաշտոնական դիրքը: Երբ 1915 թ. դեկտեմբերին Գերմանիայի արտակարգ և լիազոր դեսպան Վոլֆ-Մետերնիխը (Wolff-Metternich) հաղորդեց Կանցլեր Բեթման Հոլվեգին (Reichskanzler Bethmann Hollweg) հայերի նկատմամբ իրագործվող արհավիրքների, իսկ թուրքերի՝ դրանց ուրացման մասին՝ Գերմանիայից պահանջելով թուրքերի հանդեպ ավելի հաստատուն կեցվածք ունենալ, ահա թե ինչ պատասխան ստացավ նա Կանցլերից. «Մեր միակ նպատակը թուրքերին մինչև պատերազմի վերջը մեր կողմը պահելն է՝ անկախ նրանից, թե դրա ժամանակ հայեր կկործանվեն, թե ոչ: Եթե պատերազմը ավելի երկար տևի, մենք թուրքերի կարիքը շատ ենք ունենալու»²⁴⁹: Կանցլերի այս պատասխանը, փաստորեն, կործանվող հայ ժողովրդին ազդարարում էր, որ վերջինս Գերմանիայից որևէ սպասելիք չէր կարող ունենալ: Նույն պատճառով է, որ իր մարդասիրությամբ հայտնի մի այլ գերմանացի դիվանագետի՝ Հալեպի գերմանացի հյուպատոս Վալտեր Ռյոսլերի (Walter Rössler) 200 հաղորդագրերն ու հեռագրերը ևս, փոխանակ մամուլում հայտնվելու, անհետանում էին արխիվներում²⁵⁰: Ահա նույն ժամանակաշրջանում Թուրքիայում գտնված գերմանացի լրագրող, «Kölnische Zeitung» թերթի թղթակից դ-ր Հարի Շտյուրմերի (Dr. Harry Stuermer)՝ 1917 թ.

²⁴⁸ Malade, Theo (1930), էջ 120:

²⁴⁹ Gust, Wolfgang (2005), էջ 395:

²⁵⁰ St' u Seyffart, Karl (2015):

տեսակետը. «Դիտել, թե ինչպես էին ոչնչացվում հարյուր հազարավոր մարդկանց կյանքն ու ունեցվածքը, բարեկեցությունն ու մշակույթը, և բավարարվել թեթևակի և ձևական բնույթի բողոքներով՝ այդ բոլոր ոտնձգությունների դեմ ամենայն վճռականությամբ հանդես գալու ամբողջ իրավագործությունը ունենալով հանդերձ, ոչ այլ ինչ է, եթե ոչ խղճի աններելի բացակայություն, և ես չեմ կարող ձեռքագատվել կասկածից, որ չնայած պաշտոնական գեղեցիկ նախադասություններին, որոնք հաճախ արտասանվում էին Գերմանիայի դեսպանատանը «Հայկական հարցի» վերաբերյալ, մեր պարոնայք դիվանագետներին հիմնականում շատ քիչ էր հուզում այս ժողովրդի գոյատևման հարցը»²⁵¹:

Բաղդադի երկաթուղին ի բնե մի գերմանական ձեռնարկ էր, որ գործում էր գերմանական շինարարական ընկերության գլխավորությամբ և գերմանական բանկի (Deutsche Bank) ֆինանսավորմամբ: Թուրք դաշնակցի հանդեպ մի փոքր «հաստատակամությունը» բավական պիտի լիներ, որպեսզի գերմանական կառավարությունը կարողանար օգնել, եթե նույնիսկ ոչ կործանվող ամբողջ հայ ժողովրդին, գոնե երկաթուղու շինարարության մեջ զբաղեցված հայ աշխատողներին: Եվ այս դեպքում ևս, եթե նեցուկ չէր կանգնելու երկաթուղու թե՛ օրինավոր և թե՛ ապօրինի կերպով վարձակալվածներին, ապա օրենքի ամբողջ ուժով ի վիճակի պիտի լիներ տեր կանգնելու գոնե վերջիններից մի քանի հազար մարդկանց՝ «օրինավորներին»²⁵²: Չէ՞ որ նրանք դեռևս պատերազմից առաջ գերմանական ընկերության կողմից գերմանական բժախնդրությամբ ընտրված և օրինավոր կերպով աշխատանքի ընդունված մասնագետներ էին, որոնք, ինչպես երկաթուղու շինարարության ամբողջ անձնակազմը,

²⁵¹ Stuermer, Harry (1917), էջ 58:

²⁵² Տե՛ս վերևում նկարագրված առաջին դասի հայ աշխատավորների մասին հատվածը, էջ 329:

վճարվում էին գերմանական բանկից: Սակայն գերմանական կառավարությունը հանդես բերեց քար անտարբերություն և մի մատ անգամ չուզեց շարժել իր իսկ հայ պաշտոնյաներին փրկելու համար: Պարզապես թողեց, որ նրանք գնան դեպի իրենց «ապահով» մահը: Միայն մի քանիսն էին հազարավոր այդ հայերից, որ ողջ մնացին գերմանական շինարարական ընկերության ջանքերով:

ՓՐՈՖ. ՀԱՅԿ Ա. ԱՐԱՄԵԱՆ
(ՈՒՆԻԱՆՈՎ)

ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՊԱՏԳԱՄ

ՀԱՅՈՑ ՏԱՆԹԷԱԿԱՆ

ՔԱՆԱՐԱՆ ԵՒ ՀՐԱԾԱՆԻ ՅԱՐՈՒԹԻՒՆ

ՊԵՂՈՒՄ
1970

Հայկ Արամյանի գրքի կազմը

Քաղվածքներ Հայկ Արամյանի գրքից

«ԴԱՌՆԱԿՄԿԻԾ ԲԱԺԱՆՈՒՄ»: Այս վերնագիրն է կրում Արամյանի գրքի առաջին գլուխը, որով հեղինակը սկսում է իր կյանքի արկածալից մի հատվածի պատմությունը:

14 մարտի, 1914 թ.: Ութ տարի Խարբերդ քաղաքի և նրա շրջակայքի լավագույն դպրոցներում և լիցեյներում հաջողությամբ պաշտոնավարելուց հետո ուսուցիչ Հայկագուն Արամյանը հրաժեշտ է տալիս բարեկամներին, գործընկերներին և աշակերտներին: Ողջերթին եկել է նաև Մեզբերի համայնքի սիրված Տեր Գարեգին քահանան՝ նրան Պահպանիչ կարդալու: Շատ ծանր սրտով էր հեռանում Արամյանն այս քաղաքից: Ամբողջ մի ամիս նա տատանվում էր՝ մեկնե՞ր, թե՞ մնար. շվարած նա հարցնում էր ինքն իրեն: Չէ՞ որ Խարբերդում նրա գործերը լավ էին ընթանում: Նա այստեղ ճանաչվել, գոհացուցիչ դիրքի էր հասել, բավական լավ դրամ էր վաստակում և արդեն մտածում էր ընտանիք կազմելու մասին: Սակայն «հայերը խորհում են, թուրքերը՝ տնօրինում»: Թուրք կառավարությունը որոշում էր ընդունել, և Կոստանդնուպոլսի կրթական նախարարությունից արդեն հեռագիր էր ստացվել՝ նրա «պաշտոնը բարձրացնելու» և Ադանայի սուլթանի լիցեյը փոխադրելու մասին: Վաստակն էլ ավելի մեծ էր լինելու, քան Խարբերդինը. ամսական 1000 դահեկան, որը համարվում էր բավական բարձր աշխատավարձ: Քանզի պատմական Կիլիկիայի տարածաշրջանում մեծ թափ էր ստացել գերմանական վարչակազմ ունեցող Բաղդադի երկաթգծի շինարարությունը և գերմաներենի ուսուցիչների մեծ պահանջ կար: Պահանջարկ կար նաև ֆրանսերենի, որը Բաղդադի երկաթուղու կառուցման գրասենյակների միջազգային լեզուն էր: Ուստի Ադանայի սուլթանի լիցեյում Արամյանը դասավանդելու էր գերմաներեն և ֆրանսերեն, ինչպես նաև երգեցողություն, իսկ բարձրաստիճան ընտանիքների երեխաներին տալու էր դաշնամուրի և ջութակի մաս-

նավոր դասեր: Ի վերջո, Արամյանը պարտավորված էր զգացել ենթարկվել կառավարական որոշմանը:

Ադանայում Արամյանին լավ են ընդունում, և նա անմիջապես գործի է անցնում: Սակայն հայ մտավորականի համար կյանքն Ադանայում դժոխային է: Ամեն ինչ նրան հիշեցնում է 4-5 տարի առաջ այստեղ տեղի ունեցած հայկական ջարդերը: Բացի դրանից, Խարբերդի հետ համեմատած, Ադանա քաղաքն ինքնին Արամյանի համար ամեն տեսակետից անհրապույր է: Վատ են նրա տպավորությունները առաջին օրվանից, մանավանդ կլիմայի, օդի և ջրի մասին: Քաղաքը կեղտոտ է ու փոշոտ, նաև շատ ծախսոտ, ուստի նա մի սենյակ է վարձում գյուղում, որտեղ *«աղբակոյտեր են ամեն կողմ», և ուր «փայտի պակասին տեղ թրիքի կամ գշկուրի կրակը [կը վառեն], որ կ'արձակե սեւ խեղդող մուխի գուլաներ»,* և որտեղ չկա *«ո՛չ մի զուլալ աղբիւրակ»*, որ զովանաս: Բնակարանային պայմանները վատ են: Գիշերը քուն չկա, քանի որ *«Մութը կոխածին պէս, Սիճունի երկու ափերուն ճաճճային [...] տարածքին գորտերը կը փրցնեն մի կռկռոցի անհամարում կանչուրուտով»,* իսկ հետո *«լուերու անհամար ցատկուտուն վարմեր»* իր վրա հարձակում են գործում: Բայց ամենակարևորը՝ չունի Արամյանն Ադանայում սրտամոտ հայ ծանոթներ, հայ աշակերտներ կամ աշխատակիցներ, իսկ այնտեղի հայ բնակչությունը մեծ մասամբ թրքախոս է: Նա կարոտ է մնում *«Մեսրոպեան ոսկեդսիկ լեզուի քաղցր բարբառին»*: Շատ չանցած՝ սկսում են զինակոչել Արամյանի տարեկից տղամարդկանց և խստություններ բանեցնում բանակից խուսափողների նկատմամբ: Ուստի հենց որ դպրոցական արձակուրդներն սկսվում են, Արամյանը գործուղվում է Կոստանդնուպոլիս՝ այնտեղ Գերմանիայում բարձրագույն ուսումնառության համար հրապարակված մրցույթին մասնակցելու:

Ծանր են անցնում Արամյանի համար ամառային ամիսները Կոստանդնուպոլսում: Այդ ընթացքում սկսվում է Առաջին համաշխարհային պատերազմը, որին շուտով մաս-

նակցում է Օսմանյան կայսրությունը: Մայրաքաղաքում քառասային վիճակ է ստեղծվում, և Արամյանի կյանքում միանգամից ամեն ինչ խորտակվում է: Շուտով նա տեղեկանում է, որ քաղաքական շփոթ կացության հետևանքով մասնագետ ուսանողների Գերմանիա տանող մրցույթը չեղյալ է հայտարարվել: Ամեն ինչ սարսափելի թանկանում է, Արամյանի գրպանի դրամը գնալով հալչում է, իսկ ամենախղճուկ հյուրանոցն էլ անմատչելի է նրա համար: Ի վերջո նա նույնիսկ խմելու ջուր գնելու դրամ չունի: Արամյանը քանիցս լսում է, որ օտար լեզուներ իմացողներ են փնտրվում՝ որպես թարգմանիչ աշխատելու համար: Բայց նրա շատ անփութք տեսք ունի: Հագուստը-կապուստը կեղտոտ է ու անխնամ, և նա չի հանդգնում որևէ տեղ ներկայանալ: Դիմում է խարբերոցի ծանոթ ատամնաբույժ Տ. Եղիկյանին, վերջինիս պարտքով տված գումարը օգնում է նրան, բայց միայն որոշ ժամանակով:

Եվ այսպես՝ տեսնում ենք Արամյանին Առաջին աշխարհամարտի հորձանքում, և թե ինչպես է նա դատարկ գրպաններով և քաղցած քարշ տալիս գոյությունը: Հայերի նկատմամբ հալածանքներն սկսում են ուժեղանալ, և -յան-ով վերջացող իր անունը նրան խանգարում է որևէ գործ գտնել: Ու մի օր էլ, երբ նա հատուկ հանձնարարականներով գնում է Պատերազմական նախարարություն՝ դիմելու թարգմանչի պաշտոնի համար, հենց շենքում սվինավոր հսկիչներ նրան ձերբակալում են: Բողոք, աղաչանք, պաղատանք, բացատրություն, թե ով է նա, օգուտ չունի: Եվ զինակոչիկների մի ամբողջ գումարտակի հետ, ձեռնակապերով շղթայված, քշվում է դեպի փողոց և ապա դեպի կայարանի արգելարանը, որտեղից նրանց պետք է ուղարկեն Դարդանելի ճակատը: Բայց ճարպիկ է Արամյանը և հնարամիտ: Մահն իր աչքի առաջ՝ նա թաքնվում է, բայց բռնվում ու դաժան խոշտանգումների է ենթարկվում: Ապա կրկին փախչում է, և նրան սատար է կանգնում հայրենակից ատամնաբույժ Տ. Եղիկյանը:

Արամյանին հատկապես օգնում է լեզուների իր իմացությունը: 1914 թ. աշնանը նրան Ադանայից ետ են կանչում մանկավարժական աշխատանքի: Դեկտեմբերի 9-ին նա կրկին Ադանայում է, և այս անգամ նրան մատուցվում է այն ամենը, ինչից զրկված է եղել նախորդ անգամ՝ նոր և ավելի ապահով աշխատանքային պայմանագրեր, գեղեցիկ բնակարան, լավ աշխատանքային պայմաններ և էլ ավելի բարձր աշխատավարձ: Այս անգամ նա ունի երկու հայ աշխատակից: Կայսերական լիցեյի նոր տնօրենը՝ Համդի բեյը (Hamdi bey), ինչպես և երիտթուրքական կառավարության բարձրաստիճան այլ պաշտոնյաներ բարյացակամ են նրա հանդեպ: Բացի լիցեյից՝ նրան գերմաներենի ու երաժշտության դասաժամերի են հրավիրում ուսումնական այլ հաստատություններ ևս: Ադանայի կառավարիչ Իզմայիլ Հաքքիի (Ismail Hakki) աղջկա հետ դաշնամուրի մասնավոր դասերը մեծ համբավ են բերում Արամյանին: Սակայն Արամյանը գոհ չէ իր գործունեությունից, նրա խիղճը տանջում է: Ահա թե նա ինչ է գրում.

«Փրիկունը, առանձին մնացած ծանր մոտատնջութեան պայքար մը բռնկեցաւ ներսիդիս: Հայկազուն, դուն վատորդի ես: Դարաւոր թշնամիի որդիներուն կը ներարկես իրենց յատուկ մղէ-ռանդ, այլազգիներ այրող թոյն եւ մարտական ոգի: Ամօթ քեզի, Հայկազուն, ան ալ զէյթունցի: Ի՞նչ պիտի խորհին ոգիները դարերու ընթացքին Ունիոյ ազատութեան Համար Հերոսաբար կռուող նախահայրերուդ: Աղասի, Մլէհ, Ապահ, ի՞նչ կ'ըսէք: Ի՞նչ պիտի ընէիք, զիս այս անպատիւ դերի մէջ տեսնելով» (Արամյան 1970, էջ 102):

Իր գրքում՝ 1915 թ. մարտի 10-ի օրագրային ոճով շարադրված մի տեղեկագրության մեջ, Արամյանը հայտնում է, որ նա՝ որպես լեզվագետ, է՛լ ավելի առաջ է գնացել՝ նշանակվելով Թուրքիայի դատաստանական ատյանի թարգմանիչ: Սակայն այդ պաշտոնին անցնելու հենց առաջին իսկ օրը նա սոսկում է, երբ իրեն ներկայացված թարգմանվելիք փաստա-

թղթերից տեղեկանում է, որ բանտարկվել են հայտնի հայ մտավորականներ, և որ կախաղան են բարձրացրել մի հայորդու: Արամյանը հոգեկան ծանր ապրումների մեջ է:

1915 թ. ապրիլին Կոստանդնուպոլսից Ադանա են հասնում դժնդակ լուրեր այն մասին, որ թվով 200-ից ավելի հայ մտավորականներ ձերբակալվել են ու անհայտ ուղղություններով տեղափոխվել երկրի խորքերը: Դրանից անմիջապես հետո նման լուրեր են գալիս երկրի հայաբնակ այլ կենտրոններից: Սկսվում է Արևելյան Անատոլիայի հայ բնակչության տարահանումը՝ սկզբում պատմական Հայաստանի շրջաններից, ապա երկրի հյուսիսից, և ի վերջո տարահանումներն ստանում են զանգվածային բնույթ: Կազմակերպված և բռնի տեղահանվում է Փոքր Ասիայի ամբողջ հայ խաղաղ բնակչությունը, մեծ մասամբ կանայք, երեխաներ և ծերեր, քանի որ տղամարդկանցից շատերը ոչնչացվում են անմիջապես: Հյուսիսային նահանգներից եկող բռնի տեղահանվածների առաջին քարավաններն սկսում են անցնել Ադանայի միջով, որտեղ նույնպես զգալի է դառնում հայատյացությունը:

1915 թ. օգոստոսին պաշտոնապես հայտարարվում է, որ տեղի բոլոր հայերը պարտավոր են հեռանալ քաղաքից: Ադանայի օդը լցվում է մորեխների երամներով, և դրանից կիսամթնած քաղաքում հայ եկեղեցիներ են թալանվում և կործանվում: Չնայած մորեխների ամպին՝ քաղաքի կենտրոնական հրապարակում լավ տեսանելի են առաջին երեք կախված հայերի օրորվող մարմինները: Շուտով Ադանայից ևս սկսվում են դուրս գալ առաջին տեղահանված բնիկների քարավանները: Քաղաքի վալին Արամյանին խորհուրդ է տալիս ատամների բուժման համար գնալ Հալեպ (Արամյան 1970, էջ 106-107):

Այդ օրերին Արամյանը Ադանայի կուսակալության կրթական տեսուչ Մեհեմեդ Շյուքրի բեյից հետևյալ նամակն է ստանում.

**«Ատանայի Կուսակալութեան Կրթական Տեսուչ Մէհէմմետ
Շիքրի Պէյին ինձ ուղղուած խօսքերը կրօնափոխութեան եւ
թրքանալու**

Որդիս, քեզ շատ կարեւոր խնդրի մը Համար քովս կանչել տուի: Թէ՛ կուսակալ Իսմայիլ Հագգը Պէյ, եւ թէ՛ Սուլթանի Լիսէին տնօրէն Համտի եւ վարժապետանոցի տնօրէն Բահմի Պէյին ալ անունով քու բարիքիդ մասին կը թելադրենք: Որդիս, մեղք ես, մեզի մայրաքաղաքէն իրարու ետեւ խիստ Հրամաններ կը Հասնին: Բոլոր Հայերը բռնագաղթի պիտի ենթարկուին: Հրաժարիր-եան կոչուածներէն: Գործդ վատ կ'ըլլայ: Եկուր, ուղիղ կրօնքը ընդունէ եւ կեանքդ փրկէ: Բոլորս քեզ կը Հաննինք: Ի՛նչ զարմանք: Հատ մը կարողութիւններու տէր ես: Մինչեւ իսկ մեր օրիորդ-ուսանողուհիներ քու երգի դասերէդ շատ գոհ մնացեր են: Խարբերդի Սուլթանի Լիսէին տեսուչ Ֆերիտ Պէյ, Վարժապետանոցի տնօրէն Ապտուլ-պագի, Կրթական Տեսուչ Սապրի Պէյ քեզ շատ կը գովէն քեզի իբր բացառութիւն: Եթէ կամենաս դառնալ եւ ըլլալ մերիններէն, Կ. Պոլիս Կրթական Նախարարութեան մասնաւոր խնդրանք պիտի ներկայացնենք Ձեզի ի նպաստ:

Ձեզի²⁵³ Հանդէպ կատարեալ վստահութիւն ունինք: Գերմաներէնի, աշխարհագրութեան, կրթութեան եւ երգեցողութեան դասերը Ձեզի կը յանձնենք: Լա խորհեցէք: Երբ տարագրուիք, ո՛վ գիտէ, ո՛ր պիտի կորսուիք, մահանաք եւ ոչնչանաք: Եթէ մեր առաջարկը ընդունելու ըլլաք, թէ՛ կը փրկուիք եւ թէ՛ քաղաքա-կրթութեան մեծ ծառայութիւն կը մատուցանէք: Ո՛վ գիտէ, մեր ուսանողուհիներէն մին եւ կամ երկուքը Ձեզ կը սիրեն, կ'ամուսնա-նաք եւ օսմանեան ազգին մէկ օգտակար անդամ կը դառնաք: Ձեզի երկու շաբաթ պայմանաժամ կուտանք: Մեր քով կայ ազա-տութիւն եւ անկախութիւն: Մեղքը Ձեր ճիտին: Լա խորհեցէք: Երթաք բարի: Մնացէ՛ք բարեաւ» (Արամյան 1970, էջ 111):

²⁵³ Անհայտ պատճառներով նամակի հեղինակը երկրորդ պարբերության մեջ Արամյանին դիմում է՝ անցնելով եզակի թվից հոգնակիին: Օտարաց-ման սպառնալիք: Ո՛վ գիտի:

Սակայն Արամյանը, որի խիղճը թուրք լուսավորության ասպարեզին իր մատուցած ծառայությունների պատճառով արդեն տանջում էր, կտրականապես մերժեց Շյուքրի բեյի առաջարկը՝ ընտրելով աքսորի տանջալից ճանապարհը:

Եվ ահա տեսնում ենք Արամյանին, թե ինչպես է նա, իր աշխատակից Հրանտ Ասրբեանին ընկերացած, միանում Ադանայից աքսորվող 30 հազար հայերի քարավանին: Օրերով նրանք սոված ու ծարավ քայլում են Ադանայից դեպի Իսլահիե: Ճանապարհին քարավանի վրա հարձակվում են ավազակները՝ կողոպտելով մարդկանց: Սակայն այս երկու երիտասարդ հայերը ամենից շատ հոգեպես տանջվում են՝ տեսնելով իրենցից ավելի թույլ հայրենակից քույրերի ու եղբայրների, հիվանդների ու ծերերի տառապանքները: Ու Արամյանը գրում է.

«Օսմանիէն մինչև Իսլահիէ (Աքսորիս) գեռ երկաթուղին շինուած չէր, եւ գաղթականներուն ստուար մասը Հետիոտն, միշտ ոստիկաններու Հսկողութեան տակ, ստիպուած է այս գերբուկ ճամբաներէն վեր քալել: Քանի՜ քանին՝ ուժասպառ ետ կը մնան: Մայրիկներ յոգնաբեկ իրենց զաւակներէն մէկ երկուքը ստիպուած կը թողուն: Լալ Հեծկտալ Հառաչանք օդը կը լեցնեն աղիողորմ ճիւղերով: Ժանտարմաները երթալով աւելի ոխերիմ, աւելի անզգամ, արդէն սկսած են սպառնալ, կողոպտել, անառակութիւններ ընել անպաշտպան կիներու եւ աղջիկներու պատուոյն վրայ բռնանալով: Ի՛նչ կարող են ընել երիկ մարդիկը, արդէն յուսալքուած եւ անդիէն Պաղչէէն կուգայ մի նոր ստուարաթիւ Հայ կարաւան մը, մեզի միանալու, Հեծեալ ոստիկաններու գոռոզ Հսկողութեան տակ: Մօտ 1800 մեթր բարձրութիւն ունեցող Ամանոսի վերի ծառախիտ սարահարթները ելլելը արդէն շատերուն Համար գերմարդկային տանջանք էր: Մէկ գիշեր անցուցինք Հասան Պէլլի պարպուած ախոռտուններու մէջ: Ոստիկաններն ալ բացարձակ կողոպուտի, աւարառութեան եւ բռնութեան սպառնալիքի ամէն տեսակ արարքներու կը գիմեն սանձարձակ» (Արամյան 1970, էջ 114-115):

Արամյանը, որ Հայոց Դանթեականի ականատեսն ու վերապրողը դարձավ, գրում է այդ մասին.

«Ինչ որ ալ գրի առնուած ըլլայ, բոլոր ծանօթ Հայ եւ եւրոպացի Հեղինակներու, պատմիչներու կողմէ, Հազիւ թէ աննշան մի մասը կը ներկայացնէ Մեծ Եղեռնի սարսափելի մեր նաՀատակութեան» (Արամյան 1970, էջ 178):

Երբ վտարյալների խումբը հասնում է Իսլահիեից ոչ հեռու գտնվող Մեյդան Եկբեզ (Meydan Ekbez) անունով երկաթուղային կայարանը, կանգ առնելու հրաման է ստանում: Այստեղից գործում էր երկաթգիծը մինչև Հալեպ, և սկսում են արքայալիքին ապրանքատար գնացքների մեջ խցկել: Այս կայարանում Հայկն ու Հրանտը հանդիպում են Քսանթոփուլոս (Xanthopoulos) անունով հույն վաճառականի հետ, որի հետ հանդիպումը աստվածային մի պարզև էր: Այդ կապակցությամբ Արամյանը գրում է:

«Երբ Հրանդին Հետ կը խորհրդակցէինք, թէ ի՞նչ ընենք, Հալէպ երթա՞նք, մէկէն մեզի մօտեցաւ Քսանթոփուլոս անունով յոյն կապալառու վաճառական մը, որուն Հետ մեր Հրանդը յունարէն լեզուով խօսակցութեան մէջ մտաւ, եւ այդ եղաւ իր եւ իմ ալ փրկութեան լաստը: Յոյնը մեզ խրատեց Հալէպ չերթալ, քանզի խստիւ արգիւրած է քաղաք մտնել: Անգութօրէն կառաւարութիւնը դէպի անապատ, Պապ, Մումսրաճ, Գարըզ եւ Տէր Զօր կը քշէ, ուր շատ աւելի դժոխային դրութիւն կը տիրէ: Մեր երկուքին խոստացաւ գործ Հայթայթէլ եւ Նոյնիսկ Հրաւիրեց իր մօտ, բեռնատար կառքին անկիւնը գիշերը անցնել: Առաջին անգամ տաքով բան մէնալ կըցանք ճաշակել: Ամէն տեսակ ուտեստեղէններ ալ ունէր իր մեծ ու պզտիկ սնտուկներուն ու կապոցներուն մէջ: Իսկոյն խրատեց անուն փոխել եւ ջանալ երկաթուղին գերման, աւստրիացի եւ զուիցերիացի երկրաչափներու քով ծառայութեան մտնել իբրեւ Հաշուակալ, Համրող, Հեռագրող կամ գրագիր: Դա երկինքէն եկող մի օգնութիւն էր» (Արամյան 1970, էջ 115):

Հաջորդ օրն իսկ Քսանթոփուլոսը երկու հայերին ծանոթացնում է գերմանացի ճարտարագետներ Էռլերի (Erler) և Նորդաուերի (Nordauer) հետ, որոնք գլխավոր ճարտարագետ Ֆյոլների (Foellner) ղեկավարության ներքո աշխատում էին Բաղդադի երկաթգծի վերջին հատվածի վրա: Հրանտը տեղավորվում է Նորդաուերի մոտ, որը ղեկավարում էր Իսլահիեից մինչև Ռակկա տանող երկաթգծի կառուցումը, իսկ Արամյանն աշխատանքի է անցնում ճարտարագետ Էռլերի մոտ, որն Իսլահիեում կառուցում էր Հաբիբ Մալո (Habib Malo) կամուրջը: Բարեսիրտ Էռլերը Արամյանին սովորեցնում է հեռագրական գործը՝ մի բան, որ Արամյանին շատ է օգնում: Բաղդադի երկաթգծի աշխատանքների միջազգային լեզվի՝ ֆրանսերենի իր փայլուն իմացությամբ Արամյանը կարճ ժամանակում կարողանում է Էռլերի մոտ իրեն ամրապնդել որպես քարտուղար և հեռագրական ծառայող: Բացի դրանից՝ Էռլերի մոտ Արամյանը փայլում է նաև որպես թարգմանիչ: Նաև գերմաներենի ու թուրքերենի լավ իմացությամբ Արամյանն օգնում է Էռլերին տեղացի հողատերերի հետ կարևոր բանակցություններ վարել: Ու Արամյանը գերմանացի իր վերակացու ճարտարագետի մոտ այնպես է տեղավորվում ու ամրանում, որ ինքն էլ սկսում է օգնել աքսորյալ հայերից շատերին, մի կողմից՝ ժանդարմներին կաշառելու միջոցով նրանց փրկելով աքսորի երթերից, իսկ մյուս կողմից՝ միջնորդելով, որ նրանք աշխատանք ստանան Էռլերի մոտ: Այդ մարդկանց թվում էր *«գեղանի Հասակով Խարբերդէն ծանօթ Հազիւ 20 գարուններ բոլորած երիտասարդ Պր. Լեւոն Մազմանեանը, մի Հազուագիտ ազնուախոհ մտերիմ, թրքերէն մշակեալ լեզուի քաջահմուտ»* (Արամյան 1970, էջ 125): Լեւոնը Էռլերի մոտ աշխատանքի է մտնում՝ ստանձնելով վերջինիս երկու ձիերի խնամքի գործը: Ինչպես հետո պիտի տեսնենք, այդ «գեղանի հասակով» երիտասարդը դառնում է Արամյանի անբաժան ընկերն ու օգնականը:

Դժբախտաբար երկու հայերի՝ Հայկի ու Լևոնի համար այդ համեմատաբար խաղաղ շրջանը, որի ընթացքում նրանք կարողանում են մի քիչ կազդուրվել, երկար չի տևում, միայն հինգ ամիս, քանի որ իրենց տեղամասերի աշխատանքներն ավարտվում են: Եվ ահա մի նոր շրջան է սկսվում Արամյանի կյանքում և մի նոր գլուխ՝ նրա գրքում.

ՔԷԼԷՐ, ԼԵՌՆԱՆԻՍ ԿԱՅՔԻ ՄԹԵՐԱՆՈՅԻ ՊԵՏ

«Մի յաջող շրջանի գուռը բացուեցաւ: Նոյն ատեն Շվերթֆինգերը²⁵⁴ (Schwertfinger) իմացած էի որ, Պաղտատի երկաթուղիի շինութեան երկրորդ մասնաճիւղին պետ-երկրաչափ, Վինքլեր, որուն անունը շրթունքէ-շրթունք կը հնչէր իբրեւ մարդասէր և քաջ դիմագրող, կրնար պետք ունենալ լեզուագէտ գրագիր պաշտօնեայի: Խնդրագիր գրեցի Ժորժ Փանոս ստորագրութեամբ Էնթա-երկրաչափ մեր Էպլերը ինքն էր որ յանձնարարեց ու զրկեց: Երկու շաբաթ չանցած լուր եկաւ որ, կրնամ ներկայանալ երեք պետ-երկրաչափներու, Մօրֆ, Արանի փապուղին, կամ Քեօփփել, Էնթիլլիի կայարանին եւ կամ Չիկրիսթ, Քելլերի կայքին կամ Էնթաբաժնի թիւ 3-ին:

Կրնաք երեւակայել իմ աննկարագրելի հրճուանքը: Նախ՝ որ երեք կայան գիծերը ժեռուտ, լեռնային ըլլալով՝ երկա՛ր-երկար տարիներու կը կարօտէին աւարտելու գիծերու կառուցումը, եւ մանաւանդ որ լաճիս Համեմատ երեք պետերն ալ զուիցերիացի ըլլալու են: Էրլերը բարի եղաւ օրուան Համար ինձ եւ իմ Հետեւորդ (գալստ) թիկնապա՛հ Լեռնին, որուն անունը գրած էինք Քեամիլ, արտօնել երկու ձիերը գործածել: Ի՛նչ, Ատանայէն մինչեւ Իսլահիէ հնչուքով, կէս բոպիկ ոտքերով՝ անանալով իր կարճով հասակը քաշկուտող Հայկազունը, ներեցէ՛ք, Ժորժը, Հիմա ձիւ գաւակի

²⁵⁴ Շվերթֆինգեր (Schwertfinger) – Երկաթուղային, ծագումով հրեա պաշտոնյա, որը հայերին միշտ պաշտպան է կանգնել:

վրայ պիտի սլանայ, իր ծառան ալ ասպանդակը բռնելով» (Արամյան 1970, էջ 120):

Այրանում Մորֆը տեղում չէր, նա մեկնել էր գործուղման: Այս հանգամանքը իրերի ընթացքը փոխում է և Արամյանի համար նպաստավոր վիճակ ստեղծում: Ահա թե ինչպես.

«Մօտ մեկուկէս ժամէն կը Հասնինք Էնթիլի: Մի բազմազան գործարաններով, տուններով, գրասենեակներով, մեքենական կազմաճներով, ատաղճներով, քարերու, կոփուած շինաքարերու եւ տուներու կոմպինատ: Մօրֆը, Պաղջէ եւ Մատրա գացած էր: Բախտս բանով էր: Քեօփփէլը սիրով ընդունեց, երբ դռնապանը իրեն ներկայացուց պետ-երկրաչափ Վինքլէրին նամակը: Կրնաք երեւակայել, որ այս ազնուաբարոյ, ազատարարը Հարկաւորներու եւ ինամատարը իր իսկ ջանքերով բացուած 300-ի չափ Հայ տնազուրկ, ծնողազուրկ կորուսեալներու, զիս ալ ընդունեց Չուիցերիոյ անուան ու պատիւին յաւիտեանս ի պաշտամունքի Հրափող բարութեամբ: Մանաւանդ զգացուեցաւ, երբ ըսի թէ ես Հոգեզաւակն եմ մայրագիր ինամակալուհու, Չուիցերիա, մայրաքաղաք Պէրն, Լօրրէն թաղ, թիւ 9, Սէսիլ Պէրնար գորովագութ կնոջ, որ զիս որդեգրած էր ու զրկած Երուսաղէմի գերման Շնէլլէրին որբանոց-վարժապետանոցը: Դուրսը կը սպասէին շատ մը ուրիշ ինդրարկու կամ գործակատար մարդիկ, եւ այս Աստուածատուր բարերարը անմիջապէս Հաղորդեց լուր մը, որուն լաւագոյնը չէր կարելի միտքէս իսկ անցնիլ:

Յայտնեց, որ ինք առ այժմ ինձ յարմար պաշտօն չունի, բայց, անյապաղ թող երթամ իրմէ Հազիւ տասը քիլոմէթր Հեռու Քէլլեր կոչուած Էնթաբաժին թիւ 3, երկրաչափ Ֆրից Չիկրիսթի, որը խիստ մեծ կարիք ունի ֆրանսերէն, գերմաներէն եւ մանաւանդ թուրքերէն ալ գիտցող վստահելի պաշտօնեայի մը իր մթերանոցին պատասխանատու պաշտօնը ստանձնելու եւ Վինքլէրին նամակին ստորորտը յաւելուած մ'ալ գրեց» (Արամյան 1970, էջ 120-121):

«Իմ ձիաւոր Հետեւորդ Քեամիլին Հետ երեք քառորդ ժամէն կը Հաննինք սիրունիկ լեռնաւան Քէլլէր, որ բլրակի մը վերեւ շինուած է, Հեռու գաւառներու նայող երկրաչափին տուն-գրասենեակը: Երեսունը անց, մի վերին աստիճանի Համակրելի, աշխոյժ եւ գործունեայ երկրաչափ: Մեզ ընդունեց սիրով եւ երբ իրեն պատմեցի Համառօտակի ինչ որ Հարկ էր, նամակները կարգալէն ետք՝ յայտնեց որ, կրնամ վաղն իսկ սկսիլ գործի, քանզի խիստ պէտք ունի մթերանոցի պաշտօնեայի մը: Հստած էր որ ,գուն քուն, բախտդ արթուն», բայց, երբ գուն ալ արթուն կ'ըլլատ, բախտդ քեզ կրկին կը պարգեւատրէ: Դուրս եկաւ իր ՀնորՀայի կինը Քլարա կոչուած: Նոր պսակուեր էին: Ինձ ներկայացուց նախ իր գրագիր Հաշուակալ Սալվատորը» (Արամյան 1970, էջ 122):

Արամյանի գրքի հաջորդ՝ Ե գլուխն սկսվում է Քէլլեր գյուղում երկու հայերի նոր կյանքի նկարագրությամբ.

«Կէս տարուան բախտաւոր կեանք: Մի սիրունիկ լեռնաբնակ գիւղ էր Քէլլէրը, բարձրագիւր լեռնակողին թառած, ձորակի մը բերան, ուր լեռնային անոյշակ առուակը կը թաւալի: Բնակիչները խառն: Չորս դին անտառոտ բլուրներ, Ամանոսի գահոյկին ոտքին: Իսլահիէն քանի մը Հարիւր մէթր աւելի բարձր: Արանի փապուղիէն մինչեւ Իսլահիէ, ուղիղն Հարիւր մէթր աւելի բարձր: Արանի փապուղիէն մինչեւ Իսլահիէ, ուղիղն ըսած, մինչեւ Արկալը Չերչին-ի, անցնելով Քուրդ Պաղէի վրայով, Հսկայ ժայռեր պէտք էր օդը Հանել, ճամբայ բանալու երկաթուղիին: Առաջին օրէն իսկ մեծ ուրախութիւնը ունեցայ ծանօթանալու նաեւ երկու գերմանացի ազնիւ օգնական երկրաչափներու, որոնք գծին վրայ ամէն օր քննութեան կ'երթային, ժայռերու պայթումներու, քարերը կոփելու եւ խիճեր պատրաստելու գործերուն վերահսկողութիւնը ապահովելու: Մէկուն անունն էր Փօլ ՀօրնՀայմ, Լայփցիկ ծանօթ քաղաքէն, իսկ միւսը Վիթթիկ անունով, Ֆրանքֆուրթէն: Երկուքն ալ առաջին օրէն իսկ կապուեցան իմ Հետ սրտագին մտերմութեամբ: Հատ կը սիրէին Հայերը, կը մեղքնային, տեսնելով այնքան թշուառութիւն, կը միջնորդէին իրենց զինուորական իշխանութիւնները: ՀօրնՀայմը

ուններ շուն մը, անունը դրած ԱՀմետ, եւ միշտ ձեռքին մէջ կը ճօճէր կաշիէ աճուելի մորակ մը, կը զարներ ծոյլերուն եւ անհնազանդ-ներուն: Տարբեր էր Վիթթիկը, միշտ խման եւ գինեմոյ: Մեր փոք-րիկ սենեակը կիսով լեցուն գերմանական խմիչքներով» (Արամյան (1970), էջ 122):

«Հետեւեալ օրն իսկ գործի ձեռք զարկի: Քեամիլ Հետեւորդս լման չերքեզի տիպար մըն էր, կարծես Կովկասի նշանաւոր Շամիլ շէյխին թողնորդի եւ լաւ թրքերէնի տեղեակ: Ոնեցայ նաեւ նէվ-չէհրիցի թրքախօս շատ Հաւատարիմ, գաղտնապահ մի պատա-նեակ, որուն անունը դրինք Միշէ: (...) Մեր մթերանոցին կից կար թուրք կառավարութեան կողմէ գրուած պահականոց մը, որուն վե-րակացուն էր Հարիւրապետ ՄէՀմետ, մի խման բայց ծոյլ ու ան-տարբեր զննորական, որ մեծ դեր պիտի խաղայ գալիք աշաւոր փորձանքին մէջ: Մեծ եռանդով սկսանք գործի: Մթերանոցի զա-նազան խորշերուն եւ բաժիններուն մէջ շարեցինք երկաթուղիի գի-ծին շինութեան Հարկ եղած բազմազան գործիքներ, գամ, սղոց, բրիչ, բաշ եւ Հագուստեղէններ, կօշիկներ, յանձնառուներու բերած բոլոր իրեղէններ: Մանաւանդ 8-10 ձի եւ ջորիներու Համար Հարկ եղած կազմածներ եւ շրջակայ քաղաքի եւ գիւղերէն գնուած կամ Հայթայթուած յարդ, վարսակ, գարի: Քանգի Քէլէր լեռնային մի կայան ըլլալով բոլոր փոխադրութիւնները կը կատարուէին առ այժմ՝ բեռնակիրներու գաւակին վրայ» (Արամյան 1970, էջ 123):

Դյուրին չէ Արամյանի աշխատանքը: «Schweizerische Bauzeitung» Վլէյցարական շինարարական թերթում 1919 թ. ճարտարագետ Մորֆը նկարագրում է պատերազմական շրջանում Բադդադի երկաթգծի շինարարական աշխա-տանքներին կից պահեստանոցների համար շինանյութերի և այլ ապրանքների մատակարարման դժվարությունները²⁵⁵, սակայն Արամյանը զարմանալիորեն կարողանում է մեծ

²⁵⁵ Morf, Walter (1919), էջ 138:

վարպետությամբ հաղթահարել ամեն դժվարություն և գոհացնել բոլորին, մանավանդ իր վերակացու Ֆրից Զիգրիստին: Այդ բոլորով հանդերձ նա միշտ մտահոգված է իր անձի ապահովության մասին: Այսպես, նա գրում է.

«Ես ճանչցուած էի Ժորժ Փանոս անունով եւ ամառ ատեն կը դնէի յարդէ գլխարկ: (...) Առ ի զգուշութիւն, բոլոր իմ այս Հինգ ծանօթներէս կրկին ու կրկին խնդրած էի, որ ի սէր Աստուծոյ, մարդու չլսեն որ Հայ եմ եւ զէջթունցի, եւ մանաւանդ պահականոցի թուրք Հարիւրապետ Մէհմետ Էֆենտին, որ փա՛ռք Աստուծոյ, թմբիրէն ազատելիք չունէր, թող միշտ կարծէր թէ ես զուիցերիացի եմ:

Երբ մթերանոցի իրերը, տետրակները բաւական կարգի դրած էինք, եւ ամէն օր ներկայացող Հարիւրաւոր գործաւորներու, գործապետներու, Հսկիչներու, յանձնաւորներու կը յանձնէինք շինութեան Հարկ եղած առարկաներ, պէտք կ'ըլլար երբեմն շրջակայ գիւղերը երթալ եւ Հարկ եղած ապրանքները գնել, մանաւանդ ձիերու եւ ջորիներու Համար յարդ, գարի եւ աղ, քանզի այս երեքը կը պակսէին Քէլլէրէն: Երկու երեք օր անգամ մը տոմարներ անունիս տակ, մեր մթերանոցին Հազիւ 200 մեթր Հեռու կը ներկայանայի պետ-երկրաչափին, որը քննելէն ետք, Հարկ եղած նոր գումարներ կը յանձնէր, գնումներ կատարելու: Հատ չանցած Վինքլէր պետ-անօրէն վարիչ, երկրորդ մասնաճիւղին ամսականս որոշող նամակ մ'ալ եկաւ, ամսական 200 ֆրանք: Մեզ Համար աներեւակայելի գումար մը: Մթերանոց ներկայացող բազմաթիւ գործաւորներ, մեծ մասամբ գաղթական Հայեր, շատ անգամ երկար պիշ-պիշ ինձ կը նայէին» (Արամյան 1970, էջ 124-125):

Այսպիսով՝ տեսնում ենք, որ Արամյանի վիճակը որոշ ժամանակ Քելլէրում՝ ճարտարագետ Ֆրից Զիգրիստի մոտ, մյուս հայ աշխատակիցների հետ համեմատած շատ ավելի բարվոք է: Շնորհիվ իր պաշտոնի նա ազատությունն ունի երկրում տեղաշափելու, դառնալու Հայոց Դանթեականի իրական ականատեսը և համոզվելու, որ բախտը մինչև

տվյալ պահը իրեն ժպտացել է: Ահա՛ նրա գրքից մի հատված Իսլահիե տեղադրված մի գաղթականայանի մասին, որը Հայկը և իր ուղեկից Լևոնը համարձակությունն են ունեցել այցելելու որպես օտար քաղաքացիներ.

«Ո՛հ, ի՛նչ դժնետեսիլ պատկեր է սա Իսլահիեի գաղթականայանը: Դեռ չմեռածներու գերեզմանատուն մը: Յակոբ Սիլիկեանի վրանը կը մտնէք: Մեզ տեսնելով կը սկսի ահաւոր լուտանքներ թափել Հայ կղերականներու, Հայ եկեղեցական բոլոր պաշտօնեաներու վրայ, և մանաւանդ վերի կապուտիկ Աստուծոյ, որ այս բոլոր արինաշաղախ կէս դիակնացած մարմինները, այս սարսափները վերէն տեսնելով, մատ մ'իսկ չի շարժեր: Մի քիչ գրոց բոց ըլլալով, մեր Սուրբ Գրքի Հայր Մերին տեղ, ուրիշ Հայր մերը գոց կ'ըսէր, Հայհոյանք թափելով Սուրբ Գիրքի բոլոր մարգարէներուն, առաքեալներուն վրայ: Շուններ Հեռուէն կը կրծեն դեռ Հայու գանկոսկրները: Մօտ 500 խարխուլ վրաններուն տակ ամէն օր 30-40 մեռեալ կը նետուին Համայնափոսին մէջ: «Դո՛ւք էք, դո՛ւք էք, կարգացողներ, որ մեզ լըղղելով այս վիճակին Հասցուցիք: Ձեր Նարեկն է, որ մեզ ստրկացուց, թուրքին սուրը՝ մեր վիզը: Այս է Ս. Գիրքին խրատը, ապտակ ուտելով միւս երեսը դարձուր»: Անցէ՛ք, Հեռացէ՛ք, թողէ՛ք որ մեռնինք, ոչնչանանք և թուրքին Ալլահը թող արնոտ պինչը լլկելով Հրճուի» (Արամյան 1970, էջ 126):

Եվ Արամյանը նման գործուղումներից վերադառնալով իր գուսպ գոհունակությունն է հայտնում իր և մյուս հայ քստորյալների քելերում ստեղծված իրավիճակի մասին.

«ՇարՀիւ Պաղտատի երկաթուղիի շինութեան՝ գերման վերին իշխանութեան եւ մասնաւորապէս գերման-թուրք զինուորական Հրամանատարութեան ստիպողական փոխադրութեանց անհրաժեշ-

տութեան Հետեւանքով Կիլիկիայէն մինչեւ Եփրատի Ճերապլու²⁵⁶ գծին վրայ աշխատող Հայ աքսորեալներու Համար տանելի պայմաններ ստեղծուած էին: Մեր միակ յոյսը, սրտի խորքը եւ աղօթքը շուրթի վրայ այն էր որ, այս գոյավիճակը տեւէ մինչեւ պատերազմի վերջը եւ մենք ազատուինք ստոյգ կործանումէ» (Արամյան 1970, էջ 132):

Սակայն նրանց «բախտաւոր կյանքը» երկար չի տևում, միայն կես տարի:

«Ինչպէս Կ. Պոլիս 1914-ին Յուլիս ամսուն, Ամանոսի եւ շրջակայ գաղթականներուն վրայ սկսած էր նոր Հով մը փչել: Աս անստոյգ կացութեան պատճառներն էին գաղթականներուն Համար, մի կողմէն թուրք իշխանութեանց նորէն ցոյց տուած խստութեանց, միւս կողմէն գծի ընդՀ. զինուորական Հրամանատարին Հեռագրաւ տուած Հրահանգը, որ բոլոր աշխատող գործաւորներ, պաշտօնեաներ պէտք է թեւերնուն վրայ կրեն կարմիր ժապաւենէ երիզ մը, ցուցնող թէ իրենք գծի վրայ կ'աշխատին: Կասկածը մտաւ սրտերուն խորքը: Լուր կը շրջէր թէ Ամանոսի անմատչելի կիրճեր ապաստանած Հայ կտրիճներ եւ թուրք փախստական զինուորներ յաճախ կը յարձակին յետամնաց ջոկատներու վրայ, եւ նոյնիսկ քանի մը զինուոր ինկած ըլլալու էին: Ամբոխին գանկերուն մէջ բոյն դրած էր նոր մտավախութիւն մը» (Արամյան 1970, էջ 133):

1916 թ. Արամյանն ու Լևոնը հարյուրապէտ Մեհմեդի հսկողության ներքո ձիավարում են դեպի Հասանբեյլի, որպէսզի գարի, հարդ և ցորեն գնեն: Տունդարձի ժամանակ նրանք տեսնում 6-7 ավտոմեքենա, որոնք իրենց մոտով անցնելով ուղևորվում էին դեպի Քէլեր: Արամյանն այստեղ գրում է. «Բախտն այդպէս բերաւ, որ երրորդ ինքնաշարժին մէջ

²⁵⁶ Ջերաբլուս (*Jerablus*) – քաղաք Սիրիայի հյուսիսում՝ թուրք-սիրիական սահմանի վրա՝ Եփրատ գետի ձախ ափին (այդ ժամանակ Սիրիան Օսմանյան կայսրության մաս էր կազմում):

Էնվեր փաշային դիմագիծը, մանավանդ խոշոր Հատու աչքերը կրցայ զանազանեւ: Անպատճառ ինքն էր: Իրեն նկարը շատ անգամներ թերթերու մէջ տպուած էր, անանկ որ դիւրաւ ճանաչելի էր: Ինք և Հետեւորդները մեր խումբին վրայ Հարկաւ նետեցին խուզարկու աչքեր, Հարկաւ Էնթադրելով որ Բաղդադի շինութեանց մարդոցմէ էնք» (Արամյան 1970, էջ 134):

Արամյանը վատ բաներ է նախագգում: Շուտով բոլոր հայ փախստական-աշխատավորները նույնպէս տեղեկանում են Էնվեր Փաշայի մասին ու շատ տագնապում: Այսպէս է Արամյանը նկարագրում իրավիճակը.

«Ամբողջ 15-20.000 մօտ Հայ տարագիրներ արդէն լսած էին այն չարագուշակ լուրը որ Էնվեր Փաշան անցած է գաղթական-յանէն եւ ամէն տեղ զայրացկոտ կատաղութեամբ արտայայտուած ողջ մնացած Հայ մնացորդներուն մասին: Լսուած էր նաեւ որ ոչ Հիւկնէն, ոչ Հազէնֆրաց եւ ոչ ալ Վինքլէր յաջողած էին Էնվեր Փաշան Համիդէն որ գծին արագ աւարտման Համար անհրաժեշտ էր մասնագէտ վարժ Հայերուն աշխատակցութիւնը: Երկրորդ մաս-նաճիւղին պետ-երկրաչափ Վինքլէր նոյնիսկ երկու շաբաթ դադրեցուցած էր Ենիճէն մինչեւ Իսլահիէ փոխադրել տալու նեղ գծի վրայով պատերազմական պիտոյք-կազմածներ: Անօգուտ: Իթթի-Հատի կատաղի վռՀմակը սպառնացած էր Հայոց փոխարէն գերի-ներ գործածել եւ ճամբայ շինելու ջոկատներ: Դժբախտութիւնը ծայր տուաւ կրկին» (Արամյան 1970, էջ 134-135):

Իր փախուստից օրեր առաջ Արամյանի հետ կատար-վում է հետևյալը.

«Մայիս ամսուն մի օր, յանկարծ, երբ տետրակները ձեռքս կ'երթամ պետ-երկրաչափ Ֆրից Չիկրիսթին, մի քաղաքացի, ոչ զինուորական, գաղտնի ոստիկանութեան անդամ անշուշտ, տետր ի ձեռին, առջեւ կտրեց, պռուպով Հայկազուն Արամեան, «իբի քեր-թէ երմէնի գրալը» [Երկու անգամ Հայոց թագաւոր (Հայկ-Արամ)]

զէյթունլու իսմին տէյիշմիշ Ժորժ Փանոս, տուր պաքայրմ՝ (անունդ փոխած, Ժորժ Փանոս, կեցիր նայիմ): Ալ արինս սառ կապել սկսաւ: Բայց Կ. Պոլսոյ աշատր փորձանքը չէ՞ որ սորվեցուցած էր մաՀէն աւելի Հզօր ըլլալ: Պաղարինութեամբ ըսի որ, երկրաշափը զիս կանչած է ստիպողաբար: Թուրքը յատուկ աղունէսի խորամանկութեամբ խաֆիէն սկսաւ ծիծաղիլ, ըսելով որ իմ բարիքս միայն կ'ուզէ, քանզի ցանկ մը կը պատրաստէ անխտիր բոլոր գծի վրայ աշխատողներուն, որպէսզի զինուորական ծառայութենէ ազատուին: Եւ իմ անունս կ'արձանագրէ ցանկին գլուխը:

Ո՞ր տեղէն իմացեր էր բուն անունս, ո՞ր տեղացի ըլլալ: Գաղտնիք: Հայ մատնի չ: Թուրքերան տխմարներ: Ո՛վ գիտէ: Մի բան գիտէինք որ, աշխարհի վրայ, Սուլթան Համիտի ժամանակէն սկսեալ, գոյութիւն չունէր թուրք լրտեսութեան նման լաւ կազմակերպուած ցանց մի խուզարկութեանց եւ լրտեսութեանց:

Բախտ մըն էր որ, ինք առանձին էր եւ պահականոցի Հարիւրարապետ ՄէՀմետ կրկին գացեր է ճնկելու:

Հաշիւներու տետրակիս Հետ երբ ներկայացայ երկրաշափին, անմիջապէս նշմարեց իմ փոխուած տրամադրութիւնս եւ պատճառը Հարցուց: Իրեն պատմեցի, սկսաւ զիս Հանդարտեցնել ու վստահութիւն ներշնչել, քանզի երկաթուղիի ընկերութիւնն իսկ տեղեակ էր որ բոլոր գործաւոր եւ աշխատողներ զերծ պիտի կացուցուին զինուորական ծառայութենէն եւ ուստի ցանկագրած էն:

– Ո՛չ, ո՛չ, Պրն. երկրաշափ, Հայերս դարերու փորձառութեամբ կը նախագգանք ու կը տեսնենք թուրքերու նենգ միտքը: Այդ ցանկը պիտի ծառայէ բոլորն ալ քշելու:

– Բայց մենք ալ կը դադրինք երկաթուղին շինել:

– Թուրքին Համար կարելորդ՝ ոչ թէ երկաթուղին աւարտելն է այլ մնացած Հայոց բնաջնջումը:

– Ինչո՞ւ վատագոյնը կ'ենթադրէք, կրնայ ըլլալ որ իրաւամբ կ'ուզէն միայն զինուորական ծառայութենէ զերծ պահել:

– Ո՛չ, ոչ, Պրն. երկրաշափ, ես վաղուքնէ սկսեալ, կը Հրաժարիմ եւ անմիջապէս կը փախչիմ Հալէպ:

– Այդ անկարելի է, ո՛վ պիտի ստանձնէ կանոնաւոր, վարժ մթերանոցի պետի պաշտօնը:

– Իբրեւ զուիցերիացի որդեգիր, գիտեք, ձեր պաշտպանութեան կ'ապականիմ:

– Ի՛նչ կրնամ ընել» (Արամյան 1970, էջ 135-136):

Արամյանն անմիջապէս առաջարկում է իր վերադաս ճարտարագետ Ֆրից Զիգրիստին, որ ինչպէս միշտ, իրենց, այսինքն՝ իրեն, Քյամիլին ու ծառա Միշելին, հարյուրապէս Մեհմեդի պաշտպանության ներքո ապրանք գնելու ուղարկի:

«Այս միջոցին ներքին սենեակէն լսուեցաւ տղացկան իր տիկնոջ Քլարային ձայնը: Պետ-երկրաչափը ներս գնաց: Իսկ ես մտահոգուած մթերանոց:

Խուզարկող թուրքը հեռացած էր:

Այդ իրիկուն իսկ, Հայ քոնսթրուքթոր Կարապետ Աշարհեան կէս հեռապառ մեր մօտ հասաւ, ըսելով որ քանի մը օրէ ի վեր նոր ժանտարմա-ոստիկաններ խումբ-խումբ կուգան, տեղաւորուելու Քէլլերի զանազան ճամբաներու անկիւններ: Ալ վտանգին ճանկերը սկսած էին մեզ խեղդել: Լեռնաբնակ սիրունիկ Քէլլերը դարձաւ մեկէն որոգայթ եւ վտանգաւոր ծուղակ: Պէտք էր խուսափիլ ամէն գինով: Լուր առինք, որ արդէն երկաթուղիով Հալէպ փախչիլ անհնարին է, խստիւ կը խուզարկեն եւ կը սպաննեն կամ Տէր Զօր կ'աքսորեն: Ուստի կը մնար ձիերով Քիլիս-Այնթապի ճամբայով կամ Անտիոքի վրայով Հալէպ մտնել ծպտեալ, եւ ոչ մի խօսք Մէհմետ Հարիւրապետին: Փրկութեան գաղտնիքը անոր անգէտ եւ անտեղեակ մտալն էր: Լաւ որ քանիներ անգամ մեզ ընկերացաւ իբրեւ զինուորական պաշտպան մեր գնումներուն արշաւին» (Արամյան 1970, էջ 136):

Նույն օրը ճարտարագետ Զիգրիստը Արամյանին կրկին իր գրասենյակն է կանչում և նրան իր տիկնոջ՝ Կլարայի սենյակն ուղեկցում: Կինը՝ Կլարան, այդ ժամանակ հղի էր և պառկել էր՝ հանգստանալու:

«Անկողնին մէջէն իսկ գերագնիւ Տիկին Քլարա, որ գիտէր թէ իմ Հոգատար մայրս Սէսիլ Պէրնար Պէրն մայրաքաղաք Լօրէն կը բնակէր, յայտնեց որ Զուիցերիա պիտի գրէն, զիս ազատելով եւ ջանալով Հոն ճամբայ դնել իբրեւ զուիցերիացի:

Կրնաք զգալ, որ ինչ անգին խրախոյս մըն էր տղացկան տիկնոջ այդ աւետիսը:

Պետ-երկրաչափը անմիջապէս աւելցուց՝ որ պատրաստուեցէք յարգ գնելու Համար Այնթապ երթալու: Որքան որ կ'ուզէք կրնաք Հետերնիփ դրամ վերցնել: Ո՛հ Զուիցերիա, Զուիցերիա դրախտ երկրի վրայ, Վիլհէլմ Թէլի, Փէսթալօցցիի, Ժան Ժաք Ռուսայի, ազատատենչ երկիր, օրհնեալ ըլլաս, որ գէթ երկու ասպետական զաւակունքդ Հոս էն, մեզ իր Հրեշտակային թեւերուն տակ առնող: Հարկաւ Քեամիլ եւ մանաւանդ տիպար ծառայ Միշէլը յուսադրուեցան մի քիչ: Երգուընցուցի Մէհմետ Հարիւրապետին ոչ մի գաղտնիք յայտնել եւ միշտ անոր ներկայութեան թրքերէն խօսիլ: Մի քիչ շունչ քաշեցի, երբ Քէլլերի մի քանի Հանրային բացաստաններու ծառերու բունին կամ կոծղերուն վրայ փակուած թրքերէն լեզուով ծանուցում կարդացինք որ երեք օրուան մէջ ամէն գործաւոր արձանագրուելու է: Այդ կը նշանակէր որ երկու օր մահու եւ կենաց պայմանաժամ ունէինք:

Միւս օրն իսկ Հաւաքեցին Հրապարակի վրայ: Լա՛ւ որ խման Մէհմետ Պագոսի տաճարին կը խնկարկէր եւ Հոգ տեսնել պէտք էր:

Երկաթուղագործի երկայնքին, ծառերու բուներու կողքին, Ժայռերու արանքին, Հարթ տանիքներու վրայ, Հրապարակի մէջ մի ոտքին Հաւաքուած Փոքր Ասիոյ արեւմտեան աշխարհէն Հոս դեռ մնացած Հայ վերապրողներու Հազարաւոր տխրատեսիլ կերպարանքներ, Ռոտոսթօ, Սիվրիհիսար, Կ. Պոլիս, Իզմիր, Ատաբազար, Էսկիշէհիր, այո՛, Գոնիայի, Պարտիզակի Հայ բնակչութեան խլեակներ իրենց զանազան կրկնոյցներով, լաչակներով, ապանքերով, շաւլարներով մի խառն ի խառն ամբոխ կազմած: Լուռ սեւ մտածումներու բեռն տակ ընկճուած: Սպանդանոց տարուող նախիրի սեւ ճակատագրով: Անուններ կը կարդացուին: Մանուկներ իրենց լա-

ցով-կոծով կ'ընդՀատեն երբեմն: Անուն, մականուն, ծնունդ, Հայ-րենիք, արՀեստ, ընտանիք: Աչքերս կը յառին այս տարաբախտ խլեակներու խիտ առ խիտ կայնած ամբոխին վրայ: Քանիներ պիտի յաճողին վերագտնել իրենց քեալ անակները: Իմ ողբացեալ արինակիցներ, երկի՛նք, ո՞ւր ես» (Արամյան 1970, էջ 136-137):

«Այդ գիշեր, վերջինը Քելլերի մէջ, անկարելի էր աչք խփել: Պա՛հ մը Քեամիլի և Լեւոնի Հետ աչքէ անցուցինք բոլոր դժուարութիւնները, եւ բոլոր ձեռք առնելիք միջոցները: Լսուած էր որ կէսօրէն ետք ԻսլաՀիէի գայմագամ ՍալիՀ Պէյ իր Հետետրոգներով պիտի գայ պետ երկրաշափին այցելութեան եւ ... ձերբակալելու կարգ մը կասկածելի պարագլուխներ:

ԽոՀեմութիւն սեպեցինք, յոգնաջան օրուան մը գործերէն ետք՝ խշտեակի վրայ երկննալ, առանց Հագուստները Հանելու: Հարկ եղած պարագային իսկոյն խոյս տալու միջութեան մէջ:

Պա՛հ մը կիսամիտի, երագիս մէջ տեսայ 1895-96-ի մեր Չէթոնի յաղթապանծ կռիւը՝ Աղասին, ՄլէՀը, Ապահը, Հրաչեան, Բարթողիմէոս Վարդապետը, որուն սուրին տակէն կ'անցնէին 600 թուրք գերիներ, Հայ կտրիճներ, (...)

Խղճմտանքի ձայն: Դատաստան, փախչի՞նք, մնա՞նք: Ու՛ր կը փախչի, մահէն կ'ազատի: (...) Ի՞նչ օգուտ, երբ խումբին Հետ աքսորուիս ու մեռնիս: Ապրելով է, որ պիտի յաղթես ու վրէժ պիտի լուծես: Մի՛ տատամիր, կրկնէ՛ Կ. Պոլսոյ Սիրքէճիի Հրաշալի վճռականութիւնդ. կամ՝ մահ, կամ՝ կեանք: Ընտրէ՛ կեանքը» (Արամյան 1970, էջ 138):

«Պատրաստութիւններ տեսանք, այն գիշեր մութ ատեն փախչելու: Պէտք էր երկու օգնական երկրաշափներու յայտնել մեր վտանգաւոր կացութիւնը եւ օգնութիւն ինդրել: Լեւոն չորս ձի թամբելու կազմաճները պատրաստելու աշխատանքը կը կատարէ: Միշէլը կը պատրաստէ պարէնը: Ֆրից Զիգրիստ կէսօրին իր Հաշուակալ Սալվատորին Հետ խորՀրդակցելէն ետք ինձ կը յանձնէ բաւական խշորկեկ գումար մը, 3-4 ամսական կանխավճարով եւ

շատ պարէն գնելու նախաձաշիւով: Վկայական-յանձնարարական վաւերաթուղթեր ստորագրել կու տայ, քոնսթրուքթոր Կարապետ Ահարոնեանի միջոցաւ, մէջ մը Չիլլի ամէլէ թապուրէն, մէջ մը տեղոյն ոստիկանական պետէն, ըսելով որ մթերանոցի պետ Ժորժ Փանոսը իր հետեւորդն Քեամիլ, ծառայ Միշէլ եւ զիրենք պաշտանող Հարիւրապետ Մէհմէտի հետ Անթապ կ'երթան ստիպողական պարէններ գնելու, ձիերու եւ գործաւորներու համար: Ալ իրիկուան ատենները այս թուղթերը իմ ձեռինն էին:

Մէկէն սահմուկելով չտեսնէ մ'որ, Իսլահիէի գայմագամ Սալիհ իր հետեւորդներով վեր կ'ելլէ, ուղղուելով դէպի մեր մթերանոցը, անշուշտ զիս ձեռքակալելու: Չինք վերէն տեսանք, ինք մեզ չտեսաւ: Աղուէսի բոլոր խորամանկութեամբ կըլլով, ծռելով ինքզինքս նետեցի պետ երկրաչափին գրասենեակը, ուր կային դեռ Հաշուակալը, ինք եւ ծննդաբերութեան երկունքի բռնուած ագնուական Տիկին Քլարան: Մի բնազդային ձայնի ցուցմունքին հետեւելով, կատուի նման սողոսկեցի տղացկան տիկնոջ մահճակալին ներքեւ, իբրեւ գերագոյն փրկութեան ապաւէն, շունչս բռնելով: Տիկնոջ փսփսացի, Հասկցաւ: Որոշ կը լսէի ոտնաձայններ եւ գայմագամի Հարցումները: Մթերանոցին Միշէլը լուր տուած էր որ ես գնումներ ընելու գացած եմ: Աքէ անցնելով գրասենեակը եւ տեսչարանը, մարդ չգտնելով պահ մը կը մատնահարէ, ուռնակի վրայ գնելով ձեռքը եւ բանալիին ծակէն նայելով թէ՛ երկրաչափը եւ թէ՛ Հաշուակալը, որոշ լսեցի միաբերան կ'ըսէն, որ այս սենեակը տիկնոջ ննջատենեակն է եւ տիկինն ալ այսօր-վաղը ծննդեան ցաւէ պիտի բռնուի:

Փրկուած էի, ծնածը՝ նախ ես էի:

(...) Երբ Սալիհ պէջ, երեք պաշտօնեաներ եւ ոստիկանը Հեռացան, ինձ լուր տուաւ երկրաչափը, որ ալ վայրկեան չմնաց տաւամենելու: Բայց կը մնար ամենախոշոր խոշընգոտ մը:

Ինչպէ՞ս Համոզել ու ստիպել Մէհմէտ Հարիւրապետը, ան ալ մութին, քանզի որքան ատեն որ լոյս կար խելացի պիտի չըլլար ճամբայ ելլէ: Յանկարծ վրայ Հասաւ քոնսթրուքթոր Կարապետ (վարժապետ) գէշ լուր մը բերելով որ վաղը դէպի Անթապ տանող ճամբան 2-3 ժամ առաջ արդէն գոցուած է նոր եկող ժանտար-

մա-ոստիկաններով, եւ թէ կը մնայ միայն Իսլահիէի վրայով դէպի Անտիոք, անկից ալ Հալէպ տանող արաշետը (Արամյան 1970, էջ 138-139):

Եւ Հիմա կը գտնուինք այն բոլոր Հնաքներուն, պատրաստութեանց ամենէն դժուար, անկարելի Հարցին առջեւ: Ինչպէ՞ս իր խոր քունին մէջ խռկացող, կէս Հարբած Հարիւրապետ Մէհմետ Էֆէնտին արթնցնել, խնդրել կամ ստիպել որ շուտ Հագուի, թամբուած ձիուն վրայ նետուի եւ մեզի ընկերանայ իր Հրացանով՝ (Արամյան 1970, էջ 139-140):

«Զինքը թօթուէ՛ւ ապարդին. «Թող վաղը, օրը ցերեկով ճամբայ ելլենք: Ինչո՞ւ կէս գիշերուան այս մութին»: Եւ Լեւոնը իր Համոզիկեր լեզուով կը պատմէ որ Այնթապի վաճառականը մեզ վաղը կանուխ կը սպասէ, ապա թէ ոչ նպաստաւոր գիներով ապրանքները ուրիշին կը ծախէ: Օգուտ չունեցաւ: Օ՛րն ուրեմն եւ պատահեցաւ որ խման գերման Վիթթինկը խարազանով յարձակեցաւ խման թուրք Հարիւրապետին վրայ, եւ այդ Հարուածին մի մասն ալ ես կրեցի, քանզի Հարուրապետին ցոյց տուի քանի մը Հարիւր թղթադրամ ոսկիներ: Մի երկրորդ խարազան Հարուած, եւ թուրք Հարիւրապետը չեմ գիտեր, փոխարինելու կամ դրամի սիրոյն ոտքի ելաւ:

Քեամիլը իրեն օգնեց Հաշուելու, միշտ ողորդէ թուրքերէնով իրեն խոստացաւ Այնթապի մէջ լաւագոյն ճերմակ-ջուր (րաֆի) եւ Հուրիներ: Այս վերջին խօսքը եղաւ Հրաշագործ: Հուրիները գիշերը կը սպասեն, եւ գիշերը պէտք է Հասնինք Այնթապ: Պետ-երկրաչափին Հետ Հասկացողութեան եկանք որ, ուր որ վաղը Հասնիմ, Հեռագրաւ Հարցնեմ թէ՛ աւելի մեծ քանակութեամբ ապրանքի պէտք կա՞յ. եթէ ըսէ, թէ ոչ, Հերիք է, կը նշանակէ դարձէ՛ք, վտանգը անցաւ. իսկ եթէ պատասխանէ թէ Հալէպ աւելի մեծ քանակութեամբ ծախու առէք, կը նշանակէ թէ մի՛ գաք:

Ծղրիթներ մի Համայնական բզզուն ճիշերով կ'օրօրեն Քէլլերի Համայնատարած աշխարհը: Մեր բախտէն երկինք ամպոտած լուսինը Հագիւ թէ յաջողի մեզի ամպի տակից վար նայիլ եւ շնագայլերու ոռնումը կը լեցնէ խիտ անտառներու թաւուտը:

Չորս ձիաւորներ կամացուկ մը վար կ'իջնէն առուի խոխոջէն ընդունուած, երկու գերման օգնական երկրաչափեր ողջերթ կը մնայթէն, յանձնարարելով որ քաջ ըլլանք: Այսարհը քաջերուն կ'օգնէ:

Վերջին ահաւոր փորձանք: Արդարեւ հեռուն կը նշմարենք որ Այնթապի ճամբան գոցուած է ոստիկաններու շղթայով: Իսկոյն դառնալ պետք է դէպի Հարաւ, Իսլահիէի ուղղութեամբ: Մութ է, ճամբան թերի, Հարիւրապետը կը շարունակէ դէպի Այնթապ: Քեամիլը 200 դաշէկան ընծայ տալով դժուարաւ զինքը կը տարհամոզէ մեզի հետեւիլ դէպի Իսլահիէ, ըսելով որ պետ-երկրաչափը վերջին վայրկեանին պատուիրած է որ, նախ իսկոյն Այնթաքիա երթանք, աղ գնելու, քանդի բնաւ աղ չէ մնացեր: Վերջէն կրնանք Այնթապ երթալ:

«Անլամայորում, պուրտա պիր Հիլէ վար»:

«Չեմ հասկնար, Հոս կայ մի նենգութիւն»:

Կրկին 200 դաշէկանի նշանաւոր, ամենակարող պախշիշ, Է Մէհմետ Հարիւրապետը կը դադրի այս բոլորին մէջ նենգութիւն Հոտոտերու» (Արամյան 1970, էջ 141):

Կրկին Լևոնն է, որին հաջողվում է գինեմոլին հանդար-տեցնել և ստիպել, որ իրենց հետևի: Երեկոյան դեմ հասնում են Անտիոք, որտեղ հարյուրապետ Մեհմեդի օգնությամբ կարողանում են գիշերային օթևան ունենալ: Լևոնն իր խոս-քի տերն է, և Մեհմեդին տանում է մի պոռնկանոց, իսկ Արա-մյանը, պայմանավորվածության համաձայն, հեռագրում է Ճարտարագետ Ֆրից Զիգրիստին:

Արամյանի և մյուս երկու հայերի համար ծանր օրեր են: Նրանք անդադար լսում էին հրաձգությունների ձայները, որ գալիս էին Ամանոսի կողմից: Մի քանի օր հետո Արամյանը տեղեկանում է Քելերի, Բաղչէի և Իսլահիէի՝ Բաղդադի եր-կաթգծի տեղամասերից ծայր առած զանգվածային տեղա-հանումների և հազիվ տեղամասերից մի փոքր հեռացած՝ հատուկ ջոկատների կողմից տեղահանվածների ահալոր

կոտորածների մասին: Արամյանի փախուստից անմիջապես հետո բոլոր գրանցված աշխատողների նկատմամբ խժոժությունները մեծ չափերի են հասել: Դա տևել է ամբողջ հունիս ամիսը և դրանից էլ հետո: Մինչև վերջին հայր՝ բոլորը պետք է կործանվեին: Սա էր թուրքերի կարգախոսը:

Քելերից մեկնելուց ի վեր օրերն անցնում են, և Լևոնը մինչև այժմ իր գործը փայլուն կերպով է կատարում: Հարբեցող հարյուրապետը վայելում է իր ցոփ և շվայտ կյանքը և այլևս Քելերը չի հիշում: Իսկ Արամյանն անհանգստանում է, քանի որ Ֆրից Զիգրիստից լուր չունի:

«Ջարհուրանքի, զառանցանքներու աճեղ տեսիլներուն յաճախանքէն գիշերն ի բուն անքուն մնացած առտուան կողմը դեռ ի զուր պատասխանի կը սպասենք մեր Քելլերէն: Կէս մը յուսահատութեան նոպայէն չարչարուած, առանձին կ'ուզեմ՝ մնալ եւ քայլերս ուղղելով դէպի ժողուտ բարձունքներ, ուր կ'երեւին Հնադարեան բերդերու ժողատ պարիսպներ, ի միտ դրած, Քարավանքի-Սարավանքի այցելութեան նման Հայեցի պաճեր ըմբռնինել: Հազիւ թէ մի քանի Հարիւր քայլ առած ունէի, ետեւէս մեր Քեամիլ-Լեւոնը շնչատ կը վազվզէ: «Ուր կ'երթաս, բերդը ուսումնասիրելու: Ապուշ վարժապետ, ատոր ատենն է, ճիշդ այսօր: ԱՀաւասիկ Հեռագիր, գերմաներէն լեզուով: Ստորագրութիւն՝ Չիկրիսթ: Ի՞նչ կ'ըսէ: «Գնուածը քիչ է, Հալէպ գացէք աւելին ծախու առնելու»:

Լեւոնին եւ իմ աչքերուս խորը կայծկլտիլ սկսաւ եւ ինձ Հաղորդեց որ Լեւոնիս գետին միւս եզերքին երէկուան մեր եկած ճամբայէն երկու Հեծեալ ոստիկաններ կու գան: Մե՞զ Համար արդեօք:

Հուտ-շուտ, նորէն տասը քաջութեան ինը փախչին է: Մէհմետ Հարիւրապետը կը նախընտրէ իր երէկուան Չէյնապին երթալ նորէն: Հող նորէն Քեամիլի ողորիչ լեզուն, Հեռագիրը եւ մահաւանդ 400 դահեկանի պախշիշը իրենց հրաշքը կը գործեն, եւ մէկ ժամէն չորսերնիս Հեծած ենք արդէն դէպի Հալէպ տանող ճամբային ուղղութիւնը, մօտաւորապէս գիտէի, քարտէսներէն: Երկու անգամ ոստիկաններու Հանդիպեցանք, բարեւելով: Մեզ միշտ

խրատ տուած էին, օրը ցերեկով եւ Հիւսիսային Պապ-է-Ֆարաճէն չմօտենալ Հալէպին, այլ Հարաւէն եւ գիշերանց» (Արամյան 1970, էջ 148-149):

Հալէպ չհասած՝ նրանց ոստիկանները կանգնեցնում են: Թղթերը կարգին վիճակում են, թուրք հարյուրապետը օգնում է: Բարեբախտաբար, Լևոնը մի քանի անգամ խաղաղ ժամանակներում եղել է այս կողմերում և Հալէպ տանող ճամփաները լավ գիտի: Նա խմբի առաջնորդն է, և գիշերվա միջին չորս ձիավորները հարավային դարպասով մտնում են Հալէպ քաղաքը: Վեզիր Խան անունով օթևանը լեցուն է, և Լևոնը հարյուրապետ Մեհմեդին ու Միշելին տեղավորում է ինչ-որ մի հյուրանոցում: Իսկ Արամյանն ու Լևոնը Հալէպում որոշակի հասցեով գիշերելու տեղ ունեն: Ահա թե ինչպէս.

«Քէլլերէն չբաժնուած՝ նախազգուշութեան Համար Հալէպ, Լէւոնին ճանչցած Առաքել Գարաճեան խարբերոցի վաճառականի ընտանիքին Հասցէն տուած էինք Զիկրիստներուն: Միւս առտուն դարձեալ Լէւոնին պատուիրեցի, նորէն 400 դաճեկան ձեռքը սեղմելով, երթայ Մէհմետ Հարիւրապետին ըսելու որ Հեռագրով ես կը դրկուիմ Եփրատէն Հեռու մի ուրիշ երկրաչափ Քրառլի քով: Ինք եւ Միշէլը երկու ձիերով թող Քէլլեր վերադառնան: Հետքս ասանկով անյայտ մնաց այդ Հարիւրապետին աչքէն:

Շատ մեծ զգուշութեամբ եւ քանի մը անգամ պաշուրտելով Հասանք Թըլէլ թաղը Գարաճեանենց տունը: Երկու օր Հոն պաշուրտեցայ, եւ ի՛նչ տեսնեմ: Քէլլերէն պետ-երկրաչափը, միշտ ընկերութեան Հեռագրի միջոցաւ Հալէպի Երրորդ մասնաճիւղի պետ-երկրաչափին Հանս Ֆեօլլներին կը տեղեկացնէ իմ ազատուիլս, խնդրելով որ ինձ յարմար պաշտօն մը եւ պետք եղած վկայագիր մը տայ: Երրորդ օրը, երբ ալ Համբերանքս կը Հասնէր եւ Հիւրատիրոջ Հոգածովիւնն ալ իր սահմանը պիտի ունենար, յանկարծ դրան առջեւ ներկայացան երկաթուղիի երկու արաբախօս պաշտօնեաներ: Երկուքն ալ Երուսաղէմի գերման Շնէլլերէն վարժարանի նախկին աշակերտներ: Ինծի պէս երկինքէն եկած Հրէշտակներ եւ

իրենց Հետ բերած էին մէկ ամսական կանխիկ դրամ տասը օսմ. ոսկի, որուն երկուքը կայծ եւ թէւիս տակ անցունելիք կարմիր ժապաւենէ բազպան, նշան որ երկաթուղիին պաշտօնեայ եմ: Մէկուն անունն էր Սլէյման Բիպ, Հետագային իմ մեծ մտերիմ: Մագլուման Արմենակ եւ Օննիկ եղբայրներուն ծանօթ մեծ արդիական պանդոկէն անցնելով Սէլեմիէ փողոցէն անդին Պապ էլ Ֆարաճ կոչուած Հրապարակին մօտ, մեծ Պաղտատ կայարանի դիմաց գտնուող գրասենեակը ներկայացուց ճամբորդի խղճուկ Հագուստով:

Կարճ տեսակցութիւն պետ-երկրաչափին եւ իր լռօքնապուրկի կարող, նրբամիտ պետ-գրագիր Լէքէրթին եւ պետ Հաշուակալ Հայագլի Յովհ. Խաչատուրեանի Հետ: Նշանակուած էի իբրեւ քարտուղար կայարանի կեդրոնական միջերանոցին, գլխաւորս էր նորէն զուիցերիացի մը Եաքոպ Սէման անունով:

Երախտագիտական Հեռագիր Ֆրից Զիգրիսթին:

Սակայն այս մեծ բարերարը, մազ մնաց որ մեր եւ յատկապէս իմ պատճառաւ պատերազմական տտեանի մատնուէր, ինչպէս որ տարիներ ետք ինձ բերանացի պատմեց Զուիցերիա: Արդէն գիտէիք որ Պէլեմտիք զուիցերիացի երկրաչափ մը դատապարտուած էր, Հայ գաղթականութեան օգնական ըլլալու ամբաստանութեամբ» (Արամյան 1970, էջ 151-152):

Տարիներ անց, երբ Արամյանը գնում է Շվեյցարիա, Վերդենբերգ՝ իր բարերարներին այցելելու, նրան Ֆրից Զիգրիստը հետևյալ կարևոր դրվագն է պատմում.

«Երբ Մէհմետ Հարիւրապետ եւ Միշէլ կը Հաննին Քէլլեր, Թուրքին աչքը կը բացուի, ամբողջ գիծը ամայացած տեսնելով եւ Հայերը Հեռունէր քշուած: Կ'իմանայ բոլոր անցուդարձը եւ տեսնելով որ ինքն է եղած Հայերու անգիտակցաբար պաշտպան-ազատարարը, կատաղութենէն փրփրած կը փութայ Ֆրից Զիգրիսթի գրասենեակը ուր 2-3 եւրոպացի ծանօթներ եկած էին շնորհաւորելու նոր ծնած փոքրիկն Ռուտոլֆը (Բուտի) զաւակը:

– Դո՛ւք խարդախ գործ տեսած էք, փախստական դատալիք, Կ. Պոլսէն փնտռուած տէրութեան թշնամի Հայ մը պաշտօնի կոչած էիք կեղծ անունով եւ իր փախուստը կազմակերպած, զիս շարաշար գործածելով:

– Երբէ՛ք, կը սխալուիք, ոչ մի կերպով:

– Լուր պիտի տամ մեր թուրք իշխանութեանց:

– Դուք էք յանցաւորը: Ես ձեր Հսկողութեան յանձնած եմ իմ երկու ծառայ-պաշտօնեաներս, գնումներ կատարելու ձեր պատասխանատուութեան տակ, դրամներն ալ միշտ վճարելով: Ես եմ որ ձեզ պիտի ամբաստանեմ, առանց այդ երկուքին եւ առանց ապրանքներու վերադառնալով:

– Ես գիտնայի, անոնց երկուքը տեղն ու տեղօք բզիկ բզիկ կ'ընէի:

– Ո՛ւր են դրամներն ու ապրանքները:

Այս միջոցին ներս կը մտնէ Չիյի ամէլէ թապուրին (ճամբայ շինող գումարտակին) Հազարապետը, որը միշտ գումարներ եւ խմիչքներ կը ստանար պետ-երկրաշափէն: Գործը անուշի կը կապէ եւ Հետեհալ օրն իսկ, ինչպէս ինձ պատմեց Ֆրից Զիգրիսթ, Հարկապետ Մէհմետ կը փոխադրուի Պաղտատ:

Մէհմետ Հարկապետին խելքը վերջէն եկած էր» (Արամյան 1970, էջ 151–152):

Հալեպում Արամյանը երկու տարի (1916-1918) է անցկացնում՝ մինչև Առաջին աշխարհամարտի ավարտը: Սրանք նրա համար երկու խոռվահոյզ տարիներ էին: Քանի որ Սիրիան մինչև պատերազմի վերջը դերևս Օսմանյան կայսրության մաս էր կազմում, Արամյանի կյանքը շարունակում էր վտանգի տակ լինել: Ճիշտ է, որ շնորհիվ իր մտավոր կարողությունների ու լեզուների իմացության՝ նա այնտեղ աշխատում էր մի քանի եվրոպական հաստատություններում՝ գտնվելով բարյացակամ ղեկավարների պաշտպանության տակ և գրավելով մեկը մյուսից ավելի բարձր պաշտոններ: Սակայն նա այնտեղ իրեն երբեք ապահով չի զգացել, քանի որ շարունակում էր օգտագործել իր ծպտանունը՝

Ժորժ Փանոս: Վստահելի մարդիկ, ինչպես նրա արաբ բարեկամ Սուպիի բեյը, նրան հայտնել էին, որ ոստիկանությունը գիտեր նրա իսկական անունը և փնտրում էր նրան: Արամյանը երբեմն ամիսներով իր աշխատավայրից դուրս չէր գալիս, և երբ դա պատահում էր միայն մեծ զգուշությամբ:

Առավել ցավազին էին այս երկու տարիները հետևյալ պատճառով: Ամանոսի տարածաշրջանում Հայոց ցեղասպանության առաջին փուլը վերապրելուց հետո, նա Հալեպում ապրեց ցեղասպանության երկրորդ փուլը, այս անգամ՝ միայն ականատեսի դերում, մի բան, որի պատճառով խիղճը տանջում էր նրան: Քաղաքի երկաթուղային կենտրոնական կայարանի շենքում գտնվող նրա գրասենյակի բարձրադիր պատուհանից, որը բացվում էր համակենտրոնացման ճամբարների և մահվան նոր երթերի վրա, նա տեսնում էր իր թշվառ հայրենակիցներին, որոնք այս անգամ քշվում էին դեպի Միջագետքի անապատները:

«Հարիւր Հատորներ իսկ պիտի չկրնային պարփակել 1915-1918ի Հայոց մարտիրոսութեան մանրամասնութիւնները» (Արամյան 1970, էջ 173):

Երկրորդ տարում, երբ Արամյանը 1917-ից աշխատեց որպես թարգմանիչ հրամանատար ֆոն Ռոելի (von Roell) մոտ, նա շատ ավելի մոտիկից տեսավ Հայոց Դանթեականը, և նրա սրտից արյուն էր կաթում: Եվ Արամյանը գրում է.

«Ֆօն Րօլլի 7րդ թիւի բանակի ինչնաշարժերու գունդին Հետ, իբրև գերմաններու մօտ պաշտօնեայ, կրցայ աչքովս տեսնել, Հալէպէն մինչեջ Եփրատ եւ անդին տարածուող դժնետեսիլ մահաստանը Հայ տարագրութեան» (Արամյան 1970, էջ 177):

A U S W O I S .

Der Dolmetscher Georges Hagasoun-panos
geb. 1889 in Jerusalem, protestantischen Glaubens, ist bei mir
als Dolmetscher und Einkäufer angestellt.

Alle Behörden bitte ich hiedurch ihm keine Schwierigkeiten zu machen und ihm nötigenfalls Schutz und Hilfe zu gewähren.

Aleppo, den 25. November 1917.

Mr Bell

Rittmeister und Kommandeur.



قدوس شریفہ ۱۴۰۶ سنہ سن مؤلفہ پرفشا نہ مذہبہ پانوسی اوغلی شہرہ
صافیانہ نہ نزدیکہ نہ جہانہ و بیایہ مائوری عقیقہ ششم صدہ کعدہ سنہ ایشہ
بدینہ دل عند الوقفا شجر سعادت اوغلی مالجدہ دواؤدہ رحما ایدم

— 1115 54/100 —
and will

Rittmeister u. Komdr. d. Kr. G. 7.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ ԳԵՐՄԱՆԵՐԻՆ ԵՒ ԹՐԻԵՐԻՆ ԲՆԱԳԻՐՆԵՐՈՒ

ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԱՏԱԳԻՐ

Թարգման Գեորգ (Ժորժ) Հայկազուն Փանոս, ծնած 1889-ին, Երուսաղեմ, բողոքական դասանուրքեամբ (կրօնիով), իմ մօտ պաշտօնի կոչուած է իրբի քարգման եւ գնորդ:

Այսու բոլոր կառավարական իշխանություններին կը խնդրեմ՝
իրեն ո՛չ մեկ դժուարություն չարուցանել, ալ հարկ եղած պարագա-
յին օգնություն եւ պաշտպանություն ցուցնել:

Հայկէպ, 25 նոյ. 1917

፳፬ኛ የክብር

Երկու կնիք, մին վերը ձախ կողմին զուտ գերամանրէն, միւսը՝ ձախին՝ վարը, չուրջը գերամանրէն, իսկ մէջոտեղը արարաւորան տառերով թրքերէն:

Պարունակութիւնն է՝ Թրքական Դրդ. բանակի ինքնաշարժ կառքերու :
վարորդ. զօրաց. գունդերու. կայսերական հրամանատարութիւն :

Ստորագրուած՝

Հեծելազորքի Հարիւրապետ եւ Հրամանատար՝

7րդ բանակի ինֆնաշարժ կառնիրու

վարորդ գունդերու

Ֆոն Բեռլլ

8

Հայկ Արամյանին գերմանական հեծելազորի հարյուրապետ և
հրամանատար ֆոն Ռոելլի (von Roell) կողմից տրված անցաթղթի
պատճենը

Այս բոլորով հանդերձ, այս երկու տխրագույն տարիներն ունենում են նաև իրենց լուսավոր կետերը: Այս ժամանակամիջոցում Արամյանը ծանոթություններ է հաստատում օտարազգի մարդասիրական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, որոնք նվիրագրվել էին հայ մարտիրոսներին օժանդակելու գործին: Դրանք էին նախ «Հայաստանի օգնության Գերմանիայի միության» քույրերը՝ գերմանուհի Փաուլա Շեֆերը, դանիուհի Աննա Յենսենը և շվեյցարուհի Բեաթրիս Ռոնեբը: Վերջինիս միջոցով Արամյանը ծանոթանում է գերմանական ռազմական գործիչ ֆոն դեր Գոլցի զորաբաժինների սանիտարական ծառայության սպա Արմին Վեգների²⁵⁷ հետ, որը հետագայում՝ Լեփսիուսից հետո, տառապյալ հայերի մեծագույն բարեկամը և պաշտպանը պիտի դառնար: Հալեպում Արամյանը ծանոթանում է նաև հարուստ վաճառականներ՝ շվեյցարացի Կոնրադ Շյուպին (Conrad Schüepf) և գերմանացի Պանոս Փյութմանին (Panos Püttmann) հետ: Վերջինիս մոտ նա որոշ ժամանակ աշխատում է որպես պահեստապետ: Արամյանի՝ Հալեպի մյուս կարևոր բարեկամը երիտասարդ մի արաբ՝ Սուպհի բեյն (Suphi bey) էր, որը, ունենալով հայ ընկերուհի, դարձել էր մեծ հայասեր: Սուպհի բեյի հայրը գաղտնի ոստիկանության պետ էր և իր բարեկամ Արամյանին հաճախ էր վստահում հորից ստացված խիստ գաղտնի տեղեկություններ: Արամյանի մոտիկ բարեկամը դարձավ նաև նրա վերակացու, գերմանական հեծելազորի հարյուրապետ և հրամանատար ֆոն Ռոելը, որի մոտ Արամյանը որպես թարգմանիչ աշխատեց 1917 թ.-ից: Գերմանացի հրամանատարը մեծ դեր խաղաց

²⁵⁷ Արմին Թեոֆիլ Վեգներ (Armin Theophil Wegner) (1886-1978) - հայտնի գերմանացի լրագրող, գրող, բանաստեղծ, հրապարակախոս, իրավագիտության դ-ր, Հայոց ցեղասպանության ականատես և խիզախ լուսանկարիչ: Վեգներն արել է բազմաթիվ լուսանկարներ հայերի բռնազաղթի տեսարաններից, որի համար հայերը իրեն երախտապարտ են:

Արամյանի կյանքում: Նա «Ժորժ Հայկազուն-Փանոսի» համար դուրս գրեց ինքնության վկայական, որի մեջ հրահանգում է հարկ եղած դեպքում պաշտպանել և օգնել իր թարգմանչին ու գնորդ-պաշտոնյային: Վկայականը հաստատված է ֆոն Ռոելի անձնական կնիքով ու ստորագրությամբ²⁵⁸: Նույն ֆոն Ռոելի միջոցով է, որ 1918 թ. Արամյանը բարեհաջող կերպով տեղափոխվել է Գերմանիա:

Սակայն այս բոլոր ծանոթություններից և ոչ մեկը այնպես սերտ ու կայուն բնույթ չունեցավ, ինչպես Արմին Վեգների և Հայկ Արամյանի բարեկամությունը: Իրենց երկար կյանքի ընթացքում երկու ընկերները միշտ կապի մեջ են եղել, լինի դա նամակներով թե փոխադարձ այցելություններով: Հպարտ լինելով այդ բարեկամությամբ՝ Արամյանը հարկ համարեց իր հուշագրությունը եզրափակել Վեգների հետ նրա թղթակցություններից մի քանիսով, ինչպես նաև վերջինիս՝ Հայոց ցեղասպանության վերաբերյալ մի շարք կարևոր գրվածքների իր իսկ՝ Արամյանի հայերեն թարգմանություններով:

²⁵⁸ Տե՛ս էջ 376:

Կայուն բարեկամություն

Տարիների ընթացքում Զիգրիստ-Հիլթի ամուսինները և Արամյանը պահպանեցին իրենց թղթակցական կապը: Արամյանի փախուստից չորս տարի հետո՝ 1920 թ., Հայկ Արամյանը Փարիզից Շվեյցարիա ֆրանսերեն մի նամակ է ուղարկում իր փրկիչներին, որոնց տեղեկություններ է տալիս իր ներկա՝ հայ մտավորականի մտահոգությունների ու զբաղմունքների մասին և, իհարկե, ամբողջ սրտով իր երախտագիտությունն է հայտնում նրանց: Ապա նամակագրությունը շարունակվում է Գերմանիայից, որտեղ Արամյանը ուսանում է: Ավելի ուշ Արամյանը գրում է Ավստրիայից, որտեղ նա հայտնում է իր լավ կյանքի մասին իր նոր հայրենիքում՝ Զալցբուրգ նահանգի Mühlbach am Hochkönig գյուղաքաղաքում: Այնտեղ է նա հիմնավորվում և զբաղվում իր սիրելի մասնագիտությամբ, որը օտար լեզուների դասավանդումն է: Հայտնում է, որ ունի լեզվի իր սեփական դպրոցը, որտեղ ուսուցանվում է ութ լեզու:

Հետագայում ևս շարունակվում է պահպանվել կապը՝ գերմաներենով նամակների ու բացիկների միջոցով, և չկա մեկ առաքում, որի մեջ արդեն պրոֆեսոր դարձած Արամյանը երախտագիտության իր խոսքերը չարտահայտի իր փրկարարներին: Սակայն գնահատանքի ոչ մի խոսք այնքան խորաթափանց և բովանդակալից չէ, ինչպես ասված է այն բանաստեղծության մեջ, որը պրոֆ. Արամյանը տեղադրում իր հուշագրքի հենց սկզբում: Հուշածոն-բանաստեղծությունն այնտեղ դրված է մի լուսանկարի տակ, որը պատկերում է Ամանոսի շրջանում լեռան փեշին գտնվող մեկուսի մի տնակ: 1971 թ. մայիսի 11-ին պրոֆ. Արամյանը գրքի այդ էջի պատճենը ուղարկում է Ֆրից Զիգրիստ-Հիլթիի այրուն փոստային մի բացիկով, որի վրա նա գրում է.



Վերդենբերգ 1954. Հայկ Արամյանը՝ Զիգրիստ-Հիլթինների որդիների
հետ Շվեյցարիա իր այցելության ժամանակ:
Զախից Հանսը, աջից՝ Ռուդին

Սիրելի՛ տիկին Կլարա Զիգրիստ-Հիլթի,

Այս անմոռանալի տնակը Ձեզ համար բնակարան էր և միաժամանակ Ձեր երջանկահիշատակ ամուսնու գրասենյակը: Տնակի տակ բանաստեղծությունը նկարագրում է իմ հրաշալի փրկությունը:

Թուրք ժանդարմներն ուզում էին ինձ ձերբակալել: Ես թաքնվեցի այն մահճակալի տակ, որը հիմա էլ կանգնած է Ձեզ մոտ՝ վերևում, գեղեցիկ տեսարանով հյուրերի ննջասենյակում:

Փափք Տիրոջ,

Բախտն ինձ ժպտաց:

Մշտապես Ձեզ երախտապարտ՝

Հայկ Արամյան

ՀՈՒՇԱԶՈՆՆԻ ՆՈՒԻՐՈՒՄԾ ԶԻՍ ԱԶԱՏՈՂ ԼԵՈՆԱՅԻՆ ՏՆԱԿԻՆ

Ով գու տընական իմ' Հայ Ամանոսի,
Ուր սարերէն մի առուակ կը Հոսի,
Ժայռերու վրայ՝ թառած բարձրանիստ.
Ուր Հելվեթիոյ երկրաչափ Չիկրիստ,
Եւ Հեսն իր ազնիւ Տիկին Քըլարան
Աչքերով չափէին Հեռու տեսարան,
Երբ պաշարեցին թուրքերն ահաւոր,
Ինձ եղար բերդ, կաց յաւէտ անմոռ:
Խուժգուժ թուրքերը թիւ տասնըվեցին
Աքսոր Հայերը շրջապատեցին:
Թուրքերն ուղեցին գերել մանաւանդ
Հայկ Արամեանը, ընել քարոքանդ:
Ո՛վ երկնային բախտ, այս ծանրը պահուն,
Մի վճռական կին, գութ, սիրով անհուն,
Ներքնասեպակը պառկել տըղացկան
Գերազնիւ Քլարան, կին Հելվեթական,
Ոստիկաններուն ջոկատները մինչ,
Չիաւորները Հանեին զւինչ,
Քաջակոորով մեր Չիկրիստ երկրաչափ,
Չիս Հրեց իսկոյն եւ ըշտապ, ըշտապ,
Նոր Հարս իր կնոջ մահճակալին տակ:
Գոչեց՝ Հարամ' է, արգելք բացարձակ:
Իսլահիէի նոյն իսկ գայմագամ,
Իր Հետ Հեռացան դաշիճներն անգամ:
Ազնիւ Քըլարա, Քեզ օրհնէ Աստուած,
Հայկ Արամեանը ծնար ազատուած:

Բանաստեղծությանը հաջորդում է Արամյանի այցելության նկարագրությունը՝ Շվեյցարիա: Ի պատասխան Զիգրիստ-Հիլթի ամուսինների բազմաթիվ հրավերների՝ Արամյանը վերջապես նրանց կարողացավ այցելել 1954 թ.՝ իր փրկությունից ուղիղ 38 տարի անց:

Հանդիպումը բոլորի համար սրտառուչ էր: Արամյանն այս ամենը նկարագրում է թատերական ոճով:

«Վարագոյրը կը բացուի Զուիցերիայէն: Վերտէնպերկ կոչուած մի գեղադուարճ, բարձրագիւր Հելվեթական գիւղաւանի սարաւարթին թառած գղեակ շէքին սրաւը Հաւաքուած են ծերունազարդ պետ-երկրաչափ Զիգրիսթի ամբողջ ընտանիքը, զաւակներով, թոռներով ու ծոռներով: Եղրեւանիներու, վարդերու, կակաշներու եւ շահոքրամի թաղարներով զարդարուն պատշգամբն մարդկային աչքը կը պարփակէ մի Հեռատեսիլ բնագաւառը լեռնաշխարհի: Սահմանակից չորս երկիրներ Զուիցերիա, Լիխթենշթայն, Աւստրիա եւ Գերմանիոյ Հետ Հռենոս գետի վերի Հոսանքին եւ Քոնսթանց բազմագունեան լճի ափերուն իրարու կ'երկարին խաղաղ կենսակցութեան մտերմական ձեռքեր: Այլուր ժլատ երկիրը, Հաճոյք զգացեր է այս երկրամասին բաշխելու աչք Հրապուրող, Հոգին երանաւետող եւ մարդոց կարիքներուն գոհացում տուող բոլոր բարիքները: Երեք Հազարնոց բազում՝ ձիւնապատ դաշույններ, ինչպէս Սենթիս լեռնաշղթան, երեք քոյրերու եւ եօթնեղբայրներու ժեռուտ առապարներ կը շրջբոլորեն բերրի, կանաչազարդ պարտեզ-այգիներ: Պարահանդէսի նման, իրարու բազուկէն բռնած՝ զանազան գիւղերու կարմրտուն տոռներ, գեղակներ գէպի մոյգ կանաչ մարգագետիններ կը վերթեւեն: Աղբիւրներ, բիւրաւոր, եւ առուակներ կ'երթան Համբուրել իրենց մայր գետը՝ Հռենոսը, որ Սուրբ ԿօթՀարդի սառնամանիքէն բխած ճերմակ խճաքարերու խժտուքով կը թաւալի դէպի Հիւսիս: Արեւաշող զառիվարներուն Նոյ Նա-Հապետին առաջին սնկած օրհնեալ խաղողի թուփեր, Հոս այգեստաններու կարպետները կը տարածեն Կրապս, Պուխս եւ Սուրբ Մարկարէթէ աւանները: Հիւրընկալ տանտիրուհին Կլարա, սրտալի ասպնջականութեամբ ընթրիքի կը հրաւիրէ:

Մանաւոր խնամքով պատրաստած է՝ նաեւ արեւելեան մածու-
նը, լիցքը եւ ամբուկէ մնածաղ: Քանզի պետ-երկրաշաւի Չիգրեսթ
եւ կենակիցը երկար տարիներ ապրած են Ամանոսի շրջակայքը եւ
այնտեղէն բերած նաեւ զանազան արեւելեան բանջարեղէններուն
Հունտեր, ինչպէս աղատքեղ, ամբուկ, ռաՀան, սխտոր, սելի եւ դդու-
մի տեսակներ: Աշխոյժ խօսակցութեան անվերջ նիւթերն եւ 50
տարի առաջ Ամանոսէն Հալէպ երկարող Պաղտատի երկաթու-
ղային գծի կառուցման եւ մանաւանդ իրենց աչքերովն իսկ տեսած
Հայոց կրած պէսպիսի չարչարանքն ու Հալածանքը:

Ինձ Համար, իբրեւ ննջարան պատրաստած են վերնայարկին
դէպի արեւմուտք նայող մի սենեակ, որուն պատուհանէն աչքս
կ'ընդգրկէ շատ աւելի տարածուն, երփներանգ Համայնապատկեր
մը, Հռովմէական Հինաւուրց Հաստակերտ ամրոց դղեակ մը, որուն
ստորոտը մի կապտաւուն լճակը սիւքի Հպանքով կը վէտվէտի: Ի՛նչ
աղու եւ Հանդարտ մթնոլորտ սա իրիկնային ժամերուն, ուր եղնիկ-
ներ ու երէներ անվրդով կ'արածին անտառներու բացասները:

Յանկարծ իմ անկողնիս մօտ կը նշմարեմ մի ուրիշ մաՀճակալ,
որուն վրայ նետուած են արեւելեան ծածկոց եւ կապերտ:

– Կը յիշէ՞ք, Պրն. Արամեան, այս որտեղէ՛ն եկած է:

– Ամէն պարագայի, զուիցերիական կամ եւրոպական ապրանք
չէ:

– Լաւ խորՀեցէ՛ք, դժուար չէ մտաբերել:

– Արդեօք Քելլերէ՛ն Հետերնիդ բերիք:

– Ճիշդ ըսիք, եւ կը յիշէ՞ք, ի՛նչ տրամաթիւք վայրկեաններուն
սա պարզուկ մաՀճակալ կազմածը ձեր կեանքը փրկեց:

– Արդեօք ասոր վրայ՝ պառկած էր այդ տագնապալի,
սրտաճըմլիկ ժամերու տղացկան ձեր կենակիցը:

Հանս եւ Բուտին ներկայ են: Տիկինը մի գոՀունակ դէմքի ար-
տայայտութեամբ յարեց Բուտիին²⁵⁹. «Ձեզի քանի մը անգամ՝

²⁵⁹ Այստեղ Արամյանը Զիգրիստների առաջնեկի՝ Կառլֆրիդէլիի անվան
փոխարեն սխալմամբ օգտագործում է եռյակներից մեկի՝ Ռուդիի անունը:

գրած էինք, որ երկաթուղիի գծին վրայ այս պարզուկ մաՀճակալը մի անըստգիւտ, փառաւոր կաՀկարասի էր»:

– Եւ պետ-երկրաշափը շարունակեց. կը յիշէ՞ք. այն վտանգաւոր պաՀը, երբ ԻսլաՀիէի գայմագամին Հրամանով ոստիկան-ժանտարմաներ Ձեզ պիտի ձերբակալէին, մինչեւ մեր տունը եկան, ամէն անկին տակն ու վրայ ըրին, բայց չՀամարձակեցան կնոջն խցիկը մտնել, երբ իրենց ըսի, որ կինս ծննդաբերութեան ցաւերով կը տուայտի:

– Եւ դուք պաՀուրտած էիք այս իմ խշտեակ-մաՀիճիս տակ:

– Եւ երբ դուք այն գիշեր փախեր էիք, Հետեւեալ օրը եղբայրս տեսաւ աշխարՀիս լոյսը, – ընդմիջեց 50 տարեկան երկրագործ որդին Բուտին:

– Անանկ որ ես երկու մարդու կեանք շնորՀեցի, աւելցուց քաղցր քմծիծաղով Տիկին Ալարան, – ո՛նեցայ երկու ծնունդ, մին ոգեկան, միաւր մարմնական: Բոլորս Համբուրուեցանք, գրկախառնուեցանք սրտագին աղապատանքով. միշտ մեր աչքերը յառած սա լուիկ, պարզուկ խշտեակ-մաՀիճին, որ կարծես կ'ուզէր յիշելու ելլել, Հպարտանալ եւ պատմել այն սարսափելի ժամերուն եղբրական անցքերը:

Երբ «գիշեր բարի» ըսելով Հեռացան, երկիւղածութեամբ գրկեցի, այո՛, խռոված սրտիս պոռթկումներովս Համբուրեցի, մէն մի ճաղի, մէն մի ոտքի, մէն մի պտուտակի տեսքը, Հոգ չէ թէ երկար տարիներու ընթացքին գունաթափ ըլլային: Անկէ ի վեր մի անբացատրելի կենդանի մտերմութեան արմատ ձգեց մեր մէջ: Ամէն ներս երթալուս, առաջին բարեհաճ երախտագիտական զեղում՝ ներս նախ սա Հրաշագործ մաՀճակալին վերապաՀած եմ: Որքա՛ն կը փափաքէի Հետս տանիլ, սրբակրօն Հրաշազան նշխարի նման պաշտամունքի ամենօրեայ առարկան ընել: Ո՞ր թանգարանին կարելի է կտակել այս անգին փրկիչը – իմ Հրաշագործ մայրը»:




Վերդենբերգի համայնապատկերը. ձախից՝ բարձունքի վրա Կլարայի հայրական տունը, աջից՝ դղյակ-ամրոցը, ներքևում՝ միջնադարյան տնակներ Վերդենբերգի լճի ափին



Վերդենբերգ 2016. Դորա Սաքայանը շրջագայում է Կլարայի ծննդավայրում:

ՎԵՐՋԱԲԱՆ. ՄԵԿ ԴԱՐ ԱՆՑ...

2016 թ., հոկտեմբեր: Տարբեր լեզուներով էլեկտրոնային նամակներ եմ հղում բոլոր բարեկամներիս՝ հայտնելով ուրախալի լուրը, որ օրերս Շվեյցարիայի Ցյուրիխ քաղաքի «Լիմատ» հրատարակչությունը (Limmat-Verlag, Zürich) լույս է ընծայել իմ նոր գիրքը: Նամակներիս կցում եմ գրքի մասին հրատարակչության ծանուցումը: Ահա դրա հայերեն թարգմանությունը.



Լույս է տեսել՝

Դորա Սաքայան, «Նրանց քշում են անապատները. Կլարա և Ֆրից Ջիգրիստ-Հիլտները Հայոց ցեղասպանության ականատեսներ (1915-1918)»

Յյուրիխ, «Լիմաթ» հրատարակչություն, 2016, 304 էջ, կազմը՝ կոշտ, մոտ 30 լուսանկար ու պատճեններ, ISBN 978-3-85791-815-5, Ca. SFr. 34,00; 29.50 €

Ապրիլ, 1915: Իրենց պսակադրության հաջորդ օրն իսկ ճարտարագետ Ֆրից Զիգրիստն ու բուժքույր Կլարա Հիլթին Շվեյցարիայի Վերդենբերգ քաղաքից գնացքով ուղևորվում են դեպի հարավարևելյան Թուրքիա՝ կտրելով պատերազմական շրջանները: Այնտեղ Ֆրից Զիգրիստը 1910 թ. մասնակցում է Բադդադի երկաթուղու շինարարական աշխատանքներին:

Ձույզը հաստատվում է Ամանոսյան լեռնաշղթայի լանջին գտնվող Քելեր կայարանում: Նրանց ժամանումից կարճ ժամանակ անց սկսվում են հայերի տեղահանությունները, և հազարավոր հայեր ամեն օր անցնում են նրանց տան մոտով: Երեք տարի շարունակ նրանք տեսնում են, «թե ինչպես ներքևում՝ ժայռոտ կիրճում, խամրում են ոմանց լույսերը», մինչդեռ նրանք իրենց աշխարհից կտրված բարձրադիր տնակում ապրում էին իրենց առօրյան: Իսկ երբ ամուսիններն այցելում են Հալեպ քաղաքը, նրանց համար պարզ է դառնում, թե դեպի ուր են քշում այդ հազարավոր հայերին. դրանք իրականում նախապես ծրագրված մահվան երթեր են, որոնց շուտով միացան նաև Բադդադի երկաթուղու շինարարական աշխատանքներում զբաղված բոլոր հայերը:

Կլարան իր պարտքն է համարում՝ նախ իր օրագրում, ապա նաև ականատեսի իր հատուկ վկայության մեջ գրառելու ժամանակի արհավիրքները, իսկ Ֆրիցն իր հերթին ավելի ուշ շարադրում է իր տեսածն ու ապրածը:

Դորա Սաքայանը վերժանել է գոթական ձեռագրով գրված հին փաստաթղթերը, դրանք հանգամանորեն մշակել է և եղելությունները տեղադրել ժամանակի մեջ: Ի լրացումն այդ ամենի, մեջբերելով Հայկ Արամյանի հայերեն գրքից, Սաքայանն ընթերցողին պատմում է, թե ինչպես 1916-ին

Զիգրիստ-Հիլթի գույզը օգնել է իրենց պահեստապետ Արամյանին՝ իրականացնելու արկածալից փախուստը ու փրկելու կյանքը:

Շրջաբերական նամակում տեղեկացնում եմ բոլորին, որ «Լիմաթ» հրատարակչությունը Շվեյցարիայի գերմանախոս երեք քաղաքներում կազմակերպելու է «Նրանց քշում են անապատները» գրքի շնորհանդեսներ, և որ այդ առթիվ մեկ շաբաթով հրավիրված եմ Շվեյցարիա:

Ահա 2016 թ. հոկտեմբերի վերջին Շվեյցարիա իմ այցի առթիվ կազմակերպվելիք միջոցառումների ծրագիրը:

Հոկտ. 24: Հարցազրույց շվեյցարական հեռուստատեսությունում (հեռարձակումը՝ հոկտ. 26-ին):

Հոկտ. 26: Շնորհանդես Գրաբս-Վերդենբերգ (Grabs-Werdenberg) համայնքում:

Հոկտ. 27: Շնորհանդես Յյուրիխի ճարտարագիտական համադաշնային համալսարանի ժամանակակից պատմության արխիվում [AFZ in ETH Zürich]:

Հոկտ. 28: Շնորհանդես Սանկտ Գալեն (Sankt Gallen) քաղաքում:

Գրքի տարածման համար կարևոր էր, որ միջոցառումները տեղի էին ունենում «Zürich liest» [Յյուրիխն ընթերցում է] ամեն տարի հոկտեմբերին Յյուրիխում և երկրի գերմանախոս քաղաքներում անցկացվող գրական փառատոնի ընթացքում:

Եթե այսօր՝ Շվեյցարիա իմ ուղևորությունից ամիսներ անց, ինձ հարցնեին, թե գրքի երեք շնորհանդեսներից ո՞րն էր ավելի հաջողվածը, ապա պատասխանս պիտի լիներ՝ երեքն էլ շատ գոհացուցիչ էին, թեև յուրաքանչյուրն ուներ իր ուրույնությունը: Դահլիճները միշտ լեփ-լեցուն էին հասարակության տարբեր խավերի ներկայացուցիչներով, մանավանդ՝ Զիգրիստ-Հիլթի գերդաստանի հետնորդներով, նաև

հայերով: Այդ հանդիսություններում ընդհանուր հետաքրքրությունը մեծ էր. ներկա էին երկրի երևելի գործիչներ, պատվարժան հյուրեր: Այսպես՝ առաջին շնորհանդեսին մեր պատվավոր հյուրն էր Հայաստանի Հանրապետությունում Շվեյցարիայի արտակարգ և լիազոր դեսպան պարոն Լուկաս Գասերը (Lukas Gasser), որը Երևանից հատուկ այս առիթով էր ժամանել իր հայրենիքը:

Ցյուրիխի ճարտարագիտական համադաշնային համալսարանի ժամանակակից պատմության արխիվում տեղի ունեցած երկրորդ և գլխավոր շնորհանդեսին բացման խոսքով ներկայացավ Շվեյցարիայի խորհրդարանի անդամ, Շվեյցարիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության նախկին նախագահ (2004-2008) Հանս-Յուրգ Ֆերը (Hans-Jürg Fehr): Ուշագրավ է, որ նա հատկապես խոսեց Հայոց ցեղասպանության և այդ հարցում Շվեյցարիայի այսօրվա դիրքորոշման մասին: Իսկ երրորդ շնորհանդեսին իր ներկայությամբ մեզ պատվեց Սանկտ Գալենի քաղաքապետը՝ հարգարժան տիկին Պատրիցիա Ադամը (Patricia Adam):

Այսուհանդերձ, երբ այսօր հետադարձ հայացք եմ նետում այդ երեք շնորհանդեսներին, կարող եմ ասել, որ առաջինը՝ Գրաբսինը, ինձ համար ամենահիշարժանն է: Հոկտեմբերի 26-ի կեսօրին գնացքով Ցյուրիխից մեկնեցի Սանկտ Գալեն, որտեղ քաղաքային օրաթերթի ճանաչված լրագրող Բրիգիթե Շմիդ-Գուգլերը (Brigitte Schmid-Gugler) ինձ հարցազրույցի էր հրավիրել: Ժամանակը սուղ էր: Հարցազրույցից անմիջապես հետո՝ այդ նույն երեկոյան, պետք է հասնեի գրքի առաջին շնորհանդեսին: Կառամատույցում տիկին Շմիդ-Գուգլերի հետ ողջագուրվելուց հետո Վերին Հռենոսյան գեղատեսիլ հարթավայրով մեքենայով ուղևորվեցինք դեպի նրա տունը, որտեղ սուրճի ճոխ սեղանի շուրջ նույնիսկ չզգացի, թե երբ և ինչպես տեղի ունեցավ հարցազրույցը: Ապա, կրկին վայելելով բնության գեղեցկությունները, ուղևորվեցինք դեպի Կլարա Զիգրիստ-Հիլթիի ծննդավայրը՝ Գրաբս-Վերդենբերգ:



Գրաբն 2016. Դորա Սաքայանը Կլարայի թոռների, ծոռների,
ազգականների և այլ հյուրերի հետ

Այդ ամբողջ ընթացքում ոգևորությունս մեծ էր: Ինչո՞ւ: Դրա պատասխանը կարելի է կարդալ հաջորդ օրը՝ Սանկտ Գալենի թերթում տիկին Շմիդ-Գուզլերի հրապարակած հոդվածում, որտեղ շեշտում եմ առաջին շնորհանդեսի համար այդ վայրի ընտրության կարևորությունը: Ուզում էի, որ պատմությունը շարունակվեր այնտեղ, որտեղից այն սկիզբ էր առել: Եվ, ահա, գրեթե մեկուկես դար անց, ես այնտեղ էի, որտեղ Կլարա Հիլթին լույս աշխարհ էր եկել, մեծացել, սովորել ու աշխատել: Շնչում էի Ալպյան լեռների ու բուսականության կազդուրիչ օդը և վայելում Կլարայի հայրենի լեռնաշխարհի, մանավանդ սիրելի լեռան՝ Մարգելթուպֆի գեղեցկությունը, այն լեռան, որին այնքան կարոտում էր նա Թուրքիայում բնակության տարիներին:

Այդ երանության մեջ Գրաբս ուղևորվելիս դեռ չգիտեի, որ առաջիկա գիշերը հյուրնկալվելու էի այդ նույն վայրում, իսկ հաջորդ օրը քայլելու էի իմ շվեյցարացի հերոսների՝ Կլարայի և Ֆրիցի ոտնահետքերով: Եվ այսօր, եթե չլինեին տեղում արված այս բոլոր գեղեցիկ լուսանկարները, ամեն ինչ երազ էր թվալու: Այնքա՛ն երախտապարտ եմ բոլորին, ովքեր նվիրեցին ինձ այդ անմոռանալի 24 ժամը, և մանավանդ «Լիմաթ» հրատարակչության տնօրենին՝ Էրվին Քյունցլին (Erwin Künzli), որը Շվեյցարիայում անցկացվելիք միջոցառումների ծրագիրը կազմելիս հաշվի էր առել իմ բոլոր նախասիրությունները և նրբանկատորեն այս վայրերն էր ընտրել առաջին շնորհանդեսի համար:

Գրաբս-Վերդենբերգում շնորհանդեսը տեղի ունեցավ Շեֆլի (Schäfli) ռեստորանի մեծ դահլիճում: Նախքան միջոցառումն սկսելը, մեծագույն ուրախությամբ ծանոթացա Զիգրիստների երկու թոռնուհիների՝ Լինդայի ու Կատիի, ինչպես նաև վերջինիս ամուսնու՝ Վալտերի հետ: Վերջին երկու տարում այդ երկու ազնիվ տիկիների հետ նամակագրություն ունեի. գրում էի էլեկտրոնային փոստով, և նրանք միշտ պատրաստ էին հարցերիս պատասխանելու, լուսանկարներ

և անհրաժեշտ տեղեկություններ ուղարկելու: Մակայն անձամբ ծանոթանալը հատուկ հրճվանք պատճառեց բոլորիս: Երկուստեք երախտագիտության շատ խոսքեր ասացինք... Հուզիչ էր այն պահը, երբ Լինդան ասաց. «Ա՛խ, երանի թե հայրս ողջ լիներ ու տեսներ Ձեր այս գիրքը... Որքա՛ն կուրախանար»:

Շուտով մեզ միացան Զիգրիստների ուրիշ թոռներ, իսկ հետո՝ ծոռներ, տարբեր տարիքի պայծառ ու ժպտերես դեմքեր, իսկ հետո՝ բազմաթիվ այլ մարդիկ. բոլորը մեծ ցանկություն ունեին անձամբ ծանոթանալու ինձ հետ: Ապա միանգամից դահլիճը լցվեց, և այցելուներից մեկն ականջիս շշնջաց, որ գրեթե բոլոր ներկաները կա՛մ Զիգրիստ-Հիլթի գույզին ու նրանց որդիներին անձամբ գիտեին, կա՛մ ազգականներ էին, ծանոթներ, հարևաններ: Տեղեկացա նաև, որ Զիգրիստ-Հիլթիներն այսօր պիտի վայելեին 8 թոռ, 18 ծոռ, 26 թոռան թոռ, և այդ ընթացքում երկու փոքրիկներ էլ դեռ լույս աշխարհ գալու ճանապարհին էին... Հետո էլ բարեբախտություն ունեցա ծանոթանալու նրանց այլ հետնորդների հետ, որոնք չէին կարողացել ներկա լինել առաջին շնորհանդեսին, բայց եկել էին երկրորդին ու երրորդին և կամ պարզապես գալիս էին հյուրանոց՝ ինձ տեսնելու, իրենց գրքի վրա ինքնագիրս ունենալու: Ու ամեն անգամ իրար ձեռք սեղմելիս կամ գրկախառնվելիս կարծես վաղեմի բարեկամներ էին իրար վերագտնում:

Շատերի համար անակնկալ, ինձ համար՝ հրճվանք, իսկ գրքիս համար մեծ պատիվ էր դեսպան պարոն Լուկաս Գասերի ներկայությունը գրքի առաջին շնորհանդեսին: Միայն ես գիտեի, թե ինչպես էր նա ուշի-ուշով հետևել այս գրքի ծննդին և ինչքան ուրախ էր, որ ներկա էր դրա «մկրտությանը»: Իր ելույթում պարոն դեսպանը ողջունեց գրքի լույս տեսնելը, մանավանդ «Լիմաթի» նման հրատարակչության կնիքով: Իսկ իմ հասցեին շոայլած նրա գովաբանական խոսքերից հիշողությանս մեջ մնաց հետևյալը. «Պրոֆ. Սաքայա-



Գրաբն 2016, շնորհանդեսից առաջ.
 Ջախից՝ «Լիմաթ» հրատարակչության տնօրեն Էռվին Քյունցլին,
 Դորա Սաքայանը և Վերդենբերգի տարեգրքի խմբագիր Հ. Յ. Ռայխը



Գրաբն 2016, շնորհանդեսից առաջ. Դորա Սաքայանը Կլարայի
 թոռնուհիների՝ Լինդայի, Քաթիի և վերջինիս ամուսնու՝ Վալտերի հետ

նից եւ շատ բան սովորեցի, իմացա, թէ ինչ գանձեր են թաքնված ոչ միայն նրա երկրում՝ Հայաստանում, այլև իմ Շվեյցարիայում»:

Ես դեռ չգիտեի, որ պարոն դեսպանն իր ներկայությամբ պատվելու էր մեզ նաև հաջորդ օրը Ցյուրիխի ճարտարագիտական համադաշնային համալսարանի Ժամանակակից պատմության արխիվում [AFZ in ETH Zürich] տեղի ունենալիք երկրորդ և գլխավոր շնորհանդեսին, այն էլ՝ իր որդու և դստեր ուղեկցությամբ: Հաճելի անակնկալ էր ծանոթանալ և միջոցառումից հետո էլ մի քիչ զրուցել այդ երկու շնորհալի երիտասարդ շվեյցարացիների հետ, որոնք ուսանում են Շվեյցարիայում, մինչդեռ նրանց հայրը Հայաստանի Հանրապետությունում փառքով է ներկայացնում իրենց երկիրը:

Գրաբւում հանդիսությունը բացեց պարոն Հանս Յակոբ Ռայխը (Hans Jakob Reich)՝ Վերդենբերգի տարեգրքի (Werdenberger Jahresbuch) գլխավոր խմբագիրը, որը նաև այդ գեղեցիկ երեկոյի կազմակերպիչն էր: Նա հպարտությամբ խոսեց այն անմիջական կապի մասին, որ լույս տեսած գիրքն ունի Վերդենբերգի հետ՝ այն էլ իրեն հայրենակից Զիգրիստ-Հիլթի գույզի և նրանց որդիներից մեկի՝ Ռուդոլֆ Զիգրիստ-Կլայյունայի միջոցով: Նա ասաց. «Մեր օրերում մեծ թվով գրքեր են տպագրվում, սակայն դժվար է ասել, որ դրանք բոլորը կարևոր են: Դորա Սաքայանի գիրքն իրապես կարևոր գիրք է: Անհանդուրժելի է այլևս, որ 100 տարի անց էլ Հայոց ցեղասպանության պատմական փաստի իսկությունը վիճարկվի»: Ապա խոսեց հրատարակիչ պարոն Էրվին Քյունցլին, որն աշխուժացրեց ներկաներին՝ ներկայացնելով գրքի հրատարակման պատմությունը: Նա ասաց, որ հանկարծակիի է եկել, երբ 2015-ի Սուրբ ծննդյան տոներից երեք օր առաջ հեռավոր Մոնրեալից ստացել է գրքի ձեռագիրը և տպագրության առաջարկությունը, ընդ որում՝ հեղինակը հայ է, բայց գրում է անթերի գերմաներենով, իսկ գրքի հերոսները Շվեյցարիայից են, բոլոր նյութերը՝ շվեյցարական: Պարոն



Ցյուրիխ 2016. Չախից՝ Հայաստանում Շվեյցարիայի դեսպան Լուկաս Գասերը, «Լիմաթ» հրատարակչության տնօրեն Էովին Քյունցլին, Դորա Մաքայանը և դեսպանի երկու զավակները

Քյունցլին շեշտեց, որ գրքի հրատարակման որոշումը վայրկենական էր՝ «քաջատեղյակ լինելով հանդերձ, թե քաղաքականապես որքան աղմկահույզ կարող է դառնալ դրա նյութը»:

Հաջորդն իմ ելույթն էր: Միշտ հաճելի է, երբ մարդ խոսում է լեփ-լեցուն դահլիճում, որտեղ քար լռություն է տիրում: Ես անմիջապես հասկացա, որ այստեղ կարելի էր ժամերով խոսել, և դահլիճը նույն ուշադրությամբ շարունակելու էր լսել ինձ: Պարոն Ռայխը հետո ինձ ասաց, որ այս սրահը դեռ նման բան չէր տեսել. ո՛չ այսպիսի բազմություն, ո՛չ էլ այսպիսի լռություն: Սակայն այս բացառիկ ուշադրությունը ես ամբողջությամբ ինձ չվերագրեցի: Բոլորը գիտեին, որ գրածս գիրքը Զիգրիստ-Հիլթի ընտանիքի կյանքի մի կարևոր հատվածի պատմությունն էր, իսկ այդ ընտանիքը մեծ համբավ ունի այս տարածաշրջանում: Կլարայի հայրը՝ Պարավիցին Հիլթին (Paravicin Hilty), եղել է մեծ բարերար, և մինչև այսօր էլ Գրաբսի հիվանդանոցի պատին՝ մուտքի վերևում, ոսկեգծ տառերով անմահացված է նրա անունը: Տեղի բնակչությունը տարբեր առիթներով հրապարակված նյութերից կամ սերնդեսերունդ բերանացի փոխանցված լուրերից գիտեր, որ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Կլարա և Ֆրից Զիգրիստ-Հիլթիները երեք տարի եղել են Թուրքիայում և իրենց աչքով են տեսել Հայոց ցեղասպանությունը: Ավելի մոտ կանգնած մարդիկ տեղյակ էին նաև, որ ամուսիններն իրենց ողջ կյանքում տառապել են այդ ծանր հիշողությունների բեռան տակ: Միայն այսքանը. ո՛չ ավելին: Իսկ մնացած ամեն ինչը նորություն պիտի լիներ նրանց համար: Հազիվ թե ընտանիքի անդամներից և կամ հայրենակիցներից որևէ մեկը կարդացած լիներ Կլարայի 365 էջանոց օրագիրը, որովհետև այն անընթեռնելի էր նրանց համար. Կլարան գրել էր Քուրենթ (Kurrent) կամ գոթերեն



Սանկտ Գալեն 2016. Դորա Մաքայանը Կլարայի ծոռ Սիմոնի հետ



Սանկտ Գալեն 2016. Դորա Մաքայանը Կլարայի երկու ծոռների՝
Դավիդի և Մարիանի հետ

կոչվող գերմաներենի հին տառատեսակով²⁶⁰։ Մինչև 20-րդ դարի առաջին տասնամյակները գերմանախոս երկրների դպրոցներում այդ տառատեսակով էին գրել-կարդալ սովորում (հետո այն աստիճանաբար իր տեղը զիջեց լատիներեն տառերին)։ Եվ այժմ բոլորն էին անհամբեր։ Ուզում էին անպայմանորեն գիրքն ունենալ և օրագիրն ընթերցել։ Ոչ ոք չգիտեր, թե երեքուկես տարի շարունակ իր օրագրում ինչ էր արձանագրել Կլարան ամեն օր։ Ոչ ոքի հայտնի չէին Կլարայի ապրումներն ու մտքերը Թուրքիա մեկնելուց առաջ, կես տարվա մի շրջան, որը համընկնում էր նրա նշանախոսությանն ու ամուսնությանը Ֆրից Զիգրիստի հետ։ Մանավանդ բոլորն անտեղյակ էին, թե ինչեր է նա գրել Թուրքիայում եղած ժամանակ, երեք տարի և օրեր շարունակ, ճրագալույսի տակ գրիչ ու թանաքով և ցավոտ սրտով։

Ֆրիցի գրվածքների մասին հայրենակիցները նույնպես քիչ բան գիտեին։ Առաջին անգամ նրանք իմ գրքում պիտի կարդային Ֆրիցի՝ զոհված հայ բարեկամներին ուղղած հուզիչ նամակը։ Ֆրիցն այն գրել էր իր մահից 10 տարի առաջ՝ ձգտելով թեթևացնել տարիների ընթացքում իր սրտի վրա ծառացած բեռը։

Գրքում կար մի այլ և կարևոր գլուխ, որի բովանդակությունն ընդհանրապես անծանոթ էր բոլորին։ Այն նվիրված է Հայկ Արամյանին՝ Թուրքիայում ճարտարագետ Ֆրից Զիգրիստի մոտ աշխատող հայ պահեստապետին, որին 1916 թ. հունիսին կարողացան փրկել Կլարա և Ֆրից Զիգրիստները՝ վտանգելով իրենց կյանքը։ Այդ գլխից բոլորը նույնպես պիտի տեղեկանային, որ Հայոց ցեղասպանության փոթորկալից օրերից մոտ չորս տասնամյակ անց՝ 1954 թ., Հայկ Արամյանը եկել է Վերդենբերգ, որպեսզի այցելի իր փրկարարներին ու անձամբ իր երախտագիտությունը հայտնի։ Ահա այդ բոլոր

²⁶⁰ Տե՛ս Կլարայի ձեռագրի նմուշները, էջ 263։



Վերդենբերգ 2016. Կլարայի հայրական տան շեմին նոր տերերի՝ Շտալերների կողմից պատրաստված քարե տախտակը՝ ողջույնի խոսքով ուղղված Դորա Սաքայանին

տեղեկություններին ծանոթանալու սպասումն էր, որ դահլիճում առաջացրել էր բացարձակ այդ լռությունը: Ելույթիս հաջորդեց հարցերի տարափ, որի ժամանակ ինձ առավել պարզ դարձավ, որ այս գիրքը նույնքան կարևոր էր նաև շվեյցարացիների համար:

Ուշ երեկոյան միայն եկավ պահը, երբ ներկաները գրքեր պիտի ձեռք բերեին, իսկ ես դրանք պիտի մակագրեի: Այս ընթացքում նոր ծանոթություններ կնքվեցին: Աշխուժությունը տևեց մինչև կեսգիշեր, երբ բոլոր գրքերը վաճառվեցին, իսկ «Լիմաթ» հրատարակչությունը գրքի նոր պատվերներ ստացավ:

Այս ամենից հետո ինձ հայտնեցին, որ այդ ուշ ժամին Ցյուրիխ մեկնող գնացք չկա, իսկ տեղի հյուրանոցում ազատ տեղեր չէին մնացել: Այդ պահին դահլիճի մի անկյունում մի այլ աշխուժություն սկսվեց: Հետո միայն տեղեկացա, որ մարդիկ բանավիճում էին, թե այդ գիշեր ես ում մոտ պիտի հյուրընկալվեմ: Ի վերջո, հաղթել էր Գրաֆսի երևելիներից մի զույգ՝ Հանսուլի և Գերտրուդ Բյունցլերները (Hansuli & Gertrud Künzler), որոնք սիրով ինձ իրենց տունն առաջնորդեցին:

Այդ տանը հյուրասիրությունը գրեթե հայկական էր, միայն թե ամեն ինչ ավելի կազմակերպված: Քունը փետրե ահռելի վերմակի տակ շատ կազդուրիչ էր, իսկ առավոտյան ժամը 8-ին, ըստ պայմանավորվածության, հյուրասեր ամուսիններն ինձ սպասում էին նախաճաշի ճոխ սեղանի շուրջ: Ամենահաճելի անակնկալը սեղանին դրված տեղական՝ «Werdenberger & Obertoggenburger» օրաթերթն էր՝ 2016 թ. հոկտեմբերի 27-ի համարը, որտեղ հրապարակվել էին նախօրեի շնորհանդեսի մասին Ռեթո Նոյրաութերի (Reto Neurauter) երկու մանրակրկիտ հոդվածները: Մեկը վերնագրված էր «Հայոց ցեղասպանության վկաներ», իսկ երկրորդը՝ «Կարևոր գիրք Հայաստանի և Շվեյցարիայի համար», որն ուներ ծավալուն ենթավերնագիր. «Նրանց քշում են անապատները...» գրքի առաջին շնորհանդեսը բազմամարդ էր, հեղինակը՝ Դորա



Վերդենբերգ 2016. Դորա Սաքայանը մուտք է գործում Կլարայի հայրական տունը: Ջերմ ընդունելություն նոր տանտերերի Շտալերների կողմից



Շրջագայություն Շտալերների տանը: Թոռնուհի Լինդան բացատրում է:

Սաքայանը, հուզված էր, իսկ ոստիկանությունը զգուշորեն հսկում էր այս միջոցառումը»:

Նախաճաշի ժամանակ ինձ սպասում էր ևս մի անակնկալ. ժամանեցին պարոնայք Հանս Յակոբ Ռայխը և Կառլ Բլասը (Karl Blaas)՝ վերջինս իր լուսանկարչական սարքով, որպեսզի ինձ շրջագայելու տանեին տարածաշրջանի տեսարժան վայրերը և հատկապես Զիգրիստ-Հիլթիների հետ առնչվող տեղերը: Հյուրընկալ Քյունցլերներին խորին երախտագիտությամբ հրաժեշտ տալուց հետո, մենք ճանապարհ ընկանք: Դա անմոռանալի ուղևորություն էր Հռենոսյան հարթավայրի և Ալպյան լեռների միջով՝ իմաստալից կանգառներով, որոնցից առաջինը Գրաբսի հիվանդանոցի հին շենքն էր, որտեղ Կլարան աշխատել էր Թուրքիա մեկնելուց առաջ: Հաջորդ կանգառը Բուքսում (Buchs) էր՝ այն տան առաջ, որտեղ Կլարան ծնվել էր և խորը ծերության տարիքում էլ մի քանի տարի ապրել իր քրոջ դստեր՝ տիկին Մարիաննե Էլդերլին-Հիլթիի (Marianne Elderlin-Hilty) խնամքի տակ նախքան ծերանոց տեղափոխվելը: Ապա մեքենան մեզ տարավ մի բարձունք, որտեղից երևում էր քաղաքի համայնապատկերը: Այդ բարձունքում շրջակա համայնքների գերեզմանատունն էր: Այնտեղ առաջին շարքում էս անմիջապես ճանաչեցի Ռուդի Զիգրիստ-Կլայունայի ու նրա կնոջ՝ Իոմայի տապանաքարը: Ապա մեքենայից դուրս եկանք ու երկար պտույտ կատարեցինք գեղատեսիլ Վերդենբերգ քաղաքում, իրենց լեզվով՝ «Շտետլի»-ում (նշանակում է «փոքրիկ քաղաք»), որտեղ մեկը մյուսից տպավորիչ են լավ պահպանված միջնադարյան, գլխավորապես փայտաշեն մոտ 40 տները, որոնց մեծ մասն այժմ վերածվել է կա՛մ հանգստյան տան և կա՛մ թանգարանի: Վերդենբերգ քաղաքում առավել հետաքրքիր էր 800 տարվա պատմություն ունեցող Վերդենբերգի դղյակ-ամրոցը, որն իր տպավորիչ կնիքն է դրել շրջանի համայնապատկերի վրա, և որը ոչ միայն թանգարան է, այլև դարձել է դասական երաժշտության փառատոների կենտրոն:

Սակայն Կլարայի հայրական տան այցը գերազանցեց բոլոր սպասումներս: Պատմական արժեք ներկայացնող այդ շքեղ շինությունը ունի տարբեր անուններ, որոնցից տեղացիները ամենից շատ օգտագործում են երկուսը: Դրսեցիները այն կոչում են «դոյակին կից տունը» (Das Haus neben dem Schloss), քանի որ այն տեսանելի է Վերդենբերգի միջնադարյան դոյակի կողքին²⁶¹, իսկ տնեցիները, մանավանդ, Կլարան համեստորեն, ես կասեի՝ փաղաքշորեն, այն «Hüsi», այսինքն՝ «տնակ» է անվանում: Իրականում Հիլթիների «տնակը» երեք-հարկանի շքեղ մի շինություն է, ճարտարապետական արվեստի մի գլուխգործոց, որի մեջ համերաշխորեն համադրված են ճարտարապետական ավանդական և արդիական լուծումներ²⁶²: Տեղեկացանք, որ Կլարայի հայրը՝ հարուստ ազարակատեր Պարավիցին Հիլթին, այն նախագծել է տվել իր ժամանակի հայտնի ճարտարապետ Էգոն Ռայնբերգերին (Egon Rheinberger), իսկ կառուցումն ավարտվել է 1906 թ.:

Ինձ համար հուզիչ էր այդ փառահեղ տունը այդքան մոտիկից տեսնելը: Եվ ոչ միայն նրա արտաքին շուքի պատճառով: Չէ՞ որ գրքիս մեջ բազմաթիվ կապեր կան այդ տան հետ: Այստեղ է օրիորդ Կլարան ապրել մինչև իր ապագա ամուսնուն՝ Ֆրից Զիգրիստին ծանոթանալը, այստեղ է նա 1914 թ. սկսել իր օրագրությունը: «Տնակում» են տեղի ունեցել Կլարայի ու Ֆրիցի նշանախոսությունն ու հարսանիքը, այստեղից են նորապսակները 1915 թ. ապրիլյան մի օր ճանապարհվել Թուրքիա: Իսկ երբ կրկին հայրենիք են վերադարձել, «տնակն» է եղել նրանց հանգրվանը, որտեղ նրանք անցկացրել են իրենց կյանքի մեծ մասը:

Եվ քանի որ կյանքում կայուն միայն մի բան կա՝ փոփոխությունը, այդ շքեղ եռահարկ տունն էլ այս մեկ դարի ընթացքում փոխել է իր տերերին: Այսօր այն պատկանում է

²⁶¹ Տե՛ս նկար, էջ 386:

²⁶² Տե՛ս նկար, էջ 38:

տեղի բնակիչներ Պատրիկ և Պատրիցիա Շտալեր (Patrik und Patricia Stahler) ամուսիններին, որոնք նախորդ երեկո նույնպես ներկա էին գրքի շնորհանդեսին: Սրտառույ էր տեսնել, թե ինչպես էին Շտալերները դիմավորում մեզ իրենց տանը: Մուտքի մոտ դրված էր գեղարվեստորեն ձևավորված մի քարե տախտակ՝ հետևյալ գրությամբ. «Ամբողջ սրտով ողջունում ենք Ձեզ «տնակում», տիկի՛ն պրոֆեսոր Սաքայան»:

Այստեղ մեզ ժպիտներով դիմավորեցին ոչ միայն Շտալերները: Զիգրիստ-Հիլթիների թոռնուհի Լինդան նույնպես եկել էր, ինչպես ինքն ասաց՝ ինձ մի անգամ ևս տեսնելու: Նրանք մեզ առաջնորդեցին երեք հարկերով՝ ծանոթացնելով շենքի խիստ տպավորիչ ներքին հարդարմանը. ինչպես նրանք հավաստիացրին, 1970 թ. ձեռնարկած վերանորոգումների ժամանակ աշխատել են հնարավորինս քիչ բան փոխել: Սենյակից սենյակ անցնելիս հրճվում էի, երբ իմ պատկերացումների կամ մինչ այդ տեսած լուսանկարների հիման վրա ճանաչում էի այս կամ այն անկյունը: Վերնահարկում Լինդան ինձ ցույց տվեց այն սենյակը, որտեղ Հայկ Արամյանը 62 տարի առաջ գիշերել էր, երբ այցելել էր իր փրկարարներին: Լինդան ինձ նույնիսկ ցույց տվեց այն մոտավոր տեղը, որտեղ Արամյանը տեսել ու ճանաչել էր երկաթե մահճակալը, որի տակ ինքը Թուրքիայում 1916 թ. փրկվել էր: Իսկ պատուհանից բացվում էր այն տեսարանը, որը Արամյանը նկարագրում է իր գրքում. «Վերդենբերգ դղյակ-ամրոցը, խաղողի թփերը, այգեստանների կարպետները, կապտավուն լճակը և անտառների բացատները, որտեղ անվրդով արածում են եղնիկներ ու երեներ»: Իսկ երբ իջանք առաջին հարկ, հեռվից ճանաչեցի տան հետնամուտքի դուռը, որի առաջ 1915 թ. նկարվել էին Կլարան ու Ֆրիցը՝ որպես հարս ու փեսա: Ուստի խնդրեցի Լինդային լուսանկար-



Վերդենբերգ 1980. 96 տարեկան Կլարան իր ծոռնուհու՝ Մարիանի հետ



Սանկտ Գալեն 2016. Դորա Սաքայանը Կլարայի ծոռնուհու՝ Մարիանի հետ



Վերդենբերգ 1915. Վլարայի և Ֆրիցի ամուսնական լուսանկարն իրենց տան հետնադռան առաջ



Վերդենբերգ 2016. 100 տարի անց Դորա Սաքայանը և Վլարայի թոռնուհի Լինդան նույն դռան առաջ

վել ինձ հետ նույն դռան առաջ՝ այդկերպ կարծես կամրջելով ժամանակները²⁶³: Ապա պարոն Բլասին խնդրեցի բակում լուսանկարել պարտիզայանի տնակը, որի առաջ 101 տարի առաջ նկարվել էին հարսանքավորները²⁶⁴: Զուգահեռաբար դիտելով այս հին ու նոր նկարները՝ թվում է, թե հաղթահարել ես բոլոր ժամանակները...

Կլարայի հայրական տան փառահեղ ճարտարապետությունը, ինչպես նաև ներքին հարդարանքներն ու կահավորանքները տեսնելով՝ ես կրկին հիացմունքով լցվեցի իմ հերոսուհու հանդեպ: Հասկացա, թե ինչպիսի խոնարհությամբ էր նա ապրում Թուրքիայում՝ քրդական հետամնաց գյուղի կենսապայմաններում, ինչպես էր նա հաղթահարում պատերազմական շրջանի դժվարություններն ու զրկանքները, ինչպես էր համակերպվել խղճուկ պայմաններին ու այդ իրավիճակում կարողանում էր լիուլի վայելել Ֆրիցի հետ իր ամուսնական կյանքի երջանկությունը: Եվ մինչդեռ ես մոտովի նման զուգահեռներ էի անցկացնում, Շտալերներն ինձ հրավիրեցին հյուրասենյակին կից իրենց գեղեցիկ սեղանատունը, որտեղ զովացուցիչ խմիչքների ու համեղ խորտիկների սեղան էին պատրաստել: Այնտեղ խոսակցությունը թեթափավ, և մենք ավելի մտերմացանք տանտերերի ու Լինդայի հետ: Սակայն օրն աշխատանքային էր, ես պարտավոր էի վերադառնալ Ցյուրիխ՝ իմ հաջորդ շնորհանդեսին, և մենք պետք է հրաժեշտ տայինք իրար: Շտալերները ինձ նվիրեցին իրենց շենքի պատմությանը նվիրված արժեքավոր գրականություն և իրենց արտադրած ընտիր գինիների ու պտղանուշների նմուշներ: Հրաժեշտը հուզիչ էր:

Ցյուրիխ մեկնող գնացքը սկանում էր առաջ, բայց մտքերս դեռ Գրաբսում էին: Հաճելի էր այդ մտքերի մեջ երկար խո-

²⁶³ Տե՛ս զուգահեռ հին ու նոր լուսանկարները նույն դռան առաջ, էջ 407:

²⁶⁴ Տե՛ս 54:

րասուզված մնալը, սակայն ընդամենը մի քանի ժամից հաջորդ և ամենակարևոր շնորհանդեսն էր՝ Ցյուրիխի ճարտարագիտական համադաշնային համալսարանի ժամանակակից պատմության արխիվում: Անհրաժեշտ էր կենտրոնանալ:

Կարելի է ժամերով պատմել, գուցե և մի գիրք գրել Շվեյցարիայում իմ անցկացրած շաբաթվա և այդ ընթացքում տեսածիս ու ապրածիս մասին: Սակայն այս 24 ժամվա նկարագրությունն էլ բավական է, որպեսզի ընթերցողները գաղափար կազմեն այն ընդունելության մասին, որին արժանացել է գիրքս Շվեյցարիայում: Ամեն ինչ իսկապես զգայացունց էր, պարզապես անմոռանալի: Ուրախ եմ, որ այս անգամ ևս Շվեյցարիա այցիս ժամանակ կարծիքս նրա ժողովրդի մասին չփոխվեց. շվեյցարացիները ոչ միայն օրինապահ են ու անկեղծ, այլև ջերմ, գնահատող, հյուրասեր: Իսկական լեռնցիներ... Իսկ այս անգամ նրանց ջերմությունն ամբողջ հայ ժողովրդի նկատմամբ էր:

Ահա մի քանի տող պարոն Կառլ Բլասի սրտառուչ նամակից, որն ստացել եմ ի պատասխան 2016 թ. Սուրբծննդյան տոների առթիվ նրան իմ հղած շնորհավորանքների. «Ողջ հայ ժողովրդին ցանկանում եմ ամենայն բարիք, բայց նախ և առաջ՝ միջազգային ճանաչում. այդ ժողովուրդը, որ անցյալում մազապուրծ է եղել մեծ աղետից, կարողացել է գոյատևել և այսօր պայքարում է մոռացության ու պատմության զեղծարարության (Հայոց ցեղասպանության ժխտման) դեմ: Համոզված եմ, որ հայ ժողովուրդը վաղն էլ է լինելու խիստ հետաքրքրական ու կարևոր, մարդկության համար անփոխարինելի մի ուժ»:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Ահարոնյան, Ավետիս. Շվեյցարական գյուղը. Նամականի, Թիֆլիս, 1913/Երևան, 2014:

Արամեան, Հայկ Ա. Մեծ Եղեռնի Պատգամ. Հայոց Տանթեական. Քաւարան և Հրաշալի Յարութիւն, Պէյրութ, 1970:

Բաում, Վիլհելմ. Թուրքիան և նրա քրիստոնյա փոքրամասնությունները. Անցյալը – Ցեղասպանությունները – Ներկան. Գերմաներենից թարգմանությունը՝ Դորա Սաքայանի և Էվելինա Մակարյանի, Երևան, 2010:

Պալաքյան, Գրիգորիս. Հայ Գողգոթան, հատոր 1, Վիեննա, 1922, հատոր 2, Փարիզ, 1959:

Սաքայան, Դորա. Զմյուռնիա 1922. Բժիշկ Կարապետ Խաչերյանի օրագիրը, ԵՊՀ հրատ., 2007:

Քյունցլեր, Յակոբ. Արյան և արցունքի երկրում. Տպավորություններ Միջագետքից աշխարհամարտի տարիներին (1914-1918): Գերմաներենից թարգմանությունը՝ Դորա Սաքայանի և Էվելինա Մակարյանի, ԵՊՀ հրատ., 2011:

Քյունցլեր, Յակոբ. Երեսուն տարի ծառայություն Արևելքում: Գերմաներենից թարգմանությունը՝ Դորա Սաքայանի և Էվելինա Մակարյանի, ԵՊՀ հրատ., 2008:

Baum, Wilhelm: Die Türkei und ihre christlichen Minderheiten, Geschichte – Völkermord – Gegenwart. Klagenfurt, 2005.

Balakian, Grigoris: Armenian Golgotha. A Memoir of The Armenian Genocide, 1915–1918. New York, 2009.

Berlin, Jörg, Klenner, Adrian (Hg.): Völkermord oder Umsiedlung? Das Schicksal der Armenier im Osmanischen Reich. Darstellung und Dokumente. [Ցեղասպանություն, թե՞ տեղահանում: Հայերի ճակատագիրը Օսմանյան կայսրության մեջ: Պատկերում և փաստաթղթեր] Köln, 2006.

Bührer, Peter: *Die Verfolgung des armenischen Volkes im Osmanischen Reich und das Echo in der Schweiz*. [Հայ ժողովրդի հետապնդումը Օսմանյան կայսրության մեջ և դրա արձագանքը Շվեյցարիայում] 1998.

Dadrian, Vahakn: German Responsibility in the Armenian Genocide: A Review of the Historical Evidence of German Complicity. [Գերմանացիների պատասխանատվությունը Հայոց ցեղասպանության գործում. Գերմանական մեղսակցության փաստերի վերանայում] MA, 1996.

Dadrian, Vahakn: The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus. [Հայոց ցեղասպանության պատմությունը. ազգային հակամարտություն Բալկաններից մինչև Անատոլիա և Կովկաս] Providence, 1995.

Dinkel, Christoph: German Officers and the Armenian Genocide. [Գերմանացի սպաները և Հայոց ցեղասպանությունը] In: Armenian Review 44, 1991, 77-133.

Eichholz, Dietrich: Die Bagdadbahn. Mesopotamien und die deutsche Ölpolitik bis 1918. Aufhaltsamer Übergang ins Erdölzeitalter. [Բաղդադի երկաթուղին: Միջագետքը և նավթի գերմանական քաղաքականությունը մինչև 1918 թ.] Leipzig, 2007.

Feigel, Uwe: Das evangelische Deutschland und Armenien: die Armenierhilfe deutscher und evangelischer Christen seit dem Ende des 19. Jahrhunderts im Kontext der deutsch-türkischen Beziehungen. [Ավետարանական Գերմանիան և Հայաստանը. 19-րդ դարի վերջից սկսած՝ գերմանացի և ավետարանական քրիստոնյաների՝ հայերին ցուցաբերած օգնությունը գերմանա-թուրքական հարաբերությունների համատեքստում] Göttingen, 1989.

Fichter, H.: An die Schweizerischen Väter und Mütter der armenischen Waisen in Anatolien. Bericht von Pfarrer Fichter, in Basel, über seine Reise nach Anatolien, vom 9. Juni bis 16. Oktober 1897. [Անատոլիայի հայ որբերի շվեյցարացի հայրերին ու մայրերին: Բազելից պատվելի Ֆիխթերի զեկույցը 1897 թ. հունիսի 9 - հոկտեմբերի 16-ը Անատոլիա կատարած իր ճանապարհորդության մասին] Neuchâtel, 1998.

Freytag, Bernd: “Auf Geheiß des Kaisers durchs wilde Kurdistan.” [Կայսրի հրամանով վայրի Քուրդիստանի միջով] In: Frankfurter Allgemeine Zeitung vom 6. Januar 2015, S. 19.

Goltz, Hermann: Der gerettete Schatz der Armenier aus Kilikien. Mit Photos von Klaus E. Göltz. [Կիլիկիայից փրկված հայերի զանձերը: Klaus E. Göltz-ի լուսանկարներով] Wiesbaden, 2000.

Gottschlich, Jürgen: Beihilfe zum Völkermord: Deutschlands Rolle bei der Vernichtung der Armenier. [Ցեղասպանության աջակցություն: Գերմանիայի դերը հայերի ոչնչացման գործում] Berlin, 2015.

Gust, Wolfgang: Der Völkermord an den Armeniern: Die Tragödie des ältesten Christenvolks der Welt. [Հայերի ցեղասպանությունը. Աշխարհի ամենահին քրիստոնյա ժողովրդի ողբերգությունը] München-Wien, 1993.

Gust, Wolfgang: Das Imperium der Sultane. Eine Geschichte des Osmanischen Reichs. [Սուլթանների տերությունը: Օսմանյան կայսրությունից մի պատմություն] München, 1995.

Gust, Wolfgang (Hg.): Der Völkermord an den Armeniern 1915/16. Dokumente aus dem Politischen Archiv des deutschen Auswärtigen Amts [Հայերի ցեղասպանությունը: Գերմանիայի արտգործնախարարության արխիվային փաստաթղթեր] Springe, 2005.

Hartunian, Abraham H.: Neither to Laugh nor to Weep. A memoir of the Armenian Genocide. Aus dem armenischen handgeschriebenen Original ins Englische übersetzt von Sohn Vartan Hartunian. [Ո՛չ ծիծաղելու է, ո՛չ լալու: Հուշագրություն Հայոց ցեղասպանության մասին: Հայերեն ձեռագրի թարգմանությունը որդու՝ Վարդան Հարունյանի կողմից] Boston, 1968.

Hesemann, Michael: Völkermord an den Armeniern. Mit unveröffentlichten Dokumenten aus dem Geheimarchiv des Vatikans über das größte Verbrechen des Ersten Weltkrieges. [Հայերի ցեղասպանությունը: Առաջին համաշխարհային պատերազմի ամենամեծ հանցագործության մասին՝ Վատիկանի չհրատարակված փաստաթղթերի հիման վրա] München, 1915.

Hofer, Andreas: Kapitänleutnant Hellmuth von Mücke: Marineoffizier – Politiker. [Փոխհրամանատար Հելմութ ֆոն Մյուկե. Օովային սպա – պետական գործիչ] Marburg, 2003.

Hofmann, Tessa (Hg.): Das Verbrechen des Schweigens: Die Verhandlung des türkischen Völkermordes an den Armeniern vor dem Ständigen Tribunal der Völker. Vorw. u. redaktionelle Bearb.: Tessa Hofmann. [Լռության ոճիրը. Թուրքերի կողմից իրագործված Հայոց ցեղասպանության դատավարությունը Ժողովուրդների մշտական դատական ատյանի առաջ: Նախաբանը և խմբագրությունը՝ Թեսա Հոֆմանի] Göttingen, Wien, 1985.

Hofmann, Tessa: Die Armenier. [Հայերը] Nürnberg, 1993.

Hofmann, Tessa: Annäherung an Armenien: Geschichte und Gegenwart [Հայաստանն ավելի մոտիկից. պատմությունը և ներկան] München, 1997.

Hofmann, Tessa: Rezension über: Grigoris Balakian: Armenian Golgotha: A Memoir of the Armenian Genocide, 1915-1918. Translated by Peter Balakian with Aris Sevag. New York: Alfred A. Knopf, 2009. 509 S. Armenisches Golgotha: Ohne Brot, ohne Wasser, ohne Grab. [Գրախոսական. Գրիգորիս Պալաքյան «Հայ զոդոթյան. Հուշագրություն Հայոց ցեղասպանության, 1915-1918. Թարգմանությունը Peter Balakian-ի և Aris Sevag-ի, New York 2009, 509 էջ. Առանց հացի, առանց ջրի, առանց գերեզմանի»] In: ADK – Armenisch-Deutsche Korrespondenz, Jg. 2009, Nr. 144, Heft 2, S. 64-66.

Hofmann, Tessa: Bilder des Entsetzens und der Anklage: Fotografische Zeugnisse im Kontext von Weltkrieg, Völkermord und Hungersnot. [Սարսափ և մեղադրանք առաջացնող նկարներ: Լուսանկարչական վկայություններ պատերազմի, ցեղասպանության և սովի համատեքստում] In: Rammelt, Claudia; Schlarb, Cornelia; Schlarb, Egbert (Hg.): Begegnungen in Vergangenheit und Gegenwart: Beiträge dialogischer Existenz; eine freundschaftliche Festgabe zum 60. Geburtstag von Martin Tamcke. Berlin, 2015, S. 447-471.

Kaiser, Hilmar: “The Bagdad Railway and the Armenian Genocide 1915-1916. A case Study in German Resistance and Complicity.” [Բաղդադի երկաթուղին և Հայոց ցեղասպանությունը 1915-1916] In: Hovannisian, R. (Ed.), Remembrance and Denial. The Case of the Armenian Genocide. Detroit, 1998, pp. 67-112.

Kaiser, Hilmar, Nancy Eskijian, Luther Eskijian. At the Crossroads of Der Zor: Death, Survival, and Humanitarian Resistance in Aleppo, 1915-1917 [Դեր Զորի խաչմերուկներում. Մահ, վերապրում և մարդասիրական դիմադրություն Հալեպում, 1915-1917] London, 2002.

Kevorkian, Raymond: The Armenian Genocide: A Complete History. [Հայոց ցեղասպանությունը. համապարփակ պատմություն] New York, 2011.

Kieser, Hans-Lukas (Hg.): Die armenische Frage und die Schweiz (1896–1923) – La question arménienne et la Suisse (1896–1923). [Հայկական հարցը և Շվեյցարիան (1896-1923) Zürich, 1999.

Kieser, Hans-Lukas, Dominik J. Schaller (Hg.): Der Völkermord an den Armeniern und die Shoah. [Հայոց ցեղասպանությունը և Շոան] Zürich, 2002.

Kieser, Hans-Lukas: «La missionnaire Béatrice R. face au génocide des Arméniens». [Միսիոներուհի Բեաթրիս Ռոնէրը ի դէմս Հայոց ցեղասպանության] In: J. Sémelin et al. (Hg.): La résistance aux génocides. 2008, S. 383–398.

Kirakossian, Arman: The Armenian Massakers 1894-1896. [Հայկական ջարդերը 1894-96 թթ.] Dearborn, 2008.

Künzler, Jakob: Im Lande des Blutes und der Tränen. Erlebnisse in Mesopotamien während des Weltkrieges (1914-1918). [Արլան և արցունքի երկրում. Տպավորություններ Միջագետքից աշխարհամարտի տարիներին (1914-1918)] Herausgegeben und eingeleitet von Hans-Lukas Kieser. Zürich 2004 (Originalausgabe, 1921).

Künzler, Jakob: Dreissig Jahre Dienst am Orient. [Երեսուն տարի ծառայություն Արևելքում] Basel, 1933.

Lepsius, Johannes: Bericht über die Lage des armenischen Volkes in der Türkei. [Տեղեկագիր հայ ժողովրդի կացության մասին Թուրքիայում] Potsdam, 1916.

Lepsius, Johannes: Der Todesgang des armenischen Volkes: Bericht über das Schicksal des armenischen Volkes in der Türkei während des Weltkrieges. [Հայ ժողովրդի մահվան երթերը. Տեղեկագիր հայ ժողովրդի ճակատագրի մասին համաշխարհային պատերազմի ժամանակ] Potsdam, 1919.

Lepsius, Johannes: Deutschland und Armenien 1914-1918: Sammlung diplomatischer Aktenstücke. [Գերմանիան և Հայաստանը 1914-1918. Դիվանագիտական փաստաթղթերի հավաքածու] Tempelverlag, Potsdam, 1919.

Lodemann, Jürgen: Mit der Bagdadbahn durch unbekannte Türkei. Ein Filmtagebuch. [Բաղդադի երկաթուղով անծանոթ Թուրքիային միջով. տեսարագիր] Eggingen, 1990.

Maag, Elsbeth: “Die Wanduhr im Gepäck nach Kurdistan.” [Դեպի Քուրդիստան՝ պատի ժամացույցը ճամպրուկում] In: St. Galler Frauen – 200 Porträts, Blütenweiß bis rabenschwarz. Hg. Von Marina Widmer, Heidi Witzig, Renate Bräuniger, Zürich, 2003, S. 366-367.

Malade, Theo: Von Amiens bis Aleppo: Ein Beitrag zur Seelenkunde des Großen Krieges; aus dem Tagebuch eines Feldarztes. [Ամիենից մինչև Հալեպ. Հոգված Մեծ աշխարհամարտի հոգեբանության մասին: Ռազմական բժշկի օրագրից] München, 1930.

Manoukian, Abel: Zeugen der Menschlichkeit. Der humanitäre Einsatz der Schweiz während des Völkermords an den Armeniern im Osmanischen Reich 1894-1923. Zum 100. Gedenkjahr des Völkermordes. [Մարդկության վկաները: Օսմանյան կայսրության մեջ Հայոց ցեղասպանության տարիներին Շվեյցարիայի մարդասիրական օժանդակությունը 1894-1923 թվականներին: Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի առթիվ] Bern, 2015.

McMeekin, Sean: The Berlin-Baghdad Express: The Ottoman Empire and Germany's Bid for World Power. [Բեռլին-Բաղդադ ճեպընթացը. Օսմանյան կայսրությունը և Գերմանիայի գերտերություն դառնալու հայտը] Cambridge, Massachusetts, 2010.

Mühlens, Peter: Vier Jahre Kriegshygiene in der Türkei und auf dem Balkan. Vor 20 Jahren. In den Dardanellen zum Sues, mit Marineärzten im Weltkrieg durch die Türkei. [Չորս տարի ռազմական առողջապահություն Թուրքիայում և Բալկաններում] Leipzig 1935, 2. Folge 1935, S. 141-160.

Morf, Walter: Der Bau der Bagdadbahn im Lichte der Kriegswirtschaft. [Բաղդադի երկաթուղու կառուցումը պատերազմի տնտեսության լույսի տակ] In: Schweizerische Bauzeitung, März, 1919, S. 137-139.

Niepage, Martin: Eindrücke eines deutschen Oberlehrers aus der Türkei. [Գերմանացի ուսուցչապետի տպավորությունները Թուրքիայից] Postdam, 1919.

Ohandjanian, Artem: Armenier. Der verschwiegene Völkermord. [Ցեղասպանություն, որի մասին լռում են] Wien / Köln / Graz, 1989.

Pohl, Manfred: Von Stambul nach Bagdad. Die Geschichte einer berühmten Eisenbahn. [Ստամբուլից դեպի Բաղդադ. Հռչակավոր երկաթուղու պատմությունը] München, Zürich, 1999.

Rohrbach, Paul: Die Bagdadbahn. [Բաղդադի երկաթուղին] Berlin 1911.

Sakayan, Dora. *An Armenian Doctor in Turkey. Garabed Hatcherian: My Smyrna Ordeal of 1922*. Montreal, 1997.

Sakayan, Dora (Ed.): – 11 Nisan Anıtı – Յուշարձան Ապրիլ 11-ի – MEMORIAL to April 11, Istanbul 2010. [Այս գիրքը Թեոդիկի 1919-ի «Յուշարձան Ապրիլի 11-ի» գրքի երկլեզու՝ թուրքերեն-հայերեն հրատարակությունն է: Եվ քանի որ այդպիսի մի գիրք եղել էր Հրանտ Դինքի չհրականացված երազը, առաջին 50 էջերը նվիրված են նրան: Այդ բաժնի հոդվածները ներկայացված են երեք լեզվով՝ անգլերեն, թուրքերեն և հայերեն]:

Sakayan, Dora: *Smyrna 1922. Das Tagebuch des Arztes Garabed Hatscherian*. Klagenfurt 2006 /2014.

Sakayan, Dora: «Man treibt sie in die Wüste»; Clara und Fritz Sigrist-Hilty als Augenzeugen des Völkermordes an den Armeniern 1915–1918, Zürich, 2016.

Schenkel, Karl: Jakob Künzler, der große Lebensretter. [Յակոբ Բյունցլեր, Կյանքի մեծ փրկարարը] Bern, Lüdenschaid, 1955.

Schilling, Viktor: Kriegshygienische Erfahrungen in der Türkei (Cilicien, Nordsyrien) [Ռազմական հիգիենիայի դրվագներ (Կիլիկիա, Հյուսիսային Սիրիա)]. Բեռլինի Միկրոբիոլոգիական ընկերության 1920 թ. նոյեմբերի նիստին տված դասախոսությունը] Vortrag in der Mikrobiologischen Gesellschaft Berlin, Sitzung vom 1. November 1920. Aus der 1. Med. Klinik der Universität Berlin, Charité, Leipzig: Joh. Ambr. Barth, 1921.

Schwartz, Michael: *Ethnische «Säuberungen» in der Moderne*. [Ազգային մաքրագործումներ մեր օրերում] Berlin, 1913.

Sigerist, Stefan: *Schweizer im Orient*. [Շվեյցարացիներ Արևելքում] CH-8200 Schaffhausen, Selbstverlag, 2004.

Seyffarth, Kai: *Entscheidung in Aleppo - Walter Rößler (1871-1929): Helfer der verfolgten Armenier*. [Վճիռներ Հալեպում – Վալթեր Ռյոսլեր (1871-1929): Հալածված հայերի օգնականը] Bremen: Donat-Verlag, 2015.

Sigrist-Clalüna, Rudolf: “Eine Werdeberger Familie im Orient.” [Վերդենբերգցի մի ընտանիք Արևելքում] In: *Werdenberger Jahrbuch*, 1991, S. 150-159; *Werdenberger Jahrbuch*, 1992, S. 125-137;

Werdenberger Jahrbuch, 1993, S. 191-200; Werdenberger Jahrbuch, 1994, S. 149-161.

Stuermer, Harry: Zwei Kriegsjahre in Konstantinopel. Skizzen deutsch-jungtürkischer Moral und Politik. [Պատերազմի երկու տարի Կոստանդնուպոլսում. Ուրվագծեր գերմանա-թուրքական բարոյականության ու քաղաքականության մասին] Lausanne, 1917.

Stuermer, Harry: Two War Years in Constantnople. Sketches of German Young Turkish Ethics and Politics. Translated from the German: E. Allen and the Author. New York, 1917.

Stuermer, Harry: Deux ans de guerre à Constantinople. Études de Morale et Politique Allemandes et Jeunes-Turques. Lausanne 1917.

Ternon, Yves: Tabu Armenien. Geschichte eines Völkermordes. [Տաբու Հայաստան. Մի ցեղասպանության պատմություն] Frankfurt /Berlin, 1981.

Trumpener, Ulrich: Germany and the Ottoman Empire 1914-1918. [Գերմանիան և Օսմանյան կայսրությունը] Princeton, New Jersey, 1968.

Üngör, Uğur Ümit: The Making of Modern Turkey. Nation and State in Eastern Anatolia, 1913-1950. [Ժամանակակից Թուրքիայի ստեղծումը. Ազգ և պետություն Անատոլիայում, 1913-1950] Oxford, 2011.

Vierbücher, Heinrich: Was die kaiserliche Regierung den deutschen Untertanen verschwiegen hat: Armenien 1915. Die Abschachtung eines Kulturvolkes durch die Türken. [Ի՞նչ է թաքցրել կայսերական կառավարությունը գերմանացի հպատակներից: Հայաստան 1915. Քաղաքակիրթ ժողովրդի ոչնչացումը թուրքերի ձեռքով] Hamburg, 1930.

Vischer, Andreas: Erlebnisse eines Schweizerarztes bei den türkischen Nationalisten. [Շվեյցարացի բժշկի տպավորությունները թուրք ազգայնականներից] Basel, 1921.

Wegner, Armin T.: Der Weg ohne Heimkehr. Ein Martyrium in Briefen. [Ճանապարհ առանց վերադարձի] Dresden, 1920.

Werfel, Franz: Die vierzig Tage des Musa Dagh. [Մուսա լեռան 40 օրը] Frankfurt am Main, 1990 (Erstausgabe, 1933).

Yosul, Sevda und Kübra, Sahar: Die Bagdadbahn. Schrift vorgelegt zur Erlangung des Leistungsnachweises im Ingenieurprojekt “Bildarchiv der Philipp Holzmann AG”, [Բաղդադի երկաթուղին. Ատենախոսություն որպես “Bildarchiv der Philipp Holzmann AG”-ի ճարտարագիտական նախագծում աշխատելու վկայական] Potsdam, 2015.

Թուրքիայում ընթերցված գրքերի ցանկ Կլարայի օրագրից (1915-1918)

Հեղինակ	Վերնագիր	Հիշատակված
Carl Busse	<i>Im polnischen Wind</i>	27. 01.1918
Adalbert von Chamisso	<i>Peter Schlemihls wundersame Geschichte</i>	01.07.1917
Helene Christaller	1. <i>Ruths Ehe</i>	20. 06.1915
	2. <i>Gottfried Erdmann und seine Frau</i>	22.01.1918
Jeremias Gotthelf	<i>Der Bauernspiegel</i>	01.09.1917
Gottfried Keller	1. <i>Sieben Legenden</i>	03.12.1915
	2. <i>Das Sinngedicht</i> (Novellenzyklus)	21.12.1915
Ellen Key	<i>Die Wenigen und die Vielen</i>	23.10.1917
Selma Lagerlöf	1. <i>Jerusalem</i>	03.10.1915
	2. <i>Gösta Berlings saga</i>	23.04.1916
Heinrich Lhotzky	“Im Reich der Sennerinnen.”	02.12.1915
(Անհայտ հեղինակ)	<i>Tales über Shakespeare</i>	21.04.1916
Hermann Löns	<i>Der Wehrwolf</i>	04.12.1915
Emil Rasmussen	<i>Sultana. Ein arabisches Frauensicksal</i>	20.06.1915

Felicitas Rose	<i>Heideschulmeister Uwe Karsten</i>	04.07.1915
Fritz Reuter	<i>Ut mine Stromtid</i>	12.12.1915
Peter Rosegger	<i>Die Försterbuben</i>	31. 08.1915
Anna Schieber	<i>Heimat</i>	01.09.1917
Ina Seidel	<i>Der Garten des Schuchan</i>	20.06.1915
Ernst Teichmann	<i>Vom Leben und vom Tode</i>	14.08.1915
Lev Tolstoj	<i>Auferstehung</i>	07.01.1916

Երեք տարիների ընթացքում շվեյցարական գույգը կար-
դացել է պրոֆ. Կառլ Հիլթիի, Կլարա Զիգրիստ-Հիլթիի մեծ
հորեղբոր «Կյանքի երջանկությունը» («Das Glück des Lebens»)
գրքի երեք հատորները:



Շվեյցարիա 2016. Դորա Սաքայանն իր նոր գրքով

ԿԵԼՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԴՈՐԱ ԱԱՔԱՅԱՆ

Դորա Գևորգի Սաքայանը ծնվել է 1931 թ. Սելանիկ քաղաքում՝ Փոքր Ասիայից Հունաստան գաղթածների ընտանիքում: Հայրը՝ Գևորգ Էդուարդի Սաքայանը, Ադրիանապոլիսից (Էդիրնե) էր, իսկ մայրը՝ Սիրարփի Կարապետի Սաքայանը (ծն. Խաչերյան)՝ Զմյուռնիայից (Իզմիր): Սաքայանն իր սկզբնական կրթությունն ստացել է Սելանիկի Կյուլպենկյան հայկական վարժարանում, իսկ միջնակարգ կրթությունը՝ նախ տեղի գերմանական երկրորդական վարժարանում (Deutsche Schule Saloniki), ապա՝ Վիեննայի (Ավստրիա) VII քաղաքամասի օրիորդաց գիմնազիայում:

1946 թ. Սաքայանի ընտանիքը Վիեննայից հայրենադարձվել է Խորհրդային Հայաստան, որտեղ նա ամբողջացրել է միջնակարգ կրթությունը: 1952 թ. ավարտել է Երևանի Բրյուսովի անվան օտար լեզուների պետական մանկավարժական ինստիտուտը, որտեղ սկսել է իր մանկավարժական գործունեությունը որպես գերմաներենի դասախոս նախ նույն ինստիտուտում, ապա՝ Երևանի պետական համալսարանում: 1958 թ. Սաքայանն ընդունվել է Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանի ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի ասպիրանտուրան և 1965 թ. նույն ֆակուլտետի գիտխորհրդի առաջ պաշտպանել իր ատենախոսությունը՝ ստանալով բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճան: Վերադառնալով հայրենիք՝ Սաքայանն ստանձնել է Երևանի պետական համալսարանի օտար լեզուների համահամալսարանական ամբիոնի վարիչի պաշտոնը, որը վարել է 10 տարի:

1975 թ. Սաքայանը տեղափոխվել է Կանադա և նույն տարվանից աշխատել որպես Մոնրեալի ՄակԳիլ (McGill) համալսարանի գերմանագիտության ամբիոնի դասախոս: 1987 թ. նրան շնորհվել է գերմանագիտության պրոֆեսորի

կոչում (Department of German Studies, Full Professor) և նույն համալսարանում ցմահ պաշտոնավարելու իրավունք (tenure): Գերմանագիտության մեջ իր ներդրումներին զուգընթաց McGill համալսարանում Սաքայանը հիմք է դրել հայագիտությանը և Կանադայում ճանաչվել որպես հայագիտության ռահվիրա: McGill-ում Սաքայանը 1981 թ. հիմնել է հայերենի դասընթացներ, 1995 թ. կազմակերպել է հայագիտական 5-րդ միջազգային գիտաժողովը և նույն տարում հիմնել “Armenian Studies for the English-speaking World” (Հայագիտական ուսումնասիրություններ անգլիախոս աշխարհի համար) մատենաշարը: Այդ շրջանակներում լույս են տեսել անգլիախոս աշխարհի համար արևելահայերենի և արևմտահայերենի նրա հայտնի բուհական դասագրքերը, երկլեզու առաձանիները (հայերեն-անգլերեն, հայերեն-գերմաներեն, հայերեն-ֆրանսերեն), մի շարք կարևոր հայագիտական մենագրություններ ու հոդվածներ և այլն:

Սաքայանի գիտամանկավարժական երկարամյա ու բեղմնավոր գործունեությունը արժանացել է հայրենական և միջազգային բազմաթիվ մրցանակների ու պատվոգրերի, այդ թվում՝ Գերմանական Դաշնության «Արժանյաց կարգի խաչ» (Bundesverdienstkreuz) քաղաքացիական բարձրագույն շքանշանին (2001), Հայ առաքելական եկեղեցու «Մբ Սահակ-Մբ Մեսրոպ» (2005) շքանշանին և ՀՀ կրթության և գիտության ոսկե մեդալին (2011):

Մեծ է Դորա Սաքայանի ավանդը Հայոց ցեղասպանության պատմության մեջ: 1992 թ. ձեռք բերելով իր մայրական պապի՝ բժիշկ Կարապետ Խաչերյանի 1922 թ. Ջմյունիայի աղետի մասին օրագիրը՝ նա նախ հրատարակել է հայերեն բնագիրը, ապա լրացնելով այն առաջաբանով, վերջաբանով և գիտական բազմաթիվ ծանոթագրություններով ու գրականությամբ՝ այն ներկայացրել է ինը լեզուներով, այդ թվում՝ թուրքերենով:

Ոգևորված պապի օրագրի հաջողությամբ՝ Սաքայանը 1997-ից, ի սպաս դնելով լեզվաբանի, խմբագրի և թարգմանչի իր կարողությունները, նվիրվել է նաև Հայոց ցեղասպանության հարցերի ուսումնասիրությանը և միջազգային ասպարեզում պատմական այդ իրողության ճանաչման գործին:

Սույն հատորով Սաքայանը հարստացնում է Հայոց ցեղասպանության պատմությունը մի նոր և արժեքավոր վավերագրությամբ:

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԴՈՐԱ ՍԱՔԱՅԱՆ

«Նրանց քշում են անապատները...»

**Կլարա և Ֆրից Զիգրիստ-Հիլթիները
Հայոց ցեղասպանության ականատեսներ
(1915-1918)**

Հրատարակության տնօրեն՝ Կ. Գրիգորյան
Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի,
Ա. Ադուգումցյանի
Շապիկի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. սրբագրումը՝ Վ. Դերձյանի

Ստորագրված է տպագրության՝ 16.06.2017
Չափս՝ 60x84 1/16: Տպ. մամուլ՝ 26,5:
Տպաքանակ՝ 300:

ԵՊՀ հրատարակչություն
ՀՀ., ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.y-su.am